VII

891.99
Ć-66

Ա. Վահագնյան

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ՀԱՏՈՐ ՈՒՔԵՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

891.99

89.99
Շ-66

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ՅԵՐԿԵՐԻ

ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1934

15.07.2013

-6 NOV 2011

Գատ. խմբ. Ե. Չարենց
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան

ՀՍՌՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՌՀ Գիտությունների ակադեմիայի
Ա. Մյասնիկյանի անվան գրադարան
62
38

ԳԱՈՍ

Գեհրատի տպարան
Գատ. 1435 Հրատ. № 2610 Գլ. 8181 (բ) Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 15 VIII 1933
Ստորագրված է տպագրելու 25 I 1934

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր։

Ցոթ որ առաջ նա իր նոր կառուցվող տասնումեկհարկանի տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ ղգաց անսովոր ցուրտ, յեկավ տուն, պառկեց անկողին և այլևս չկարողացավ վերկենալ։ Բժիշկները մարդուն ուշադիր քննեցին և միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում։

Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում։ Ո՛վ չէր ճանաչում կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին — այդ վաթսունուհինգ տարեկան, կլորիկ մարմնով, ուռած թշերով, յեռանդուն ու աշխույժ ծերունուն և չէր լսել նրա բազմավաստակ կյանքի խրատական պատմությունը։ Ուղիղ հիսուն տարի առաջ, թողնելով իր ամենայն ծննդավայրը, յեկել, հաստատվել էր այն վոգբրիկ, աննշան ծովեղրյա քաղաքը, վորին վիճակված էր մոտիկ ապագայում առանձնակի համաշխարհային հռչակ՝ իր ստորերկրյա գանձերի շնորհիվ։

Այժմ տասնուիններորդ դարի վերջին քառորդում նրա մասին կազմվել էին կատարյալ առասպելներ։ Պատմում էին, վոր նրա հոյակապ տան ներքնահարկում կա մի առանձին աննյակ՝ մթին ու սառն լինչպես շիրիմ։ Վոչ մի հողեղեն էյակ նրա յերկաթե դռներով ներս չէ մտել։ Այնտեղ են դարսված Մարկոս Ալիմյանի վոսկիներով լի տոպրակները։ Ասում էին, վոր ամեն գիշեր մոտյալ ծերունին մենակնակի, յերկայն թավիշե խալաթը հագին, գիշերային սև թասակը գլխին, ձեռին բռնած մի ճրագ, իջնում է վար, բաց է անում յերկաթե դռները ժանգոտ բանալիով, համբուրում է տոպրակները և ավելացնում նոր վոսկիներ։ Հավատացնում էին, թե այնտեղ մի պողպատե պահարանի մեջ փայփայելով պահում է այն տրեխները, վորոնցով դաղթել էր իր ծննդավայրից տասնուհինգ տարեկան հասակում։ Ասում էին նաև այն, վոր Զատիկ ու Զրորհնեք տոների նախընթաց գիշերը, մի ղույդ մոմ վառելով, աղոթում է պահարանի վրա չոքած և որհնում է նվիրական տրեխները։

Նրա հոյակապ տները, վոր հպարտ ճակատներով կանգնած էին քաղաքի կենտրոնական փողոցներում, մի-մի փուչ էին դարձել քա-

ղաքացիների աչքում, նրա բազմաթիվ հորերից բղխող նավթը խեղդում էր և դործարանի ծուխը կուրացնում նրանց աչքերը: Բայց մարդիկ դիտեյին լինչպես զովացնել իրենց նախանձավառ սրտերը: Ջե՛ր վոր Մարկոս Ալիմյանը յեղել է Ջրկիը, հետո դռնապան, հետո խոհարար, հետո մրգավաճառ, այնուհետև դինեվաճառ և այլն, և այլն... Յեվ վոչ մի գործ նա չի վարել աղնվաբար: Գնալով Ռուսիա, նա այնտեղից բերել է կեղծ դրամներ և ռուենների վրա սաղացրել: Նա խաբել է, գողացել է, դուխել ու կողոպտել է խեղճերին, նա նույնիսկ թունավորել է իր մի ընկերոջը: Նա ժլատ է, նրա ձեռները դողում են դրամից դրամ դուրս բերելիս, ապրել չդիտե, դրամն է նրա հավատը, հոգին, Աստվածը: Նրա ընդարձակ տունը, ուր վոչ մի ոթյակ ծածկված չե պաստառով, մռայլ բանտ է իր կնոջ ու զավակների համար: Այնտեղ կահ-կարասի չկա, ծառա չկա, խոհարար չկա: Նա իրեն տան համար պաշարելեննն ինքն է տուն բերում իր ձեռքով առավոտները կանուխ, վոր վոչ վոք չտեսնե: Նա դրպանում ունի յերկաթաթելից չինած մի ողակ և միայն այն ձուն է դնում, վոր այդ ողակով չի անցնում և չատ անդամ պատում է ամբողջ շուկան այդ չափի ձվեր դտնելու համար:

Շատ չատերը դիտեյին, վոր այդ բոլորը մտացածին է, վոր Ալիմյանի տանը ծառաներ էլ կան, խոհարար էլ, կահ-կարասի յել, նույնիսկ վարձած կահ-կարասի: Դիտեյին, վոր յեթե Մարկոս աղան մի ողակ ունի, այդ այն է, վորով անխնա սեղմում է իր պարտապանների կոկորդը: Բայց սև նախանձը կուրացրել էր մարդկանց և հնարում եյին ամեն ինչ, վոր կարող էր քիչ թե շատ հանդուրժացնել կյանքի անհաջողություններից ժանդռոված ու թթված սրտերը:

Սանձարձակ ծաղրում եյին, ըրպարտում, հայհոյում քաղաքի առաջին միլիոնատիրոջ, սակայն միայն յեսևից: Իսկ յերբ ալան, կլուբիկ վորը դուրս ցցած, բաղի պես աչ ու ձախ յերերվելով, դնում էր վոդոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուբ էր մտնում, ամենքն աչքաթաց եյին վորսալ նրա հայացքը, վորպեսզի բարևեն խոնարհ և արժանանան նրա արհամարհական պատասխանին: Այնինչ Մարկոսը, այդ նախկին Ջրկիրը, դռնապանն ինքը վոչ վոքի բարևին չէր սպասում, բայի մեկից և այդ մեկը յերկրի իշխանն էր— նահանգապետը: Բանուհինդ տարի յեր, վոր վերադարձնում էր իր ինքնասիրության և պատվի կորուստները, ընդունելով ուրիշներից այն, ինչ վոր ինքը քսանուհինդ տարի չարունակ չտայել էր իրենից մեծերին ու զորավորներին:

Յեվ ահա այսոր մեռնում է անվանի քաղաքացին, խելացի մարդը, տոկուն վաճառականը, վոր ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեությամբ, քրտինքը ճակատին, խիղճը հանձնած յերկաթե անդուլին և հոգին զրպանը դրած:

Նրա բնակարանը դտնվում էր քաղաքի կենտրոնում: Տունը, հարկավ, սեփական էր: Այդ մի յերկհարկանի չինություն էր սրբատաշ քարից, տափած, կպրած ծածկ տանիքով: Ստորին հարկը բաղկացած էր խանութներից ու զրասենյակներից, վերինն ամբողջովին Ալիմյաններինն էր:

Ոգոստոսի չոր և ջերմ որերից մեկն էր: Արեգակը թեքվել էր դեպի մուտքը և նրա վերջին ճառագայթները վոդոդել եյին բուսականության դուրկ, անհրապույր քաղաքը և նրա առջև տարածված ծովի մակերևույթը: Ծանր ու ճնշող է այդ քաղաքի արտաքին տպավորությունը: Հեռվից դիտողին նա իր տափակ տանիքներով, մերկ վոդոցներով, պատկերանում է այնպես, վոր կարծես մի սոսկալի հրդեհ լափել է բոլորը, ինչ վոր կարող է լափվել կրակից և թողել է մի վիթխարի կմախք: Շրջակայքն ավազուտ կամ նավթի լճերով ծածկված, այստեղ վոչինչ չի մեղմացնում արեգակի տրոպիկական տասը, նույնիսկ ծովը: Բարե պատերը չեն կանում են կիզիչ ճառագայթներից, ավազը խանձվում է, ոդը դառնում հեղձուցիչ: Բնակիչները չատպում են լողարանները և որը մինչև յերեկո ծովը լի յե մերկ մարմիններով, վորոնք մերթ վայելում են արեգակի տակ և մերթ սուզվում ջրի մեջ, վորպես դելփիններ:

Ալիմյանների բնակարանի լուսամուտները դրսի կողմից նայում եյին դեպի արևմուտք: Ամառը, սկսած տասներկու ժամից նրանց փեղկերը միչա ծածկված եյին լինում մինչև մութ յերեկո: Այսոր նրանք բաց եյին, բաց եյին նաև ապակե փեղկերը և փողոցի տոթն առատորեն հոսում էր ներս:

Այնտեղ տիրում եյին անսովոր չարժում և իրարանցում: Ծառաները ու գործակատարները չտապ-չտապ դուրս եյին գալիս ու ներս մտնում, միմյանց հրամայում, միմյանց վրա բարկանում, դուր աչքատելով չաղմկել: Տան մուտքի առջև բոպե առ բոպե կանգ եյին առնում կառքեր և նրանց միջից դուրս եյին գալիս Ալիմյանների ազգականները, բարեկամները, ծանոթները՝ կեղծ ու անկեղծ վշտակցությամբ արտահայտությունը դեմքերի վրա:

Ամենքն չտապում եյին մահամերձ միլիոնատիրոջ տունը, վոր վերջին անդամ տեսնեն նրան և դուցե մի բան իմանան կտակի մասին: Այնինչ մահամերձի ննջարանի դռները փակ եյին: Այնտեղ, մահճակալի չուրջը հավաքվել եյին մեռնողի ընտանիքի անդամները, մի քանի մերձավորներ, ծխական քահանան և յերկու-յերեք բժիշկ: Մյուս այցելուները խմբվել եյին հյուրասենյակում: Այդտեղ ոդն այնքան խեղդուկ էր, վոր մարդիկ հաղիվ կարողանում եյին չունչ քաշել և չնա-

յելով դրան, յեկողը չեր ուզում հեռանալ: Թանկագին պարծկանած դորգերից բարձրացել եր նոսր փոշի: Լուսամուտների թանձր ասույթ վարագույրների միջով ներս սիրվող արեգակի շողերը վոսկեզոծում եյին այդ փոշին, ոդի մեջ դոյացնելով թեք սյուներ, վորոնք հետզհետե յերկայնանում եյին և հորիզոնական ձև ստանում: Ներսեցից մեկի ծայրը հասավ անկյունում՝ մարմարյա վառարանի վրա դրած բրոնզե ժամացույցին: Փայլեց ձվաձև ապակե ծածկոցը և նրա տակ հրավառվեց դեղեցիկ կնոջ մի արձան վեհ ճակատով, թուրը ձեռին, մի վոտը դրած ամեհի առյուծի կոկորդին, վորպես հաղթության աստվածուհի:

Այցելուների համբերությունը քանի գնում սպառվում եր: Սպասում եյին մահամերձի մահին, իսկ նա դեռ չեր մեռնում: Վոմանք ստեպ-ստեպ թեքվում եյին և փակ դռների բանալիի անցքով նայում դեպի մահամերձի սենյակը կամ ականջ եյին դնում՝ ճգնելով մի բան տեսնել կամ լսել: Հետո հեռանում եյին, չշնջում միմյանց ականջին և դաղտուկ կատաղի հայացքներ ձգում սրա ու նրա վրա: Բանն այն է, վոր յուրաքանչյուրն իր սրտում դաղանի աղոտ հույս ուներ՝ վորևե կերպ հիշված լինել Մարկոս աղայի կտակում:

Ննջարանի դռները հանդարտիկ բացվեցին, շշնջյունները վայրկենաբար ընդհատվեցին, ինչպես ադռամների կրկռոցը հրացանի ձայնից: Դուրս յեկավ մի մարդ մոտ վաթսուն տարեկան, բարձրահասակ, առույդ ու իրոխտ: Նրա մաքուր սափրած յերեսը, դեմքի խոշոր գծերը, աչքերի սուր արտահայտությունը, խիտ հոնքերը և մանավանդ թանձր ու ալեխառն ընչացքը, վորի ծայրերին միացրած եյին միրուքից մի-մի մաս և գունքերից քաշ ընկած քակերը — նիկոդայոսյան դինվորականի տպավորություն եյին դործում: Նա հագած եր ռուս քաղաքացիական աստիճանավորի հնամաշ ու դունատ մուճդիր ու կրծքի վրա քաշ արած մի կարմրագույն խաչաձև չքանշան:

— Սրաֆիոն Գասպարիչը,—ասացին այս ու այն կողմից և անմիջապես չրջապատեցին ծերունուն, վոր դարձավ մի տեսակ թիկնապահներով պաշտպանված դոռող հրամանատար:

— Փո՛ւչ աչխարհ, փո՛ւչ աչխարհ,—արտասանեց աստիճանավորը, աչքերը չրջապատողների վրայով ուղղելով դեպի դիմացի պատն ու կրծքի չքանշանն ուղղելով,—մարդը հոդին չի կարողանում Աստծուն տալ վորդուն չտեսած...

Բոլորը միաձայն զարմացած հարցրին:—Մի՞թե մահամերձ աղայի բոլոր զավակներն այս խորհրդավոր պահին նրա մահճակալի քով չեն:

— Խոսքս մեծ վորդու մասին է, հառաչեց Սրաֆիոն Գասպարիչը, գլուխը տխրորեն չարժելով:

— Մեծ վորդո՞ւն. Սմբատի՞ն,—հարցրին չրջապատողները, ավելի ու ավելի մոտենալով ծերունուն և իրարու հրելով:

— Այո՛, Սմբատին,—պատասխանեց Սրաֆիոն Գասպարիչը,—պետի դա, բոպե առ բոպե սպասում ենք նրան: Մարդը մի չարաթ առաջ նրա անունը լսելիս դեմքը թթվեցնում եր, հիմա հոդին չի տալիս չտեսած:

— Հեռագրե՞լ եք:

— Իհարկե: Այսոր սպասում ենք: Գնացքը վո՞ր ժամին է գալիս Մոսկվայից:

— Հինդ ժամից քառասուն բոպե անցած...

— Վեց ժամին հինդ բոպե է մնում, հիմա յեկած պիտի լինի,—ասաց ծերունին, նայելով իր ծոցի ժամացույցին և խումբը ճեղքելով, մոտեցավ լուսամուտներից մեկին:

Բոլորը հետևեցին նրան, միչտ իրարու հրելով և իրարու առաջելով:

— Գալիս է,—դոչեց մեկը, վոր ամենից թեթևաչարժը լինելով, ամենից արագ եր մոտեցել լուսամուտին:

Սրաֆիոն Գասպարիչը չտապեց նախատինյակ: Մի քանի բոպե անցած վերադարձավ՝ հասակով իրենից մի վոջը ցած, առողջակազմ մի յերիտասարդ տղամարդի հետ: Բոլորը ճանապարհ տվեցին նորեկին, աչ ու ձախ բաժանվելով յերկու չարքերի և չտապելով իրենց դեմքերին տալ ավելի տխուր արտահայտություն: Նորեկը, վերցնելով իր հարդե նեղ յեղերով գլխարկը, բարևեց աչ ու ձախ, քաղաքավարի, բայց չատ սառը և չտապ քայլերով գնաց հիվանդի ննջարանը: Ներկա յեղողները նորից մերձեցան իրար՝ միանդամից փոխելով իրենց դեմքերի տխուր արտահայտությունը մի տեսակ արհամարհականի:

Մահամերձի մահճակալը դրված եր պատի տակ, լուսամտի առջև: Մի կողմում կանգնած եր մեռնողի կինն աղջկա հետ, մյուս կողմում՝ վորդիները: Ինքը մահամերձը նստած եր անկողնի մեջ, հենված փափուկ բարձերին, ծնկները մեւտաքսե վերմակով ծածկած, ուսերն ու կուրծքը կիսով չափ մերկ, գլուխն անզոր վար թեքած: Բժիշկը նորից նրա կաշվի տակ մեջքի կողմից սրսկում եր ինչ-վոր սթափեցուցիչ հեղուկ: Անհրաժեշտ եր քանի մի բոպե ևս պահպանել կյանքը հյուծված ու քայքայված անոթի մեջ:

Մահամերձն աչքերը բաց արավ, գլուխը դանդաղորեն բարձրացրեց: Նրա դեմքն արդեն ընդունել եր մահանիչ հողագույն ստվերադծեր, բերանի անկյունների քնորոշ ակոսներն այժմ հարթվել եյին, կլորիկ յերեսը յերկայնացել եր, մնում եր ինչ-վոր անհանդստության մի թույլ ժպիտ թառամած շրթունքների վրա:

Բժիշկը կամացուկ հաղորդեց նրան վորդու ժամանման լուրը: Նույն վայրկյանին յեկվորը, մի կողմ ձգելով գլխարկն ու ճամբու պարտասակը, չոքեց ծերունու մահճակալի առջև և գլուխը թեքեց, վոր համբուրե մեռնողի չոր, սառած ձեռը:

Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը, աչքերը լայն բացվեցին, և մի անցողիկ ուրախություն վայրկենաբար պարզեց հոնքեղ ճակատը, վոր նրա վաթսունամյա դոյության ընթացքում յերբեք չեր արտահայտել զվարթություն: Աչյունաքամ շրթունքների միջից արձակելով մի խուլ մրմունջ, թուլ ձեռներով գրկեց վորդու զանգրահեր գլուխը և սեղմեց իր կրծքին, վորքան կարող եր ամուր:

Տիկին Ալիմյանն սկսեց հեկեկալ: Նրան հետևեց իր աղջիկը, հետո՝ վորդիները: Այժմ ծերունին կարող և իր հոգին ավանդել, ո՛ո, վոչ հանդիստ, ինչպես կփափաղեր, այլ մի անբնական վիշտ սրտի մեջ: Ութ տարի յեր, նա չեր տեսել վորդուն, անդրանիկ վորդուն, վորի վրա այնքան հույսեր եր դրել, վորին սիրել եր ամենից ավելի և վորին պիտի հանձներ իր բոլոր դործերը: Ցեվ վոչ միայն չեր տեսել, այլև չեր ուղում տեսնել, նույնիսկ լսել անդամ նրա անունը: Ա՛հ, վո՛րքան հուսալքար ուրավ նրան այդ սիրված վորդին և վորքան տանջանքներ պատճառեց, վորպեսի՛ հոդեկան մորմոք, վորը թշնամիներից և նախանձամիտներից դավելու համար հարկավոր եր դերբնական կամքի զորություն: Անիծվի՛ այն որը, յերբ նա թուլ տվեց իր Սմբատին դնալ ուրիշ յերկիր՝ ուսումը չարունակելու, անիծվի՛ նա, վոր կորդեց իրենից իր վորդուն...

Մահամերձը ցանկանում եր դուրս թափել սրտի մեջ կուտակված դառը մաղձը, ասել բոլորը, բոլորը, ինչ վոր պահել եր ութ տարվա ընթացքում: Ասել՝ արտասուքով վողողնլով ճամբից չեղված վորդու մոլի գլուխը: Բայց ուժերը դավաճանում եյին: Բժշկի ջանքերն այլևս անդոր եյին կենդանություն ներշնչել սառող մարմնին: Սակայն մի յերկարաև, խորը, չատ խորը հայացք, վոր դալիս եր դերեզմանի խորքից, ամեն ինչ պարզեց մեղսադործ վորդու համար, վոր այժմ վոտքի յելած, ճգնում եր դսպել իր արցունքը, վորպեսզի ցույց չտա իր հոգու տկարությունը:

— Մենա՞կ ես յեկել,—կարողացավ միայն հարցնել մեռնողը:

— Մենակ,—պատասխանեց վորդին հակիրճ, հասկանալով, թե ինչ իմաստով և տրվում իրեն այդ պարզ հարցը:

Մոայլ ժպիտը ծերունու դեմքի վրա մի ակնթարթ տեղի տվեց հուսո չողին. մի՞թե նրա տանջանքները լուրջ պատճառ չեն ունեցել, մի՞թե անիրավարար և անիծել վորդուն: Բայց ահա ծերունու պղտոր հայացքն բնկավ վորդու վոսկե մատանու վրա, վոր նրա ամուսնության նշանն եր, և նրա անդոր գլուխն ընկավ բարձի վրա ու աչքերը փակվեցին:

— Անցածը վերադարձնել չի կարելի, հա՛յր. որհնի՛ր,—արտասանեց վորդին մի տեսակ խուլ ձայնով, վորի մեջ դղացվում եր դառը կսկիծ, և վոչ դղջում:

Վոչ վոք ներկա յեղողներից չհասկացավ խոսքի բուն իմաստը և չըմբռնեց, թե վո՛րքան և մորմոքվում այդ պահին այդ առողջակազմ, ինքնավստահ դեմքով վորդու վիշտը:

Հայրը ժողովեց վերջին ուժերը և արդեն սառչող շրթունքների միջից արձակեց.

— Անիծվի՛ս, յեթե վերջին կամքս չես կատարիլ...

Այդ վայրկյանին նա սոսկալի յեր, ինչպես ինքը մահը, սոսկալի մեղսագործ վորդու համար:

— Տո՛ւր ինձ,—լսվեց դարձյալ ծերունու անդրդվելիմանային ձայնը և նրա սառցային հայացքը դամվեց կնոջ յերեսին:

Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար, վոր կնքված եր կարմիր մոմատով: Ծերունին ապակյա աչքերով նչան արավ դեպի Սմբատը, և մայրը ծրարը տվեց վորդուն:

— Անիծվի՛ս, յեթե չես կատարիլ:

Այս յեղավ Մարկոս Ալիմյանի վերջին խոսքը, վոր սակայն դուրս թռավ նրա բերանից չատ պարզ և չատ վորոշ: Զքացող կյանքի վերջին զորավոր ցնցումն եր այդ, սպառված աղբյուրի վերջին կաթիլները, վոր մի առանձին թափով են ընկնում ցամաքած ավազանի մեջ: Ծերունու դեմքը թեթևակի աղավաղվեց մահու ցուրտ այրքից: Դառն, անհանդիստ ժպիտը, վոր միայն մի քանի վայրկյան եր հեռացել, մնաց սառած բերանի անկյուններում: Միլիոնների տերը և ընդհանուր նախանձի առարկան մնաում, իր հետ տանելով մի ծանր վիշտ, վորից ազատվելու համար պատրաստ եր իր հարստության կեսը զոհել: Ցեվ այդ վիշտը նրա դավակներն եյին:

Այրեցած Վոսկեհատն ազատություն տվեց հեկեկանքին, հարձակվելով ամուսնու սառչող դիակի վրա: Նրան հետևեց աղջիկը — տիկին Մարթա Մարուքեանցը: Սրաֆիոն Գասպարիչը, վոր Վոսկեհատի յեղբայրն եր, բռնեց նրանց թևերից, յետ քաշեց: Հարկավոր և հանդուցյալին թողնել, վոր հանդիստ փչե իր վերջին չունչը:

— Ա՛ռ մարդ, տանջվեցիր վորդիներիդ ձեռքում, տանջվեցիր,—կրկնում եր Վոսկեհատը:

Նույնը կրկնում եր և նրա աղջիկը:

Սրաֆիոն Գասպարիչը դրեթե ուժով նրանց տարավ մյուս սենյակը: Այնտեղ նրանք կարող են ազատություն տալ իրենց լեղուներին ու արցունքներին: Չհաոտ նա բոլորին խնդրեց անցնել այնտեղ: Սմբատը դուրս յեկավ, թաշկինակն աչքերին սեղմած: Նրա յետևից գնացին մյուսները: Այնտեղ Վոսկեհատն հարձակվեց նորեկ վորդու վրա և սկսեց համբուրել խանդավառությամբ: Վիշտը նրա մեջ խառնվել եր ուրախության հետ: Կորցնելով ամուսնուն, վորի հետ քառասուն տարի ուրախացել եր ու սիրել, նա գտնում եր վորդուն, վորին ութ տարի յեր կորած եր համարում:

— Շատ տառապեց խեղճ մարդը, չատ,—կրկնում էր նա հեծկլտանքով.—դիչեր-ցերեկ բերանի խոսքն էր. «վորդիս մոռացավ իր պապերի հավատը, վորդիս խայտառակեց ինձ»:

Սմբատը, մեջքը պատին հենած, գլուխը թեքած կրծքին, չրթունքները կրծոտում էր անինամ: «Անիծվի՛ս, յերթե չվատարես»,—հնչում էին նրա ականջին հոր վերջին խոսքերն այնքան ահեղ, վոր նա ցնցվում էր ամբողջ մարմնով, աչ ձեռի մեջ ամուր սեղմելով նվիրական ծրարը:

Բոլոր ներկա յեղողների հայացքներն ուղղված էին դեպի այդ ծրարը, իսկ ամենից ավելի մեկինը: Դա հանդուցյալի յերկրորդ վորդին էր՝ Միքայելը, քսան և ութ տարեկան մի յերիտասարդ, նուրբ կազմվածքով, նիհար, դունատ, ածխի պես սև մազերով և նորաձև սրուկ միրուքով: Նրա խոշոր, մուգ-ընկուզեդույն աչքերն արտահայտիչ էին, խելացի և միևնույն ժամանակ, կարծես, անտարբեր դեպի ընտանեկան վիչտը: Արդարև, նրա համար կորուստն այնքան մեծ չեր, վորքան իր յեղբորը հանձնված ծրարի բովանդակությունը: Գիտեր, վոր այդ ծրարի մեջ ամփոփված է հանդուցյալի կտակը, բայց ի՛նչ կտակ — ահա խորհրդավոր ժամի եյականը, ահա այն, վոր պիտի վորոշե իր ճակատագիրն ու ապագան: Մերթընդմերթ նա այնպիսի անհամբեր և նեղվային շարժումներ էր անում, վոր կարծես ուզում էր հարձակվել ավազ յեղբոր վրա և խլել նրանից ծրարը, վոր սոսկալի պես ծծում էր նրա ամբողջ ուշադրությունը, նույնիսկ բոլոր զգացումները:

— Ձլնի՞ թե ծերունին խեղճացավ և ինձ գրկեց ժառանգությունից,—զարձավ նա մոտ քառասուն տարեկան մի տղամարդի, վոր քայլ առ քայլ հետևում էր նրան:

Դա հանդուցյալի վեհան էր, Մարթայի ամուսինը, քաղաքում բավական ականավոր գործարանատեր և միևնույն ժամանակ սպեկուլյանտ Իսահակ Մարուքխանյանը: Աչքերին այդ մարդուն պատկերացնում էր վերին աստիճանի անվրդով հոգու տեր, հաչվեգետ, տոռը, յեսամոլ: Հագած էր յերկայնաճիպեչ սև ռեդինկոտ, մոխրագույն անդրավարտիկ և սև մետաքսե խոշորագույն փողկապ: Մինչհասակ էր, կարճ խուզած սև մազերով, փոքրիկ իսպանական ձևի մորուսով, խնամքով սանրած և վեր ցցած բավական թանձր բեղերով: Ընակելով իր տարիքին, նրա այտերը կարմիր էին, ինչպես տասնևմեկ տարեկան պատանու թշեր: Մինչդեռ պարզ ակնոցների տակից նայում էին մի զույգ կանանչ-ղեղնագույն աչքեր, վորոնց արտահայտությունը վոչ այնքան խելացի էր, վորքան նենգամիտ ու հրոպ: Ուռած և նույնիսկ կարմիր չրթունքների վրա ծխում էր մի չինծու և անախորժ ժպիտ, վոր, կարծես ասում էր. «Մի կարծեք, վոր յես հիմարի մեկն եմ»:

կանդնած էր նա հանդարտ, անվրդով, գլուխը մի չուտ բարձր պահած, այնպես վոր, կարծես, պարանոցը դրված էր յերկաթե սղմիչի մեջ: Դուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն ոսկյայած չապկի բարձր և ամուր ոճիքը: Նրա կանանչ-ղեղնագույն բիրերը ճվաճվ չրջանակների մեջ դառնում էին այս ու այն կողմ անազդից չինած խաղալիքի աչքերի պես նույնչափ մեքենայաբար, վորչափ մեքենայական էին նրա բոլոր ձևերն ու չարժումները:

Գարզ էր, վոր աներոջ մահը մաղու չափ չեր խլրտում նրա զգակցական զգացումների նիրհը: Գարզ էր նաև, վոր յեթե բոլոր ներկա յեղողները բոպեյարար և տեղն ու տեղը մահանան գարձյալ նրա աչքերը չպիտի թրջվի: Իսկ իր կնոջ հեկեկանքներին ու արցունքներին նա նայում էր արհամարհանքով: Այնինչ պճնաղարդ Մարթան, թաշկինակն աչքերին սեղմած, չարունակ հեկեկում էր բավական վարպետորեն: Ցավ Իսահակն ավելի քան ուրիչ մեկը նրա վորդեկան վողբի մեջ զգում էր հոգու անսահման կեղծիք և տեսնում էր, վոր կինը թաշկինակի տակից գաղտուկ դիտում է բոլորին, վոր իմանա՝ ինչ զգեցուքյուն և գործում իր վողբը չրջապատողների ու մանավանդ այն յեղբոր վրա, վորի ձեռքումն էր հոր կտակը: Ցավ վոչ վոք չեր լալիս անկեղծորեն, բացի այրիից, իսկ տասնուվեց տարեկան Արշակը, վոր ընտանիքի մեջ ամենակրտսերն էր, անտարբեր աչքերով նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին, կարծես գիտնալու համար, թե ինչ և կատարվում իր չուրջը: Գիչ անցած սգալի տեսարանն սկսեց նրան ձանձրացնել, և նրա թուխ գույնի և խոշոր գծերով դեմքը, վորի վրա նկատվում էր մի տեսակ անժամանակ զարդացում և նույնիսկ չափահաս տղամարդի հավակնություն, անկարող էր թագցնել այդ ձանձրույթը:

Այրին և՛ լալիս էր, և՛ արտասվախառն ձայնով պատմում հանդուցյալի տանջանքները: Նա գլխավորապես դառնում էր իր ավագ վորդուն, և նրան հաղորդում բոլորը, ինչ վոր անցել էր ութ տարվա ընթացքում: Խեղճ մարդ, նա չկամեցավ հիսուն տարվա արյուն-քրտինքով վաստակածը քամուն տալ, այսինքն՝ ձգել յերկրորդ վորդու՝ Միքայելի ձեռքը:

— Մի՛ չարանար,—զարձավ այրին յերկրորդ վորդուն, վոր մի կատաղի հայացք էր ձգել նրա վրա,—յես հորդ խոսքերն եմ կրկնում: Նա վախեցավ, վոր դու մի տարի չանցած, չոր տալի վրա կթողնես ամենքիս և կանչեց Մոսկվայից Սմբատին: Ասաց. «կասես նրան, վոր չուայլ յեղբորը ճանապարհի բերի, Արշակին լավ մարիկ անե, քեզ էլ մենակ չթողնե: կասես, վոր ինչքան ինձ տանջեց—հերիք է, թող գո՛նե քեզ խնայե, դու էլ խեղճ ես, դու էլ անուն ու պատիվ ունես»:

«Անուն ու պատիվ», կրկնեց իր մտքում Սմբատը, «այդ չես եմ, վոր արատավորել եմ այդ անունն ու պատիվը մեր գերդաստանի»...

Այրին կանգ առավ, նոր հեծկլտանքը խեղդեց կոկորդի մեջ դառն խոսքերի հոսանքը: Մի քիչ դպչելով իրեն, նա կրկին դարձավ ավազ վորդուն:

— «Ինչո՞ւ դնաց, կյանքը կտրեց ոտարազգի աղջկա հետ», կրկնում եր խեղճը: Տեսա՞ր, վո՛րդի, ինչպես նայեց ձեռիդ, ինչպես փոխվեց հանկարծ, այդ մատանին տեսնելով մատիդ: Նա գիտեր, վոր որեն-քով ամուսնացել ես ռուս յեկեղեցում, գիտեր, վոր յերեխաներ ու-նես, բայց ելի չեր ուզում հավատալ այդ դժբախտությանը: «Չե, ասում եր, չե, խելքի կգա, կրաժանվի»: Այժմ, վորդի, ահա դու և ա-հա հորդ կատակը... Արա, ինչ վոր ուզում ես, բայց չլինի թե հորդ անեծքին արժանանաս: Լսեցի՞ր, լսեցի՞ր· «անիծվիս, յերթե կամքս չկատարես»: Մեռնող հոր վերջին անեծքը յերկնքից է գալիս, հոգին է, վոր բերում է: Ահեղ մարդու միակ իղձն եր, վոր Թողնես այնտեղ նրանց և դառ մահես ծնողներիդ ոջախը: Այժմ դու գիտես:

Սմբատը լուռ, անշարժ, կանգնած եր մի ևնուշն դիրքում, մի չա ծրարը ձեռում բռնած: Մոր խոսքերը ճնշում եյին նրա հոգին և սիրտը մորմոքում: Նրանց մեջ նա դղում եր իր արած քայլի բոլոր պատաս-խանատվությունն իր համար և ծանր հետևանքները՝ իր ծնողների հա-մար: Բայց ի՞նքը, մի՞թե այդ ութ տարիներն անց եր կացրել հանգիստ ու յերջանիկ, մի՞թե նրա դառնությունը պակաս եր յեղել, քան ծնող-ներինը:

— Իսկ յեթե չկարողանա՞մ կատարել հանդուցյալի պահանջը,— հարցրեց նա դրեթե անդիտակցաբար և այնքան ցածր ձայնով, վոր հա-զիվ լսվեց:

— Ցավ չես կարող կատարել, յեթե աղնիվ մարդ ես,—ասաց հան-կարծ Միքայելը՝ զգալի չափով դրդված ձայնով:

Ցերկու յեղբայրները նայեցին միմյանց յերեսին: Միքայելի աչքերը վառվել եյին մի տարօրինակ չարախնդությամբ, և նա չարունակ կըր-ծոտում եր բարակ, քնքուշ բեղերը:

Մայրն ապշած նայեց նրան: Ի՞նչ, մի՞թե աղնիվ վորդին պարտա-վոր չե կատարել իր հոր վերջին կամքը:

— Միխա՛կ,—արտասանեց նա սպառնալից հանդիմանությամբ:

— Այո՛,—բորբոքվեց Միքայելը,—դու կտակը դրել ես վեցերիր մեծ վորդուդ անունով, բայց չղթացիր ի՛նչ մեծ պատասխանատվություն և ծանր պարտք ես դնում նրա վրա: Այժմ թո՛ղ նա վարվի ինչպես մի անաղնիվ մարդ կամ ընդունե իր հոր անեծքը... նա ուրիշ յելք չունի:

Արտասանելով այս խոսքերը, նա չտպով դուրս գնաց: Նրան հե-տևեց Իսահակ Մարութխանյանը, մի սուր ու զննիչ հայացք ձգելով

Սմբատի յերեսին: Նրա քայլվածքն էլ նույնպես հանդարտ եր, ինչպես ձևերը:

— Բայց արա ու կարդա հորդ կամքը,—ասաց այրին վորդուն:

— Վո՛չ, վաղը կկարդանք, թո՛ղ առայժմ մնա իմ մոտ:

Նա ծրարը դրեց դրպանը և մի ծանր, յերկարատև հառաչանք ար-ձակելով անցավ հյուրասենյակ, ուր վոմանք այցելուներից դեռ սպա-սում եյին, հուսալով վորևե բան լսմանալ հանգուցյալի կտակի բովան-դակության մասին:

II

Ցերեք յերեկո չարունակ հոգեհանգիստ եր կատարվում: Հասարա-կության բոլոր խավերը գալիս եյին իրենց վերջին հարգանքը մատու-ցանելու հանգուցյալին: Այլևս վոչ վոք չեր բամբասում, վոչ վոք չեր ասում, թե Մարկոս աղան յեղել է խաբեբա, կողոպտիչ, ժլատ, բռնա-կալ իր ընտանիքի համար: Մահն ամենքին հաշտեցրել եր նրա հետ, և ամեն վոք չտապում եր իր վշտակցությունն արտահայտելու ժառանգ-ներին:

Ուշադրության գլխավոր առարկան Սմբատն եր: Բոլորը նրա մա-սին եյին խոսում՝ թե՛ թեր և թե՛ դեմ: Շատերն ասում եյին, թե ծե-րունին դեռ յերկար կապրեր, յեթե չունենար սրտում Սմբատի ցավը: Ո՛ո, մաշեց խեղճ մարդու հոգին ու մարմինը դավաճան վորդու արար-քը: Մեղադրանքն արտահայտվում եր.չնչին յերևույթներով: Վոչ վոք չեր հա-մարձակվում բարձր խոսել: Ցուրաքանչյուրը վախենում եր մի դուշե լուրը հասնի միլիոնների ժառանգին: Բանն այն է, վոր արդեն ամբողջ քաղաքը գիտեր, թե Ալիմյան առևտրական տան դործերի դլխը Սմբատի ձեռքն է անցնում:

Կտակը բայ արին հանդուցյալի մահվան յերկրորդ որը, ինչպես ցանկացավ Սմբատը: Դա ավելի հանդուցյալի զգացումների դեղումն եր, քան չոր ու ցամաք դործնական թելադրություն: Ծերունին ասել եր՝ ծխական քահանա Տեր-Սիմոնն արձանագրել: Նախ՝ հանդուցյալը հանձնարարում եր Սմբատին աշխատել Միքայելին ուղիղ ճանապարհի բերելու, դուրս բերելով նրան այն անբարոյական, չռայլ կենցաղից, վոր կլանել եր նրան ամբողջովին: Հետո՝ պատվիրում եր արթուն հըս-կողություն ունենալ Արշակի վրա, սիրել ու հարդել մորը, ապրել նրա հետ մի հարկի տակ անբաժան: Այնուհետև նա խնդրում ու աղերսում եր «ուղղել» իր «սխալը»: Գալով դործնականին, հանդուցյալը, բացի մի քանի աննշան նվերներից՝ իր չքավոր ազգականներին ու բարեդոր-ծական նպատակով, բոլոր իր չարժական ու անչարժ կայքերը և բան-կային թղթերն ու ստանալիքները հանձնում եր Սմբատի իրավասու-

թյանը: Այրին նշանակում եր կրոսեր վորդու խնամակալ՝ մինչև չափահասություն:

Նշանավոր եր այն պայմանը, վոր հանդուցյալը դնում եր Միքայելի ժառանգական իրավունքների վերաբերմամբ: Նշանակում եր նրան ամսական ընդամենը մի հարյուր ռուբլի դրպանի ծախք, բայց իրավունք եր տալիս իր բաժին ժառանգությանը տիրանալու յեթե միայն կամուսնանա և անպատճառ «հայ-լուսավորչական» մի աղջկա հետ: Հակառակ դեպքում ցմահ պիտի բավականանար իր համեստ ամսականով: Իսկ ամուսնանալ կարող եր միայն իր չորայլ կենցաղը փոխելուց հետո:

Ամենի նշանավորը մի ուրիշ կետ եր: Սմբատն իրավունք չուներ իր բաժին ժառանգությունը կտակել վո՛չ իր «ոտարազգի» կնոջը և վո՛չ իր զավակներին: Յեթե կբաժանվի այժմյան կնոջից, իրավունք ձեռք կբերի ամուսնանալ մի հայ աղջկա հետ, այն ժամանակ նոր կնոջից յեղած զավակները կհամարվին նրա օրինական ժառանգները:

Կտակը ջարդուփշուր արավ շատ իրավացի և ապօրինի հույսեր: Շատերին դառնացրեց և ամենից ավելի Մարութխանյանին: Այս մարդը համոզված եր, վոր ժառանգության մի վորոշ մասը պիտի ստանա իր կինը: Նա կատաղեց, բայց իր ներսում. կտակը կարդացվելիս նրա դեմքի մկանունքը չշարժվեց, միայն կանանչ-դեղնագույն աչքերի մեջ փայլեց մի անսովոր չարամտություն: Թեքվելով կնոջ ականջին, նա չընջաց.

— Այդ կտակն ապօրինի յե:

Կինը զարմացած նայեց նրա յերեսին:

Մարդը շարունակեց.

— Հայրդ նրան գրել և տվել հոգեկան հիվանդության մեջ: Դա կտակ չե, այլ խրատ՝ մի ապուշ քահանայի ձեռքով: Դատարանը չի հաստատիլ նրան: Հեռանանք այս տնից: Այստեղ, բացի Միքայելից, ամենքը մեր թշնամիները կլինեն.. չուտով կտեսնես...

Ցեղ կնոջը չսպասելով, Մարութխանյանը քայլերն ուղղեց դեպի դռները՝ գլուխը բարձր պահած...

Աղգականների կեղծ վշտակցությունը, հարկավ, փոխվեց անկեղծ ատելության, ապա թշնամանքի: Բոլորը զինվեցին Սմբատի դեմ:

Պարզվեց, վոր ներքնահարկում պահվող վոսկով լի տոպրակներն անդորձ մարդկանց վառ յերևակայության ծնունդ են յեղել: Ներսը նին դուտ դրամ և թղթել միայն տոկոսաբեր թղթերի մեջ, այն էլ ընդամենը չորս-հինգ հարյուր հազար ռուբլի: Մնացյալ հարստությունը պարունակվում և անշարժ կալվածքների, հանքերի, գործարանների և յերկու չորենավի մեջ: Տրեխների գոյությունը տակավին չեր յերևում: Լուր տարածվեց, թե հանդուցյալը կտակել և՝ դնել նրանց իր դագաղի մեջ և հետը թաղել: Դյուրահավատ մարդիկ հոգեհանգստի ժամանակ մոտենում եյին աղայի դագաղին, վոր տեսնեն նվիրական վոտնամանները: Սակայն այնտեղ վոչինչ չկար, բացի ծերունու մոմի դույն ընդունած դիակից՝ սև ռեդինգոտի մեջ:

Կիրակի որը վաղ առավոտից Ալիմյանների տանն ասեղ գցելու տեղ չկար: Հանդուցյալի դագաղն իրենց ուսերի վրա դուրս տանել ցանկացողների թիվն այնքան մեծ եր, վոր Թաղման հանդեսի գլխավոր կարգադրիչ Սրաֆիոն Գասպարիչին անդամ հերթ չհասավ: Նա կատաղեց մարդկային կեղծիքի դեմ և ասում եր բարձրաձայն.

— Անիծվածնե՛ր, քանի մարդը կենդանի յեր, բամբասում եյիք, զրպարտում, հացը գլխին հարամ անում, հիմա ի՞նչ պատահեց, վոր հանկարծ բարեկամացաք... Իշտահներդ կապեցեք· Սմբատը խելքը չի կորցնել...

Պատարագիչն ապատամխո Տեր-Աշոտն եր, չոր-չոր դեմքով մի յերիտասարդ քահանա, վոր մի լրագրի աշխատակից եր և մի տեսակ վորձանք մյուս քահանաների գլխին: Թեմական առաջնորդ Գեւորգ յեպիսկոպոս Փիրվերդյանը նույն առավոտ եր յեկել Թեմի կենտրոնից՝ Թաղմանը ներկա լինելու համար: Այսուների մեկի առջև, փայտաչեն ամպհովանու տակ կանգնած, մտքում չարադրում եր «ավուր-պատշաճի» քարոզ:

62
38

Մոմերով չրջապատված և պսակներով ծածկված դագաղի առջև կանգնած եյին յերեք յեղբայրները՝ յերեք տարբեր խոհերով և դատողություններով:

Արշակը, սուգի նշան սև լաթը թևին կապած, մոլոր հայացքով նայում եր աչ ու ձախ: Զղում եր մարմնական թուլության ու քաղց, վորովհետև դիշերը լավ չեր քնել և առավոտից էլ բան չեր կերել: Զանձրալի եյին նրա համար պատարագչի չոր ու ղիլ ձայնը, ծանր, հանդիսավոր չեշտերն ամեն բառի վրա, այդ միապաղաղ «ալելույաները» և «խաղաղություն ամենեցուններին», տիրացուների աննշդրաշնակ ձայները, խունդ ամբոխի չչնջյունները, բուրվառից բարձրացող ծուխը, քյոռների ճնճղոցը, բազմաթիվ մոմերի լույսն ու մուխը: Չոր մահն այժմ նրան ուրախացնում եր, չե՞ վոր նա ազատվեց, վերջապես, մանրակրկիտ, ժլատ և խստասիրտ վերահսկողից:

Միքայելի սիրտը ճնշվում եր, ներվերը թուլացել եյին, յերեսը յերկայնացել, աչքերի տակերի խորշերը լայնացել և կապտել: Սմբողջ դիշերը չեր քնել: Այն պահից, յերբ իմացավ հոր կտակի բովանդակությունը, զադաղը նրա համար զարձավ ատելի ու զզրելի: Այժմ նրան թվում եր, վոր սառն ու քարացած դիակը ծաղրում և իրեն, ծիծաղում չարախինդ ու չարախնդիր՝ վորպես մի անծանոթ աշխարհից յեկած զևային ուրվական, վոր խլել և նրա յերջանկությունը: Ցեվ

ՀԱՊ· ՇԱՀՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

արդարև, մի՞թե ծայրեհծայր անամոթ ծաղր չէ ամբողջ կտակը: Դնել քսան և ութ տարեկան տղամարդին ուրիշի հրամանատարության տակ — մի՞թե կարող եր մի հայր ավելի դաժանորեն պատժել իր հարազատ վորդուն: Ո՛ր, անողո՛ք ծերուկ: Իսկ նա միամտաբար կարծում եր, թե այդ մարդու մահով կազատվի, վերջապես, ճանճարալի հսկողությունից, անտանելի կշտամբանքներից, կդառնա ինքնագլուխ, կապրե ինչպես ցանկանում է, կծախսե վորքան կամենում է: Կանդնած ավազ յեղբոր աչ կողմում թվում եր նրան, թե կանդնած է մի ոտար, անկոչ հյուրի հետ, վոր հեռու աշխարհից գալով, ուժով մտել է նրա սեփական տունը, տիրացել նրա իրավունքներին, ինչպես մի հրոսակ: Չե՞ վոր այդ մարդն ութ տարի դոյություն ուներ իր հոր կյանքում վոչ ուրիշ բանի համար, յեթե վոչ կատաղության ու անեծքների. չե՞ վոր նա առ միշտ աքսորված եր ծնողների տնից, լքված ու թքված վորպես դերդաստանի դերադույն արատ... Իսկ ա՛յժմ... Նա յեկել է ու կանգնել վորպես տեր և իշխանավոր...

Այլ եյին Սմբատի զգացումները: Մոայլ մտքերի մեջ խորասուզված, գլուխը կրծքին թեքած, կանգնած եր վորպես մի տեսակ դատապարտյալ: Վորքա՜ն հիշողություններ եյին վերականգնել նրա մեջ, վորպիսի՛ ծանր մտքեր եյին ալեկոծում նրա ուղեղն այն հարաշատ միջավայրում, ուր չատ տարիներ եր չեր յեղել և վորն այսոր կարծես հրում է նրան վորպես մի խորթ, անհարազատ տարր: Շա՞տ տարիներ վո՛չ, ընդամենն ութ տարի: Բայց թվում եր նրան, վոր իր կյանքի այս վերջին քառորդում ապրել եր, խորհել, զգացել ավելի, քան առաջ: Յեվ ինչ-վոր անխորտակելի պատնեշ այդ ութ տարիները բաժանում եյին նրան անցյալից: Յեվ վոչինչ նմանություն դոյության այդ յերեկու շրջանների մեջ, վոչ մի աննշան կապ: Դեռ մի չարաթ առաջ նա կարծում եր, թե առ միշտ անջատվել եր մերձավորներից և յերբե՛ք յերբե՛ք չպիտի վերադառնա ծնողների հարկի տակ: Հայրն անիծել եր նրան և զրկանքով հեռացրել իրենից և ինքն էլ կարծում եր, վոր արդեն մոռացել է նրան: Իսկ յերբ ստացավ ծերունու մահամերձ լինելու հեռագիրը, մի վայրկյանում ամեն ինչ տակն ու վրա յեղավ նրա սրտի մեջ: Յերկու տող դիրը վայրկենապես ալեկոծեց նրա մեջ ստած վորդիական զգացումները՝ վորպես ուժեղ ձեռքով արթնացված մի քար նիրհած լիճը, և նա նորեն իր հոգու խորքում զգաց յերմություն դեպի անցյալը: Յեվ այժմ նա հոր զագաղի առջև լալիս եր և լալիս եր անկեղծ, զառն արցունքներ թափելով սրտի մեջ: Կծու վիշտը մերթ ընդմերթ ցնցում եր նրան վոտքից մինչև գլուխ: Թվում եր նրան, թե ինքը, միայն և միմիայն ինքն է պատճառը ծերունու մահվան, ինքը՝ իր անուղղելի սխալով: Չե՞ վոր այդ յերկաթե առողջության տեր

յարտը կարող եր տալրել դեռ չատ տարիներ, չե՞ վոր հոգեկան տաճ Ջանքերն եյին վազաժամ քայքայել նրա մարմինը...

Սակայն վշտանալով, վողբալով ու ինքն իրեն դատապարտելով հանդերձ, նա այժմ եյ զգում եր, վոր իր և այն ծանոթ միջավայրի, այս մերձավոր և ընտանի դեմքերի մեջ բարձրացած պատնեշն անխորտակելի յե...

Բեմ բարձրացավ յեպիսկոպոսը և սկսեց փքուն խոսքերով դրվատել հանգուցյալի գանի մի բարեգործական նվերները, վոր վոչինչ եյին նրա հարստության համեմատ:

— Եչմիածնի վանքին հինգ հազար, Ճեմարանին հինգ հազար, մեր Մարզասիրական ընկերության տասը հազար, ուսումնարանին մի հազար, աղքատանոցին յերեք հազար: Թո՛ղ որհնվի հանգուցյալի անբասիր հիշատակը, թո՛ղ Աստված բյուր ի բյուրոց վարձատրե նրա աղնվագարմ ժառանգներին, թո՛ղ հանգուցյալի այս լուսապայծառ և յերկնաճառագանչ գործը ծառայե որինակ բոլոր ազգայնոց համար:

Յեվ այլն, և այլն, և այլն...

Պատարագն ավարտվեց, հոգեհանդիսը կատարվեց, դիակը դուրս տարան:

Յերը թաղման հանդեսը վերջացավ, արդեն յերեք ժամն եր:

Հակառակ նորամուծ սովորության, այրի Վոսկեհատը պահանջել եր, վոր հանգուցյալի հիշատակին այնպիսի մի հոգեճաշ տրվի, վորի նմանը յեղած չլիներ: Սմբատը համաձայնություն եր տվել՝ հակառակ իր հայացքներին, չկամենալով մորը վշտացնել:

Հուղարկավորների մեծ մասը ցրվեց, բայց և այնպես սգավորների ընդարձակ բնակարանը լցվեց: Բոլորը քաղցած եյին և անհամբեր սպասում եյին չամի՝ նույնիսկ պատարագի կեսից սկսած: Սպիտակ մաքուր սփռոցների վրա դարսած առատ ուտելիքները և գինու փայլուն չչերն ամենքի ախորժակն եյին գրգռում: Տեր-Սիմոնը—Ալիխանյանների քահանան, վոր պատվավոր քաղաքացիների հետ անցել եր առանձին սենյակ, առաջարկեց հանգուցյալի հոգու բաժակը: Նրան ձայնակցեցին «ազատամիտ» Տեր-Աշոտը և «պահպանողական» Տեր-Սահակը, և «Աստված հոգին լուսավորե» դարձվածքն անցավ սենյակից սենյակ և չատերին տրամադրեց լավ խմելու: Գինու և ողիի բաժակները դատարկվեցին, դանակ-պատառաքաղներն սկսեցին գործել, մեսաղի ու ափսեների հնչյունները խափանեցին ընդհանուր լռությունը: Տեսարանն սկզբում հիշեցնում եր Եչմիածնի վանական ճաշարանը՝ իր քարե սեղաններով: Հյուրերն ուտում եյին անխոս, աչքի տակով ծուռծուռ իրարու նայելով և իրարուց ամաչելով կամ իրարուց խրախուսվելով: Բայց գինու չչերի առաջին չարքը գլուխները տաքացրեց, և թրջված լեզուները բացվեցին, ինչպես թառամ բույսերն անձրևի ցողից:

Սմբատը, վոր վաղուց չեր տեսել նման հանդեսները, անցնում եր սենյակից սենյակ և հետաքրքրությամբ դիտում: Նա ինքը քաղց չեր ղղում և զարմանում եր ուտողների ախորժակի վրա: Շատերն սկսեցին գինու ազդեցությամբ կատակներ անել ու ծիծաղել, միմյանց հյուրասիրելով, վորպեսզի իրենք ևս առիթ ունենան խմելու: Սմբատի ղղացումները վիրավորվում էին: Մի կոշկակար ամեն անգամ բաժակը դատարկելիս, հարևանին արմունկով բոթում եր և աչքով անում՝ դեմուդեմ նստած իր արհեստակցի կողմը, ձեռը քսելով կրծքին. ոխայ, ի՞նչ անուշ և հարստ գինին: Կային այնպիսիները, վոր բերանները կերակրով լեցուն սինիկ անեկդոտներ էին պատմում և ծիծաղ չարժում: Վոմանք արդեն կարմիր գինով ներկել էին ճերմակ սփռոցները և վրեն աղ սփռել: Նրանք, վորոնք կշտացել էին, բղկոցն էին տալի: Մի քանի գործակատարներ զանազան միմոսություններով աշխատում էին միմյանց ծիծաղեցնել: Նրանց գլխավոր առարկան «աղվակատ» Մուխանն եր — դեղնադուն, ուռած քթով մի մարդ, վոր կերակրի յուրաքանչյուր պատառը կուլ եր տալիս մերթ գինով, մերթ ողիով: Մազերը վոշիոտ, զզզված, ալեխառը միրուքը խճճված շատ գործածված ավելի պես, աչքերի շրջանակները կարմիր, կեղտոտ, հնամաշ անդուն ռեդինկոտը կուչկուչված, նա հիշեցնում եր ասիական բաղնիսի մոխրատան բնակչին: Առավոտից մինչև յերկու-յերեք ժամը Մուխանը հաշտարար գատարանի առջև սրա ու նրա համար հատը տասը կոպեկով խնդրագիր եր հորինում կամ որենքներ բացատրում, իսկ այնուհետև որվա վաստակածը հանձնում եր ողետներին ամենայն բարեխղճությամբ:

Գործակատարները զղում էին նրա վրա հացի գնդիկներ: Նրանց նշանակն եր՝ «աղվակատ»-ի աղյուսագույն պարանոցի խոշորագույն խուլինջը: Ստեպ-ստեպ նրա զողզող ձեռներից հատակի վրա եր ընկնում մերթ դանակը, մերթ պատառաքաղը, անձեռնոցիկը կամ մսի կտորները: Ցավ յերբ ցածր եր թեքվում՝ ընկածը վերցնելու, հացի գնդիկները կարկտի պես էին տեղում նրա պարանոցի վրա:

Մի անգամ, յերբ գնդիկներից մեկը դիպավ քթին, բերանը բաց արավ հայհոյելու, մի ձեռ յեռևից վակեց նրա բերանը:

— Շատ մի՛ կռնծիր,—չչնջաց նրա ականջին մի կարճահասակ մարդ դեղնադուն մազերով և ասլակու պես փայլուն աչքերով,—քեզ հետ գործ ունեմ... յերեկոյան ութ ժամին կգաս մեր տուն...

Ասաց փոքրահասակ մարդը և իսկույն չքացավ:

Ցեղանակը պարզ եր, ողը ջերմ, լուսամուտները բաց: Դեպի մուտքը թեքվող արեգակի չողերը խուրձերով ներս էին թափվել և լուսավորում էին բազմաթիվ գլուխների խայտաբղետ չարքերը: Սմբոխի չունչը, կերակուրների գոլորշին, ծխախոտի ծուխը, փոշին, կեղտն ու քրտինքը, միմյանց խառնվելով, սենյակում գոյացրել էին ստորին տեսակի պանդոկային մթնոլորտ, ծանր, անախորժ: Շատերն էին արդեն հարբել, բղկոց էին տալիս պարսիկների պես, ցույց տալով, վոր իրը չեն ուզում, և դարձյալ ուտում էին. ով գիտե մեկ ել յերբ պիտի տեսնեն այդպիսի առատ սեղան:

Մարդկանց ադահությունը և զվարթ, ուրախ դեմքերը, վոմանց անամոթ բարձրաձայն ծիծաղներն ակամա զղվանք էին ներշնչում Սմբատին: Վաղուց նա չեր տեսել այդպիսի նողկալի տեսարան: Անցնելով «աղվակատ» Մուխանի մոտով, նկատեց, վոր արբշիռը գինին թափել է սպիտակ սփռոցի վրա և աղամահ է վինտռում՝ կարմիր լճակը աղով ծածկելու համար: Նրա աչ ու ձախ կողմերում նստած դերձակները բարձրաձայն քրքջացին, լայն բանալով կերակրով լի բերանները, ինչպես չանաճկներ:

— Ցես ձեզ քաշ կտամ դերձալի տակ, չուն չան... կատաղեց Մուխանը:

Սմբատը, զղվանքը զսպելով, չտպեց անցնել «պատվավորների» սենյակը: Այդտեղ ել ուտում էին ախորժակով, բայց արժանավայել, խմում էին շատ, բայց վոչ չտպով և վոչ աղմկալի, ծիծաղում էին, բայց ցածր ձայնով: Տեր-Աշոտ ադատամիտը վողևորված խոսում եր ազգի, յեկեղեցու նորադույն պահանջների մասին: Նրա ադատամիտ հայացքները կատաղեցնում էին պահպանողական Տեր-Սիմոնին, վոր առհասարակ ատելով ատում եր իր յերիտասարդ պաշտոնակցին: Շուտով նրանց մեջ սկսվեց մի թեթև վիճաբանություն, վոր հետզհետե տաքացավ: Բանն այն է, վոր յուրաքանչյուրն աշխատում եր փայլել իր դիտությամբ՝ հարուստ սեղանակիցների ուշադրությունն ու համակրանքը գրավելու համար: Այնինչ՝ հարուստները լսում էին վիճաբանությունն արտաքուստ ուշադիր, իսկ մտքով գրաղված իրենց գործերով և Մարկոս աղայի թողած հարստությամբ: Մեկը նավթահոր եր փորել տալիս և յերեկ խողովակը ծռվել եր հորի մեջ, մյուսի գործակատարը գողություն եր արել, յերրորդը՝ վաղը պիտի բանկից աղաներ իր մուրհակները, մի ուրիշն ել մտածում եր՝ արդյոք լավ չի՞ լինիլ, վոր ինքն ել իր հանքում գետնի տակով խողովակ անցկացնելով, հարևանի նավթը գողանա, ինչպես անում էին վոմանք: Մի խոսքով վոչ մեկը գլուխ չուներ Տեր-Աշոտի լուսավոր գաղափարները լսելու...

Հոգեհացին ներկա էին նաև Մինքայելի մտերիմ ընկերներից մի քանիսը: Սրանց ինչ նրանց վրա նորաձև եր, սկսած կոշիկների սուր ծայրերից և տափակ կրունկներից մինչև գլուխների մազերի սանրվածքը և բեղերի սրածայր ցիցը դեպի վեր:

Մեկը նրանցից չհնձալով նկարագրում եր իր հարեւանի համար մի նորեկ ոսկերեւային յերդհնուհու կուրծքն ու վոտները...

— Ցերեկ հետը ծանոթացա կուլիանների յեւևում, խնդրեց, վոր այցելեմ... Նրա կենացը...

Դա քաղաքում հայտնի ղվարճամոլ Գրիգոր Հաբեթյանն եր, վորին համառոտ կոչում եյին «Գրիշա»: Կարմիր, մսալի յերեսով, հաստ շրթունքներով, վառվռուն սեւ աչքերով մի յերիտասարդ եր, վոր սիրում եր աղմկալի քեֆեր, կոտրաել, ջարդել, սրա ու նրա վրա չհեր չպըծտել, թուղթ խաղալ, չամպայնը խմել հզից, դիշերները վոդոցներում թառ ու դուդուկ ածել տալ, վոստիկանների հետ կռվել, հետո նրանց կաշառել: Նրա մի կողմում նստած եր նիհար, դալուկ դեմքով Մելքոն Ավրումյանը, քսան ու վեց տարեկան մի հանքատեր, վորի աչքերի մեջ վտյլում եյին կիրքն ու այն սոսկալի ախտը, վոր նրան դարձրել եր կմախք: Մի կողմում նստած եր քնահարը դեմքով, թմրած աչքերով Մովսես Բաբախանյանը, վորի ուղեղն ու զգացումները բացառապես թղթախաղին եյին նվիրված:

— Ինձ եւ կծանոթացնես, այնպես չե՞,—ասաց Մելքոն Ավրումյանը:

— Ընթրիք յերկու դյուժին չամպանիայով,—պատման ղրեց Գրիշան:

— Գալիս ե:

— Վո՞րտեղ:

— Շոգենավի վրա:

— Ա՛ֆերիմ. բայց ադդ քիչ ե:

— Ե՞լ ինչ ես ուզում:

— Որկեսոր...

— Ցեկավ:

— Ընթրիքից հետո բարկազ, մինչև Նարդին կզզին... Լուսին դեչեր ե...

— Համաձայն եմ:

— Ադդ ի՞նչ եք քչփչում,—մեջ մտավ քնահարը Մովսես Բաբախանյանն որոշկատալով:

Մելքոնը պատմեց պայմանաղրությունը:

— Մենամարտություն,—չհնձաց Մովսես Բաբախանյանը և ձեռը տարավ ծոցի գրպանը:

Նա հանեց մի հարյուրանոց թղթադրամ, սեղմեց բռունցքի մեջ:

— Ջո՞ւդ, թե՞ կենա,—հարցրեց, հազիվ թմրած աչքերի կոպերը բարձրացնելով:

— կենա,—պատասխանեց Գրիշան:

Նայեցին թղթադրամի թվահամարին —կենա եր: Մովսես Բաբախանյանը գրամը տվեց Գրիշային:

Միքայելը, նստած եր նրանցից հեռու, Խահակ Մարուքխանյանի մոտ: Թվում եր նրան, վոր ընկերները ծաղրում են իրեն: Շատ անգամ եր պարծեցել նրանց մոտ, թե հոր մահից հետո պիտի այնքան ծախսե, վորքան վոչ վոք դեռ չի ծախսել: Ցեվ ադդոր հանկարծ հայտնվում ե, վոր նա լիազոր ժառանգ չե, այլ իր յեղբոր սոորադրյալը՝ հետին դրծակատարի ամսականով:

— Ին՞չ անեմ, ասա՛, Խահակ, ի՞նչ անեմ,—հարցնում եր նա ստեպստեպ Մարուքխանյանին:

Դեղին–կանաչադույն աչքերն ակնոցների տակից նայում եյին այդ պահին չատ մտախոհ: Պարզ եր, վոր Մարուքխանյանի գլուխն զբաղված եր արտաքո կարդի լուրջ խնդրով: Հանկարծ նա կամացուկ իր անչարժ գլուխը թեքեց Միքայելի կողմը և չհնձաց.

— Իրիկնադեմին յե՛կ մեր տուն, խոսելիք ունեմ...

— Ուրեմն հուլա կա՞,—արտասանեց Միքայելը մի փոքր ուրախանալով:

— Ցե՛կ, կխոսենք...

Հոգեհաչն ավարտվեց, տերտերները պահպանիչ ասացին, հյուրերն ակսեցին ցրվել, բացի Միքայելի ընկերներից ու բարեկամներից: Նրանք դեռ չգիտեն Մարկոս աղայի կտակի բովանդակությունը, ուզում եյին գիտենալ:

Տան ընդարձակ բակում խռնվել եր խեղճերի ահագին բազմություն: Հանգուցյալի գործակատարներն ու ծառայողները նրանց կբակուր եյին բաժանում: Տիրում եր անասելի աղմուկ և իրարանցում: Կեղտոտ, կիսամերկ մուրացկանները միմյանց հրում եյին, զարկում, հայհոյում, աշխատելով իրարու առաջել և մոտենալ խոհանոցին:

Պղնձե հսկայական կաթսաների հնչյունները, չերեփների զրնգոցը, ծառայողների գոռում–գոչյունները, քաղցած խուժանի կառաչյունը, իրարու խառնվելով՝ ասիական բազարի տպավորություն եյին գործում: Կոպտությունը, կեղտը, կերակուրների գոլորշին, ցնցոտիների հոտը նողկանք եյին ներշնչում կուշտ և անտարբեր դիտողին: Մի կույր հայ վայտով անխնա հարվածում եր աջ ու ձախ իր համար ճանապարհ բանալով դեպի այն կողմ, ուրկից կերակուրների հոտն եր գալիս: Մի պատանի պարսիկ, նրա վրեջերից քաշելով, աշխատում եր ինքն առաջ ընկնել: Մի ուրիշ անդամալույծ սայլիաքեց, ընկավ մի ատորի վրա և կատաղություններից խածնեց նրա գարշապարը: Մի կարմրերես լեզգի, վորի թևերը մինչև արմունդները կտրած եյին, հարձակվում եր սրա ու նրա վրա և ատամներով խլում մսի կտորները և գրեթե առանց ծամելու կուլ եր տալիս: Թափառաշրջիկ չների մի վոհ–

մակ խառնվել եր մուրացկաններին և մրմռալով կռծոտում եր դեռնե վրա թափված վոսկորներն ու լակում կերակրի կեղտոտ հեղուկը: Մերթընդմերթ գործակատարներն ու ծառաները միահամուռ ուժեղով հարճակվում ու յետ եյին մղում խուժանը, բայց վոչինչ չեր ոգնում՝ վորևե կարգապահություն վերականգնելու:

Վերջապես բոլոր ուտելիքները բաժանվեցին, խոհանոցի դռները փակվեցին, բայց խուժանը դեռ չեր արտաքսվում և այս նշանակում եր, վոր տակավին կա մի բան, վորին պետք է սպասել: Ահա դեպի տան յերկրորդ հարկը տանող սանդխտի վրա հայտնվեց Սրաֆիոն Գասպարիչի հանդիսավոր կերպարանքը: Նա հրամայեց ծառաներին՝ մեկիկ-մեկիկ մուրացկաններին թույլ տալ իրեն մոտենալու: Ձեռքում բռնած ուներ մի մեծ դույնզդույն թաշկինակ՝ արծաթե դրամներով լի: Այրիացյալ տիկին Վոսկեհատն եր կարգադրել սեփական դրամից հարյուր ռուբլի բաժանել մուրացկաններին՝ հանդուցյալի հիշատակին:

Սրաֆիոն Գասպարիչը թաշկինակը չարժեց, դրամները հնչեցին: Արծաթի ախորժալուր ձայնն էլեկտրական տոկի պես անցավ խուժանի մարմնով, ցնցեց նրան: Բանի մի վայրկյան նա անշարժ եր և ապշած նայում եր վաղեմի ատիճանավորի դյութական թաշկինակին: Բայց ահա նա չարժվեց, դղրդաց և, խուլ աղաղակ բարձրացնելով, դիմեց դեպի թաշկինակը՝ վորպես դիշակեր թռչունների յերամ: Այլևս վո՛չ ծառաներն ու գործակատարները և վո՛չ փողոցից յեկած վոսոխականները չկարողացան զսպել խեղճերի մերկանդամ բանակը:

Ծերունին շրջապատվեց: Հարյուրավոր կեղտոտ, առողջ և դոս, առնական և կանացի ձեռներ միաժամանակ բարձրացան վեր և ոդի մեջ կազմվեց մի չարժուն անտառ կաշվից ու վոսկորից: Կային անդամալուծներ, զուրկ յերկու վոտներից: Ձեռների վրա սողալով, սրա ու նրա վոտները կրծոտելով, ճղնում եյին իրենց համար ճանապարհ բանալ: Կային թոքախտավորներ, վոր անզոր եյին առաջ չարժվելու, այնքան հյուծվել եյին նրանց մարմինները, կային բորոտներ անդամ, վորոնցից խուժանը չեր զգուշանում: Պատանիներն արմունդների հաբ-ված-ով մրմռանց քիթ ու ծնոտներն եյին ջարդում: Կանայք, ճչալով ու հայհոյելով, իրարու մազերն եյին քաշկռտում: Պարսիկներն որհնում եյին հանդուցյալի հիշատակը և աղերսում նրա համար յերկնային դրախտ: Քրիստոնյաներն անզուսպ հայհոյում եյին «անհավատներին», անխնա ծեծելով նրանց: Ալացուցիչ ժխորի մեջ լսվում եյին դանդաղ լեզուներով ամենակեղտոտ ածականներ, ամենազազրելի հնչյունները, վոր դարերի ընթացքում կազմվել եր ցեխի ու կեղտի ճնշրանում, ուր ապրում են ու չնչում մարդկային մերկությունն ու անոթությունը: Մարդկության ամոթն եր այդ և դաժանությունը, անարդանքը բնության և ծաղրը տիրող կարգ ու կանոնների և ապիկար որենքների:

Տեսարանը հետաքրքրել եր հյուրերից չատերին: Պատշգամբի վրա ժողովված, նայում եյին դեպի վար և...զվարճանում, տեսնելով ապականության մեջ սրտրվող մարդկային հոդին ու մարմինը: Դրանք մեծ մասամբ հարուստների զավակներ եյին, վորոնք իրենք իրենց անվանում եյին «վոսկե յերիտասարդություն»:

— Զո՞ւդ, թե՞ կենա,—ասում եր չարունակ Մովսես Բաբախանյանը մեկին կամ մյուսին և խոշոր թղթադրամները մերթ առնում եր ու մերթ տալիս:

Այստեղ եր նաև ազատամիտ լրագրի թղթակից Արմենակ Մարզպետունին, թուխ, դեղնագույն դեմքով, մեծ քթով մի յերիտասարդ, հոգին յերկայն վատ կարված ռեդինգոտ, վորի անթիվ ծալերը գույց եյին տալիս, վոր նոր է անդուկից դուրս բերվել: Տեսարանը նրան թելադրում եր մի հոդված, վոր պիտի կրեր «Հակադրություն» վերնագիրը: Նայում եր վար — քաղցի ու մերկության սոսկալի պատկերը, ուր մարդիկ չներից չեյին տարբերվում: Նայում եր վեր — կշտության ու անհոգության կենդանի մարմնացում: Այնտեղ կիսամերկ մարմիններ, կեղտոտ ու դղրդված մազերով վողորմելի դլուխների մի քաոսանելի ճահիճ: Այստեղ՝ վերջին տարազի հագուստներ, վոսկե շղթաներ, թանգարժեք «բրելոկներով», աղամանդյա մատանիներ ու փողկապի քորոցներ: Կարելի յե խղճալ ստորինին, դրչով համակրել նրան, սակայն գրավիչը վերինն եր:

Թղթակիցը մոտեցավ Սմբատին, վոր դիտում եր իր սեղանի վրչքանքներից խլրտող խուժանը, և ասաց.

— Պարոն Սմբատ, յես այսոր ևեթ մտադիր եմ թաղման հանդեսը նկարագրել և ուղարկել «Կայծակ» լրագրին, վոր, ինչպես դիտեք, ամենից հարգվածն է ու տարածվածը:

— Ինչպես կամենաք,—արտասանեց Սմբատն անտարբեր, նույնիսկ չնայելով թղթակցի յերեսին:

— Մեր պարտքն է առալորեկ հանել հանդուցյալի որինակելի բարեգործությունը... Քարոզն այստեղ միայն լսեցին... դրվածը կկարդան աշխարհի բոլոր անկյուններում... Ուստի թույլ տվեք նախքան դրելը մի քանի լրացուցիչ տեղեկություններ խնամել ձեղնից...

— Մի ուրիշ անգամ, պարոն, այսոր դրա ժամանակը չե,—ասաց Սմբատը և յերեսը դարձնելով հեռացավ:

Թղթակիցը նրա յետևից մի կատաղի հայացք ձգեց և մտքում ասաց. «ա՛յժմ յես դիտեմ՝ ի՛նչ պետք է դրել, հղբացած բուրժուա՛»:

Մոտեցավ ազատամիտ Տեր-Աչոտը:

— Ցտեսություն, Սմբատ Մարկիչ, թույլ տվեք կրկին ու կրկին ասել, վոր ձեր հայրն իր անունն անմահացրեց:

— Պարոն Սմբատն իր հանդուցյալ հոր արածների արժեքը մեղ-

Ելից լավ է գնահատում,—միջամտեց պահպանողական Տեր-Սիմոնը, որ քայլ-քայլ հետևում էր Սմբատին՝ անալին քահանայի իրավունքով:

Սմբատը՝ քաղաքավարի, բայց սառը սեղմեց մեկի ու մյուսի ձեռքը և, յերեսը դարձնելով, հեռացավ:

Բազմաթիվ նախանձոտ հայացքներ ուղեկցում էին նրան ամենուրեք: Այնինչ այդ պահին նա իր սրտի վրա զգում էր մի այնպիսի ծանրություն, որի նմանը յերբեք չէր զգացել...

III

Հոր առանձնասենյակում նստած, Սմբատը կարդի յեր բերում հանդուցյալի հաշիվները:

Սեղանի վրա փռված էին անթիվ թղթեր — պայմանագրեր, հաշվեթղթեր, մուրհակներ: Ծանոթանալով հանդուցյալի գործերին, մրտքում վորոճում էր այն ընթացքը, որ պիտի բռներ իր համար մխանդամային նոր և անծանոթ առևտրական ասպարիզում: Սակայն չէր կարողանում իր ուշքը հարատև կենտրոնացնել միայն այս խնդրի վրա: Կար մի ուրիշ բան, որ բռնությամբ կաշկանդում էր նրա միտքը: Ներթ նրա առնական զեմքով սահում էր դառն ժպիտ, մերթ մռայլ ճակատը պայծառանում էր:

Սեղանի վրա թանաքամանին հենած էր մի մեծ լուսանկար: Ահա նրանք, այն թիանկապին եյակները, որ տարիներ շարունակ անջատել էին նրան մայրենի միջավայրից և ծանրացրել հոր անեծքը նրա հոդու վրա: Սոսկալի դիլեմմա. նա ատում է իր կնոջը և սիրում զավակներին: Տանուհինդ որ եր ընդամենը բաժանվել իր սրտի ամենանուրը ու ամենագեղյան թելերից, հոդու ամենաթրթռուն չողերից և այժմ վորքա՜ն կարոտ, զառնություն ու վիշտ: Ա՜խ, նա միշտ սիրել է իր զավակներին, բայց յերբեք այդչափ, յերբեք: Ցավ ահա նրան ուզում են տանիել բաժանվել նրանցից, բաժանվել հավիտյան՝ հանուն մի-վոր տխմար որենքների, մի-վոր վայրենի նախապաշարումների: Ի՞նչ, մի՞թե հնարավոր է դուրս դլխել սիրտը կրծքի տակից, անջատել հոդին մարմնից և... ապրել:

Վո՜չ, վոչ. նա չի սիրում իր կնոջը և վաղուց է յեկել այն յեղրակացության, որ յերբեք չի սիրել նրան և վոչ ել սիրվել նրանից: Դա մի սխալ եր, մի անդգուշություն, որ նա գործեց առանց լինքն իրեն հաշիվ տալու, առանց իր զգացումների խորքը վերլուծման յենթարկելու, ինչպես արել և անում են շատ շատերն իրենց յերիտասարդ հասակում:

Իսկ յերբ զգաց, որ մոլորվել է, արդեն ուշ եր, շատ ուշ: Ի՞նչ, նա վորպես աղնիվ մարդ չպիտի՞ կապվեր որինական կապով այն աղնիվ ծնողների մաքուր և անպատկան աղջկա հետ, վորին դրկել եր կուսությունից, հրապուրելով նրան և նրանից հրապուրվելով: Վերջապես, նա պիտի վոդո՞ց նետեր այն փոքրիկ անմեղին, վորի ծննդյան պատճառն եր, իր հարազատ զավակին: Ցավ ինչո՞ւ, վո՞ր բարոյական իրավունքով: Վո՜չ, վո՜չ, վորքան ևս դառը լիներ մոլորությունը, այնքան քաղցր եր նրա հետևանքը: Ցավ ահա նա ամուսնացավ, նա ծնողների սև նախապաշարումներն ու անմխիթար ավանդապահությունը զոհելով աղնվության զգացմանը և բարոյական մարդու տարրական պարտականության: Ի՞նչ փույթ, վոր նա վռնդվեց ծնողների հարկից և արժանացավ հոր անեծքին:

Այսոր նա վերադարձել է այդ հարկի տակ, մնում է անեծքը: Պե՞տք է կրել այդ անեծքը, թե՞ սիրտը կրծքի տակից դեն շպրտելով, ազատվել այդ անեծքից: Հետո՞. մի՞թե ավելի մեծ, ավելի դաժան մի անեծք չպիտի ծանրանա նրա հոդու վրա — անմեղների հավիտենական անեծքը: Վո՜չ, վո՜չ, նա կարող է ատել նրան, վորին մի ժամանակ կարծում եր, թե սիրում է և վաղուց արդեն ատում է, բայց ի՞նչպես բաժանվել հարազատ զավակներից, քանի վոր ամեհի զազանն անգամ դեն չի շպրտում իր զավակներին: Ավելի դյուրին չի՞ լինիլ, արդյոք, կրել մի համառ ու խավարամիտ հոր անեծքը, կրոնակից-ների ծաղրն ու արհամարհանքը, քան դառնալ անաղնիվ մարդ, անսիրտ ծնող և կրել հոդու վրա սև սրատ և խղճի վրա կապարյա ծանրություն:

Սմբատը նորեն ու նորեն վերցրեց նվիրական լուսանկարը և հպեց իր շրթունքներին: Նա չէր նկատում, վոր այդ պահին մեկը հանդարտիկ մոտենում է իրեն անլսելի քայլերով:

Այրին մի վայրկյան կանգ առավ վորդու յետևը, զգացվեց նրա հայրական սիրով ու գլուխը տխրորեն շարժեց: Բայց դա անցողիկ մի վայրկյան եր, մի թույլ չողչողուն, վոր անցավ խավարի միջով և շուտով տեղը տվեց ավելի զորավոր ուժի: Ցավ այրեի աչքունքամբ չընթռունքները դողացին ու նրա կրծքից դուրս թռավ մի ծանր հառաչանք:

— Ինչ զավակնե՞րն են,—հարցրեց նա, ձեռը դնելով վորդու ուսի վրա:

Սմբատը ցնցվեց, գլուխը բարձրացրեց և նայեց մորը, վոր հագած եր վոտքից մինչև գլուխ սգավորի զգեստ:

— Ա՜խ, ինչ զավակնե՞րն են,—կրկնեց այրին:

— Ա՜խ, մա՜յր, իմ հարազատ զավակներն են,—պատասխանեց Սմբատը, լուսանկարը դնելով իր տեղը:

— Վո՜չ, հարազատ չեն, վո՜րդի, վո՜չ:

— Մա՜յր.... պոռթկաց Սմբատը հանդիմանորեն:

— Այո՛, այո՛, քեզանից են, բայց քոնը չեն:

— Մայր, այդպես մի՛ խոսիր, դու էլ ծնող ես, դու էլ ունիս զավակները, դու էլ սիրել ես նրանց:

— Այո՛, սիրել եմ և սիրում եմ. բայց լսի՛ր, վո՛րդի...

Այրին հանդարտ նստեց վորդու դեմ ու դեմ, ձեռները դրեց կրծքի վրա և խորին կարեկցությամբ լի հայացքն ուղղեց նրա յերեսին: Այդ հայացքը թեթևակի չփոթեցրեց Սմբատին, բարկության հետ մի տեսակ անցողակի ատելություն զգաց նա դեպի իր ծնողը: Թվաց նրան, վոր գանվում է վոչ սիրող մոր, այլ մի անողոք դատավորի առջև:

— Վորդի,—սկսեց այրին, ծանր հառաչելով, բավական ես, ինչքան խայտառակեցիր քեզ, ծնողներիդ ու ամբողջ մեր գերդաստանը: Դու խելոք տղա չես, մանկությունից յեղել ես մտածող ու աչքաբաց: Հայրդ գիտեր այդ և դրա համար քեզ հանձնեց իր դործերը: Ձե՞ս մտածում, վոր արարմունքդ դեմ է մեր հայրերի ու պապերի ավանդություններին և մեր յեկեղեցու սուրբ որենքներին: Տանուհինդ որ առաջ հայրդ նստած եր ահա այդտեղ, քո նստած բազկաթոռի վրա: Ծեղճ մարդ, յերբեք այնպես մտահոգ ու տխուր չեր յեղել: «Վոսկեհա՛տ, ասաց նա, յերազ եմ տեսել, չուտով մեռնելու յեմ, ինչ անեմ Սմբատի վերաբերմամբ, չեմ ուզում մեռնել անհաշտ»: Նա սկսեց լաց լինել, հեկեկալով յերեխայի պես, հետո ձեռը դնելով ուսիս վրա, յերդվեցրեց ինձ ծնողներիս գերեզմանով, մեր զավակների ու յեղբորս սիրով, վոր վոտներդ ընկնելով, աղաչեմ, պաղատեմ քեզ խելքի գալ: Նա իր կտակի մեջ քիչ է դրել, բայց չատ է ասել: Գիշեր-ցերեկ նրա ուշքն ու միտքը դու եյիր միայն, դու, վո՛րդի:

Ցավ այրին, մեռաքսե սև թաշկինակով սրբեց արտասուքը:

— Մայր,—արտասանեց Սմբատը, զսպելով և՛ իր բարկությունը, և՛ իր ատելությունը,—ուրեմն դու ուղում ես, վոր հարազատ զավակներիս փողո՞ց ձգեմ, ինչպես մի անպետք լաթ:

— Քա՛վ լիցի, վո՛րդի, ինչո՞ւ յես փողոց ձգում: Հայրդ փափագում եր, վոր միայն անունդ խլես նրանցից և այդ ոտարազգի կնոջից: Թող ապրեն, ինչպես ուղում են: Գո՛հություն յերկնավորին, հանգուցյալն այնքան հարստություն է թողել, վոր դու կարող ես նրանց ապահովել մինչև մահ: Թող ուտեն քո ժառանգության մի բաժինը, Տերը նրանց հետ...

— Մայր, յես հասկացա քեզ, բավական է, այլևս վո՛չ մի խոսք այդ մասին,—ընդհատեց վորդին սրտմտությամբ:

Նա վոտքի յելավ և ձեռները դնելով անդրավարտիկի դրպաններըը, մոտեցավ լուսամուտին: «Վո՛չ մի խոսք». բայց ի՞նչպես չխոսե մի մայր, վոր վորդու սիրուց տանջվել է ութ տարի չարունակ և վորի վրա մի տանջված հայր սուրբ պարտականություն է դրել մոլորյալ վորդուն ուղիղ ճանապարհի բերելու: Ի՞նչպես չխոսե մի մայր, քանի վոր նրա սիրեցյալ զավակի վրա կարող է ծանրանալ հայրական անեծքը: Ցավ Վոսկեհատը չարունակեց: Նկարագրեց իր տառապանքները, ամուսնու տանջանքները, ազգական-բարեկամների դառը կշտամբանքները, ծանոթների պարզ ու խուլ ատելություններն ու արհամարհանքները, ազգի և յեկեղեցու անեծքները...

Սմբատը լսում եր լուռ, հուզված, անդադար անցուդարձ անելով: Յերբ մայրն ավարտեց իր ասելիքը, նա ձեռն ամուր զարկեց ճակատին և մազերը ճանկելով, արձակեց մի դառն ու յերկարատև հառաչանք: Ապա ասաց.

— Մայր, ասացիր ինչ վոր ուղում եյիր ասել: Այժմ թո՛ղ ինձ հանգիստ, թո՛ղ վոր մենակ մտածեմ իմ անելիքի մասին:

— Բայց այսոր, չե՞, այսոր կվճռես անելիքդ,—համառեց այրին:

Ներս մտավ Սրաֆիոն Գասպարիչը և սկսեց քրոջը հանդստացնել: Դեռ ժամանակը չե այդ ծանր խնդիրը վճռելու: Թո՛ղ սուգի որերն անցնեն, հետո ինքը կխոսե Սմբատի հետ, կբացատրե բոլոր հանգամանքները և կհամոզե, վոր չի կարող հոր վերջին ցանկությունը չկատարել: Իսկ այսոր պետք է ընդունել Թեմական առաջնորդին, վոր ցանկություն է հայտնել «սգավորին անձամբ մխիթարելու»:

— Մարդ է ուղարկել խնդրելու, վոր տանն սպասես,—դարձավ Նա քեռորդուն:

Աղդարև, մի ժամ անցած, սպասավորը հայտնեց, թե յեպիսկոպոսն արդեն իջնում է կառքից:

Նորին սրբազանության մուտքը հանդիսավոր եր: Գալիս եր ինչվոր մի յերևոտասարդ վարդապետի, քաղաքի բոլոր քահանաների և յերկու յերեսփոխանների ուղեկցությամբ, կարծես ցույց տալու համար իր դիրքի բարձրությունը: Յերկու հակառակորդները — կարմրերես, ամրակազմ, սև ու փայլուն միրուքով Տեր-Սիմոնը և նիհար դեմքով, վոխտ մարմնով, ակնոցավոր Տեր-Աչոտը, սրբազանի թիկերի տակ մտած, ոգնում եյին նրան բարձրանալու դորգերով ծածկված սանդուխտը:

Ձիշտ հիսունուհինդ տարեկան եր սրբազանը, միջահասակ, դեր, պարարտ, կլորիկ, ինչպես լավ կերակրված մի խոզ: Նրա մսալի ու վայն յերեսը ձգել եր վար մինչև կուրծքը մոխրադույն միրուքը, վոր թևատարած բազեյի եր նմանվում: Փայլուն մեռաքսե վեղարի տակից յերևում եյին մի զույգ խիստ չարժուն աչքեր, ուռած ու կարմիր կոպերով, վորոնց մի մասը ծածկված եր խիտ ու յերկայն հոնքերով: Հաստլիկ և ծայրը մի քանի կոշտ մազերով զարդարված քթի աջ ու ձախ կողմերում յերևում եյին յերկու լերդացույն ուռուցքներ, վոր իրըև թշեր եյին: Դա նրա յերեսի միակ մասն եր առատաբույս միրուքից

ազատ: Պարանոցից կախված էր մի ծանրակշիռ վոսկե չղթա, որի վրա հանդիսատ բազմած էր մի մեծ ականակուռ խաչ:

Մինչ նա ծանր ու բարակ բարձրանում էր, յերկայն արծաթակոթ դավազանի ծայրը զարկելով սանդիսի աստիճաններին, աչքերը մերթ դեպի աչ, մերթ դեպի ձախ պտտելով, զննում էին հարուստ տան մուտքը:

Սմբատը սանդխուի ծայրում թեքվեց համբուրելու սրբազանի աջը, որը ծածկված էր մաղերով և զծավորված կապույտ-կարմրագույն յերակներով, որոնցից կարծես արյունը պատրաստ էր դուրս ցայտել մի թեթև հպումից:

Սրբազանը հառաչեց չունչ առնելու համար՝ մարդուն անիծելով իր հաստ փորը: Բայց թո՛ղ չըլսատատողները կարծեն, որ այդ հառաչանքը խորին վշտակցության արտահայտություն է դեպի սպասվոր յերիտասարդությունը:

Հանդիսավոր թափորը, որի սկիզբը սրբազանն էր, իսկ վերջը մի տաճկատառնչի զաղթական քահանա զորտագուն կարճ վերարկուով, դիմեց դեպի հյուրասենյակ՝ Սմբատի և Սրաֆիոն Գասպարիչի ուղեկցությամբ: Այստեղ նորին սրբազանությանն սպասում էին այրի Վոսկեհատը, Մարթան և քանի-մի աղգական ծեր կանայք: Բոլորն էլ համբուրեցին սրբազանի աջը և ստացան նրա որհնությունը:

Տեր-Սիմոնն ու Տեր-Աչոտը սրբազանին բազմեցրին թավշե բազկաթոռի վրա, ուր նա թաղվեց մինչև վեղարի ծայրը, ինչպես մի ձուլածո ոսկե բամբակի մեջ:

— Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Հայրապետը,—սկսեց յեպիսկոպոսը հանդիսավոր չեշտով,—հաճել է որհնության կոնդակ հղել առ ձերդ աղնվություն, աղնվազարմ Սմբատ Ալիմյան: Ցեկա, որ ձեզ մատուցանեմ սուրբ գիրս այս և իմ կողմից էլ հայրաբար կրկին ու կրկին չնորհակալություն մատուցանեմ հանդուգնյալի բարի հիշատակին և ձեզ էս որհնեմ հանուն ձեր յերջանկահիշատակ ծնողի յեկեղեցաչեն և ազգոգուտ նվիրատվության:

Յեվ ծոցից դուրս բերելով մի մեծ ծրար, բարձրացրեց վեր և ավելացրեց.

— կարդացե՛ք, տե՛ր հայրեր...

Միաժամանակ Տեր-Սիմոնն ու Տեր-Աչոտը հարձակվեցին ծրարը խլելու: Տեր-Աչոտն իր հակառակորդից ավելի թեթևաշարժ ու ճարպիկ էր, ուստի նա կարողացավ խլել ծրարը:

— Տեր-Սիմո՛ն, դո՛ւ կարդա, քո ձայնը բամբ է,—հրամայեց սրբազանը:

Տեր-Աչոտը, չրթունքները կրծոտելով, ծրարը հանձնեց իր հակառակորդին:

Տեր-Սիմոնը կարդաց: Այրին սկսեց լաց լինել, նրան հետևեցին մյուս պառավները, թեև վոչ մի բառ չէին հասկանում կոնդակից:

— Այս որհնյալ տունն արժանի է հայրապետական որհնության,—ասաց սրբազանն ընթերցումը վերջացնելուց հետո, կոնդակն իր ձեռքով Սմբատին հանձնելով: Մի՛ լաք, քույրե՛ր, այլ ցնծացեք, քանզի այսօրվանից յերկնավոր թագավորի աչքը պիտի լինի այս գերդաստանի վրա: Թող ամենաարթընյալն Աստված հանդուցյալի հոգին դասեցնե ի չարս սրբոց և մարդարեից:

Այս ասելիս, սրբազանը ջերմեռանդորեն բարձրացրեց աչքերը գեպի վեր: Կես ճանապարհին նրա հայացքը կանգ առավ առաստաղից կախված ահագին բրոնզե և վոսկեզոծ ջահի վրա: «Մարդ գիտենա ի՞նչ արժե այդ», ասաց նա իր մտքում:

Այնուհետև սկսեց խոսել Եջմիածնի մասին, խորհուրդ տվեց այրի Վոսկեհատին առաջիկա մեռոնօրհնության այցելել մայր աթոռը: Ասաց, թե ինքն էլ այնտեղ է լինելու թեմի ժողովրդի համար աղոթելու և նորին Վեհափառությանը մատուցանելու նրա հավատարմության հավաստիքը առաքելական մայր յեկեղեցուն:

— Մեղք ունիմ, սրբազա՛ն, մեծ մեղք, մեր սուրբ կրոնի դեմ, չեմ կարող պարզերես Եջմիածին գնալ, ասաց այրին, մի նշանակալից հայացք ձգելով իր չուրջը:

Սրբազանը ծանոթ էր Ալիմյանների ընտանեկան պատմությանը, ուստի, հասկանալով այրիի մխիթը, դարձավ իր հետ յեկած հոգևորականներին.

— Տեր հայրեր, և դու հա՛յր սուրբ, անցեք մյուս սենյակ:

Չրամանն իսկույն կատարվեց և ներկա մնացին, բացի սրբազանից ու Վոսկեհատից, Սմբատն ու Սրաֆիոն Գասպարիչը:

Այրին խոսեց: Այո՛, մեծ է Ալիմյան գերդաստանի վրա ընկած արատը, մինչև վոր չջնջվի այդ արատը, վոչ վոք այդ գերդաստանի անդամներից չունե իրավունք իրան «հայ քրիստոնյա» համարելու: Սմբատը նախատդացել էր, վոր մայրն այդ խնդրի մասին պիտի խոսե սրբազանի հետ, ուստի կանխավ վճռել էր լինել սառնարյուն և չվրդովացնել ծնողին վորևե կոշտ ընդդիմադրությամբ:

Այրին համառոտ պատմեց այն, ինչ վոր արդեն գիտեր սրբազանը. պատմեց հուզված և մերթընդմերթ սև թաշկինակը հպելով աչքերին:

— Իմ վորդին մեղավոր չե, վո՛չ, վո՛չ,—կրկնեց նա, ավարտելով իր ասելիքը,—նա յերեխա յե յեղել, նրան խելքից հանել են և վորձանքի մեջ ղցել...

Միամիտ կին. նա գեռ հավատացած էր, թե վորդու սխալը կարելի յե ուղղել ամենայն դյուրությամբ. բավական է, վոր ինքը կամենա ուղղել: Նա կարծում էր, վոր այն պահին և միայն սուրբ, ան-

խախտելի, որ կապված է յերկու աղգակիցների ու կրոնակիցների միջև, և այն զավակներն են միայն օրինական և սիրելի, որ ծնվում են այդ միությունից:

Սրբազանը նեղն ընկավ: Նրանից պահանջվում էր համոզել Սմբատին, որ իր ուխտը դրժե, թողնե կնոջը, ձգե զավակներին: Ի՞նչպես համոզել այդ չափահաս, համալսարանն ավարտած տղամարդին այդ անելու. ի՞նչ խոսքերով ու հորդորներով ազդել նրա վրա: Սրբազանի առանց այդ էս ծանր չնչառությունն ավելի արագացավ: Նա մինչև անգամ քրանեց իր դիրուկ ուսերի վրա դրված ծանր և անսովոր բեռան տակ: Այնուամենայնիվ նա կարողացավ խոսել: Յեվ խոսեց նախ մայրենի յեկեղեցու պատմական և քաղաքական նշանակության մասին, նկարագրեց նրա կրած տառապանքները, ապա ապացուցեց կրոն սիրելու և նրան հավատարիմ մնալու անհրաժեշտությունն «աղգի պահպանության» համար. բայց յերբ հասավ խնդրի էական կողմին, հայացքն ուղղեց բրոնզե ջահին ու լռեց:

Այրին ծանր ու տխուր հառաչեց, ղգալով, որ խնդիրն ավելի բարդ է, քան կարծում էր ինքը: Յեվ նա դարձյալ դիմեց իր սովորական զենքի ողնուխյանը՝ թախանձանքին ու աղերսներին:

— Սպասվի՛ր հորդ անեծքից, վո՛րդի, ապասվի՛ր և մեզ էլ ապատիր,—կրկնեց նա հարյուր անգամ կրկնածը:

Փորձը ծանր էր Սմբատի համար, անախորժ և յերեե չարունակվեր պիտի դառնար զազրելի: Նա կրծոտում էր իր շրթունքները, որ մի կերպ խեղդի իր մեջ կատաղությունը, որպեսզի մի վորևե ավելորդ բառով չվերավորե իր մորը յեկեղեցական ներկայությամբ:

— Սրբազան,—խոսեց նա վերջապես,—բարի՛ յեղեք համոզելու մորս, թե հրեշ է այն մարդը, որ իր հարազատ զավակներին կճգե փողոց: Ցես սիրել եմ հորս, սիրում եմ մորս, բայց ի՞նչպես դոհեմ այդ սիրուն մի ուրիշ, ավելի զորավոր սեր — հայրականը: Սրբազան, ամեն մի մարդ ինքն է պատասխանատու թե՛ այս, թե՛ մյուս աշխարհում իր անհատական կյանքի համար: Ցեթե իմ արածը վոճիր է իմ աղգի, կրոնի և դերդաստանի դեմ, յես և միայն յե՛ս պիտի կրեմ նրա պատիժը: Գալով իմ հոր անեծքին, յես կաշխատեմ նրանից ապատվել ուրիշ ճանապարհով. յես կաշխատեմ լինել օրինավոր մարդ, աղնիվ, անարատ իմ դերդաստանի և ուրիշների համար, բայց ձգել իմ զավակները՝ յերբե՛ք, յերբե՛ք, յերբե՛ք...

— Վոր այդպես է, զավակներդ վերցրո՛ւ, իսկ նրանց մորն արձակիր...

— Մո՛րը,—գոչեց Սմբատը, այլևս չկարողանալով զսպել իրեն.— ի՞նչ կանեյի՛ր, մա՛յր, յեթե քեզնից խլեյին քո զավակներին: Վո՛չ, սրբազա՛ն, զուր է ձեր միջամտությունը, յես չեմ կարող մորս պահանջը կատարել:

Այդ ասելով, նա վոտքի կանգնեց ցույց տալու համար, վոր այլևս ավելորդ է համարում այդ մասին խոսելը:

Սրբազանն ուրախ եր, վոր խնդիրը չատ էլ չի բարդանում և կարող է այժմ թեթևացնել իր շնչառությունը: Աչող վայրկյան վորսալով, վոտքի կանգնեց, պահպանիչ ասաց, հասկացնելով մյուս անդյակում սպասողներին, թե նուրբ տեսակցությունը վերջացել է:

Սրբազանն ստացավ «աջահամբույրը» և հեռացավ նույն հանդիսավորությամբ, վորով յեկել եր:

Այրին լալիս եր, Սրաֆիոն Գասպարիչը մխիթարում եր նրան:

Գառորդ ժամ անցած, Սմբատը ղարձյալ հոր սենյակումն եր: Նա զառնացած եր, բայց մինչնույն ժամանակ ղգում եր մի տեսակ հոգեկան թեթևություն: Առաջին վոթորիկը, վորին հոր թաղումից հետո սպասում եր ամեն րոպե, անցավ պակաս զորավոր, քան կարծում եր: Նա կարողացավ դիմադրել մորը: Վաղը նա կակնարկե, թե ցանկանում է կնոջն ու յերեխաներին բերել Մոսկվայից: Այրին, իհարկե, կզայրանա, կաղերսե, լաց կլինի, բայց փուչի չե, այդ սկիզբն է, հետո կամա-ակամա կընտելանա իր հարսին ընդունելու մտքի հետ: Իսկ հետո՞, վերջացա՛վ ղրանով խնդիրը: Ո՛ր, վո՛չ, վո՛չ, այդ չե եյականը. կընտելանա՞ արդյոք ինքը՝ Սմբատն իր կացությանը, նույնիսկ յեթե կարողանա մոռացության տալ հոր անեծքը:

Նա այլևս չկարողացավ պարապել, սկսեց թղթերը ժողովել:

Ներս մտավ սպասավորը և հայտնեց, թե «ուստա Բարսեղը» ուզում է աղային տեսնել:

— Ո՞վ է ուստա Բարսեղը:

— Մեր վարձողներից մեկը:

— Թո՛ղ դա:

Այցելուն այն դեղին մազերով մարդն եր, վոր հոգեհացի ժամանակ մոտեցավ «աղվահատ» Մուխանին և խնդրեց այն յերեկո գնալ իր տուն: Նա կանգնեց դռների մոտ, ձեռները դրեց կրծքի վրա և խոնարհ գլուխ տվեց, թեքվելով մինչև հատակը: Հետո աչ ու ձախ նայելով, զոնովի մոտեցավ և ժպտուն դեմքի վրա խաղացնելով մի չողոքորթ ժպիտ, ձեռը պարզեց տանտիրոջը: Առաջին հայացքից խոկ այդ մարդու կերպարանքն ու ձևերը վատ տպավորություն գործեցին Սմբատի վրա:

— Ի՞նչ եք կամենում,—չտապեց նա հարցնել:

— Հրամանոցդ առողջությունը, Սմբա՛տ-բեգ,— լսվեց մի խուլ ձայն:

— Գո՞րծ ունիք:

— Մի պղտիկ հաշիվ ունենք, Սմբատ-բեգ...

— Նստեցե՛ք...

Հյուրը գլուխ տվեց, բայց չնստեց:

— Հրամանքդ, ինչպես տեսնում եմ, ինձ մոռացել ես,—ասաց նա իր ապակյա աչքերը հառելով տանտիրոջ յերեսին.—իհարկե, աղա Ջան, քա՛նի տարի յե... բայց մենք, ցավդ առնեմ, հրամանոդ չատ լավ ենք հիշում: Այսչափ յերեխա եյիք ա՛յ,—չարունակեց մարդը, ձեռով ցույց տալով մի արշին բարձրության հատակից,—պզտիկ, պզտիկ: Հետո մի քիչ մեծացար, գնացիր Մոսկվա ու գնացիր. Աստված պահի, այժմ տղամարդ ես, այն էլ ի՛նչ տղամարդ... Լա՞վ ես, աղա Ջան...

— Շնորհակալ եմ: Դուք ասացիք՝ ինչ-որ հաշիվ ունիք. ի՞նչ հաշիվ է:

Ուստա Բարսեղը, կարծես, հարցը չլսեց և չարունակեց նույն անվրդով յեղանակով.

— Գալիս եյիր մոտս, պզտիկ-պզտիկ դանդուլակները եյիք ուղում կառավի վրին կապելու համար: Այ, հենց սենյակի տակն և մեր խանութը, ցավդ առնեմ, վոտքով վոր խփես—ծառայիդ գլխին կդիպչե...

— Հիշում եմ, հիշում եմ,—ընդհատեց Սմբատն անհամբեր,—ուստա Բարսեղն եք, արծաթագործ... Ասացե՛ք, ի՞նչ հաշիվ ունիք, ուստա Բարսեղ:

— Մի որ յեկաք, թե «ինձ համար ձուկ բռնելու չանգալ չինե, ուստա Բարսեղ»: «Աչքիս վրա, ասացի, ցավդ առնեմ»: Նստեցի ու մի որ տանջվելով, մի լավ արծաթե չանգալ չինեցի, բախշեցի... Ուրախացար, ցավդ առնի ուստա Բարսեղը...

— Ուստա Բարսեղ, հաշիվ եյիք ասում:

— Մյուս որը չանգալը բերիր, թե «ուստա Բարսեղ, ասում են, արծաթը գալը ե»: Չեմ լսանում, վոր մոլթանին եր ասել, վոր ուստա Բարսեղը գալը արծաթը խալխի տեղ ե ծախում... Մի՞տ ե...

— Ի՞նչ հաշիվ ունիք, ուստա Բարսեղ,—գոչեց Սմբատը, ձայնը բավական բարձրացնելով բարկությունից:

— Հաշի՞վը,—կրկնեց հյուրը, իբր թե անփույթ.—հա, մոռացա, գլուխս խոսքով խառնվեց: Հաշիվը, Սմբատ-բեզ, Միքայել Մարկիչի անունով... Պզտիկ հաշիվ ե, շատ պզտիկ, ցավդ առնեմ... Բայց դե Միխայել Մարկիչը ջահելություն ե անում... Ցերեք որ ե՝ աղաչում, պաղատում ենք, չի հատուցանում...

— Չի հատուցանում: Ուրեմն վո՞ղ ե պարտական ձեզ...

— Հայա՛, ցավդ առնե ուստա Բարսեղը, պարտական ե: Վոր չատ եյ, իհարկե, վոչինչ չենք ասիլ, Ջանին դուրբան, բայց դե պարտական ե մուրհակով...

— Մուրհակո՞վ...

— Թամի՛ղ... до востребования...

— Գումա՞րը:

— Հրամանոդ համար դատարկ բան, մի ձեռք հաղսամ վող. մի դիշերվա ծախք... Բայց դե՝ մեզ պես քյասիբ-քյուսիբի համար խազնա, թաղավորություն, Հարուն Ալ Ռաշիդի բոստանը, հա՛, հա՛, հա՛...

Նրա ծիծաղը հնչեց այնքան չոր ու անախորժ, վոր Սմբատը ըզգվանքի պես մի բան ղգաց: Սակայն նա արդեն հետաքրքրվել եր այցելուի առածներով:

— Հապա ցույց տվեք տեսնեմ Միքայելի մուրհակը,—ասաց նա, ձեռը պարզելով այցելուին:

Ուստա Բարսեղը, աչ ու ձախ նայելով, ձեռը տարավ ծոցը, դուրս բերեց այնտեղից մի հնամաշ թղթապանակ: Ինչ-որ թղթերի միջից ղղուշությամբ դուրս բերեց մի մուրհակ, բաց արավ և ծայրերից ամուր բռնելով, պահեց Սմբատի աչքերի առջև:

— Այո՛, այդ Միքայելի ստորագրությունն է,—ասաց Սմբատը,—բայց մի՛ վախենաք, չեմ խլիլ ձեր ձեռքից, դումարն եմ ուղում դիտենալ:

Սմբատն ապշեց, մուրհակը յոթ հազար ռուբլու յեր: Մի դումար, վոր կասկածելի յեր, թե համապատասխանե արծաթագործի կարողությանը:

— Ուստա Բարսեղ, դուք այժմ էլ ձեր արհե՞ստն եք դործածում:

— Հայա՛, ցավդ առնեմ, զարդյար եյինք, զարդյար էլ մնացինք. Հնկոմըխկ ենք անում, ողլուչաղ պահում, հինդ յերեխա ունենք... Բայց յերեք տարի յե մի պզտիկ պահարան ենք դրել, մեջը մի քանի արծաթեղեն ու վոսկեղեն չարել, մենք մեզ խարում ենք, իբրև թե մենք էլ առևտուր ենք անում:

— Ցերեի, Միքայելը ձեղնից վոսկեղե՞ն ե վերցրել...

— Չե՛, պզտիկ արևդ վկա, նազդ փող ենք տվել կանաչ-կարմրանոցներ: Այ պզտիկ արևդ վկա, յերեխաների բերանից ենք խլել ու տվել:

— Ուստա Բարսեղ,—արտասանեց Սմբատը, մի սուր հայացք ձգելով մարդու յերեսին,—դուք ուզիղ յոթ հազա՞ր եք տվել Միքայելին, թե՞ պակաս:

Ուստա Բարսեղը մի քիչ չփոթվեց, բայց միայն մի վայրկյան: Շուտով ուշքը ժողովեց և ժպտալով պատասխանեց.

— Ցավդ առնեմ, իհարկե, մի քիչ պակաս ենք տվել, բայց դե դուրբարը յոթ հազար արծաթ դրամ ե:

— Ցես ձեզ խնդրում եմ ասել, ղուտ դրամ վո՞րքան եք տվել: Չե՞ վոր մուրհակի մեջ տոկոս էլ կա:

— Տոկո՞ս, իհարկե, առանց տոկոսի բան կլինի՞, բայց Միխայել Մարկիչի պարտքը դրուստ յոթ հազար ռուբլի յե:

— Ցե՞րբ ե մուրհակի ժամանակը լրանում:

— Ժամանա՞կը... հա՛, ժամանակը այսոր տասնուվեց որ ե հանդուցյալ Մարկոս աղան «դո վոստերովանի յե» յեղել. Այսուամենայնիվ նրա հոդին լուսավորե: Պզտիկ արևդ վկա, որ ու դիչեր աղոթք ենք արել նրա

կյանքի համար, բայց ի՛նչ արած, մահը մերն է, մենք մահինը. Ատելած այդպես կամեցավ:

— Ի՞նչ եք ուզում ասել, ուստա Բարսեղ, ես ձեզ չեմ հասկանում:

— Արևի լույսի պես պարզ է: Աղա Մխքայելը խոստացել է պարտքը վճարել հոր մահից հետո, ձեռաց, մի քանի որ անցած:

Սմբատը ցնցվեց, հասկացավ յեղբոր վատթար արարքը. վորդին հոր մահն աճուրդի յեր դուրս բերել: Անտարակույս այդ Բարսեղը մի արյունարբու վաչխառու յե, վոր, ոգտվելով չվայտ յերիտասարդի նեղ դրությունից, մեկին հարյուրով պարտք է տվել ծերունու մահից հետո ստանալու պայմանով: Վո՞րն է ավելի դարչելին, տվո՞ղը, թե վերցնողը:

— Շատ բարի,—ասաց նա,—այսոր սպասեցեք, յեղբորս հետ կխոսեմ, հետո կգաք...

— Չե՛, չե՛, ցավդ առնեմ ուստա Բարսեղը, Մխխայել Մարկիչը չպիտի դիտենա, վոր հրամանոցդ մոտն ենք յեկել. ամա՛ն, ամա՛ն, նա պիժ է, մեզ կսպանի, հինգ յերեխաների տեր ենք...

— Հեռացե՛ք: Վաղը յեկեք, կատանաք ձեր փողերը:

— Չա՛, ցավդ առնեմ, եղուց վերջացնենք: Հինգ յերեխա ունենք, պառավ մայր, քույրեր, յեղբայրներ, քրոջ աղջիկներ, յեղբոր տղերք, մին սյուրու: Դատաստանից զահլեներս է գնում, հաշտությունը լավ բան է, ինքը Քրիստոսն է ասել: Ատելած լուսավորի Մարկոս աղայի հոգին, յերևելի մարդ եր, մեզ շատ եր սիրում, ամեն որ գալիս եր խանութս: Մենք ել ձեր հրամանոց ծառաներն ենք, ձեր չվաքումն ենք ապրում: Ներողությո՛ւն, գլուխդ ցավացրինք, ծառայությո՛ւն, մի՛ նեղանար, առանց ասելուդ ել գնում ենք... Եղուց կգանք, ծառայությո՛ւն...

Ցեվ ուստա Բարսեղը յերեսը դեպի Սմբատը, յետ ու յետ քայլելով, մեջքից թեքված, դուրս գնաց:

Նույն որը յերեկոյան Սմբատի ու Մխքայելի մեջ տեղի ունեցավ առաջին ընդհարումը: Մխքայելն առանց քաշվելու խոստովանեց, վոր Բարսեղից վերցրել է ընդամենը մի հազար ռուբլի, փոխարենը տվել յոթ հազար ռուբլու մուրհակ: Ի՞նչ աներ, փողի կարիք է ունեցել: Նա արել է այն, ինչ վոր շատ շատերն են անում ժլատ հայրերի դեմ: Նա չեր կարող պաս ու ծոմ պահել, լինելով միլիոնատիրոջ զավակ այն ժամանակ, յերբ նրա ընկերները ծախսում եյին հազարներով ու տասնյակ հազարներով: Այսոր նա վերջապես իրավունք ունի աղատ ու ինքնագլուխ ապրելու, և ահա մի բռնակալի տեղ մյուսն է

ես մտել և ավարտել: Իսկ ինձ պահել են այստեղ, այս ապականված քաղաքում և քո պատճառով ղրկվելով բարձր ուսումից, ընկել եմ վատ միջավայր...

— Իմ պատճառո՞վ,—ընդհատեց Սմբատը:

— Այո՛, մի՞թե չգիտեիր: Այն որը, երբ մեր հայրն իմացավ, որ դու միացել ես մի ոտաբուհու հետ, յերդվեց մյուս որդիներին վոչ միայն Ռուսաստան չուղարկել, այլև իր աչքից չհեռացնել: Ահա ինչո՛ւ յես զրկվեցի այն առաքինությունից, որով այսոր պարծենում ես: Այո՛, այո՛, դու խելոք ես, դու ունիս բարձրագույն ուսում, դու քեզ կարող ես ապահովել քո արդար աշխատանքով, իսկ յես չեմ կարող, վորովհետև ազետ եմ, հիմար և աշխատանքի անընդունակ: Ի՛նձ, և վոչ թե քեզ և վայել չոայլել ուրիշների քրտինքով վաստակած հարստությունը:

— Բայց յես պարտավոր եմ անել այն, ինչ որ կատակել և մեր հայրը:

Մխքայելը բարձրաձայն ծիծաղեց:

— Պարտավո՞ր եմ անել այն, ինչ որ կատակել և մեր հայրը,— կրկնեց նա, ձեռները իրարու զարկելով և գլուխն աջ ու ձախ յերերելով,—ա՛յ ա՛յ ա՛յ· ի՛նչ գովելի հնազանդություն, ի՛նչ գմայլելի առաքինություն: Պարտավո՞ր ես, ուրեմն կատարի՛ր նախ և առաջ հորդ կատակի գլխավոր կետը· բաժանվի՛ր կնոջիցդ ու յերեխաներիցդ...

— Այդ քո գործը չե:

— Թո՛ղ այդպես լինի· յեթե կամենաս, յես այլևս չեմ խոսիլ այդ մասին, բայց միայն մի պայմանով, որ դու յել ինձ չձանձրացնես քո հորդորներով ու իրատներով, որոնք վոչ մի արժեք չունեն ինձ համար:

— Բայց յես պարտավոր եմ ձանձրացնել, վորովհետև այդ վոչ միայն մեր հոր, այլև մեր մոր կամքն է:

— Ինչո՞ւ: Վորովհետև յես չառլատան եմ, իսկ դու որինավոր մարդ, յես անբարոյական եմ, դու բարոյական, չէ՞: Նեղություն կրիր, բարոյական մարդ, դնա՛ հենց այս րոպեիս, դնա մայրիկի սենյակը և տես խեղճ կինն ո՛ւմ պատճառով և արտասուք թափում — ի՞մ, թե՞ քո... Յոհաննե՛ս, վաղն առանց այլևայլի կվճարես ուստա Բարսեղին իմ պարտքը, մուրհակը հետ կվերցնես, ինձ համար կպատրաստես հինգ հազար ռուբլի: Յես ունիմ ուրիշ պարտքեր ել: Բոլորը կվճարես ու կդրես իմ հաշվին:

Նա դուրս գնաց, արհամարհանքով լի մի հայացք ձգելով յեղբոր վրա:

Սմբատը վրդովված ձեռը զարկեց սեղանին և վոտքի յելավ: Ահա ի՛նչ. նույնիսկ այդ մինչև վոսկորների ծուծն ապականված յերիտասարդը կչտամբում է նրան, յերեսովը տալիս նրա անուղղելի սխալը:

Ի՞նչ կարող ե անել այդ մարդու վերաբերմամբ, ի՞նչպես «ճանապարհի բերել», քանի վոր ինքը չի կատարում իր վրա և իր վերաբերմամբ դրված ծանր պարտքը:

«Բայց այնուամենայնիվ յես քեզ չեմ թողնիլ քո կամքին», վճռեց նա մտքում:

IV

Ի՞նչ, տարիներ չարունակ կատարել հանարակ դործակատարի կրավորական պաշտոն, տառապել մի կամակոր և մանրակրկիտ ծերունու սուր հայացքների տակ, հնարել ամեն անդամ պես-պես ստեր՝ ավելորդ ծախսերն արդարացնելու համար, և հաճախ անմաքուր ձեռներով մուտենալ հայրական սնդուկին, և կամա-ակամա փափագել հարստատ ծնողի մահն այն հույսով, վոր այդ մահով պիտի ազատվի կապանքից: Ի՞նչ, մեռնի վերջապես հայրը, թողնելով ահագին ժառանգություն և հանկարծ ինքը զրկվի որինական իրավունքներից և ընկնի մի նոր հսկողի ու կչտամբողի հովանավորության տա՞կ:

Վո՛չ, վո՛չ, այդ անտանելի յե, վիրավորական, այդ մի հարված ե Մխքայելի համար, վորին նա չի կարող հանդուրժել: Ի՞նչ պիտի ասեն նրա ընկերներն ու բարեկամները: Մի՞թե իրավունք չեն ունենալ նրան ծաղրելու ու ծաղրախոծելու: Վո՛չ, վո՛չ, նա չի կարող լուռ ու մունջ հպատակվել մեծ յեղբոր կամքին, նա հավասար ժառանգ ե: Ի՞նչ անմիտ կատակ: Նրանից պահանջում են փոխել իր կենցաղը, ապրել մի կիսացնոր ծերունու ճաշակով, ամուսնանալ մի ինչ-վոր հայ աղջկա հետ՝ իր ժառանգական իրավունքներին տիրանալու համար: Ամուսնանալ մեր ժամանակներում, յերբ բոլոր նրա ընկերներն ամուրի և աղատ են, յերբ ամուսնացածները բացարձակ գրջում են, ինչպես որինակ՝ Մելքոն Ավրումյանը և ուրիշ չատ չատերը: Ինչո՞ւ համար մի ծանր լուծ վերցնել իր վրի վրա, վոր ավելորդ բեռաննե՞ր աշխարհ ձգե, վոր ամեն որ լսե՝ «պապա, պապա» այդ հիմար, ծիծաղելի բառը, վոր այնքան հաճելի յե տասիակ գլխի տեր մարդկանց և այնքան ձանձրալի նրանց համար, վորոնք ճաշակ ունին կյանքի բարիքները վայելելու՝ իրենց աղատությունը պահելով: Վո՛չ, Մխքայելն այժմ անկախ և, աղատ ե և ուզում ե այդպես մնալ: Նա ամուրի կյանքից դեռ չի կշտացել:

Այս խորհրդածության մեջ Մխքայելն զբում եր, վոր որ-որի վրա իր սրտում զարդանում և ատելությունը դեպի Սմբատը: Յեվ նա ծրագիրներ եր հորինում՝ վորևե միջոցով աղատվելու համար ավագ յեղբոր իշխանությունից:

Սմբատն արդեն վճարել եր նրա պարտքը ուստա Բարսեղին և մուրհակը վերցրել ու տվել նրան, բայց պահանջած հինգ հազար ռուբլին մերժում եր:

Կեսորվա դեմ եր: Մխքայելը կես ժամ առաջ Սմբատից դարձյալ

փող եր լնդրել և դարձյալ մերժում ստացել: Այժմ հուզված անցուդարձ եր անում իր սենյակում, վոր Ալիմյանների բնակարանում ամենից չքեղ եր կահավորված: Այստեղ կային Բելուջիստանի ամենաընտիր գորգեր, Խորասանի և Քիրմանի ներքազործ չալերով և պես-պես վոսկեթել հյուսվածքներով զարդարված բարձեր, բարձիկներ, բազմոցներ: Մետաքսե թանձր վարագույրներով սքողված լուսամուտներից մեկի առջև դրված եր մեծ դրասեղանը, ծանրաբեռնված ահագին արծաթե թանաքամանով, տեսակ-տեսակ փղոսկրե տուփերով, ցամքիչներով, չքեղակազմ գրքերով, բրոնզե արձանիկներով, և զանազան ալբոմներով: Անկյունում դրված եր չքեղ պահարանը, վոր լի յեր ռուս բանաստեղծների ու վիպասանների յերկերով՝ վոսկեզոծ կազմերում: Աչքի եյին ընկնում նաև թարգմանական յերկեր, վորոնց թվում և Բոկաչիոյի «Դեկամերոնը»: Կամարաձև դռների միջից յերևում եր ննջարանը՝ հատակը փափուկ գորգերով ծածկված: Այնտեղ մի անկյունում դրած եր անկողնակալը՝ ծածկված թանկագին հյուսվածքներով, մետաքսե վերմակներով: Հինգ-վեց մեծ ու փոքր բարձեր դարսված եյին միմյանց վրա սիմետրիկ ձևով, այնպես վոր կազմում եյին մի տեսակ բուրգ: Այդ, կարծես, մի թանգարժեք և փարթամ հարճի անկողին լիներ այն տարբերությամբ, վոր առջևի պատը զարդարված եր զենքերով: Մյուս անկյունում յերևում եր տուալետի սեղանը՝ լի բազմաթիվ անուշահոտ յուղերի ու ջրերի սրվակներով, սանրերով, խոզանակներով, մկրատներով և այլն...

Այդ սենյակների կահավորության մեջ մեծ դեր և խաղացել Վոսկեհատը: Նա յեր իսկապես ստիպել մարդուն չխնայել վոչինչ վորդու հաճույքի համար: Տան համար ծախսվածը կորած չե, բայց դրանից՝ այդպիսով կարելի յե Միքայելին ընտելացնել հետզհետե ընտանեկան կյանքին և հղացնել նրա մեջ ամուսնանալու ցանկություն: Այնինչ Միքայելի համար սենյակների արդուզարդն ուրիշ վոչինչ եր, յեթե վոչ անտարբերության նյութ: Գոհ եր, վոր ընկերներից վոմանք նախանձում են, վոր կարող և նրանց դլխի խմացնել վոսկեզարդ «հաղար վեչաներով» և թղթախաղի սեղանը բանալիս՝ նրանց առջև դնել վոսկե աշտանակներ:

Դռները բացվեցին, ներս մտավ Իսահակ Մարուքխանյանը մի չատ քաղցր հաճոյական ժպիտ իր կարմիր յերեսին:

— Վերջապես,—դոչեց Միքայելը ոտաերեն և ձեռով նշան արավ փեսային նստելու:—Հը՛ը, ասա՛ տեսնենք, ի՞նչ նորություն:

— Նայելով թե ի՛նչն և հետաքրքրում քեզ,—պատասխանեց Մարուքխանյանը և նստեց բազկաթոռի վրա, կանխավ հետ դարձնելով ոդեկոլոնի փիչերը, վոր չճնշոտվին:

— Ուրիշ ի՞նչ կարող և ինձ հետաքրքրել, բացի այդ հիմար կտակից:

— Հասկանալի յե,—արտասանեց Մարուքխանյանը, դանդաղորեն հանելով իր ձեռնոցները և ձգելով իր գլխարկի մեջ և նայելով աջ ու ձախ ավելացրեց. հույսով եմ, վոր մեր խոսակցությունը վոչ վոք չի լսի:

— Վոչ վոք, յեթե կամենաս դռներն էլ կկողպեմ:

— Վատ չեր լինիլ:

Միքայելը մոտեցավ և բանալին շուռ տվեց:

— Խնդիրը շատ պարզ է,—սկսեց Մարուքխանյանը, վերցնելով Միքայելի սեղանից մի գլանակ,—նախ և առաջ դու պիտի ինձ աղնիվ խոսք տաս, վոր ինչ-վոր այստեղ խոսենք, մեր մեջ կմնա:

— Սվելորդ նախազգուշացում: Ցես իմ թշնամին չեմ:

— Ապրես: Դու գիտես, սիրելի՛ս, վոր յես այստեղի ձեր գռեհիկ վաճառականներից չեմ: Ցես իրավաբան եմ, թեև առանց բարձր ուսման, բայց ավելի գիտեմ օրենքները, քան վորևե մի յերդվյալ հավատարմատար: Ցես ունեմ հռչակ թե՛ այստեղ և թե՛ Թիֆլիսում: Ուզում եմ ասել, յեթե յես մի վատ բան անում եմ՝ զգույշ, մտածելով, տասն անգամ չափելով և հետո կտրելով:

Արձակելով գլխից վեր գլանակի առաջին ծուխը, նա իր դեղինկանաչագույն աչքերը հառեց Միքայելի յերեսին և հարցրեց.

— Ուզո՞ւմ ես, վոր հորդ կտակը ճանաչվի ապօրինի և կորցնի իր զորությունը:

— Անպայման,—պատասխանեց Միքայելը դրականապես:

— Շատ դեղեցիկ: Բայց դրա համար հարկավոր են մի չարք պայմաններ:

— Որինա՞կ:

— Նախ և առաջ կամքի հաստատություն, սառնասրտություն, հետո կեղծելու, սուտ ասելու վարպետություն:

— Սուտ ասելու վարպետությո՞ւն: Մի՞թե այդ անհրաժեշտ է:

— Անպայման: Տասնուիններորդ դարը, սիրելիս, խաբեբայության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խաբում են ամենքը և ամենից ավելի նրանք, վորոնք ըմբոստանում են խաբեբայության դեմ:

— Հետո՞: Ծրագիրդ բացատրիր:

— Իսկույն: Մեծ յեղբայրդ, Սմբատը, ահա յերեք որ է պատրանքի վորոշումով ձեռք է բերել իր ժառանգական իրավունքների ճանաչումը: Այժմ դու նրա սորուկն ես բառիս իսկական նշանակությամբ: Նա կարող է քեզ մի կտոր հաց տալ կամ չտալ:

Այսպե՞ս է, թե՞ վոչ:

— Ցենթադրենք, վոր այդպես է:

— Ցենթադրելու բան չկա, կտակի իսկական իմաստով այդպես է:

Հայրդ քեզ նշանակել է ամսական հարյուր ռուբլի — մի խոհարարի ռոճիկ: Դու կարող ես ժառանգական իրավունքներ ձեռք բերել միայն ամուսնանալուց հետո: Իսկ ամուսնանալ կարող ես, յեթե կյանքիդ յեղանակը փոխես, այսինքն՝ լուրջ, խելոք մարդ գտնես, հա՛ հա՛ հա՛... Դա մի շատ առաձգական կետ է կտակի մեջ և ցույց է տալիս կտակ թելադրողի միամտությունը և գրողի ոգիտությունը: Աստ, խնդրեմ, յեթե դու բոլորովին փոխես կենցաղդ և գտնես լրջմիտ, պարկեշտ, չմեռնես, չխաղաս, կանանց յեսևից չընկնես — ի՞նչպես կարող ես ապացուցանել, վոր փոխվել ես: Սմբատը յեթե կամենա, միշտ կընդղեմանա, միշտ կասե, թե դու նույնն ես, ինչ վոր եյիր հորդ մեռնելու ժամանակ: Այս մեկ: Յերկրորդ՝ կկամենա՞ս, արդյոք, ամուսնանալ: Համոզված եմ՝ վոչ: Դու այն տիպերից ես, վորոնց համար ամուսնություն բառը նույնն է, ինչ վոր լինճ համար Սիբիրը կամ Սախալինը: Ե՛, ինչ ժամանակ է ամուսնանալու, քանի վոր քեզ և քեզ նմանների համար կան շատ ապուշների կանայք: Ուրեմն դու տեսնում ես, վոր կտակի այդ կետը քո թշվառության է, կախաղանի սապոնած պարանը... Յեվ ահա իմ ծրագիրը գալիս է քեզ ոգնության: Վորքան էս նա շատ լինի կազմված, վորքան էս թույլ, այդ անիրավ կտակից լավ է և կարող է դրության փոխել այսպես կամ այնպես:

— Աստ, վո՞րն է քո ծրագիրը:

— Մի ուրիշ կտակ, այսպես ասած, կոնտր-կտակ...

— Վո՞րտեղ դանենք այդ կտակը:

Ահա հենց բանն էլ այդ է. «վո՞րտեղ»: Յենթադրենք, վոր այդ կոնտր-կտակը չինվում է քո լիակատար համաձայնությամբ: Իմ ծրագրով և յերկու այնպիսի ոգնականների մասնակցությամբ, վորոնցից յուրաքանչյուրը վարպետ է իր արհեստի մեջ և մինչև այժմ դեռ չի բռնվել վորևե հանցանքի մեջ: Աստ լինճ — համաձա՞յն ես, ուզո՞ւմ ես դառնալ լիուլի ժառանգ քո հայրական կարողության, թե՞ բարվոք ես համարում մնալ սորուկ և ծառայել յեղբորդ կամքին:

— Շուտ արա, վերջացրու, ի սեր Աստծո,—գոչեց Միքայելը, կարծելով, վոր իր քեռայրը կատակ է անում:

— Կոնտր-կտակը կկազմվի, իհարկե, հետին թվականով, այսինքն հորդ մահից մի կամ յերկու ամիս առաջ: Նա, իհարկե, կունենա հանդուցյալի լիակատար ստորագրությունը: Այս այնքան էլ դժվար չէ, վորքան կարող ես կարծել: Դու միայն կտաս լինճ հանդուցյալի վորևե ձեռագիրը, մանավանդ նրա ստորագրությունը մի վորևե թղթի տակ, մնացյալն արդեն իմ և իմ ոգնականների գործն է:

— Համաձա՞յն ես:

— Բայց ի՞նչ բովանդակություն կունենա կոնտր-կտակը,—հետաքրքրվեց Միքայելը, համոզվելով, վոր Մարուքխանյանը կատակ չի անում:

— Շատ հետաքրքրական, շատ հոգեբանորեն ճիշտ, շատ պարզ և շատ արդարացի բովանդակություն,—պատասխանեց Մարուքխանյանը, ուղղելով իր կարմրագույն փողկապը: Նախ՝ ժառանգության չափը: Ցես հանդուցյալի թողած անշարժ դույքերը գնահատում եմ, ամենացածը գները վերցրած յերեք ու կես միլիոն: Զորս հարյուր հիսուն հազար ռուբլու էլ տոկոսաբեր թղթեր և մի այգեքան էլ գուտ դրամ բանկերում: Կոնտր-կտակի դորությամբ՝ գուտ դրամը, տոկոսաբեր թղթերի հետ, քեզ է տրվում՝ այս տան կահ-կարասիքի հետ միասին: Իսկ անշարժ դույքերը, այն է՝ նավթային հանքերը, տները և գործարանը, այսինքն՝ նրանց արժողությունը կամ յեկամուտը հավատարակես բաժանվում է յերեք տեղ. մի մասը գործակալ քեզ, մյուսը՝ փոքր յեղբորդ՝ Արշակին, յերրորդը՝ քրոջդ՝ այսինքն՝ իմ կնոջը... Գալով մորդ, նա ստանում է ամբողջության յոթերորդ մասը, ինչպես ընդունված է որենքով: Կարծեմ, ավելի արդարացի և որինավոր կտակ յերևակայել անգամ դժվար է:

— Իսկ Սմբատը...

— Խելքի մոտիկ բան չի լինել, հիշել նրա անունը կտակի մեջ: Ամենքը գիտեն, վոր նա հորից անհնազանդ և ու հալածված, ուրեմն բնական է, վոր նա մոռացվի: Դատը տանելուց հետո, մենք նրան կնշանակենք մի վորոշ ամսական կամ կտանք մի գումար, և դրա համար բոլորը կգոհանան մեր վեհանձնությունը:

— Բայց կկարողանա՞նք տանել դատը:

— Կամ կկարողանանք, կամ վոչ: Յեթե չկարողացանք, կնշանակենք կոնտր-կտակի կեղծիքը պարզված է և մենք կենթարկվենք քրեական պատժի...

— Վո՛չ, վո՛չ, յես այդ չեմ կարող անել,—գոչեց Միքայելը սարսափած:

Մարուքխանյանը հեգնորեն ժպտաց:

— Բայց մենք դատը կտանենք անտարակույս,—ասաց նա ամենայն անդորրությամբ: Լսի՛ր: Ո՞վ պետք է քննե դատը, յեթե վոչ նահանգական դատարանը: Ահա հենց այստեղ է թաղնված չան գլուխը: Բայց վորից կամ ինչից են կախված մեր այժմյան դատարանի վորոշումները: Միայն հիմարներն ու ապուշներն են հավատում արդարադատությանը: Իսկ յես, մոտից ճանաչելով դատարանի անդամներին մեկ-մեկիկ, գիտեմ, թե վորքան թույլ է յուրաքանչյուրի ձեռքը: Կաշառք, ահա այն մեծագույն զորությունը, վոր ղեկավարում է մեր դատարանի խիղճն ու որենքները: Իսկ յես գիտեմ ինչ ձևով պետք է

կաշառել դատարանի անդամներին և պաշտոնյաներին, սկսած դռնապանից մինչև նախագահը:

— Իսկ յեթե չկարողացա՞նք կաշառել,—հարցրեց Միքայելն անհամբերությամբ:

— Այն ժամանակ կա մի ուրիշ միջոց: Հաշտություն:

— Ո՞ւմ հետ:

— Սմբատի:

— Ի՞նչ ձևով:

— Նախ վախեցնելով նրան լուրերով կոնտր-կտակի մասին: Այս առթիվ յես արդեն մի թեթև լուր տարածել եմ:—Ապա, ասպարեզ ձգելով կոնտր-կտակը: Սմբատը, տեսնելով հանդուգն յալի ստորագրությունը և լսելով իմ վկայությունը, կասրսափի, և մենք նրան կսեղմենք պատին:

— Ուրեմն դու ինձ առաջարկում ես խարդախությա՞ն դիմել:

— Սիրելիս,—ասաց Մարուքխանյանը, ղարձյալ փողկապն ուղղելով,—աշխարհի յերեսին կան բազմաթիվ կեղծ հասկացողություններ և կեղծ զգացումներ: Խարդախություն ասվածը մի առաձգական բան է: Խարդախություն չե՞ն, արդյոք, խայտառակել ծնողների անունը, դավաճանել նախահայրերի կրոնին, ծախել զավակների ապագան, ինչ-որ անառակի վաղաքչանքներին, պարսավել հարազատ հորը՝ նրա կենդանության ժամանակ, իսկ մեռնելուց հետո՝ գալ, տիրանալ նրա հարստությանը, զրկելով ու կողոպտելով օրինական ժառանգներին: Ցես, կեղծելով, ուզում եմ վերականգնել արդարությունը, ինչպես մի դիպլոմատ, որ սուտ ասելով ու խաբելով, փրկում է իր հայրենիքը վտանգից: Բայց ինչո՞ւ եմ յես յերկարացնում՝ կամքը քոնն է. յես ուզում, յես ի՞նչ կարող եմ անել, գնա ու յեղբորդ ձեռներից ջուր խմիր, ինչպես հիմար վոչխար...

— Արդյոք կնոջդ բաժինը չատ մեծ չե՞ս վերցրել:

— Բաժինը բաժին, իսկ իմ աշխատա՞նքը, մի՞թե անուն վտանգի յենթարկելով արժանի չեմ մի քան ստանալու:

— Ցեթե դիտես տասն անդամ չափել — մի անգամ կտրել, ուրեմն վտանգավոր գործի չես ձեռնարկել...

— Ապագան դիտե... Այդ գործում վոչ այնքան յես պիտի դեր խաղամ, վորքան դու: Բայց յերկար վիճաբանելու կամ տատանվելու ժամանակ չէ, այս կամ վոչ:

— Լավ, ասա, ինչ վոր ուզում ես, միայն հանձդ առ գործը մինչև վերջն առանց ինձ տանել: Ցես դատարանները վաղվղելու դլուխ չունեմ և առհասարակ քո ծրագիրն ինձ չատ մութն է թվում:

— Կպարզվի: Դու միայն տուր ինձ հանդուգյալի վորևե ստորագրությունը կամ, լավն է, մի քանիսը...

— Լավ,—համաձայնվեց Միքայելը,— այսօր ևեթ կղտնեմ և կտամ...

— Այ, այժմ տղամարդի յես նման, պետք է դործել, սիրելիս, պետք է դործել:

Դռները բանալով, նա քիչ մնաց ընդհարվի Գրիչայի հետ: Գարաբատամարմին յերիտասարդը հարդանքով ճանապարհ տվեց Մարուքխանյանին և ներս մտավ հոդնած, թաչկինակով սրբելով կարմրած յերեսի ու պարանոցի քրտինքը: Նա ընկավ բազկաթոռի վրա՝ ինչպես մի ռետինե դնդակ:

— Ո՛Հ,—արտասանեց հևալով,—տանջանք է սանդխտով բարձրանալը: Որինավոր մարդկանց տունը սանդուխտ չպիտի ունենա... Բժիշկների հերն անիծեմ, կանդնել են, թե վոտքով պիտի մանգաս, վոր նիհարես: Այս տիկը յես ի՛նչպես մանածեմ: Բյաղիմ-բեդի մոտն եք: Բարեկամ, քացախ խմիր, մի մեծ ղերոշ և կազմակերպվում. յե՛ր և հորդ քառասունքը:

— Կարծեմ, մի չարաթից հետո:

— Այդպես ել ասացի: Ուրեմն մյուս կիրակի կտանք հանդուգյալի հիշատակին մեր վերջին հարդանքը, իսկ յերեքշաբթի որը քեզ սպից կհանենք: Բայց նազիից խոսենք. յեկել եմ խնդրելու, վոր այս յերեկո մոտս դաս, մի թեթև բակարա յեմ ուզում սարքել: Հրամայիր մի բաժակ ջուր բերել:

Սպասավորը Միքայելի հրամանով, բերեց մի չիչ նարդանի ջուր, վոր Գրիչան խմեց ուղղակի չչից: Հետո նա համոզեց Միքայելին այսոր մխասին ճաշել «Ցեվրոպա» հյուրանոցում: Այնտեղ են ճաշում նորեկ ոպերայի դերասանուհիները՝ դեղեցկուհի «պրիմադոննա» բարանովայայի հետ:

— Դեհ, յես հանդստացա, հարդա, դուրս դանք...

Նրանք դուրս գնացին, յեղանակը դեռ տաք եր, չնայելով, վոր հոկտեմբերի սկիզբն եր: Անցան մի քանի բազմամարդ փողոցներ, հասան մի քառակուսի հրապարակ, վոր ծառայում եր իբրև զբոսարան: Ընդունելով աջից ու ձախից իր բազմաթիվ ծանոթների բարևները. Քվում եր Միքայելին, վոր ամենքը լսել են իր հոր կտակի բովանդակությունը և ծաղրում կամ կարեկցում են իրեն:

— Դու գնա հյուրանոց,—ասաց Գրիչան,—յես տելեֆոնով մի քանի մարդ պիտի հրավիրեմ այսորվա խաղի համար:

Նա անցավ վողոցի մյուս մայթը և մտավ դեմ ու դեմ դրասենյակներից մեկը:

Միքայելը ծռվեց մի նեղ վողոց, ապա մի ուրիշը և այստեղ կանգ առավ մի նորաշեն միհարկանի տան առջև ու մտածեց: Վերջին ժամանակ այդ տան մոտով անցնելիս մի չատ քանի մի վայրկյան կանգ եր առնում և նայում լուսամուտներին:

Այսօր փողոցը զբոսիկ տոնական էր։ Միայն մերթընդմերթ յերևում էր մի անցորդ, մի բեռնակիր կամ կառք, և այնուհետև դարձյալ տիրում էր տխրություն։ Ցեղասպանի մեղմությունը, արեգակի անուշ ջերմությունը զորեղ ու գյուրեկան ազդեցություն էին անում Միքայելի վրա։ Զգում էր, որ արյունն սկսում է յերակների մեջ հոսել առանձին ուժով, տալով մարմնին ինչ-որ անորոշելի ջերմություն։ Նա վերարկուն հանեց ու գցեց թևին։ Սիրտն սկսեց բաբախել, գոնքերի յերակները զարկեցին այնպես, որպես տենդային տաքության մեջ, կրքոտ աչքերը պսպղացին, շրթունքների վրա յերևաց անսովոր հուզում։

Լուսամուտներից մեկի առջև կանգնած էր մի կին և ժպտալով նայում էր։ Ահա հենց այդ ժպիտն էր, որ զրգռեց Միքայելի արյունը։ Կինը բարձրահասակ էր, առողջ թիկունքներով, գեմքի խոշոր, բայց բարեհամբույր գծերով։ Նշանավորն այդ դեմքի վրա բարակ, նոսր, նրբաթել բեղերն էին. մի բան, որ Միքայելի համար մի անորինակ հրապույր ուներ։

Միքայելը մոտեցավ լուսամուտին։

— Վո՞րտեղ եք մնացել, մեր կողմերը չեք գալիս,—լսվեց կնոջ թանձր և թավշային կոնտրալտոն։

Թվում էր, որ նա պետք է ծնված լիներ այր մարդ, իսկ ահա այս կանացի ներքնություն ունեցող յերիտասարդը, որ այնպես քնքշորեն սեղմում է նրա ձեռը — կին։ Կարծես, բնությունը չկոթվել էր արբչիս դերձակի պես, որ մեկի համար ձևած զգեստը մյուսին է հագցնում։

— Զբաղված եմ տնային գործերով։

— Դո՞ւք, տնային գործե՞ր,—զրնգաց կինը. արմունգները հեռնելով լուսամուտի հատակին և թեքվելով դեպի դուրս։

— Չե՞ որ յես սգավոր եմ, տգահ աչքերով նայելով կնոջ լիքլիք կրծքին, որ թեթևակի բաց եր և ցույց եր տալիս նրա մարմնի մաքուր ճերմակությունը։

— Ա՛հ, հասկացա, կոտակի խնդրով... Բայց...

— Ի՞նչպես եք, տիկին,—ընդհատեց Միքայելը, չկամենալով խոսել կոտակի մասին։

— Ո՛ր, շատ վատ, շատ տխուր...

Յեվ կնոջ կենսական հրով լեցուն աչքերը հանդարտիկ բարձրացան վեր, շրթունքների վրա ալյակի պես ծփաց մի արյունահույզ ժպիտ ու կիսով չափ բաց բերանը յերևան հանեց փղոսկրի պես մաքուր ու վայելուն առամները։

Նրանք խոսում էին — մեկը մյուսին նայելով հետզհետե ավելի ու ավելի կրքոտ աչքերով։ Սովորական խոսակցությունը տիկինը ճարպկությամբ վոխեց, ինչո՞ւ Միքայելը չի ամուսնանում։ Ա՛հ, ժամանակակից յերիտասարդները ընդորում չեն, վախչում են ընտանեկան կյանքից, մատնելով երևոյթ Թանկապին կյանքը ղեկուքյան։

— Նայեցեք հայելուն, դուք որեց-որ նիհարում եք ու գալկանում։

— Յես նիհարում եմ, իսկ ձեր յեղբայրն որեց-որ գիրանում և, ինչո՞ւ նրան չեք ստիպում ամուսնանալ։

— Գրիչայի՞ն... Ո՛ր, նա անուղղելի յե, նրա սիրտն ու հոգին միշտ զբաղված են ոպերային կամ ոպերետտային յերգչուհիներով։ Իսկ դուք այլ եք, ձեր սիրտն ազատ է...

— Ո՛վ գիտե...

— Ա՛հ, ուրեմն, դո՞ւք ել, իսկ յես կարծում եյի, որ դուք զբաղնակ չեք հավիշտակվելու,—արտասանեց կինն անուշ հեգնությամբ։

— Ունիք իրավունք, յերգչուհիների սերն ինձ չի հավիշտակում։

Կնոջ ուռուցիկ կուրծքը բարձրացավ լուսամուտի հատակից, սպիտակ հեշտալի կոկորդի կրկնակի ծալը հարթվեց։

Մի ժամանակ տիկին Անուշ Ղալամյանի ամուսնության պատմությունը մեծ աղմուկ եր բարձրացրել քաղաքում։ Հարուստ կալվածատեր և քաղաքի առաջին մաղաղիայի տեր Մնացական Հարությանի դուստրը սիրահարվել եր իր հոր գործակատարի վրա։ Ծնողները, հարկավ, ընդդիմացել եյին անհավասար ամուսնությանը, բայց մի որ Անուշը չոքել եր մոր առջև և արտասուքն աչքերին մի չատ խորհրդավոր խոստովանք արել։ Մայրը դատեր անզգուշությունն անհրաժեշտ եր համարել հաղորդել մարդուն։ Գոռոզ կալվածատերը սարսափել եր, նախկին դյուղացու կատաղությամբ բորբոքվել։ Նա կանչել եր Անուշին իր սենյակը, նախատել, անվանել եր «անառակ», վոմանց ասելով, մինչև անգամ ծեծել։

Բայց արդեն ուշ եր յեղել, մարդիկ բամբասում եյին, ծաղրում, և հայրն ստիպված եր Անուշին տալ իր գործակատարին։ Այժմ այդ գործակատարը քաղաքի լավագույն փողոցի վրա ունի մի ընդարձակ խանութ, որի հատակին վոսկեզոծ տառերով գրված եր. «Պյոտր Իվանովիչ Գուլամով, նեղկայացուցիչ Մոսկվայի մանուֆակտուրային տների»։

Արկածավոր ամուսնության ժամանակ Միքայել Ալիմյանը ռեալական դպրոցի յոթերորդ դասարանի աշակերտ եր։ Պատմությունը տպավորիչ եր նրա հիշողության մեջ, և այն որից նա չահագրգռված եր Անուշով։ Գրիչայի միջոցով ծանոթացավ յերիտասարդ կնոջ հետ միայն յերկու տարի առաջ և յերբեմն այցելում եր իրեն նրա յեղբոր մոտերիմ ընկեր։ Թե՛ տիկինը և թե՛ ամուսինն ընդունում եյին նրան բարեկամաբար, մինչև անգամ պարծենում եյին, որ ունեն Ալիմյանի պես այցելու։

Անուշը նորեն թեքվեց առաջ և այս անգամ գլուխն ավելի մոտե-

ցրեց Միքայելին, նայելով աջ ու ձախ: Նրա այտերը չառադունել էին, աչքերը պպզում էին սև ալմաստների պես, ուռուցիկ կուրծքը մերթ դիպչում էր լուսամուտի հատակին, մերթ բարձրանում: Նա ատել-ատել հեռացնում էր ճակատից ու այտերից սևաթուխր թանձր ու գանգուր մազերը:

Միքայելը բորբոքված աչքերով դիտում էր տիկնոջ գիրուկ ուսերը, կանոնակարգ իրանը, մանավանդ նրա կիսաբաց կուրծքը: Ի՜նչ աքանչելի իրան, ի՜նչ կրակոտ աչքեր և վո՛րպիսի ճգտիչ նայվածք: Թող ինչ ուզում են ասեն այդ կնոջ առնականության մասին — որ-ժինալ էյակ է, վոչ նման սովորական կանանց: Այ ու ձախ նայելով, նա գլուխն ավելի ու ավելի մոտեցրեց Անուշին և պատրաստ էր համբուրել, յերբ տիկինը հանկարծ գլուխը հեռացնելով լուսամուտից, ասաց.

— Գրիչան գալիս է:

Միքայելը յետ ցատկեց: Տիկնոջ անուշ վերաբերմունքը, անսահման սիրալիր և խորհրդավոր ժպտունները, աչքերի պպզոտ արտահայտությունն այնպիսի հաճույք էին պարգևել նրան, վորի նմանը յերբեք չէր զգացել: Մի հաճույք, վոր արժեր շատ ուրիշ տեսակ հաղթանակների: Ջե՛ վոր Անուշը քաղաքի պատվավոր տիկիններից մեկն է, առաքինի ու պարկեշտ համարվող ամուսին, չնայելով արկածավոր ամուսնության:

— Անուշի հե՞տ էիր խոսում,—ասաց Գրիչան, մոտենալով Միքայելին.—տեսա՞ր ինչպես թագնվեց, ինձ տեսնելով: Խռով ենք, չենք խոսում...

— Ինչո՞ւ:

— Վորովհետև նրա ամուսինն ավանակ է: Այն որը հենց ավանակ էլ անվանեցի նրան կնոջ ներկայությամբ, Անուշը վիրավորվեց, հետս էլ խոսում:

— Բայց ինչո՞ւ վիրավորեցիր մարդուն:

— Ինչպես չվիրավորեմ, սիրելիս, մի հազար ռուբլի ձեռապարտ խնդրեցի, տալեց: «Չունեմ», ասաց: Ավազակը հորս կողոպտել է, կես միլիոնի կարողություն ունե, «չունեմ» ասում է: Իսկ սիրուհիների համար ունե...

— Սիրուհինե՞ր է պահում:

— Հապա՛, այն էլ քանիսը. քաղաքի համարյա բոլոր թաղերում և ի՜նչ գեղեցկուհիներ, մեկը մյուսից այլանդակ...

Այդ մի նորություն էր Միքայելի համար և ուրախալի նորություն: Ցեթե մարդը հավատարիմ չէ կնոջը, կինը կատարյալ իրավունք ունե նրան դավաճանելու: Ցեվ այդ որից նրբագույն բեղիկներն սկսեցին ավելի զրաղեցնել նրան: Միքանի որ վորոշ ժամին անցավ միհարկանի տան լուսամուտների առջևով, տիկնոջը չտեսավ: Այս ավելի դրդեց նրան: Մի յերեկո վճռեց այցելել: Հակառակ սպասածին, տիկնոջ ամուսինն էլ տանն էր, թեև այդ պահին նա կլուբումն էր լինում: Մի չաբաթվա խռովությունից հետո այսոր մարդ ու կին հաշտվել էյին: Մի ժամանակվա «սերը» այժմ փոխվել էր փոխադարձ սառնության, և նրանք ամիս չէր անցնում, վոր միմյանց չվիրավորեյին այս կամ այն պատճառով: Հենց վոր ամուսնական կյանքի առաջին տարին անցավ, Պետրոսն Անուշի և Անուշը Պետրոսի աչքում դարձան ամենասպասելի էյակները՝ մարդն իր չքնաղ հատուկ դեհկությամբ, կինն իր հավակնությամբ ու պահանջներով, յերկուսն էլ կոպիտ և մեկը մյուսի համար չափազանց առարյա, նույնիսկ ոդեղ: Նրանք զգացին, վոր միայն անցողիկ անասնական կիրքն էր, վոր նրանց ձգեց իրարու գիրկը: Մի կիրք, վոր այժմ Պետրոսը նվիրել էր ծախու էյակներին, իսկ Անուշի մեջ տակավին լուռ էր, սպասելով հարմար առիթի, վորպեսզի բռնկվի:

Այսոր տիկինն առանձին ուշադրությամբ դիտեց ամուսնուն, դիտելով նաև հյուրին: Տարբերությունը չատ խիստ էր: Հաստավիզ, հաստատպարանոց, խորն ընկած փոքրիկ ագահ աչքերով, ճաղատ գլխով, բշտիկներով ծածկված յերեսով — ահա Պետրոսը: Թեյը խմում և պնակից, թրջելով նրա մեջ իր հաստլիկ, վար լջված բեղերը և խորդալով: Անուշ խմորեղենի կտորները կլանում է իրարու հետևից, վոնչալով տավարի պես, մինչև անգամ չդիտե հյուր ընդունել ու նրա հետ զրուցել մարդավարի. նախ՝ չվոխվեց, տեսնելով իր տանն այդ նորաձև հագնված, նուրբ կազմվածքով, խոշոր կրակոտ աչքերով միլիոնատիրոջը, վորի ձևերն ու չարժումները կրում են հարստության մեջ ծնված ու անվածի վորոշ կրթության զրոշմը: Այո՛, խելագար էր Անուշը, կատարյալ խելագար, վոր փաթաթվեց այդ մարդու պարանոցին: Այնինչ այսոր այդ մարդը գեռ ինքն է դավաճանում ամուսնական անկողնին, փոխանակ հակառակը լինելու:

Պետրոսը խոսում էր Ալիմյանի հետ վաճառականական գործերի մասին — մի նյութ, վոր բնավ հետաքրքրական չէր Միքայելի համար: Նավթն որեց-որ թանգանում է, յերանի նրան, ով հանքեր ունե: Պետրոսը չունե: Ցեթե Միխայել Մարկիչը լիներ բարի և իր հողերից մի գեսյատին նժան գնով տար, Պետրոսը հավիտյան յերախտապետ կմնար: Անուշը ղղվանքով յերեսը չուռ տվեց. այդ մարդը միշտ հարուստ յերևտասարդի մոտ բերան է բաց անում թե չէ, մի բան է խնդրում: Ահա՝ ինչ ասել է նախկին գործակատար: Ցեվ մինչ մարդը խնդրում էր, կինը խոստանում էր... խորհրդավոր ժպտուններով, ձևերով ու չարժումներով: Ավելի. նա հրաժեշտի միջոցին յերեք անգամ այնպես սեղմեց յերիտասարդի ձեռքը, վոր այլևս կասկածի տեղ չմնաց...

Ցերկու որ անցած Միքայելը նորեն այցելեց և այս անգամ Անու-

չին մենակ գոտավ: Նույնիսկ յերեխաները տանը չեյին: Աղախինը նրանց տարել եր իրենց տատի մոտ:

Անուշը Միքայելին ընդունեց մի տեսակ պաշտոնական սառնությամբ և տխուր: Միքայելն անվրդով մեկը չեր: Տիկնոջ սառնությունը բացատրեց հոդերանորեն ճիշտ: Այսոր Անուշն զղաց իր ամուսնու մասին խոսելու և նրան պարապեցնելու պահանջ: Թվում եր նրան, վոր յեթե չպարապվե, Միքայելը կարող է կարծել, թե տակավին սիրում է այդ մարմնով այլանդակված և հոդով կոշտ ու կոպիտ մարդուն: Բայց և այնպես ինքնասիրությունը դպչեց նրա լեզուն, և նա բավականացավ միքանի ակնարկներով, վոր այնուամենայնիվ արտահայտեցին նրա դժգոհությունն իր վիճակից: Ժամանակի հետ փոխվում է և կնոջ ճաշակն ու պահանջները, ներկայումս ամուսինն ու զավակները բավական չեն մի կնոջ յերջանկության համար. կան ուրիշ հոգեկան պահանջներ: Ա՜հ, վո՛րքան Անուշը կխափաղեր զբաղվել վորևե վոչ-ընտանեկան գործով: Յերեկ նա թատրոնումն եր, խաղում եյին ինչ-վոր նոր դրամա, ուր հերոսուհին ընտանեկան կյանքից ձանձրացած, ձգտում է իր հոգին զբաղեցնել հասարակական գործերով: Անուշը հուզվել եր իր օթյակում և հափիվ եր կարողանում զսպել արցունքը: Թվում եր նրան, վոր յեթե լիներ դերասանուհի, կարող եր այդ կնոջ դերը կատարել ավելի լավ, քան ովևե:

— Հավատացեք, ներկայումս ապրում են միայն դերասանուհիները, իսկ ինձ նմանները թշվառ են:

Միքայելը լսում եր և հավանություն տալիս տիկնոջ ասածներին: Նա արդեն համոզվել եր, վոր Անուշը վոչ միայն չի սիրում իր ամուսնուն, այլև ատում է և բոլոր նրա ցանկություններն ու ձգտումները հենց այդ բանից են առաջանում:

Այդ որից նա այլևս չեր աշխատում սանձահարել իր հետզհետե ավելի ու ավելի բորբոքվող կրքերը: Այցելում եր Անուշին յերկու-յերեք որը մի անգամ, յուրաքանչյուր անգամ վորևե պատրվակով և միշտ Պետրոսի բացակայությամբ...

V

Մի ամսում Սմբատն արդեն ծանոթացավ հոր դործերի հետ: Ուսումնասիրելով նրանց, ավելի ու ավելի հետաքրքրվում եր ու հափշտակվում: Միլիոնների ձեռնարկությունը, բացի նյութականից, պարունակում եր և մի տեսակ բարոյական հրապույր: Նա, վոր մի ամիս առաջ իր իշխանության տակ հազիվ ուներ մի աղախին, այժմ կանգնած եր մի ամբոխի դլուխ: Հազարի չափ արհեստավորներ, բանվորներ, դործակատարներ նայում եյին նրան, իբրև լիազոր իշխանավորի, վոր կարող է իրենց բախտավորեցնել, յեթե կամենա, կամ զրկել մի կտոր հացից:

Զարմանում եր Սմբատը հանդուցյալի բնական խելքի, տակտի, յեռանդի, մանավանդ համբերության վրա: Այդ տգետ մարդը, վոր հազիվ սովորել եր իր անունն ու ազգանունը դնել բանկային չեկերի ու մուրհակների տակ, տարիների ընթացքում վարել եր մի ընդարձակ և բարդ գործ, վորը հաջող վարելու համար քիչ եյին մի խումբ համալսարանականների ու մասնագետների ուժերը: Այդ մարդը կատարյալ տաղանդ և յեղել իր տեսակի:

Հաճախ Սմբատը հիշում եր Միքայելի կծու կշտամբանքն իր անցյալ հայացքների վերաբերմամբ: Այո՛, նա չատ անգամ եր ասել, թե մեր ժամանակում չիտակ միջոցներով հարստություն դիզելն անհնարին է, թե բոլոր հարուստները մի տեսակ վանալիրներ են, վոր ծծում են մարդկության արյունը: Յեվ ահա այսոր նա կանգնած է աշխատավորի արյուն-քրտինքով վաստակված հարստության դլուխ: Ի՞նչ անել այժմ. հավատարիմ մնալ անցյալին, արհամարհել բոլորը, հանձնել յեղբորն ու մնալ աղքա՞տ, ինչպես եր դեռ մի ամիս առաջ: Մի կողմից նա մտածում եր, յեթե կամքի ուժ ունենա և բարոյական մաքրություն, այդպես պիտի անե, մյուս կողմից՝ նրան պաշարում եյին մեկից ավելի ուրիշ մտածումներ: Ջե՞ վոր այդ հարստությունն անցնելով Միքայելի ձեռքը, կարող է ապարդյուն հալվել ու չքանալ մի քանի տարում: Այնինչ, վորքա՜ն բարի և ոգտակար գործեր կարելի յե կատարել նրանով, ու այդպիսով բարոյական գործադրություն տալ անբարոյական միջոցներով ձեռք բերված դենքին: Յեվ այս մտքով վոգևորվելով, ղղում եր իր մեջ մի անսովոր յեռանդ ու նոր, անծանոթ բարոյական զորություն: Կարծես, մի նիրհած ու թմրած ուժ եր զարթնել նրա մեջ և զարկ եր տալիս նեվրվերին: Մտքում կազմում եր տասնյակ միմյանցից մարդասեր, միմյանցից հրապուրիչ ծրագիրներ, վորոնք հիմնված եյին մարդկային թշվառությունները ամոքելու ցանկության վրա: Նախ և առաջ կբարվոքի իր իշխանության ներքո դտնվող բանվորների վիճակը — ահա նրա առաջին և ինքնըստինքյան մեծ գործը: Մի գործ, վոր դեռ վոչ վոք չի արել հանքատերերից ու գործարանատերերից:

Նա յերեկներն զբաղվում եր գործերով, յերեկոները փակվում եր սենյակում, գրում, կարդում, ուսումնասիրում տնտեսական որենքները: Յերբեմն անձնատուր եր լինում անձնական զղացումներին, դուրս եր բերում ծոցի գրպանից նվիրական լուսանկարները, դնում յերկար ու յերկար ժամանակ, հեռու եր պահում ու ժպտում, մոտեցնում եր ու համբուրում: Նա սիրում եր մենակ, առանց զավակների. թվում եր նրան, վոր վաղուց, չատ վաղուց է բաժանվել նրանցից և, կարծես, անջատված և նրանցից հավիտյան: Մոսկվա վերադառնալու մասին նա առայժմ չեր մտածում և յեթե մտածեր էլ, չեր կարող վերադաոնալ՝ այնքան առայժմ անհրաժեշտ եր տեղն ու տեղը մնալը: Մնում եր դրել ու հրավիրել կնոջը՝ յերեխաների հետ: Բայց ի՞նչպես

քերել տալ նրանց և դնել այն հարկի տակ, ուսկից ինքն էլ վռնդված եր մի ժամանակ նրանց պատճառով և ուր վոչ վոքի սիրտը բաց չեր նրանց ընդունելու: Ցեվ մի՞թե ունե իրավունք այդ անելու: Մի կողմից հայրական կտակն իր ծանր անեծքով, մյուս կողմից՝ մոր անվերջ հշտամբանքները: Բայց չե՞ վոր նա տանջվում և առանց դավակների և չե՞ վոր այդ դավակներն այնտեղ, այդ սառցային յերկրում ունին վորդիական ջերմությամբ լեցուն սիրտ և այժմ կարոտում են նրա տեսակցությանը: Ի՞նչպես զրկել այդ անմեղներին իրենց մորից և թողնել նրանց, վոր տառապեն կարոտից:

Մի յերեկո, այս ուղղությամբ խորհելով, նա զգացված եր առանձնապես: Հանկարծ մի վճռական չարժում արավ, վերցրեց մի թերթ թուղթ և սկսեց կնոջը մի նամակ գրել: Այլևս անկարող և դիմանալ դավակների կարոտին: Այժմ նա վո՛չ դործել դիտե և վո՛չ մտածել դործի մասին:

Նամակը վերջացրեց, կարդաց և նորեն ընկավ մտատանջության մեջ: Ի՞նչ և ուզում անել, վռնտատակե՞լ հոր կտակը, արհամարհե՞լ մոր աղերսանքներն ու արցունքները, մնալ հավիտենական անեծքի տակ: Հեռո՞. նա ի՞նչպես պիտի հաշտեցնե նահապետական և նախապաշարմունքներով տոգորված մի դերդաստան՝ մի յեվրոպական վոգով կրթված ոտարուհու հետ: Այս դեռ բոլորը չե, կա և՛ ուրիշ, դուցե ավելի մի բարդ խնդիր. չե՞ վոր նա չի սիրում իր կնոջը, չե՞ վոր յոթ տարի վարել և նրա հետ դեհենային կյանք: Այժմ հազիվ հեռացել և նրանից, հազիվ մի վոքը չունչ առել և նորե՞ն վերսկսել նույն տառապանքները:

Նա կամեցավ նամակը պատռել, դեն ձգել, բայց նորեն հիշեց զավակներին և նորեն զգաց խղճի սուր խայթ: Ցերանի այոքան ընտելացած չլիներ նրանց, յերանի լիներ մեկն այն իր հայրենակիցներից, վորոնք համառման վիճակում կարողացել են ձգել ճակատագրի հաճույքին իրենց արյան և հոգու կտորն ու հանդիստ վերադարձել հայրենիք և նորեն ամուսնացել: Այն ժամանակ նա իր անմաքուր խիղճը կսրբեր կրոնամոլության ավազանում: Բայց նա սիրել և նրանց վոչ միայն իբրև ծնող, այլև իբրև զգայուն մարդ: Առելով կնոջն ու նրանից առավելով, զգալով իր անթուլլատրելի մոլորությունը, հորից անիծված, մորից, յեղբայրներից ու բոլոր մերձավորներից հեռու, նա ուներ միայն և միմիայն մի սփոփանք — զավակները, ու նրանց մթնոլորտումն եր մոռանում իր հոգու կսկիծը:

Նա վերցրեց նամակը, ծրարեց: Այդ պահին ներս մտավ Միքայելը, մոտեցավ և լուռ նստեց դեմ ու դեմ սեղանի մյուս կողմում: Նրա դեմքն արտահայտում եր վճռականություն, յերևում եր, վոր յեկել և մի լուրջ խնդրով և դրական վորոշումով:

— Ժամանակ ունի՞ս,—հարցրեց նա:

— Նայելով, թե ինչի համար:

— Այդ կիմանաս, բայց այդ ի՞նչ նամակ ե:

— Ջո դործը չե:

— Հասկացա, կինոջդ ես դրում: Իհարկե, չունիմ իրավունք քո անձնական դործերով զբաղվելու. սակայն հետաքրքրական ե դիտնալ՝ ինչպես ես վճռել զավակներիդ վիճակը:

— Դրում եմ նրանց մորը, վոր վերցնե նրանց և դա այստեղ: Հուսով եմ, վոր դոնե դու դեմ չես այդ բանին:

— Դու ինքդ ասացիր, վոր այդ ինձ չի վերաբերում, բայց արդյոք վաղաժամ չե՞ այդ նամակը:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Այն, վոր նախքան այդ նամակը դրելը պիտի խոսեյիր ինձ հետ:

— Ջեմ հասկանում:

— Կխոսեմ պարզ ու կարուկ: Դու պիտի չուտով վերադառնաս Մոսկվա:

— Վերադառնա՞մ: Ինչո՞ւ:

— Ջո նախկին կյանքը չարունակելու, այսինքն՝ դերդաստանից աքսորված:

— Միքայել, յես տրամադիր չեմ կատակներ անելու:

— Ցես ես առավել: Լսի՛ր, ապորինի յես տիրացել մեր հոր ժառանգությանը:

— Մի՞թե,—դոչեց Սմբատը հանդիստ, ցամքիչը սեղմելով ծրարի հասցեյի վրա:

— Այո՛, դու չես այդ ժառանգության տերը,—կրկնեց Միքայելը:

— Մոտդ նամակադրըշմ կա՞,—հարցրեց Սմբատն ամենայն սառնասրտությամբ, ուզում եմ այս նամակն իսկույն ևեթ փոստարկղ դնել տալ:

— Ցես խնդրում եմ թողնել կատակներդ և լսել ինձ:

— Ահա՛, լսում եմ:

— Մեր հայրը քեզ վոչինչ չի կտակել, նույնիսկ մի աննշան բաժին: Այն կտակը, վորով տիրացել ես նրա հարստությանը, ապորինի յե: Իսկականն ինձ մոտ ե: Ցեթե բարեհաճես, կարող ես ծանոթանալ նրա բովանդակության հետ:

— Ցերևի նոր ես ճաշից վերկացել, գլուխդ մթնած ե, դնա՛, հանդստացիր:

Միքայելը վրդովվեց:

— Ցես հարբած չեմ և արթուն եմ ավելի քան յերբևե,—դոչեց նա և, ձեռը տանելով ծոցի գրպանը, դուրս բերեց մի քառածալ թուղթ:

Սմբատը մատը սեղմեց զանգակի կոճակին: Ներս մտավ սպասավորը:

— Թադեվոս,—հրամայեց նա,—այս նամակը տար և փոստը դձիր:

Սպասավորը վերցրեց նամակը և դուրս գնաց:

— Թղթի կտո՞ր, այդ ի՞նչ է,—հարցրեց Սմբատը նույն սառնասրտությամբ:

— Այո՛, թղթի կտոր, որ սակայն մեր հոր իսկական կտակն է: Հավատում եմ քո աղնվությանդ, ա՛ռ և կարդա...

Սմբատը ճեռը մեկնեց թուղթն ընդունելու:

— Կա՛ց,—ասաց Միքայելը, ճեռը տանելով մյուս դրպանը,—չես սխալվեցել. Մարուքխանյանն առում է՝ մեր ժամանակում վոչ վոքի չի կարելի հավատալ, նույնիսկ հարազատ չեղբորը: Նա ճանաչում է մարդկանց:

— Մանո՛ւկ,—արտասանեց Սմբատը, հեղնորեն ժպտալով,— յերբևի քեզ համար ուրիշ դորություն դոյություն չունի, բացի զենքը:

Նա վերցրեց թուղթը. բաց արավ, կարդաց, սուզեց հոր ստորագրությունը և ասաց.

— Այո՛, շատ ճարպիկ ճեռք է ունեցել այս թուղթը հորինողը:

— Դու չե՞ս հավատում կտակի իսկությանը:

— Իհարկե, չեմ հավատում, բայց...

Նա կանգ առավ, խորհեց, ճակատը տրորելով: Նա՝ և՛ չեր հավատում, և՛ չեր կարող չհավատալ: Մի՞թե ճիշտ է: Նայեց թղթի սկզբում գրված թվականին, չփոթվեց. նա գրված է իր քովը յեղած կտակից մի քանի ամիս հետո, յերկուսի տակ էս նույն ճեռով գրված ստորագրությունը: Ուրեմն ջարդ ու վշտեր են լինում նրա բոլոր ծրագրերը: Ուրեմն նա գործյալ չքավոր է, գործյալ գերդաստանից աքսորված, անիծվա՞ծ: Ի՞նչ է նշանակում այդ, կատա՞կ է արել հանգուցյալը մահվան անկողնում, մահամերձի դիվային կատա՞կ, թե հոգեկան հիվանդ է յեղել ծերունին և մի թղթի փոխարեն ավել է մյուսը:

Նա նայեց Միքայելի յերեսին խորը, զննող հայացքով, և մի միտք հանկարծակի լուսավորեց նրա բոպեյարաբար մթագնած ուղեղը: Ճակատի կնճիռները պարզվեցին, և նրա դեմքով անցավ մի գառը ժպիտ:

— Ո՞վ է հորինել այս թուղթը,—դոչեց նա, ճեռը գարկելով կեղծ կտակին:

— Ինքը՝ հանգուցյալը, պարզ չե՞ մնում:

— Վերցրու յետ, յե՛տ վերցրու և պատռիր ու գեն ձգիր: Դու մի խայտառակ բանսարկության զոհ ես... վերցրո՛ւ...

— Հա՛ հա՛ հա՛,—ծիծաղեց բարձրաձայն Միքայելը, և նրա ծիծաղը հնչեց բռնազբոսիկ ու կեղծ:

Սմբատը մի անգամ էս սուզեց հոր ստորագրությունը՝ իր ձեռքի մեջ գտնված մյուս ստորագրությունների հետ և նորեն չփոթվեց: Մտածեց, որ յեթե նույնիսկ այդ թուղթը մի կեղծվածք է, կարող է նրան ահագին անախորժություններ պատճառել:

— Դու ուզում ես, որ այս թղթի հիման վրա որևէքով հաստատված իրավունքներս քե՞զ հանձնեմ,—հարցրեց նա, վոտքի յելնելով:

— Սխալված ես այդպես անել:

— Իսկ յեթե չանե՞մ:

— Կդիմեմ դատարանին:

Սմբատը լռեց, ծալեց նորեն թուղթն ու դրեց յեղբոր առջև: Միքայելը նայում եր նրա յերեսին: Մի վայրկյան նա խորհեց, որ իր արածը լավ բան չե, բայց միայն մի վայրկյան: Զայիսի՛ սկսեր կոմեդիան, որ սկսել է, պիտի խաղա մինչև վերջը:

— Ուրեմն դատարանի՞ միջոցով:

— Դիմիր, ուր ուզում ես,—պատասխանեց Սմբատը, վճռաբար.— յես այդ կտակը համարում եմ կեղծ և հորինողը Իսահակ Մարուքխանյանն է:

Միքայելը ցնցվեց թակարդ ընկած թռչնի պես, սակայն կարողացավ անմիջապես ուշքի գալ:

— Յավում եմ, որ պիտի դիմեմ դատարանին,—ասաց նա և վոտքի յելավ:

Ցավ վորպեսզի իր կամքի ուժն ավելի զժվարին փորձի չենթարկի, չսպասեց հեռանալ, թուղթը դնելով գրպանը:

Սմբատը բուռ մսոի յեղունկը սեղմեց ստամոներին, հայացքը հառելով հատակին: «Իսկ յեթե կեղծ չե՞»: Հայտնի բան է, այն ժամանակ պիտի մտածել անեղիքի մասին: Նա չի կամենում հոր տափի վրա մնալ, և ո՞վ կկամենար մնալ նրա տեղը: Թող այդ հարստությունը դեղված լինի աննկարելի միջոցներով, նրան կարելի յե զրկել ու մաքրել կեղտերից, գործադրելով հոդուտ հանրության, բայց նորեն աղքատանա՛լ... ո՛ո՛, վո՛չ, չի կարող...

Հետևյալ առավոտ նա ինքը զնաց Միքայելի սենյակը և այնտեղ հանդիպեց Իսահակ Մարուքխանյանին: Գուշակեց անմիջապես, թե ինչն է այդ մարդուն բերել այստեղ այդչափ կանուխ առավոտյան: Գուշակեց նաև, որ վեսան իր անհրաժեշտ տրամադրությունն արդեն լարել է իր դեմ: Նա բացատրություն պահանջեց. Միքայելը կրկնեց նույնն ավելի դրականորեն, քան նախընթաց յերեկո:

— Դիմելու յեմ դատարանին այսոր ևեթ, յեթե չկամենաս գործը հաշտությամբ վերջացնել:

— Դիմի՛ր,—ասաց Սմբատը, մի զննիչ հայացք ձգելով Մարուքխանյանի վրա.—դիմեցեք, յերկուսդ ել կկորչեք վորպես կեղծարարներ:

— Խնդրեմ, առանց վիրավորանքի,—արտասանեց Մարուքխանյանը.—ի՞նչ իրավունքով ես ինձ խառնում այդ գործի մեջ:

Ցետ, պատասխան չստանալով, ավելացրեց.

— Իմ միակ մեղքն այն է, որ չես Միքայելին հավատում եմ ավելի, քան քեզ: Կոնար-կատուն իսկական է և անժխտելի: Իրրև իրավարան չես համոզված եմ այդ բանում:

Սմբատի տրամադրությունը վայրկենապես մեղմացավ, ոչ երկյուղից, այլ մի ուրիշ մտքից: Եթե նույնիսկ կեղծ է կոնար-կատուն, կարող է մեծ աշխուժ բարձրացնել և դառնալ աղբյուր ոսկի դիտե Ի՛նչ չարիքների:

— Միքայել,—ասաց նա, աշխատելով լինել կարելություն չափ սառնասիրտ,—այդ մարդուն հավատ մի՛ ընծայիր. նա կարող է քեզ կործանել, չես այս ասում եմ առանց քաշվելու, իր ներկայությամբ:

Ասաց ու դուրս դնաց, իջավ ցած և մտավ տան ներքին հարկում գտնվող խանութներից մեկը:

Դա մի երկայն ու լայն սենյակ էր, բաժանված տախտակյա միջնորմով երկու մասերի — առաջին և յետին: Յետին մասը ծառայում էր իրրև կացարան՝ քաղաքային դործակատարներից մեկի համար, իսկ առաջին մասը՝ դրասենյակ էր: Այստեղ դրված էին մի քայքայված, դեղնադույն պահարան և մի հնամաշ դրասեղան՝ մի քանի նույնչափ հնամաշ աթոռներով: Դրամարկղ չկար: Մի ուրիշ դրասեղան դրված էր խորքում: Հատակի մի կողմը ծածկված էր դանդան հանքային ու գործարանային պարագաներով — խողովակներ, ծորակներ, պարաններ կապոցներ և այլն:

Խորքի սեղանի մոտ նստած դրում էր մոտ քառասուն տարեկան մի մարդ, նիհար ու ժամանակից առաջ թառամած դեմքով: Սմբատին տեսնելով, նա վոտքի կանգնեց ու բարևեց, յերևան հանելով իր հագակի բարձրությունն ու մեջքի կորությունը: Հագած էր նա յերկայն մոխրագույն հնամաշ ռեդինկոտ, վորի մաշված կոճակների արճճաձույն թիթեղիկները փայլում էին չքանչանների պես: Ծնկների կողմում կուչկուչված անդրավարտիկի տակից յերևում էին մեկից ավելի անդամ կարկատված կոշիկների բերանները և այնտեղից ցցված ճերմակ գուլպանները: Պարանոցին կապած էր մի սև թաշկինակ, յուղոտված ու փայլուն, վոր նրան տալիս էր հիվանդի տեսք: Մի ուրիշ դույնդույն թաշկինակի ծայրը ցցվել էր ռեդինկոտի յետևի գրպանից: Ընդհանուր առմամբ այդ մարդը կյանքից ծեծված մեկի տպավորություն էր գործում:

Սմբատը նստեց դրասեղանի քով և ստորագրեց մի քանի թղթեր, վոր լուրեն նրա առջև դրեց կորամեջք մարդը, վոր թե՛ դրասենյակի վարիչ էր, թե՛ գործակատար, թե՛ հաշվապահ: Այնուհետև մարդը վերցրեց ստորագրված թղթերը և յուրաքանչյուրի տակ ստորագրեց իր անունը.

«Հաշվապահ՝ Դավիթ Զարդարյան»:

Հետո դուրս բերեց գրպանից մի կապ թղթադրամներ և դրեց Սմբատի առջև, ասելով.

— Ստացվել է յերկու խանութպաններից:

— Պահեք ձեզ մոտ, վաղը կտաք,—ասաց Սմբատը:

— Վո՛չ, վերցրեք, չես չեմ կարող մոտս մի ժամ անգամ դրամ պահել:

Հաշվապահը հուզված էր յերևում: Նրա ամբողջ կեցվածքի մեջ նկատվում էին վրդովմունքի հետ նաև հպարտության և վիրավորված ինքնասիրության:

— Դարձյալ ի՞նչ է պատահել,—հարցրեց Սմբատը, վոր արդեն բավական ճանաչել էր այդ մարդու բնավորությունը:

— Պարոն Սմբատ, վերցրեք այդ փողերը և այսուհետև ինձ աղաչեցեք առհասարակ դրամի հաշիվներից:

Այս ասելով, Զարդարյանը խոշոր քայլերով սկսեց անցուդարձ անել: Յուրաքանչյուր քայլին նրա վոխ իրանը թեքվում էր առաջ այնպես, վոր կարծես, ամեն անգամ վոտների տակ սողուն էր ջարդում:

— Ցես ձեր միտքը չեմ հասկանում,—ասաց Սմբատը,—մի՛ դուցե չես ձեզ վիրավորել եմ:

— Վո՛չ, պարոն Ալիխյան, դուք բավական կրթված եք ինձ նման-ներին չվիրավորելու համար: Ցես ուղղակի սարսափում եմ ինձ մոտ փող պահելուց:

— Ցերևի, վախենում եք կորցնե՞լ:

— Այո՛, վախենում եմ:

— Բայց, վորքան ինձ հայտնի չե, այսքան տարի մեզ մոտ ծառայելով, դուք դեռ վոչ մի անգամ վնաս չեք կորցրել:

— Սխալվում եք, մի-յերկու անգամ պատահել է հանդուգնյալի կենդանության ժամանակ:

Զարդարյանի խոսքերի մեջ Սմբատն զգում էր հետին մտք: Այդ մարդու աղնվության մասին նա մազի չափ կասկած չուներ: Արդեն բավական էր, վոր Հանդուգնյալի նման վերին աստիճանի զգույշ և կասկածամիտ մեկը պահել էր նրան իր մոտ յոթը տարի:

— Ի սեր անկեղծության, պարզ խոսեցեք: Ինչպես տեսնում եմ, դուք մի բան ուզում եք ասել, բայց քաշվում եք...

— Շատ բարի, պարզ կխոսեմ, քանի վոր թույլ եք տալիս,—ասաց Զարդարյանը և մի խոշոր քայլ ևս անելով, կանգ առավ Սմբատի առջև.—ձեր յեղբայրը, պարոն Սմբատ, դողություն է անում:

— Զարդարյա՛ն,—ընդհատեց Սմբատը վրդովված:

— Դուք իրավունք տվեցիք ինձ լինել անկեղծ, ուրեմն չպիտի բարկանաք: Այո՛, պարոն Միքայելը դողություն է անում, և չես ան-

զոր եմ նրան արդելելու: Նա այս չարաթ յերեք անգամ գրասենյակից վազ և վերցրել՝ առանց ստացական տալու: Ահա հաշիվը, հազար յոթ հարյուր ռուբլի...

Նա դրեց Սմբատի առջև մի թուղթ:

Գողությո՛ւն. վո՛րպիսի վիրավորանք Ալիխան դերդաստանի պատվին և ինքնասիրությանը: Միքայելն այդ վազերի մասին վոչինչ էի ասել Սմբատին և, իհարկե, յերբեք չպիտի ասեր: Ահա ի՛նչ. ուրեմն նա չի բավականանում մորից առանձին և յեղբորից առանձին ստացածներով. ձեռներն ապականում է գողության մեջ: Նա չի խնայում անգամ այդ խեղճ հաշվապահին, վտանգի յենթարկելով նրա վարկը: Ահա թե վո՛րքան է ապականել այդ տղան:

— Հանգուցյալը,—շարունակեց Զարդարյանը հառաչելով,— լավ եր ճանաչում վորդուն, ուստի բոլոր վարձողներին և գործակատարներին պատվիրել եր վոչ մի կոպեկ չտալ նրան: Լավ կլիներ, վոր մենք նույնն էլ դուք անեյիք...

— Շատ բարի, յես աչքի առջև կունենամ ձեր խորհուրդը...

Ասաց, և վերջումունքը գրելու համար դուրս յեկավ վազից:

Կյանքն արդյունաբերական քաղաքում յեռում եր: Մարդիկ անցնում եյին դեսուդեն չտապ քայլերով, մտաղրաղ դեմքերով: Դժվար չեր դուշակել, վոր գլուխները պաշարված են միայն մի մտքով և սրտերը համակված միայն մի զգացումով — վաստակել վորքան կարելի յե շատ և վորքան կարելի յե շատ: Ամբողջ մթնոլորտը տոգորված եր այդ զաղափարով: Մարդիկ բարևում եյին իրարու հապճեպ, խոսում եյին արագ-արագ, հևալով, ընչասաո: Հաղիվ կանգ եյին առնում, յերբ հարկավոր եր իրարու ձեռը սեղմել: Ամբողջ քաղաքն անտովոր մարդու վրա գործում եր յերկաթուղու կայարանի տպավորությունն, ուր ամեն վոք չտապում է, վազում, հրում ու հրվում, վախենալով գնացքը վազցնել: Այդ ու ձախ սլանում եյին տնային ու վարձու կառքերը, տանելով գործի մարդկանց՝ դեպի փայլուն վոսկին: Այդ ու ձախ յերևում են նոր կառուցվող և արդեն կառուցված հոյակապ տներ: Սպիտակ քարաշեն յեվրոպական ձևի շինությունները փոխարինում եյին նախկին նեղ ու ցածր ասիական կացարաններին՝ հողե տափակ կտուրներով: Ամեն ինչ փոխվում ու նորոգվում եր տենդային թափով, իսկ ամենից առաջ մարդկանց արտաքինը: Յերեկվա պարսկական վափախը, կապան ու քոչերը տեղի եյին տալիս քաղաքակիրթ աշխարհի զլխարկին, ռեդինգոտին ու վայլուն կոշիկներին: Դրան ենթարկվում էին ու վարժում խանութները լեցուն եյին հաճախորդներով: Մտնում եյին, դուրս գալիս, գնում, վաճառում, խարում ու խաբվում և միշտ շտապում:

Մի յերկհարկանի տան առջև Սմբատը տեսավ խումբ-խումբ մարդիկ, վոր այս ու այն տեղ խորհրդավոր դեմքերով փսփսում եյին: Բնազդմամբ գլուխը բարձրացրեց և տան ճակատին կարդաց «Բորսա»: Այստեղ եյին որվա վորոշ ժամերին ժողովվում առևտրական միջնորդները և «բորսայի նպաստակները», այստեղ եյին չահում ու չահադործում: Յուրաքանչյուրն աշխատում եր ուրիշի ապրանքը թանկ ծախել, ուրիշի համար լեժան գնել և ստանալ իր բաժին վարձը: Մի քանի խմբակներ, Սմբատին ճանաչելով, պատվառանքով յետ քաշվեցին՝ նրան ճանապարհ տալու, վոմանք խոնարհ գլուխ տվեցին:

Սկզբում Սմբատն զգաց մի տեսակ արհամարհանք և նույնիսկ նողկանք դեպի այդ մարդիկ: Ահա ձրիակերների մի ամբոխ, մի տեսակ խոց հասարակական մարմնի վրա: Ընկերական չրջաններում, ուսանողական վորոշ խմբերի ազդեցությամբ, չատ անգամ եր դատապարտել տնտեսական աշխարհի այն տարրերը, վորոնք վո՛չ աշխատավորներ են, վո՛չ արդյունաբերողներ: Այժմ արհամարհանքը փոխվեց մի այլ զգացման: Արդյոք արդարացի՞ յե թեկուզ այդ խումբ-խումբ ժողովված մարդկանց դատապարտել իրրև պարազիտների: Արդյոք թեթևամտություն չե՞ յերևույթը պարսավել՝ առանց պատճառները քննելու: Եթե միջնորդը պարազիտ է — պարազիտ է նաև արդյունաբերողը, հանքատերը, գործարանատերը, կալվածատերը, վաճառականը, խանութպանը, ուրեմն և ինքը՝ Սմբատը...

Նա զգաց, վոր իր մտքերը դնում են հետու, չատ հետու, թափանցելով քաղաքատնտեսության խորքերը: Շփոթվեց ինքն իր մտքերից, զգաց մի տեսակ ամոթ իր մտավոր և բարոյական աշխարհի առջև: Այդ պահին նա կանգնած եր յերկու մարդու միջև. մեկն այժմյան Սմբատն եր, մյուսը՝ մի յերկու ամիս առաջվա Սմբատը, մեկը՝ միլիոնների ժառանգը, մյուսը՝ այն աղքատ յերիտասարդը, վոր իր ընտանիքը պահում եր մասնավոր դասերով, հորից անիծված, դերդաստանից աքսորված, նպաստից զրկված:

Վորի՞ն մոտենալ, վո՞րի հետ ձուլվել առ միշտ, վո՞րն է բարվոքը —զրկվել հարստությունից, մնալ հավատարիմ տեսականին և անգին, թե՞ լինել հարուստ, զորավոր, ինքնիշխան: Հարցն անլուծելի յեր:

Հանկարծ նա ցնցվեց: Նա հիշեց Միքայելի կոնտր-կտակը, վորի մասին մոռացել եր: Այո՛, յեթե այդ կտակն օրինական է, — խնդիրը կլուծվի ինքնըստինքյան, առանց նրա կամքի: Նրան նորեն կարտաքսեն դերդաստանից, նորեն կմնա նույնը, ինչ վոր եր յերկու ամիս առաջ: Այն ժամանակ թո՛ղ գնա իր զաղափարները պաշտելու և քաղցած փորով բարոյական սկզբունքներ քարոզե և իր զավակներին կերակրե քարձրագույն թեորիաններով:

— Սմբա՛տ,—լսեց նա մի ծանոթ ձայն և յետ նայեց:

Գրիգոր Հարեթյանն էր, որ հնաոլով, անքալով ու քրտնած, մոտենում էր:

— Ո՞ւֆ, տրաքեցի, յեոևիցդ վաղելով: Այդ անիրավ բժիշկները հոգիս հանեցին, բայց ոտնել չկարողացան... Լսի՛ր, յես պատգամավոր եմ ուղարկված քեզ մոտ... Ֆյադիմ-բեկ Աղիլբեգովը խնդրում է այսօր յերեկոյան չնորհ բերել իր տունը, ուր պիտի տեղի ունենա դաս-քեֆ. նա ուզում է քեզ սղից դուրս բերել և հատկապես քեզ հետ բարեկամանալ: Հանուն բոլոր միջազգային դարդիմանդների, մի՛ մերժիր, խոսք եմ տվել տանելու քեզ, պիտի տանեմ:

— Ո՞վքեր են լինելու:

— Ասացի ելի, միջազգային դարդիմանդներ:

— Միքայե՞լն էլ:

— Առանց սումադի լուլաքեբաբ կլինի՞: Միքայելը մեր ընկերական չրջանի համն ու հոտն է:

Սմբատը կիսափազեր մերժել, բայց հետաքրքրությունը գերազանցեց: Արժե գեթ մի անգամ լինել Միքայելի ընկերական չրջանում և տեսնել՝ ինչպես է նա վատնում իր կյանքը:

— Լավ, կգամ,—վճռեց նա:

— Այդպես չի կարելի, կարող ես խոստումդ մոռանալ կամ վախչել: Յերեկոյան ութ ժամին կգամ նախ քեզ կլուբ տանելու: Սպասի՛ր ինձ տանը, բայց վոչ դրասենյակում: Յես այդ սանդխատով բարձրանալու ախորժակ չունեմ...

VI

Հասարակական ժողովարանի սպասավորները Սմբատին տեսնելով, միմյանց առաջեցին՝ նրա վերարկուն ու գլխարկն ընդունելու:

Ընդարձակ քարե սանդխատով վեր բարձրանալով Գրիչայի հետ, նա մտավ մի սենյակ. անցավ մի մեծ սրահ: Այստեղ վոմանք զբաղված էին թղթախաղով, վոմանք խմբակների բաժանված խոսում էին, վիճաբանում, բացատրում, համոզում: Այստեղ ևս առևտուր եր կատարվում: Կատակները էին անում, սրախոսում, սինիկ անեկդոտներ պատմում և, միմյանց ուսին ու վորին զարկելով, տասնյակ հազարների գործեր վերջացնում: Լավում էին զարձվածքներ, նկատվում էին ձևեր ու չարժումներ, վոր անսովոր մեկի վայելչասիրության զգացումը կարող էին վիրավորել: Յերեկվա դռեհիկ գյուղացիների, մրգավաճառների, սայլապանների միայն հագուստն եր փոխվել: Փոշոտը, ոսլացած չապկով ու վայլուն կոշիկներով, տեղափոխվել եր մի հասարակական հավաքարան, վոր լուսավորված եր էլեկտրական լամպաններով և զարդարված փարթամ կահ-կարասիով: Թավշե բազկաթոռների վրա անխութ ընկղմված էին մարդիկ, վոր դեռ յերեկ-մեկել որը հնամաշ խոիրների վրա էին ծալապատիկ նստում:

Կային բժիշկներ, իրավաբաններ, ինժեներներ, վորոնց արտաքինը, ձևերն ու արտասանած դարձվածները կրում էին չրջանի դրոշմը: Գրեթե նույն կոշտ ու կոպիտ կեցվածքը, նույն դռեհիկ յեղանակը խոսակցության, ինչ վոր հատուկ եր անկիրթ ու անուսյալ չրջանին, այնպես վոր անծանոթ աչքը չեր կարող տեսակայել, վոր յուրաքանչյուրի դրսանում կա մի-մի վկայական բարձրագույն ուսման: Կրթությունն ու դարդացումն աղդելու փոխարեն ազդում էին և նկատելի յեր, վոր կրթվածները նույնիսկ գիտակցաբար որինակում էին հարըստացած խոհարարների ու դռնապանների դռեհիկ ձևերն ու սովորությունները՝ նրանց դյուր դալու համար:

Սմբատն ամեն կողմից հանդիպում եր սիրալիր վողջույնների, տարևական ժպիտների, և կրթվածները, միմյանց առաջում էին նրա ձեռը սեղմելու: Յեվ ամենքն իրենց կարեհիցությունն էին արտահայտում հոր մահվան առիթով և գովում ու վառաբանում էին հանգուցյալի առաքինությունները:

— Դրանք էլ մեր աղգասերներն են,—ասաց Գրիչան՝ հեգնաբար, առաջնորդելով Սմբատին մի փոքրիկ սենյակ, ուր հինգ-վեց մարդ, առանձնացած տաք-տաք վիճաբանում էին ինչ-վոր բանի մասին:

— Ջաղցած վորը մարդու գլխին զոռ է տալիս,—ասաց Գրիչան:

Նրանք մտան չատ պայծառ լուսավորված ընդարձակ սենյակ, ուր յերկայն սեղանի քով մի խումբ մարդիկ լրագիրներ էին կարդում:

— Մեր տեղական պոլիտիկոններն են,—ասաց Գրիչան:

Հետևյալ սենյակները լիքն էին թուղթ խաղացողներով: Կավիճի փոշին, ծխախոտի ծուխը, ընչաուրթյունների գոլորշին ոդի մեջ գոյացրել էին մի տեսակ մանիչակագույն մշուշ, վորի միջով հազիվհազ յերևում էին կարմրած յերեսները, ճարպոտ աչքերը և մեկը մյուսից հատու ու պարարտ վորերը: Վոմանք թե՛ խաղում էին և թե՛ առևտուր անում: Այս ու այն կողմից լսվում էին հանքային ջրերի բացվող շշերի պայթոցները: Նորաբողբոջ բուրժուազիան կուշտ ճաշից հետո իր ճարպոտ վորովայնը զովացնում եր, թառանչելով ու բղկոց տալով:

Վերջին սենյակում բիլլիարդ էին խաղում: Այստեղ էին Մելքոնն ու Մովսեսը:

— Գալուստդ բարի, սղավոր,—ասաց Մելքոնը Սմբատին, թեքվելով, վոր դնդակին զարկե:

— Իշալլահ,—արտասանեց քնահարը Մովսեսը, կխի ծայրը դանդաղորեն կավիճելով: Կոամբոլ... հայ աթոռնի...

— Դե լավ, վերջացրեք, արդեն տասը ժամն է,—զոչեց Գրիչան անհամբեր:

Գնդախաղը վերջացավ: Սմբատը, Մելքոնն ու Մովսեսն անմիջա-

պես ուղևորվեցին Բյակիմ-բեգի տուն, իսկ Գրիշան դնաց թատրոն, ասելով.

— Գնամ դեղեցկուհիներիս հսկելու, որ ուրիշները չվախցնեն:

Թատրոն կոչվածը մի քառանկյունի անվոճ ու անճաշակ սրահ էր, նման չռեմարանի: Մտնելով մի նեղ անցք, Գրիշան վերարկուն չպրտեց առաջ վազող հանդերձապահին և անցավ կուլիսների հետև: Այդտեղ տիրում էր չուվալին խառնակութիւն. մինչ բեմի վրա յերգում էին խորային յերգիչ-յերգչուհիները ու պարուհիները իրենց թեթև ղեստներով, բարձրաձայն խոսում էին, վիճաբանում, իրարու բոթում, իրարու հայհոյում, ծիծաղում, քրքջում: Կային մի քանի կնամոլներ, որ յեկել էին իրենց ժամանակավոր սիրուհիներին ներկայացումից հետո ընթրիքի տանելու: Դրանք դլխավորապես գողությամբ հարբեցուտացած դործակատարներ կամ նավթային միջնորդներ էին:

Գրիշան ձեռով չփեց մի սիրունիկ պարուհու յերեսը և մոտեցավ դեղադեմ կոմպրեմարիոյին առժամանակ, մինչև որ պրիմադոննան կավարտեր իր ա'րիան բեմի վրա և կստանար յերկրպագուների սովորական ծափերը, նաև մի վորևե նախկին սայլապանից՝ ծաղիկների մի կողով: Կուլիսների հետևում նա առհասարակ ընդունվում էր սիրով ու հարգանքով, և շատ դերասանուհիներ ու յերգչուհիներ իրենք էին փութաքվում նրա պարանոցին:

Հայտնելով պրիմադոննային, թե այս դիշեր ուր պետք է անցկացնեն իրենց ժամանակը ներկայացումից հետո, նա չտապեց անցնել թատերասրահ, որ ծայրեծայր լիքն էր: Հպարտ, ինքնավստահ քայլերով անցավ ադամանդազարդ տիկինների և պոչավոր պարոնների միջով և բռնեց իր տեղն առաջին կարգում: Տասնյակ նախանձոտ աչքեր ուղևկում էին նրան, իբրև մի յերջանիկ անձի, որի համար թատրոնը, կարծես, սեփական տուն էր, իսկ կուլիսների հետևը՝ հարեմ:

Բյակիմ-բեգ Ադիլբեգովը Միքայելի ընկերների մեջ ամենից ազատն էր ընտանեկան պայմանների նկատմամբ, ամենից հարուստն ու ամենից չռայլը: Նրա ծնողները մեռել էին միքանի տարի առաջ. տանը վոչ վոք չուներ, բացի յերկու-յերեք լեզդի ծառաներից, խոհարարից և կառապանից: Ապրում էր վորպես վոչ-մահմեդական, նիստն ու կացը բոլորովին հարմարեցրած էր քրիստոնյա ընկերների ճաշակին ու պահանջներին: Հորից ժառանգել էր յերեք-չորս հոյակապ տներ, բազմաթիվ նավթահորեր, յերկու առագաստավոր նավեր, մի չոդենավ և միքանի տասրակ վոսկիներ: Արդեն կեսն իր հարստության վատնել էր, մնում էր մյուս կեսը: Մոլեռանդ մուսուլմանները վաղուց էին հաշտվել նրա մեղսալի կենցաղի հետ, համարելով նրան ապականված դյավուր, որ հանդերձյալ աշխարհում պիտի չարաչար պատժվեր...

Հյուրերը մտան կես յեվրոպական և կես ասիական վոճով կահավորված մի ընդարձակ սրահ: Մի անկյունում ծալապատիկ թախտի վրա նստած, յերդում ու նվագում էին սազանդարները: Տանտերը միքանի հյուրերի հետ վինտ էր խաղում: Դա առույդ և կայտառ մի յերիտասարդ էր, դեղեցիկ դեմքով, խոշոր, սև աչքերով, մաքուր սափրած յերեսով և բարակ սևաթույր ընչացքով: Հագած էր թավշե արխալուղ, Դաղստանի նրբաոյան չալից կարած կապա՝ վոսկե վազմաններով: Մեջքին կապած էր վոսկե գոտի, վորից կախվում էր մի դեղեցիկ դաշույն՝ զմայլելիորեն շինած վոսկենատն փղոսկրե պատյանի մեջ:

Տեսնելով հյուրերին, նա արագությամբ վոտքի յելավ նրանց դիմավորելու և յերեսն հանեց իր բարձր հասակին ու նուրբ կազմվածքը: Դեմքի կարմրությունից, վառ աչքերի արյունախառը չրջանակներից կարելի յեր դուշակել մեծ սերը դեպի վիդելից ըմպելիքները և անքուն դիշերները:

— Մաշալլա՛, մաշալլա՛,—դոչեց նա, մոտենալով Սմբատ Ալիմյանին,—Հիսուսի անունով յերդվում եմ, այս յերեկո յես յերջանիկ եմ քո գալստյամբ: Թաքո՛յ սյուրփրիզ, թաքո՛յ սյուրփրիզ...

Նա գրկեց ու համբուրեց Սմբատին և ներկայացրեց հյուրերին: Ներկա էին՝ մի ռուս սպա, մի վրացի իշխան, պարսկաց հյուպատոսը, յերեք հայ, մի լեզդի, յերկու հրյա, մի հույն և մի լեհացի: Հայերից մեկը մոտ հիսունուհինգ տարեկան մարդ էր, միակ ծերն այդ չրջանում և մեկը քաղաքի առաջնակարգ հարուստներից, կույր բախտի մի ընտրյալ, վորի մասին ասում էին, թե մի ժամանակ յեղել է խոհարար: Մյուսը վաղաժամ ծերացած մի յերիտասարդ էր՝ աչխարհի հաճույքներից հոդնած դեմքով: Նրա դեմքը կրում էր վատադույն հիվանդության նշանները: Ցերերորդը՝ Միքայելն էր, վոր Սմբատին տեսնելով, հեռացավ սրահի հեռավոր անկյունը:

Վինտն ընդհատվեց: Նստեցին «բակարա» խաղալու: Նորեկներն առանց «վոսկե ժամանակը կորցնելու», միացան խաղացողներին, բացի Սմբատից, վոր կյանքում յերբեք թուղթ չէր խաղացել: Բյակիմ-բեգը չհամարձակվեց թախանձելու նրան, վոր խաղա:

Սկզբում խաղացողները սպոն էին, գնում էին քարտին տասնական-քսանական ռուբլի և վոչ ավելի: Զսպողը սպան էր: Նա չատ դրամ չուներ. մյուսներն էլ խաղում էին դդուչչ, խաղի «հուիկան» պահպանելու համար: Վերջապես սպան տանուլ տվեց ինչ-վոր ուներ, վոտքի յելավ, վորով և մեծ հաճույք պատճառեց քնահարած Մոսկովյին: Շուտով բոլորը տաքացան: Միքայելը տանուլ էր տալիս, Մելքոնը նույնպես: Բյակիմ-բեգը դադարեց խաղալ, վերկացավ, դրկեց Սմբատին և միասին դուրս յեկան պատշգամբ:

Միքայելն սկսեց հուզվել ու կատաղել թղթերի դեմ: Տատնումեկ անգամ մխմյանց հետևից նրա թուղթը «խփեցին»: Վո՛չ, այդ անկարելի չէ, անաքանչություն, հազիվ կարողացել է միքանի հազար ռուբլի գտնել պարտքով և ահա կիսից ավելին գնաց: Պետք է «ձեռքը փոխել»: Բանի խաղը փոքր էր, տանում էլի, իսկ այժմ...

— Նիկոլայ Լուկիչ,—դարձավ նա սպային, որ նախանձոտ աչքերով հետևում էր խաղացողներին՝ նման անոթի մեկին, որ մատնակից չէ ճոխ սեղանին:—Նստեցե՛ք:

Սպան թեքվեց, և Միքայելը նրա ձեռի մեջ դրեց մի բուռը թղթադրամ, ավելացնելով.—

— Քաջ խաղացեք...

Տասը րոպե չանցած սպան մաքրվեց, իսկ Միքայելը, որ իր բախտը կապած էր նրա մասնակցության հետ, չարունակ տանուլ էր տալիս:

Սրդեն ամենքը բորբոքվել էին: Այլևս վոչ վոք հաշվի չէր առնում բանկոմետի առաջարկը, դնում էին վորքան նա կանչում էր: Դեմքերը կարմրել էին, աչքերը վառվել, սրտերը բաբախում էին հուզումից, այն լինքնատեսակ հուզումից, որ հատուկ է միայն թղթախաղին և վորն է իսկական պատճառը, որ դրդում է խաղամոլին տասնյակ ժամերով չարունակ և անդադար խաղալ: Մի դրդիռ, որ ունե իր հաճույքը:

Սմբատը ներս էր յեկել և հետաքրքրված դիտում էր Միքայելին: Հետաքրքրականը յեղբոր տանելը կամ տանուլ տալը չէր, այլ հոգեկան դրությունը: Նկատում էր, որ թղթախաղը Միքայելին բոլորովին այլափոխել է: Աչքերը կարմրել են, պսպղում են վառ ածխի պես, քնքիշ պնչերը դողդողում են՝ նման արաբական նժույգի ռնդերի, ամբողջ էությունը տակն ու վրա յե յեղել: Դեմքը գունատվել և թղթի պես և կուրծքը բարձրանում-իջնում է փուքսի նման: Սմբատին էլի նայում, խաղում է խեղաթյուրի պես, մերթ տալով, մերթ վերցնելով հարյուրանոցները: Մեկը և մաքրվեց և Քյալիմ-բեգը բռնեց նրա տեղը: Սմբատն զգաց, որ ինչ-որ դիվային ույժ մղում է նրան դեպի խաղի սեղանը: Ամեն անդունդ ունի ձգողական զորություն, որին դիմադրելը մի տեսակ հերոսություն է: Սրդեն նա սովորել էր դյուրին խաղը և կարող էր մասնակցել: Մերթընդմերթ հուզվում էր մեծ դուռ մարով խաղացողների հետ, յերբեմն զայրանում էր մեկի կամ մյուսի անհաջողության դեմ: Հրապուրը քանի գնում, այնքան անհաղթելի էր դառնում: Հանկարծ նա, մի ձեռը տանելով ծոցի դրպանը, մյուսը դրեց սեղանի ձրա և ասաց.

— Փորձի համար:

Բանկոմետը Մոսիկոն էր, որ արթնացել էր, վառվել և ամենից քունդ էր խաղում: Նա յեռապատկեց գումարը: Սմբատը թուղթը վերցրեց: Միքայելի գունատ դեմքով սահեց մի հեղնական ժպիտ: Սմբատը ձգեց սեղանի վրա վեց հատ հարյուրանոց. նա տանուլ տվեց: Վերցրեց յերկրորդ թուղթը, դարձյալ տանուլ տվեց: Յերրորդ թուղթը զարկեց և հեռացավ սեղանից:

Վրացի իշխանը բոլոր ունեցածը տանուլ տվեց և այժմ խաղում էր «վավիճով»:

— Պապաչա, տեղդ ինձ տուր,—դարձավ Մելքոնը նախկին խոհարարին, որ տանում էր:

— Յես ըը պառավ մարդ եմ, յես ըըը վերկենալ չեմ կարող,—ասաց Պապաչա կոչվածը, որ յերկու խոսք ասելիս յերեք անգամ կըմկմում էր:

— Կոնյա՛կ,—գոչեց Մոսիկոն:

Լեզգի սպասավորն իսկույն կատարեց հրամանը, բերելով մի ամբողջ շիշ: Բոլորը դատարկեցին մի-մի բաժակ, հետո յերկրորդը, յերրորդը և նրանց արյունն ավելի տաքացավ:

Այժմ Միքայելը տանում էր: Տանում էին նաև Մոսիկոն ու Պապաչան: Մյուսներից բախտը յերես էր դարձրել:

Թղթերը չրջան անելով, անցան Մելքոն Ավրոմյանի ձեռքը: Նա մի սուր հայացք ձգեց հարևանի յերեսը և գոչեց.

— Հազար ռուբլի:

Վոչ վոք մինչև այժմ առաջին թղթի վրա այդպիսի մի գումար չէր առաջարկել: Հարևանը, որ վրացի իշխանն էր, կանգ առավ, նայեց Պապաչայի յերեսին: Փող էր խնդրում նախկին խոհարարից, բայց հայացքը պահանջողական էր, ծերունին գլուխը բացասաբար չարժեց, բավական է վորքան տվել է, տվածն էլ հետ չի պահանջում: Բոլորը նայեցին միմյանց յերեսին:

— Գալիս է,—ասաց Մոսիկոն,—բռունցքը զարկելով սեղանին:

Նա տարավ, իննանոցով «խփելով» ութանոցը: Մելքոնը բերանից արձակեց մի կեղտոտ հիշոց թղթերի հատցեին՝ չպրտելով նրանց մի կողմ: Բերեցին նոր թղթեր: Այդ էլ չդնեց. բախտն այդ դիչերը դավաճանում էր նրան: Կատաղում էր, փրփրում, առանց մի վորևե ափսոսի սրա ու նրա հետ վիճում: Առհասարակ հայտնի չեր իր կովարիությամբ: Նա գոռաց յերաժիշտների վրա, որ չըջապատել էին սեղանը և ագահ աչքերով նայում էին հարյուրանոցների դեղերին: Այլևս դրպանում փող չուներ, խաղում էր «վավիճով»: Թղթերը նորից անցան նրա ձեռքը, նա կանգ առավ, միքանի վայրկյան խորհեց, ձեռով ճակատը չփեց և գոչեց.

— Յերեք հազար ռուբլի:

Այս անգամ Մոսիկոն էլ տատանվեց, չնայելով, որ չատ էր տաքած: Գումարը խոշոր էր:

— Գնացե՛ք,—խորհուրդ տվեց վրացի իշխանը Պապաչային:

— Հալա ըրը հարրած ըրը չըմ, ըրը, նուշ չի...

— Պակասացրո՛ւ,—դարձավ Միքայելը Մելքոնին,—տեսնում ես չի գալիս, թուղթը դիմադրություն չի սիրում:

— Հինգ հազար ռուբլի,—ավելի տաքացավ Մելքոնը:

—Կոնյա՛կ,—աղաղակեց Մոսիկոն:

Բաժակը դատարկեց, ձեռը դրեց ճակատին և մտածեց միքանի վայրկյան: Հետո վերցրեց անկյունում դրած թղթերից մեկը, նայեց դույնին: Նա դուշակում եր խաղի ելքը: Թուղթը կարմիր եր. կարելի եր գնալ:

— Վեց հազար,—ավելացրեց Մելքոնը, վոր բոլորովին դունատվել եր:

Սմբատն աչքերը հառել եր Միքայելի երեսին: Տեսնում եր, վոր խղճալը դրդռվում և և այս անգամ հասկացավ նրան: Նա ինքը յեն-թարկվել եր խաղի դիվային զորությանը:

— Ցոթ հազար,—արտասանեց Մելքոնը և, անմիջապես պատասխան չստանալով, ավելացրեց.—վախկոտնե՛ր...

Միքայելի ինքնասիրությունը վիրավորվեց:

— Գալիս ե,—ասաց նա և նայեց յեղբոր երեսին:

Սմբատը ձևացավ անտարբեր:

— Կատակ չե, խաղ ե,—ասաց Մելքոնը:

— Խաղի մեջ կատակ անողներից չեմ՝ թուղթ տուր ինձ:

— Գումարը պայծառացրու սեղանի վրա, հետո կտամ թուղթ:

— Կարող ես հավատալ, վաղը կտանաս,—ասաց Միքայելը և նորեն նայեց յեղբոր երեսին:

Նորեն Սմբատն անտարբեր ձևացավ:

— Կհավատամ, յեթե թուղթը վերցնես յեղբայրդ:

— Ուրեմն դու ինձ չուլե՞ր ես համարում,—դոչեց Միքայելը, ձեռն ուժգին զարկելով սեղանին:

— Ջա՛վ լիցի, յես միայն քո վարկաբեկությանը չեմ հավատում:

— Ցես անանկ չեմ, պարոն...

— Անանկանում են նրանք, վորոնք ունեյին մի ժամանակ:

Տիրեց վայրկենական ընդհանուր լռություն: Սազանդարները, վոր կանգնած եյին վիճողների հետևում, հետ քաշվեցին յերկյուղով:

— Տալո՞ւ ես թուղթ, թե՞ վոչ,—դոռաց Միքայելն արագությամբ և սպառնալի վոտքի յենելով:

Մելքոնը նայեց Սմբատի երեսին:

— կարող ես տալ,—արտասանեց Սմբատը, չհանդուրժելով յեղբոր սառրացումը:

Մելքոնը յերկու թուղթ ձգեց Միքայելի առջև, յերկուսն ել յերեսնիվար ձգեց իր առջև:

Հետո դաղտնի նայեց իր թղթերին, աչքունքը թթվեցրեց և ասաց.

— Տալիս եմ...

— Ջեղ տես,—արտասանեց Միքայելը:

— Ցոթանոց ե մտել...

Մելքոնը ձեռքի կոլոդից դրեց սեղանի վրա մի թուղթ ևս: Նրա շրթունքները դողդողում եյին:

— Անո՞ւնդ,—հարցրեց նա:

— Դո՛ւ ասա:

— Անո՞ւնդ:

— Վեց ա:

— Ցո՛ւյց տուր...

— Ցոթ...

Ցեվ Միքայելն իր թղթերը պարզեց սեղանի վրա: Նա համոզված եր, վոր տարել ե: Բայց Մելքոնը չբաց տվեց իր թղթերը և ցույց տվեց յերկու տասնանոց և մի իննանոց: Միքայելը ցնցվեց:

— Անկարելի յե,—դոռաց նա, ինքն իրեն կորցնելով,—անկարելի յե, յես չեմ թույլ տալ ինձ կողոպտելու:

— Խա՛ղ ե,—ասաց Մելքոնը սառնարյուն,—վաղը կվճարե յեղբայրը:

— Ա՛վազակ, դու իննոցը դուրս բերիր կոլոդի տակից:

— Շուլերը դու ես:

Սկսվեց իրարանցում: Ցերկու հակառակորդները վոտքի յելան և մի-մի աթոռ բարձրացրին: Մի վայրկյան ևս և նրանք պիտի հարձակվեյին իրարու վրա: Սմբատը բռնեց Միքայելին և ուժով մի կողմ տարավ: Ապա, դառնալով Մելքոնին, ասաց.

— Վադն առավոտյան տարածդ կտանաս:

Հարկավ, խաղը դադարեց: Սմբատը կամեցավ անմիջապես հեռանալ և տանել իր հետ Միքայելին:

— Վո՛չ, վո՛չ,—թախանձեց Ջյադիմ-բեգը,—յես կվիրավորվեմ, յեթե դնաք: Դատարկ բան ե, կհաշվեն:

Մինչ բոլորն աշխատում եյին կովածներին հանգստացնել, ներս մտան Գրիչյան, սլրմատոնյան, յերկու խորային յերգչուհիներ և մի յերգիչ: Ցեվ նրանց յերևալը, մանավանդ սլրմատոնյայի ժպտուն պեղեցկությունը՝ կրքերը մեղմացրին:

Գեղեցկուհի համարվածը բարձրահասակ, բավական դեր, չիկահեր մի եյակ եր, մազերը ճակատի վրա խոպոպացրած և ծոծրակի վրա հունական ձևով հյուսած: Վարի թերթերունքների տակ խնամքով չինված և գծերը նրա բնականից փոքրիկ աչքերին տալիս եյին արվեստական

խոշորությունն, նույնիսկ մի տեսակ թախիծ: Ուղղն ու չպարը ծածկում էին յերեսի մորթու քանի մի անհարթությունները, իսկ սնդուկն այտերին տալիս էր թեթև կարմրություն: Ունքերի նոսրությունը սքողված էր այնպիսի վարպետությամբ, որ ամենանրբատես աչքը կարող էր խաբվել:

Նա բոլորի ձեռքը սեղմեց մաերմաբար, բոլորին պարգևեց մեկն այն հրաշագործիչ ժպիտներից, որ ինքնըստինքյան դառնում են բեմին ծառայողների հատկանիշը:

Սաղանդարները վոգևորվեցին, նախատեսելով մի արտաքո կարգի քեֆ, ուրեմն և առատ վարձատրություն, մանավանդ, յեթե Միքայելին և Մելքոնին հաշտեցնեն:

Գրիչան գրկեց ու համբուրեց պատվառելի Պապաշային, չշնջալով նրա ականջին մի քանի արտնահույզ խոսքեր կանանց մասին: Ծերունին հատա բեղերը վոլորելով, փողկապն ուղղելով, աչքերը կըլքոտ կատվի պես անկեց յերգչուհու յերեսին և հետո, նայելով վոտքից մինչև գլուխը, մտքում մերկացրեց նրան:

Կես ժամ անց, Ֆյադիմ-բեգը հյուրերին հրավիրեց սեղանատուն, ուր ուտելիքներով և ըմպելիքներով ծանրաբեռնված սեղանն սպասում էր նրանց: Միքայելը նստեց պրիմադոննայի աջ կողմում: Ամիս ու կես էր կանանց հետ սեղան չէր նստել — կարոտել էր: Գրիչան նստեց յերգչուհու ձախ կողմը: Ֆյադիմ-բեգն ու վրացի իշխանը նստեցին դեմուդեմ: Սմբատը նստեց տանտիրոջ և Պապաշայի միջև:

Գրիչան ընտրվեց սեղանապետ: Սկզբում բոլորն աշխատում էին իրենց լուրջ պահել պրիմադոննայի ներկայությամբ, մանավանդ, վոր անախորժ ընդհարման տպավորությունը դեռ չէր անցել: Սեղանապետն առաջարկեց դեղարվեստի «փայլուն աստղի» կենացը, վոր և՛ ընդունվեց հոտնկայս, և բուռն ծափահարությամբ: Սաղանդարները «տուշ» նվագեցին:

— Silence ,—դոչեց հոգնած դեմքով մի յերիտասարդ իրավաբան, վոր հաշտարար դատավորի պաշտոնակատար էր:

Բոլորը լռեցին: Նա արտասանեց դեղեցկի և դեղարվեստի մասին մի ճառ: Սկսելով հին հույներից, անցնելով հռոմեացիներին, հետո մեր ժամանակներին, նա դատարկեց իր գիտության ամբողջ տոպրակը և դոչեց.

— Ergo , մենք իրրև դեղարվեստի ջերմ յերկրպագուներ, խոնարհվենք նրա թագուհու առջև...

Ֆյադիմ-բեգն ասաց.

— Աֆարի՛մ...

Վրացի իշխանը դոչեց.

— Վաչա՛...

Գրիչան իր հետ յեկած յերգչին առաջարկեց յերգել մի ռոմանս: Վոտքի կանգնեց բեղերը սափրած մի մաշված ու քայքայված մարդ՝ ոպերայի յերկրորդ տենորը և, ներողություն խնդրելով, հրաժարվեց յերգելուց: Ուղում եր, վոր բոլոր ներկա յեղողները մխաձայն խնդրեին: Ցեվ խնդրեցին. բայց յերգիչն ղռում եր, վոր իր ձայնը վաղուց և քայքայվել:

— Ջիվկոնդա՛,—դարձավ նա պրիմադոննային,—ռոմանսը քեզ համար չարլոն բան է: Թույլ տուր ինձ յերգել ու ներկայացնել «Խեղաթյուրը»:

— Բռավո՛, բռավո՛, հրաշալի քեռի,— ասաց պրիմադոննան:— Պարոննե՛ր, խնդրեմ ուշադրություն դարձնել Վիկտոր Հյուգոյի «Խեղաթյուրը» բացառիկ է: Պատիվ ունիմ ծանոթացնել, ազատ Բառնայ կամ Սալվինի: Վճռել և ոպերան թողնել և դրամային նվիրվել: Ո՛ո՛, տեր Աստված, ներվերս քայքայեցին այդ վայրենի հնչյունները,—ավելացրեց նա, ձեռով դժկամական նշան անելով դեպի սաղանդարները:

— Ադա՛, լռեցե՛ք,—հրամայեց Ֆյադիմ-բեգը, և սաղանդարները դադարեցին նվագել:

«Ազատ Բառնայը կամ Սալվինին» հանդիսավոր կերպով նայեց աջ, նայեց ձախ, բերանը սրբեց, փողկապն ուղղեց, վոր ընդհանուրի ուշադրությունը գրավե: Ցեվ սկսեց յերգել ու ներկայացնել «Խեղաթյուրը»: Նրա շրթունքները կամաց-կամաց աղավաղվեցին, յերեսի կաշին կուչկուչվեց, աչքերի բիբերը ծռվեցին նախ մի կողմ, հետո մյուս կողմ, ապա բարձրացան վեր, և ազատ Բառնայը դարձավ կրկեսային խեղկատակ: Նրա խռպոտ ձայնը, վոր կրում եր ալկոհոլի կործանիչ ազդեցությունը, մերթ բարձրանում եր մինչև գիպազոն, մերթ կոկորդի մեջ խեղդվում՝ արձակելով ամենատարօրինակ հընչյուններ, նման տեղական սայլերի ճռճռոցներին:

Պրիմադոննան, վոր իր հոգու խորքում խղճում եր իր «կորած» ընկերոջը, ծափահարեց՝ նրան չվշտացնելու համար: Բոլորը հետևեցին նրա որինակին: Ազատ Բառնայն արժանավայել ձևով գլուխ տվեց աջ ու ձախ, նստեց՝ տխուր հառաչելով:

— Վորքա՜ն զգացմունք, վորքա՜ն զգացմունք,—դոչեց պրիմադոննան, թաչկինակը հպելով աչքերին՝ իբրև թե արցունքը սրբելու համար,—եքստրա քո կենացը, դեղարվեստի բազմաչարչար նահատակ:

— Ո՛, Լիզա, Լիզա, եքստրա, եքստրա,—աղաղակեցին բոլորը, մի-մի բաժակ դատարկելով:

Գրիչան դիտեր պատվել կանանց սեռը: Առաջարկեց խորային յերգչուհիների կենացը միասին:

Հերթը հասավ Սմբատ Ալիմյանի կենացին: Գրիչան ասաց, թե

այսոր չրջանը ձեռք է բերում մի թանկագին անդամ, մի «մոլորյալ գառնուկ», վոր դրեթե մանուկ հասակում փախել եր հարազատ փսրբախից:

Բոլոր սեղանակիցների կենացներն ավարտելուց հետո, Ֆյաղիմբեգը հրամայեց սաղանդարներին՝ նվագել ինչ-վոր պարերգ: Առաջինն ինքն սկսեց պարել, աչքերը անկած գեղեցկուհի պրիմադոննայի կրծքին, պտտելով սեղանի չուրջը:

— Ադա՛, փադայ չամփանոքիյ,—դարձավ նա սպասավորներին:

Սմբատը ղեռամ եր ինչ-վոր անսովոր ջերմություն: Անծանոթ մթնոլորտը, ուր մի ժամ առաջ նա իրեն խորթ եր ղեռամ, փափկացել եր և նրա հոդու մեջ տարածում եր մեղկություն: Այլևս նա չեր կըշտամբում իրեն, վոր յեկավ այդտեղ: Այժմ նա իր մտքում արդարացնում եր Միքայելին և պատրաստ եր նրան ղրկել ու համբուրել...

VII

Միքայելը մոռացել եր իր անախորժ ընդհարումը Մելքոնի հետ և չարունակ քչփչում եր պրիմադոննայի հետ: Ֆանի թուղթ եր խաղում, հիլում եր տիկին Անուշ Ղուլամյանի բեղիկները: Այժմ յերգչուհու հարևանությունը բոլորովին մոռացնել եր տվել տիկնոջը: Ամբոխը բորբոքվել եր և նրա մարմնին պատճառում եր բուռն անձկություն: Անսպասելի ցանկությամբ նա նայում եր մերթ դեղեկցուհու ուռուցիկ կրծքին, մերթ թղթի պես ճերմակ պարանոցին: Լինում եյին վայրկյաններ, յերբ պատրաստ եր չրմունքները հպել այդ պարարտ կոկորդին և ատամներով խածնել նրան, բայց աչ ու ձախից նայող նախանձոտ աչքերը զսպում եյին նրան՝ մանավանդ Սմբատի աչքերը, վոր նույնպես անտարբեր չեյին դեպի յերգչուհին:

Շամպանիայի առաջին բաժակը նվիրվեց յերգչուհու կենացին, այս անդամ վոչ իրըև դեղարվեստի «թագուհու», այլ բոլոր աչխարհների բոլոր կանանց լավագույնին: Ամենքը վոտքի կանգնեցին, գոռալով ու աղաղակելով, բացի Սմբատից, վոր տակավին պահում եր սգավորի լրջությունը: Ֆյաղիմ-բեգը մոտեցավ «անդուդական եյակին», խընդրեց թույլ տալ «յերեքային ուսը» համբուրելու: Որինակը գայթակղիչ եր, բոլորը հերթով համբուրեցին հրապուրիչ ուսը դեղեցկուհու: Տեղիցը չչարժվեց միայն Սմբատը: Մի հանդամանք, վոր չխուսափեց յերգչուհու ուշադրությունից:

— Պարոն Ալիմովը չատ է դրաղված իր վիղավիով,—ասաց նա ծիծաղելով:

«Վիղավին» խորային յերգչուհիներից մեկն եր, վորի վրա մինչև այդ րոպե Սմբատը չեր նայել անդամ:

Ապագա Բաունայն արդեն հարբել եր և լալիս եր, քովը նստած

ասլային նկարագրելով դեղարվեստին ծառայողների հոդեկան տանջանքերը: Հարբել եյին նաև Մելքոնն ու Մոսիկոն: Պապաչան հարմար վայրկյան վորսալով, աթոռը վերցրեց ու գնաց նստեց յերգչուհու կողքին: Բարձրացավ ընդհանուր ծիծաղ: «Պապաչան գժվեց, Պապաչան կործանվում է», դոչեցին այս ու այն կողմից: Յերգչուհին մի քնքուչ հայացք պարգևեց նախկին խոհարարին, վորի հարստության մասին լսել եր վաղուց:

Գրիչան ինչ-վոր չչնչաց յերգչուհու ականջին, բաժակը լցնելով չամպանիայով:

— Պարոննե՛ր,—դոչեց յերգչուհին, բաժակը բարձրացնելով,— այնտեղ, ուր կա գվարճություն, վոխ չպետք է լինի...

— Ուչադրությո՛ւն, ուչադրությո՛ւն, ինքն աստվածուհին է խոսում,—դոչեց Գրիչան:

— Ինմում եմ Միխայել Մարկիչի և Մոիսեյ Ամբարձումովիչի կենացը և խնդրում եմ նրանց համբուրվել իրարու հետ:

— Համբուրվել, այո՛, հարբուրվել, եվիվա, հուռռա՛, հուռռա՛, —գոռացին վոմանք:

Մի խումբ չրջապատեց Միքայելին, մի ուրիշը՝ Մելքոնին, մոտեցրին իրարու՝ հրելով ու բոթելով և ստիպեցին համբուրվել:

Հաչտությունն ամենքին վոգևորեց: Այժմ կարելի յեր ավելի բաց սրտով չարունակել քեֆը:

Սմբատը զայրացած նայեց հաչտվողների դրկախառնությանը. ուրեմն այդ միջավայրում խոսքերն արժեք չունին, և վիրավորածները վոչ մի ազդեցություն կամ այդ մարդիկ ո՞ւրիկ են պատվո զգացմունքից, վոր մի ակնթարթում, մի ժամ հետո համբուրվում են:

Միքայելը ևս կորցրել եր իր գլուխը, այնքան դերասանուհին հաճելչտակել եր նրան իր քաղցր, խմաստալի ժպիտներով և ձայնի գրգռիչ հնչյուններով: Մերթընդմերթ վորձի համար թևը սեղմում եր հարեհնչյուններով: Մերթընդմերթ վորձի համար թևը սեղմում եր հարեվանուհու թևին, և վորձերը դրալի ընդդիմության չեյին հանդիպում:

— Ցե՞րբ է ձեր բենեֆիսը,—հարցրեց նա:

— Առաջիկա կիրակի:

— Կարո՞ղ եմ հուսալ, վոր այդ որն ինձ հետ կճաչեք:

— Հաճույքով:

— Ցեվ կընթրե՞ք:

— Այդ մասին խոսք տալ չեմ կարող: Կախված է հասարակության վերաբերմունքից, դուցե ինձ հրավիրեն խմբովին:

— Թույլ կտա՞ք, վոր իմ պարտքը կատարեմ այժմ իսկ:

— Ի՞նչ եք կամենում ասել:

— Ահա,պատասխանեց Միքայելը և իր ձագ մատից հանելով ա-

դամանդյա մատանին, խնդրեց յերդչուհուն Թուլլ տալ մատին հագցնելու:

Գեղեցկուհին չփոթված ձևացավ, նայելով մատանու գրավիչ քարին, վոր վայելում եր աստղի շողերով: Վո՛չ, վո՛չ, նվերները նա սովորաբար գեղարվեստի տաճարումն է ընդունում: Բայց, ա՛խ, ի՛նչ հրաշալի ադամանդ է և ի՛նչ լավ չինվածք: Ո՛, վո՛չ, չի՛ վերցնել. ի՞նչ կասի Սմբատ Մարկիչը:

— Տեսեք, ինչպես է նայում...

Միքայելի ինքնասիրությունը դրդռվեց: Նա անկախ մարդ է, վոչ մի յեղբայր չի կարող նրա վրա իրավունք բանեցնել: Ցավ նվերը հենց այդ նպատակով է անում ընկերների ներկայությամբ, վոր ասացուցանե, թե ազատ է, ինքնագլուխ: Նա արդեն բոլորին հայտնել եր հոր կոնտր-կտակի մասին: Վճռված եր վաղը վերջին անգամ Սմբատին առաջարկել համաձայն ընդունել այդ կտակի որինավորությունը, հակառակ դեպքում գործը վաղն իսկ պիտի հանձնվեր դատարանին:

— Գրիշա՛, ոդնի՛ր ինձ,—դիմեց Միքայելն ընկերոջը:

— Ներեցեք, Ցեցիլիա Անաստասիևնա,—ասաց Գրիշան, բռնելով յերդչուհու ցուցամատը՝ մատանին հագցնելու համար,—մենք կոչտ ու կոպիտ կովկասցիներ ենք, յերբ խոսքը չի աղդում, դիմում ենք ուժի ոդնությանը...

— Ասացեք պարզասիրտ և անկեղծ ասպետներ եք, մի՞թե կարելի չե ձեղնից վերաձորվել,—ասաց յերդչուհին, Թուլլ տալով, վոր մատանին հագցնեն իր մատին:

Սակայն մատանին ցուցամատին չանցավ, հագցրին ձագ մատին:

— Ի՞նչ նուրբ ձեռներ ունեք, ի՞նչ հրաշալի,—արտասանեց յերդչուհին, չոյելով Միքայելի մատները:

Այս թեթև փաղաքշոմը լիովին վարձատրեց Միքայելին՝ թանկարժեք նվերի փոխարեն:

— Այդ ի՞նչ եք քչփչում այդտեղ,—դոչեցին այս ու այն կողմից:

— Վոչինչ,—ծիծաղեց յերդչուհին,—ձեռս դանակով կտրեցի, Միխայել Մարկիչը վերքս փաթաթեց:

Ցավ, մատը բարձրացնելով ոդի մեջ, ցույց տվեց թանկարժեք նվերը: Այսպիսով՝ նա ցանկանում եր չարժել ամենքի նախանձը, բայց չհաջողվեց: Վոմանք ծաղրեցին Միքայելի թեթևամտությունը. ի՞նչ կարիք կա բենեֆիսից առաջ նվերներ տալու. դա մեչչանական անամոլություն է:

Սմբատն ամաչեց յեղբոր արածից, սակայն չտապեց դասել իր դժկամությունը:

Այլևս բոլորը հարբել եյին, բացի հուդնից և հրյաներից: Լեհացին

չտապեց հեռանալ աննկատելի: Սրահը լցվել եր ծխախոտի ծխով, կերակուրների ծանր հոտով:

— Ախ, չատ չոդ է,—ասաց յերդչուհին, հանկացնել տալով, թե ժամանակ է վերկենալու:

Բանն այն է, վոր ծխախոտի ծուխը վնասում եր սիդուրին, իսկ շոդից պուդրը չարունակ լվնում եր, և նա ստիպված եր ամեն րոպե նորեն բամբակը դուրս բերելու քսակից:

— Այո՛, չոդ է,—կրկնեց Մոսիկոն, կամենալով բաճկոնը հանել:

Նրա ձեռները բռնեցին և արգելեցին:

— Լուցկի եմ ուղում,—գոռաց Մելքոնը, վորի նախանձը չարժել եր Միքայելի նվերը յերդչուհուն:—Մի փոքրիկ ֆեյերվերկ դիցուհու պատվին:

Դատարկ ափսեի վրա փաթաթել եր պսակի ձևով միքանի թղթադրամներ և մեջը դրել յերդչուհու լուսանկարը: Պսակը վառեց լուցկով, և լուսանկարի չուրջը լուսավորվեց մանիչակագույն բոցով. թղթադրամները թրջված եյին բենեդիկտինի մեջ: Եֆեկտը բավական մեծ յեղավ. բոլորը ծափահարեցին, յերաժշտությունը թնդաց — լուսանկարի հետևում անվնաս եյին մնացել միքանի հարյուրանոցներ: Մելքոնը ծիածանագույն պսակը ներկայացրեց գեղարվեստին, այսինքն դեղեցկուհուն:

— Եստ դիկո՛, նո ոչեն որիգինալնո, ոչեն,—հիացավ յերդչուհին, բարձրաձայն ծիծաղելով և հարյուրանոցները ձգելով քսակի մեջ:

Մորային յերդչուհիներն ագահ աչքերով դիտում եյին տեսարանը և անդոր նախանձում պրիմադոննային: Հանկարծ նրանք ծվվացին ինչ վոր դուետ: Պապաչան նրանց բաժակների մեջ ձգեց յերկու-յերկու վոսկի և հետո դաղտագողի համբուրեց նրանցից մեկի պարանոցը:

— Բրավո, Պապաչա, բրավիսիմո,—գոչեց յերդչուհին, վորի արթուն աչքից վոչինչ չեր խուսափում:

Սեղանը քանի գնում այնքան խառնաչփոթվում եր:

Գրիշան բարկացած, յերկու անգամ չամպանիայի բաժակը դատարկեց յերաժիշտների վրա: Նա կատաղած եր, վոր յերդչուհին զբաղվում է Միքայելով ավելի, քան իրենով: Մոսիկոն խորային յերդչուհիների հետ կոպիտ կատակներ եր անում, յերբեմն ուրախ տրամադրված ձիու պես խրխինջալով կծոտում եր նրանց ուսերը, չարժելով հնարյուն Պապաչայի նախանձը: Մելքոնը չուտ-չուտ համբուրվում եր նրա ու նրա հետ, ինչպես դավառական արբչիկ թղթակից: Ֆյոդիմա բեզը հաճախ մոռանում եր և համբուրում յերդչուհու «յեթերային ձեռիկը», տակավին չհամարձակվելով ավելի վեր բարձրանալ: Իշխան Նիասամիձեն քաչքայված տենորին տարավ դուրս և գլխին մի դույլ սառը ջուր թափեց, ասելով, թե Թիֆլիսի կինոտներն այդպես են սառը ջուր թափել, ասելով, թե Թիֆլիսի կինոտներն այդպես են ա-

նում: Լեզվի հյուրը, վոր մի հաստատարանոց չիկահեր յերիտասարդ եր, զբաղված եր մտքում խորային յերգչուհիներին իրարու հետ համեմատելով, վորն ե ավելի լավ և վո՛րը... Հաշտարար դատավորի պաշտոնակատարը վերջին ճառն արտասանելիս, այնքան վոգևորվեց, վոր բաժակը զարկեց չքին և փշրեց:

Սմբատը մտածում եր, վոր այլևս ուշ ե, պետք ե, վերջապես, հեռանալ այս այլանդակ միջավայրից: Բայց անհասկանալի մի ույժ տակավին ստիպում եր նրան մնալ: Այստեղ նա հաճույք չեր զգում, բայց և չեր էլ ձանձրանում: Բոլորը, ինչ-վոր կատարվում եր, դեմ եր նրա բարոյական սկզբունքներին, նրա ճաշակին, բայց և այնպես ուներ մի դիվային զորություն, վոր, հրելով նրան, միևնույն ժամանակ պահում եր կաչկանդված:

Վոտքի յելավ սպան և, չամպանիայի չիչը վերցնելով, մոտեցավ յերգչուհուն: Նա բայ եր արել «կիտելի» կոճակները, մի ձեռը դրել կապտադույն անդրավարտիկի դրպանը: Նա բարձր ձայնով ուշադրություն խնդրեց: Վոչ վոք չլսեց նրան: Նա ձեռը զարկեց սեղանատեի ուսին և գոռաց.

— Լսի՛ր, բարեկամ. լսեցե՛ք պարոններ...

Ցեվ մի վայրկյան գրավելով սեղանի ուշադրությունը, ասաց.

— Պարոննե՛ր, յես Մոսկվայում տեսել եմ, ինչպես են պաշտում գեղարվեստը մեր դիժ հարուստները: Դուք չգիտեք, դուք ասլացիներ եք... Լսեցե՛ք, լսեցե՛ք. ապակյա բաժակի յերդերը կոպիտ են դեղարվեստը հարդելու համար... Հասկացա՞ք ինձ, սատանան տանե, թե՞ չե...

Ցերգչուհին չգիտեր սպան ինչ ե ուզում անել, վախեցավ, նայելով նրա հարբած աչքերին: Այդ ոֆիցերներն ամեն տեղ սկանդալներ են սարքում:

— Պարոննե՛ր, կար ժամանակ, վոր յես ել լողում եյի չամպանիայի մեջ, ավա՛ղ, հայրական հարստություն: Թույլ տվեք, սատանան տանե ձեզ, թույլ տվեք ինձ մի քիչ վերակենդանացնել իմ անցյալը...

Նա թեքվեց և բռնեց յերգչուհու մի վոտը:

— Այդ ընդունված ե ամեն տեղ, ուր գիտեն, սատանան տանե, կյանքն այրել բենգալյան հուրի նման:

Ցերգչուհին արդեն հասկացել եր նրա միտքը, ուստի ինքը հանեց իր կոշիկներից մեկը և տվեց սպային:

— Կեցցե՛ Մելպոմենը, վոր այսպիսի զմայլելի վոտիկ ունե,—գոչեց սպան և կոշիկը լեցնելով փրփրալի հեղուկով, բարձրացրեց գլխից վեր ու աղաղակեց.—Հանուն դեղարվեստի և նրա սիրուն...

— Հուռռա՛, հուռռա՛,—պոռացին ամենքը:

Ցեվ խմեցին մի-մի կոշիկ չամպանիա, բացի Սմբատ Ալիմյանից, վոր նման տեսարանների մասին լսել եր ու մինչև այդ որը չեր տեսել:

Ցերգչուհին ծիծաղից թուլացել եր, տեսնելով իր կոշիկն այդ բարձրագույն պատվին արժանացած:

— Ֆա՛հ, դա մեզ համար նորություն չե, չատ ենք արել,—ասաց Գրիչան սպային և դրպանից դուրս բերելով մի զույգ նոր մետաքսյա կոշիկներ, թեքվեց ու հագցրեց յերգչուհու վոտներին:

Վորպես խելացի ու գործնական կին, յերգչուհին զգաց, վոր բանն արդեն չափազանցության ե հասնում և ով գիտե ինչ կարող ե պատահել: Նա հանկարծ վոտքի կանգնեց, մի ձեռը սեղմեց ճակատին, մյուսը՝ կրծքին, գլուխը ցած թեքեց, դունատվեց. Միքայելը վախեցած գրկեց նրան:

— Ի՞նչ պատահեց, ի՞նչ պատահեց,—դոչեցին ամենքը:

Ցերգչուհին ուշաթափվում եր, աչքերի բիբերը ծռվել եյին դեպի վեր, շրթունքները կպել եյին ատամներին:

— Կուրծքս, կուրծքս...

Հարկավ, բոլորը շրջապատեցին նրան:

— Հաքիմ, ըը, հաքիմ, ըը բերեք,— արտասանեց Պապաչան շփոթված:

Բերեցին ոդիկոլոն, յերեսին ջուր սրսկեցին, Ֆյալիմ-բեգը վաղեց տելեֆոնով բժիշկ հրավիրելու — վոչինչ չոգնեց: Ցերգչուհին չարունակ կրկնում եր.

— Տուն տարեք ինձ, տուն եմ ուզում...

Շատերը փափագեցին նրան ուղեկցել, մանավանդ Միքայելն ու Գրիչան, սակայն նա աննկատելի ճարպկությամբ կրճնեց տենորի ուսին, մյուս ձեռով գրկելով խորային յերգչուհիներից մեկին: Ճաբաշին, նրան դուրս տարան և նստեցրին Ֆյալիմ-բեգի կառքը: Ա՛հ, չկար, նրան դուրս տարան և նստեցրին Ֆյալիմ-բեգի կառքը: Ա՛հ, պարոններ, ներեցեք, նա ձեղնից չատ ու չատ չնորհակալ ե. ցավում ե, վոր ներվերը չդիմացան, հիվանդացավ, ո՛ո, յերբեք չի մոռանալ ձեր տված հարգանքն ու պատիվը: Նա ամենքիդ սիրում ե ջերմ սիրով և հույսով ե, վոր չեք մոռանալ նրա բենեֆիսը...

— Գլուխս, ոոո՛, սիրտս, քչի՛ր կառապան, քչի՛ր, չուտով սենյակս հասցրու ինձ, հրաշալի քեռի և դու աննման ընկերուհի...

Ցերը կառքն անհետացավ դիշերային մթության մեջ, յերգչուհին հանկարծ այլայլվեց, ձեռը զարկեց տենորի ուսին և բարձրաձայն ծիծաղելով դոչեց.

— Տեսա՛ր... դեհ ասա, յե՞ս կարող եմ ավելի լավ կատարել դրամատիկ դերեր, թե՞ դու... ապուշներ, հավատացին...

— Հրաշալի յեր, իմ դիցուհի, զմայլելի... Այդ հարյուրանոցնե-

րից մեկը տուր ինձ, վաղը հյուրանոցին պիտի վճարեմ՝ սենյակիս վարձը...

Ցերգչուհին տվեց նրան թղթադրամը, ասելով.

— Ցերեկ, վաղն այն կողքիս նստած եֆիոպներից մեկը կգա ինձ այցելության, մի քիչ լաց կլինեմ, հետո...

Հյուրերը գլխիկոր վերադարձան սեղանատուն: Միքայելը տխրեց: Նա նմանվում էր մի մանկան, որը հավիտ-հավ բռնել էր թռչնիկը, որը խնդուքն թռավ, անհետացավ, հետը տանելով վոսկե ողակը:

Քեֆը խափանվեց, այլևս չարժեր նստել:

— Իսկ յե՛ս, յե՛ս. ինձ ո՞վ կուղեկցի իմ համարը,—դարձավ ամենքին յերկրորդ խորային յերգչուհին, մի սևաչյա, սևահեր հրեուհի, քրքրված ու մաշված:

— Պապաշան, Պապաշան,—դոռացին այս ու այն կողմից:

— Անկարելի յե, վոչ մի քայլ,—ընդդիմացավ Ֆյաղիմ-բեգը,— վոչ վոքի թույլ չեմ տալ հեռանալու, իսկական քեֆը նոր է սկսվում:

— Պարոննե՛ր,—ասաց Գրիչան,—այժմ յես հրաժարվում եմ թամադայությունից:

— Կեցցե՛ հանրապետությունը,—գոռացին վոմանք:

— Լռե՛լ,—դոռաց սպան:

Նորեն տրաքեցին չամպանիայի չները, նորեն սաղանդարները նվագեցին, և քեֆը փոխվեց մի որգիայի, որը Սմբատը յերազել անգամ չեր կարող:

Պապաշան ռեդինկոտը հանեց, չալրաեց սաղանդարների գլխին և սկսեց «գարաբաղի» պարել: Նրա որինակին հետևեցին Մոսիկոն և Մելքոնը: Իշխան Նիասամիձեն պահանջեց «լեկուրի» և չերքեզկի վիչերը յետ ծալելով, մեջ ընկավ իր լայնածավալ մերուքով: Տիրեց անասելի աղմուկ, իրարանցում, ուր վոչինչ չեր կարելի հասկանալ: յուրաքանչյուրն իր ձայնն եր միայն լսում:

Ֆյաղիմ-բեգը կատաղությունից բղերն եր կրծոտում: Այդ «չան աղջիկը» սուտ ասաց, վոչ մի տեղը չեր ցավում, դա մի փորձ եր ա՛ մենքից ազատվելու և վոչ վոքի չպատկանելու այդ դիչերը: Վաղը պետք է նրանից բացատրություն պահանջել: Յեթե հաստատվի, որ յերգչուհին կեղծ է հիվանդացել, պիտի պատժել: Իսկ պատժելու ձևը, ո՛ո, Ֆյաղիմ-բեգը գիտե չատ լավ: Նա բենեֆիսի առաջին կարգի բոլոր տոմսակները կգնե, կբաժանե Թռվից վախած սրիկաներին: Հենց որ յերգչուհին կերևա բեմի վրա, սրիկաները կսկսեն չվացնել, վոռնալ և ձգել նրա վրա փտած վարունգներ, խնձորներ, տանձեր, փորթուգալի կճեպներ, հոտած ձկնիկները, սատկած մկներ և այլն, և այլն: Թող այն ժամանակ դա, որ կովկասցիների հետ կատակ անելը

չատ էլ դյուրին բան չե: Իսկ առայժմ պետք է հյուրերին մի առանձին զվարճություն տալ...

Նախ նա ստիպեց խորային յերգչուհուն վաղել Պապաչայի հետևից, թռչել ու նստել նրա ուսերի վրա: Կատակն հաջողվեց, բոլորը ծիծաղից փորները բռնեցին: Հետո նա սպասավորներին հրամայեց.

— Ադա՛, բերեք այստեղ մի լողարան:

— Ո՛ո, ո՛ո,—բացականչեցին ամենքը միաձայն, զուչակելով քանի հյուրությունը:

Պրիմադոննայի հեռանալը բոլորին սթափեցրել եր և այժմ, վոր գրեթե լուսաբաց եր, յուրաքանչյուրն ղգում եր իր արածը: Միայն Սմբատն եր մթության մեջ, վոչ ըմպելիքների ազդեցությունից, այլ միջավայրի անծանոթությունից: Նա տեսնում եր, բայց պարզ չգիտեր, ինչ է կատարվում իր չուրջը, նայում եր մերթ մեկի, մերթ մյուսի յերեսին: Յեվ բոլոր դեմքերն արտահայտում էին ինչ-վոր արատաքո կարգի բան և, կանխավ, արդեն նրանց հոգնած արյունը նորեն հուզվում եր, նորեն բորբոքվում: Դիտեին, վոր յերբ Ֆյաղիմ-բեգը վոգևորվում է, այլևս նրա ֆանտազիան սահման չունի:

Պապաշան բեղերը սրում եր ու յերիտասարդանում: Այդ հիսուն ու հինդ տարեկան առողջ գյուղականի արյունը հին դինու ույժ ուներ, չեր փրփրում, այլ բոցավառվում եր:

Դռների մեջ լսվեց դղրդոց: Լեզգի սպասավորները տնքալով ու հեվալով, ներս էին մղում մի մեծ մարմարյա լողարան: Հետո բերեցին մի քանի դյուժին չչեր չամպանիա. սաղանդարների ճարպոտ դեմքերը փայլեցին հաճույքից: Ամենից չատ նրանք էին ճանաչում Ֆյաղիմ-բեգի քմահաճույքները:

Լողարանը մղեցին սենյակի կենտրոնը:

— Ֆյաթուլի՛,—դարձավ Ֆյաղիմ-բեգը սաղանդարներին, մտավ լողարանի մեջ, դաչույնը մերկացրեց և սկսեց պարել:

Նա պտտում եր, թեքվում, բարձրանում, թռչում վեր, դաչույնի ծայրը դնում եր աչքի տակ, անց եր կացնում ծնկների տակով այնպես ճարպիկ ու արագ, վոր բոլորը հիացել էին: Ցառորդ ժամ պարելուց հետո, նա դուրս ցատկեց լողարանից, դաչույնը դրեց պատյանի մեջ, մոտեցավ խորային յերգչուհուն և իր հուժկու գրկի մեջ առավ նրան:

Արդեն լույսն սկսել եր բացվել, բայց լամպարները դեռ վառ էին: Պապաշան իջեցրեց լուսամուտների վարագույրները և սպասավորներին հրամայեց հեռանալ: Նրա առաքինության ու պարկեշտության ղգացումը վիրավորվում եր այդ ծառաների ներկայությունից:

Այժմ միայն Սմբատը հասկացավ, թե ինչ տեսարանի վկա պիտի լինի: Կամեցավ թողնել ու հեռանալ: Բայց անծանոթ ույժն անհաղթելի զորությամբ գարձյալ կաչկանդեց նրա կամքը:

— Կարաո՛ւլ, ողնեցե՛ք, կարաո՛ւլ,—դոռում եր խորային յերդիչուհին:

Բայց Ֆյաղիմ-բեգը խելքը կորցրել եր: Վոմանք խնդրեցին նրան՝ թողնել իր մտադրությունը, թեև ներքուստ բոլորն էլ վախեցած էին ճաշակել տեսարանի արյունահույզ հաճույքը:

— Ֆրխատնյանե՛ր, ազատեցե՛ք ինձ,—դոռում եր հրեուհին իր քայքայված, անախորժ ձայնով:

Սպան, հեռվում կանգնած, բեղերը վոլորում եր. այ, դա քեֆ է, Մոսկվայումն էլ այդ անում են:

Դժվար եր Ֆյաղիմ-բեգից խլել յերդիչուհուն: Նա արդեն մերկացնում եր խեղճին, հրամայելով սպասավորներին չամպային չչերը դատարկել լողարանի մեջ:

Հարգանքը դեպի կնոջ ամոթխածությունը և սպառնալի տեսքրանի այլանդակությունն ստիպեցին Սմբատին միջամտել: Նա խնդրեց Գրիչային թույլ չտալ յերդիչուհուն լողարանի մեջ ձգելու: Ցերկու տարի առաջ, Գրիչան ինքն եր տվել առաջին որինակը: Այն ժամանակ նա անառականոցում զարեջրի մեջ լողացրեց մի պոռնիկ, վոր հետո հիվանդացավ և քիչ եր մնում մեռներ Թոքերի բորբոքումից:

— Դու չե՞ս ուզում տեսնել,—հարցրեց նա Սմբատին:

— Վո՛չ, այդ վայրենություն է, տգեղ, անճոռնի:

— Բայց Ֆյաղիմ-բեգը քեզ համար է անում այդ:

— Ցես չեմ ուզում, յես ղղվում եմ,—դոչեց Սմբատը, դրդռվելով:—Ցեթե վախենում ես Ֆյաղիմից, հույսդ դիր իմ ողնության վրա:

Գրիչայի անձնասիրությունը խոցոտվեց. ի՛նչ, նա վախենա վորևե մեկից: Բայց այդ կինը խեղճ չէ, նա ինքն ուրախ է լողալ չամպանիայի մեջ, միայն կոտրատվում է՝ իրեն թանգ վաճառելու համար:

— Մի՛ թույլ տուր, խնդրում եմ,—պնդեց Սմբատը:

— Լա՛վ:

Գրիչան մոտեցավ Ֆյաղիմ-բեգին, ձեռը դրեց նրա ուսի վրա և ասաց թուրքերեն.

— Ֆյաղիմ, թո՛ղ այդ կնոջը, բավական է:

— Դու ո՞վ ես,—արտասանեց կրքամոլը, վորի կրակոտ աչքերը պսպղում եյին:

— Ցես Գրիչան եմ:

— Գնա՛, կորիր...

— Խնդրում եմ:

— Թո՛ղ ինձ...

Այժմ այլևս բոլորի ուշադրությունը Գրիչայի վրա յեր: Մի ակ մարդն եր, վորից Ֆյաղիմ-բեգը քիչ թե շատ վախենում եր, և նկատելի յեր, վոր Գրիչան արդեն կորցնում է իր սառնասրտությունը:

— Ցես խնդրում եմ քեզ, Սղիլբեկով,—դարձյալ նա փորձեց նամոզել Թուրքին:

— Ադա՛, կապի՛ր ռեխդ,—դոռաց Ֆյաղիմ-բեգը,—ուզում եմ տանել, պիտի անեմ:

Գրիչան ուժեղ ձեռով հրեց նրան և, կանգնելով նրա ու յերդիչուհու մեջտեղը, կատաղի աչքերը հառեց Թուրքի յերեսին և տամների միջից արձակեց.

— Դու մոռացա՞ր, վոր յես Գրիչան եմ:

Ցեվ ձեռը տանելով ծոցի դրպանը, դուրս բերեց մի վոքրիկ ռեվոլվեր:

Ֆյաղիմ-բեգը սթափվեց վոչ յերկյուղից, այլ ամոթից. մի քանի տանտիրոջը վայել և կռվել հյուրերի հետ՝ մի ինչ-վոր քածի պատճառով:

— Լա՛վ, յես կատակ եյի անում,—ասաց նա և դառնալով սպասավորներին, հրամայեց.—կորցրե՛ք լողարանն այստեղից:

Կինը, ազատվելով Ֆյաղիմ-բեգի յերկաթե բազուկներից, կիսամերկ, հոգնած, չնչասպառ ընկղմվեց թախտի վրա:

Տեսարանը խափանվեց, բայց վոչ վոք չհամարձակվեց դժկամություն հայտնել:

Ֆյաղիմ-բեգը յերկյուղուն Թույլ տվեց գնալ, սեղմելով նրա ձեռի մեջ յերկու հատ հարյուրանոց և հրամայելով ծառաներին կես դյուժին չամպանիա դնել նրա կառքի մեջ:

— Տանն ինքդ վաննա կընդունես,—ասաց նա:

Ցերկյուղուհին ծլծաղեց, մոռանալով ամեն ինչ: Նա մինչև անգամ համբուրեց Ֆյաղիմ-բեգին և դուրս թռավ, յերդելով ու պարելով:

— Միքայե՛լ, կչտացա՞ր, թե՞ չե,—ղիմեց Սմբատը յեղբորը:

— Ֆինալը դեռ մնում է:

Որը բոլորովին լուսացել եր, թեև արեգակը դեռ չեր յերևում:

Հյուրերը սպասանդարների հետ դուրս յեկան փողոց:

Այժմ նրանց պարապմունքը Մոսկվան եր: Զարմանալի յեր այդ մարդու բնույթը. վորքան մյուսները խմելով՝ հարբում եյին, թուլանում եյին, այնքան նա, ընդհակառակը, արթնանում եր ու թարմանում: Այժմ նա անճանաչելի յեր. խոսում եր ամենից ավելի, յերդում եր, դոռում, թռչկոտում:

Ցեղանակը հանդարտ եր և վոչ ցուրտ: Ծովի հայելանման մակերեսն անդրադարձնում եր յերկնքի մուգ կապտագույն կամարը: Դեպի ձախ վայրկենում եյին «Սև» ու «Սպիտակ» կոչված քաղաքիկների

գյուրավոր էլեկտրական լամպարները, ինչպես խոշոր ադամանդները, հետզհետե ադոտանալով բնության լույսից: Հարյուրավոր գործարանների ծուխն ուղիղ դծով բարձրանալով յերկինակամարը — յերկինքը, սքողել եր սև շղարշով: Դեպի աջ յերևում եր Բախլով կոչված թերակղզին՝ իր ծովային զորանոցներով և դղորմիկ յեկեղեցիով, վորի սոխաձև գմբեթները յերկինակամարի վրա նկարվել եյին վորպես միջային աշտարակներ, վորոնք, կարծես, լուռ խորհրդակցության մեջ եյին արարչի հետ: Ամենեղ ավելի հեռու, լեռան հետևից ցցվել եյին նավթային բուրդերի սուր դաստիները:

Փողոցներով արդեն անցնում եյին մշակներն ու արհեստավորները, չտապելով գործի — վորը տխուր ու դլխակոր, վորը զվարթ՝ յերգելով: Լսվում եյին գործարանների չոգեշունչ չվիների սուլոցները, խուլ՝ վորպես առյուծի բառանչյուն, սուր՝ վորպես ոճի ֆչոց: Ցեվ չոգին, դուրս գալով ծորակներից, քանի մի վայրկյան փայլփլում եր ոդի մեջ ալերաստրի գունով ու չքանում: Հեռու հորիզոնում այրվում եր ինչ–վոր գործարան և կատաղի բոցերը ճեղքում եյին սև ծխերի թանձրությունը:

Ահա, վերջապես, Ա.Փչերոնյան թերակղզու հետևից բարձրանում և բոսորագույն արեգը, վորպես հալած բոնդի մի հսկայական դավաթ, հանդարտ, հպարտ, ինքնավստահ՝ վորպես տիեզերքի գերիչխան և լողալով ինքն իր մեջ՝ վորպես հրեղեն ծով: Բարձրադույն ամպերի դեղերը վառվում են արեթի պես և լուսավորվում, լուսավորելով յերկինակամարը: Բյուրավոր ճառագայթները դմայլելի բոցեղեն ծովից տարածվում են հեռու ու հեռու, վանելով դիշերային մթության մնացորդը: Վոսկեզոծվում են նավերի կայմերն ու առագաստները, տների ճակատները, ապակյա լուսամուտները, չրջակայքի լերկ և ավազոտ լեռները, դերեզմանները, յեղեմներն ու խաչերը և այն քարաչեն հսկայական աշտարակը, վորի վրա դրոշմված է մի առասպելական հերոսուհու կյանքի վոդբերդը:

Առաղերը հետզհետե կորցնում են իրենց փայլը, էլեկտրական լույսերը հանդչում, ձայներն ու դղրդյունները սաստկանում: Նավերն ու չոգենավերը, վոր իրենց խարիսխների վրա հանգստանում են ամարային յերթևեկությունից հետո, մեղմիկ որորվում են ծովի յերեսին՝ վորպես վիթխարի կարապներ: Պատանի ձկնորսները պատրաստում են ուռկաններն ու կարթերը, վոր իրենց որվա պարենը հայթայթեն: Նավաստիները լվանում եյին նավերի տախտակամածները, յերգելով այն առողջ, առնական ձայներով, վորոնց մեջ զգացվում և անապական ջրերի տարերային զորությունը: Անթիվ հակերով ու տարաններով ծանրաբեռնված փայտյա յերկար կայարանների վրա աշխատում են հաղարավոր բանվորներ՝ նավերը դատարկելով, նավերը

յղներով՝ միշտ մեջքից թեքված, միշտ նայելով դեպի յերկիր վորպես անրան դրատոներ, վորոնց բնությունը ձեռներ չի տվել:

Ա.Ջ կողմից լսվում են փոքրիկ բոժոժների մետաղային մեղմ ու ներդաշնակ հնչյուններ, վոր հիշեցնում են ինչ–վոր յերկնային նվագածություն: Ուղտերի մի յերկար չարք բարձրանում է քաղաքից դեպի ավազոտ լեռները՝ մի նեղ չավղով, վոր տանում է հեռո՛ւ, հեռո՛ւ, յերկրի խորքերը, ուր տակավին չոգին մուտք չի դործել: Նայելով բիբլիական կենդանիների կարավաններին, մարդ կարծում է, թե գտնվում է հնադարյան անապական աշխարհում: Նայելով դեպի ձախ, անթիվ չոգենավերին, գործարաններին, էլեկտրական լույսերին՝ ժամանակակից քաղաքակրթությունն է աղաղակում — չոգու և յերկաթի պոռոզ թագավորությունը: Մի կողմ Ասիա, մյուս կողմ՝ Ցեվրոպա— հակադրությունների մի կատարյալ քաոս, ուր նորը կատաղի կռիվ է մղում հնի դեմ:

Սմբատը դիտում է աննման տեսարանն ու հրճվում: Բայց նրա հրճվանքի մեջ կա զորավոր թույնի մի կաթիլ, վոր փոթորկում է նրա հոգին և, սիրտն սկսում է աղի արցունք թափել: Բնության թովիչ արթնումը հիշեցնում է նրան իր կյանքի վաղաժամ ներկը: Մոռանում է չուտով բոլորը՝ և՛ Միքայելին՝ իր խմբով, և՛ հայրական գործերը, և՛ կեղծ ու վոչ կեղծ կատակները, և՛ յեղբոր որ–որի վրա սաստկացող սպառնալիքները: Ամեն ինչ և ամենքին, բացի զավակներից: Ա՛հ, մի՞թե բյուր անգամ նա յերջանիկ չեր լինի, ապրելով կիսամերկ, կիսանոթ, լիներ աղատ, չունենար ամուսնական ձախորդ վիճակը, ինքն իր մոլորությամբ չխորտակեր իր կյանքը... ութ տարի առաջ...

Նա նստեց ծովափի մի նստարանի վրա հոգնած ու ուժասպառ՝ վոչ դիշերվա անքնությունից կամ վոգելից ըմպելիքներից, այլ հոգեկան տառապանքներից: Ամենուրեք, ուր նայում եր, տեսնում եր յերկու անմեղների դառը կշտամբանքով և կսկծալի աղերսով դեմքերը, այդ յերկու զույդ աչքերը, վորոնց չողերը մի–մի ասեղներ եյին նրա սրտի մեջ: Վո՛չ, վո՛չ, նա յերբեք նրանց չի ձգիլ ճակատագրի հաճույքին, յերբեք չի անջատվիլ նրանցից՝ վո՛չ հանուն հայրական անեծքի, վո՛չ հանուն կրոնի, վո՛չ մայրական աղերսների և վո՛չ հասարակական նախապաշարումների ու արհամարհանքի:

Աղավնիներն ու ճնճղուկները թռչկոտում են այս ու այն կողմ՝ իրենց համար կեր վորոնելով: Ա՛հ, նույնիսկ թռչուններն աշխատանքի մեջ են և միայն մի խումբ մարդիկ, թմրած, դանդաղաքայլ անցնում են ծովափով, ըստ յերևույթին անհույթ ու անհոգ, բայց իրոք կյանքից հոգնած ու ձանձրացած յերիտասարդ հասակում: Նրանց համար որը նոր է վերջանում, դիշերը նոր սկսվում, դեխությամբ, հարբեցողությամբ լի որը, հիվանդոտ, անքնական դիշերը: Աջևից թառ ա–

ծելով ու յերգելով գնում են ասիական յերաժիշտները, հետևից գալիս եյին մի քանի դատարկ կառքեր, հուսալով տանել «աղաներին» Ս-րենց տները և տանել առատ վարձ: Այ ու ձախ գնացող գործավորները նայում են խմբին անտարբեր: Հարստահարվածի ու ընկճվածի անզոր կատաղության հետ՝ նրանց դունատ ու վախտ դեմքերն արտահայտում են և՛ մի տեսակ արհամարհանք, աղնիվ աչխատանքի արհամարհանքը դեպի ձրիակերության: Վոչ վոք կանգ չի առնում չվայտության պատկերով զվարճանալու, վասն զի գործարանների սուլիչները հրամայողաբար գործի յեն կանչում նրանց, և նրանք չունին իրավունք մի վայրկյան անգամ ուշանալու:

Հանկարծ յերեք մշակ, խումբը ճեղքելով, վազում են առաջ: Բարձրանում է միահամուռ ծիծաղ: Վոմանք ծափահարում են, վոմանք քարեր արձակում մշակների հետևից: Ասիական յերաժիշտները նվագում են ինչ վոր յեվրոպական քայլերգ: Մշակների ուսերի վրա նստած են Գրիշան, Մոսիկոն և Միքայելը: Գդակները վեր բարձրացրած ու գոռգոռալով, նրանք վոտներով անընդհատ հարվածում են բանվոր գրաստների փորերն ու կողերը: Ինչո՞ւ չե. նրանք մի ռուբլի յեն տվել մարդկային եյակներին, վոր կատարեն անասնի պաշտոն, իսկ մի ռուբլին մշակի յերկու որվա վարձն է: Ցեխ մշակներն ուրախ են, ծիծաղում են ու քրքջում. աղաները են, Թող քեֆ անեն, աղային ամեն ինչ ներելի յե:

Սմբատը լուռ նայում է ծովի հեռավոր հորիզոնին, ուր առավոտյան նոսր, մանիշակագույն մշուշի մեջ նշմարվում է մի վոքրիկ կղզի: Վաղը, մյուս որն այդ կղզու հետևից կելնեա չոգենավը, վոր բերելու յե նրա զավակներին ու կնոջը, այլ խոսքով՝ նրա ուրախությունն ու վիշտը:

Մի վայրկյան յերեսը ծովից դարձնելով, նա նկատեց պատանիների մի խումբ, վոր յերգելով ու աղաղակելով մոտենում եր ծովային լողարաններից մեկին: Մեկը բաժանվեց խմբից և սկսեց չոտպով հեռանալ: Արշակն եր — Սմբատի կրտսեր յեղբայրը, ռեալական դպրոցի աշակերտը ծպտյալ հագուստով: Սմբատը հետևեց պատանուն և բռնեց փողոցի մեջտեղում:

— Դու որվա այս միջոցին ի՞նչ գործ ունես դրսում:

— Իսկ դո՞ւ ինչ գործ ունես,—հանդգնեց պատանին, թևն ազատելով յեղբոր ձեռից:

— Հա՛, ուրեմն դո՞ւ ել ես սկսել:

— Ինչպես և դու: Տարբերությունը մեր մեջ այն է, վոր յես ժամանակին եմ սկսել, իսկ դու ուշացել ես:

Պատանու հանդուգն պատասխանը, կատաղեցնելով հանդերձ, չկոտրեց Սմբատին:

— Կորի՛ր տուն,—գոռաց նա:

— Ֆո բանը չե: Չկարծես թե քեզանից եյի վախենում, դու ո՞վ ես, դու ի՞նչ իրավունք ունես ինձ վրա: Իմ մեծը Միքայելն է... յես նրանից եյի վախենում:

Սմբատի ձեռները թուլացան, բայց Թողեցին պատանուն: Ահա ի՞նչ. ասել է Մարուքխանյանն այդ տղային ել է չեղել ճանապարհից և լարել իմ դեմ...

Արշակը վազեց, միացավ ընկերներին և անցավ լողարան: Ամբողջ գիշեր գվարճացել եր, հարբել, արթնացել և այժմ գնում եր ծովային ջրերի մեջ թարմանալու:

Միքայելի խումբը վճռեց գրոսնել ծովի վրա՝ նույնպես թարմանալու համար: Վարձեցին ներկած յերկու դույնզգույն մակույկներ և նստեցին սպազնդարների հետ: Հակառակ խմբի թախանձանքներին, Սմբատը մնաց ծովափում՝ մի կապարային ծանրություն սրտի վրա: Արդյոք, բարվոք չե՞ր լինի, յեթե նա ևս իր պատանեկությունն ու յերիտասարդությունը վարեր այնպես, ինչպես այդ մարդիկ: Այն ժամանակ Թերևս չդործեր անուղղելի սխալը: Նրանք չունեն բարոյական սկզբունքներ, բայց միշտ կարող են չափել իրենց. մոլորված են, բայց ժամանակ ու միջոց ունեն ճանապարհի գալու: Մինչ ի՞նչը... Ա՛հ, յերանի մնար ծնողների Թևերի տակ Թերուս, նույնիսկ տգետ, քան որ յերկրում հանդիպեր այն եյակին, վորին իբրև Թե սիրեց և վորին այժմ ատում է, վորից իբրև Թե սիրված եր, և վորն այժմ ատում է նրան իր հոգու ամբողջ զորությամբ:

«Այո՛, ամբողջ զորությամբ»,—կրկնեց նա մտքում,—այս իր խոսքերն են, վոր կրկնում է ամեն որ:

Չհեռագրե՞լ արդյոք, վոր այդ կինը մնա իր ծննդավայրում... Սակայն գավակները, այդ մի ղուդ անմեղ ու զմայլելի դեմքե՞րը...

VIII

Ցերեկը Ալիմյանների տունն այնքան անկոչ հյուրեր չեր ընդունել, վորչափ Մարկոս աղայի մահվան քառասունքից հետո:

Ամենից առաջ յեկավ Թեմական առաջնորդը և զարմալ խոսեց յեկեղեցու կարիքների մասին: Հարկավոր է Թեմի մի դյուղում յեկեղեցի կառուցանել, յեթե վոչ — դյուղական համայնքը կորած է: Լյութերականները մտել են և Քրիստոսի փարախից մեկիկ-մեկիկ դուրս են անմեղ դառնուկներին:

Այրի Վոսկեհատը սրբազանին ներկայացրեց մի բավական կլորիկ դումար: Ցերեկ որ անցած մի լրագրում նորին սրբազնության ստորագրությամբ տպվեց չնչին հակալական նամակ «հորինակ այլոց հայածանքից»:

Ներկայացան առանձին-առանձին Տեր-Աչոտը և Տեր-Սիմոնը:

Մեկը Ֆերաջեյի թևից հանեց մի ատրագրաթերթ և դրեց Սմբատի առջև: Պետք է մի բան նվիրել այսինչ «հայտնի դործիչի և հրապարակախոսի անմահ յերկերը հրատարակելու դործին». մի դործիչ, վոր յեթե աշխարհ յեկած չլիներ, հայ ազգը կորած եր: Մյուսը տխուր դույներով նկարագրեց մի խմբագրի նյութական վիճակը. մի խմբագիր, վոր յեթե ծնված չլիներ, յեկեղեցին հիմնահատակ կլիներ:

Սմբատը յերկուսին էլ մի բան տվեց՝ գլուխն աղատելու համար: Միքանի որ հետո այս մասին էլ լրագրերում լուրեր տպվեցին: Մի լրագրում գովված եր Տեր-Աչոտը և խայտառակված Տեր-Սիմոնը, իրեև «խավարամիտ», մյուս լրագրում գովված եր Տեր-Սիմոնը և խայտառակված Տեր-Աչոտը, իրեև «ծակ աղատամիտ»:

Ներկայացավ մի յերիտասարդ և հայտնեց, թե յերջեցողության պրոֆեսորներն ասել են, վոր նա անդուդական տենոր ե. պետք է գնա Իտալիա, փող չունի: Ներկայացավ մի ուրիշը և, ցույց տալով մի խծբծանք, ասաց, թե բոլորը նրան խորհուրդ են տալիս գնալ մայրաքաղաք՝ նկարչական ձիրքը մշակելու: Ցեկան և գալիս եյին տիրացուներ, գաղթական քահանաներ, աղքատ աշակերտներ, և բոլորը նույնատ եյին լանդրում: Հասավ այն տեղը, վոր Սմբատը հրամայեց օպասավորին՝ այլևս վոչ վոքի չընդունել տանը: Այն ժամանակ արշավանքն ուղղվեց դեպի գրասենյակ: Զարդարյանը բարկացած ամենին վռնդում եր: Այնուհետև մուրացկաններն սկսեցին հալածել Սմբատին փողոցում, կլուբում, խանութներ մտնելիս և ամեն տեղ, ուր յերևում եր:

Հերթը հասավ թղթակից Մարզպետունուն: Հաղիվ, յերկար հեռևումներից հետո, հարմար րոպե գտավ և Ալիմյանին մենակ բռնեց գրասենյակում: Նրա բախտից հաշվապահ Զարդարյանն էլ այնտեղ չեր, գնացել եր բանկից փող բերելու:

Մարզպետունին սկսեց հեռվից: Մի ժամանակ հայերը կարծում եյին, թե ազգը պահպանվում ե կրոնով: Ցեվրոպական քաղաքակրթության «համաստիւռ ճառագայթները տարածվեցին և մեր վրա»: Այժմ ազգին հարկավոր են, իհարկե, վոչ միայն ավետարան ու չարականը, այլև դիտություն, արվեստ, մանավանդ գրականություն:

Խոսելով այս ուղղությամբ, Մարզպետունին կամացուկ չոչափեց խնդրի նուրբ կողմը: Հայտնվեց, վոր մի գիրք ե չարադրել և վոչ չունի հրատարակելու: Ցեթե մի լուսամիտ մեկենաս դուրս գար, էի ասում նվեր — վո՛չ, վո՛չ, Մարզպետունին նվեր վերցնողներից չե — այլ պարտք տար, յուր «համեստ յերկը» կձգեր մայրենի աղքատիկ գրականության դանձարանը: «Գատահարար» ձեռագիրն էլ մոտն եր, հանեց, սեղանի վրա դրեց: Վերնագիրն եր «Մահացյալ անմահները»: Խոսքը հինգերորդ դարի «փայլուն աստղերի» մասին ե: Ցեթե հեղինակն աջողություն դտնի, պիտի անցնի մեր ժամանակներին, վորովհետև «այժմ էլ կան անմահներ»:

Հակառակի պես հենց այս չահագրգիռ րոպեին ներս մտավ Զարդարյանը և մի կապոց թղթադրամ դրեց Սմբատի առջև: Մարզպետունին դիտեր, վոր հաշվապահն իրեն չի սիրում: Նայեց փողերին ու փողկապն ուղղեց:

— Այդ ի՞նչ ե, պարոն թղթակից, գի՞րք եք լույս ընծայում,— ասաց Զարդարյանը հեգնաբար:

Հեղինակն չտապեց ձեռագիրն իր կողմը քաշել:

— Բարեկամ, խնայեցեք թուղթն ու թանաքը. բարեկամ, դուք դրող չեք, այլ մրող... Գործով զբաղվեցեք...

— Այդ ձեր խնդքի բանը չի:

Սմբատը տվեց հեղինակին հիսուն ռուբլի: Հեղինակը դրամը դրեց «Մահացյալ անմահների» մեջ, գլուխ տալով և, մի սպառնական թուռնալի հայացք ձգելով Զարդարյանի վրա, դուրս գնաց:

— Ինչո՞ւ տվեցիք,—ասաց հաշվապահը:

— Մարդ ե, տերը նրա հետ, դուցե կարոտության մեջ ե...

Զարդարյանը դառն հեգնությամբ ժպտաց: կարոտություն, ա՛խ, պարոն Ալիմյան, դուք դեռ յերիտասարդ եք, դուք դեռ չեք հասկանում, ինչ ասել ե իսկական կարոտություն, այո՛, ներեցեք, չեք հասկանում: Իսկական կարոտությունը դռնե-դուռ չի ընկնում, ձայն չի հանում, չի գոռում ու լալիս ուրիշների մոտ, այլ միայն ղգում ե, միայն տառապում:

Նրա ձայնը դողում եր, աչքերի մեջ յերևում եր անսովոր փայլ. յոթ տարի յեր նա ծառայում եր այս գրասենյակում, և վոչ վոք չգիտեր, վոր աղքատը, բուն աղքատը հենց այդ մարդն ե: Ամսական քառասուն ռուբլով պահում եր վեց հոգուց բաղկացած մի ընտանիք — անդամալույծ յեղբորը, նրա կնոջն ու աղջկանը և այրի քրոջը՝ յերկու պավակների հետ: Ցեվ յերբեք վոչ վոք այդ մարդուց չեր լսել դառնություն իր վիճակի դեմ: Դա այն լռիկ ու համեստ հերոսներից եր, վորոնք ուրիշների համար ուտում ու մաշում են իրենց սիրտը և հետո մի որ չգանում աշխարհի յերեսից, առանց վորևե հետք թողնելու, բացի դուցե յերախտագիտական ղգացումից՝ յերախտագետ բարերարի դուցե յերախտագիտական ղգացումից՝ յերախտագետ բարերարների վաճառների սրտերում: Նրանք կյանքի տառապանքները կրում են լուռ ու մունջ, խեղդում են իրենց կոկորդում դառն արցունքները, վախենալով թունավորել մերձավորներին տված մի կտոր հացը:

Սակայն չքավորության լուծը, վոր մինչև այժմ Զարդարյանը կրել եր անտրտունջ, այլևս սկսել եր դառնալ նրա համար անտանելի: Ահա ինչու նա վերջին ժամանակ հուզվում եր: Վտիտ ուսերը, վորոնց վրա բարձված եր ահագին ընտանիքի հոգսը, չեյին դիմանում ծանր

բեռան և ավելի ու ավելի կորանում էին: Պետք է մի որ նյարդերը խորտակվեյին, վորպես չափից դուրս ամուր ձգված լարեր: Ա՛խ, մանկության հասակից այդ լարերի վրա հնչել եր միայն կարիքը: Այնինչ, մյուս կողմից՝ չերքեք չեր լռել անձնասիրության ձայնը, աղքատի անզոր հպարտության ձայնը, վոր սոսկալի դիսոնանս և նրա կյանքի սրտաճմլիկ վողբերգի մեջ:

Նա զսպեց իրեն, նստեց պարապելու, բայց չկարողացավ: Գրիչը ձգեց սեղանի վրա: Պարզ եր, վոր այսոր մի արտաքո կարգի վիշտ ուներ: Սմբատը դաշնակի դիտում եր նրա տարօրինակ շարժումները, զգալով, վոր նա դարձյալ մի բան ուզում է ասել և չի վստահանում:

— Պարոն Սմբատ,—խոսեց, վերջապես, Զարդարյանը, վոտքի կանգնելով,—խնդրեմ ինձ արձակիք պաշտոնից:

Սմբատը զարմացած նայեց նրա չերեսին: Յոթ տարի այդ մարդն անվրդով ծառայել է և այսոր ուզում է դուրս գալ: Անշուշտ, մի խոշոր պատճառ կա:

— Դուք ավելի լավ պաշտո՞ն եք գտել,—հարցրեց նա:

— Վո՛չ, չես դեռ պաշտոն չեմ գտել:

— Կնշանակե, հարստացել եք:

— Այո՛, պարտքերով:

— Ձես չեմ հասկանում, ինչո՞ւ եք ուրեմն ուզում թողնել ձեր պաշտոնը:

— Նրա համար, վոր չես այսուհետև այստեղ ավելորդ եմ: Լսել եմ, վոր ուզում եք հաշիվները նոր սիստեմով պահել, իսկ չես մասնագետ չեմ:

— Այո՛, մտադիր եմ նոր սիստեմով պահել հաշիվները, բայց դուք գարձյալ ինձ հարկավոր եք... Պարոն Զարդարյան, այդ չի պատճառը, չերևի, դուք վիրավորված եք մեզանից...

Զարդարյանը բռնեց իր ջղուտ, չերկայն մատներով նոսր սեւագույն մերուքը և ասաց հանկարծ.

— Այո՛, վիրավորված եմ... Ձեր չեղբայրը, պարոն Սմբատ, ինձ հալածում է, չես այլևս այստեղ մնալ չեմ կարող: Անտանելի չե, ապատեցեք ինձ. չնորհակալ եմ, վորքան պահեցիք...

Սմբատը մտատանջության մեջ ընկավ: Դուրս բերել Զարդարյանին չեր ուզում, այնինչ դիտեր, վոր Միքայելը, արդարև, հալածում է հաշվապահին այն որից, չերբ սա այլևս փող չեր տալիս նրան:

— Կկամենաք տեղափոխել հանքերը,—հարցրեց նա:

— Հանքե՞րը...

— Այո՛: Ձես ձեզ կնշանակեմ կառավարչի ոգնական ու հաշվապահ: Այնտեղ կունենաք ձրի բնակարան չորս սենյակից բաղկացած:

կարող եք տեղափոխել և ձեր անեցիներին: Դուք այժմ ստանում եք ամսական քառասուն, այնտեղ կստանաք չերկու անգամ ավելի...

Զարդարյանը չհավատաց ականջներին, նայեց զարմացած տիրոջ չերեսին: Սմբատը կրկնեց իր առաջարկությունը: Զարդարյանի չեմքը մի վայրկյան ժպտաց, և այս առաջին ուրախ ժպիտն եր, վոր տեսավ Ալիմյանը նրա մռայլ չերեսի վրա:

— Բայց չես հանքային գործերին տեղյակ չեմ,— ասաց նա անվստահ:

— Կսովորեք: Ձեզ այդ է միակ առարկությունը, կարող եք վաղը անեք տեղափոխել: Ձես իսկույն գնալու չեմ հանքերը, կհրամայեմ, վոր սենյակները մաքրեն, պատրաստեն:

Կես ժամ անցած Զարդարյանը չտատում եր առնել, ուրախալի լուրը տանեցիներին հայտնելու: Հաճելի հուզումից նրա չերկայն ծնկները ծալվում էին: Ձերքեք այնքան բախտավոր չեր չեղել. ութսուն ռուբլի, ձրի բնակարան, ավելի մաքուր ոդ անդամալույծ չեղբոր համար և, վոր ամենագլխավորն է, հեռու Միքայելից — ահա անսպասելի բախտ:

Խոսում եր ինքն իր հետ, հաչիվներ եր անում, պարտքեր վճարում, քրոջ չերեխաների համար նոր հագուստներ գնում, ճեռները չարժում ոդի մեջ, ժպտում, ծիծաղում, անցորդների ուշադրությունը գրավելով:

Հասավ մի նեղ, ցեխոտ և հոտած փողոց: Մեծ դարբասով մտավ բավական ընդարձակ մի բակ, վոր խոնավ եր, կեղտոտ, խորդուբորդերով լի: Նա այնքան չիմթված եր, վոր ներս մտնելիս ընդհարվեց մի կեղտոտ հագստով Թուրքի հետ, վոր իսկույն հետ կանգնեց, դողդողալով:

— Հա՛յ, ինձ մուռտատեցիր...

Բակում ուրախություններից բարևեց մի վոտաբոբիկ Թուրքի, վոր դանդաղ քայլերով, մի ձի առջևը գցած, քչում եր առաջ: Ձիու կրծքին կապած եր մի պարան, վորի մյուս ծայրը հասնում եր ջրհորին. չերբ ձին հեռանում եր, ջրհորից դուրս եր գալիս մի տիկ, վոր ջրի ազդեցությունից սպիտակել եր ու փուխիկել բամբակի պես: Թուրքը չարժում եր պարանը, և ջուրը տիկից թափվում եր ու հոսում մոտակա բաղնիքը: Բակում աչ ու ձախ ցրտզատորված էին բազմաթիվ պարաններ, ծանրաբեռնված բաղնիսային լաթերով, վորոնցից բարձրացող գոլորշին տարածել եր անասելի գարշահոտություն: Լաթերն աչ ու ձախ հրելով, Զարդարյանը հասավ մի նեղ ու չերկայն պատշգամբի, վոր բակին հավասար եր: Մտավ մի փոքրիկ, կիսախավար սենյակ, ուր կաղում էին չերկու վոտաբոբիկ, կիսամերկ մանուկներ: Ջանի մի

դեղնագույն աթոռներ, մի հասարակ անկերկ սեղան՝ ծածկված սպիտակ մաքուր ծակոտիկ սփռոցով, վրեն դրած կլոր յերկոտանի հայելի — ահա ամբողջ կահ-կարասին: Պատերը սպիտակ կավից էին, հատակը նույնպես կավով սվաղած, միայն դեղին խսիրներով ծածկված:

Զարդարյանն անցավ մյուս սենյակը, որ նույն տեսքն ուներ, միայն առանց աթոռների ու սեղանի: Ցերկայն թախտի մի անկյունում նստած եր նրա անդամալույծ յեղբայրը — Սարգիսը:

Դեռ վեց ու կես տարի առաջ այդ մարդն աշող վաճառական եր հյուսիսային քաղաքներից մեկում: Բախտի անիվը չուռ յեկավ, բանական հարուստ խանութը դարձավ զոհ հրդեհի, մարդը անանկացավ: Զղխմանալով խայտառակության, կաթվածահար յեղավ ու բևեռվեց անկողնին: Մինչև այդ ժամանակ նա չեր հիշել, թե Կովկասում ունի մի յեղբայր, որ պարապելով առաջ ուսուցչությամբ և այժմ մանավոր գրասենյակներում, չափավոր ռոճիկով պահել է նախ իր ծերունի ծնողներին, իսկ հետո այրևացած քրոջը՝ իր զավակների հետ: Դժբախտությունը հիշեցրեց նրան և դրդեց աղերսալի նամակով դիմել մոռացված յեղբոր ողնության: Ցեղբայրն ընդունեց նրան քրիստոնեական ներողամտությամբ և այն որից կերակրում եր անդամալույծին, կնոջն ու աղջկան:

Ցերջանիկ մարդուց այժմ մնացել եր կես կմախք, մարմնի ձախ կողմը գոսացած, դեմքը կորցրած մարդկային արտահայտությունը, յերեսն ուռած և աչքերը պլշած: Սակայն այդ կես կմախքն իր յերջանիկ անցյալից անխախտ պահպանել եր յերկու բան — առողջ սոսմոքս և մշտապես տրտնջող լեզու: Կար տանն ուտելու բան, թե չկար, քաղցած եյին յերեխաները, թե կուշտ, մխիթարություն եր անդամալույծի համար: Նա պիտի ունենար իր նախաճաշը, ճաշն ու ընթրիքը: Ուրախ եր ընտանիքը, թե տխուր, տան մեջ առաջին տեղն եր բռնում որից-որ մանկացող հիվանդի քիմքը:

Ցեվ այդ քիմքի առաջին դերին եր նրա քսաներկու տարեկան դուստրը — Շուշանիկը: Ամբողջ որն որիորդը դրեթե միայն նրանով եր զբաղված. թեկից բռնած սենյակում զբոսնեցնում եր, գիրք եր կարդում նրա համար, հետը թուղթ խաղում և ծառայում՝ վորպես աղախին: Նա դեռ սիրում եր այդ կես կմախքը, և սիրում եր զգայուն սրտի բոլոր ուժով:

Շուշանիկը կերակրում եր անդամալույծին, յերբ հորեղբայրը ներս մտավ: Դա միջին հասակից քիչ բարձր, դունատ, բայց վոչ հիվանդոտ դեմքով մի աղջիկ եր, հագնված, հարկավ, չատ հասարակ և ուսերին ձգած մի մոխրագույն ասլյա չալ, վոր ծածկում եր նրա կոնոնավոր իրանը: Նրա պարզ դույնի մտախոհ աչքերից բուրում եր հրեշտակային հեզություն և անսահման համբերություն: Մի ձեռին

կերակրի ամանը, մյուս ձեռին դդալը — այդ վայրկյանին նա հիշեցնում եր դիմության անձնվեր մի քրոջ, վոր կարծես իր սրտի վիշտն ու ուրախությունը նվիրել եր ուրիշների անդորրությանը: Բայց նա ավելի յեր, քան մի դիմության քույր. նա մի սիրող դուստր եր, վորի սիրտը բաղկացած եր Նոևքան նվագարանի լարերից:

Զարդարյանը հաղորդեց ուրախալի լուրը: Ցերկու վաղաժամ թառամած կանայք, սև հագնված, վորոնցից մեկը քույրն եր, մյուսը՝ յեղբոր կինը, ուրախության թեթև կռինչ արձակեցին: Շուշանիկի մելամաղձիկ դեմքի վրա վազեց լուսավոր ժպիտ: Ցեվ նա, ճակատը վրա թափվող չոկոլադի գույն թանձր մազերը յետ տանելով, նայեց հոր յերեսին: Անդամալույծն ուրախ չեր յեղբոր հաղորդած լուրին կամ դուցե թագցրեց ուրախությունը: Այդ պահին նա բարկացած եր, վորովհետև տաք կերակուրն ուշացրել եյին: Մի քանի րոպե առաջ հայհոյել եր կնոջը, յեղբորը, ամբողջ ընտանիքին և ամբողջ աշխարհին: Բոլորը նրան թշնամացել են և դիտմամբ քաղցած են թողնում, վոր սովից մեռնի: Լսելով յեղբոր խոսքերը, թե այսուհետև պիտի ապրեն հանգերում, նա առողջ ձեռով հրեց կերակրի ամանը և գոչեց.

— Դու ուզում ես ինձ տանել ու նավթի հորում խեղդել... Չեմ գնալ, չեմ գնալ...

Շուշանիկը հորեղբորը սիրում եր վոչ պակաս, քան հորը: Այն մարդը, վորի վրա ծանրացած և ամբողջ ընտանիքի հոգսը, փոխանակ ընորհակալության, հանդիպում է մերձավորի դժգոհության: Ցեվ այն ել յեղբոր կողմից, մի մարդու, վոր հարուստ և առողջ ժամանակ հասարակ նամակագրության անգամ չեր արժանացրել նրան: Դա յերախտամոռություն չե՞ արդյոք: Ներքին տանջանքից որիորդը սեղմեց բռունցքները, կարծես, կամենալով սրտի զառն կսկիծը խեղդել յեղունդների մեջ:

— Պապա,—ասաց նա զգացված ձայնով,—այսուհետև դու ամեն որ խորոված ձուկ կուտես, հորեղբայրս ռոճիկ չատ է ստանալու:

— Սուտ ես ասում,—գոչեց անդամալույծը, իր պլշած աչքերը դանդաղորեն հառելով աղջկա ճակատին:—Դուք ինձ այնտեղ կթաղեք, կթաղեք... Դադը կարաքեցնեք, նավթ կվառեք, ինձ մեջը կդցեք... Ցես ձեզ չե՞մ ճանաչում, ինչ է, դուք անաստվածներ եք...

Ցեվ, գլուխը դնելով բարձի վրա, սկսեց լալ յերեխայի պես... Զարդարյանը, զսպելով իրեն, անցավ մյուս սենյակը: Նա սոված եր, ուտել եր ուզում, բայց այնքան հուզված եր, վոր մի յերկու պատառ պանիր ու հաց բերանը դնելով, վերկացավ տեղից:

— Հիվա՞նդ եք, հորեղբայր,—հարցրեց Շուշանիկը,—գո՞ղ եք:

— Վո՛չ, վո՛չ, հիվանդ չեմ: Համոզիր հորդ, վոր համաձայնի հանքերը տեղափոխվել: Այնտեղ լավ կապրենք, Աստված վկա, լավ

դապրենք: Ցերեք սենյակ, վա՛չ, չորս, հասկանո՞ւմ ես, չորս, ամսականն ութսուն ռուբլի, հանո՞ք ես խմանում: Ով դիտե, գուցե կարողանանք մի աղախին էլ վարձել և քեզ ազատել անասելի կոպիտ աշխատանքից: Տե՛ս, ձեռներդ ինչպես կոշտացել են, Շուշան, չեմ ուզում, որ դու խոհանոցում աշխատես, դու, դու, ախտոս ես, դեղեցկուհի...

Շուշանիկը ծիծաղեց: Զարմանալի մարդ է նրա հորեղբայրը, չէ՞ որ նա ուրիշների համար չի աշխատում խոհանոցում, այլ իր ծնողների, իր հորեղբոր, իր հորաքրոջ համար:

— Այդ ճիշտ է, ճիշտ է,—դոչեց Զարդարյանը,—մենք մեր մերձավորների համար ենք աշխատում: Բայց ո՞վ դիտե, յերիտասարդ աղջիկ ես, ինչո՞ւ այդպես մաշվես, դեղնես... Ճչմարիտ է, յես յերբեք չեմ դանգատվել, բայց հայրդ քեզ չի սիրում, Շուշանիկ, չի խնայում: Նա յերախտագետ մարդ չէ...

— Հիվանդ է, ներողամի՛տ յեղիր...

— Հիմա՛ր,—արտասանեց Զարդարյանն արդեն մեղմացած,— մի՞թե յես բարկանում եմ նրա վրա: Ցերե՛ք: Բայց պիտի հասկանա քո դրությունը, յես միայն քո մասին եմ հոգում:

Անդամալույծի սենյակից դուրս յեկան որիորդի մայրը և հորաքույրը: Խոսակցությունն ընդհատվեց: Պատշգամբից ներս վազեցին վոտաբոբիկ մանուկները, վորոնցից մեկն արդեն ինը, մյուսը՝ յոթ ու կես տարեկան եր, արտասվելով փաթաթվեցին իրենց մոր փեշերին: Դրացի թուրք ընտանիքի ավելի մեծ մանուկները հարձակվել եյին նրանց վրա ու ծեծել: Շուշանիկը դրկեց նրանց, հանդստացրեց, իսկ մայրը դուրս յեկավ կռվելու հարևանների հետ, վոր չեն դադում իրենց մանուկներին:

— Դոնե այդ ադմուկից կազատվենք,—ասաց Զարդարյանը,— ախտեղ հարևաններ չենք ունենալ: Դե, լավ, Աննա, մի՛ կռվիր,—դոչեց նա, մոտենալով դռներին,—չարժե, չարժե...

Աննան ներս յեկավ բարկացած ու կամեցավ ծեծել իր յերեխաներին, վոր չեյին լսում իրենց մորը և ամեն ժամ դուրս եյին վազում թուրքերի հետ խաղալու: Շուշանիկը պաշտպանեց մանուկներին, հեռացնելով նրանց մյուս սենյակ, ուսկից լսվում եյին անդամալույծի մրմունջները:

— Կանչի՛ր նրան, կանչի՛ր այստեղ,—դարձավ անդամալույծն աղջկան:

Որիորդը հասկացավ, վոր հայրն ուզում է իր յեղբորը, կանչեց:

— Դավիթ,—դոչեց անդամալույծը,—թե ասելած ունես, լռե՛ք զատեր այս դժոխքից: Այդ թուրք հարևաններն ինձ կսպանեն, կխեղդեն զիշերը: Ա՛խ, այս բաղնիսի հոտն ինձ սպանեց... ազատի՛ր, ազատի՛ր...

Հետևյալ որը Դավիթ Զարդարյանը գրասենյակի գործերը հանձնեց նոր հաշվապահին և տեղափոխվեց հանքերը: Իսկ յերբորդ որը նա տեղափոխեց ընտանիքը: Ուղևորվելուց առաջ անդամալույծը դարձյալ ասաց, թե չի ուզում հանքերում ապրել և առողջ ձեռով հրեց աղջկան, վոր ոդնում եր նրան տեղից վերկենալու: Բայց յերբ յեղբայրը վճռարար ասաց, թե լա՛վ, կարող է մնալ քաղաքում, հիվանդը հայհոյեց նրան: Ի՞նչ, ուզում են նրան թուրքերի ձե՞ռքը գցել: Կատաղ, չուտով կատաղ բերել ամեն և տարեք թեկուզ դժոխք...

Այդ որը Սմբատն էլ հանքերումն եր: Նրան հետաքրքրում եր Զարդարյան ընտանիքի վիճակը: Զգում եր մի տեսակ հոգեկան հաճույք, վոր այդչափ դոհություն եր պատճառել ստորադրյալին նոր պաշտոնով:

Կանանց հնամաչ հագուստները, տնային վոդորմելի կահ-կարասին, յերեխաների ցնցոտիները ծանր տպավորություն գործեցին նրա վրա: Նա չգիտեր, վոր Զարդարյաններն այդքան աղքատ են:

— Ո՞վ է այդ որիորդը,—հարցրեց հաշվապահին:

Շուշանիկն եր, վոր անբաժան մորեղբոր չալն ուսերին գցած, մեկ-մեկ սրբում եր քաղաքից բերված իրերը և տանում ներս: Նրա պայծառ ու խելացի աչքերը, մելամաղձիկ դեմքն ակամա գրավեցին Սմբատի ուշադրությունը: Չկարողացավ զսպել հետաքրքրությունը և դրեթե ինքն ակնարկեց քաղաք ուղևորվելուց առաջ Զարդարյանների տանը թեյ խմելու մասին:

Աղքատիկ ընտանիքը հրճվեց մելիոնատեր յերիտասարդի համեստությամբ: Թեյը մատուցանում եր Շուշանիկը պատշգամբում: Անդամալույծը ներսում եր, և Սմբատը լսում եր նրա անընդհատ մրմունջները: Ցերեխաները խաղում եյին դավթում: Իսկ կանայք զբաղված եյին իրենցները դատավորելով:

Սմբատը, ակամա գրավված Շուշանիկի պայծառ աչքերով, դեղեցիկ հասակով, համակրելի դեմքով, դիտում եր նրան, խոսակցելով իր ստորադրյալի հետ գործերի մասին: Թվում եր նրան, վոր չքավորության տակ որիորդի հոգին այնքան չի ճնշվել, վոր կա նրա մեջ ինչ-վոր հպարտություն: Միևնույն ժամանակ, զգում եր, վոր նա մի պահապան հրեշտակ է վոդորմելի անդամալույծի, ցնցոտիապատ յերեխաների և ամբողջ ընտանիքի համար: Ցավ վորքան շատ եր դիտում, այնքան ավելի յեր ուրախանում մտքում, վոր դեթ համեմատական թեթևություն եր տվել աղքատ ընտանիքին: Այսուհետև, յերևի, նա այնքան չքավոր վիճակ չի ունենալ, և այդ յերիտասարդ ու սիրունդեմ աղջկա տնային աշխատանքը կթեթևանա:

Հրաժեշտ տալիս, նրա աչքերն ակամա հառվեցին որիորդի աչքերին: Զգաց, վոր ձեռը ցնցվեց իր ափի մեջ: Դա աղքատի չափութ-

թյունը չէր հարուստ մարդու մերձավորությունից: Դա կանացի ամոթխածության ցնցումն էր, մի նոր ծանոթացած տղամարդի արդեն չափից դուրս հետաքրքիր հայացքից...

IX

Այն որը Սմբատը մի առանձին կարոտով էր հիշում զավակներին, կառքի մեջ նստած, զարձյալ դիմելով դեպի հանքերը:

Ցեղանակը սառն էր: Փչում էր սուր կտրուկ հյուսիսային քամի: Խոշոր ավազը, յերկրից բարձրանալով, պատում էր ոդի մեջ և փոքրիկ գնդակների ուժգնությամբ զարկում նրա յերեսին:

Կառքը դուրս յեկավ քաղաքից: Դեպի աջ պարզվել էին նավթային գործարանները,—ծխի, մրի և չոգու խառնուրդով մթագնած սև քաղաքը: Ծուխը սքողված էր մոխրագույն մառախուղով, վոր փոթորկի նշան էր: Դեպի ձախ ամայի ավազուտ դաշտեր և լերկ բարձրավանդներ էին, տեղ-տեղ հերկված, մեծ մասամբ չոր, տխուր, մռայլ: Բուսականության հետք չէր յերևում: Ամեն տեղ ավազ ու կիր, քարքարուտներ և չորացած աղային լճեր, վորոնք հեռվից վայրկյում էին ձյունապատ դաշտերի պես:

Գարնանը կարճ միջոցով այստեղ յերկիրը ծածկվում է ցանցառ խոտերով: Արտերը ծաղկում են, ցորենն ու գարին բարձրանում են յերկու թիզաչափ: Շուտով արեգակի կիզիչ ճառագայթները խորչակահարում են ու դեղնացնում ամեն ինչ: Աղքատիկ հունձն սկսվում է, և ամառվա կիսին արդեն յերկիրը նորից հաղնում է անզուլ ցնցոտիներ: Բայց այդ ցնցոտիների տակ պարունակվում է անհուն դանձ: Այստեղ բնությունը, կարծես, յերկրի յերեսից խլել է ամեն հարստություն, վորպեսզի ծծի յերկրի մեջ:

Մեռյալ բնությունն ավելի յե սաստկացնում Սմբատի թախիծը: Այսոր նա միանդամայն դժբախտ և համարում իրեն: Միքայելի հետ կռվել էր կոնտր-կոտակի վերաբերմամբ և բացարձակ ասել, թե կարող է դիմել դատարան և թե ինքը պատրաստ է թշնամանալ նրա հետ, բայց կամավոր բաց թողնել հոր ժառանգությունը ձեռից — յերբե՛ք: Սակայն այս չէր նրա գլխավոր վիշտը: Նա դեռ մոքում համոզված էր, վոր նոր կտակը կեղծ է, և վերջիվերջո Միքայելը պիտի ինքը հաշտվի նրա հետ, յենթարկվելով օրինական իրավունքներին: Կար ուրիշ ավելի խոր չարժառիթ: Մինչև այժմ կարողանում էր հեռացնել իրենից ծանր մոքերը և, հաշտվելով իր վիճակի հետ, փակել աչքերն իրականության առջև: Իսկ այժմ մի համառ ու անհաղթելի զորությունն չարունակ դրդում է կրկնել մոքում. «մի՞թե չկա յելք այս դրությունից»:

Մի՞թե առելով կնոջը — պարտավոր և հավիտյան կապված մնալ նրա հետ: Մի՞թե սիրելով զավակներին — պարտավոր է հավիտյան կրել հոր անեծքը, մոր դառը կչտամբանքների ծանրությունը:

Հայացքը ձգել էր դեպի հեռու տարածություն: Այնտեղ, ընդարձակ բարձրավանդի վրա յերևում էր մի սև անտառ: Անտերև, անճյուղ ծառերի կախարդական մի անտառ, ուր սառնորակ աղբյուրների փոխարեն հոսում է թանձր ու սև մի հեղուկ, ուր թռչունների յերգեհոնին փոխարինում են չվիկների սուլոցները, առավոտյան չամանդալին — չոլին ու ծուխը: Ուր գիշեր-ցերեկ գործում են հաղարավոր մեքենաներ և բյուրավոր մարդկային ձեռներ: Դա ատորերկրյա զանձարանն է — նավթային հոլերի սև բուրգերի խառնությունը, դաժանաբ

վերատ խորությամբ մի կլոր ծակ, վորի պատերը պատապարված են յերկաթով, այնպես վոր նա իսկապես նեղիպայտնում է յերկաթի խողովակի՝ գետնի մեջ ուղղահայաց խրված:

Ներս մտնելով, մարդ դղում է դպի սուր ու չչմեղուցիչ հոտը: Շոգին մի անկյունում պատեցնում է մի մեծ անիվ, վորին փաթաթված հատ ու լայն կաշվե փոկը, յերկծյուղ անցնելով մինչև վինուրթյան կետը, պատեցնում է թմբուկաձև ահագին գլանը: Մերթ դեպի առաջ, մերթ դեպի հետ պատելով, գլանը բաց և անում կամ հավաքում իր վրա վոլորված յերկայն պարանը, նայելով, թե ինչ ուղղություն և տալիս նրան քովը կանգնած մշակը:

Այդ մշակը, տիրոջը տեսնելով, հանում է մորթե մեծ գդակը, գլուխ տալիս: Սմբատը նայում է նրա նավթոտ յերեսին և մտածում:

— Դու ինճանից դժբախտ չես...

Գարանն ուղղահայաց բարձրանում է վեր, ինչպես ոդային ոճ, բուրգի ծայրում փաթաթվում և մի անիվի և թեքվում ցած: Նրա ծայրին կապված է մի քանի սաժեն յերկայնությամբ մետաղյա պուլյ: Ցերը գլանն արձակում է պարանը, պուլյը սրընթաց գնում և հորի մեջ: Զարկվելով յերկաթի պատերին, գղրդալով, ընկնում է սուրբերկրյա լճի մեջ և, խուլ չառաչյուններ արձակելով, նորից բարձրանում է վեր՝ թանկագին հեղուկով լի: Այդ հեղուկն որ-որի վրա պիտի ավելացնի Ալիմյանների հարստությունը, այնինչ՝ Սմբատը նրա խշշյունի մեջ անգամ լսում է.

— Դու դժբախտ ես:

Նա մոտենում է հորի բերանին և ականջ դնում: Այնտեղ մթին անդնդում, կարծես, կատարվում է ինչ-վոր դևհենային դործողություն: Նավթը յեռում է դարերով կուտակված դպի զորությունից: Լսվում են տարօրինակ ձայներ, նման քամու խուլ փոթորկի անտառի խորքում կամ ծովային ալիքների հեռավոր չառաչյուններին: Սմբատի ականջին այդ ձայները հնչում են.

— Դու դժբախտ ես...

Ցերկայն պուլյը ֆշշալով դուրս և սողում, վորպես մի վիշապ իր բնից: Քանի մի վայրկյան նրա կինամոնադույն բծավոր մեջքը փայլում է ոդում: Նա արագ բարձրանում է վերև, նորից կանգ և առնում, կարծես, հոգնած և մտածելով, դարկում է քիմն ինչ-վոր ամլության և իր մեջի հեղուկը թափում չանի մեջ: Գազախտան նավթի կաթիլները, բյուրավոր փոշի դառնալով, ցրվում են ոդի մեջ:

Ա՛խ, յերանի մի ղորեղ հարվածով Սմբատը կարողանար փոշի դարձնել այն ծանր վիշտը, վոր քարի պես ճնշում է սիրտը:

Նա անցնում է մի ուրիշ բուրգ, հետո յերրորդը, չորրորդը: Ամենուրեք կեղտ, մուր, ցեխ: Ցերևում են վոտաբոբիկ եյակներ, վոտից մինչև գլուխ նավթոտ, ինչպես կենդանի պատրուկներ: Այստեղ մարդկային կյանքը յուրաքանչյուր րոպե յենթարկված է վտանգի: Մի թեթև անզգուշության կրակի հետ, և կիզանուտ գազը կարող է բռնկվել ու ոդը ցնդել մարդկանց:

Սմբատը մոնում է մի առանձին քարաշեն վինուրթյուն: Զարգարյանը զարմացած է, յերբեք նրա տերն այնքան մանրամասն չեր գիտել իր հանքերը և յերբեք, մինչև այդ ժամանակ, այնքան մտախոհ չեր յեղել, վորքան այսոր: Ինչո՞ւ, հարցնում են իրարու մշակները:

Հինդ վիթխարի հրեղեն աչքեր աղյուսյա պատի մեջ վառվում են, արձակելով խլացուցիչ աղմուկ: Նավթային բոցը գլանաձև կաթսաների սակ մրրկի պես պտույտ-պտույտ է անում, գազանի պես մռնչում ու կատաղած լիզում յերկաթե ակունքի պատերը: Կաթսաների մեջ յեռում է ջուրը և մեքենաների համար շոգի արտադրում: Ցերկու մշակ հերթով գիշեր-ցերեկ պտտվում են հրեղեն ակների առջև և նրանց մեջ չարունակ վառ պահում կրակը, վորպես քուրմերն աստուչանների մեջ:

Անսովոր մարդու վրա սարսափ է ազդում տիրող աղմուկը: Միտքը կամա-ակամա սլանում է հեռո՛ւ ու հեռո՛ւ, և մտացածին դժոխքը դառնում է իրական, այն տարբերությամբ, վոր իրական դևհենին մարդիկ են իրենք իրենց դատապարտում կամավոր: Թվում է, վոր ահա, ահա կաթսաներից մեկը, մյուսը, չդիմանալով ջրի ու կրակի դիվային մրցմանը, կտրաքի և ոդը կցնդի ամբողջ վինուրթյունը, և ամենից առաջ իր առջև պատող մշակներին, վոր սոսկալի տաքության մեջ հազիվ կարողանում են շունչ քաշել:

Սմբատին թվում է, վոր այդ հրեղեն ակներն անդամ արտասանում են.

— Դու դժբախտ ես:

— Զարգարյան,—պատում է նա հաչվապահին,—չգիտեմ ինչու, այսոր, կարծես, ոդը խեղդում է ինձ:

— Այստեղ ոդ բոլորովին չկա,—պատասխանում է Զարգարյանը, նրա ասածը հասկանալով ուղիղ մտքով:

Սմբատը լռում է, դուրս է դալիս: Մտնում է տասը քայլ յերկայնությամբ և հինդ քայլ լայնությամբ մի սենյակ՝ ցածր լուսամուտներով: Հատակին աղյուսյա յե, բայց շատ տեղ ավերված, խորդուբորդերով լի: Հաղիվ մարդու հասակից մի թիզ բարձր առաստաղը ծխից ու մրից սևացել է, ինչպես խոհանոց, պատերը խոնավությունից բորբոսնել են և սպիտակ բծերով ծածկվել, վորպես բորոտի դեմքը: Սենյակի յերկայնությամբ մի պատի տակ յերկու կանդուն բարձրությամբ փայտի թախտ է չինած, վորի տակ հատակը հողային է: Թախ-

ոի վրա դարսված են կեղտոտ, մրոտ ցնցոտիների կույտեր — մշակների անկողինները:

Սմբատը նոր է միայն ուսումնասիրում, թե այդ խեղճերն ինչ տաժանակիր աշխատանք են վարում, ինչ վտանգավոր գործ եր կատարում և ուր հանգստանում, ուր դիշերում: Նա զղում է խղճի անսովոր խայթոց: Ներան թվում է, թե ինքն ապրելնի յե տիրացել հարբատուքյան, թե բոլորը, բոլորը, ինչ-որ հայրը դիղել է, պատկանում է այդ խեղճերին և միայն նրանց ևս ու կոպիտ ձեռների աշխատանքին: Նա դառնում է Զարդարյանին և ասում.

— Մենք պարտավոր ենք մշակների համար նոր բնակարան կառուցանել:

— Վատ չեր լինի, պարոն Սմբատ, վատ չեր լինի,—կրկնում է Զարդարյանը, կարծես ուրախանալով:

— Այսոր ևեթ դիմեցեք մի ճարտարապետի և հատակագիծը պատվիրեցեք:

— Զսպատե՞նք Սուլյանի առողջանալուն:

Սուլյանը հանքերի կառավարիչ-ինժեներն եր, որ այժմ հիվանդ եր և քաղաքում պառկած:

— Կարիք չկա սպասելու, դուք հատակագիծը պատրաստել տվեք: Վարքա՞ն է մեր մշակների թիվը:

— Բալախանի վաթսուն, Սաքունչի հիսունուհինդ, Ռոմանի հարյուր ինններսուն... ընդամենն առայժմ յերեք հարյուր տասնուհինդ:

— Բոլոր հանքերում պիտի քանդել հին կացարանները և նորերը չինել տալ: Այդ խոզաբներում մարդ ապրել չի կարող: Գնանք թեյ խմելու, մանրամասն կիոսենք:

Սեղանի քով նա ինքը մատիտով մի թերթ թղթի վրա ընդհանուր գծերով նկարեց ապագա կացարանների հատակագիծը, տալով Զարդարյանին կարևոր բացատրություններ: Նա հետզհետե վոգևորվում եր և ավելի ու ավելի յեռանդով արծարծում հանկարծակի հղացած միտքը: Նա պահանջում եր վոչինչ չխնայել կացարաններն ընդարձակ, լուսավոր և հարմար կառուցանելու համար:

Թեյը դարձյալ Շուշանիկն եր մատուցանում, և այս անդամ արդեն այն սենյակում, վոր հարմարեցրած եր հյուրերի համար և բավական լավ կահավորված: Այսոր որիորդը մաղերը սանրել եր առանձին խնամքով, հագել եր միակ առնային մեխակագույն ասույա կտորից հագուստը: Այսոր նրա ծննդյան որն եր, լրանում եր քսաներկու տարին, մի որ, վոր իսկապես նրա համար մինչև այժմ վոչնչով չեր տարբերվել տարվա մյուս որերից. աղքատ ընտանիքը սովոր չեր տոնել իր անդամների ծննդյան որը: Ցավ միայն անդամալույծը, հիշելով յերջանիկ անցյալը, առավոտը պահանջեց, վոր որվա առիթով Շուշանիկը նրա համար կարկանդակ պատրաստի, մի պահանջ, վոր աղջիկը կատարեց հաճույքով:

Սմբատը, դլուխը թղթին թեքած, նկարելով և Զարդարյանին բացատրություններ տալով, յերբեմն դլուխն ակամա նայում եր վեր, որիորդին և նկատում, վոր որիորդն ել իրեն է նայում: Զդում եր, վոր Շուշանիկը հետաքրքրվում է իր բացատրած ծրագրով, և այս ավելի յեր վոգևորում նրան: Միևնույն ժամանակ, մտքում ինքն իր դեմ չարանում եր, վոր որիորդի հետաքրքրվելն իրեն զբաղեցնում է:

Նա միշտ այն համոզմունքին եր յեղել, վոր հայ կինը յերբեք ընդունակ չե առորյա մանր, անձնական շահերից բարձրանալ: Ցեվ ուսանողական շրջաններում միշտ յեղել եր հայ կնոջ կատաղի հակառակորդը: Հենց այս համոզմունքն եր դլխավորապես դրդել նրան իր իդեալը վորոնելու ոտար շրջաններում: Այժմ նրան թվում եր, վոր մի անհայտ համեստ աղջկա մեջ հանդիպում է հակառակը: Իսկապես նա վոչ մի առիթ չուներ այդ աղջկան վորևե բանով իր շրջանի եյակներից բարձր համարելու, քանի վոր տակավին հետը մոտիկ ծանոթ չեր: Բայց մի ներքին ձայն թելադրում եր, թե նրա մեջ կարող է դտնել այն, ինչ-որ իր նախկին համոզմունքով դուր կդիներ վորոնել ուրիշ ապդի կանանց մեջ:

— Ինձ թվում է,—ընդհատեց վերջապես Զարդարյանը Սմբատի ընդարձակ ծրագրի բացատրությունը,—վոր յեթե ձեր բոլոր ասածները բանվորների համար իրագործենք, կարժանանաք հարևան հանքատերերի թշնամությանը:

— Ինչո՞ւ:

— Իհարկե, այդքան բարի՛ք—բաղնիս, այդի, դպրոց, ընթերցարան, մինչև անգամ թատրոն: Դրանք մեր յերկրում չտեսնված բաներ են:

— Շատ սովորական և շատ հասարակ բաներ խիղճ ունեցող մի գործարանատիրոջ կամ հանքատիրոջ համար: Ամեն մի բուրժուա իր ֆանտազիան ունի; իմ ֆանտազիան ել այս է պահանջում: Չկարծեք, թե շատ ել հոգում եմ մշակների մասին:

Նա այս խոսքերն արտասանեց անվստահ յեղանակով և անկեղծ:

— Ցերանի ամեն գործատեր այդպիսի ֆանտազիա ունենա,—ասաց Զարդարյանը, ակամա հրապուրվելով նրա համեստությունից:

— Թողնենք այդ: Ահա, վաղը ևեթ այս ծրագրով դուք կպատվիրեք հատակագիծը, հետո կտեսնենք: Իսկ առայժմ,—դարձավ նա Շուշանիկին,—որիորդ, ասացեք, ի՞նչ դեր հանձն կառնեք այս ձեռնարկության մեջ:

— Ցե՞ս,—հարցրեց Շուշանիկը, վոր չեր սպասում այսպիսի առաջարկության,—ի՞նչ կարող եմ անել:

— Ո՛չ, չատ բան: Դուք կարող եք հանձն առնել դրադարան և ընթերցարան բանալու գործը: Եթե չեմ սխալվում, դուք դիմնադիայում յեղել եք:

— Մինչև յոթերորդ դասատուն,—պատասխանեց քեռորլու փոխարեն Զարզարյանը:—Բայց դիտե ավելի, քան մի ուսումնավարտ: Տանն աղատ ժամերը դասարկ չի անցկացնում:

Որիորդը խորին հանդիմանական հայացք ձգեց քեռու վրա, ղուր աշխատելով դսպել չիմացումնքը:

— Ուրեմն ավելի լավ,—ասաց Սմբատը,—կան գործեր, վոր կանանց ավելի յեն սազում, որինակ՝ մի կիրակնորյա ուսումնարան բանալը հասակավոր անդրագետների համար: Յերբ նոր կացարանները կպատրաստվեն, կարծեմ, կարելի յե մի այդպիսի դպրոց բանալ խնդուն: Հանձն կառնե՞ք, որիորդ:

Ի՞նչ է նշանակում այդ: Ծաղրո՞ւմ է արդյոք նրան այդ հարուստ յերիտասարդը, թե՞ փորձում: Պայծառ աչքերը հանդարտիկ ցած իջան, գունատ այտերը թեթևակի չառադունեցին, և որիորդը չկարողացավ վորևե պատասխան տալ:

— Ինչո՞ւ յես լռում,—ասաց Զարզարյանը,—կարծեմ, դու պարտավոր ես չնորհակալություն հայտնել պարոն Ալիմյանին, վոր քեզ է այդ գործն առաջարկում: Ընդունի՛ր, թե չէ, հին ուսուցչի արյունը կսկսի բորբոքվել յերակներումս:

Նա խոսում եր իր սիրոջ ներկայությամբ համարձակ, կատակով, բայց և մաղու չափ չհպարտանալով հարստի բարեկամական վարմունքից:

— Յեթե մի բանով կարող եմ ոգտակար լինել, ուրախությամբ պատրաստ եմ,—ասաց, վերջապես, Շուշանիկը:— Կամենա՞ք ելի թեյ:

— Վո՛չ, չնորհակալ եմ: Ուրեմն, մի ոգնական ևս ունենք. ցտեսություն, հետո ավելի մանրամասն կխոսենք:

Սմբատի հեռանալուց հետո, Զարզարյանն սկսեց հանդիմանել Շուշանիկին: Ալիմյանը նրան այդքան հավատ և ուզում ընծայել, իսկ նա, կարծես, չի կարողանում դնահատել այդ մարդու վստահությունը:

— Մեկը մարդ է, դիտե, վոր դու այստեղ, այս ամայի յերկրում, կարող ես սիրել, ահա ինչու յե առաջարկում քեզ այդ գործը:

— Բայց չե՞ վոր յես ասացի, թե ուրախությամբ հանձն կառնեմ, յեթե կարող եմ կատարել:

— Ի՞նչ ասել է «յեթե կարող եմ կատարել»: Հատարակ դրագիտության դաս տալը մեծ բան չէ: Վո՞ր վարժուհին ավելի դիտե, քան դու, վո՞րն է քո չափ կարդացել ու զարդացել:

Որիորդը, առանց մի խոսք ասելու, անցավ իր սենյակը: Այնտեղ

նա լուսամուխ աչքերով ուղեկցեց Սմբատին, վոր կառք նստելով, դնաց քաղաք...

Հետևյալ որը յերեկոյան նա ասաց հորեղբորը.

— Աչխատիր չուտ շինել տալ նոր բնակարանները մշակների համար: Ձմեռվա վոր հներում ապրել անհնարին է:

— Դու ի՞նչ գիտես անհնարին է:

— Յես այսոր ման յեկա և տեսա: Այնտեղ նրանք հիվանդանում են...

Յեվ նրա ձայնի մեջ զգացվեց անհուն կարեկցություն:

X

Տիկին Անուշ Ղուլամյանը նստած եր հյուրասենյակում, լուսամուտի մոտ, իր սիրած տեղում, ուսկից սովորաբար դիտում եր փողոցով անցնողներին: Դեմ. ու դեմ գտնվող տան առաջին հարկում բնակվում եր ինչ-վոր ոտարազգի ընտանիք, վոր նոր եր վերադարձել ամարային ճանապարհորդությունից Ռուսիայում: Մարդը ճարտարապետ եր, մի բարձրահասակ առողջ տղամարդ: Կինը գեղեցիկ եր, ելեգանտ և հրապուրիչ: Շատ բաներ եյին պատմում այդ կնոջ մասին: Յեվ Անուշը չատ անգամ եր տեսել նրան մի յերիտասարդի հետ՝ ավելի քան քնքուշ խոսելիս:

Այսոր առավոտ Անուշը զարձյալ ընդհարում եր ունեցել իր ամուսնու հետ: Միմյանց ուղղել եյին տանջալի վիրավորական խոսքեր: Այլևս մարդ ու կին իրարու մեջ վոչ մի գրավիչ հատկանիշ չեյին գըտնում: Պատահում եյին րոպեներ, յերբ նրանք զղում եյին նույնիսկ վոխադարձ ֆիզիկական զզվանք: Պետրոսին զրգռում եյին ու զզվեցնում Անուշի բեղիկները և տղամարդային ձայնը: Անուշին հրում եյին Պետրոսի փոքրիկ, խորամանկ, յուղալի աչքերը, թարմ մսի գույն ունեցող ականջները, հաստ պարանոցը և մանավանդ դեհիկ վարմունքը:

Այնինչ, նա դեռ հավատարիմ եր իր մարդուն, մի ամուսնու, վոր ամեն քայլում գնավատանում եր նրան:

Յեղանակը տակավին պարզ եր, արեգակը տակավին ջերմ ու պայծառ, ողջ տակավին հանդարտ: Հոկտեմբերի վերջն եր, մարդիկ դեռ ջրում եյին բարակ վերարկուներով:

Ընդհարման տպավորությունը բավական մեղմացել եր: Այժմ Անուշը, նայելով դիմացի հարևանուհուն, վոր ուրախ-ուրախ թռչկոտում եր սենյակից սենյակ, զգում եր դեպի նա նախանձ: Նրա սրտում վառվել եր կնանասիրության հուրը, արյունը յեռում եր այնպես, ինչպես մի ժամանակ յեռաց, կուրացրեց նրա աչքերը, դրդելով փաթաթվել Պետրոս Ղուլամյանի պարանոցին: Բայց այդ արյունը տակավին անմեղ եր ամուսնական առագաստի առջև:

Լուռ մտախոհության մեջ եր, հիշում եր կարդացած վեպերից պես-պես արյունահույզ տեսարանները, համեմատում եր իրեն այս կամ այն հերոսուհու հետ: Հիշում եր որիորդական անցյալը, պատանեկական հասակը: Ուրա՛խ և անհո՛գ ժամեր: Ինչե՞ր չեր անում դասընկերուհիների հետ, ի՛նչ կատակներ, դժուբյուններ, յերբ մանավանդ խմբովին վերադառնում եյին «պտույտից»: Նայել այս ու այն դեղեցիկ յերիտասարդին, ժպտալ, ծիծաղել, միմյանց բոթելով, մի քանի թռուցիկ սիրային խոսքեր արտասանել լսելի ձայնով, «պարապելով խեղճերին», ցույց տալ, թե սիրահարված են յերիտասարդի վրա: Յերբեմն նույնիսկ նամակներ գրել, տեսակցություն նշանակել: Յեվ այս բոլոր մանկական կատակների հեղինակն ու դեկավարն եր Աննա Կորոլկովան, մաքսային չինովնիկի աղջիկը: Նա յեր բոլորից ավելի տաքարյունն ու համարձակը:

Ախ, յերջանի՛կ ժամանակամիջոց, վոր այնքան կարճ տևեց: Տասնուչորս տարեկան չկար Անուշը, յերբ ուսումը ձանձրացրեց նրան: Յեվ ի՛նչ ուսում, ո՞վ եր դաս պատրաստում: Անուշը, ինչպես և շատերը նրա ընկերուհիներից, միայն ձևի համար եր դպրոց գնում: Մնողները միայն մոդի համար եյին նրան այնտեղ ուղարկում, հենց այնպես, վորպեսզի ուրիշներից հետ չմնան:

Դուրս յեկավ չորրորդ դասատնից, վոչինչ հետը չտանելով, բացի այդ պատանեկական հիշողություններից:

Դիմացի տան դռները բացվեցին: Դեղեցկուհի հարևանուհին դուրս յեկավ, կարմիր հովանոցը կռնատակին, ձեռնոցները հագնելով և հետևից կանչելով. «մո՛պսիկ, մո՛պսիկ»: Դուրս թռավ դնդակի արագությամբ մի մոխրագույն չնիկ, սև տափակ դնչով, վղին վիթաթաթ փոքրիկ բոժոժներ: Ճանապարհորդությունից հետո դեղեցկուհին ավելի թարմացել եր, ավելի դեղեցկացել: Այսոր միանգամայն բորբոքեց նա Անուշի նախանձը՝ իր ազատ վարք ու բարքով: Կարծես, հենց այդ նախանձն ավելի բորբոքելու համար, դեղեցկուհին մոտեցավ լուսամուտին և հարցրեց.

— Ի՞նչ եք այս հրաշալի յեղանակին տանը նստել:

Ներանք ծանոթացել եյին մի հասարակական յերեկույթում:

— Ինչ անեմ դուրս դամ...

— Ձրոսնեցե՛ք ծովափում, մաքուր ոդ շնչեցե՛ք: Ախ, ներողություն, կարծեմ, ձեղանում ընդունված չե առանց ամուսնու տնից դուրս դալ,—ավելացրեց դեղեցկուհին անուշ հեգնությամբ:

— Ընդհակառակը, մեղանում ընդունված չե ամուսնու հետ տնից դուրս դալը, յեթե ակնարկում եք ասիական բարքերը:

— Այո՛. չդիտեի, մեղանում այսպես եյ կարելի յե, այնպես եյ, — նկատեց դեղեցկուհին, աչքերը խորհրդավոր թարթելով:

Յեվ, դլուխն անուշիկ չարժելով, բաց արավ մետաքսյա հովանոցը, մի ձեռով վայելչապես բարձրացրեց չրջազդեստի փեշերը, հեռացավ, կանչելով.

— Մո՛պսիկ, մո՛պսիկ...

«Մեղանում այսպես եյ ընդունված ե, այնպես եյ», կրկնեց Անուշը մտքում: Այո՛, ձեղանում ընդունված ե, ինչո՞ւ մեզանում—վո՛չ: Ինչո՞ւ միայն հայ կինը լուռ ու մունջ դիմանում ե ամուսնու անառակություններին և չի ուզում նրան պատժել: Ինչո՞ւ միայն նրա համար ե այնքան դժվար դավաճանել ամուսնական առաջատուին: Յերևի, դա անկրթության և վախկոտության նշան ե...

Զանգակի հնչյունն ընդհատեց նրա մտքերը: Յինդվեց, վոտքի կանդնեց:

Յեկողը Միքայել Ալիմյանն եր:

Լուռ հրավիրեց յերիտասարդին նստել դեմ ու դեմ: Խոսեցին դիմացի հարևանուհու մասին: Միքայելը ծանոթ եր դուդին և նոր հանդիպել ու խոսել եր դեղեցկուհու հետ: Գիտեր նրա պատմությունը, գիտեր շատ ուրիչ համանման պատմություններ: Յեվ այն, ինչ-վոր մի քանի րոպե առաջ անցնում եր Անուշի մտքով, այժմ բացարձակ ասաց Միքայելը: Ասաց և համարձակ պահարակեց հայ կնոջ յերկչոտությունը: Նրա վոճը և՛ հեգնական եր, և՛ լուրջ, և՛ հանդուգն:

Անուշը չեր հակառակում նրա ասածներին, միայն յերբեմն անուշ կատակով արտասանում եր. «լավ, հերիք ե, ի՛նչ աներեսն եք»: Յեվ ուրիշ վոչինչ: Բայց մտածում եր. այո՛, հայ կինը լուռ ու մունջ դիմանում ե մարդու անառակություններին, բայց նա՛ յել հողային եյակ ե, նա՛ յել սիրտ ունի, արյուն ունի: Նա յել կարող ե մի որ դուրս գալ համբերությունից:

Յեվ չեր վիրավորվում Միքայելի կրքոտ հայացքներից: Ընդհակառակը, այդ հայացքները խորին հաճույք եյին պատճառում նրան: Միքայելը հազիվ զսպում եր իրեն: Ներսում յեռացող կիրքն այրում եր նրան և դրդում դեն ձգել միանդամից մանկական անվստահությունը: Զգում եր անդիմադրելի փափագ՝ հարձակվել սիկնոջ վրա, դրկել այդ դիրուկ իրանը, փաթաթվել այդ վավաշոտ պարանոցին, ինչպես արեդակից տաքացած ոճ, և մի յերկարատև բոցավառ համբույր դրոշմել այդ թեթևաևիկ չառագունած այտերին:

Տիկինը մատների մեջ խաղացնում եր մի վոսկե ապարանջան, վոր հանել եր սլիտակ, փափուկ բազկից: Մի անդամ, Միքայելի աչքերին նայելիս, ձեռները թռուցանն, ապարանջանն ընկավ ծնկների վրա, սահեց սև մետաքսյա չրջազդեստի վրայով և անհայտացավ, մի ակընթարթի վայելով:

Միքայելն արագ թեքվեց ցած, Անուշը նույնպես, հետ մղելով իր

բաղկաթոռը: Մինչ նրանք դուրսի վրա վորոնում եյին ապարանջանը, արեգակի չողերը լուսամուտի ապակիների միջով ընկել եյին Միքայելի դեմքին և Անուշի պարանոցին: Տիկինը մարմնի մեջ ղազց վերնին ատելացանի դրդռեցուցիչ ջերմ: Նրա մազերի ծայրերը չփվում եյին Միքայելի ճակատին — այնքա՜ն գլուխները մոտիկ եյին միմյանց, այսերի վրա գգում եր յերիտասարդի կրակոտ շունչը: Այնինչ, Միքայելն այրվում եր վոտից մինչև գլուխ ավելի սաստիկ, քան այն դիչեր ոպերետային գերասանուհու մոտ՝ թևը-թևին սեղմելիս: Զգիտեր այժմ ինչո՛ւ յե թեքվել, ի՛նչ է վորոնում: Նայում եր գաղտուկ տիկնոջ ուռուցիկ կրծքին, սպիտակ յերկնքալ կոկորդին և չրթունքները կրծոտում: Աչքերը վառվել եյին, ուղեղը մթագնել եր, վորպես տենդային տաքության մեջ: Մի վայրկյան ևս, և դուցե չզսպեր իրեն, գրկեր տիկնոջ գլուխը, սեղմեր կրծքին բորբոքված կրքերի բոլոր թափով:

Անուշը գլուխը բարձրացրեց, ապարանջանը գտել եր... Նա կամեցավ հաղցնել իր բաղկին. առաջացավ ինչ-վոր դժվարություն:

— Թո՛ւյլ տվեք,—ասաց Միքայելը, վոր տակավին դողում եր հուզմունքից:

Անուշը ձեռը մեկնեց, մի քիչ ել ամբողջ իրանով թեքվելով առաջ: Արդեն այսքանը բավական եր Միքայելի համար, վորպեսզի նրա սրտից չքանա կասկածի վերջին նշույլը: Այժմ Անուշի այտերը գունատվել եյին, աչքերը պսպղում եյին, կուրծքն ուժգին բարձրանում եր ու իջնում: Նրա աչքերից չեր հեռանում հարևան դեղեցկուհու ուրախ, համարձակ յերջանիկ կերպարանքը:

Միքայելը նրա փափուկ բազուկը սեղմել եր ձեռների մեջ ամուր: Վորպես թե ճիգն եր անում ապարանջանի ծայրերն ազուցանել միմյանց:

Անուշը մերթընդմերթ քաշում եր ձեռը: Վորպես թե կամենում եր բազուկն ազատել:

Միքայելի ձեռների տաքությունն այրում եր նրա կաշին:

— Ախ, այս արեգակն ել,—ասաց նա, ծիծաղելով, մի քիչ տեղից բարձրացավ, թողնելով բազուկը Միքայելի ձեռների մեջ, և ծածկեց լուսամուտի վեղիը:

Արեգակի չողերի հետ չքացավ յերիտասարդի ուղեղի վերջին լուսո չառավիղը: Ծոլ կիրքը կլանեց նրան ամբողջովին: Վավաչամոլ սրտունը բռնկվեց, խիելով դլին, վորպես ուժգին յեռացող ջուրը վակ կաթսայի կափարչին: Նրա ատամները բացվել եյին, չրթունքներն անառնական հեշտանքից դողդողում եյին, վորպես վառարանի առջև պահած թուղթ: Շունչը հուր եր արտաղրում, իսկ աչքերը կորցրել եյին մարդկային ամեն արտահայտություն: Նա մարմնացած կիրք եր, այրող, անառնական կիրք...

Անուշը փորձեց նրա ձեռներից ազատվել, մի թույլ ճիչ արձակելով: Յերևի փորձը չատ չնչին եր, յեթե վոչ տիկինը ֆիզիկապես նրա չափ և դուցե ավելի ուժեղ եր: Միքայելը քաշեց նրան իր կողմ, այս անդամ արդեն կոպտարար:

— Ի՞նչ եք անում, դժվեցի՞ք,—դոչեց Անուշը և ազատվեց նրա ձեռներից:

Նրանք նայեցին միմյանց: Միքայելն ամաչեց: Բայց յերկուսն ել դողում եյին յեռացող կրքերի ուժգնությունից: Անուշը չատպով լուսամուտի վեղիը բաց արավ, նայեց դեպի վողց:

Քանի մի վայրկյան Միքայելն անչարժ կանդնած եր: Նայում եր տիկնոջ ուսերին, պարանոցին, ցերուցան յեղած խիտ մազերին: Հետո վերցրեց գդակն ու դնաց, արտասանելով.

— Մնաք բարով:

Սկզբում Անուշն ուրախ եր Միքայելի չերևալուն և մտքում պատկարակում եր իրեն, վոր թույլ տվեց յերիտասարդին այնքան առաջ դնալու: Անցան առաջին րոպեները, և նա սկսեց անհանգստանալ: Մի դուցե Միքայելին վիրավորեց: Բայց ինչո՞վ, միթե նրանով, վոր չկատեցավ վերջնապես մոռանալ ինքն իրեն և ընկնել ոտար տղամարդի գերկը: Սակայն ի՞նչ կլիներ, յեթե ընկներ իսկ:

Այտառեղ Անուշը կանգ եր առնում և մտախոհության մեջ խորասուզվում: Ամուսինն արդեն այնքան զզվելի յեր թվում, վոր տեսնել անդամ չեր ուզում նրա յերեսը: Ցերեխաները, դիրքը, հասարակական կարծիքը — ահա ինչն եր կաչկանդում նրան: Ախ, ինչո՞ւ այսքան դժվար և մեղանչելը: Այնինչ, կրքերը քանի գնում այնքան սաստկանում են: Նա սպասում և Միքայելին, սպասում և անհամբեր, սրտի բարախոսով: Իսկ Միքայելը չի յերևում: Ամեն որ Անուշը վորոչ ժամին նստում և սովորական տեղում և նայում դեպի փողց ու զվոնացի մեն նստում և սովորական տեղում և նայում դեպի փողց ու զվոնացի լուսամուտները: Հարևան դեղեցկուհին թռչկոտում և ուրախ ու զվարթ, սենյակից-սենյակ և չարունակում զավաճանել ամուսնուն: Իսկ Միքայելը դեռ չի գալիս:

Վերջապես, մի որ յեկավ: Ներս մտավ վոչ առաջվա պես զվարթ ու ժպտուն, այլ լուրջ ու տխուր դեմքով: Նա զղջում և իր արածի համար, յեկել և ներումն խնդրելու: Ցավ զղջալ ստիպում և նրան այն սենյակ, յեկել և ներումն խնդրելու: Ցավ զղջալ ստիպում և նրան այն սենյակը, վոր տաժում և դեպի համակրելի եյակը: Անուշի նախանձը գրգռվում է. ո՞վ է այդ համակրելի եյակը, վորին սիրում և Միքայելը: Ինչպես է հանդգնում սիրել մեկին և վատ մխուաններով այցելել մյուսին:

— Ո՞վ է նա, ո՞վ է,—հարցնում է Անուշը հետաքրքրված:

— Ձեզ ճանաչիլ, մի սիրուն գերմանուհի յե,—պատասխանում է Միքայելը:

Անուշը նախանձից չրթունքները կրծոտում է: Նա չգիտե, վոր դա ուրիշ վոչինչ է, յեթե վոչ խորամանկություն Մկքայելի կողմից: Հնարելով սիրուն զերմանուհուն, նա ուզում էր նախանձի միջոցով վերջնական հարվածը տալ տիկնոջ պարկեշտության վերջին մնացորդին:

Անուշն աշխատում էր լուրջ ձևանալ, զսպելով կրքերը, բայց չզուր: Նա խոսում էր Ալիմյանի հետ կողմնակի բաների մասին, բայց միտքը զբաղված էր սիրուն զերմանուհով: Վորքան Մկքայելն անտարբեր էր ձևանում, այնքան տիկինը ստաքանում էր: Նա սկսեց դարձյալ խոսել իր ընտանեկան դառն դրության մասին, առանց այլևս դպչելու իրեն: Մերթ հառաչում էր, դլուխը կրծքին թեքելով, մերթ ձեռով վճռական շարժումներ անելով, արտասանում էր. «ե՛հ, ինչ արած», կամ «աշխարհի յերեսին անհոգս մարդ չկա» և այլն, և այլն:

Մկքայելը զարձյալ անտարբեր էր: Նա գտել էր տիկնոջ թույլ յերակը: Նա հրաժեշտ տվեց, ասելով, վոր իրեն սպասող կա և դուրս գալիս մի հեզնական ժպիտ պարզևեց տիկնոջը:

Այդ որը յերեկոյան Անուշը, իր ննջարանում առանձնացած, խորհում էր ապագայի մասին: Անտանելի չէր այլևս կենակցությունը Պետրոսի հետ: Ցերեխա չէր, սխալվեց, խաբվեց: Ինչ են խաբվում կանայք, նա չէր խաբվեց, միթե մինչև մահ պիտի տուժի: Պետրոսն է մեղավոր վոտից մինչև գլուխ և դեռ նա չե միայն դավաճանում: Ո՞ւր է արդարությունը: Վո՛չ, Անուշը չի կարող այլևս կոպիտ, տգեղ, դժվելի մարդու հետ ապրել: Նա կգնա թեմական առաջնորդի մոտ, կընկնի վոտները, կաղաչի, վոր նրա համար ևս մի անգամ ամուսնության իրավունք բերել տա: Ցեթե ձրի չի միջամտել, Անուշը կկաշառի նրան: Այդ հոգևորականները փողով միշտ միացնում են անմիանալին և բաժանում անբաժանելին:

Սակայն դա Անուշի ուղեղի վերջին խոսքն էր: Այնուհետև կրքերն ամբողջովին կլանեցին նրան, ճիշտ այնպես, ինչպես լինը տարի առաջ: Մկքայելի չինծու անտարբերությունը զարձավ նրա համար անվերջ տանջանքների աղբյուր: Պետք էր մի կերպ վերջ տալ այդ տանջանքներին: Ցեվ վերջ տվեց...

Որերն անցնում էին. Անուշն ու Մկքայելը ծծում էին բուռն կրքերի արբեցուցիչ հյութը: Ջերմն մտածում իրենց արածի մասին, չէին անդամ խոսում: Սիրո հարատև ջերմությունը և կրքի անցողիկ հուրը զարձել էին հոմանիշ: Կյանքի յերջանկությունը զտում էին փոխադարձ խոլական հեշտանքի մեջ: Առանց մտածելու արտասանում էին. «սիրում եմ», և հավատացած էին, թե սիրում են, թե հենց այդ է իսկական սերը, վոր դրվատում են վիպասանները և ստվածացնում բանաստեղծները:

Սակայն փոքր առ փոքր իրականության չողերն սկսեցին մուտք

դործել մթագնած ուղեղների մեջ: Անցավ լուսն հեշտանքի պահը, և մի որ Անուշը փոքր ինչ սթափվեց: Այժմ միայն սկսեց պարզ ակնարկել Մկքայելին այն բանի մասին, վորի վերաբերմամբ կամեցել էր խոսել, հանդուգն քայլն անելուց առաջ և չէր վստահացել խոսելու:— Նա ուզում է բաժանվել Ղուլամյանից և...

Ցեվ չէարունակեց. առաջին անգամի համար այսքանն էլ բավական էր: Մի՞թե Մկքայելը չի հասկանում, չգիտե՞, թե կինն ինչպես կապող է տանջվել, ապրելով չսիրած մարդու հետ մի ևնուն հարկի տակ, սրտով ու հոգով նրանից բաժան, ուրիշին նվիրված:

Մկքայելը լուռ լսեց նրա ակնարկը, ապա գրկեց, համբուրեց և դուրս յեկավ: Ցեվ այդ որից նրան պաշարեց անսովոր մտահոգություն: Անուշի ցանկությունը — բաժանվել մարդուց — նրան նեղը դցեց: Ի՞նչ հիմարություն, հա՛ հա՛, հա՛, խլել մարդուց նրա որինական կնոջն ու հետը ապրել: Ի՞նչ կասի հասարակությունը: Ցեվ այն էլ մի կնոջ հետ, վոր, հա՛, հա՛, հա՛ յերկու յերեխա ունի, վոր արդեն լինը տարի է ամուսնացած և և թեմարությունը կորցրած...

Ինքո՛ւյ բեղիկներ, ինչո՞ւ այս խորհրդածությունների ժամանակ կորցնում եյիք ձեր հրապույրը: Ինչո՞ւ Անուշը դառնում էր մի առօրյա, սովորական եյակ, նման մյուս կանանց, առանց արտաքո կարդի արժանիքների: Նմա՞ն: Վո՛չ, այդ էլ սխալ է...

Ահա ինչ պատահեց մի որ: Համբուրելով Անուշին, Մկքայելը հանկարծ չրթունքների վրա դդաց մի անախորժ խտղտում և նույն վայրկյանին բաց թողեց տիկնոջ գլուխը, վոր անզոր թեքված էր իր կրծքին: Նայեցին միմյանց յերեսին: Անուշը սովորաբար աչխատում էր Մկքայելի դեմքի վրա և աչքերի մեջ կարդալ նրա հոգու յելևեջները: Այս անգամ, սակայն, չզուշակեց նրա խիական զգացումը: Նրան թվաց, վոր յերիտասարդը պատրաստվում է նոր թախով հարձակվել իր վրա, այնպես, ինչպես սովորաբար անում էր, գրկել, համբուրել: Ցեվ նա ինքը հարձակվեց, գրկեց ու սկսեց խելագարի պես համբուրել:

Մկքայելն աննկատելի աչխատում էր չդիմադրել նրա չրթունքներին: Թվում էր նրան, վոր բեղիկների անախորժ չվոտն այս անգամ կդրդի ավելի զգալի ձևով հրել իրենից Անուշին: Ցեվ այն ժամանակ, հարկավ, տիկինը պիտի վիրավորվեր ու վշտանար: Ի՞նչ անբնական յերեվույթ: Զարմանալի է, այո՛, զարմանալի, վոր հենց այդ բեղիկները նրան խելքից հանեցին: Ի՞նչ անբնական յերևույթ, ի՞նչ ծաղր բնության: Կինը պետք է կին լինի իր բոլոր արտաքին հատկանիշներով. իսկ այդ բեղիկնե՞րը... Ֆո՛ւ... Իսկ այդ կոպիտ բարիտո՞նը... Ֆո՛ւ...

Բոցավեղ կրքերի հնոցի մեջ այդ վայրկյանները միայն ծխի մուխ

կետեր էին, որոնք հայտնվում էին և իսկույն չքանում: Իսկ հնոցը վառվում էր դեռ նախկին ուժով: Պատահում էր, որ Միքայելը քիչ էր մնում իր գրկի մեջ խեղդեր Անուշին, չեթե մեկն ուժը պատեր խեղդելու: Ցեվ յերբ քաժանվում էր նրանից, սիրտը լիզվում էր ինքնապահպանության շշացուցիչ զգացումով: Բայց, նա մի անզիմադրելի, սըրտակեր առյուծ է, մի անզուսպական գևր, որի հրապույրն ընդունակ է կուրացնել ամենատաքինի կանանց ու ձգել նրա գիրկը, ինչպես ձգեց այդ կնոջն այդպես շուտ և այդքան հեշտ... Ինչո՞ւ, ուրեմն, մեկն այս հաղթությամբ բավականանալ և ավելի հեռու չգնալ...

XI

Անցել էր յերկու շաբաթ Բյափմա–բեզի մոտ տեղի ունեցած որդիայից: Այդ որից Սմբատին չէր հաջողվում Միքայելին տեսնել առանց այնպես, որ կարողանար հետը լրջորեն խոսել կոնտր–կտակի մասին: Ճշմարիտ է, խնջույքի հետևյալ որը Միքայելը նրան դրականապես հայտնել էր, թե դիմում է դատարան, բայց մինչև այժմ դեռ այս մասին լուր չկար:

Տասը տարի յեր Միքայելը դիշերը ցերեկ և ցերեկը դիշեր էր դարձրել: Տուն էր գալիս դիշերվա յերեք–չորս ժամից վոչ առաջ, քնում էր մինչև յերեկո, զարթնում, մի բաժակ թեյ խմում և անհայտանում: Թե ուր և վորպեսի կյանք էր վարում — այժմ այս զաղտնիք չէր Սըմբատի համար: Այժմ նա ճանաչում էր այն սպանիչ մթնոլորտը, ուր հավլում էր նրա յեղբոր յերիտասարդ կյանքը:

Նա ուզում էր տեսնվել Միքայելի հետ և խնդիրը լուրջ հողի վրա դնել: Կոնտր–կտակը կրում էր հանդուգնական իսկական սատրապություն: Նա ինքն սպաց Միքայելին, թե կեղծիք է, չեթե իրավ կեղծիք է, շատ ճարպիկ և ճեռնարկված: Նա յեղբորն ընդունակ չէր համարում այդչափ վտանգավոր խարդախության: Ցեվ համոզված էր, վոր ուղիղ ճանապարհից չեղոքն այս դեպքում վեսա Մարութխանյանն է, մի մարդ, վորին ատում էր ամբողջ հոգով: Այդ մարդը վոչ միայն Միքայելին և Արշակին էր լարել նրա դեմ, այլև իր կնոջը: Գրեթե ամեն որ Մարթան դալիս էր մոր մոտ և բողոքում, վոր Սմբատը «խլել է» նրա մասը ժառանգության: Մի անգամ նա այս մասին խոսեց Սըմբատի հետ և ասաց մի քանի կոպիտ խոսքեր: Ռուբը ու յեղբայրը փշտացրին միմյանց, և Մարթան դուրս յեկավ ծնողների տնից արտասուքն աչքերին:

Նույն որը Սմբատը վճռեց տանը մնալ, սպասել Միքայելի զարթնելուն: Իրիկնադեմ էր արդեն, յերբ, վերջապես, սպասավորը հայտնեց, թե Միքայելը զարթնել է: Սմբատը չտապից նրա սենյակը: Միքայելը մեսաքսե խալաթը հագին, թեյ էր խմում: Նա ընդունեց յեղբորը դլխի թեթև շարժումով, վորպես մի ուսար ու աննշան հյուրի: Գունատ էր, ինչպես միշտ, աչքերի տակերը կապտած, յերեսը թորշոմած:

Սմբատը խնդրեց նրան մի անգամ ել ցույց տալ կտակը: Միքայելն ասաց, թե կտակը մոտը չե, այլ դատարանում, սակայն միքանի րոպե անցած հանեց գրպանից բանալիների կապոցը և բաց արավ սեղանի անթիվ պարաններից մեկը:

Սմբատը հանեց ծոցի գրպանից հոր միքանի ատորպրները՝ գանագան պայմանագրերի և հաչիվների տակ, ուշադիր համեմատեց կտակի ատորպրության հետ: Մատու չափ ատրբերություն չկար: Նույն գըլխատառերը, տառերը, ընդգծումը և նույն յերկայնությունը ատորպրի: Կասկածի վերջին նշույլը պիտի վտարտվեր: Բայց մի բան դարձյալ չհոթեցնում էր Սմբատին: Չեթե արդարև ճիշտ է կտակը, ինչո՞ւ ուշացնում են և չեն ներկայացնում դատարանին. չե՞ վոր նա միքանի անգամ դրականապես հայտնել է, թե կամավոր մի թուղթ դիջումն անգամ մտադիր չի անելու: Չեթե Միքայելը տատանվում է, Մարութխանյանը չպիտի տատանվի. այդ մարդու համար գրպանի չահը բարձր է բոլոր սղղակցական և բարոյական չահերից:

Միքայելը դարձյալ առաջարկեց նրան հաչտությամբ գործը վերջացնել: Չեվ նա այս անգամ ել դրականապես մերժեց: Բանն այն է, վոր քաղաքում արդեն լուր էր տարածվել, թե նա ապօրինի յե տիրացել հայրական ժառանգությանը: Պարզ էր, վոր չեթե պիջողություն աներ, մարդիկ ավելի պիտի համոզվեին, թե իրավ նա ապօրինի ժառանգ է: Նա սկսեց համոզել Միքայելին, թե դատարանը կտապացուցանի կոնտր–կտակի կեղծիքը, և նա կկորչի իր դաչնակցի հետ: Այդ դաչնակիցը վտանգավոր մարդ է, վուլթ չէ, վոր նրանց վեսան է: Նա իր ամբողջ կարողությունը դիզել և խարդախ միջոցներով:

— Չես Մարութխանյանին շատ լավ եմ ճանաչում,—ընդհատեց Միքայելը,—բայց այս դեպքում նա խարդախ չէ: Վերջապես, ի՞նչ գործ ունիմ նրա հետ. չես ուզում եմ լինել հարուստ, ինքնագլուխ, ազատ և վոչ թե քո վողորմելի պրեկաչչիկը...

— Կատարիր մեր հոր կամքը և կլինես ինձ հետ հավասար ժառանգ:

— Այսինքն՝ ամուսնանամ, հա՛, հա՛, հա՛: Դու չա՞տ բախտավոր ես, վոր ինձ խորհուրդ ես տալիս ամուսնանալու: Հը՞մ. սրտիդ հիվանդ տեղին դիպա, հասո՞: Եե՛, բարեկամ վորքան ուզում ես ինձ չատրատան համարիր, բայց չես ել քիչ թե շատ խելք ունիմ:

— Չես բախտավոր եմ իմ զավակներով:

— Զավակներո՞վ,—այդ կարող է լինել, բայց շատ քիչ է: Ինչո՞ւ

չես ասում «և նրանց ծնողով»: Դժվար է, չէ՞: Այո՛, վորովհետև սուտ ասած կլինես:

— Իմ կինը շատ խելոք և առաքինի կին է:

— Հենց դո դժբախտությունն էլ այդ է: Եթե խելոք և առաքինի չլիներ, հանգիստ խղճով կարող էիր յերես դարձնել, իսկ այժմ վախենում ես հասարակական կարծիքից...

— Ձես հասարակական կարծիքից յերբեք չեմ վախեցել, ասացի ես, վոր հենց հակառակ այդ կարծիքի չեմ ամուսնացել:

— Ուրեմն դավակնե՞րդ են ալդելում: Տեսնո՞ւմ ես. վոր կողմ նայում ես — թարսություն: Մեկը դավակներին է սիրում, կնոջն ատում, մյուսի կինն է դավաճանում, յերրորդը՝ ուղղակի չի հաչվում կնոջ բնավորության հետ: Ցավ այսպես, վոր կողմ նայում ես — ընտանեկան դրամա: Իսկ դու ուրում ես, վոր յես էլ մի այդպիսի խըղճալի հերոս դառնամ: Վո՛չ, բարեկամ, ավելի լավ է չաուլատան մնալ: Վերջապես, ինչի՞ս է հարկավոր կինը, քանի վոր ուրիշների կանայք կան: Հենց այսօր, մի ժամից հետո յես կլինեմ ուրիշի կնոջ մոտ...

— Միքայել, քո անբարոյականությունը չափ չունի...

— Ի՞նչ, ինչ ասացի՞ր, անբարոյականությո՞ւն, հա՛, հա՛, հա՛: Հիանալի բառ: Գիտե՞ս ինչ, սիրելիս, դալուդ որից դու իմ վերաբերմամբ բռնել ես ուսուցչի դիրք: Իհարկե, իրավունք ունես, քանի վոր, հա՛, հա՛, հա՛, որինավոր կտակի մեջ մեր հայրը քեզ վրա պարտք է դրել՝ ինձ ուղիղ ճանապարհի բերել: Բայց դրանից, չե՞ վոր մեծ յեղբայրը ես, այն էլ մեծ ոտամով: Իսկ յես ո՞վ եմ: Թերուս, տգետ, անբարոյական: Բայց լսի՛ր. յես ատելով ատում եմ այն բանը, վոր մտքումդ ինձ համարում ես վչացած: Այն յերեկո Ադելբեկովի տանը արյունս դլխովս եր տալիս, յերբ ինձ վրա ներողամիտ — ցավակցական հայացքներ եյիր ձգում: Ձգում եյիր, վոր դու մտքումդ ինձ խըղճում ես: Ո՛ր, շատ եմ տեսել քեզ պես հերոսներ: Ահա մեր քաղաքի բոլոր բժիշկները, իրավաբանները, ինժեներները. նրանք էլ են խոսում ուրիշների բարոյականության մասին, քանի վոր նոր են, իսկ հետո, յերբ մանում են կյանքի մեջ, յերեսներն ուռցնում են ու կարմրեցնում, բարոյական սկզբունքները թափում են ծովը, դրպանները լեցնում, ուղեղները դատարկում: Ընկերանում են յերեկվա մաքսանենգին էլ, իրենց աղանելից գողացած վողերով մարդ դարձած պոլիկաչեիկներին էլ, կեղծ սննդակացածներին էլ, անկեղծ ապուշներին էլ, ինձ նման փչացածներին էլ: Մտնում են միևնույն ճահճի մեջ և, յերևակայելով, վոր ժամանակի թևերի վրա յեթերը են բարձրանում, որ-որի վրա խրվում են մինչև իրենց կոկորդը: Նայիր, սիրելիս, խղճալներ կունենաս, չլինի նավթահորի մեջ թաղես, դգո՛ւյշ, և միայն քո մասին

մտածիր... Ցտեսություն, յես պիտի գնամ ուրիշի կնոջ մոտ... Իսկ կտակը... իսկական է: Եթե չես ուզում դատարանները քաչքշեն քեզ, առայժմ վաղը ինձ համար պատրաստիր հինդ հազար ռուբլի... Ցտեսություն...

Նա անցավ ննջարանը՝ հագուստը փոխելու:

Սմբատն աչքերով ուղեկցեց նրան մինչև դռները, ուսերը թոթափելով: Արդյոք, դա մի գեղեցիկ պատճառաբանություն չե՞ աներդներով լի, վորին պիտի դդուչ մոտենալ՝ ձեռները չխայթելու համար: Ինչ-չեե. այդ յերևույթը դուրկ չե խելքից, նույնիսկ սրամտությունից: Բայց այնուամենայնիվ Սմբատը չի խաբվիլ այդ խարդախ թըղթով, կպահպանի իր իրավունքները: Չի խաբվիլ և՛ այդ պերճախոսությունով, կաչխատի ուղիղ ճանապարհի բերել հարազատ յեղբորը:

Մյուս որը Միքայելը մտավ գրասենյակ և կլինեց, թե իրեն հինդ հազար ռուբլի չե հարկավոր: Սմբատը մերժեց:

— Շատ լավ,—ասաց Միքայելը,—Մարուքխանյանից կվերցնեմ ապագա ժառանգության հաչվին:

Այդ որից յերկու յեղբոր հարաբերությունները ավելի լարվեցին: Մարուքխանյանն անընդհատ գրգռում եր Միքայելին վոչ այնքան դատ բանալու յեղբոր դեմ, վորքան ճանճրացնելու ամեն որ կնոջ-կտակի միջոցով: Այդ մարդուն կատաղեցնում եր Սմբատի ատելությունը, և նա դիշեր-ցերեկ խորհում եր. ի՞նչ միջոցներ գտնի հակառակորդին հաղթելու համար: Մի՞թե Սմբատը պիտի անպատիժ վայելի այդ ահագին հարստությունը. նա, վոր չի աշխատել, չի մտածել և հանկարծ տիրացել է միլիոնների: Վո՛չ, դա անարդարություն է, և Մարուքխանյանը յերբեք չի թույլ տալ այդ տղային հանգիստ վայելելու հայրական վողերը: Նա գիտեր, վոր Սմբատն ատում է իրեն, մտքում համարելով խարդախ: Ցավ այս հանգամանքն ավելի յեր բորբոքում նրա թշնամական զգացումը: Սակայն նա չեր կորցնում իր ատելությունը և արտաքուստ տակավին վարվում եր Սմբատի հետ բարեկամաբար: Իսկապես նա ինքը հույս չուներ կոնտր-կտակի գործության վրա: Դա մի միջոց եր Սմբատին վախեցնելու և դրդելու, վոր նա գեթ մասամբ զոհացնի իր քրոջը, տալով նրան ժառանգությունից մի վորևե մաս: Մյուս կողմից՝ կտակը հնարել եր, Միքայելին իր ձեռների մեջ առնելու համար, և արդեն առել եր: Այժմ նրանք իրրև դաշնակիցներ կապված եյին այլևս խարդախ ձեռնարկության բոլոր հետևանքներով և Մարուքխանյանը գգում եր, վոր Միքայելն առանց նրան վոչ մի քայլ չի կարող անել: Իսկ այս հանգամանքը ձեռնտու յեր նրան մի այլ նպատակի համար: Նպատակ, վորին հասնելն ավելի դյուրին եր համարում, քան Ալիխյան ժառանգությունից մի բան ստանալը և դուցե ավելի արդյունավետ...

Մարութխանյանը քաղաքում վայելում էր հարգանք: Թե ինչ անցյալ էր ունեցել և ինչ միջոցներով հարստացել — այս մոռացվել էր բոլորի կողմից: Նա բավական հայտնի գործարանատեր էր, խելոք վաճառական — այսքանը հերիք էր: Նա դիտեր իր դիրքը պահպանել բոլորի հետ և վոչ մի առիթ ձեռքից բաց չէր թողնում՝ իր վարկն այսպես կամ այնպես բարձրացնելու համար:

Ահա այսպիսի առիթ համարեց նա թեմական առաջնորդի ներկայությունը և մի որ նրան հրավիրեց ճաշի իր գործարանը, վոր գտնվում էր Սև քաղաքում:

Սև քաղաքը, արդարև, սև էր, վորպես կախարդական մի աշխարհ, վոր կրում էր իր վրա առավածային անեծքի դրոշմը: Գիշեր-ցերեկ ծխնելույզներից առատորեն դուրս սլացող մուրը ներկում և ապականում էր ամեն ինչ, վոր կար այստեղ, սկսած չինուհյուններից մինչև յերկինն ու թռչունները: Մթնոլորտը մշտապես ողողված էր թանձր ծխով, վորի միջով արեգակի ճառագայթները հազիվ-հազ տարածում էին յերկրի վրա մի տեսակ պղնձագույն լույս: Փողոցները լի էին նավթային վտաներով ու ճահիճներով, վոր չրջապատված էին ամեն տեսակ աղտեղություններով: Աչքին մրից սևացած խոզերը, խորթալով ու միմյանց դնչահարելով, ուտելիք էին վորոնում, իսկ չքավոր կանայք դույլերով նավթ հավաքում: Գետնի յերեսին և գետնի տակ տարածված էին անթիվ մետաղային խողովակներ: Լսվում էր նրանց միջով հոսող նավթի ձայնը, վոր հիշեցնում էր մերթ ծղրիդների յերգը դիշերային խավարի մեջ, մերթ մուրճի ծանր հարվածներ մի անելուկի դարբնոցում: Դա նավթային արդյունաբերության դարկերակներն էին — բյուրավոր մարդկային եյակների դժոխային աշխատանքի և միայն մի քանի տասնյակ բախտավորների հարստության չափը:

Մարութխանյանի գործարանը գտնվում էր Սև քաղաքի կենտրոնում: Դա մի ընդարձակ չինուհյուն էր, դանազան բաժանմունքներով: Բակը չրջապատված էր մարդու հասակից քիչ բարձր քարե պարսպով և լի անթիվ պարագաներով: Ցերեկում էին յերկաթի նավթային չոմարաններ, լայն, բարձր, դմբեթաձև, այս ու այն կողմ ցրտղավորված խողովակներ գետնի վրա և ոդի մեջ, ջրմուղներ, կոտրած կաթսաներ, լինչ-վոր անիվներ, ծորակներ: Մերթընդմերթ չինուհյուններից դուրս էին գալիս լինչ-վոր մարդկային եյակներ, կեղտոտ, վոտից մինչև գլուխ թաթախված սև հեղուկի մեջ, կիսամերկ, մռայլ, վորպես վարել էր սև աշխարհի բնակիչներին:

Մի յերկհարկանի տան ընդարձակ պատշգամբի վրա ժողովվել էին քաղաքի հայտնի հայ գործարանատերերը, հանքատերերը, նավթալանները, տոկոսատուները և ինժեներները:

Նորին սրբազանությունը չէր յերևում: Հյուրերը նրան էին սպասում, վոր սեղան նստեն: Այստեղ եր և Միքայելը՝ իր բոլոր ընկերների հետ: Մարութխանյանը վոչինչ չէր խնայել ճաշը կարելիին չափ բազմամարդ և չքեղ դարձնելու: Նա հրավիրել էր նույնիսկ թիֆլիսի Մարզպետունուն, այն մարդով, վոր ճաշի նկարագրությունը տպվի լրագրում:

Այստեղ էր նաև Պետրոս Ղուլամյանը: Միքայելն անվրդով մոտեցավ նրան, սեղմեց ձեռը, հարցրեց առողջության, ընտանիքի և գործերի մասին: Պետրոսը հաճույքից հալվում էր, վոր միլիոնատերի վորդին այնքան ուշադիր և պեսի մի հասարակ խանութպան: Բայց վորովհետև ավելի գործնական էր, քան վաստակեր, ուստի դարձյալ ակնարկեց նավթային հողի մասին: Յեվ Միքայելն այս անգամ խոստացավ Սմբատի նոր գնած գետնից մի կտոր եժան գնով տալ նրան: Մանուքյանի աչքերը վայելեցին չահամոլության կրքից:

Նորին սրբազանությունը ժամանեց: Հյուրերը հրավիրվեցին նստել սեղանի քով, վոր յերկու շար բացված եր մի ընդարձակ դահլիճում: Սեղանապետ ընտրվեց Սրաֆիոն Գասպարիչը, վոր հազել եր նոր մունդիր, յերեսը նոր սափրել ավել, և բեղերը սանրել առանձին խնամքով:

Միքայելն իր ընկերների հետ բռնեց սեղանի վերջին անկյունը: Այստեղ նրանք կարող էին ազատ խոսել, ծիծաղել, պվարճանալ: Միայն Գասպարյան Թուլլ չտվեց երեն նրանց միանալ և իրրև ամենապատվավոր հյուր, տանտիրոջ առաջարկությամբ, հարուստ ու ամենապատվավոր հյուր, տանտիրոջ առաջարկությամբ, նստեց սրբազանի մոտ: Այսպես նա տրամադրված եր շատ լուրջ: Շրջանը նեղ ընկերական չէր, այլ հասարակական, իսկ նա ամբողջ քաղաքում հռչակված եր ազգասեր, բարերար և հասարակական չահերի անձնվեր գործիչ: Սրբազանի առաջարկեց սրբազանի կեղծ նախանձախնդիր... Յերբ սեղանապետն առաջարկեց սրբազանի կենացը, Գասպարյան կամեցավ «յերկու խոսք» ասել և վոտքի կանգնեց:

— Սրբազան ըբը, պարոններ ըբը,—սկսեց նա,—մունք հայերս դե վոր լա՛ ըբը մի յեկեղեցի ունինք:

— Ունինք,—չչնջաց Գրիշան ընկերական չրջանում:

— Յես լա ընդրա հարազատ պվակը լինելով, ասում եմ, վրեր ըբը պարտավոր ենք պահել ըբը, դրա համար ել խոսում եմ լա...

— Դարդուբարա՛,—չչնջաց դարձյալ Գրիշան:

— Ընդրա ըբը ըսպասավորին կենացը, ցանկանալով ըբը, վրեր...

Գասպարյան կանգ առավ, նայեց սեղանապետի բեղերին: Այնտեղ խոսքեր չգտնելով, ցուցամատը սուզեց գինով լի բաժակի մեջ, ուր լողում եր մի ճանճ:

— Մի խոսքով,—չարունակեց, ճանճը մատի ծայրով գցելով հա-

տակի վրա,—ինչ ըրը գլուխներդ ցավացնեմ ըրը լա մեր սրբազանին կենացը, խնդրում եմ, ըրխ ել չերկենաք աննի...

Բոլորը տեղերից բարձրացան, գոչելով.

— Կեցցե՛ սրբազանը, կեցցե՛ Առաքելյանը...

Սրբազանն առաջարկեց «տեղական համայնքի» կենացը: Նույնպես առենաբանեց: Դրվատեց «համայնքին», գովեց նրա «ընտիր դասի» ազգասիրությունը, բարեսրտությունը, առատաձեռնությունը, առաքինությունը, անհուն խելքը:

— Զո՞ւյդ, թե՞ կենա,—հարցնում եր Մոսիկոն Մելքոնին:

Հետո սրբազանը դարձավ նոր սերնդին, խոսեց չերիտասարդության մասին, հայտնեց իր համոզմունքն ելեկտրական լույսի վերաբերմամբ, համեմատեց նրան տեղացիների խելքի հետ: Ասաց, թե տեղական չերիտասարդությունը բոլոր հայ չերիտասարդությունից լուսամիտ ե, աստվածավախ ե և հզորամիտ:

Այդ միջոցին Գրիշան չարաչար հայհոյում եր ոսկերեսային դերասանուհուն, վոր գալաճանել եր նրան: Մելքոնը դանդաղում եր, թե մի չարաթ ե իր կինը հիվանդ ե, և ինքն ստիպված ե չերեկոները տասը ժամից հավի պես տանը թառ լինել: Իսկ Մոսիկոն համոզում եր նրանց չերեկոյան «մի թեթև վերտուչկա» սարքել:

Սրբազանը նստեց տեղը, քրտինքը սրբելով:

Դադրճյալ քանի մի ընդհանուր կամ պաշտոնական կենացներ, և սեղանը տաքացավ: Հերթը հասավ ազատամիտ Տեր-Աչոտին և պահպանողական Տեր-Սիմոնին, վորոնք մի մյանց ջգրուռ առաջարկում եյին իրենց հարուստ ծխականների կենացները:

Մարզպետունին սաստիկ չարացել եր մտքում: Վոչ վոք չեր առաջարկում մամուլի կենացը: Այնինչ, նա արդեն մտքում չարադրել եր այս մասին առենաբանություն, վոր պիտի ասեր իրրև մամուլի ներկայացուցիչ:

Շշնջյուն տարածվեց, թե Պապաչան մոռացել ե սեղանի տաք միջոցին առորագրություն բանալ Եջմիածնի ոգտին:

Արդարև չատ չքաշեց, նա վոտքի կանգնեց և սկսեց առենաբանել: Խոսքերը քանի գնում ուժով եյին դուրս գալիս կոկորդից. մերթ նայում եր բաժակին, մերթ սրբազանի վեղարին, մերթ փողկապն ուղղում: Ձեռի մյուքը հասկանալի չեր. առորագրության թերթը դրած ե սենյակի անկյունում, կլոր սեղանի վրա: Ցանկացողները թող մոտենան և առորագրեն:

— Ուրիշների փողերով ազգասիրություն ե անում,—չշնջացին մի քանիսը:

Վոմանք կամացուկ դուրս սլկվեցին: Նույնը կփափագեր անել և Մարուքխանյանը, բայց ո՞ւր փախչեր իր տնից:

— Հարուստները չեն գալիս, գոռգ ի՞նձ ե պատում,—ասաց նա Պապաչային, ակնարկելով Սմբատ Ալիմյանին, վոր ներկա չեր ճաշին:

Մարզպետունին միանգամայն կատաղեց, չերբ հայտնվեց, թե մի քանի րոպեյում առորագրվեց մի քանի հազար ռուբլի: Ինչո՞ւ միշտ ես Եջմիածնին: Պետք ե վերջ տալ այդ «մուրացկանության»: Ցեվ նա հուշատետրը ծոցից հանեց: Այդ միջոցին խորամանկ Պապաչան ինչ-վոր չչնջաց նրա ականջին, և նա հուշատետրը ծոցը դրեց:

Առորագրաթերթը հանձնեցին սրբազանին, վոր և միանգամայն հավիչտակվեց համայնքի «ընտիր դասի անհուն ազգասիրությամբ»: Ճաշն ավարտվեց սրբազանի պահպանիչով: Հյուրերը ցրվեցին:

Վերջին կառքում նստած եյին Մարուքխանյանը և Միքայելը:

— Ի՞նչքան առորագրվեցիր,— դարձավ գործարանատերն իր աներձադին:

— Հարյուր:

— Հա՛, հա՛, հա՛,—ծիծաղեց համարձակ,—յես յերեք հարյուր, դու հարյուր, այ ինչ ասել ե վոչ չունենալ: Ցեղբայրդ կարող եր տալ հազար... Նա ունի, դու չունես...

Միքայելի ինքնասիրությունը վիրավորվեց:

— Լռի՛ր,—ասաց նա խստորեն:

— Մեր առջևի կառքում նստած հաստավիզը ո՞վ ե,—հարցրեց Մարուքխանյանը, հանկարծ խոսքը փոխելով:

Գինին նրա վրա բարերար ներգործություն եր ունեցել, լեզուն բացվել եր:

— Պետրոս Ղուլամյանի վիզն ե,—պատասխանեց Միքայելը:

— Կեցցե՛ս, ղոչաղ ես, Աստված վկա, ղոչաղ ես,—գոչեց Մարուքխանյանը, և նրա կանանչ-դեղնագույն աչքերը խորհրդավոր ժպտացին:

Միքայելը չհոթվեց այդ աչքերի արտահայտությունից:

— Վոչինչ,—ավելացրեց Մարուքխանյանը,—մարդ ենք, մահկանացու յենք, մի՛ կարմրիր, ամուրի ժամանակ յես ել շատ խաղեր եմ խաղացել:

— Բայց դու սխալվում ես տիկին Ղուլամյանի մասին,—ասաց Միքայելը, սակայն այն յեղանակով, վոր ցույց եր տալիս, թե Մարուքխանյանի ասածը չատ ել խելքից հեռու բան չե:

— Ցես չեմ սխալվում, ուրեմն, բարեկամս ե սխալվում: Նա յեքեզ տեսնում տիկնոջ մոտից դուրս գալիս: Ղուլամյանների հարևանն ե: Հասկացա՞ր. լավ, մեր մեջ կմնա, մի վախենար, չարունակի՛ր...

Կառքը կանգ առավ ճանապարհի բերանին, վորովհետև նրա առաջը կապեցին մի յերկայն ճողով: Սուլելով ու թառանչելով, վորպես մի

կենդանի, մի հրեշ, անցավ չոգեկառքը, յետևից քարշելով նավթային վագոնների յերկայն շարը: Նրա սուլոցի ձայնը, գործարանների կաթսաների տակ վառվող կրակի և անթիվ խողովակներից դուրս սլացող չոգու բոմբյունը չվոխեցնում էին մարդու լսողությունը: Թվում էր, վոր այստեղ տեղի ունի մի ինչ-վոր անխմանալի պատերազմ, և այդ խլացուցիչ ժխորի մեջ կռվում են բյուրավոր չար վոգիներ:

— Մտիկ արա,—խոսեց Նորից Մարուքխանյանը,—աշխարհը կլանել և այդ Նոբելը, ելի չի կշտանում: Ղոչա՛ղ...

Նա ցույց էր տալիս մի ահագին գործարան, վոր դրավել էր Սև քաղաքի կեսը:

— Սիրում եմ այդ տեսակ մարդկանց,—չարունակեց անտսվոր յերանդով, սրելով հատուկի բեղերի առանց այն էլ սուր ծայրերը,—դիզում են դիզում, ելի քաղցած են... Միայն ծուլերը կարող են նրանց ագահ համարել... Ունես, աշխատիր կրկնապատկել, յեռապատկել, տասնապատկել: Ինքը քիչ է, խլիր հարևանիդից, ընկերիդից, յեղբորիդից: Ճանկերդ սրիր ու ընկիր աշխարհի հոգին հանիր, մի՛ նրբատիր ու պատառ կինոջ պես սրան ու նրան նախանձիր: Վո՞ր վաճառականը կարող է մի տերության հավասարվել: Կարդա՛ լրագրները և տես, վո՞ր զորեղ տերությունն է մեր ժամանակում կուչտ: Տասը տարի առաջ չես մի նոտարիուսի ոգնական էլի և մտմտալով վատատրան, այժմ կես միլիոն կարողություն ունես: Ախ՛, ունես. չեմ թաղցնում: Ինչո՞ւ չպիտի աշխատեմ կեսը մեկ դարձնել, մեկը յերկու, յերեք, հինգ, տաս...

Նա չարունակեց նույն ուղղությամբ: Առաջ ամեն մի խանութպան վաճառական էր համարվում, ամեն մի կաթսայի տեր — գործարանատեր, ամեն մի կոտրած նավակ ունեցող — նավատեր: Այժմ ո՞վ և նրանց մարդու տեղ դնում: Այժմ վոքրերը կուլ են գնում մեծերին, իսկ մեծերը, վոքրերին անխնա ուտելով, որից-որ ուռչում են, փըքվում ու մեծանում: Ահա ինչու նա չի ուզում վոքր մնալ, վորպեսզի այսօր-վաղը մի մեծ բերան նրան կուլ չտա վոստրեյի պես...

— Փո՛ղ, փող ու փող,—դռնչեց նա, ընկնելով մի տեսակ ինքնամոռացության մեջ: Նա յե աշխարհի հավատը, սերը, Աստվածը: Մի՛ խակ, բա՛ց արա աչքերդ, մի՛ թողնիր, վոր յեղբայրդ տանի հարստությունդ, ուտեցնի կնոջն ու զավակներին: Զոքի՛ր վրդն, վախեցրո՛ւ կեղծ կոտակով: Չի վախենում, դա՛ս բաց արա անվախ: Ճես զգուշ մարդ եմ, բայց ելի ռիսկ սիրող եմ, ով վոր չպիտե ռիսկ անել, չի կարող մեծանալ, բայց զգուշ, ելի զգուշ: Գործ դիր բոլոր միջոցները, խլիր յեղբորդ ձեռքից հորդ միլիոնները: Բեր բաժանենք յերեք տեղ, հետո ելի միացնենք, կազմենք մի մեծ ընկերություն, նոր նավթահողեր առնենք, նոր հորեր սկսենք փորել տալ, չինել տանք մի մեծ

գործարան, պնենք նավեր, չոգենավեր: Բաց անենք աշխարհի բոլոր կողմերում գործակալություններ, սկսենք մրցել ամերիկացիների հետ, և մեկ ել տեսար դարձանք նավթային թագավորներ: Մեր անունն որորի վրա կտարածվի աշխարհի բոլոր կողմերում, բոլորը կխոնարհվեն մեր առջև, դլուխ կտան, կլիզեն մեր փեչերը: Այն ժամանակ կսկսենք նստել-վերկենալ վոչ թե Թաթոս-Մաթոսների, այլ Ռոդչիլդների, Վանդերբիլդների պես հսկաների հետ, վորոնց առջև մինչև անգամ տերություններ են խոնարհվում: Ճեվ հետո դու կտեսնես, թե ինչ ասել և իսկական կյանք:

Վորքան նա վոգևորվում էր, վորքան նրա ծրագիրները մեծանում էին, այնքան ինքը վոգբրանում էր կառքի վրա, այնքան կուչ գալիս Միքայելի մոտ և նմանվում մի մեծ տղրուկի, վոր պատրաստվում է Միքայելի մոտ և նմանվում մի մեծ տղրուկի, վոր պատրաստվում է ծծել իր հարևանի արյունը: Վերջապես, նա բոլորովին կուչ յեկավ, ծծել իր հարևանի արյունը: Վերջապես, նա բոլորովին կուչ յեկավ, դարձավ մի կծիկ, դլուխը մոտեցրեց Միքայելի ծնկներին, բռնեց յերկու ձեռներով նրա մի ձեռը, ամուր սեղմեց և բերանը բաց արած, ձեռնասուն կապիկի պես, նայեց նրա աչքերին, կարծես, ձգտելով ամբողջ էությամբ մտնել այնտեղ:

— Միխակ, Միխակ,—դռնչեց նա, յեղանակը փոխելով և գրեթե աղերսալի ձայնով,—Սմբատը խելոք տղա յե: Նա քեզ կկարթի, դու ազերսալի ձայնով,—Սմբատը խելոք տղա յե: Նա քեզ կկարթի, դու աղ

Միևնույն է, յեթե ինքը չհայտնի, վաղ թե ուշ Պետրոսը պիտի լսա նա: Արդեն, կարծես, սպասավորն ու աղախինը կասկածելի աչքով են նայում Միքայելի հաճախակի այցերին: Այսպես չարունակել անհնարին է. խաբելն այնքան դժվար չի յեղել, որքան խաբերայությունը թագցնելը: Նա տանջվում եր հանցանքի ծանրության ներքո և կարծում եր, յեթե խոստովանի ամուսնուն, կթեթևացնի իր տանջանքը:

Մի որ, յերբ այս մասին խոսում եր, Միքայելը մատների ծայրերով չվեց նրա ծնոտն ու ասաց.

— Անուշ, դու յերեխա յես:

Յեվ «յերեխա» բառն արտասանեց այնպիսի փաղաքշական յեղանակով, այնպիսի փափուկ ձայնով, վոր Անուշի սիրտը լցվեց հաճույքով: Սիրականից մի քանի տարով մեծ կինը մոռացավ իր դրությունը, միայն այդ բառը լսելով: Յեվ այդ որից աշխատում եր յերեխա ձևվանալ Միքայելի մոտ. կռվում եր անուշ կատակով, յերեսը դարձնում եր պատին ու լալիս:

Սակայն մի որ նա դարձյալ խոսեց բաժանման մասին: Այս անգամ հայտնեց, թե պատրաստ է նույնիսկ յերեխաներից ձեռ վերցնել, միայն թե Միքայելն իրեն պատկանի և ինքը — Միքայելին:

Խնդիրը քանի գնում, այնքան լուրջ կերպարանք եր ստանում: Հարկավոր եր մի վորոշում կայացնել: Միքայելը բացատրեց, թե ինչ ասել է ղավակները, թե Անուշը մի որ անգամ չի կարող առանց նրանց խաղաղ ապրել, թե հասարակությունը կքարկոծի նրան, թե պիտի հեռատես լինել, ապագան լավ կշռել և այլն, և այլն: Իսկ մի որ ավելի հեռու գնաց. ակնարկեց, թե պատրաստ է Անուշի հետ հրապարակորեն կենակցել, միայն վախենում է, վոր տիկինը չուտով նրան էլ մոռանա և առ, ինչպես առում է այժմյան ամուսնուն: Աչխարհի յերեսին հավիտենական սեր չկա, Միքայելն էլ չուտով կձանձրացնի Անուշին:

Այս արդեն մի կողմից ակնարկ եր, թե ինքը՝ Միքայելն էլ կարող է նրան մոռանալ, մյուս կողմից՝ վիրավորանք: Յեվ Անուշի դեմքն աղավաղվեց չարությունից: Ա՛ա, ինչպես յերևում է, Միքայելը կըշտացել է նրանից, ուզում է գլուխն ազատել:

—Ճշմարիտ ես ասում, լավ կինը խակի չպիտի մոռանա իր յերեխաներին, այն էլ քեզ պես մարդու համար:

Նա սկսեց ուժգին հեկեկալ, գլուխը դնելով թախտի վրա:

Միքայելը մոտեցավ, դրկեց, բայց չհամբուրեց: Արդեն մեռած ամանման բեղիկները նրան թվում եյին սուր ասեղներ, վոր ամեն անգամ ծակծկում եյին նրա յերեսն ու չրթունքները: Մի ուրիշ անգամ նա, վերջապես, ձանձրանալով տիկնոջ թախանձանքից, խնդիրը դրեց պարզ: Ի՞նչ է Անուշն ինքն իրեն այդքան տանջում: Արժե՞ մի թե, նա վոչ առաջինն է, վոչ էլ վերջինն է լինելու: Թող մտիկ անի չորս կողմը և տեսնի, վո՞ր հիմարն է այս տեսակ կոմեդիան դրամա դարձնում:

Միտքը շատ հասկանալի յեր, ավելի բացատրելու կարիք չկար: Անուշը վրդովվեց, կատաղած բղոքեց, պահանջեց, վոր Միքայելն այսուհետև չհանդգնի այդ տեսակ վիրավորական մտքեր արտահայտելու: Նա չի կարող սիրուհի դառնալ, հասկանո՞ւմ է Միքայելը, նա անբարոյական չէ, ընկած չէ...

Այդ որից Միքայելը դարձյալ մի չարաթ չերևաց: Անուշն սկսեց մոռանալ վիրավորանքը, խորհեց սառնարյուն նրա ասածի մասին և վոքր առ վոքր հաշտվեց անհեթեթ մտքի հետ: Ճշմարիտ, վոր նա վոչ առաջինն է, վոչ վերջինն է լինելու: Ինչ կան թագուն ուրիշների սիրուհիներ, առերես հավատարիմ ամուսիններ: Թող մեկն էլ նա լինի: Վերջապես, հենց այժմ մի՞թե ինքը սիրուհի չէ և մի՞թե, ամուսնուց բաժանվելով, կմաքրի իր անունը: Ընդհակառակը, այն ժամանակ բոլորը կծիծաղեն նրա հիմարության վրա:

Հանցանքը վոքր առ վոքր դաղարում եր նրան ճնշել: Ո՞ւմ է դավաճանում:—Մի մարդու, վոր արդեն յոթ—ութ տարի յե ինքը դավաճանում է նրան: Իրավունքները հավասար են, այն տարբերությամբ, սակայն, վոր Անուշը դիտե Պետրոսի արարքները, իսկ Պետրոսը դեռ չգիտե Անուշի արարքը: Բայց այսպե՞ս է, արդյոք: Գուցե Պետրոսը դիտե...

Յեվ Անուշը վախենում եր Պետրոսից. նրա յերկյուղը ֆիզիկական եր ու ավելի զորեղ, քան բարոյականը:

Մի գիշեր, դանդաղ չար կասկածների տակ քնած լինելով, հանկարծ զարթնեց սարսափահար, բարձրաձայն գոռալով: Ցերազում տեսել եր, վոր Պետրոսը, ձեռին մի դանակ, մոտենում է իրեն: Բարձրացրեց լամպարիկի պատրույգը, սենյակը լուսավորեց, նայեց աչ ու ձախ, վոտքի կանգնեց:

Պետրոսը զարթնել եր նրա ձայնից և վերմակի տակից լուռ դիտում եր չարժումները: Նրա ուռած այտերն այժմ ավելի փքված եյին յերևում, ճաղատ գլուխը փայլում եր լամպարիկի լուսո ներքո, կարմիր չրթունքներն արձակում եյին քնարբի անճոռնի հնչյուններ: Անուշի աչքում դա մարդկային գլուխ չեր, այլ ինչ-վոր այլանդակ դումդ: Տեր Աստված, տեր Աստված, ինչպես կարողացավ մի այդպիսի մարդու դիրկն ընկնել: Թվում եր նրան, վոր Պետրոսը միշտ պիտի մարդու դիրկն ընկնել: Թվում եր նրան, վոր Պետրոսը միշտ այդպես է յեղել, միշտ կարմիր, ուռած, տգեղ, հրեշ: Նա չեր հիշում այդպես է յեղել, միշտ կարմիր, ուռած, տգեղ, հրեշ: Նա չեր հիշում այն վոչ այնքան դեր, աչխույժ, արագաչարժ, վառվռուն գործակատարին, վորով հափշտակվեց ինքը տարի առաջ:

Յերեսը զգվանքով հետ դարձրեց, պառկեց նորից անկողին:

— Ինչո՞ւ եմ տանում,—լսեց հանկարծ ատելի ձայնը, վոր սե-

նյակի լուսթյան մեջ նրա ականջներին հնչեց այնքան ղղվելի, այնքան յերկյուղալի, վոր ցնցվեց, գլուխը բարձրացրեց:

Վոչինչ չպատասխանեց, յերեսը չուռ տվեց պատին և գլուխը թազցրեց վերմակի տակ: Քանի մի վայրկյան անցած, լսեց Պետրոսի բորբիկ վոտների ձայնը դորգի վրա: Վերմակը մի կողմ չպրտելով, վախեցած վոտքի կանգնեց, ինչպես կատաղի հուշկապարիկ:

Նրա կուրծքն ուժգին բարձրանում եր ու ցած իջնում, մազերը թափվել եյին հասուկի ուսերի վրա, կոկորդի յերակները կապտել եյին և լարվել: Նա մի մարմնացած ղղվանք եր: Մինչդեռ Պետրոսը ձուլված կերք եր, ամեհի, անզուսպ: Միքանի վայրկյան կանգնած եյին դեմ ու դեմ լուռ, անշարժ, ինչպես յերկու հակառակ տարերային չար ուժեր: Անուշը հասկանում եր ամուսնու միտքը: Ո՛ր, գաղան, ով դիտե մի ժամ առաջ վոր սիրուհուդ ծոցումն եյիր, իսկ այժմ...

Նա յերկու ձեռով ուժգին հրեց իրենից մարդումն և անցավ մյուս սենյակ: Պետրոսը կամեցավ վազել նրա հետևից, բայց դռները մի վայրկյանում կողպվեցին, և նա մնաց կանգնած մեն-մենակ՝ վառված կրքերի հնոցի մեջ...

— Դու սիրական ունիս,—գոռաց նա և պառկեց անկողին:

Հետևյալ որն Անուշը Միքայելին դիմավորեց արտասուքն աչքերին: Փաթաթվելով նրա պարանոցին, հեկեկաց...

— Ազատի՛ր ինձ, ազատիր այդ մարդուց, ղղվում եմ, վախենում եմ...

Այնինչ, Միքայելին արդեն սկսել եր ճնշել ապորինի կապի հանցավորության զգացումը: Կրքերը հագուրդ եյին ստացել և տեղի տվել սառն մտախոհության: Կուրացած միտքը պարզվել եր և արտահայտում իր իրավունքները: Այն մարդը, վոր բնավ պղտոր զգացումները կին եյակի վերաբերմամբ վերլուծման չեր յենթարկել, այժմ հասկանում եր իր վատթար արարքը: Նա հավատացնում եր Անուշին, թե սիրում է և դիտեր, վոր սկսել է ղղալ ղեպի նա ղղվանքի պես բան: Նա մտերմություն եր ցույց տալիս Գրիշային և ղգում եր, վոր գողանում է նրա պատիվը: Նա ուզում եր հովանավորել Պետրոս Ղուլամյանին և զգում եր, վոր հանդգնաբար ցեխի մեջ վոտնատակ է անում նրա ամուսնական առաջատը: Քանի կարծում եր, թե հատարակություն վոչինչ չգիտե, դեռ այնչափ անհանգիստ չեր: Բայց Մարությիանյանը ձգեց նրան մտատանջության մեջ: Այժմ հանդիմանում եր իրեն, վոր յեռանդով չհերքեց այդ մարդու կասկածը և նույնիսկ, կարծես, ակնարկով հավանցնել տվեց, թե իրավ է նրա ասածը: Դա անները լի թեթև անմտություն եր, տղամարդի ունայն անտիսություն: Հաճելի յե յերևալ սրտակեր առյուծ, բայց հետևանքը...

Նա դադարեց այցելել Անուշին: Ցերեկ որ անցած ստացավ մի նամակ այն ժամանակ, յերբ տանն եր և ստացավ մոր ներկայությամբ: Այրվի հարցին, թե ո՞վից է, պատասխանեց, վոր Պետրոս Ղուլամյանն է գրում: Նա չեր կարող Ղուլամյան անունը չհիշել, վորովհետև նամակը ներս բերող սպասավորին՝ Անուշի աղախնին՝ ճանաչում եր: Մըտքում կատաղեց Անուշի դեմ, վոր մի այդպիսի նուրբ հանձնարարություն եր արել աղախնին: Կարդաց նամակը և տխրեց: Բովանդակությունը հուսահատական եր, գրելու յեղանակն աղերսական: Բարվոք համարեց չպատասխանել և վոչ ել այցելել Անուշին: Հույս ուներ այսպիսով սառցնել տիկնոջը:

Սխալվում եր: Կրքերն այնքան կլանել եյին Անուշին, վոր քանի գնում խելքը կորցնում եր: Ցերկու որ անցած Միքայելն ստացավ յերկրորդ ծրարը: Այս անգամ արդեն Անուշի հուսահատությունը չափ չուներ: Այդպես չարունակել վտանգավոր եր: Հարկավոր եր կուրացած տիկնոջ անտակտության առաջն առնել: Միքայելը պատասխանեց, թե զբաղված է գործերով, ժամանակ չունի, թող Անուշը համբերի և այլն: Նամակի վերջում աղերսում եր վերջ տալ անմիտ թղթակցությանը: Փառք Աստուծո, նրանք դիմնադիտնի աշակերտներ չեն, վոր միմյանց սիրային նամակներով զվարճացնեն:

Ցավ միթե Անուշը չզիտեր, վոր իր արածը յերեխայություն է: Բայց ա՛յլ եր մտքի պահանջը, այլ՝ կրքերի ուժը: Տանջվել և լռել— Անուշի բնավորությանը հատուկ չեր: Ցավ ինչո՞ւ. նա տանջվում է, թող Միքայելն ել նրա հետ տանջվի: Զլինի՞ թե այդ յերիտասարդն այժմ կչատացել և, և մտքում ծիծաղում է նրա թուլության վրա, պարծենում է հաղթության արա ու նրա մոտ: Ինչո՞ւ չի պատասխանում նամակներին, ինչո՞ւ, ինչո՞ւ:

Անվերջ կասկածներից Անուշն որ-որի վրա զառնում եր մռայլ, մարդատյաց: Գոռում եր յերեխաների վրա տեղի-անտեղի. ծեծում, հալածում սենյակից սենյակ. շրթունքներն անխնա կրծոտելով սուբ հալածում եր ամենափոքրիկ կուլսն եր: Իննը ամսվա ընթացքում տանը մի որ մատը-մատին խփած չկար: Նստում եր ամբողջ ժամերով լուսամուտ առջև և, գլուխը ձեռի ափին հենած, նայում եր դեպի դուրս, այն դիմացի տան լուսամուտներին, ուր բնակվում եր մարդուն դավաճանող գեղեցկուհին: Նա այժմ ել նախանձում եր այդ կնոջը, վորովհետև նրա սիրականը գրեթե ամեն որ այցելում եր այդ կնոջը, և ահա յերանության գավաթը եր: Իսկ ինքը հազիվ սկսել եր ապրել

«Կանեմ, կանեմ, կանեմ», կրկնում էր մտքում նա, մատները կլծելով աչքերի առջև: Անխիղճ, դու չպիտի անպատիժ մնաս. չպիտի այն համոզմունքով ապրես, թե կարելի է սիրել կեղծ, անկեղծ սիրվելով, չուտով կչտանաս, չկշտացրած, խարել և յերես դարձնել...

Նա մատնում էր հայելուն, դիտում իրեն: Ախ, այս ի՞նչ է, խորշեր աչքերի տակ, բերանի անկյուններում, քունքերի վրա: Նաև սպիտակ մազե՞ր: Այսպես չո՞ւտ: Մի՞թե այս յերկու չաբաթվա տանջանքներից: Տեր Աստված, տեր Աստված, ինչո՞ւ տղամարդիկ այդչափ անխիղճ են, ինչո՞ւ չգիտեն, թե վորքան դառն է խաբող ամուսնու և խաբված սիրուհու վիճակը: Ինչո՞ւ, վերջապես, նրանց համար այդքան դյուրին է թիթեռի պես ծաղկից ծաղիկ թռչելը, իսկ կնոջ համար դըժվար, անկարելի, դոնե պայմանավորված հարյուրավոր վտանգներով: Անուշը դուրս կգար հենց այս ժամին, զուգված, զարդարված, կգտներ խաբողին և հենց նրա աչքերի առջև թևը կտար մի ուրիշին և այսպես կպատժեր խաբողին:

— Տա՛ր այս յերեխաներին, գլխից հեռացրու,—հրամայեց նա սպասավորին, աղախնի ձեռքով յոթերորդ նամակը Միքայելին ուղարկելուց հետո:

Այժմ նրանք թվում էին ավելորդ բեռ, անհարմարելի պատնեշ, վոր կանգնած էին նրա և յերջանկության միջև: Գուցե հենց նրանք յեղան պատճառ, վոր Միքայելը վախեցավ, յերես դարձրեց: Ձե՞ վոր տղամարդը խորշում է յերեխաներ ունեցող կնոջից: Ախ, թշվառ դրություն, ինչո՞ւ հենց այն կանայք են զավակներ ունենում, վորոնք ամուսնում են իրենց մարդկանց: Ընտանեկան կյա՞նք — ահա մի հիմար բան, վոր այսքան կաշկանդում է կանանց: Ի՞նչ է այժմ Անուշի ընտանեկան կյանքը. մի մթին բանտ, պաղ վոսկերոտիք, վոր վոչինչ հյութ չի պարունակում նրա համար այլևս: Այնինչ, մի ինչ-վոր անողոք ավանդություն, մի հիմար նախապաշարմունք նրա թևերն անխնա կարատել է և միշտ չընկնում է. «դու մայր ես»: Զղվելի, քամոնելի կապանք: Ձխորտակե՞լ արդյոք այս կապանքը:

Դռների հետևից լսվող քայլերի ձայնն ընդհատեց նրա մտքերը: Ուրախության զգացումը մի վայրկյան բարախեցրեց Անուշի սիրտը, սպիտակ ատամները բացվեցին: Մի՞թե Միքայելն է և այսպես շուտ. տասը րոպե չկա, վոր ուղարկեց վերջին նամակը, ուր աղաչում էր նրան դեթ մի քանի րոպեով գալ:

Դռները արագ բացվեցին, և շեմքի վրա հայտնվեց Պետրոսի կերպարանքը, ահեղ, ինչպես մարմնացած վրիժառություն: Աչքերը կայծեր էին արձակում, այն աչքերը, վորոնց արտահայտությունը, թեև հրով, բայց յերբեք յերկյուղալի չեր յեղել: Ո՞ւր է այդ կուշտ և ինքնագոհ խանութպանի դեմքի կարմրությունը, շրթունքների վրա մշտապես խաղացող ժպիտը, այն մեղրալի ժպիտը, վոր հատուկ է մուշտարիներին քծնող խանութպաններին: Ցեվ այդ ի՞նչ ծրար է նրա ձախ ձեռքում, և ինչո՞ւ նրա լայն կրակը դողդողում է, վորպես կենդանի մարմնից սրի մի հարվածով անջատված:

Անուշը ցնցվեց: Այդ լուռ կերպարանքի միայն մի հայացքը բավական էր, վոր խոհուն ըմբռներ, թե, վերջապես, հասել է ստակալի պատասխանատվության րոպեն:

— Անառա՛կ,—մռնչաց Պետրոսը և մի քայլ առաջ դրեց, ձեռքի մեջ ճմրթելով ծրարը:

Անուշը յերեսը դարձրեց, առաջին չփոթմունքը թաղցնելու համար: Պետք էր մի բան հնարել:

— Անառա՛կ,—կրկնեց նույն ձայնն ավելի ահեղ:

Անուշն ինստինկտաբար գլուխը ձեռներով ծածկեց, մոտեցավ պատին: Պետրոսը բռնեց նրա հաստլիկ ուսերից և ուժգին թափով յերեսը դարձրեց իր կողմը:

— Սպասում ես, հա՞, տանջվում ես, հաա՞, մեռնում ես, հաա՞...

Նա բոլոր ուժով թափահարում էր կնոջը, կարծես ձգտելով, առանց բառերի, միանգամից դուրս թափել նրա ամբողջ դաղտնիքը:

— Դեհ, ասա՛, բոլորն ասա այս րոպեիս, բոլորը, չան աղջիկ...

Նա սպասանջում էր և, միևնույն ժամանակ, հնարավորություն չեր տալիս բառ անգամ արտասանելու: Նա սկսեց խեղդել սարսափահար յեղած կնոջը:

Շեմքի վրա յերևաց աղախինը, վոր յերկյուղից դողում էր և դուռ նայվել էր թղթի պես: Մոտեցավ հետևից, բռնեց Պետրոսի թևերից և, վորքան ուժը ներում էր, հետ քաշեց: Պետրոսը հետ դարձավ, հրեց նրան, դոռալով.

— Դու ել ոգնում ես, հաա՞:

Նա վռնդեց աղախնին դուրս, դռները հետևից կողպեց:

— Վո՞ր ժամանակից է:

Անուշը լուռ էր:

— Վո՞ր ժամանակից է, հարցնում եմ...

Նա այնպես ամուր սեղմեց Անուշի հաստ թևերը, վոր խեղճ կինը ցավից ճչաց: Թող ինքը խոստովանի իր բերանով, այպես է կամենում և հրամայում Պետրոսը: Դավաճանությունը ժխտել չի կարող, ահա վկաները — նրա մի քանի րոպե առաջ գրած նամակը: Աստված ինքն է ոգնել Պետրոսին: Ձուր չեյին նրա կասկածները, վոր այսոր, այս անսովոր ժամին յեկավ տուն: Ի՞նչպես. նա ամբողջ որը խանութում ասովոր ժամին յեկավ տուն, իրանից չհրաժարվի, սրան ու նրան գլուխ տալով ամուսնական-քրտինք թափի, չան պես չարչարվի, սրան ու նրան գլուխ տալով հինգ-տասը արշին բան ծախելու համար, հարյուր անգամ մեջքից թեք-

վի, փող աշխատի, պատիվ, անուն ստեղծի, իսկ կնիկն ամառակուրթո՞ւն անի...

— Այդ մեր դավթարներում գրված չի, չան աղջիկ, մենք վաճառական ենք, նամուս ունինք...

Անուշը տակավին լուռ լսում էր, երեսը չարունակ դարձրած, աչքերը ձեռներով ծածկած:

Կրկին Պետրոսը նրա երեսը շուռ տվեց իր կողմը և բռունցքը բարձրացրեց գլխին:

Անուշը փորձեց ժխտել հանցանքը, բայց նամակը Պետրոսի ձեռքումն էր: Նա ասաց, թե դա սիրային նամակ չէ, բայց բովանդակությունն ավելի քան պարզ էր: Նա սկսեց հավատացնել, թե դա մի կտոր է, թե ոչինչ լուրջ կապ չկա և չի եղել նրա ու այդ մարդու մեջ, բայց Պետրոսը չերեխա չէր, ճանաչում էր Ալիմյանին, գիտեր, որ նա շուր տեղը չերեխայական կատակներ չէր անում կանանց հետ:

Նա անողոք պահանջում էր, որ Անուշն ինքն իր բերանով խոստովանի հանցանքը, հակառակ դեպքում, խոսքերը նրա կոկորդից դուրս կթերի չեղունգներով:

Անուշը համառում էր: Նրա գլխին իջավ բռունցքի առաջին հարվածը: Նա ճչաց: Հարվածին հետևեց չերկրորդը: Լսվեց մի հուսահատական աղաղակ: Պետրոսը ծածկեց նրա բերանը մի ձեռով, մյուսով սկսեց հարվածներ տալ գլխին, ուսերին, կրծքին: Հետո դրեց հատակի վրա և սկսեց, մաղերից ձգելով, քաշել այս ու այն կողմ:

— Ուշքի՛ չեկեք, աղա, ուշքի չեկեք...

Բանն այն էր, որ Պետրոսը չէր զգուշացել սենյակի չերկրորդ դռները փակելու և տիրուհու հուսահատական աղաղակներին ներս էր վազել խոհարարը: Պետրոսն ուզում էր կնոջը խեղդել. և կխեղդեր, այնքան կորցրել էր իրեն: Նրա թևերից բռնեցին, հետ քաշեցին: Ցեվ ո՛վ, խոհարարը. ի՛նչ անպատվություն, ի՛նչ խայտառակություն Պետրոս Ղուլամյանի անվան համար:

— Թո՛ղ ինձ, թո՛ղ ինձ,—գոռում էր Անուշը...

Ցեվ նա վազեց դեպի դռները: Նա ուզում էր փախչել: Ո՛հ, վոչ, Պետրոսի ձեռքից փախչելն այնքան էլ դյուրին չէ: Վոչ մի քայլ այս սենյակից, առանց խոստովանելու, թեկուզ ծառաների ներկայությամբ: Ե՛հ, միևնույն է, չերևի նրանք առանց այն էլ բոլորը գիտեն...

— Ինչ ուզում ես արա, խեղդի՛ր, սպանի՛ր... վոչինչ չեմ ասիլ...

— Կասես, կասես, չան ծնունդ...

— Մեղավորը դո՛ւ ես, ինչը տարի ինձ տանջել ես, չեմ ապրել վոչ մի որ, վոչ մի որ...

— Ո՞վ եր քեզ ուժով այստեղ բերում, ինչո՞ւ չեկար...

— Ներվեցի, դու ինձ խաբեցիր...

Ցեվ, չունչն ուղղելով, նա ավելացրեց.

— Ցերթե չես մեկին եմ սիրել, դու հարյուրին...

— Լռի՛ր, անզգամ...

— Անզգամը դու չես, դու ինձ խաբել ես հաղար անգամ, չես միայն մի անգամ... Սպանիր, չերթե ուզում ես, բայց անզգամը դու չես... Չե, չե, չե, դու ու քո չերեխաները, վերցրու քեզ, չես քո կնիկը չեմ, հերիք է, ինչքան տանջեցիր...

Նա դարձյալ քայլերն ուղղեց դեպի դռները:

Պետրոսն այս անգամ հարձակվեց նրա վրա ավելի կատաղի: Թավալեց հատակին... Անխնա հարվածում էր հանցավոր կնոջը վոտնե-վ

հոգություն, յեռանդ և ղեկավարություն: Թվում եր, վոր նրա սրատես աչքերը դեռ արթուն հսկում են գործերին, հետամուտ լինելով վորդու յուրաքանչյուր քայլին: Հոր խոժոռած դեմքի վրա վորդին կարդում եր կյանքի մի վորոշ, անխախտելի նպատակ — վաստակել և վաստակել դավակների ապահովության համար: Ցեվ նա հասել եր այդ նպատակին ամենափայլուն կերպով, բայց հետը դերեզման տանելով ծանր վիշտ վորդիների վերաբերմամբ: Սմբատին թվում եր, թե այդ վիշտը դրոշմվել և հանդուցյալի պատկերի վրա և նրա յեռանդով լի աչքերի մեջ:

Նա գլուխը քաչ խորասուզված եր մի կապոց գործնական նամակների ընթերցանության մեջ, յերբ ներս մտավ գործակատարներից մեկը և հանձնեց մի հեռագիր: Նա կարդաց հետևյալ յերկտողը.

«Պետրովակ: Այսոր առավոտյան կառափքով հասանք, յերեկոյան չոզենավով կճանապարհվինք»...

Ուրախության զգացման հետ Սմբատին պաշարեց դարձյալ անջնջելի վիշտը: Ահա, վերջապես, վաղն առավոտ տեղի պիտի ունենա այն բարդ տեսարանը, վոր վերջին ամիս նրան պատճառել եր այնքան մտատանջություն: Նա կուրախանար, տեսնելով սիրեցյալ դավակներին, վորոնց կարոտն որ–որի վրա ավելի ու ավելի զգալի յեր դառնում, բայց ի՞նչպես կդիմավորի կնոջը, վորից դրեթե յերեք ամիս եր հեռու յեր և տեսնվելու վախագ չեր զգում: Դա ինքնըստինքյան ապացույց եր, վոր մի անգամ չինջած կրակն այլևս չպիտի վառվի նրա մեջ: Վո՛չ, յերբեք չպիտի վառվի:

Նա հեռագիրը դրեց ծոցը: Հուզմունքը, ներս ու դուրս յեկող ծառայողներից թագցնելու համար, նորից խորասուզվեց գործնական նամակների ընթերցանության մեջ: Հոգու խորքում բարձրացած փոթորիկը կրծքից դուրս եր թողնում մերթ ուրախության, մերթ տրտմության հառաչանք: Ցերկդիմի յեր նրա դրությունը, և հակասական մտքերից առնական դեմքը կամ պայծառանում եր, կամ մռայլվում, նայելով ում և յերևակայում — դավակների՞ն, թե՞ կնոջը:

Բայց հարկավոր եր անեցիներին նախապատրաստել վաղվա ընդունելության համար: Նա բարձրացավ վերև, մտավ մոր սենյակը, հեռագիրը կարդաց: Այբին գունատվեց: Լուրն անսպասելի յեր: Նա դեռ հույս ուներ, թե վորդին կմոռանար իր մեղքը: Այնինչ, վոչ միայն չի մոռացել, այլև այսոր հաղորդում և մի անսպասելի և դառն լուր: Ի՞նչ, ուրեմն վաղը նրա տունը պիտի վոտ դնի, իրրև որինական հարս, այն կինը, վորին ատել և դեռ յերեսը չտեսած և վորի պատճառով այնքան տանջվել է:

— Այդպե՞ս ես կատարում հորդ կամքը,—դոչեց այբին, արտասվելով:

— Մի՞թե հարյուր անգամ չեմ ասել, թե առանց յերեխաներիս ապրել չեմ կարող: Իսկ նա իմ յերեխաների մայրն է: Մայրիկ, հասկացի՛ր դրությունս, յես նրա հետ կապված եմ հավիտյան: Պատրաստվի՛ր ընդունելու նրան դոնե առերես ուրախ...

— Ճարս ինչ, բերել ես տալիս; պիտի ընդունեմ: Բայց, վորդի, հորդ կամքը վոտնատակ ես անում, այդ լավ չի, լավ չի...

Ցեվ արտասուքը վոխվեց հեկեկանքի:

Սմբատը թողեց մորը, վոր ինքն իրեն պատրաստվի վաղվա ընդունելության համար, դուրս յեկավ նրա սենյակից, չտապով ճաշեց մենակ և ուղևորվեց հանքերը:

Այս անգամ նրան դիմավորեց կառավարիչ Սուլյանը, վոր նոր առողջացել եր և գործերն ստանձնել: Դա մի յերիտասարդ ինժիներ եր՝ քաղաքացիական հագուստով, նիհար և արագաշարժ, կարճլիկ մազերով, մուզ չագանակագույն միրուքով: Ցերեք տարի յեր ծառայում եր Ալիմյանների մոտ, կարողացել եր գրավել հանգուցյալ Մարկոս աղայի համակրությունը և այժմ աշխատում եր արժանանալ նրա ժառանգների ուշադրության: Մեջքից թեքված, հաճոյական ժպիտը յերեսին, առաջնորդեց նա Սմբատին դրասենյակ և զեկուցում արավ գործերի մասին: Այնն ինչ ընթանում եր կառնավոր: Նոր հորը հրաշքներ է անում: Հարյուր քսան սաժին քանդել են և դեռ վոչ մի խոչընդոտ չեն հանդիպել: Հարյուր քսան սաժին քանդել են և դեռ վոչ մի խոչընդոտ, քար չի պատահում, հողը ցույց է տալիս նավթի նշանները, կարող է չուտով չատրվան բացվել:

Ջարդարյանը ներկայացրեց վերջին ամսվա արտադրության հաշիվը: Հաղորդեց տեղեկություն բանվորների համար նոր կառուցվող կացարանների մասին: Սուլյանը չեր համակրում այս ձեռնարկության: Նա ասաց, թե մշակները յերախտամոռ են, չարժեն այդքան ծախսերի, չեն հասկանալ Ալիմյանների բարությունը: Սմբատը պատասխանեց, թե ինքը բարություն չի անում, այլ իր պարտքն է կատարում:

Սուլյանը լեզուն կծեց: Ցերրորդ անգամն եր նա փորձում եր Սմբատի ինքնասիրությունը և յերրորդ անգամն էլ խիստ պատասխան եր ստանում: Նա մոռանում եր թե իր տերը թեև Մարկոս Ալիմյանի վորդին է, բայց ուրիշ հայացքներով, վոր այն, ինչ–վոր փաղաքշում եր դին է, և, բայց ուրիշ հայացքներով, վոր այն, ինչ–վոր փաղաքշում եր հորը, կարող է դուր չգալ վորդուն: Ահա ինչու, կամենալով մի սխալն ուղղել, յերկրորդ սխալը գործեց, յերբ ասաց.

— Ձեր պարտք համարածն ուրիշները բարություն կհամարեյին, բայց ձեզ արդեն սկսել են պաշտել մշակները:

Սմբատը դարձավ Ջարդարյանին և հարցրեց, արդյոք չե՞ն հայտնել մշակներին, թե առաջիկա ամսի մեկից նրանց ռոճիկները պիտի տալ

ձիկները են սառնում: Բայց այս ձևով էլ չկարողացավ հաճելի թվալ Սմբատին: Գաշտապանելով Ալիմյանի չահերը, ցույց տալով իրեն այդ չահերի վերաբերմամբ ժլատ, կարծում եր, վոր իր առջև կանգնած է դարձյալ Մարկոս աղան: Սխալվեց, և այս անգամ մոքում վճռեց տակտիկան փոխել: Նա սկսեց ցույց տալ իրեն աղատամիտ՝ մշակների դրության վերաբերմամբ և դովեց այն ծրագիրը, վոր հնարել եր Սմբատը նոր կացարանների համար: Փոփոխությունն այնքան ճարպիկ եր, վոր Սմբատն անգամ չնկատեց և սկսեց խորհրդակցել նրա հետ:

Դուրս գալով դրասենյակից, բակում հանդիպեց մի խումբ մշակների, վոր չկել եյին հաշիվ խնդրելու: Պատրաստվում եյին գնալ հայրենիք: Նրանք վերցրին իրենց մազոտ մորթե գդակները և սև կարտուզները: Աչխատանքը բոլորի վրա դրել եր բնորոշ դրոշմ: Մեկի մի ուսն եր բարձր մյուս ուսից, յերկրորդի վոտներն են ծռվել, յերրորդի կուրծքն է նեղս ընկած և մեջքը կորացած: Նավթի և մրի տակ անկարելի յեր վորոշել նրանց դեմքերի իսկական գույնը: Բայց աչքերի չրջանակները դեղնած եյին խոնավ խրճիթներում քնելուց, և այդ դեղնությունը սև ֆոնի վրա ավելի խիստ եր աչքի ընկնում:

Սմբատը հրամայեց Սուլյանին նրանց հաշիվները տալ, տալ նաև յուրաքանչյուրին քսանական ռուբլի պարգև: Հրամանը տրվեց չչընջյունով և ոտերն: Սև խումբը վոչինչ չհասկացավ: Նա իր հայացքը հառել եր Սմբատի յերեսին ակնածությամբ: Ձեռները պլչկավի դրպանները դրած, լայնեղր գլխարկն աչքերին քաշած, առողջ թիկունքներով, խելացի, համակրելի, առնական դեմքով նա այդ աչխատավոր մարդկանց ներչնչում եր ակամա յերկյուղ, նաև համակրանք:

Մի վայրկյան Սմբատը յերեսը մի կողմ դարձրեց և տեսավ մի սրտաչարժ տեսարան: Բակի հեռավոր կողմում, մի հողային վոջրիկ թմբի վրա, յերկու յերկաթյա նավթային ամբարների առջև կանգնած եր Շուչանիկը, անբաժան մոխրագույն չալն ուսերին: Նրա առջև կանգնած եր մի յերիտասարդ մշակ, վոր արեգակի չողերի մեջ յերևում եր իրրև մթին սիլուետ: Որիորդը վոխում եր մշակի ձեռի վերքի ապրանքին, մրոտված թաշկինակը խնամքով կապելով նրա բազկին:

Իրիկնադեմ եր արդեն: Աչնանային արեգակը չտապում եր մայր մտնել, յերկինքը վերջին անգամ վոսկեզոծելով: Գանգուր մազերը թափվել եյին որիորդի ականջների վրա, քնքուշիկ ընդգրկել դունատ այտերը և կազմել մի գեղարվեստական չրջանակ: Ծիրանադույն չողերը տարածվել եյին նրա վրա և չրջապատել մի նուրբ վոսկե փոշով:

Մշակը հեռացավ, գլուխ տալով: Որիորդը ձեռները դրեց ծոցը, հայացքը հառեց հեռու: Նա չեր տեսնում Սմբատին, բավական հեռու լինելով: Անչարժ, գլուխը թեթևակի ուսին ծռած, այժմ հիշեցնում եր հին գպրոցի մի նկար, վոր տեսել եր Սմբատը Գետերբուրգի Երմիտաժում և խոր տպավորություն եր գործել նրա վրա: Նա հիացած նայում եր, չքաչվելով Սուլյանից, վոր չարունակ խոսում եր, ձգտելով մերձենալ միլիոնատեր յերիտասարդի սրտին: Այո՛, դա ամայի դաշտում բուսած մի հատիկ մանիչակ է: Վոչ վաուվռուն վարդ, վոր հենց առաջին անգամից գրավում է անցորդի հայացքն իր գույնով և վոչ էլ գոռող չուչան, ինչպես է որիորդի անունը, այլ խակ և խակ մանիչակ, հրապուրիչ լինքն իր հեզությամբ և նուրբ բուրմունքով:

Ծիրանադույն չողերի մեջ գանգուր մազերի ծայրերը ճակատի վրա ներկայացնում եյին մի տեսակ թափանցիկ վոսկեթելեր: Արեգակը, վերջին անգամ հիանալով նրանով, կարծես, ափսոսալով, թաղնվեց հեռավոր լեռների հետևում: Որիորդը դեռ կանգնած եր: Շուրջը վոչինչ չեր նկատում: Կարծես, նրա պայծառ աչքերը դեմ ու դեմ կուռված բարձր սև բուրգերի գագաթներից վեր վորոնում են ինչ-վոր բան յերկնի վրա, դեպի արևմուտք:

Հանկարծ նա ցնցվեց, սթափվեց, ով գիտե, ինչ յերևակայություններից: Նրա ականջին հասավ Սմբատի բարեհնչյուն ձայնը: Նա յերեսը դարձրեց այն կողմ և աչքերով հետևեց յերիտասարդ տղամարդին, վոր այժմ գնում եր դեպի հանքերը: Հետևեց, մինչև վոր նա անհայտացավ սև բուրգերի հետևում: Ցեթե այդ պահին մեկը կանգնած լիներ որիորդի մոտ, կլսեր կրծքի խորքից դուրս թռած յերկարատև ծանր հառաչանքը, իսկ պայծառ աչքերի մեջ կնշմարեր խորին հոգեկան թախիծ...

Նույն յերեկո նա անսովոր ուշադրությամբ լսում եր հորեղբոր պատմությունը՝ Սմբատի ամուսնության մասին: Լսում եր այն բարոյական առնչանքները, վոր կրել եր հանգուցյալ Մարկոս աղան իր վորդու սխալ քայլի պատճառով: Այժմ գալիս է Սմբատի կինը՝ յերեխաների հետ: Սմբատը տխուր է: Ինչո՞ւ...

Վոչ վոք չնկատեց, ինչպես փոխվեց Շուշանիկի դեմքի գույնը, ինչպես նա նախ կարմրեց, ապա գունատվեց, ինչպես մի թույլ հառաչանք թռավ նրա կրծքից: Այլևս կիսատ թողեց հորեղբոր խոսքը, առաջնեք թռավ նրա կրծքից, վերցրեց խաղի թղթերը անցավ մյուս սենյակ, մոտեցավ լուսամուտին, վերցրեց խաղի թղթերը և սկսեց հմայել: Նա չեր հավատում գուշակության, բայց այնուամենայնիվ, տանը պատահած հիվանդության միջոցներին միշտ հմայում եր և միշտ տխրում, յերբ թղթերը լավ չեյին ցույց տալիս:

Այս անգամ ևս նա տխրեց, և տխրեց ավելի սաստիկ, քան յերբևե: Թղթերը դրեց մի կողմ, նստեց անկողնակալի վրա և աչքերը հառեց հատակին:

— Շուշանի՛կ,—լսեց մոր ձայնը,—հայրդ խորոված է ուզում:

Ցավ այդ որն առաջին անգամ նա դժկամակությամբ անցավ խոհանոց:

Ճիշտ նույն պահին Սմբատը, առանձնացած իր սենյակում, խորին մտախոհության մեջ էր: Միայն վաղվա հանդիպումը չէր նրա մտորումների առարկան, այլև մի քանի ժամ առաջ տեսած պատկերը: Ցերքեք նրա վրա վոչ մի հայ կին տպավորություն չէր գործել: Այժմ նրա առջև ամեն վայրկյան պատկերանում էր մի աղքատ ընտանիքի զավակ, մի համեստ աննշան աղջիկ: Հաճախ հանգչային դրասենյակում տեղած ժամանակ, կնոջ սենյակից լսում էր անպատմելության անվերջ արտասվությունները և յերեխաների լացը: Մանկական աղաղակների և հիվանդի տխուր մրմունջների մեջ լսվում էր որիորդի մեղմիկ ձայնը, վոր անդորրը տպավորություն էր գործում նրա վոտքորկված հոգու վրա: Այդ ձայնի ազդեցությամբ նրա մեջ ծագում էին անտուվոր մըտքեր: Մտքեր, վորոնք դիամետրալ կերպով հակասում էին նրա նախկին դաղափարին՝ հայ կնոջ մասին: Ցեվ նա ամաչում էր այդ դաղափարից, դղալով խղճի խայթոց...

Այս յերեկո մի քանի ժամ առաջ տեսած պատկերի տպավորությամբ, նրա ներքին աշխարհում կատարվում էր տարորինակ հեղաշրջում: Զգում էր, վոր իր մեջ խախտվում և մեկն այն ամուր համոզումներից, վոր կազմվել էին պատանի հասակից: Ունե՞ր նա իրավունք արհամարհել հայ կնոջը, հայ աղջկան և գնալ կյանքը կապել ոտարի հետ: Ահա վաղը գալիս է նա, վորին գերազանց բոլոր կանանցից: Սրդյոքա՞ց արդյոք, դեթ մազի չափ, այն հույսերը, վոր դրել էր նրա վրա, տվե՞ց այն յերջանկությունը, վոր յերևակայում էր դըտնել, ծնողների նվիրական դղացումները վոտնատակ անելով: Չի՞ պատահում, արդյոք, այն իդեալին, վոր մի ժամանակ վառում էր ու բորբոքում նրա յերևակայությունը: Ցեվ յեթե գտել է, արդյոք, կրկնակի դժբախտ չե՞...

Առավոտյան արդեն տասը ժամն էր, յերբ զարթնեց: Մի կապարային ծանրություն նստել էր նրա սրտի վրա, ճնշում էր ու ճնշում անընդհատ: Շտապով խմեց մի բաժակ թեյ: Մի ժամից հետո պիտի գար վոտքորկիը չոզենավը, վոր բերում էր նրա զավակներին ու կնոջը: Մտավ մոր սենյակը: Այրին տխուր, ձեռները կրծքին ծալած, նստած էր լուսամտի մոտ: Նայեց վորդու յերեսին և սիրտը մորմոքվեց: Զգաց, վոր նրա հոգու մեջ տեղի ունի փոթորիկ, վոր նա այնքան ուրախ չէ, վորքան հուզված:

— Դնա, վորդի, դնա բեր, յես քար չեմ,—ասաց այրին, աշխատելով ուրախ ձևանալ:

— Շնորհակալ եմ,—արտասանեց Սմբատը և համբուրեց նրա դալուկ ձեռը...

Կայարանում արդեն հավաքվել էր մի մեծ բազմություն, յերբ Սմբատը հասավ այնտեղ: Մի խումբ ծանոթներ ողջունեցին նրան խոնարհ բարևներով: Ցերբ իմացան, վոր յեկել է ընտանիքին դիմավորելու, չնորհավորեցին: Ցեվ նա դդաց չատերի կեղծիքը: Այդ մարդիկ հետևից հազար ու մի բան եյին ասում նրա ամուսնության մասին — այս նա գիտեր, իսկ առերես չնորհավորում եյին: Նա չտպեց հեռանալ խմբից:

Որը բավական սառն եր, հյուսիսային քամին յերկնքի ծխադյուն թանձր ամպերը հալածում եր դեպի հարավ: Մուշն ալեկոծվում եր, և նրա ադի ալիքները Սմբատի միտքը տանում եյին դեպի հեռավոր հոդրիդն, վոր թաղված եր մշուշի մեջ: Սիրան սկսեց նորից բաբախել, յերբ մտածեց, վոր նավը կարող է փոթորկի յենթարկված լինել: Գիշերվա անքնություններից նյարդերը հոդնել եյին: Նա պատրաստ եր լաց լինել ինչպես յերեխա, այնքան սիրտը լցվել եր:

Հորիդոնի վրա մշուշի մեջ նկարվեց հաղիվ նշմարելի մի կիսակամար: Դա չոգենավի նավթային ծուխն եր, վոր ծխնելույդից դուրս գալով, կազմում եր կիսաշրջան և հետո տարածվում ծովի մակերևույթի վրա: Կես ժամ ևս, և Սմբատը պիտի դանվեր սիրո և սառնության միջև: Նա անհանդիստ անցուդարձ եր անում, աշխատելով խույս տալ ծանոթներից: Նրան թվում եր, վոր բոլորն իրենց մտքում ծաղրում են կամ ցավակցում:

Վերջապես չոգենավը յերևաց ծովի ալեկոծվող մակերևույթի վրա: Լսվեց չոգեշվիլի հեռավոր թույլ ձայնը, վոր խեղդվում եր ալիքների մռնչյունի մեջ: Մրվային բանվորները սկսեցին չտապով բաց անել կայարանի սյուներին փաթաթած հաստ պարանները, պատրաստվելով ընդունել մոտեցող նավին: Քամին ալիքները մղում եր և ուժգին զարկում նավի յերկաթե կողերին, դանդազեցնելով նրա ընթացքը: Տախտակամածի վրա յերևացին մի խումբ ճանապարհորդներ: Սմբատն նրանց աչքերը հառել եր խմբի վրա և աշխատում եր վորոշել նրանց, վորոնց աչքերը փնտրում եր: Նավի ստեր դունչը, հսկայական թրի պես ճեղքում եր ապասում եր: Նավի ստեր դունչը, հսկայական թրի պես ճեղքում եր ջուրը, կուվելով կուտակվող ալիքների դեմ: Սպիտակ չիքերը կատաղի ուժով բարձրանում եյին վեր, մինչև տախտակամածը և նորից անդոր հետ թափվում:

Սմբատը նշմարեց մի յերիտասարդ տղամարդ, վոր բռնած եր յերկու դրեթե հասակակից մանուկների ձեռներից: Նա ճանաչեց իր դաղու վակներին և նրանց քեռուն: Մի սպիտակ թաչկինակ ծածանվեց ոդի մեջ՝ մանկական գլուխների վեր: Սմբատը դդակը բարձրացրեց:

Հաղիվ նավատները սանդուխտն ամրացրին նավի կողին, Սմբատն առաջ բարձրացավ նավը: Գրկեց դավակներին: Մեկը յոթ, ամենից առաջ բարձրացավ նավը: Գրկեց դավակներին: Մեկը յոթ, մյուսն ութ տարեկան եր: Դրանք հարավային և հյուսիսային տիպերի կենդանի խառնուրդ եյին: Նրանց մազերը պարզ — կինամոնագույն գեղեցիկ խառնուրդ եյին: Նրանց մազերը պարզ — կինամոնագույն եյին, աչքերը նախշուն, ունքերը սև, դեմքերի գույնը սպիտակ: Ցերբ

ից նրանց առողջ յերեսները կարմրել էին: Սմբատը համբուրում էր մերթ մեկին, մերթ մյուսին:

— Կշտացա՞ք,— դոչեց յերեխաների քեռին,— այժմ յկկնք մենք համբուրվենք:

Յեվ իր գլուխը լայն բանալով ճմեռային չինելի տակից, դրկեց և համբուրեց. մի քայլ հեռու կանգնած էր յերեխաների մայրը: Դա մի վոչ այնքան բարձրահասակ կին էր, չիկահեր, կապույտ աչքերով, մի քիչ ցցված այտերով և վոքրիկ քթով: Տարիքն արդեն իրենց կնիքը բավական վորոշ դրոշմել էին նրա բերանի անկյուններում և աչքերի տակ: Ծովային ցրտից ու հողմից կարմրած թշերը ներդաշնակում էին սպիտակ խոշոր առամներին: Այնինչ, Սմբատի համար նա վաղուց էր կորցրել իր հրապույրն իբրև կին, մնալով միայն մայր՝ զավակների:

Ամուսինները բավականացան միմյանց ճեռ տալով:

— Տանջվեցինք ճանապարհին,— յեղավ կնոջ առաջին խոսքը:

— Փոթորի՞կ եր:

— Սաստիկ,— պատասխանեց կնոջ յեղբայրը,— քիչ եր մնում նավն ընկղմվեր, և ի՞նչ անալուտան նավ է...

Ալեքսեյ Իվանովիչ Վինոգրադովը — այսպես եր յերիտասարդի անունը — վոչինչ արտաքին նմանություն չուներ քրոջ հետ: Սևահեր եր, դեր, դեմքի ավելի ուղիղ դծերով, խոշոր կլինամոնադուշն աչքերով, վորոնք ստեպ-ստեպ ճաճանչում էին պինսնեյի տակից: Ձայնը, խոսելու յեղանակը և բոլոր ձևերն արտահայտում էին խորին լինքնահաճություն: Մինչդեռ քրոջ դեմքի վրա կարդացվում եր ինչ-վոր դառն դժվամաուբյուն կյանքից:

— Դուք մենա՞կ եք յեկել մեզ դիմավորելու,— հարցրեց տիկինը:

— Մենակ,— պատասխանեց Սմբատը, մինչ նայելով յերեխաներին:

Տիկնոջ դեմքով սահեց արհամարհական ժպիտ:

— Ձերևի ձերոնք արժանի չեն համարել...— արտասանեց նա, ուղղելով ուսերին գցած մուշտակը:

Սմբատը լուռ բռնեց յերեխաների ձեռներից, ցած բերեց կայարան:

— Իսկ մեր իրե՞րը, իրե՞րը,— անհանգիստ հարցրեց տիկնոջ յեղբայրը:

Սմբատը պատվիրեց չոգենավի գործակատարին կարգադրություն անել իրերի մասին:

— Այնտեղ յես ցիլինդիր ունիմ. զգուշ ուղարկեցեք, վոր չջարդվի,— պատվիրեց իր կողմից տիկնոջ յեղբայրը:

Կատաղ նստելիս նա հարցրեց.

— Ձերևի ձեր սեփական կառքն է, չէ՞:

— Վո՛չ. վարձովի յե:

Յեղբայրը նայեց քրոջ յերեսին: Պարզ եր, վոր նա մաքում ասում եր. «դու չեյիր ասում, թե չատ հարուստ է»:

Այրի Վոսկեհատան իսկույն առաջ դուրս չեկավ: Իսկ յերբ յերեաց հյուրասենյակում, Սմբատը նրա աչքերի մեջ նկատեց արտասուքի թարմ հետքեր: Այրին դրկեց վորդու զավակներին, սեղմեց կրծքին: Բայց զգալի յեր, վոր այդ գրկումը բռնազբոսիկ է: Հարսին նա միայն ձեռ տվեց, առանց մի բառ ասելու: Կրկին նայելով թոռներին, գրավվեց նրանց զեղեցիկ աչքերով, նորից գրկեց և սեղմեց կրծքին, այս անգամ արդեն վոչ բռնազբոսիկ:

— Հոգնած են, դիշերը չեն քնել,— ասաց հարսը:

Ձեվ կամացուկ ազատեց յերեխաներին այրվի գրկից: Սմբատը նայեց մոր յերեսին և զգաց, վոր նա չափազանց վիրավորվեց:

Այդ վայրկյանից գրվեց հարս ու սկեսրի ապագա հարաբերությունների հիմքը: Ներանք ատեցին միմյանց, հենց առաջին հայացքից:

XIV

Յերբեք Պետրոս Ղուլամյանը չեր մտածել, թե այն, ինչ-վոր ինքն և անում, կարող և անել և՛ իր կինը: Նա այն համոզմունքի յեր, թե Անուշը բնավ չի հանդգնիլ մարդուն վրեժխնդիր լինել իր պատվի դնով: Սիրուհիներ պահելը, մտածում եր նա, մեր ժամանակում նոր բան չի վոր ունեցողի համար: Կանայք այս պատճառով իրենց ամուսինների որն այլևս չեն սևացնում: Յեթե աշխարհ չտեսած արհեստավորները յերեսայլևս չեն սևացնում: Յեթե աշխարհ չտեսած արհեստավորները յերեսեմն դավաճանում են իրենց կանանց, ո՞ւր մնաց մի վաճառական, վոր տարեները յերկու անգամ Մոսկվա յե գնում և աչքով տեսնում, ինչպես են ապրում լուսավորված մարդիկ:

Բայց Անուշի յերկարատև սառնությունը մի որ, վերջապես, կասկած ձգեց նրա սիրտը: Այդ կինը, չնայելով, վոր ամիսներով Պետրոսի քաղցր խոսքին չի արժանանում, վերջին ժամանակ, կարծես, կյանքից դոհ և ավելի, քան յերբևե: Զուգվում է, զարդարվում, հեռվից-հեռու ինչ-վոր սիրային գործ ունի, վորպես յերբեք չի հետևել և... յերբեմն արտաքինին այնպես

էր տիրոջ վերաբերմամբ, այնքան չվոխվել եր, վոր չխմացավ նամակն ինչպես Թադևոսի չալի տակ: Պետրոսն անփութ ձևով ծրարն առավ նրանից, առանց յերկար տատանվելու բաց արավ և կարդաց Անուշի կրքոտ տողերը, վոր զուրկ եյին ամեն խոհեմությունից: Կասկածը փոխվեց համոզմունքի, և խաբված այրը վազեց ներս կնոջից, այնպիսի խիստ միջոցով հաչիվ պահանջելու:

Արտահայտելով սրտի առաջին թուլյնը կոպիտ բռունցքի միջոցով, առանձնացավ և սկսեց լրջորեն մտածել անելիքի մասին: Պարզ և, վոր մի կին, ամուսնուն դավաճանելով, արդեն ինքնըստինքյան վորոշում և իր դատավճիռը: Նա կամ պիտի արտաքսվի մարդու տնից կամ չանպատակ լինի: Այսպես են անում նամուս ունեցող այրերը: Պետրոսն ուրիշ յելք չիմաց և չի ուզում ճանաչել: Կան մարդիկ, իհարկե, վորոնք խեղճությամբ հաշտվում են իրենց խայտառակ դրության հետ—Պետրոսն այդպիսիներին միշտ արհամարհել և: Վոչ վոք իրավունք չուներ նրա պատիվն արատավորելու և վոչ նույնիսկ միլիոնների ժառանգ մի յերիտասարդ: Ա՛խ, լակոտ, կարծում ես, վոր հարստություն ունես, ամեն բան քեզ կներվի՞: Ով գիտե, քանի-քանի ընկերների մոտ ես պարծեցել, ով գիտե, այժմ վորքան են ծաղրում Պետրոս Ղուլամյանին: Սպասի՛ր, քեզ անպատիժ թողնելը հանցանք և...

Իսկ առայժմ պետք է տանջել Անուշին, տանջել և հետո վռնդել: Միևնույն ժամանակ պետք և աչքաթող չանել ապագա ուցանելը, վոր Անուշը դավաճանեց նրան, ապա թե վոչ, յեթե կնոջը հեռացնի, հիմարները նրան կմեղադրեն, կասեն Անուշն ինքն և փախել մարդուց:

Մի որ Պետրոսը կանչեց իր մոտ Գրիչային և կնոջ ներկայությամբ բոլորը պատմեց նրան: Տաքարյուն յերիտասարդը, հարկավ, բորբոքվեց, կատաղեց փեսայի դեմ, անվանեց նրան անամոթ դրպարտող: Պետրոսը նամակը տվեց նրան կարդալու: Ցավ, վերջապես, Անուշն ինքը չկարողացավ ժխտել հանցանքը յեղբոր մոտ: Գրիչան յերդվեց հոր գերեզմանով պատժել Միքայել Ալիմյանին, հայհոյեց քրոջը, անդամ թքեց յերեսին և հեռացավ...

Ցերեկները Պետրոսը միշտ տանն եր անցկացնում: Խանութ գնում եր միայն յերեկոները, մութն ընկնելիս, այն ել դրամարկղի փողերը ստանալու համար: Կնոջից փախչում եր, վախենալով տեսնել նրան: Իսկ Անուշն ամբողջ որը վակված եր իր սենյակում: Չգիտեր ինչ անեներ, փախչել մոր մոտ չեր ուզում. ամոթը կաշկանդում եր նրան: Մի անգամ խայտառակեց ծնողներին, ընկնելով հոր գործակատարի պարանոցին: Մյուս անգամ ինչպես հարմար խեղճ պատավ մորը: Վերջապես, կընդունի՞ արդյոք նրան իր տունը Գրիչան, յեթե մայրն անգամ ընդունի...

Նա տանջվում եր և ճիգն եր անում սիրտը թեթևացնել ղավակների սիրով: Ամուսնուկ որից հետո անբաժան եր յերեխաներից: Մի կողմից յերկյուղն ամուսնուց, մյուս կողմից՝ ծանր հանցանքի դիտակցությունը դրդում եյին նրան փնտռել անմեղ եյակների հովանավորությունը: Ապականված հոգին ձգտում եր մաքրության ճառագայթների մեջ լվանալ իր կեղտը և չեր դադում, վոր իր համբույրներով արատավորում և նրանց: Ցեթե Պետրոսը վռնդեր նրան իր տնից, տալով յերեխաներին, դա խնդրի ամենաբախտավոր լուծումը կլիներ նրա համար: Բայց Անուշը համոզված եր, վոր յերբեք այս տեսակ մեղմ պատժի չի արժանանալ: Այս եր, վոր ղրդում եր վերջին ժամանակ նրա մեջ թմրած մայրական սերը: Այս եր, վոր ղրդում եր նրան գըրկել, համբուրել զավակներին այնպիսի խանդաղանքով, վոր, կարծես, ահա չուտով պիտի բաժանվի նրանցից: Ցավ մանկական զգուխները թրջվում եյին դառն արցունքներով, վորոնք արատահայտում եյին մի մեղսագործ հոգու ուշացած զղջումը:

Այժմ Անուշի համար Ալիմյանը մի չար հոգի յեր: Մտավ նրա թըմրած կյանքի մեջ, արագությամբ տակն ու վրա արավ ամեն ինչ և առ միշտ սպանեց նրան բարոյապես: Տեր-Աստված, տեր-Աստված, արժե՞ր մեզ մի այդպիսի մարդու համար այսքան կուրանալ և այսպես ընկնել...

Նույն միջոցներին Միքայելը բարոյապես տանջվում եր վոչ պակաս, քան իր հոմանին: Անուշը նրան նամակով հաղորդել եր բոլոր յեղելությունը: Նույնիսկ իր ծեծվելը չեր թագցրել: Այդ կոպիտ, դեռևիկ խանութպանը միայն մի ծեծով չի բավականանալ: Նա կպատժի կնոջը և կպատժի չարաչար: Նա կարող և անգամ սպանել նրան: Այդ ժամանակ հասարակությունը վերահասու կլինի պատժի պատճառներին: Ալիմյան անունը կանցնի բերանից-բերան և, ով գիտե, գուցե և դատարանները:

— Ի՞նչ և պատահել քեզ,—հարցնում եյին ընկերները նրան:

— Վոչինչ,—թագցնում եր Միքայելն իր տխրության պատճառը:

Միայն Մարությանյանին հաղորդեց իր ցավը և խնդրեց նրա խորհուրդը: Գործնական մարդը նեղն ընկավ. ի՞նչ խորհուրդ տար: Նրա կարծիքով, յերիտասարդ հասակին նեղելի յե ամեն տեսակ սխալ կանանց վերաբերմամբ: Ժամանակն ամեն ինչ կբուժի: Ղուլամյանը կհաշտվի իր վիճակի հետ: Անուշը կմոռանա Միքայելին, իսկ Միքայելը կմոռանա նրան, ու կմոռանա՛: Գլխավորն այն և, վոր հասարակությունը վոչինչ չիմանա:

Այդ միջոցներին Մարությանյանը սաստիկ զբաղված եր կոնտրակտի խնդրով: Նա դեռ գործը չեր հանձնել դատարանին և, զարմանալի յե, վոր միշտ Միքայելին հորդորում եր ձանձրացնել Սմբատեին. չնայելով, վոր բոլորովին հույս չուներ, թե Սմբատը վորևե վի-

ջում կանե: Միքայելը նրան վաղուց եր լիազորություն տվել՝ վարել գործն իր ցանկացածի պես: Սակայն նա զարձյալ տատանվում եր: Գարդ եր, որ նա այժմ ուրիշ դիտավորություն ուներ:

Միքայելի մտամոլոր դրությունը նրան պատճառեց անհուն ուրախություն: Նա սկսեց այցելել աներձագին ամեն որ: Գալիս եր, խոսք բաց անում Ղուլամյանների մասին, հուզում, դրդռում Միքայելին: Ցեվ այդ բոլեներին հանկարծ խոսքը փոխում եր, մեջ եր բերում կտակի խնդիրը: Միքայելը կրկնում եր, թե իրավունք և տալիս նրան անելու, ինչ որ կամենում և: Մարուքիանյանը յերբեմն հանում եր ծոցի գրպանից ինչ-որ թղթեր և ստորագրել տալիս: Միքայելը չատ անգամ ստորագրում եր առանց թղթերը կարդալու, մինչև անգամ չնայելով նրանց բովանդակության... Այդ բոլոր թղթերը, Մարուքիանյանի ասելով, կարևոր եյին գործի համար... Ցեվ Միքայելը չեր ել հետաքրքրվում, թե ինչ թղթեր են... Նա միայն ստորագրում եր՝ ղլուխը ձանձրույթից ազատելու համար:

Այժմ մեծ մասամբ նա տանն եր լինում: Ամոթի դգացումը թույլ չեր տալիս նրան յերևալ հասարակության մեջ: Ո՞վ դիտե, գուցե խայտառակ դեպքն արդեն հայտնի յե ամենին, և բոլորը բամբասում են նրան:

Որերն անցնում եյին, և նա այլևս Անուշի մասին լուր չեր առնում: Սկզբում վախեցավ, մի գուցե Պետրոսը կնոջ գլխին փորձանք և բերել: Բայց յեթե այդպիսի բան լիներ, չե՞ վոր լուրը կհասներ իրեն: Ծեծո՞ւմ և իր կնոջը Պետրոսը: Թող ծեծի. Անուշի ամուր մարմինը կարող և դիմանալ նրա բռունցքներին: Շատ հավանական և, վոր Պետրոսը, բամբասանքից վախենալով, արդեն կուլ և տվել վիրավորանքը և լռել: Ցեթե այդպես և, ուրեմն ի՞նչ պատճառ կա վախենալու: Շատ-չատ մոխրագույն բեղիկները մի ամիս կտանջվեն և հետո կհանգստանան:

Ցեվ, այս մտքից իրախուսված, Միքայելն սկսեց պատահած մոռանալ: Շուտով նա անձնատուր յեղավ սովորական կենցաղին, վորպես անուղղելի արբեցող, վոր արբենանում և թե չե՝ նորից սկսում և հարբել: Տարբերությունն այն եր, վոր այժմ հետաքրքրվում եր և՛ գործերով կամ ցույց եր տալիս, թե հետաքրքրվում և, բայց վոչ քաղաքային, այլ հանքային գործերով: Ժամանակ առ ժամանակ կառքով մենակ գնում եր հանքերը, վորպես թե սատիկ զբաղված եր նոր վորվող հորի գրությամբ:

Հարկավ, Սմբատն ուրախ եր յեղբոր այս վոլոխությանը, բայց ատեպ-ստեպ հանքեր գնալը կասկածելի յեր թվում նրան: Զունչ արդյոք այս յերևույթը մի ուրիշ ավելի գորեղ չարժառիթ, քան գործերով հետաքրքրվելը:

Կասկածն ավելի ամրացավ Սմբատի մեջ, յերբ Միքայելը մի որ նրա մոտ գովեց Շուշանիկի արտաքինը: Ի՛նչ գեղեցիկ աչքեր, ի՛նչ սիրուն նայվածք, ի՛նչ նուրբ շրթունքներ և ճակատ:

— Ցես ուզում եմ նրա հետ մոտիկ ծանոթանալ,—ավելացրեց Միքայելը, բայց ինչպես յերևում և, հպարտ և:

— Նա միայն համեստ և,—նկատեց Սմբատը հակիրճ և ընդհատեց խոսակցությունը:

Մի ուրիշ անգամ Միքայելն ասաց որիորդի մասին մի քանի արյունահոսուղ խոսքեր: Սմբատը վրդովվեց և գոչեց հանկարծ.

— Հանգիստ թո՛ղ այդ աղջկան...

— Ոհո՛, աչքերդ կարմրեցին, ճայնդ դողաց, չլինի՞ թե սիրահարված ես: Սիրելիս, քեզ չի վայելում, հասկանում ես, նա իմն և:

Կատակը Սմբատին թվաց զզվելի, և նա պահանջեց յեղբորից, վոր որիորդի մասին խոսի հարգանքով:

— Ինչ ուզում ես ասա,—նկատեց Միքայելը,—նա ինձ դյուր և գալիս, համեղ դեսերտ և...

— Ցես քեզ խնդրում եմ հանգիստ թողնել այդ աղջկան,—կրկնեց Սմբատը հուզված, և նրա ճայնի մեջ զգացվեց սաելություն:

Խոսակցությունը տեղի ուներ կառքի մեջ, հանքերից վերադառնալու ժամանակ: Միքայելը լռեց և մինչև քաղաք հասնելը, յերկու յեղբայր այլևս վոչ մի խոսք չասացին:

Սմբատն այժմ բնակվում եր թեև մոր ու յեղբայրների հետ միևնույն տանը, բայց գրեթե բաժան: Ընդարձակ տան մեջ նրա ընտանեքին հատկացրել եյին հինգ մեծ սենյակներ: Մի նեղ և յերկայն անցք յերկու բնակարանները բաժանում եյին միմյանցից: Հարս ու սկեսուր հանդիպում եյին միայն ճաշի սեղանին: Թեյ եյին խմում, ընթրում, նախաճաշում առանձին: Փոխադարձ սառնությունը, վոր սկսվել եր առաջին որից, չեր մեղմանում և վոչ մի կողմից: Նույնիսկ յերեխաները չեյին կարողանում իրրև հաշտության ողակ ծառայել: Մայրը մեծ մասամբ նրանց պահում եր իր աչքերի առջև: Տատը թեև արդեն սիրում եր նրանց, բայց հոգու խորքում չեր հաշտվում այն մտքի հետ, թե նրանք իր հարազատ թոռներն են:

Մի անգամ Սմբատը, մտնելով մոր սենյակը, տեսավ, վոր այրին լուսամուտի առջև նստած լաց և լինում: Կարծեց, թե նա դարձյալ հիշում և հանգուցյալ ամուսնուն: Սակայն այրիի դառնության պատճառն այս անգամ ա՛յլ եր: Նա ասաց, թե մի փոքր առաջ կանչում եր իր մոտ թոռներին, և մի բոպե անցած աղախինը գալիս և նրանց մոր կողմից և տանում:

— Ամեն որ այսպես և անում կնիկդ, ամեն որ,—ավելացրեց այ-

րին, «կնիկիդ» բառն արտասանելով դառն հեգնությամբ,—կույր չեմ, տեսնում եմ, վոր չի ուզում յերեխաներդ ինձ սիրեն:

Սմբատն անցավ կնոջ սենյակը: Այնտեղ Անտոնինա Իվանովնան աչքունքը թթվացրած նամակ էր գրում ընկերուհիներից մեկին:

— Ո՞ւր են Վասյան և Ալյոշան,—հարցրեց Սմբատը:

— Իրենց սենյակում:

— Ուղարկեցե՛ք մորս մոտ:

— Հենց հիմա նրա մոտ եյին:

— Թողե՛ք ելի դնան, խաղան:

— Դասեր են պատրաստում, դեռ չեմ պարապել նրանց հետ...

— Անտոնինա Իվանովնա՛,—արտասանեց Սմբատը, մի քիչ ձայնը բարձրացնելով,—այդպես մի՛ վարվեք մորս հետ:

Անտոնինա Իվանովնան գրիչը դրեց և աչքերը հառեց ամուսնու յերեսին:

—Այդպես մի՛ վարվեք,—կրկնեց Սմբատը,—դուք կարող եք նրան չսիրել և նա ձեզ, բայց յերեխաների դպացումները բռնաբարելու իրավունք չունեք:

— Ցես նրանց դպացումները չեմ բռնաբարում:

— Դուք նրանց մեջ զարդացնում եք ատելություն դեպի իմ մայրը: Ցես այդ վաղուց եմ նկատել:

— Սխալվում եք. յես միայն չեմ ուզում, վոր նրանք ուրիշների ազդեցության յենթարկվեն:

— Այդ ի՞նչ ասել է:

— Այն, վոր այս տան մեջ կրթություն տալած բանը բացակայում է:

— Մի՞թե,—գոչեց Սմբատը հեգնությամբ:

— Այո՛: Նայեցեք ձեր փոքր յեղբորը, Արշակին... յես չեմ ուզում, վոր իմ յերեխաներն էլ նրա պես կրթվեն:

— Ցես չեմ պաշտպանել իմ յեղբոր կրթությունը, բայց իմ մայրը չի կարող վատ ազդեցություն ունենալ մեր յերեխաների վրա:

— Ով գիտե...

— Անտոնինա Իվանովնա՛, իմ մայրը, ճշմարիտ է, տգետ կին է, բայց բարի յե, պարկեշտ, առաքինի և խելոք... Նա ձեր սկեսուրն է, և դուք պարտավոր եք նրան հարգել:

— Այո՛, պարտավոր եմ հարգել: Իսկ նա... նա պարտավոր է ինձ ատել, արհամարհել... այնպես չե՞...

— Նա նահապետական կին է:

— Դա նահապետականություն չի, այլ բնածին ատելություն: Բայց շատ բնական, շատ հասկանալի... Ակն ընդ ական, ատամն ընդ

ատաման... Նա ինձ ատում է, յես չեմ կարող նրան սիրել և հարգել...

Նա հենց ձեռքի տակ դրած նամակի մեջ գրեթե նույնն էր արտահայտում: Հայտնում էր բարեկամուհուն բացարձակ, թե սատիկ դղջում է կովկաս գալու համար: Վոչ մի բան նոր չըջանում չի համապատասխանում նրա հայացքներին: Հարստությունը նրան չի շլացնում և չի կարող շլացնել: Ցերը ամուսինների մեջ համերաշխությունը չքացել է — վոսկին անզոր է նրանց բախտավորացնելու համար: Նա չի սիրում Ալիմովին և չի սիրվում նրանից: Նա միայն կատարում է իր պարտքը յերեխաների վերաբերմամբ: Կմնա Կովկասում միամիտ մանուկ, մինչև վոր կհաջողի վորևե պատճառ կապել մարդու հետ:

Սմբատը վոչինչ չասաց այլևս, լուռ անցավ իր սենյակը:

Այդ գիշերը նա անցկացրեց անքուն գրեթե մինչև լույս: Սիրել զավակներին, չսիրել նրանց մորը — ահա այն սոսկալի դեպքերան, վոր տանջում էր հոգին տարիների ընթացքում: Ծառի բնից բաժանված, ամուր գրկել էր նորածիլ ճյուղերը, տատանվում էր ոդի մեջ անհետ, չէր ուզում ճյուղերը բնից պոկել, բայց չէր էլ կարողանում բաժանվել նրանցից:

Ինչո՞ւ սիրեց այդ կնոջը: Ինչո՞ւ չհասկացավ, վոր մարդկային կյանքում ահագին դեր են խաղում ծնունդը, չըլանը, ավանդությունները ու սովորությունները: Նրա հոր վոտները դեռ կրում եյին ասիական քոչերի հետքերը, իսկ ինքը ճգնում էր միքանի դար նրան առաջ քաշելի, միայն մի սերունդ առաջելու փոխարեն: Եվոլյուցիոն վո՞ր որենքել, միայն մի սերունդ առաջելու փոխարեն: Եվոլյուցիոն վո՞ր որենքով արդյոք: Կրթությունը տարբեր չըլանների անհատների մեջ ջուր արդյոք: Կրթությունը տարբեր չըլանների անհատների մեջ ստեղծում է մի տեսակ հավասարություն — համաճայն եր նա: Բայց չէ՞ վոր նույն կրթությունն անզոր է դարերով կազմակերպված ազգային կամ տեղական հատկանիշների հակադրությունը ջնջել, ինչպես անկարող է սևահերին շիկահեր դարձնել և ընդհակառակը...

Նա զգում եր, վոր այսուհետև փոխադարձ սառնությունը պիտի փոխվի փոխադարձ ատելության: Կյանքն ընդհանրապես և ամուսնական կյանքը մասնավորապես համարում եր մանրությունների մի հյուսվածք: Անձնական դժբախտ փաստերով փորձել եր, վոր ամենահետևանքը բաներից առաջանում և ամենախոշոր ահաճություն: Ահա դրանցից մայի հիմքը: Ցեթե իր և կնոջ մեջ պատահում եյին հակադիր ցանկությունների, հակադիր ճաշակների ընդհարումներ պիտի լինեին, դժվար չեր յերևակայել, թե վորպիսի ընդհարումներ պիտի տեղի ունենան իր կնոջ և իր մոր մեջ: Պատկերացնում եր յերկու հակառակ տարրեր — մեկը դրական, մյուս բացասական և յերևակայում էրեն մեջտեղ: Գուշակում եր, վոր այն բոլորը, ինչ-վոր անելու յե մայրը, արժանանալու յե կնոջ ծաղրին ու արհամարհանքին, նույնիսկ

այն, վոր մի նահապետական կին դեռ լավ չի սովորել պատառաքաղ գործածելը: Ցեվ ընդհակառակը, այն բոլորը, ինչ–վոր անելու չե կինը, հանդիպելու չե մոր առելության:

Ցեվ ահա ընդամենը յերկու չաբաթ է նրանք միասին են, արդեն վոխադարձ առելությունն արտահայտվում է:

XV

Հանքերը տեղափոխվելուց հետո, Զարգարյանների նյութական պայմանները թեթևացել էին: Ընտանիքը դոհ եր իր վիճակից, և բոլորը դգում էին յերախտագիտություն դեպի Սմբատ Ալիմյանը: Միայն անդամալույծը չարունակ բողոքում եր, թե չորս կողմից վիշում է նավթի հոտ և վիշացնում նրա ախորժակը, թե դիլերները հանդիստ չի կարողանում քնել չոգու ազմուկից և այլն, և այլն:

Գոհ եր անչափ նաև Շուշիկը, բայց բոլորովին տարբեր պատճառով: Նրա պայծառ աչքերի մեջ յերևում եր անսովոր թախիծ, սակայն վոչ բոլորովին այն թախիծը, վոր աղքատ կյանքի դառնություններն եր արտահայտում: Նրա սիրուն դեմքի վրա խաղում եր այն խորհրդավոր ստվերը, վոր ցոլացնում է նորահաս կնոջ հոգու յերաղները: Ա՛խ, կյանքի ծանր պայմանները չեն թույլ տվել այդ յերաղներին ժամանակին զարթնելու: Ցեվ դիտող աչքն այդ ստվերը կնշմարեր մանավանդ այն ժամանակ, յերբ որիորդը սովորական ժամերին, կանգնած պատշգամբի ծայրում, նայում եր հեռու ու հեռու, դեպի յերկնի ամպերը հորիզոնը... վուլթ չէ, վոր այդ պահին նրա սիրտը լցվում եր անհուն գառնությամբ, յերևակայությունը նրան տանում եր դեպի մի ախուր, անհուսալի ապագա, նա զգում եր, վոր այժմ և միայն այժմ է սկսել ապրել իրրև բանական եյակ:

Մի անգամ նա հորեղբորը խնդրեց, վոր թույլ տա իրեն գրասենյակում նրա պաշտոնը կատարելու: Ամբողջ որը Դավիթը հանքից հանք պտտելով, հաղիվ կարողանում եր հաշիվներով զբաղվել: Առաջարկությունն արավ հոր ներկայությամբ: Անդամալույծի աչքերը պլշեցին: Նայեց աղջկան վոտից մինչև գլուխ զայրացած և հայհոյեց: Ի՞նչ, վոր նախկին յերկրորդ կարգի վաճառական Սարգիս Զարգարյանի աղջիկը դնա ծառայի՞: Այդ անկարելի չե, հապա ո՞ւր և նրա հորեղբոր նամուսը:

Որիորդը փորձեց համոզել հորը, թե գրասենյակում աշխատելը նրա աղջկա համար բոլորովին ամոթալի չի. չէ՞ վոր կանայք այժմ դրսում կատարում են ամեն աղնիվ գործ, վորին ընդունակ են: Սակայն անդամալույծը կատաղեց, դեն ձգեց ծնկներից վերմակը և գոռաց կնոջը.

— Այնա՛, դնանք, գնանք յեկեղեցու դռանը կանդնենք, չես վոշորմություն կհավաքեմ ու քեզ կազատեմ այդ անամոթի ձեռքից:

Անամոթը Դավիթ Զարգարյանն եր, վոր կորացած մեջքով կանգնած նրա անկողնի առջև, տակավին լուռ նայում եր Շուշանիկին: Նա նոր եր միայն իմանում, թե վորպիսի անգին գոհար և թաղնված աղքատիկ ընտանիքում:

Շուշանիկը վոգևորված բացատրում եր աշխատանքի նշանակությունը՝ թե՛ կնոջ և թե՛ տղամարդի համար և այն յերջանկությունը, վոր մարդ կարող է զգալ, յերբ սեփական ուժերով է վաստակում որվա պարունը, յերբ մանավանդ ոգտակար է մերձավորներին:

Դավիթը հիացած լսում եր նրան: Ահա վորքան ազդեցություն է ունեցել այդ աղջկա վրա: Զե՞ վոր Շուշանիկը վեց տարի չարունակ նրա անմիջական աչակերտուհին է յեղել: Նա յե կրթել իր յեղբոր աղջկա միտքը և կրթել է այն ուղղությամբ, վոր բարվոք և համաբել կյանքի դառն պայմանների մեջ ապրող մի աղքատ աղջկա համար: Նա տվել է նրան կարդալու միշտ այնպիսի գրքեր, ուր աշխատանքը դըրվատվում է իրրև հոգեկան յերջանկության իսկական հիմք: Գրքեր, վորոնք խրախուսյա են ներշնչում աղքատներին և սովորեցնում նրանց սիրել կյանքը, վոր նրանց համար խորթ մայր է: Ցեվ ահա Շուշանիկն այսոր վոչ միայն չի տրտնջում իր վիճակի դեմ, այլև ինքն է քարոզում սեր դեպի աշխատանքը: Սակայն համաձայնե՞լ արդյոք նրա ասածներին, թույլ տա՞լ նրան մնից դուրս ևս գործերով պարապելու: Վո՛չ, այդ կլիներ անխղճություն, մի՞թե քիչ է աշխատում տանը:

Նա նույնպես հակառակեց և դրականապես հայտնեց, թե առայժմ Զարգարյանները կարիք չունեն, վոր նրանց տնից մի կին աշխատանքի դուրս գա և թե ինքը յերբեք այդ թույլ չի տալ, քանի կենդանի յե: Ցեվ այս ասելով, նա մի սուր հայացք ձգեց յեղբոր աղջկա յերեսին: Շուշանիկը չվոխվեց այդ հայացքից: Նրան թվաց, վոր հորեղբայրը հասկացել է իր միտքը: Այն միտքը, վորից ամաչում եր ինքն իսկ:

Նա չտապեց դուրս գալ հոր սենյակից, ծանր հառաչելով: Անցավ իր սենյակը վերցրեց մի գիրք, փորձեց խորասուզվել ընթերցանության մեջ, ինչպես սովորաբար անում եր դառն րոպեներին: Բայց չկարողացավ: Ցերբեք նրա սիրտն այդչափ չեր բաբախել, յերբեք նրա յերեկոն ցավ: Ցերբեք նրա սիրտն այդչափ չեր բաբախել, յերբեք նրա յերեկոն այդչափ վրդովված չեր և զգայունները՝ այդքան պղտորված: Մի կերպ չտապով վերջացնելով սովորական գործերը, նա նորից առանձնացավ իր սենյակը և դռները կողպեց ներսից: Ժամերն անցնում էին, նացավ իր սենյակը և դռները կողպեց ներսից: Ժամերն անցնում էին, և նա դեռ հետ ու առաջ եր գնում, մերթ ականջ դնելով չոգեմեքենաների ազմուկին, մերթ լուսամուտից նայելով դեպի դուրս, ուր տիրում եր խորին մթություն:

Լսեցին չվիկների սուլոցները. տասներկու ժամն եր արդեն. յե-

բեք անգամ լամպարը հանդցրեց, դլուխը թաղցրեց վերմակի տակ և յերեք անգամ էլ վառեց ու դիրքը վերցրեց: Բայց աչքերը հոգնել էլին, իսկ միտքը վոչինչ չեր ըմբռնում կարդացածից:

Աչխատում եր իրենից հեռացնել ամբոխվող մտքերը: Սակայն կամքն անզորացել եր: Ամաչում եր ինքն իր զգացումների անսպասելի դրգռումից և չդիտեր, միևնույն ժամանակ, վորոշ քննության յենթարկել նրանց: Նա փակում եր աչքերը և խորին մթության մեջ տեսնում մի լուսավոր պատկեր: Նա բաց եր անում աչքերը, և այդ պատկերը դարձյալ անխուսափելի կանգնած եր նրա առջև: Դեմքը մռայլ, ունքերը կիտված, աչքերը թափանցող, միչտ մտախոհ, միչտ ճնշված ինչ-վոր ծանր մտքից:

Նա մոխրագույն չալը ձգեց ուսերից, զգում եր անսովոր տաքություն: Մոտեցավ սեղանին, նայեց վոքրիկ սևագույն ժամացույցին, վոր նոր եր ստացել իրրև նվեր հորեղբորից: Արդեն յերկու ժամն եր: Նորեն սկսեց անցուդարձ անել: Խիտ մաղերը, ազատվելով հերկալնեերի արգելքից, թափվել էլին թիկունքների վրա, ծածկել ականջները, սքողել այտերը, ընդգրկել կիսամերկ կուրծքը: Այտերը չառադունել էլին, աչքերի մեջ վառվել եր անսովոր հուր: Մշտական հեղ կերպարանքն այժմ արտահայտում եր ինչ-վոր խրոխտություն: Եթե մերձավորներն այդ պահին դիտեյին նրան դռների հետևից գաղտնի, հազիվ թե ճանաչեյին: Չկար այլևս նրա աչքերի մեջ նախկին պայծառությունը և վոչ նրա չրթունքների վրա անդորրության ժպիտը: Ա՛խ, միայն թե Սմբատ Ալիմյանը նրան հիմար չհամարի և չծաղրի ինչպես մի դեռահաս աղջկա, վոր պատրաստ է առաջին պատահած տղամարդի մեջ տեսնել ռոմանտիկական հերոս: Վո՛չ, Շուշանիկը չի ուզում այդ մարդու աչքում յերևալ թեթևամիտ: Սմբատը խելոք է. կրթված, հասուն մտքի տեր, կյանքի փորձանքները ճաշակած: Այդպիսի մի տղամարդ չի կարող լուրջ հայացք ունենալ յուրաքանչյուր աղջկա մասին: Նրա պահանջները խիստ են, և հենց այս է պատճառը, վոր նա իր ընտրությունն արել է ոտար չըջանում:

Նրա հորեղբայրն ասում է, թե Ալիմյանը բախտավոր չէ ամուսնական կյանքում, թե նրա մշտական տխրության պատճառն այս է: Ինչո՞ւ, տեր-Աստված, ինչո՞ւ: Մի՞թե ընտրությունը սխալ է յեղել, և Ալիմյանն այժմ ղղջում է: Բայց ի՞նչ հարց, ո՞վ տվեց Շուշիկին իրավունք զբաղվելու մի ոտար մարդու ընտանեկան կյանքով: Բավական է, պետք է մոռանալ այդ մարդուն:

Յեվ նա հոգնած գլուխը նորեն դրեց բարձին:

Արդեն առավոտյան լույսը լուսամուտի փեղկերի արանքով ներս եր թափանցել, յերբ, վերջապես, նիրհեց:

— Աննա՛, ո՞ւր է աղջիկդ,—հարցրեց յերրորդ անգամ անգամալույծը կնոջը:

— Դեռ քնած է:

— Քնած է, քնա՞ծ, տասը ժամն է. գնա, զարթեցրու, տխուր եմ, թող գա թուղթ խաղանք: Ցեղունդներս էլ կարել հարկավոր է, չատ են յերկարացել:

Այժմ Շուշանիկի գործերի մի մասը կատարում եր նոր վարձված աղախինը: Սակայն անգամալույծն այնքան սովորել եր աղջկան, վոր դարձյալ պահանջում եր, վոր մեծ մասամբ նա ծառայի իրեն:

Աննան մոտեցավ աղջկա սենյակին, մատնելով զարկեց դռներին մի քանի անգամ: Դռները բացվեցին: Շուշանիկն արդեն զարթնել եր և հագնվել: Այժմ նրա այտերը դունատ էլին, աչքերի կոպերը նեաելու չափ ուռած:

— Հիվա՞նդ ես,—հարցրեց մայրը:

— Վո՛չ:

Նա չտապեց դուրս գնալ: Ցերեսը լվացավ, մաղերը կարդի բերեց, համեց սովորական մի բաժակ թեյը և գնաց հորը ծառայելու:

— Աղախին վարձելուց հետո, իշխանուհի յես դարձել,—կշտամբեց անգամալույծը:—Ցես այստեղ տանջվում եմ, դու մրափում ես մինչև կեսօր: Բե՛ր թղթերը, խաղանք:

Նա լուռ կատարեց հոր հրամանը: Խաղում եր այժմ անուշադիր, մտամոլոր, մի հանդամանք, վոր բարկացրեց հորը:

— Նելքդ գլխիդ խաղ արա,—դոչեց անգամալույծը, առողջ ձեռով թղթերը մեկ-մեկ բանալով:

Ներս մտավ Դավիթը և ասաց Շուշանիկին, թե մի թուրքի հանքերում չատրվան է բացվել, յեթե կամենում է, կատի հետը գուլպ տալու:

— Թուլլ կտա՞ս, պապա,—հարցրեց Շուշանիկը:

— Այնքան հիմար ես խաղում, վոր կարող ես գնալ, կորչել,— գոչեց անգամալույծը, թղթերը չպրտելով մի կողմ:

Քամին հյուսիսային եր, յեղանակը գուրս: Շուշանիկը հագավ ձմերային վերարկուն և սամուրի կոլորակ գլխարկը: Ցերկուսն էլ հոդերդր նվերներն էլին: Այժմ Զարգարյանն աչխատում եր կարողություն չափ, վոր իր յեղբոր դուստրը լավ հաղնվի: Նա հիացավ, տեսնելով Շուշանիկին նոր հագուստում: Վերարկուն խիստ սաղ եր գալիս որիորդին, իսկ սամուրի գլխարկի գույնը գեղեցիկ ներդաշնակություն եր կազմում թանձր ու գանգուր մաղերի վրա: Ցուրտը չուտով նրա այտերին տվեց անրնական կարմրություն, պայծառ աչքերը դարձյալ պայծառացան, ճակատի թեթև կնճիռները բացվեցին:

Շատրվանը գտնվում եր քաղաքի հետուս: Նրանք անցան մի մեծ

տարածություն, մոտն մի լայն ճանապարհ և հետո մի նեղ չավիղ· անցնելով մի չարք բուրգեր, Զարզարյանը հանկարծ կանգ առավ և ցույց տվեց դեմ ու դեմ, բուրգերի հետևում, յերկնի մոխրագույն հորիզոնի վրա նկարված մուգ–կինամոնագույն մի կիսակամար, ասելով·

— Տե՛ս, ինչ բարձր է խոտը:

Շուտով Շուշանիկի աչքերի առջև բացվեց հափշտակիչ և սքանչելի տեսարան: Սև նավթը, դալի ուժգին ղորությամբ, դուրս մղվելով յերկրի խորքից, սլանում եր վեր ինչպես հրաբխային կրակ: Հասնելով իր վերջնակետին, կազմում եր կիսաշրջան և թափվում ներքև: Ջամին տարածում եր հեղուկն ողի մեջ և մանրացնելով, սիռում չորս կողմ անձրևի պես: Բուրգի գագաթն ու կողերը խորտակվել եյին չարվանի ամեհի ղորությունից, և նրա մթին ուրվագիծն եր միայն լողում սև հեղուկի մեջ, վորպես կմախք դարձած վիթխարի կաղնի յերկնային հեղեղի տակ:

Ցերեկն հորի խորքից դուրս եյին արձակվում մարդու գլխի չափ քարեր: Կատաղի պոռթյաններ ղործելով, նրանք հեղուկի հետ սլանում եյին վեր՝ թնդանոթի ռումբերի պես և ընկնում բուրգի վրա կամ չըրջակա սև լճակների մեջ: Գազը մոնչում եր, և յերկիրը թնդում նրա ղորությունից: Մերթընդմերթ չարվանը, կարծես, հոգնում եր, ցածանում, խուլ հնչյուններ արձակում: Բայց անցնում եր մի քանի վայրկյան, և նորեն լսվում եր ատրեկրյա խլացուցիչ ժխորը: Այն ժամանակ սև հեղուկի հսկայական սյունն առանձին ուժով եր ճգվում դեպի վեր:

Մշակների մի մեծ խումբ, թիերով ու բահերով զինված, մրջյունների պես չրջապատել եր բուրգի անդնդական մնացած կմախքը և աշխատում եր թանկագին հեղուկի համար ժամանակավոր ճանապարհ բանալ: Մի քանի մղիչ մեքենաներ եյին դրված, վորոնք նավթն ուղղում եյին դեպի Սև քաղաք տանող նավթանցքերը: Արհեստավորները պատրաստում եյին ինքնուրույն պատսպար, վորով պիտի չարվանին կանոնավոր ընթացք տային, վորպեսզի հեղուկն ապարդյուն չցրվեր:

Ցերեկն մշակները, ծիծաղելով, դոռալով, վոստոստալով, ցրվում եյին այս ու այն կողմ, փախչելով վայր սլացող քարերից: Նրանք կիսամերկ եյին, վոտները մինչև ծնկները և թևերը բաց: Շատերը սրկվում եյին լպրծուն ավազի վրա, ընկնում նավթի մեջ, չարժելով ընկերակիցների ծիծաղը: Բայց բոլորն էլ ուրախ եյին, հուսալով առնել պարգև չարվանի տիրոջից:

Իսկ բախտավոր Թուրքի կանգնած եր հետու, քաղաքից յեկած հետաքրքիրների բազմության մեջ: Դա մերուքը հինյացած, գլուխը մաքուր սափրած մի ասավածավախ հաջի յեր, վոր նայում եր անհուն

հարստությանը և փառք տալիս Ալլահին, վոր, վերջապես, լսել եր նրա ջերմ աղոթքները: Դեռ յերեկ պարետատերերն ուզում եյին նրան դատարան քաշել, ինչպես անանկ կոմերսանտի: Այժմ մտքում հաշվում եր չարվանից ստացվելիք միլիոնները: Նրա ցամաքած և խորշոմներով ծածկված դեմքի վրա խաղում եր անհուն յերջանկության ժպիտը: Իոլորը չըջապատել եյին նրան, չնորհավորում եյին, ձեռը բարեկամաբար սեղմում, նորոգում մոռացված ծանոթությունը:

Ինժեներ Սուլյանը պատում եր Թուրքի չուրջը՝ ինչպես վորսկան շուն: Հույս ուներ մի քիչ նավթ առնել ապատիկ, վաղը—մյուս որը թանգ գնով ծախելու նպատակով:

Շուշանիկից վոչ հետու խմբված եյին միքանի յերիտասարդ հանքատերերը, վոր յեկել եյին քաղաքից բախտավոր Թուրքին նախանձելու: Զարզարյանը նկատեց, վոր նրանք միմյանց արմունկով բոթոտում են և հետաքրքրված ցույց տալիս Շուշանիկին: Իոլորն ուզում եյին իմանալ դեղադեմ որիորդի տվ լինելը: Մեկը նույնիսկ չարվանի տիրոջ ուշադրությունը դարձրեց նրա վրա: Բախտից հարբած Թուրքը բարևեց անծանոթ որիորդին, ձեռը գնելով նախ կրծքին, ապա աչքերին: Այնքան չփոթված եր, վոր կարծում եր, թե այդ աղջիկն էլ իրեն չնորհավորում է:

Հանկարծ խմբի ուշադրությունը դարձավ ուրիչ կողմ: Ճանապարհ ավեցին մի չիխահեր կնոջ, վորին ուղեկցում եյին Միքայել Ավիմյանը և մի մուշտակավոր պարոն:

— Սմբատի կինն է,—ասաց Դավիթ Զարզարյանը Շուշանիկին:— Նա յել, յերևի, տիկնոջ յեղբայրն է:

Որիորդը հետաքրքրված նայեց Անտոնինա Իվանովնային: Հիասթափման պես մի բան զգաց, յերբ տեսավ, վոր տիկինն այնքան էլ ելեգանտ չի տեսքով, վորքան յերևակայում եր և արդեն, կարծես, ծերացած է: Փափուգից նրա հետ ծանոթանալ, և նրա փափուգը չուտով կատարվեց: Միքայելն ուղեկիցների հետ բարձրացավ այն հողայինն Թումբը, ուր կանգնած եր որիորդը՝ հորեղբոր հետ: Մոտեցավ բարևեց և հետո գարձավ տիկնոջը·

— Անտոնինա Իվանովնա, թույլ տվեք ներկայացնել, որիորդ Զարզարյան և մեր կատավարչի ողնական Զարզարյան:

Տիկինը ձեռն անփույթ մեկնեց Շուշանիկին և հետո չարունակեց Միքայելին հարցեր տալ չարվանի մասին: Իսկ նրա յեղբայրը, աչքերը պենսնեյի տակից ճպճպելով, ինչ–վոր չընջաց Միքայելի ականջին:

Անտոնինա Իվանովնան չգիտեր ինչպես արտահայտեր իր զարմացումը և հիացումը չարվանի վերաբերմամբ: Նա աքանչանում եր

քնության ուժից, մինչդեռ թուրքը չարժում եր նրա ծիծաղը: Հետո սկսեց խոսել Շուշանիկի հետ, դիտելով նրան ուշադիր:

— Դուք կկամենա՞ք այդպիսի չատրվան ունենալ,—հարցրեց նա հանկարծ:

— Վո՛չ,—պատասխանեց որիորդը ղրականապես:

Անտոնինա Իվանովնան մի սուր ու դիտող հայացք ձգեց որիորդի վրա և չարունակեց վոչ առանց հեգնության.

— Ասում են, այստեղ կանայք եվ զժվում են չատրվանի համար:

— Զղիտեմ, տիկին:

— Տեսե՛ք, ինչպես և խփում, բոլորը վոսկի յե, մի՞թե չեյիք կամենալ այդ վոսկու տերը լինել:

Շուշանիկը զղում եր, տիկինը փորձում եր իրեն: Զղում եր նաև տիկնոջ ծաղրն «այստեղի կանանց» շահամոլության վերաբերմամբ, ուստի ասաց.

— Մի՞թե կարծում եք, վոր մարդու բախտավորությունը միայն վոսկու մեջ է:

— Կարծո՞ւմ եմ, յե՛ս: Ինչո՞ւ չե:

— Այն ժամանակ կարող եք ձեզ բախտավոր համարել: Վոչ վոքի հորերն այնքան առատ նավթ չեն տալիս, վորքան Ալիմյաններինը:

Տիկինը չփորթվեց: Զգաց, վոր այդ, ըստ յերևույթին, քաշվող որիորդի հետ հեգնորեն խոսելը չատ եվ դյուրին բան չե: Նա թեքվեց յեղբոր ականջին և չընջաց.

— Հիմար աղջիկ նման չե:

— Շարմանա,—պատասխանեց Ալեքսեյ Իվանիչը, պենսնեն ուղղելով:

Շուշանիկը խնդրեց հորեղբորը տուն վերադառնալու:

— Պապան կնեղանա, արդեն տասներկու ժամն է:

— Գնանք, ասաց Զարզարյանը:

— Վատո՞վ պիտի գնաք,—հարցրեց Միքայելն ավելի կեղծ, քան անկեղծ զարմանալով:

— Վատով:

— Յերեք-չորս վերստ ճանապարհը: Սուլյան, մեղավորը դուք եք, ինչո՞ւ մինչև հիմա Ալիմյանների հանքերում միքանի սեփական կառքեր չկան: Ցես հրամայում եմ, վոր այսուհետև լինեն:

— Կա՞ք ձեր հանքերը տեսնելու,—հարցրեց Շուշանիկը, ձեռը մեկնելով Անտոնինա Իվանովնային:

— Մեր հանքե՞րը.. կարելի յե գամ:

— Զարզարյա՛ն,—դարձավ Միքայելն իր ստորագրյալին,—կանչեցե՛ք, խնդրեմ, իմ կառքը: Համար ութերորդ: «Հասան» կանչեցեք, կզա: Որիորդ, յես, միևնույն ե, պիտի ձեր կողմերը գնամ իսկույն,

Մուրատաղուլովի հանքերում գործ ունեմ: Անտոնինա Իվանովնա, ինձ ներեցեք. Սուլյանը, իմ փոխարեն, այստեղ, ինչ-վոր հարկավոր և կբացատրի, կուղեկցի... Յերեկ, դեռ մի քանի րոպե եվ կհիանաք այս կրացատրի, կուղեկցի... Յերեկ, դեռ մի քանի րոպե եվ կհիանաք այս աքանչելի տեսարանով: Ցես չուտով կգամ, չատ չուտով, և ձեզ կտանեմ մեր հանքերը: Որիորդ, ահա կառքը, խնդրեմ, խնդրեմ, առանց ցերեմոնիայի... Ալիմյանները հասարակ մարդիկ են, բոլորովին հասարակ...

Վորքան որիորդը, չնորհակալություն հայտնելով, մերժեց, վորքան հավատացրեց, թե իր համար վոտով գնալն ավելի հաճելի յե, վոչինչ չոգնեց: Միքայելը թախանձում եր անվերջ, այնպես վոր Դավիթ Զարզարյանը Շուշանիկի համառ մերժումը համարեց անքաղաքավարություն: Որիորդը չփորթվեց հորեղբոր ստիպիչ հայացքներից և հաղթահարված, գրեթե անդիտակցաբար կառք նստեց:

Շատրվանը, չարունակ վորոտալով, բարձրանում եր վեր և, նորից սաստկացած քամու հոսանքի հետ չկարողանալով մրցել, ցրվում եր ողի մեջ անթիվ չիթերով: Նավթի միլիոնավոր կաթիլները տարածվում եյին հեռու ու հեռու: Բախտավոր թուրքը բարձրաձայն ծիծաղում եր նավթային անձրևի տակ թրջվողների վրա, ձեռները պարկելով ծնկներին և մեջքից յերկծալ թեքվելով:

Բաղաքից չարունակ կառքեր եյին գալիս, բերելով հետաքրքրվողների նոր խմբեր: Մի կառքից ցած իջան Մոսիկոն, Մելքոնը և Բյալիմ բեկը: Կառք նստելիս, Միքայելը նրանց խորհրդավոր նշան արավ ձեռքը: Կառք նստելիս, Միքայելը նրանց խորհրդավոր նշան արավ ղեմքով, և յերիտասարդներն իրենց հայացքները քևեռեցին Շուշանիկի վրա:

Սև հեղուկը, ուժգին դուրս բղխելով յերկրի խորքից, հեղեղում եր բուրգերը, արհեստանոցները, կացարանները և մարդկանց: Մինչ բուրգերը, արհեստանոցները, կացարանները և մարդկանց: Մինչ տի մեջ տարածվել եր ինչ-վոր արբեցուցիչ բան: Բոլորը ծիծաղում եյին, քրքջում, միմյանց հրում, վորպես հարբածներ, և սև հեղուկի տակ գոռում:

Մինչ Դավիթ Զարզարյանը չփորթված նայում եր, սպասելով, վոր Միքայելն իրեն եվ պիտի հրավիրե կառք նստելու, մոխրագույն ձիերը սլացան: Յեվ կառքը միքանի վայրկյանում անհետացավ սև բուրգերի հետևում:

— Զարմանալի չենթլմեն և Միխայել Մարկիչը,—դարձավ Շուլյանն Անտոնինա Իվանովնային, միևնույն ժամանակ, մի կողմնակի հայացք ձգելով Զարզարյանի վրա:

— Այո՛... այդ յերևում է... պատասխանեց տիկինը, նույնպես նայելով Զարզարյանին:

Ցեվ մի կես-հեղնական, կես-ցավակցական ժպիտ ազատվեց նրա դեմքը...

— Իսկ յես կասեմ,—դարձավ Ալեքսեյ Իվանիչը քրոջը,—այս յերկրում հյուրասիրություն ասած բանը չատ ել հարգի չե...

XVI

Մինչեև ցոպե Շուչանիկը չվարված չգիտեր ինչ խոսեր: Թվում եր նրան, վոր մի անելևուլթ ձեռ մի դուլլ յեռացրած ջուր հանկարծակի թափեց իր վրա այն պահին, յերբ Մինքայելին ղպաց մոտը նըստած: Ա՛խ, մխային ղպաց, վորովհետև չեր նայում նրա կողմը:

Ամենինչ, կառքը բուրդերի յերկու չարերի միջով արագ-արագ սլանում եր: Ճանապարհն ավազոտ եր, նավթով ստոդրված. ձիերի վոտներն արձակում եյին խուլ դոփյուն: Շուչանիկը մտքում հաչվեց, թե ամենաուշը քառորդ ժամում տուն կհասնի, և այն ժամանակ կարող և իրեն հաչիվ տալ անսպասելի դեպքի մասին: Տեր Աստված, ինչ ա-րեց: Նա՞, այս աղքատ ընտանիքի զավակը նստած կառքում քաղաքի առաջին հարուստ յերիտասարդներից մեկի հետ: Ինչ կմտածեն տեղացիները, ինչ կխոսեն ծնողները, հորեղբայրը...

Մինքայելը ձեռնափայտի ծայրով խփեց կառապանի թևին և ինչ-վոր ասաց թուրքերեն: Նա պիտեր, վոր Շուչանիկը թուրքերեն չի հասկանում:

Կառքն ուղին փոխեց, սկսեց ընթանալ ճանապարհից դուրս, հանքային չինուհյունների միջով, մի զառիվայր ուղիով:

— Կարծեմ, կառապանը սխալվում է,—ասաց Շուչանիկը, նայելով չուրջը:

— Չի սխալվում, որիորդ. հմուտ կառապան է...

Մինքայելի քաղաքավարի ձևերը, ձայնի մեղմությունը, ղպույչ չարժումները մի քիչ հանդստացրին Շուչանիկին: Մտածեց, վոր վախենալու կամ չփոթվելու առիթ չունի: Բոլորը պիտեն, վոր Ալիմյանները Զարդարյանի տերերն են. իսկ Զարդարյանը — Շուչանիկի հորեղբայրը: Ո՞վ կհամարձակվի բամբասել: Վերջապես, մի՞թե արդեն անկարելի չե մի որիորդի կառք նստել իր ծանոթի հետ, թեկուզ այդ ծանոթը լինի հարուստ, իսկ ինքը՝ աղքատ:

— Հավանեցի՞ք մեր հարսին,—խոսեց Մինքայելը:

— Ինչ կարող եմ ասել, նոր ծանոթացա: Վո՛չ, սխալվում է կառապանը, մենք չեղվեցինք ճանապարհից:

Մինքայելը դարձյալ ձեռնափայտով խփեց կառապանի թևին և դարձյալ ինչ-վոր ասաց:

— Ինչո՞ւ ոսերեն չենք խոսում,—հարցրեց Շուչանիկը:

— Հասանը ոսերեն չգիտե... Որիորդ, ընկերներս, ձեզ տեսան և հիացան:

Շուչանիկը կարմրեց, վոչինչ չասաց:

Հանկարծ կառքը կանգ առավ: Կառապանը ցած իջավ:

— Ի՞նչ պատահեց,—հարցրեց Շուչանիկը:

— Անձրև է սկսվում, հրամայեցի ծածկոցը բարձրացնել:

— Ո՛ո, վո՛չ, վո՛չ, անձրև չկա, յես անձրևից չեմ վախենում, յես սիրում եմ անձրևը...

— Շատ լավ, կխոսով չափ կծածկի, Հասանը գիտե...

Կառապանը ծածկոցը բարձրացրեց մինչև կեսը և նորից նստեց իր տեղը:

— Որիորդ, դուք քաղաք յերբեք չե՞ք գալիս:

— Մի յերկու անգամ գնացել եմ:

— Ինչո՞ւ այդպես քիչ:

— Զբաղված եմ:

— Գիտեմ, լսել եմ, ձեր հիվանդ հորն եք նայում: Խե՛ղճ մարդ: Ասում են, մի ժամանակ չատ հարուստ և չատ առողջ է յեղել: Անկեղծ ցավում եմ...

Այս խոսքերը չարժեցին Շուչանիկի սիրտը: Վո՛չ, յերևի, սխալված է, յերևի այդ, ըստ յերևույթին, յեսական յերիտասարդը յեղբոր պես բարեսիրտ է և զգայուն:

— Այս հանգերում ապրելով, մարդ կարող է վայրենանալ, որիորդ, դուք դուրս եք հասարակությունից փախչում: Քաղաքում ազգականներ կամ բարեկամներ չունե՞ք:

— Վո՛չ:

Տիրեց բոլորական լռություն: Կառապանը հետ նայեց. հարցնում եր, վոր կողմ գնել:

— Թատրոն սիրո՞ւմ եք,—հարցրեց Մինքայելը, կառապանի վրա մի բարկացկոտ հայացք ձգելուց հետո:

— Սիրում եմ միայն դրամա:

— Դրամա՞,—կրկնեց Մինքայելը, կարծես, ուրախանալով,—այժմ քաղաքում մի դրամատիկական խումբ կա: Այսոր մի լավ դերասանուհու բենեֆիսն է, ինչ-վոր նոր դրամա յեն խաղալու, հա՛, Նո՛րա, Նորա...

— Նո՛րան կարդացել եմ, կկամենայի տեսնել...

— Շատ դեղեցիկ... Թույլ տվեք ձեզ հրավիրել թատրոն...

— Շնորհակալ եմ... Հորս մենակ թողնել չեմ կարող...

— Ի՞նչ կլինի, վոր մի յերեկո թողնեք:

— Վո՛չ, չեմ կարող, չեմ կարող...

— Որիորդ, դուք այդքան յերիտասարդ, գեղեցիկ և տանը վակ-
ված, այդ աննկարելի յե ձեր ծնողներին...

Շուշանիկը զգաց, վոր յերիտասարդն արդեն սկսում է համարձակ դառնալ, ուստի բարվոք համարեց լռել:

— Թատրոնից անմիջապես ձեզ կուղարկեմ տուն,—ասաց Միքա-
յելը,—այնպես վոր ձեր հայրն ընդամենը յերեք-չորս ժամ կմնա առանց ձեզ:

— Վո՛չ, վո՛չ, այդ անկարելի յե: Ցեսս առանց իմ հորեղբոր վոչ մի տեղ չեմ գնում:

— Կարծես, նրան տանելը դժվար է, ոթյակ կվերցնեմ...

— Սպասեցե՛ք, այդ ի՞նչ է մենք, կարծես, գյուղից դուրս յե-
կանք: Մենք ո՞ւր ենք գնում, պարոն Ալիմյան:

— Զրոսնում ենք...

— Զրոսնում ենք,—կրկնեց Շուշանիկը, չրթունքները կրծոտե-
լով,—իսկ հա՞յրս... Ներողություն, պարոն Ալիմյան, հորս ճաշ տա-
լու ժամանակն է, յես իրավունք չունեմ զրոսնելու...

— Որիորդ, կարծես, դուք ինձ հրեշ եք համարում:

— Ինչո՞ւ, ո՞վ ասաց. հրեշ չեք, բայց...

— Բայց և՛ մարդ էլ չեմ, ուզում եք ասել, յերևի...— լրացրեց Միքայելը, ծիծաղելով:

— Ցես այդ չեյի ուզում ասել...

— Ուրեմն ինչո՞ւ եք ինձանից վախենում:

Շուշանիկի ինքնասիրությունը վիրավորվեց:

— Ցե՞ս եմ վախենում ձեզանից,—դոշեց համեստ որիորդն այն-
պիսի լուրջ ձայնով, վոր Միքայելը չեր սպասում նրանից:—Սխալվում եք...

Տարօրինակ բան. քանի Միքայելը հեռվից հետու յեր հետամուտ Շուշանիկին, կարծում էր, յեթե առանձնանա հետը, կարող է միքանի րոպեում սիրել նրա սրտին: Ամենագին հաղթությունները նրա մեջ զարգացրել էին ինքնավստահության վոգին, իսկ Անուշի դյուրին ձեռք բերված սերը համոզել էր նրան, թե իր հրապույրին վոչ մի կին չի կարող հանդուրժել: Այժմ, այս աղքատ, համեստ, ընտանեկան ծանր պայմաններից ճնշված աղջկա մոտ զգում էր անսովոր վեհերու-
թյուն: Այդ լուրջ, խելացի և սիրուն դեմքը, այդ մաքուր, պայծառ աչքերը կաչկանդում էին նրան, ինչպես վոմանց հայացքը զսպում է վայրի գազանի կատաղությունը: Ցեվ, չնայելով ներքին զորավոր պա-
հանջին՝ գրկել ու համբուրել մի անպաշտպան մաքուր, անարատ եյա-
կի, վորի նմանը դեռ չկար իր անցյալ հաղթանակների ցանկում — զարմանքով կաչկանդված էր:

Սակայն Շուշանիկի աներկյուղ խոսքերը զրդռեցին նրա անձնա-

սիրությունը: Ի՞նչպես, նա՞, այդ հասարակ աղջիկը չի՞ վախենում Միքայել Ալիմյանից, մի մարդուց, վոր ամեն բան կարող է անել, յեթե վոչ անձնական հրապույրներով, գեթ ամենահաղթ փողի ու-
ժով:

Նրա աչքերի մեջ խաղաց կիրքը, շրթունքներն սկսեցին դողալ: Շուշանիկի չառազուծած այտերը բորբոքել էին նրա արյունը: Նա փորձեց մոտիկ նստել, գրեթե թևը բոլորովին սեղմելով որիորդի թե-
վին: Որիորդը տեղից չարժվեց, առանց նրան նայելու: Միքայելը մեջքը կռթնեց կառքի մեջքին: Կամեցավ բռնել որիորդի ձեռը, վոր, կարծես, անզոր ընկած եր ծնկան վրա: Նույն վայրկյանին իր վրա հա-
ռած տեսավ մի զույգ աչքեր, այնքան գեղեցիկ և, միևնույն ժամանակ, այնքան յերկյուղալի, վոր թևերը թուլացան: Սակայն պղտոր արյունն արդեն յեռում եր: Նա բռնեց Շուշանիկի ձեռը, վոր հանգիստ ընկած եր ծնկան վրա, և ամուր սեղմեց:

— Պարոն Ալիմյան,—լսվեց որիորդի լուրջ ձայնը, լի հոգեկան վրդովմունքով,—հանգի՛ստ նստեցեք...

Ալեց ձեռը հանդարտ և դարձյալ հեռացավ: Միքայելը կորցնում եր իրեն: Որիորդի սառնությունն ավելի ու ավելի յեր բերրոքում նրա արյունը: Մի վայրկյան մտաղրվեց զործ դնել բռնություն, բայց միայն մի վայրկյան: Նայեց որիորդի մաքուր պրոֆիլին և նույնիսկ դեմքի դույնի մեջ զգաց նրա հոգու անարատությունը: Սակայն կիրքն արդեն կորցնում եր նրան, իսկ վիրավորված ինքնասիրությունը թուլացել եր: Նա չկարողացավ այլևս զսպել իրեն և գրեթե անգիտակցաբար, մթա-
գնած ուղեղով և բուռն զգացումների թափից անզորացած չոքեց կառ-
քի վրա, որիորդի առջև...

— Ապտակեցե՛ք ինձ, բայց յես... յես... ձեզ սիրում եմ... Այո՛, սիրում եմ... Այրվում եմ, հասկանո՞ւմ եք, կրակի մեջ եմ... Չենց առաջին որից դուք ինձ խելքից հանեցիք... Ցերբեք, յերբեք վոչ մի կին ինձ այդքան չի գժվեցրել... Որիորդ, ամեն բան, ամեն բան կա-
նեմ ձեզ համար, կատ բոլոր հարստությունս, հասկանո՞ւմ եք, բո-
լոր հարստությունս, միայն, միայն... մի համբույր...

Շուշանիկը զայրացած նայեց նրա կրքից վառված աչքերին և ղդաց նրա հոգու դաղրելի ձգտումը: Դյուրթական բառը «սեր» նրա բե-
րանից հնչում էր, վորպես լիովին անարդանք:

Ցեվ նա մի վոտը դրեց կառքի բաղորտի վրա, կամեցավ ցած թռչել այն միջոցին, յերբ ձիերը հողմի պես եյին սլանում ամայի դաշտում, հայտնի չե ուր:

— Կա՛նգ առեք, խելագար,—դոշեց Միքայելը, բռնելով նրա թևը և ուժով տեղը նստեցնելով,—դուք ձեր հիմար գլուխը ջարդ ու փշուր կանեք...

— Հրամայեցե՛ք կառապանին քշել դեպի մեր հանքերը...

Յերբեք վոչ մի ձայն այնքան սոսկալի չեր թվացել Միքայելին, վորքան այդ անպաշտպան, թույլ աղջկա ձայնը: Նա զղջաց իր անզգուշության մասին, ամոթից կարմրեց, և դուցե դա առաջին ամոթն եր նրա կյանքում այն որից, յերբ ճանաչել եր կանանց: Փայտի ծայրով բոզի խփեց կառապանի թևին: Կառքը հետ դարձավ և մի քանի րոպեյում մտավ մեծ ճանապարհը:

Ներանք այլևս լուռ եյին: Միքայելին պաշարեցին խառն զգացումներ: Նա և՛ ամաչում եր, և՛ բարկանում, և՛ ուզում եր ներում խընդրել, և՛ ուզում եր վրեժ առնել: Մի բան պարզ եր. յերբեք վոչ մի կնոջ մեջ այդչափ բարոյական ուժ չեր զգացել: Յեվ վորքա՜ն արհամարհանք կար այդ աղքատ որիորդի դեմքի վրա, վորքա՜ն առելություն դեպի իր հարուստ, դեղեցիկ, յերևոտասարդ ուղեկիցը:

Կառքն արագ-արագ մոտենում եր Ալիմյանների հանքերին: Միքայելը նույնպես աշխատում եր ատը յերևալ, վորպես սառն եր Շուշանիկը, ցույց տալ այդ խեղճ անդամալույծի աղջկան, թե Ալիմյանի համար նա վոչինչ արժեք չունի, վոչինչ, նույնիսկ մի հասարակ ապրանքի չափ:

— Յես ցավում եմ ձեր մասին,—ասաց նա, ուսերը վեր քաշելով,—հիմա տանը պիտի սկսեն հանդիմանել ձեզ, և քանի՞ հոգի—ձեր մայրը, հայրը, հորեղբայրը, մորեղբայրը, դուցե և յերեխաները, դուցե և՛ ձեր աղախինը:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև արժանի համարեցիք Միքայել Ալիմյանի պես մի անպիտան, զզվելի, գարշելի մարդու հետ կես ժամ կառքով զբոսնել... Ի՞նչ պատիվ մի ընչին մարդու համար...

Հեգնությունը չպղնձեց Շուշանիկի վրա: Նա միայն ասաց.

— Իմ խելքը հանգիստ և:

Կառքն արդեն մոտենում եր դրասենյակին: Միքայելն զգաց պահանջ մի նեբոզամիտ ժպտի արժանանալու:

— Որիորդ,—ասաց նա,—յեղանակը փոխելով,—կկամենայի խոհանալ, ի՞նչ եք մտածում իմ մասին:

— Ձեր մասի՞ն... Վոչինչ...

— Վոչինչ,—կրկնեց Միքայելը,—և՛ այդ վիրավորանքը յես տանո՞ւմ եմ... Հայհոյեցեք ինձ, ատեցեք, բայց մի՛ ասեք, թե վոչինչ չեք մտածում...

— Յես մտածում եմ, թե վորքան զանազանություն կա ձեր և ձեր յեղբոր մեջ, ասաց և չտապելով կառքից ցած իջավ, կարծես չկամենալով իր խոսքերի պատասխանը լսել:

Ահա ինչ, այդ աղքատ աղջիկն այնքան հպարտ է, վոր մինչև անգամ արժանի չհամարեց Միքայել Ալիմյանին ձեռ տալու: Դա արդեն չափազանցություն է: Ծաղրվել մի գործակատարի յեղբոր աղջիկ կողմից, ստորանալ նրա առջև և այն էլ նպատակին չհասած — այդ դժուրին մարսելու բան չեր Միքայելի համար: Նա կատաղությունից կառքի վրա պտույտ-պտույտ եր անում, ձեռն ուժգին զարկում եր ծնկին, մատների ծայրերը խածնում եր անխնա և ինքն իրեն հայհոյում, վոր այնքան ստորացրեց իրեն:

«Վորքան զանազանություն կա ձեր և ձեր յեղբոր մեջ», հնչում եյին նրա ականջին որիորդի վերջին խոսքերը: Ահա, այդ ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, վոր նա Սմբատին հավանում է, Միքայելին արհամարհում: Շատ դեղեցիկ, թող արհամարհի, Միքայել Ալիմյանը պարտքի տակ մնացող չէ: Նա կառնի վրեժը:

Նա հրամայեց կառապանին դառնալ դեպի չատրվանը: Անտոնինա Իվանովնան չկար: Նա արդեն իր յեղբոր հետ վերադարձել եր քաղաք: Մոսկիան, Մելքոնը և Ֆյագիմ-բեկը կատակներ եյին անում չատրվանի մոսկիան հետ: Իսկ չատրվանը շարունակ արտավիժում եր նախկին սայլապանի համար մխիթարները:

Միքայելն իր ընկերների հետ վերադարձավ քաղաք: Ճանապարհին Ֆյագիմ-բեկը, վոր նրա հետ նստած եր մի կառքում, չարունակ հարց ու փորձ եր անում Շուշանիկի մասին:

— Անկրավ, դու անկյուններում թաղցրած գոհարներ ունես ու ինձ չե՞ս ասում:

— Ֆյագիմ, կատակ մի՛ անիլ այդ աղջկա մասին. նա քո ասածներից չե,—պատվիրեց Միքայելը խիստ յեղանակով:

— Ոհո՛, թագա խաբար,—զոչեց Ֆյագիմ-բեկը, բայց և դադարեց խոսել որիորդի մասին:

Միքայելը մերթընդմերթ հառաչում եր, հիշելով Շուշանիկի արհամարհական ժպիտները և մանավանդ վերջին խոսքերը:

— Ի՞նչ կա, սիրելիս, ինչո՞ւ յես տխուր,—հարցրեց վերջապես Ֆյագիմ-բեկը:

— Զգիտեմ. թվում է, վոր ինձ մի բան պիտի պատահի, մի դըժբախտություն:

— Հիմար-հիմար մի՛ խոսիր, յերեկոյան կգաս կլուբ, պիտի ուրիշ տեղ գնանք...

Սակայն Միքայելի նախազգացումը պիտի արդարանար հենց կլուբում և արդարանար այն կողմից, ուսկից չեր սպասում վոչ մի դըժբախտություն կամ դադարել եր սպասել:

Ուր ժամին բոլոր ընկերները կլուբումն եյին, յերբ Միքայելը ներս մտավ: Պակասում եր Գրիշան: Սպասում եյին նրան, վոր միա-

սին գնան իրենց ընկերը սպասի տունը, ուր այդ յերեկո նշանակված եր «չաոս»:

Միքայելը ներքուստ վախեցավ: Նախազգացումը թելադրում եր նրան չտեսնվել Գրիշայի հետ, բայց անճնասիրությունն ստիպում եր տեսնվել: Նա սկսեց իրեն խրախուսել այն մտքով, թե Գրիշան վոչինչ չգիտե իր քրոջ խայտառակության մասին, յեթե իմացած լիներ, հապիվ թե լուր մինչև այսոր: Ե՛ն, հնացավ, մոռացվեց: Այժմ նույնիսկ Պետրոս Ղուրամյանից վախենալու առիթ չկա: Ահա նա. անցնում է իր նման մի խանութպանի հետ, տաք-տաք խոսելով, յերևի, առևտրի մասին: Մե՛ղմ մարդ, յերկչո՞տ մարդ, աննամո՛ւս մարդ, չկարողացար պատիվդ պաշտպանել: Յերևի, թուրդ թափում ես կնոջդ դլխին: Ո՞վ գիտե, որը քանի անգամ ես ծեծում: Ծեծի՛ր, ծեծի՛ր, բայց վիրավորանքդ կուլ տուր, բոլորն այժմ այդպես են անում...

Մտածելով այսպես, Միքայելն ընկերների հետ անցավ սեղանատուն: Քնահարը Մոսիկոն «սպասվող ճակատամարտի համար» իրեն ուզում եր ամրացնել մի քանի բաժակ կոնյակով: Պապաչան հոգնած եր, ախորժակ չուներ քեֆ անելու: Ֆյոդիմ-բեկն ասում եր, թե նա ուզում է «վախչել նոր վորսի մոտ»: Մելքոնը դարձյալ զանգատվում եր կնոջ դեմ: Ախ, ինչ յերկնային պատիժ դարձավ այդ կինը նրա դլխին: Յերևակայեի՛ք, կնոջ ծնողները վեճային են մեղավոր համարում իրենց աղջկա հիվանդության համար:

— Կնոջս հիմար յեղբայրը, դժբախտությունից խելագարվելու չափ, հավատացրել է նրանց, վոր յես եմ վարակել կնոջս, այ խաթաբալա՛: Տղերք, չլինի թե ամուսնանաք, Պապաչան Թող ձեր իդեալը լինի...

Յեկավ և՛ Գրիշան: Արդեն հեռվից կարելի յեր դդալ, վոր այս յերեկո նա լավ և տրամադրված: Նա քայլում եր արագ-արագ, փորը դուրս ցցած, գլուխը բարձր պահած, մի ձեռով խաղալով ժամացույցի վոսկե շղթայի հետ:

— Շատ ըբը նադինջն է,—արտասանեց Պապաչան, վոր միշտ վախենում եր Գրիշայից:

Տեսնելով Միքայելին, Գրիշան մի վայրկյան կանգ առավ, կարծես, տատանվելով մոտենալ խմբին: Մի հանգամանք, վոր Միքայելի աչքերից խույս չտվեց: Նստեցավ մոտեցավ, շրջապատեց Գրիշային, և սկսվեցին սովորական կատակները: Պապաչան փորձեց կամացուկ դուրս սլիվել:

— Ո՞ւր, ո՞ւր,—ասաց իրավաբան Փեյքարյանը, գրկելով պատկառելի ամուրիին:

— Թողեք գնա, նոր վիշկա յե դրել,—ծիծաղեց Մելքոնը:

— Քանի՞ան ունես, Պապաչա,—ասաց Ֆյոդիմ-բեկը,—Շամախու

ճանապարհի վրա, հին քաղաքում, Թուրքերի թաղում, Բախլովում, ծովի ափում...

— Հարմարպատան Մարոկկոյի սուլթանն է,—նկատեց Մոսիկոն, կոնյակից հետո կրծոտելով թխու դրած վարունգը:

Պապաչան ժպտում եր. հաճելի յեր նրա սրտին յերիտասարդ ընկերների անուշ կատակը:

— Պարոննե՛ր,—դոչեց Գրիշան, վորի դեմքն այդ պահին մի անգամայն փոխվել եր,—այստեղ մի անպիտան մարդ կա, վորին պիտի դուրս դցել մեր միջից:

Նա մոտեցավ Միքայելին և, փորը դուրս ցցելով, կանգնեց նրա դեմ և բարձր ձայնով դոչեց.

— Անպղնիվ, դող, ավազակ, ստոր, խաբեբա...

Ցեվ թույլ չտալով հակառակորդին սթափվելու, բոլոր ուժով ապտակեց նրան:

Տիրեց ընդհանուր ապշություն: Միքանիսը բռնեցին Գրիշայի թեվերը: Հարվածը կրողն ապտակի թափից պոռայտ յեկավ, թեքվեց վերը: Հարվածն մինչև հատակ, հագիվ կարողանալով վոտքի վրա մնալ: Հարվածն այնքան զորեղ եր, վոր յերբ Միքայելն ուշքի յեկավ, արդեն իրեն վող բոլոր սպասավորները և կողմնակի անձինք ապտակի հնչյունին յերես դարձրին, մոտեցան խմբին:

Գրիշան սառն եր և արհամարհանքով նայում եր հակառակորդին, ձեռքերը վարսիկի դրպանները դրած: Միքայելը գոռում եր, ույժ պահանջելով ազատվել բռնողների ձեռներից: Նրա յերեսը կապտել եր, աչքերի բլթակները դեղնել եյին դեղին կեռասի պես, բերանը փրփուր եր կոխել: Նրա կուրծքը դուրս եր ցցվել, կոկորդի յերակները փուր եր կոխել: Նրա կուրծքը դուրս եր ցցվել, կոկորդի յերակները փուռ եր կոխել: Նա վոտները ուժգին զարկում եր հատակին, ատամներ եյին ու կապտ

արժեր այդ Ալիմյանին մի անգամ խայտառակել, չատ եր փքվել: Մեծամտությունը Միքայելին եր պաշտպանում: Շատերը պախարակում եյին յերկուսին էլ հավասար: Գիմնազիոնի միքանի ուսուցիչները և դատարանի անդամները պահանջեցին խիստ արձանագրություն կազմել և վաղն ևեթ յերկուսին էլ վռնդել կլուբից:

Միքայելին ուժով կառք նստեցրին, սլացրին տուն:

Սմբատը դունատվեց, լսելով յեղբոր անպատվությունը:

Այրի Վոսկեհատը մի սուր ճիչ արձակեց:

Անտոնինա Իվանովնան արհամարհական հայացք ձգեց հասարակական ապտակ ուտողի վրա:

Ալեքսեյ Իվանիչն արտասանեց.

— Վայրենի Ախա:

Արշակը դոռաց.

— Ցես այդ Հարեթյանին կսպանեմ: Ցես կպաշտպանեմ Ալիմյանների պատիվը:

Ֆյոդիմ-բեկը, թևերից բռնելով, չթողեց նրան դուրս վազելու:

Միքայելը պահանջում եր, վոր ընկերները գնան և հենց այս րոպեին Գրիշային մենամարտության կանչեն:

— Դու յերբեք չես մենամարտել,—ասաց Սմբատը ղրկան յեղանակով և, պառնալով հյուրերին խնդրեց հանգիստ թողնել Միքայելին:

Ամբողջ յերեկոն Ալիմյան ընտանիքն անցկացրեց հուզված և զբաղված: Այրին անընդհատ լալիս եր:

XVII

Առավոտը կանուխ Սմբատը մոտավ յեղբոր սենյակը: Հակառակ սովորականին, Միքայելն արդեն զարթնել եր: Գիշերն անց եր կացրել գրեթե անքուն:

— Ի՞նչ ես ուզում ինձանից,—գոչեց նա, յեղբորը տեսնելով:

Սմբատը նայեց նրա բորբոքված աչքերին և հանդարտ նստեց աթոռի վրա:

— Ցես յեկել եմ մոտդ վոչ իբրև յեղբայր, այլ իբրև ընկեր, բարեկամ,—ասաց նա,—ապաշխում եմ, ասա՝ ի՞նչ ե պատահել քո և Գրիշզոր Հարեթյանի մեջ: Անկարելի յե, վոր պատճառը չնչին լինի...

— Դու ինձ ոգնել չես կարող, ինչո՞ւ պատմեմ:

— Ուրեմն գործն այդքան բա՞րդ ե:

— Թո՛ղ ինձ հանգիստ, Աստված սիրես:

Սմբատը մի ծխախոտ վառեց և սկսեց ծխել, ինչ-վոր խորհելով:

Միքայելն անց ու դարձ եր անում, ձեռները վարտիկի գրպանները դրած:

— Դիտես ինչ, Միքայել, դու կարող ես ինձանից գաղտնիքներ ունենալ, այդ չատ բնական ե: Բայց խնայիր մորդ: Դու լռում ես, խիստ այդ խեղճ կինը կարծում ե, թե դժբախտությունը չատ մեծ ե: Նա հազար ու մի յենթադրություններ ե անում:

Արդեն լռությունը նույնիսկ Միքայելի համար անտանելի յեր: Նա ինքն ղդում եր պահանջ գաղտնիքը մեկին հաղորդելու: Սմբատի առնական ձայնը և բարեհամբույր դեմքը նրան խրախուսեցին և ակամա սրտամաքրեցին անկեղծ լինել:

Նա սկսեց ակնարկներով, մութ խոսքերով, սկսեց տատանվելով և չփոթվելով: Բայց այս յերկար չտևեց: Ցերը տեսավ, վոր Սմբատն այնքան էլ չզայրացավ, վոր նա սիրահարվել և ամուսնացած կնոջ վրա, ավելի պարզախոս դարձավ: Սակայն դեռ թաղցնում եր իր կըրքերի տհաճ կնոջ անունը: Աշխատում եր իրեն ներկայացնել մի տեսակ ռոմանտիկական տեսիլ, կիրքը պատկերացնում եր իբրև խլեսլական սեր, հանցավոր կապին տալիս եր ինչ-վոր յերկնային խորհրդավորություն:

Սմբատը լուռ լսում եր: Պատմողի վերջին խոսքերի և վոսկեզոծ նկարագրությունների մեջ վորոնում եր եյականը. կա՞, արդյոք, խիստ սեր: Ցեվ, հակառակ նույնիսկ իր ջերմ վերաբերմունքին, չեր գտնում: Վորքան էլ Միքայելն աշխատեր իրականը քողարկել, յերբեմն չեղվում եր և ասպարեզ հանում անառնական կրքերի գլխավոր դերը յերևակայական սիրո մեջ:

— Բայց ո՞վ ե այդ կինը, վոր այդքան հրապուրել ե քեզ, յերևի, մի հազվադյուտ եյակ ե...

Հարցը չփոթեցրեց Միքայելին մինչև այն պատճառով, վոր նա ղգաց, թե՝ չափազանց բարձրացնելով իր սերը, ակամա բարձրացրեց մինչև յերկինք և սիրո առարկային:

— Հայ կին ե, բանվական հայտնի,—կարողացավ նա միայն պատասխանել:

— Ցեվ ի՞նչ կապ ունե Հարեթյանի հետ քո սերը...

— Այդ կինը Գրիշայի քույրն ե:

— Տիկին Ղուլամյա՞նը,—գոչեց Սմբատը, ցնցվելով:

Միքայելը քանի գնում վողևորվում եր: Սուտ եր ասում, բայց այնքան հափշտակված, վոր ինքն ել չեր ղդում սուտը: Իրականը թաղցնելով, նկարագրում եր վեպերի մեջ կարդացածը համանման դեպքերի մասին: Ցեղբոր լռությունը համարում եր հավանության նշան: Ահա ինչու ապշեց, յերբ լսեց.

— Միխա՛ել, քո արածն անբարոյականություն ե:

Ցեվ Սմբատի ձայնի մեջ ղգացվեց սրտի խորին հուզումը:

Միքայելը, ա՛յն Միքայելը, վորի կամակոր հոգին չեր հանդուր-

ժում վոչ միայն հանդիմանության, այլև սոսկ հակաճառության, չըրթունքները զայրույթից կրծոտեց, բայց լռեց: Հրապարակական անպատվությունը բավական խեղճացրել էր նրան:

— Սիրո անունով,—չարունակեց Սմբատը,—ես արդարացնում եմ ամեն դրժություն: Կարելի չե սիրել ամուսնացած կնոջ, բայց քո պատմածի մեջ ես սեր չեմ տեսնում: Ցերկուսդ էլ միմյանց խաբել եք և դաղացել ուրիշների պատիվը, ահա ինչու արածդ անբարոյական է...

Միքայելը ձեռով խորին դժկամակության նշան արավ և մոտեցավ լուսամուտին: Ցեղերը խոսքերը նրան թվացին ծանր և դառն, վորովհետև զգաց նրանց արդարացիությունը:

Կես ժամ առաջ Սմբատը նրան համարում էր մարդկային կոպտության մի զոհ: Այժմ նրա առջև կանգնած էր արդար զայրույթի մի արժանի պատժյալ: Վո՛չ, դա արդեն անբարոյականություն չե, այլ ուրիշ, ավելի վատ բան — դա հիվանդություն է, ախտ, կեղտոտ չըրջանի մի վիժումնք: Խարել մտերիմ ընկերոջ և նրա պատվի գնով հաճո՞ւյք վայելել — ահա ինչումն էր բուն ախտը Սմբատի հայացքներով:

Նա վերկացավ և հանդարտ քայլերով դուրս գնաց: Զգում էր, վոր յեղբայրական սերն իր սրտում տեղ է տալիս զղվանքի զգացման: Ցեվ զեռ Միքայելի տես մի մարդու խորհուրդ էր տալիս ամուսնանալ: Ցեվ ո՞վ պիտի դառնար նրա զոհը:

Տասը ժամից սկսած Միքայելի ընկերները միմյանց հետևից յեկան իրենց ցավակցությունը հայտնեն և իմանան, ինչ է մտադիր անելու: Աղելբեկովն ու Նիսամիձեն տեսնվել եյին Գրիչայի հետ և բացատրություն պահանջել: Վիրավորողը չեր հայտնել իր ապտակի չարժառիթը և միայն բարկացած ասել էր. «ինքը գիտե ինչու համար խփեցի»:

Միքայելը նույնպես հրաժարվում էր բացատրություն տալուց և այսպիսով կրկնապատկում ընկերների հետաքրքրությունը: Գլուխները չարժելով, տարակուսաբար նայեցին միմյանց յերեսին: Արդեն, յերեվի, պատճառը շատ մեծ և և խորհրդավոր, վոր վոչ մի կողմը չէ ուզում հայտնել:

Իշխան Նիսամիձեն ակնարկեց մենամարտության մասին, ձեռը խրոխտաբար դնելով դաշույնի դաստակալի վրա: Միքայելն ասաց, թե իր ասածից հետ չի կանգնում և կրկին անգամ խնդրեց իր ընկերներին գնալ և խոսքն Գրիչայի հետ մենամարտության ժամանակը վորոշել:

Աղելբեկովը քայլերն ուղղեց դեպի դռները: Նա հույս ուներ վիճ լինելու մի ասպետական տեսարանի, վորի մասին գաղափար ուներ միայն վեպերից ու բեմական ներկայացումներից:

— Սպասի՛ր,—ասաց սպան, հետ կանչելով տաքարյուն թուրքին,—գործը պետք է վարել արվեստաբար:

Նա բարկացած էր Գրիչայի դեմ. ինչո՞ւ հենց նրա յերեկույթի յերեկոն ընտրեց ապտակի համար և զրկեց նրան հարուստ «պարանյորներից»: Նա մի վոչքրիկ դասախոսություն արավ մենամարտության մասին և իրեն էլ առաջարկեց Միքայելի կողմից սեկունդանտ:

Մելքոնն ու Մովսեսն այն կարծիքին եյին, թե Գրիչան կարող է Միքայելից ներում խնդրել ընկերների մոտ, և խնդիրն այսպիսով կլուծվի: Ի՞նչ կարիք կա գործը բարդացնելու:

Իրավաբան Փելքարյանը պնդում էր, թե մենամարտությունը մի քիչ հնացած սովորույթ է: Դատարան կա, որենքներ կան, ergo Հաբեթյանի վարմունքը կարելի չե պատժել:

Պապաչան կրկնում էր. «ըրը դատարկ բան է»: Նրա կարծիքով, չարժեր մի ապտակի համար աշխարհ դղրդեցնել:

— Ջահիլ եր, տաքացավ, ըրը ձեռ բարձրացրեց: Ի՞նչ բան է մի սիլլան: Ջո յաչին չես ըրը այնքան ըրը սիլլա չեմ կերել, վրեր յերեսիս կաչին լա՛ տվարի կաչ ա ըրը կորալ...

Ներկա չեր և Ալեքսեյ Իվանիչը: Նա վրդովված էր «կոպիտ ասկանության» դեմ: Պետք է խնդրել նահանգապետին, վոր Հաբեթյանին աղմինիստրատիվ կերպով աքսորի Արխանգելյան նահանգ կամ ավելի հեռու տեղ: Որինավոր հասարակություններն այդ տեսակ վայրենիներին չեն պահում իրենց մեջ:

Բայց Նիսամիձեն, Աղելբեկովը և սպան կրկնում եյին.

— Մենամարտությունը վրիժառության միակ աղնիվ միջոցն է:

— Վո՛չ,—լսվեց հանկարծ դռների կողմից,—մենամարտությունն աղնիվ միջոց չե:

Սմբատն եր, վոր մի զառն հեգնական ժպիտ դեմքին, մոտեցավ, թեթևակի գլուխ խոնարհեցրեց և նստեց յեղբոր սենյակի մի անկյունում:

Սպան բացատրություն պահանջեց: Սմբատը բացատրեց.

— Պարոննե՛ր, մի՛ մոլորեցնեք նրա յեղբորը: Մենամարտություն ասված բանը, արդարև, մի ժամանակ ունեցել է իր իմաստը, այժմ իմաստը վոչնչացել է, մնացել է միայն ձևը: Դիմակահանդեսներն էլ իմաստ են ունեցել իմաստ և խոր իմաստ, այժմ նրանք ի՞նչ են. անբարոյականության հանդեսներ: Ունենալ ճարպիկ ու հմուտ ձեռ, չի նշանակում ավելի խորը զգալ պատիվ ասված բանը: Մարդկային պատիվը արի ծայրում չի դանվում, այլ հոգու խորքում:

— Ցես ձեզ անպատվել եմ,—դոչեց նա, ընդհատելով սպայի խոսքը, վոր ուզում էր հակառակել,—դուք ինձ մենամարտության եք կանչում: Ցես ձեզանից ավելի ճարպիկ եմ, դուք սպանվում եք: Ո՞ւր

մնաց լռիկան և արդարությունը, ինչո՞վ մաքրվեց ձեր պատիվը: Վո՛չ, պարոններ, մարդուն չի վայելում աքաղաղներից որինակ վերցնել:

Օ, դատարան, ուրիշ վոչինչ,—մեջ մտավ իրավաբանը:

— Վո՛չ,—պարձավ նրան Սմբատը,—դատարանը հիմնված է այն մարդկանց համար, վորոնք դատելու ընդունակություն չունեն:

— Իսկ ի՞նչ կասեք ընկերական դատի մասին,—խոսեց Մելքոնը.— իմ կարծիքով, Գրիչային մենք, ընկերներս միայն կարող ենք արժանի պատիժ տալ:

Խորին հեգնության մի ժպիտ անցավ Սմբատի դեմքով: Ընկերական դա՞տ: Ո՛ւ, նա շատ և տեսել այդպիսի դատեր և այժմ չի կարող ընկերական դատավորների կոմիկական լրջությունն առանց ծիծաղի հիշել: Երանք միշտ հիշեցրել են նրան ոպերետային նոտարներին և դատավորներին: Վո՛չ, այդ հատատուտությունը լուրջ մարդկանց համար չի մտածված: Ընկերական դատին դիմում են թուլամիտները, այո՛, թուլամիտները, ուրիշների կարծիքի տորուքիները: Նրանք, վորոնք չգիտեն իրենց արածը դնահատել: Ինքնատեր և առողջամիտ մարդը չի հարցնիլ ընկերոջը. «ի՞նչ կասես, բարեկամ, յես խելո՞ք եմ, թե՞ հիմար, բարոյակա՞ն, թե՞ անբարոյական»: Նա լինքը գիտե իր դինը:

— Մենք միմյանց հետ կռվում ենք և, վեց տարեկան յերեխաների պես, վազում ուրիշների դլխին. «Ի սեր Աստուծո, ասացե՛ք, մենք ինչո՞ւ կռվեցինք» կամ «վո՞րն և մեզանից խելոք»: Զեմ կարծում, վոր ավելի ծիծաղելի դրություն լինի:

— Դրուստ և ասում, աֆերիմ, ըըը շատ դրուստ և ասում,—հառաչանեց Պապաչան,—ընկերական դատս վո՞րն է, մոռացի՛ր ըըը, Մեխակ Ջան, մոռացի՛ր...

— Դուք բոլորը հերքեցիք,—ասաց իրավաբանը,բայց դատն ի՞նչպես պարզել: Ո՞ւմ դիմել:

— Ո՞ւմ դիմել:—Մեր ներքին դատավորին: Ի՞նչպես պարզել դատը: Ինքնաքննությամբ:

Բոլորը նայեցին միմյանց յերեսին, չհասկանալով Սմբատի միտքը:

— Այո՛,—շարունակեց Սմբատը,—այս է մեր դատարանը, նաև մեր պատժարանը: Պարոննե՛ր, յուրաքանչյուր մարդ բաղկացած է յերկու տարրերից: Մեկը դործողն է, մյուսը՝ քննողը: Գործողն իր վարմունքների մեջ շատ հաճախ է դեկավարվում քննողի թելադրությամբ — ահա մեր սխալների աղբյուրը: Մեր արածների լինը—տասներորդականը բնազդման ծնունդ են: Ցավ, դժբախտաբար, շատ անդամ կյանքի նույնիսկ ամենաարդ խնդիրները բնազդումով ենք վճռում և հետո... հետո դառն դղջում:

Նա մի վայրկյան կանդ առավ, շրթունքները կրծոտեց, վոր իր մեջ խեղդի լինչ-վոր դառնություն:

— Գործեցե՛ք, ինչ սխալ կամենում եք, հետո, առանձնության ժամանակ հարցրեք ձեր ներքին դատավորին, և նա ձեզ կտա ձեր վարմունքի ամենախիստ, բայց և ամենաճիշտ քննությունը: Միայն յեղեք անկեղծ ձեզ հետ: Միայն մի՛ թույլ տվեք, վոր քննադատի ձայնը խլանա ձեր մեջ կոմպանիի ձայներով: Իսկ այս չատ դյուրին և, յերբ քնազդումը նվիրված է:

Մի քանիսը նրա միտքը չհասկացան, իսկ մյուսները պնդեցին իրենց ասածը:

Միքայելը վոչինչ չեր ասում:

— Ուրեմն չե՞ք թողնում ձեր յեղբորը Գրիչայի հետ մենամարտել:

— Հարցրե՛ք յեղբորից, յես միայն իմ կարծիքը հայտնեցի,— պատասխանեց Սմբատը:

— Բարեկամ,—ասաց իրավաբան Փեյքարյանը,—ձեր ասածները դեղեցիկ են, բայց միայն դեղեցիկ—ուրիշ վոչինչ: Իմ խելքս էլ նույնն է թելադրում, բայց ա՛յլ է խելքի թելադրածը, ա՛յլ է զգացումների պահանջը: Փիլիսոփայությամբ պատիվ վերականդնել չի կարելի:

—Դրա դեմ խոսք չունիմ, իմ ասածն առողջ տրամաբանության ծնունդ է,—ասաց Սմբատը և լռեց:

— Այդպես ուրեմն, մեզ մնում է դիջանել փիլիսոփայության, քանի վոր մեր ընկերոջ զգացումները լռում են,—ասաց սպան և վոտքի կանդնեց:

— Ի՞նչ կասես,—հարցրեց Աղիլբեկովը Միքայելին:

— Տատանվո՞ւմ ես,— արտասանեց Նիսամիձեն կիսահեդնաբար...

— Թողեք ինձ հանդիստ, հետո իմ վճիռը կհայտնեմ,—ասաց, վերջապես, Միքայելը:

Բոլորը դուրս դնացին դժդոհ իրենց ընկերոջ անորոշ վարմունքից:

Զդալի յեր, վոր Սմբատի խոսքերը Միքայելի վրա գործեցին վոնց ապդեցություն: Յերբ ընկերները հեռացան, նա պարձավ յեղբորը.

— Բայց ի՞նչպես մաքրեմ իմ պատիվը:

Ոդևորվով տրամադրությունից, Սմբատը չթողեց, վոր տպավորությունը պաղի և դարձավ ներկա դեպքին:

Նա համաձայն եր, վոր Գրիչայի ապտակը ծանր վիրավորանք է, բայց ինչո՞ւ համար է Միքայելն ուզում այդ մարդուն մենամարտության կանչել կամ ուրիշ կերպ պատժել: Նրա համա՞ր, վոր Գրիչան իրավունք է համարել դդալ նրա հասցրած անպատվությունը և յենթարկվել իր վայրենի ինստինկտին: Բայց յեթե նա վայրենաբար է

վարվել Միքայելի հետ, չե՞ վոր Միքայելը նրա վերաբերմամբ ավելի քան վայրենի չի չեղել — անասուն: Ցեվ նա՞ չի դեռ ուզում Հաբեթյանից հաշիվ պահանջել: Նա՛, վոր առաջին վիրավորողն է չեղել, այն էլ գողնովի:

— Խնդրեմ, խնդրեմ,—չարունակեց Սմբատը, վրդովված, տեսնելով, վոր չեղբայրն ուզում է բողոքել,—առանց տաքանալու: Ժամանակ է հասկանալու, վոր չի կարելի ամեն խնդիր դռռոցներով և բռունցքներով վճռել: Մի բոպե քեզ դիր Հաբեթյանի տեղը: Չե՞ վոր կմտածեիր· «ի՛նչ, իմ մտերիմ ընկերը, վորին ես հավատացել եմ, այդպես լինճ անպատիվ անի և չես դռնե մի ապտա՞կ էլ չտամ նրան»: Ցեվ կտայիր, միայն չգիտեմ այդպիսի եֆեկտով, թե չէ: Վո՛չ, սիրելիս, պետք է լոգիկաբար վարվել և խնդիրը պարզելու փոխարեն ավելի չխճճել:

— Այո՛, կուլ տալ ապտակը և հասարակական ծաղրի առարկա դառնալ, այս է քո լոգիկան, չե՞...

Տիրեց բոլշեական լուռթյուն: Սմբատը ցնցողաբար մատներով պատեցնում եր ժամացույցի լարիչը: Միքայելը, գլուխը կրծքին թեքած, չեղունդներն անխնա կրծոտելով, անց ու դարձ եր անում: Նա դեռ դունատ եր, ինչպես աչնանային տերև և մերթընդմերթ ցնցվում եր, սարսուռ զգալով վիրավորանքը հիշելուց:

— Միամիտնե՛ր,—դոչեց Սմբատը, կարծես, ինքն իր համար,— դուք ամեն մոլորություն հասարակական կարծիքի տեղ եք ընդունում: Ո՞վքեր են կազմում ձեր հասարակական կարծիքը, այդ Բյալիմնե՞րը, Մոսիկոնե՞րը, Նիասամիձնե՞րը, Մելքոնե՞րը, թե՞ Պապաշաները... Սիրելիս, այդ մարդիկ միայն մի բարոյական հաճույք ունեն — դատել ուրիշներին և ծաղրել: Նրանք չպիտի լինեն քո դատավորը, վո՛չ, այլ դու ինքդ: Աչխատիր այսուհետև քեզ մաքրել, փոխի՛ր կյանքդ արմատապես, հասկանո՞ւմ ես, արմատապես, և այն ժամանակ ծաղրվելու փոխարեն ինքդ կծաղրես ուրիշներին:

Նա կանգ առավ, նայեց չեղբոր չերեսին, վոր հետզհետե փոխվում եր, և չարունակեց ավելի զգացված:

— Մեխա՛կ, նույնիսկ չեղեռնագործի համար ուղղվելու ճանապարհ կա: Ուղղի՛ր քեզ, և Թոզ ուրիշները, վորքան ուզում են չարախոսեն: Այն ժամանակ դու կհասկանաս, ինչ չերջանիկ զգացում է արհամարհանք սոված բանը: Լսի՛ր, Մեխա՛կ· մի՞թե քո սրտում չի մնացել մի առողջ թել, քո հոգու մեջ մի մաքուր անկյուն: Մի՞թե կյանքի մեջ չես տեսնում ավելի բարձր հաճույք, քան անասնական կրքերին ծառայելը... Լսի՛ր, դու կյանքի միայն մի չերեսն ես տեսել, կա և ուրիշը: Դու ընդունել ես մինչև այժմ աչխարհի քաղցր թուրը, բայց կա և դառը թուր: Քաղցրն ապտում է, դառը մաքրում...

Նա դարձյալ կանգ առավ, չունչն ուղղելու համար: Նա վոգևորվել եր Միքայելի ուչադրությունից: Մի ժամ առաջ հյուրերի մոտ նա խոսում եր խելքի թելադրությամբ: Այժմ խոսում էին զգացումները: Թվում եր նրան, վոր իր խոսքերն ազդում են չեղբոր ապականված հոգու վրա և ստիպում նրան, վերջապես, բանալ աչքերը և լուրջ նայել կյանքին:

— Պատմելով քո կրքերի մասին,—չարունակեց նա զառնությամբ,—դու վերավորեցիր սիրո զգացումը: Ցեթե սիրեիր, խնդիրն այս կերպարանքը չեր ստանալ: Դու կզգայիր այդ կնոջն ամեն բան, և դա կլիներ քո պատիժը: Մի՛ նայիր ինձ զարմացած: Ցես պատճառ ունեմ այսպես խոսելու: Մարդկային չեսամոլությունն անսահման է և, խրատելով քեզ, չես չեմ կարողանում մոռանալ իմ ցավերը: Մեխակ, քո դրությունը չեմ նախանձում, բայց ինքս ավելի վատ դրության մեջ եմ այժմ: Այ՛ժմ, վո՛չ, ահա յոթ տարի չե... Քո ապագան դեռ քո առջև է, իսկ իմը հավիտյան աղավաղվել է: Ինչ կույր կիրքն է խաբել, ինձ խարել և պայծառ սերը: Ի՞նչ եմ ասում, սե՞ր, վո՛չ, այլ մի չայն սիրո պահանջը: Դու չար դևի զոհն ես, չես՝ բարի հրեշտակի:

Նա լռեց, հառաչեց, ճակատը տրորելով: Սեփական դժբախտության զգացումը նրա մեջ խառնվել եր չեղբայրական կարեկցության զգացման հետ, և նա չգիտեր վորի վրա կանգ առնի:

Հանկարծ նկատեց մի անսպասելի և անիմանալի բան: Արտասուքի քանի մի կաթիլներ, դուրս գալով Միքայելի աչքերից, գլորվեցին դունատ այտերի վրա: Ի՞նչ է նչանակում այդ· բորբոքված պատվասիրության կայծե՞ր, բարկությո՞ւն, թե՞ զղջում: Ինչ և լինի — փչացած մի չերիտասարդ արտասվում է, և այդ վատ նչան չե: Կնչանակե դեռ կա նրա սրտում չապականված անկյուն, մի առողջ մասնիկ:

Սմբատը մոտեցավ նրան, ձեռը դրեց ուսին և հուզված ձայնով ասաց·

— Մեխա՛կ, դու վատ ես սկսել, կարող ես լավ վերջացնել, իսկ չե՞ս... չես դուցե ընդհակառակը...

Ցեվ, չերեսը դարձնելով հանդարտ քայլերով դուրս գնաց:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ի

Այրի Վոսկեհատն իրեն համարում էր աշխարհի յերեսին մայրերից ամենաանբախտը: Մեծ վորդին աղավաղից իր յերիտասարդ կյանքը, ամուսնանալով ոտարուհու հետ: Այժմ նրա վո՛չ խորին պատկառանքը, վո՛չ անկեղծ վորդիական սերը չէն կարող Վոսկեհատի սրտից ջնջել արմատացած վիշտը: Թող Սմբատը, վորքան ուզում է, լինի խելոք, աշխատասեր, խնայող, բարի, նրա արած սխալն արժե չատ հանցանքների իր մոր աչքում: Նա ինքը կրում է իր սխալի հետևանքները, նա տխուր է, մռայլ, ի՞նչպես կարող է բախտավոր լինել նրա մայրը:

Միքայելն արդեն անուղղելի վորդի յե: Նրա կենցաղը հուսահատեցնում է Վոսկեհատին. չռայլում է, առանց վաստակելու, մաշելով որերը Թղթախաղի սեղանների մոտ, անվայել զվարճություննների մեջ, անարժան ընկերների հետ: Ո՞ր-որի վրա նրա առողջությունը քայքայվում է: Այժմ ի՞նչ է մնացել մի ժամանակվա առողջ ու գեղեցիկ Միքայելից:—Մի զուրկ խորը թաղված աչքեր, կաշի ու վոսկոր—ուրիշ վոչինչ: Ի՞նչպես Վոսկեհատը չվողրա նրա մասին:

Աղջիկը, Մարթան, բախտավո՞ր է, արդյոք: Վո՛չ. նրա կյանքն էլ մի ուրախալի բան չի ներկայացնում Վոսկեհատի համար: Մի վորդին դեղնած, մաշված, հինգ տարեկան է, դեռ որինավոր մանգալ չէր կարողանում, մյուս վորդին նույնպես հիվանդոտ, որ-որի վրա սպասում են մեռնելուն: Ասում են, նրանց հայրը վարակված է յեղել ինչվոր հիվանդությունով: Ա՛խ, այդ մարդը, հարուստ, աչքաբաց, խելքը գլխին, բայց միշտ լալիս է, միշտ գանգատվում, թե աղքատ է, և կնոջն էլ է սոխրում գանգատվել: Սմեն որ Մարթան գալիս է, արտասուքն աչքերին, աղաչում, վոր իրեն բաժին տան հոր ժառանգությունից: Կռվում է մոր հետ, թունավորում նրա առանց այն էլ անբախտ կյանքը, սպառնում է ինչ-վոր գատ բանալ յեղբայրների դեմ: Ե՛հ, դա յել աղջիկ...

Վոսկեհատը հույս ուներ մխիթարվել գոնե փոքր վորդով — Արշակով: Բայց այս վերջին հույսն էլ չի արդարանում: Արշակը, վորի լեզուն հաղիվ աղատվել է մանկական կապանքներից, արդեն սկսել է այն վոճով խոսել մոր հետ, վորպես չի խոսել նույնիսկ Միքայելը: Նախատինքին նախատինքով է պատասխանում, սպառնալիքի դեմ սպառնալիք կարդում, խրատներն ու աղերսները ծաղրում ու արհամարհում: Դպրոցից տուն է գալիս թե չէ, նախաճաշ է պահանջում: Վայ, յեթե մի րոպե ուշացրին. կատաղում է, փրփրում, բոլորին հայհոյում և քիչ է մնում յերբեմն դատարկ ափսեն մոր գլխին չպրտի: Հետո անհետանում է ամբողջ որով: Գիշերները յերկու ժամից առաջ տուն չի գալիս, իսկ շատ անգամ մինչև լույս էլ դրսերումն է մնում: Գանգ-

քանի անգամ Սրաֆիոն Գասպարիչը և Միքայելը նրան տեսել են անբարոյական պատանիների հետ ծուխի վրա մակույկով չրջագայելիս, այ խներում կասկածելի կանանց հետ զբոսնելիս, յերբեմն նույնիսկ հարբած, իսկ մի անգամ էլ ծեծվելիս թուրքերի ձեռքում:

Տեր Աստված, տեր Աստված, այս ի՞նչ յերկնային պատիժ է, ի՞նչ մի մեծ մեղք է գործել Վոսկեհատը: Ցավ կան դեռ անխելք կանայք, վոր նախանձում են նրան: Մ՛ի, չի ուզում նա այդքան հարստությունը· խլեցե՛ք նրանից այդ տները, քարվանսարաները, հանքերը, գործարանները և փոխարենը տվեք միայն մայրական բախտ:

Սրաֆիոն Գասպարիչը պնդում եր, թե չպիտի Աբշակի ձեռը փող տալ, թե հենց փողն է նրան փչացնում:

— Փողը նրա հասակի տղայի ձեռքին մի սուր պանակ է: Պահիր նրան տկլոր, քաղցած, կտեսնես, վոր կխելոքանա:

Այրին չեր լսում նրան: Ի՞նչ· Աբշակին փող չտալ, եվ վոր որվա համար և նրա հայրն այսքան հարստություն դիզել: Վերջապես, ամոթ չե՞, վոր նա գրպանում փող չունենա, յերբ բոլոր ընկերներն ունեն:

Սակայն մի որ Վոսկեհատը վորձեց կատարել յեղբոր խորհուրդը: Ցավ ի՞նչ դառն վորձ եր այն: Նախընթաց յերեկո Աբշակը թղթախաղում տանուլ եր տվել, այսոր պարտավոր եր վճարել պարտքը: Առավոտը նա մտավ մոր սենյակն այն ժամանակ, յերբ այրին նոր եր հագնվում:

— Մոտդ փող կա՞,—հարցրեց նա, ձեռները վարտիկի գրպանները գնելով:

— Եվի ի՞նչ ես անում, չե՞ վոր յերեկ տվեցի:

— Դու ասա, փող կա՞ մոտդ:

— Չկա:

Աբշակը գլխատաց վազեց ներքև, մտավ գրասենյակ, կանգնեց յերկաթի վանդակապատի առջև, վորի հետևում նստած եր Սրաֆիոն Գասպարիչը, չքանչանը կրծքին, բեղերը վոլորած, գլխքը խոժոռած այնպես, վոր, կարծես, պատրաստ եր առաջին պատահողի հետ կըռվելու:

— Քեռի՛, անդուռդ բաց արա, տեռնեմ...

Մերսունին հեգնորեն ժպտաց: Արդեն նա վաղուց եր սպասում այն որին, յերբ կկարողանա մերժել պատանուն փող տալու:

— Չե՞ս լսում, անդուռդ բաց արա,—կրկնեց Աբշակը, վիրավորված մորեղբոր ժպտից:

— Չեմ կարող:

— Ուրեմն, բանալին տուր, ես բաց կանեմ:

— Բան չկա անդուռում:

— Բանկից բերել տուր:

— Գնա, Սմբատին ասա, հետո: Առանց նրա հրամանի ես ծախ չեմ անում:

— Սմբատն ո՞վ է:

— Սմբատը ֆիրմայի գլխավորն է, ներկայացուցիչը և քո հոգաբարձուն:

— Ա՛յ նորություն,—գոչեց Աբշակը, արդեն կատաղելով:—Ցե՞ս, գնամ Սմբատից լրտե՞սնք ստանամ իմ փողերի համար: Միքայելը ծախսի լինչքան ցանկանա, իսկ յես մի հարյուր ռուբլու համար նրան աղաչե՞մ... բա՛ց արա անդուռդ, ասում եմ...

Մերսունին համառեց: Այն ժամանակ Աբշակը դռռաց, վոռները խփեց հատակին, հայհոյեց Սմբատին եվ, Միքայելին եվ, ծերսունուն եվ և կրկին վազեց վերև: Այս րոպեիս, առանց հետաձգելու, թող նրան տան հարյուր, վոչ հարյուրը բավական չե, յերկու հարյուր, յերեք հարյուր ռուբլի:

— Փող չունեմ, վորդի, չունեմ,—կրկնեց այրին, թեյի բաժակը, դառնացած, հեռացնելով բերանից:

Ցավ սաստիկ զգաց: Պատանին բաց արավ մուղիրի կոճակները, հանեց գրպանից ատրճանակը և ուղղեց իր կրծքին: Կամ փող կամ մահ — ահա թե ով է Աբշակ Ալիմյանը:

— Իմ պատիվը կարող է արատավորվել: Որենքով թղթախաղի պարտքը պիտի վճարել քսան ու չորս ժամում: Ցես Ալիմյանների անունը կոտրել չեմ ուզում, հասկանո՞ւմ ես...

Այրին վոչինչ չեր հասկանում: Նա միայն տեսավ վայրկյան գնդը վորդու ձեռում, արձակեց մի սուր ճիչ և, ուշաթափվելով, տարածվեց տաճկական չքնդ թախտի վրա:

Կանչեցին Սմբատին, և միայն նա կարողացավ ատրճանակը խլել Աբշակից:

Ցերբ այրին ուշքի յեկավ, առաջին խոսքն եր·

— Փող տվեք նրան, Աստված սիրեք, տվեք լինչքան ուզում է:

Բայց Աբշակին արդեն չքացել եր: Ցերեք որ նրան փնտռում եյին, չեյին գտնում: Այրին փնտում եր մայրերը, կեղևքում կուրծքը, անիչեյին գոռում: Այրին փնտում եր մայրերը, կեղևքում կուրծքը, անիչեյին գոռում: Ինչ-վոր հարյուր — յերկու հարյուր ծուխ յեղբորն ու մեծ վորդուն: Ինչ-վոր հարյուր — յերկու հարյուր ռուբլու համար կործանեցին նրա պատվականն: Աբշակն իրեն ծուխ և գցել ու խեղդել· փնտռեցե՛ք նրա դիակը:

Ձորբորդ որը պատանուն գտան իր դասընկերներից մեկի տանը՝ յերեսնիվայր հագուստով քնած: Գիշերվա կեսին յեկել եր այնտեղ, ապատան խնդրել, ցեխոտ, հարբած ու ծեծված:

Անկանոն կյանքն ու անքուն գիշերներն արդեն իրենց կնիքը դրոշմել եյին տանուվեց տարեկան պատանու դեմքի վրա: Շուր կլիներ նրա աչքերի մեջ վորոնել պատանեկական անապական հոգու արտափայլում: Նա թվում եր իր հասակից առնվազն տասը տարով մեծ: Որ-որի վրա յերեսը դալկանում եր, յերկայնանում, աչքերի տակ կապտավուն խորշերը լայնանում եյին, ճակատի յերակներն ավելի ու ավելի վորոշ ցցվում:

Մի որ Սմբատը միմյանց հետևից լսեց յերկու անախորժ նորություններ: Առավոտն Անտոնինա Իվանովնան նեղ ու յերկար անցքի

ծայրում, վոր նրա ընակարանը բաժանում եր տան մյուս բաժիններից, հանդիպել եր մի անվայել տեսարանի. Արշակը տիկնոջ յերիտասարդ աղախնին գրկել համբուրել եր այնքան գրգռված, վոր չգիտեր, թե իր արտասանած կրքոտ խոսքերը կարող եր լսվել:

Պատմելով յեղելությունը, Անտոնինա Իվանովնան նկարագրեց և համանման ուրիշ դեպքեր, վորոնց ինքը պատահաբար վկա յեր յեղել: Նա սկսեց պախարակել Ալիմյանների ամբողջ ընտանիքը, իբրև բարոյապես փչացած մի չրջան, ուր ամեն ինչ քայքայվում և ու նեխվում և ուր չի կարող վոչ մի առողջ անհատ մնալ:

Սմբատին վիրավորեց կնոջ ծայրահեղ կարծիքը: Հոգու խորքում նա ակամա մասամբ համաձայն եր այդ կարծիքի հետ. բայց ինչո՞ւ չի ցավում այդ կինը, այլ միայն պարսավում է:

— Ինչո՞ւ պիտի ցավեմ,—գոչեց տիկինը,—քանի վոր վոչ վոք այս տանն իմ մասին չի ցավում: Այս ընտանիքի մեջ յես ոտար եմ, ինչպես մի անկոչ հյուր. վոչ մի կապ իմ և նրա մեջ չեմ տեսնում: Ինձ թվում է, վոր ձեր յեղբայրները պատրաստ են ամեն քայլում ինձ վիրավորել:

— Ձեզ, տիկին, ամեն բան թվում է. այս ընտանիքի վերաբերմամբ դուք բարոյական դպյտոնիզմ ունեք: Դուք կատաղում եք իմ յեղբոր դեմ. բայց ինչո՞ւ չեք կատաղում ձեր աղախնի դեմ: Գուցե նա յե առիթ տվել...

Տիկինը մի սուր հայացք ձգեց Սմբատի յերեսին և դառն հեգնությամբ ասաց.

— Ուզում եք զարմացել ինչ-վոր թուննավոր ակնարկներ անել:

— Ինչո՞ւ ակնարկ, կարող եմ պարզ ել խոսել: Մի՞թե սուտ ասած կլինեմ, յեթե ասեմ, վոր այդ Դունիանները ու Գրաչյանները են վոշնչացրել ամեն տեղ անբարոյականության սերմերը բերում ու ցանում: Ո՛ր, ի սեր Աստծու, խնդրեմ իմ միտքը ձեր ուզածի պես չշրջեք. յես գիտեմ ինչ եմ ասում և յերբեք Դունիանների ու Գրաչյանների մեղքը չեմ վերագրիլ մի ամբողջ ազգի, հասկանո՞ւմ եք ինչ եմ ասում: Իսկ դուք... դուք միշտ հակառակն եք անում...

Վեճն այս յեղանակով չարունակվեց և խոչորացավ. մարդ ու կին միմյանց ուղղեցին վիրավորական դարձվածքներ:

Ցերբեք ընտանեկան խռովությունն այնչափ չեր ազդել Սմբատի վրա: Հուզմունքից նա մինչև անգամ արտասվեց: Կնոջ դեմքի կնճիռները, թառամած այտերը և յերիտասարդական հյութից զրկված ձայնն ավելի եյին բորբոքում նրա կատաղությունը:

Կես ժամ անցած, նա, սիրտը թունով լի, կանգնած եր դրասենյակի առջև և մտախոհ դիտում եր փողոցով անցնողներին: Քառորդ ժամ եր նրա առջև անցուդարձ եր անում մի յերիտասարդ, չուտ-չուտ նայելով նրան: Ցերբեմն կանգ եր առնում, ուզում եր մոտենալ, բայց չեր վստահանում: Վերջապես, նա գրավեց Սմբատի ուշադրությունը:

— Գո՞րծ ունիք ինձ հետ,—հարցրեց Սմբատը:

— Ուզում եյի ձեզ յերկու խոսք ասել:

— Խնդրեմ:

Անծանոթը վո՛չ աղքատի յեր նման, վո՛չ վասկածելի մարդու: Նա խնդրեց Սմբատին մի րոպեյով մտնել դրասենյակ: Այստեղ, նայելով չուրջը, նա ցածր ձայնով ասաց.

— Պարոն Ալիմյան, բարոյական պարտք եմ համարում ձեր ուշադրությունը դարձնել ձեր փոքր յեղբոր վրա...

— Արշակի՞:

— Այո՛:

— Ի՞նչ է պատահել:

— Նա հիվանդ է:

— Հիվա՞նդ,—կրկնեց Սմբատը, արդեն անծանոթի խորհրդավոր արտասանությունից դուշակելով, թե խոսքն ինչ տեսակ հիվանդության մասին է:

— Այո՛, Արշակը հիվանդ է և չի ուզում թժշկվել, ամոթից, իհարկե: Կարծեմ, մխքս հասկացաք, ուրիշ ասելիք չունիմ, ներողություն, յես պարտքս կատարեցի...

Ասաց, գլուխ տվեց և դուրս գնաց:

Աշխարհում շատ կան մարդիկ, վորոնք միշտ անհրաժեշտ են համարում իրենց «բարոյական պարտքը կատարել» ուրիշների հոգու հանգստությունը խանգարելու համար: Նրանք իրենք բախտավոր չեն կյանքում, ուստի մի առանձին հաճույքով են հաղորդում ուրիշներին չար լուրեր:

Սմբատն ընկավ տարակուսանքի մեջ: Ի՞նչ ասաց այդ մարդը. չլինի՛ թե մի հոգեկան հիվանդ եր կամ կատակասեր: Այսպես թե այնպես, պետք է ստուգել անծանոթի ասածը:

Սմբատը բարձրացավ վերև: Արշակը նոր վերադարձել եր զբոսնից և արագ-արագ նախասենյակ եր անում այնպես, վոր, կարծես, գլխին վոստիկան եր կանգնած և չտապեցնում եր:

— Գնանք իմ սենյակը, քեզ հետ գործ ունեմ,—ասաց Սմբատը:

Արշակը կարծեց, թե առավոտվա դեպքի մասին իրենից հաշիվ է պահանջելու: Նա ասաց, թե ժամանակ չունի, չտապում է հինգերորդ դասին:

— Ե՛հ, բարեկամ, ի՞նչ դասերի ժամանակ է,—ասաց Սմբատը հեգնությամբ,—այժմ գուցե պիտի ապրես և վոչ թե ուսում առնես: Վեր կաց, դռները կողպիր, վոր հանկարծ մայրիկը ներս չմտնի:

Արշակը յուրթյամբ կատարեց նրա հրամանը:

— Դուք յե՞րբ եք հիվանդացել,—հարցրեց Սմբատն այնպիսի յեղանակով, վոր, կարծես, յեղբոր հիվանդությունն արդեն անկասկածելի յեր:

Պատանին դունատվեց: Այսքանն արդեն բավական եր, վոր Սմբատն ըղար, թե անծանոթը դուր չկատարեց իր «բարոյական պարտքը»:

— Ինչո՞ւ չես թժշկվում:

— Ինչո՞ւ պիտի բժշկվեմ, յես հիվանդ չեմ,—պատասխանեց Արշակը, մատներով խաղալով մունդիրի կոճակների հետ:

— Այո՛, այդ արդեն յերևում է ունքերիդ ու թերթերունքներիդ: Զարմանալի յե, վոր յես նոր եմ ուշադրություն դարձնում: Այս րոպեիս գնանք բժշկի մոտ...

Արշակը շատ աշխատեց ապատվել յեղբոր ձեռքից, բայց չկարողացավ: Սմբատը, գրեթե ուժով, նրան տարավ դուրս, կառք նստեցրեց: Բժշկի մանրամասն քննությունը վավերացրեց վտանգավոր հիվանդության գոյությունը: Ախտն առաջին շրջանն արդեն բոլորել եր, բայց դարմանելու հույս կար: Մոսկալի՛ յերևույթ. այդ պատանին չծաղկած թառամում եր, վորպես ճանապարհի յեզրին բուսած ծաղիկ, վոր վաղաժամ գալկանում է ու կեզտոտվում անցորդների վոտների ուտիչ փոշուց:

— Չկարծեք, թե այդ առաջին որինակն է,—ասաց բժիշկը, վոր մի բարեսիրտ դերմանացի յեր,—հենց այժմ իմ ձեռքի տակ յերկու պացիենտ ել ունիմ ճիշտ ձեր յեղբոր հասակի:

Կարծես, այս եր պակաս Սմբատի դառնության բաժակը լրացնելու համար: Նա հոգում եր մի յեղբոր մասին, այնինչ, մյուսը դուրս եր գալիս ավելի ապականված և այն ել մատաղ հասակում:

Սմբատը դաղանիքը հայտնեց մխայն Սրաֆիոն Գասպարիչին: Վորոշեցին վարձել մի մարդ, վորի պարտքը լինի հսկել Արշակին և թույլ չտալ չվայելությունները չարունակելու: Այսուհետև պատանին առանց այդ մարդու անից չպիտի դուրս գար: Վճռվեց դպրոցից նրան դուրս բերել. Թող անկիրթ մնա, կյանքն ուսումից թանդ է: Արշակը հակառակեց, բողոքեց իր գլխին նչանակած հսկիչի դեմ, բայց հպատակվեց: Նրա սենյակում դրեցին առանձին անկողնակալ՝ հսկիչի համար և այսպիսով պատանուն դարձրին մի տեսակ բանտարկյալ: Այրերին չհայտնեցին վորդու սոսկալի հիվանդությունը, բայց համոզեցին, վոր հսկողությունն անհրաժեշտ է՝ ընկերների վատ ազդեցությունից պաշտպանելու համար:

— Հա՛, ընկերները, ընկերները. իմ վորդիներիս փչացնողները հենց նրանք են,—ասաց Վոսկեհատը և, նայելով Սմբատի աչքերին, ավելացրեց,—քեզ ել նրանք են խելքից հանել, թե չե դու չեյիր անիլ այդ բանը...

Նույն միջոցներին Սմբատի ուրերը կատարելապես թուխնավորված եյին: Ընտանեկան ընդհարումները քանի գնում այնքան սուր կերպարանք եյին ստանում: Այլևս մարդ ու կին իրենց չեյին զսպում, չեյին աշխատում քողարկել որդանական դարձած վտանգավոր ատելությունը:

Անտոնինա Իվանովնան ուղղակի անիծում եր այն որը, յերբ հանդիպեց Սմբատին: Դա ճակատագրի մի դառն հեգնություն եր և վոչ փոխադարձ սեր: Նա համարում եր Սմբատին ազնիվ ու խելոք մարդ, բայց իր և նրա մեջ զգում եր խոր անդունդ: Նա դիտեր ինչ և այդ անդունդը և դիտենալով հանդերձ զգում եր, վոր անզոր և հսկայական քայլ անել անդունդն անցնելու համար: Վաղուց զգացած խուլ հակակրությունը դեպի ամուսնու չքնաղը, այժմ դառնում եր ավելի ու ավելի բացարձակ այրի Վոսկեհատի և տիկին Մարուքխանյանի բուռն ատելության չնորհիվ:

Քսանույերեք տարեկան եր Սմբատը, յերբ հանդիպեց քսանուվեց տարեկան Անտոնինա Իվանովնային: Անվերադառնալի՛ ժամանակներ, յերիտասարդական առաջին շրջանի անցողիկ վայրկյաններ, վոր այնքան թանդ նստեցիք նրան: Վառ յերևակայությունը մի հասարակ ուսանողուհու աստվածացրեց Տուրգենևի ու Տոլստոյի վեպերի ազդեցությամբ: Հափշտակվեց Անտոնինա Իվանովնայի անվախ զգացումներով և կյանքի մասին ունեցած համարձակ հայացքներով: Բայց չուտով Անտոնինա Իվանովնան կորցրեց նրա աչքում իր հրապույրը վոչ միայն իբրև կյանքի ընկերուհի, այլև իբրև կին: Անդունդը վորվեց այն պահից, յերբ մարդ ու կին հասկացան, վոր իրենց բարոյական չահերը շատ հանդամանքներում չեն հաշտվում և չեն կարող յերբեք հաշտվել, վորքան էլ ոգիդող և ներդաշնակ լինեն փոխադարձ: Կային Սմբատի սրտին մերձավոր խնդիրներ, վորոնք անհասկանալի և յերբեմն նույնիսկ ծիծաղելի եյին Անտոնինայի համար: Ցեվ կինը չեր զգում, թե վորքան է խոցոտում նրա հոգին, յերբ անտարբեր է վերաբերվում այդ խնդիրներին:

Սմբատի սառնությունը փոխվեց ատելության մանավանդ այն պահից, յերբ հասավ յերեխաների կրթության ժամանակը: Կինը ներչնչում եր նրանց մի ուղղություն, մարդը պահանջում եր հակառակը: Դրանից առաջանում եյին այնպիսի խոշոր ընդհարումներ, վոր յերբեմն նրանք չեյին խնայում իրարու նվիրական զգացումները:

Այսպես տևեց նրանց կյանքը վեց-յոթ տարի: Հորից ստացած հեռագիրը. «յես մեռնում եմ, ե՛կ, վերջին անգամ քեզ տեսնեմ» ավելի դորացրեց Սմբատի ատելությունը: Նրան թվաց, թե հայրը վաղաժամ և մեռնում, և պատճառն ինքն է և իր կինը:

— Ցեվ գնում եմ իմ հայրենիքը,—ասաց նա Անտոնինա Իվանովնային,—չդիտեմ, կվերադառնամ, թե չե...

Դա մի անզգուշ զարմված եր, վոր արտասանեց զրգռված րոպեին. մի՞թե կարող եր բաժանվել յերեխաներից, վորոնց սիրում եր սրտի բոլոր զգացումներով:

Անտոնինա Իվանովնան տխուր լուրն ընդունեց անտարբեր: Հոթաբեր հեռագիրը նրա վրա մազի չափ տպավորություն չգործեց: Այնտեղ, հեռավոր կովկասում մեռնում է ինչ-վոր մի վաճառական, վորի յերեսը յերբեք չի տեսել. արժե՞ մեթե ցավել նրա մասին, թեկուզ նա լինի իր ամուսնու հայրը: Նա ճանապարհ դրեց Սմբատին ասելով՝

— Ցես զգում եմ, վոր այսօրվանից մեր ճանապարհները բաժանվում են, բայց մի՛ մոռանաք ձեր յերեխաներին:

Ցեվ ահա անխորտակելի չղթան նորից նրանց մոտեցրեց միմյանց, յերեք տխուր չանցած, բայց մխացրեց, կարծես, ավելի խիստ կերպով

բաժանելու համար: Քանի ծնողներից, յեղբայրներից ու քրոջից հեռու յեր, Սմբատը կարողանում եր իր կյանքի դառնությունները մի կերպ մարսել: Այժմ նա զգաց, թե իր սխալը վորքան մեծ և յեղել և վորքան անուղղելի: Մայրենի չրջանը նրա սրտում բորբոքեց ժամանակավորապես թմրած մի ղգացում: Նա տեսավ, վոր այդ չրջանից վորքան հեռու յե իր մտավոր աչխարհով, նույնքան մոտիկ և արյունով, հոգով ու կաթով:

— Թողեք ինձ վերադառնամ այնտեղ, վորտեղից յեկել եմ,—ասաց մի որ Անտոնինա Իվանովնան,—դուք այժմ հարուստ եք, կարող եք ապահովել մեր յերեխաներին: Դուք ինձ չեք սիրում, չեմ սիրում և՛ յես ձեզ: Դուք սխալվել եք, յես ել եմ սխալվել: Տվեք ինձ յերեխաներին, կտամ ձեզ անպայման աղատություն:

— Մի՛թե,—դոչից Սմբատը զայրացած,—արհամարհում եմ ձեր խոստացած աղատությունը, ինձ համար թանգ են միայն իմ յերեխաները:

Վեճը հենց այստեղ ել ընդհատվեց Ալեքսեյ Իվանովիչի գալով: Նա հագած եր վերջին տարազի հագուստ՝ լայն վարտիկ, կարճ պիջակ՝ կլորաձև վիչերով և միայն մի դույզ կոճակներով, կուրծքը կիսով չափ բաց ժիլետ և ասեղնագործ չապիկ՝ բարձր յերկծալ ոճիքով:

— Սմբատ Մարկիչ,—դարձավ նա իր վեսային, պենսնեն ուղղելով,—մեղ յե՞րբ եք տանելու. հավիտենական կրակները ցույց տալու: Ասում են, չատ հետաքրքրական և, յես ուզում եմ տեսնել կրակապաշտների տաճարը:

Սմբատն առանց պատասխանելու դուրս յեկավ կնոջ սենյակից:

Ալեքսեյ Իվանովիչը, ունքերը վեր բարձրացնելով, մի զարմացած հայացք ձգեց նրա հետևից և ապա, դառնալով քրոջը՝ ասաց.

— Զարմանալի անքաղաքավարի յեն այդ ասիացիները, բնավ չեին հյուրի հետ վարվել:

— Իսկ հյուրն ել բնավ չգիտե իր պատիվը ճանաչել,—նկատեց քույրը հանդիմանաբար:

— Ի՞նչ հիմար բան ասացիր, Անտոնինա՛:

— Ցես լուրջ եմ խոսում. ասա խնդրեմ, վերջապես, յե՞րբ ես վերադառնալու Մոսկվա:

— Վերադառնա՛լ,—կրկնեց Ալեքսեյ Իվանովիչը,—սպասիր, դեռ նոր եմ յեկել, ի՞նչ ես ինձ, այսպես ասած, վռնդում տնից՞դ...

— Դու կարող ես ուշանալ և պաշտոնից ղրկվել:

— Եհ, թող ղրկեն, ինչ կա: Կարծում ես չատ մե՞ծ նշանակություն եմ տալիս ինչ-վոր դեկորատիվ պաշտոնին: Գիտես ինչ, քույրիկս, ուզում եմ Սմբատ Մարկիչին խնդրել, վոր այստեղ ինձ, այսպես ասած, մի լավ պաշտոն տա, աա՞...

— Գործակատարի՞:

— Ինչո՞ւ գործակատարի և վոչ կառավարչի, դանձապահի կամ, այսպես ասած, անձնական քարտուղարի: Ցես այստեղ կարող եյի ապրել, Աստված վկա, կարող եյի, չնայելով, վոր, այսպես ասած, խոբչին Ասիա յե: Ինդրի՛ր սիրելի կողակցիդ, աա՞...

— Ցես յերբեք նրանից բան չեմ խնդրել, այն ել քեզ համար:

— Պատճա՞ռը, աա՞:

— Ամեն մի խնդիր խնդրողի վրա վորոշ չափով պարտականություն և դնում: Իսկ յես չեմ ուզում յերախտապարտ լինել Ալիմովին:

— Այ քեզ նորություն. կինը մարդուն յերախտապա՞րտ...

— Ցես նրա կինը չեմ, այլ միայն յերեխաների մայրը...

Ալեքսեյ Իվանովիչն ունքերը բարձրացրեց մինչև մազերի արմատները. կնշանակեր, թե մինչև այդ աստիճան զարմացավ:

— Իսկ նա՞... Յերևի, նա յել միայն քո յերեխաների հայրն է, աա՞... Այդ չատ որիժինալ է, չատ որիժինալ: Գիտես, սիրելիս, պիտի ասած, վոր դու չատ անհարմար ժամանակ ես դադարել Սմբատ Մարկիչի կինը դառնալու: Բանի, այսպես ասած, տիկնոջ եր—կինն եյիր, հիմա միլիոններ և ստացել—միայն յերեխաների մայրն ես, այդ իսկի ձեռնտու չե, աա՞...

— Ալեքսեյ...

— Գիտեմ, սիրելիս, գիտեմ, վոր մխմանց, այսպես ասած, խանգնում եք: Բայց, քույրիկս, այժմ պետք է ատամներդ ներս քաշես, վորովհետև մնջեղ յերկաթի անդուկ կա, կրծոտելը դժվար է, աա՞... Ուղիղն ասած, յես ինքս ել չեմ սիրում այդ ասիացուն, բայց чорт поберի, փող ունի, իսկ փողը, այսպես ասած, աշխարհի լծակն է աա՛...

— Ինչո՞ւ կամ ի՞նչ ինչ, վոր փող ունի: Մենք ոտարներ ենք...

— Ոտարնե՛ր. դե, դե, դե, թո՛ղ այդ փուչ խոսքերը, Աստված սիրես: Աստնք, դու ինձանից զարգացած ես և խելոք, այսպես ասած, ժամանակակից կին ես, սեփական զաղափարների և հասատատ կամքի տեր: Բայց ներիր, սիրելիս, կենսական խնդիրներում ինձ հետ վիճել չես կարող, այսպես ասած, հիսուն աչոկ առաջ կտամ... Ցես մարդկանց չատ լավ եմ ճանաչում... Ահա ինչ, սիրելիս. այդ զաղափարների, հայացքների տարբերություն, չգիտեմ, համոզմունքների կռիվ կամ ազգային խորթություն, ղրանք բոլորը դատարկ բաներ են, աա՞: Այդ չե ձեր, այսպես ասած, փոխադարձ գժտությունների պատճառը: Պատճառը, այսպես ասած, կենսական է և հոգեբանաֆիզիոլոգիական: Բանն այն է, վոր դու մի քիչ, այսպես ասած, խուճապել ես իրրև կին, հասկանո՞ւմ ես. իրրև կին եմ ասում, աա՞: Чорт поберի, մի մտիկ արա աչքերիդ տակերին եե՛...

— Ալեքսեյ...

— Նո՛ւ, Ալեքսեյ, Ալեքսեյ: Ալեքսեյը ճիշտն է ասում, և ինչո՞ւ թագցնել ճշմարտությունը: Բայց ահա ինչ. ինձ զարմացնում է, թե դու ինչո՛ւ չես սիրում նրան: Այդ ինձ համար, այսպես ասած, հանելուկ է: Նա առողջ է, յերիտասարդ, արյունը յեռում է, աա՞:

— Ամուսնանալիս, ցես նրան ատում եմ:

— Ցեմ հասկանում, Աստված վկա, չեմ հասկանում:

— Ցեվ յերբեք էլ չես կարող հասկանալ: Ամուսնությունը ոչ մարդերի դուրը, քեֆը, բերանը, առողանությունը, սովորությունները, ամուսնի սերը դեպի յուրայինները, ամուսնի լեզուն, ավանդությունները, նախապաշարմունքները, ազգականներին և բոլորը, ինչ-որ կապ ունի նրա ծագման հետ: Այս ամենը ամուսնությունը հասկանալ չի կարելի, այլ միայն զգալ, միայն զգալ...

— Այդ բոլորը գուցե կարելի յե ասել, վորովհետև, ինչպես ասեմ, յես էլ մի առանձին համակրություն չեմ զգում դեպի այդ ասիացիները: Բայց ներիր, մարդերի դուրը դու պիտի սիրես. նա, այսպես ասած, ինչպես բրյուսետ է, իսկ բրյունետները մեղանում մեծ գին ունեն, մանավանդ այդ կոպիտ կովկասցիները, ասո՞:

— Լավ, բավական է,—ընդհատեց Անտոնինա Իվանովնան յեղբոր չաղակրատությունը,—թող այս նամակը վերջացնեմ:

Նա նստեց սեղանի քով, հուզված, և չարունակեց ընդհատված դրությունը:

— Այնուամենայնիվ, դու պիտի հաշտվես Սմբատ Մարկիչի հետ: Միլիոններ է, քույրիկս, հասկանո՞ւմ ես, ինչ ասել է միլիոններ, այն էլ մեր յերկաթի գարում, ասո՞:

Ցեվ դուրս, համոզված, վոր վերջին խոսքերը կարող են ազդել համառ քրոջ վրա, նա, պենսնեն ուղղելով և աչքերը ճպճպելով, դուրս գնաց:

II

Միքայելի համար սկսվեցին ծանր, դաժան ժամեր. ժամեր, լի դառն տանջանքներով, անասելի խոհերով: Մի կողմից վերաբերված պատվի ղեզացումը և հասարակական ծաղրն ու արհամարհանքը, մյուս կողմից՝ խղճի խայթը — նրա հոգին ճնշում էին, սիրտը մորմոքում: Այն միտքը, թե գեռ Գրիշայից վրեժ չի առել, տանջում էր նրան մեջնուքյան մեջ փնտռել մարդերը, կրծոտել մատները, փակված վագրի պես անընդհատ անցուդարձ անելով իր սենյակում: Այն միտքը, թե անզոր է այդ վրեժն առնելու, դղրդում էր նրան անիծել սեփական թուլությունը. հայհոյել անգամ ինքն իրեն:

Նա յերկչոտ չեր, կարող եր իր պատիվը պաշտպանել նույնիսկ կյանքի գնով: Բայց յեղբոր խոսքերն ազդել էին նրա վրա և ազդել շատ խորը: Իսկ այդ խոսքերի ազդեցությամբ նրա մեջ հղացել եր մի ուրիշ ղեզացում, ավելի ծանր, քան սիրելին Ղուլամյանի վերաբերմամբ գործած հանցանքի գիտակցությունը: Դա որիորդ Շուշանիկի վերաբերմամբ գործած սխալն եր: Ապտակը նա համարում եր իր հանցանքի արժանի պատիժ: Իսկ մի մաքուր, անարատ աղջիկա դեմ գործած մեղքը գեռ մնում եր անպատիժ: Ուրիշ ժամանակ, այդ մեղքը նա կհամարեր յերիտասարդական խաղ, անցողիկ կատակ: Ե՛հ, ինչ արավ. փորձեց մոլորեցնել մի անմեղ աղջիկա և չկարողացավ: Մի՞թե ուրիշները քիչ են անում այդպիսի փորձեր, և ո՞վ է իրեն դատապարտում յերեխայական խաղերի համար: Շուշանիկի պատիվն անխախտ է: Բայց վո՛չ. աղքատ աղջիկա հուզված ու վիրավորված կերպարանքը հալածում եր նրան ավելի խիստ, ավելի անողոք, քան արատավորված Անուշի կուշտ կերպարանքը: Նրա ականջներին չարունակ հնչում էին այդ աղջկա լուրջ ու արհամարհական խոսքերը. «Վորքա՜ն զանազանություն կա ձեր և ձեր յեղբոր մեջ»:

Վո՞րն է այդ զանազանությունը: Մի՞թե այն, վոր Սմբատը մի քիչ ավելի յե ուսում առած, ավելի զարգացած, գուցե և՝ ավելի խելոք, քան Միքայելը: Վո՛չ. անկասկած այդ աղջիկն ակնարկեց մեկի ու քան Միքայելը: Վո՛չ. անկասկած այդ աղջիկն ակնարկեց մեկի ու մյուսի կենցաղների մեջ յեղած տարբերությունը: Արդարև, մի՞թե Սմբատը թույլ կտար իրեն այնպես վիրավորել մի անպաշտպան աղջկա:

Ա՛հ, ինչ հիմարություն արավ նա և ինչո՞ւ: Մի՞թե ատոր, անասնական կիրքն այնքան ապականել է նրա հոգին, վոր այլևս վոչ մի սրբություն չի մնացել նրա համար: Այդքան վարվուն, կրակոտ կանչից հետո այդ համեստ աղջկա մաքուր ձայնը, պայծառ աչքերը նանրից հետո այդ համեստ աղջկա մաքուր ձայնը, պայծառ աչքերը դրավեցին նրան ինչպես նորություն ու թարմություն: Համառամ խորտիկներից ձանձրացած ստամոքսը յերբեմն հատարակ բուսեղեն կերակրի պահանջ է զգում: Քիմքի բոպեական հաճույք, կուշտ սրտի անցողիկ փափագ, վոր ղրդեց նրան այդչափ ստորանալ մի աղքատ ու անհայտ աղջկա առջև: Բայց ինչո՞ւ այդ աղջկա ձայնը հնչեց նրա ականջին այնքան սոսկալի և ինչո՞ւ այսոր հալածում է նրան նույնիսկ այն պահին, յերբ պարտավոր է մտածել միայն իր պատվի վերականգնման մասին:

«Կիսահագեյի, վոր մի որ քո մեջ զարթներ իսկական սիրո զգացումը», հիշում եր նա Սմբատի խոսքերը: Ցեվ իրիկնային մթության մեջ, մեն-մենակ նստած իր ննջարանում, այս խոսքերի ազդեցության թմբիր, վերլուծում եր իր զգացումները կանանց վերաբերմամբ: Նա տեսնում եր սրտի ծայրահեղ ապականություն, և ուրիշ վոչինչ: Նա վոչ մեկին չի սիրել, այլև անպատվել է այդ մաքուր զգացումը, անասնական ախորժ սիրո տեղ չտալելով: Նա իր բնական ծարավը մինչև հագեցրել է կեղտոտ աղբյուրներից: Ցերբեք չի հարգել կին ասված էակին, նույնիսկ այդ Անուշին: Իհարկե, այդ աղջիկն իրավունք ունի նրան արհամարհելու:

Վորքան նա աշխատում եր մոռանալ անմեղ կերպարանքը, այնքան ավելի յեր հալածվում նրանից: Ապտակի լուրը տարածվել է ամբողջ քաղաքում, այսոր, վաղը, լհարկե, հայտնվելու յե և՛ նրա ամուսնի պատճառը: Ցեվ վոչ վոքի կարծիքը նրան չեր վախեցնում այնքան, վորքան Շուշանիկինը: Սենյակի մթության մեջ տեսնում եր մի անկոչ դատավոր, վոր ղվնջով լի աչքերը հառել եր նրա յերեսին: Լսում եր սարսափելի չչուկը. «Չեկի՞ ասում, վորքան զանազանություն կա ձեր և ձեր յեղբոր մեջ»: Կարծես, այդ աղջիկն ամբողջ հատարակական կարծիքի մարմնացումն եր, և կարծես, մարդկությունը կենա-

ընացել եր միայն այդ աղջկա մեջ: Նրան թվում եր, վոր յեթե միայն Շուշանիկից նելվի, կմոռանա իր անպատվությունը, մխենույն ժամանակ, զգում եր, վոր յեթե բոլորն էլ նրբեն, հենց միայն այդ աղջիկը միշտ արհամարհելու յե իրեն, միշտ զզվանքով յերես ե դարձնելու:

Նա վառեց ննջարանի լամպարը, դրեց սեղանի վրա: Գլուխը բարձրացնելով, պատին քաշ արած հայելու մեջ տեսավ իր դեմքը: Աչքերի շրջանակները կարմրել էին, այտերը չառագունել: Նրան թվաց, թե ապտակը ձախ այտի վրա թողել ե չորս մատների կապույտ հետքը: Ցնցվեց: Ա՛խ, յերանի թե կարելի լիներ գոնե այս մի հատիկ թերթը պոկել նրա կյանքի դրքույկից և այրել անհետք: Բայց անկարելի յե, և հենց այս մի հատիկ թերթը պիտի բարձրաձայն գոռա նրա բարոյական անկման մասին:

Նայեց իր փափուկ, չքեղ անկողնին և ապա հայացքը դարձրեց դեպի անուշահոտ յուղերի ու ջրերի սրվակները: Հանկարծ զգաց անսովոր զզվանք դեպի այն բոլորը, վոր նրա կանացի դեխության նշաններն էին:

«Մի՞թե քո սրտում չի մնացել մի առողջ անկյուն», հիշեց Սմբատի խոսքերը: Ահա թե վորքան ե ընկել, վոր նրան մի այսպիսի հարց են տալիս, լռում ե:

Վո՛չ, այլևս նա չի ուզում ընկած մնալ: Նա կարող ե իրեն ուղղել: Հեռո՛ւ ապականող չրջան, անքուն գիշերներ, զաղրելի զվարճություններ՝ անառակների ընկերության մեջ:

Նա կատաղեց տուալետի սեղանի դեմ: Ցեվ մի բոպեյում բոլոր սրվակներն ու չչերը լուսամտի մեջով սլացան դեպի փողոց, ուր նրանք ջարդ ու փշուր յեղան սալահատակի վրա: Ա՛խ, յերանի կարողանար իր ամբողջ անցյալն այդպես խորտակել և նորից սկսեր ապրել: Այն ժամանակ այդ աղքատ ու հպարտ աղջկան կասեր. «տեսե՛ք, յես արհամարհում եմ ձեր կարծիքը, վորովհետև իմ յեղբայրն ինձանից վոչ մի բանով բարձր չե»:

Նայեց ժամացույցին. դեռ յոթ ժամն եր: Ցերբեք որվա այս մի ժամին նա տանը չեր յեղել: Այժմ ո՞ւր գնալ, ի՞նչ յերեսով յերևալ ընկերներին: Մտածեց, վոր Գրիչան դեռ տանն ե և ինքը ժամից առաջ չի գնում կլուբ: Մենա՞կ ե, արդյոք, ի՞նչ ե մտածում, ուրա՞խ ե իր արածի համար, պարծենո՞ւմ ե ընկերների մոտ, թե՞ զղջում: Նա զգաց անսովոր կարեկցություն դեպի ընկերները և նրա մեջ հանկարծ հզաց Գրիչայի հետ տեսնվելու ցանկություն:

— Աղա՛, այս մարդն ուզում ե տեսնել,—լսեց նա զանգեղուրցի բաղդասարի ձայնը:

Ծառան, վոր մի անտաչ գյուղացի յեր, հագած եր սև այուրտուկ, սպիտակ փողկապ Միքայելի պատվերով:

— Ասե՞լ ես, վոր տանն եմ,—հարցրեց Միքայելը, նայելով սպասավորի բերած այցետոմսին, աչքունքը թթվացնելով:

— Ասել եմ:

— Շատ զալա՛թ ես արել... Ինդրի՛ր ներս...

Ներկայացավ Թղթակից Մարզպետությունին: Յտվակցություն հայտնեց, վոր ուշ ե ներկայանում իր համակրությունն արտահայտելու համար «տեղի ունեցած վայրենի դեպքի մասին»: Նա զրգռված եր և սկսեց բոքոտել «հասարակական անպիտան վարք ու բարքի» դեմ: Ակնարկեց, թե դեպքի նկարագրությունն արդեն պատրաստ ե լրագրի համար: Հարեթյանը դուրս ե բերված մի անբարոյական մարդ, մի հրեչ: Թող կարդա և ամաչի իր արածից:

— Միայն մի քանի լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր,—ավելացրեց Թղթակիցը, հուշատետրը ծոցից հանելով.—որինակ՝ ճշմարի՞տ ե, վոր դուք նրան մենամարտության եք կանչել, Հարեթյանը փախել ե յերկչոտությամբ:

— Վո՛չ, սուտ ե:

— Ճշմարի՞տ ե, վոր...—կամեցավ չարունակել Թղթակիցը և հանկարծ կանգ առավ զարմացած:

Միքայելը բացարձակ ցույց տվեց, թե մտադիր չե նրա հարցերին պատասխան տալու: Նա, զրիչը վերցնելով, ձևացավ, թե գործ ունի:

— Ներեցեք, կարծեմ, յես ձեզ խանգարեցի,—ասաց Թղթակիցը, հուշատետրը կամացուկ ծոցը դնելով:

— Ա՛յո՛, յես մի քիչ զրաղված եմ,—ասաց Միքայելը, չթաղցնելով իր ձանձրույթը:

— Ներեցեք, յես ուզում եյի ձեզ պաշտպանել մամուլի մեջոցով:

— Բայց մի՞թե կարիք կա ամեն մի մասնավոր դեպք լրագրին հաղորդելու:

— Վո՛չ, այդ մասնավոր դեպք չե; այլ հասարակական յերևույթ: Ցես, իբրև մեր հասարակական բարք ու վարքերի ուսումնասիրող, պարտավոր եմ հաղորդել...

— Այն ժամանակ դրեցեք, ինչ ուզում եք. յես ժամանակ չունեմ քննության յենթարկվելու:

— Շատ դեղեցիկ, չատ հիանալի, պարոն Ալիմյան: Կնչանակե, յես ստիպված կլինեմ դիմել պարոն Հարեթյանի աջակցությանը: Նա բոլորը կասի, իսկ յես... յես պարտավոր եմ բոլորը դրել... Դա հասարակական յերևույթ ե...

— Գնացե՛ք, ուրեմն, նրա մոտ, վորքան չուտ, այնքան լավ,—դոչեց Միքայելը, հասկանալով Թղթակցի քսու միտքը:

Մարզպետությունին, ամբողջ մամուլի պատիվը չոչափված զգալով, դուրս գնաց, մտքում պատրաստելով մի կծու հոդված, վորով պիտի

ջարդ ու փչուր աներ բուրժուազիային: Ախ, այդ բուրժուանները, յերբեք չպիտի աշխատել նրանց դուր գալ... չեն հասկանում, չեն գնահատում:

Նույն րոպեին, կուչ գալով և փոքրացած, ներս սկսվեց արծաթագործ-ակնավաճառ Բարսեղը: Ի՜նչ անիրավություն, ի՜նչ լրբություն. յեթե Ալիմյանի պես մեծամեծների պատվին ել դիպչում են, ել ի՞նչ պիտի անեն Բարսեղի նման «խեղճ մարդիկ»: Աչխարհը փչացել է, մեծ ու պատիվ չկա: Մարկոս աղայի վորդին կլուբում ապտակ առանա՞, և քաղաքը տակն ու վրա չլինի՞... լավա՞ծ բան է... Յերեք որ է Բարսեղը չարունակ կռվում և բոլորի հետ: Զար լեղուներն ասում են, վոր երբ Միքայել աղան դուրեից հետ է կանգնել: Իհարկե, Բարսեղը, Միքայել աղայի ցավն առնի նա, ամենի հետ կռվում է այս մասին: Հարեթյանն ո՞վ է, վոր Ալիմյանը նրա հետ ճակատ-ճակատի կանգնի: Փիւ՛, աչխարհը քանդվի՞լ է, ել մարդ չի մնացել, վոր Միքայել աղան ինքը գնա ու ձեռները կեղտոտի: Այնքան բարեկամներ ունի, բավական և մեկին հրամայի, Հարեթյանի «գլուխը կթռցնեն սխտորի պես»:

— Յես ինքս, ցավդ առնեմ, խեղճ տեղումս նրա միսը դոլմա չինել կտամ, չներին կուտեցնեմ: Թուկից փախածներ կան ձեռքիս տակ, վոր մատդ բարձրացնես, մարդու ծոցից դիշերը կնոջը կհանեն:

Նայելով ակնավաճառի փոքրիկ աչքերին, չիկակարմրադույն դեմքին, Միքայելն զգաց անսովոր զզվանք:

— Յես վոչ վոքի ոգնություն կարոտ չեմ,—ասաց նա, հասկացնելով, վոր յերկար խոսելու ախորժակ չունի:

— Իհարկե, իհարկե:

— Դե բավ, դո՛ւրս յեկ,—պատվիրեց Միքայելը բավական խիստ յեղանակով:

Ակնավաճառը դուրս գնաց փոշման, ատամները կրճտելով:

Միքայելը կանչեց Բաղդասարին և հրամայեց այլևս վոչ վոքի չընդունել: Բայց հենց հրամանը տալիս, ներս մտավ Սուլյանը, վորի աչքերի վերին կոպերը խորին դայրույթից միանգամայն անհետացել եյին ունքերի տակ: Այդ ի՞նչ վայրենություն է, այդ ի՞նչ հանդգնություն է և ո՞վ է ում վրա ձեռ բարձրացնողը: Սպանելը քիչ է, պիտի կախաղան բարձրացնել, վո՛չ, ձղել նավթահորի մեջ և խեղդել:

— Յես մի խաղաղ մարդ եմ, վորովհետև, ինչ կուզեք ասեք, դիտությունը մարդու մեջ սպանում է վայրենի ինստինկտները: Բայց, յեթե թուլ տաք, հինգ անգամ կապտակեմ այդ վայրենուն: Գոնե պետք է հասկացնել, վոր կան մարդիկ, վորոնց վրա վոչ մի ձեռք չպիտի բարձրանա: Ալիմյաններն ինչ-վոր Հարեթյաններ չեն...

Նրա խոսքն ընդհատվեց Մարութխանյան ամուսինների դալստով:

Յերեք որ եր նրանք նույն ժամին այցելում եյին և չեյին հաջողում Միքայելին տեսնել: Իր սենյակում փակված, նա վոչ վոքի չեր ընդունում:

Տիկին Մարթան սկսեց հայհոյել Հարեթյանի մորը, քույրերին ու բոլոր աղգականուհիներին, հայտնի չեր ինչու, հանդիստ թողնելով արական սեռը: Նրա կարմրախայտ այտերի չուրջը կապտեց, յերկարավուն քթի սլնչերը դողացին, բարակ շրթունքները դեղնեցին: Այդ կինը, վոր նոր եր սկիզբ դուրս յեկել, հաղնված եր ամենավերջին տարազով, բայց վորպես մի անշնորհք, սակայն դեղեցիկ դերասանուհի կամ առաջին կարգի կոկետուհի: Նրա ահագին գլխարկը զարդարված եր ամեն դույնի փետուրներով ու ծաղիկներով, իսկ մետաքսյա վարդագույն կիռասի թևերն այնքան լայն եյին ուսերի կողմում և նեղ բազուկների վրա, վոր նա նմանվում եր չինական ծաղկամանի:

Մարութխանյանը նույն կարծիքի յեր, ինչ-վոր երավաբան փեքարյանը, պետք է զանգատվել դատարանին:

— Ամեն բան դատարանի ձեռքով, ամեն բան,—կրկնեց նա խորհրդավոր յեղանակով,—ժամանակներս այսպես են, ինչ արած:

— Չե՛, Իսակ, չե՛, դա չատ քիչ է,—դոչեց Մարթան, վոր բազկաթոռի վրա հանդարտ չեր կարողանում նստել, մերթ պատում եր յեղբոր, մերթ ամուսնու ու մերթ Սուլյանի կողմ, ինչպես լարված պահուճասպատանք.—այդ գյադային պիտի մի լավ ծեծել տալ: Գիտե՞ս ինչպես. գցել հենց կլուբում, ուրիչների առաջ, ծեծել, ծեծել ու ծեծել: Այնպես չե՞, պարոն Սուլյան:

Սուլյանը մի ինչ-վոր անորոշ շարժում արավ գլխով: Ով գիտե Իսակ Մարութխանյանն ինչ մարդ է, հանկարծ դրսում մի անզգույշ խոսք կասի, և Հարեթյանը, լսելով, կարող է Սուլյանին ել թշնամի համարել: Այժմ նա մտածում եր տիկին Մարթայի մասին, մերթընդմերթ նրա վրա գաղտուկ իմաստալի հայացքներ ձգելով: Նա չեր ուզում, վոր տիկինը կատաղի, վորովհետև այդ ոգեղացնում եր նրա դեմքը: Յերբ Մարթան, ազատվելով սրտի առաջին մաղձից, հանդարտվեց, սկսեց սիրալիր ժպտալ ինժեներին, աչխատելով, սակայն, վոր իր ժպտները չնկատվեն ամուսնուց ու յեղբորից: Յեվ խորամանկ ամուսինը, վորի սրատես աչքերից առևտրական աչխարհում վոչ մի չնչին յերևույթ խուսյս չեր տալիս, իր կնոջ վերաբերմամբ առհասարակ բավական կարճատես եր...

Իբրև զգույշ և հասկացող մարդ, Սուլյանը զգաց, վոր այժմ ինքն ավելորդ է ընտանեկան շրջանում: Հրաժեշտ տալիս նրա փոքրիկ աչքերը մի քանի վայրկյան սևեռվեցին Մարթայի աչքերին այն պահին, յերբ տիկնոջ չոր-չոր մատները ցնցվեցին նրա ձեռի մեջ:

— Հիմա կարող ենք մեր մեջ խոսել մեր ընտանեկան ցավերի մասին,—ասաց տիկինը, Սուլյանի դուրս գնալուց հետո։—Սրե, Միքայել, խոստովանիր, որ մեր յեղբայրը մարդ չէ։ Յեթե մարդ լիներ, հենց այսոր թշնամուդ դլուխը ջարդ ու փշուր կաներ։ Ա՛խ, Մեխակ, ուրիշներն էլ յեղբայր ունեն, մենք էլ... Զրկում է մեզ հերիք չէ, պատիվներս էլ ուրիշների մոտ չի պաշտպանում։ Ե՛հ, տերը նրա հետ, թող ինքն իր պատիվը պաշտպանի, յեթե կարող է.—չարունակեց տիկինը, խոսույն փոխելով խոսքը,—միայն մեզ հանդիստ թողնի։ Հենց այդ է, որ հանդիստ չի թողնում. ի՛նչ կա, բերել է ու մեր դլխին ձդել այդ կնոջն իր լակոտներով։ Ա՛հ քու լույս. իմ խեղճ հայրն արյուն-քրտինքով վող աչխատի, մի ոտարուհի դա, տիրանա՞... Հապա դա Աստված կվերցնի՞, Մեխակ... Դո՛ւ ասա...

Իսակ Մարութխանյանը լսում եր լուռ, թույլ տալով կնոջը չարունակել նույն ուղղությամբ։ Նա դիտեր իր լարած մեքենայի զորությունը. դիտեր, որ Մարթան մինչև որ Միքայելին նորից չերդուի Սմբատի դեմ, չպիտի լռի։

— Ինչո՞ւ մինչև հիմա մեզ վիզիտ չի անում,—չարունակեց Մարթան նորից, հետզհետե տաքանալով,—հարցնող լինի. ո՞վ է, ո՞ւմ աղջիկն է։ Յեկել է թե չէ, մեր մոր որը սևացրել է։ Խեղճ ծնողս ամեն որ աղի արտասուք է թափում։ Մեխակ ջան, պետք է Սմբատին խելքի բերել. նա մեր անունը խայտառակեց հայերի մեջ։ Ի՞նչ է քո վզին նստեցրել այդ քոծին...

Նա զարմացավ։ Այս անդամ Միքայելն անուշադիր եր դեպի իր դրդումները։ Կատաղեց և սկսեց ավելի պարսավել Անտոնինա Իվանովնային։ Բանն այնտեղ հասավ, որ չինայեց յեղբոր կնոջ բարոյական վարկն անդամ և ուղղակի կասկած հայտնեց նրա անցյալի մասին...

— Մարթա՛,—գոչեց, վերջապես, Միքայելը,—մի քիչ զաղաքավարի խոսիր. այդ կինը մեր յեղբոր ամուսինն է, նրա յերեխաների մայրը...

— Ոհո՛, ոհո՛, ոհո՛,—կրկնեց Մարթան, գրեթե նստած տեղը պարելով,—ա՛յ նոր բան։ Դու նրանց կո՞ղմն ես անցել, ուրեմն այդ կնիկը քեզ էլ է կախարդել...

Իսակը նոր միայն սկսեց կամաց-կամաց հանել ձախ ձեռքի ձեռնոցը։ Դա նչան եր, որ պատրաստվում է արդեն կնոջն ոգնելու։

— Այսոր յես,—սկսեց նա հանդարտ, աչքով անելով Մարթային, որ լռի,—այսոր յես փաստաբանին ասացի, որ դատարանին խնդիր տա։

— Ինչի՞ մասին,—հարցրեց Միքայելը, թեև դիտեր վեճան ինչի մասին եր խոսում։

— Մեր դատ. կարծում եմ, արդեն ժամանակն է։

— Չի՞ կարելի, արդյոք, մի քիչ էլ հետաձդել։

— Ինչու չէ, կարելի յե,—պատասխանեց Մարութխանյանը, վարսակի ծնկները սրբելով, թեև այնտեղ վոչինչ չկար,—յերևի, խոստանում է կամավոր մեր բաժինը տալ, հը՞մ...

Մինչև այժմ Միքայելն անցուդարձ եր անում։ Լսելով վեճայի վերջին խոսքերը, նայեց նրա յերեսին, նստեց դեմ առ դեմ և, վոտը ձդելով վոտի վրա, ասաց.

— Ամոթ չլինի հարցնելը, ի՞նչ բաժնի մասին ես խոսում։

Մարդ ու կին նայեցին միմյանց յերեսի. անչուշտ, Միքայելին մի բան է պատահել։

— Մեր հալալ բաժնի,—պատասխանեց Իսակը, ուսերը վեր քաշելով։

— Դիտես ի՞նչ, վեճա, յես Սմբատի հետ չեմ ուզում վեճի բռնվել, դուր եք մարդ ու կին ուզում ինձ խելքից հանել...

— Ի՞նչ, ի՞նչ,—գոչեց Մարթան, դու չես ուզում, յես ուզում եմ, իմ յերեխաներն ուզում են։

— Դու ժառանդ չես և իրավունք չունիս բաժին պահանջելու...

— Եհե՛, այդ եր պակաս։ Զե, Իսակ, յեղբորս խելքից հանել են...

— Կարելի յե բոլորովի՞ն չես ուզում դատ սկսել,— հարցրեց Իսակը։

— Յեթե կամենում ես ճիշտն իմանալ, այո՛, բոլորովին,— պատասխանեց Միքայելը։

— Հետաքրքրական է իմանալ, ինչո՞ւ։

— Հենց այնպես, քեփս չի տալիս։

Մարութխանյանը մի սուր, յերկարատև հայացք ձդեց Միքայելի աչքերի մեջ։

— Ի՞նչ ես այդպես մտիկ անում, բարկացավ Միքայելը կանաչադեղնադուն աչքերի անախորժ փայլից,—մի՞թե կարծում եյիր, այնքան ընկած եմ, որ խարդախության կղիմեմ յեղբորս դեմ՝ դրպանդ հատատցնելու համար։ Սխալվում ես, յես սրիկա չեմ...

Մարութխանյանն սկսեց անհանդիստ չարժումներ անել։ Բանն այն է, որ նա իր կնոջը հավատացրել եր, թե կոնտր-կատակն իսկական է։

— Յեթե չես ուզում դատ սկսել,—ասաց նա,—ի՞նչ հարկավոր է ավելորդ խոսելը։ Մարթա, վերկա՛ց, գնանք... Միխայել Մարկիչն այսոր քեֆ չունի...

Միքայելը նրա աչքերի մեջ կարդաց կծու հեգնության հետ և մի չար դիտավորություն։ Թվաց նրան, որ այդ աչքերի մեջ նստած մի ղուժդ զաղրելի սողուններն ինչ-որ դավ են սարքում իր դեմ։

— Գիտե՞ս ինչ, վեհար,—ասահանեց նա ակամա, չկարողանալով զսպել նողկանքը,—դու... դու լավ մարդ չես, ներիր ինձ...

Մարութխանյանը հեգնաբար ծիծաղեց քարձրաձայն: Նրա չոր ձայնը հնչեց վորպես մի ցուրտ, անախորժ քամի: Լամպարի լույսն ընկել եր ուղիղ նրա դեմքի վրա և լուսավորել նրա մի քիչ յերկայնաձև գլուխը, վոր դդումի ձև ուներ:

— Ցես լավ մարդ չեմ, հա՛, հա՛, հա՛,—կրկին ծիծաղեց նա և վոտքի կանգնեց, Մարթա, առաջ ընկիր... Ցես իմ հաշիվները դիտեմ, լավ մարդ չեմ, բայց իմ հաշիվները դիտեմ...

— Մեխա՛կ,—դոչեց Մարթան, վոր զարմացած մերթ նայում եր ամուսնուն, մերթ յեղբորը, լավ չըմբռնելով նրանց վեճի իսկական իմաստը,—դու իմ մարդուն վիրավորո՞ւմ ես, խելքդ գլխի՞դ է...

— Առաջ — վո՛չ, այժմ, վտոք Աստծու, գլխիս է, միայն վախենում եմ, վոր այդ մարդը քո խելքը չուտի: Գիտե՞ս, նա շատ ագահ է, ո՛ր, շատ ագահ, ամեն բան ուտում է...

— Տեսնենք,—ասաց Իսակը, գլխարկը բազկաթոռի վրայից վերցնելով,—վախենում եմ մի որ այդ խոսքերի համար չփոշմանես, Մեխայել Մարկիչ:

— Դե լավ, թո՛ղ ինձ հանգիստ, դնա՛ բանիդ...

— Ի՞նչ, դու Մարութխանյանին դո՞ւրս ես անում տնիցդ,—արտասանեց հյուրը, աջ ձեռով գլխարկի յեզրը խփելով ձախ ձեռին,—a propos, վատ մարդ եմ, յես էլ ցույց կտամ իմ վատությունը... Մարթա, գնանք, յես սկանդալիստ չեմ...

Միքայելը լուռ ու վրդովված նայեց քրոջ ու փեսայի հետևից, մինչև վոր դուրս գնացին — կինը հուզված, մարդը սատանայարար ժպտալով:

— Ո՛ձ,—թռավ ակամա նրա բերանից:

Նա զգաց մի տեսակ թեթևություն: Հնարովի կտակի խնդիրը նրա համար մի ակամա բեռ եր: Հոգու խորքում վաղուց եր զգում նրանից ազատվելու պահանջ: Այժմ ուրախ եր, վոր միանգամից դեն ձգեց ու սերից այդ բեռը: Դա մի համարձակ քայլ եր նրա համար: Մի քայլ, վոր ներշնչեց նրան յերանդ մի ուրիշ ավելի համարձակ քայլ անելու: Նայեց ժամացույցին. դեռ նոր եր լրացել ութ ժամը: Ռութ մատի ծայրը սեղմեց սատմներին, նայեց հատակին, ձախ բունգքը կողքին հենած:

Նա գործեց մի վճռական չարժում, մոտեցավ սեղանին, մատը սեղմեց զանգակի կոճակին:

— Սմբատը տա՞նն է,—հարցրեց բաղդասարին:

— Հենց ես սհաթիս դուրս գնաց:

— Տուր ինձ վերարկուս:

Նա չտապով հագնվեց և դուրս յեկավ հաստատ քայլերով: Ցերեկ որ եր՝ մտածում եր ու տատանվում: Այժմ ուղեց, վերջապես, մի հարվածով լուծել հանգույցը: Թող ինչ լինելու յե, լինի: Նա իր պատիվը մի անգամ արդեն դրել ե թղթախաղի, այլևս կանգ առնելը յերեխայություն ե: Թող ինչ ուզում են ուրիշները մտածեն: Նա կանի այն, ինչ-վոր թելադրում ե իր սիրտը: Նրան տիրել եր անսովոր համարձակություն: Այն, ինչ-վոր ուզում եր անել, այլևս նրան չեր թվում այնքան ծանր ու անախորժ, վորքան մեկել որը, յերեկ, նույնիսկ մի ժամ առաջ: Վռնդելով իր տնից Մարութխանյանին, նրան թվում եր, թե վռնդեց իր սրտից ամեն մի վհերություն:

Ցեղանակը ցուրտ եր, յերեկոն սաստիկ մութ: Թանձր մառախուղի մեջ վողոցային լապտերները ներկայացնում եյին մի տեսակ մոխրագույն կետեր: Բարակ անձրևը սալահատակները թրջել եր և դարձրել լպրծուն: Նա ստեղ-ստեղ սայթաքում եր, բայց կտրք չեր ուզում նստել: Հաճելի յեր նրան թրջվել անձրևի տակ, ծծել խոնավ ողը, զգղդողալ ցրտից:

Քառորդ ժամ անցած, կանգ առավ մի նորաշեն տան առջև, մտածեց մի վայրկյան և մատը սեղմեց զանգակի կոճակին: Դռները բացվեցին այն վայրկյանին, յերբ, մի հանկարծակի մտքից զրկված, ուզում եր հեռանալ:

— Տա՞նն ե պարոնդ,—հարցրեց ռուս աղախնին, վոր յերևաց դռան չեմքի վրա:

— Տանն ե:

Մտավ ներս, բարձրացավ մի փոքրիկ սանդխատով, անցավ ելեկտրական փոքրիկ լապտերով լուսավորված նախասենյակը: Ներս մարմնին տիրեց անսովոր ջերմություն, զգաց, վոր արյունն ուժգին հոսում ե դեպի գլուխը, սիրտն արագ-արագ բաբախում: Բայց հետ չդարձավ: Մատներով զարկեց դռներին: Ցեվ ներսից լսվեց ծանոթ ձայնը:

— Մտե՛ք:

III

Ցերկու ընկերը, վոր տասնուհինգ տարի միասին աղուհաց եյին կերել, միմյանց սիրել ու պաշտպանել, այժմ կանգնած են դեմ ու դեմ իրրև թշնամիներ: Այս միտքը կայծակի արագությամբ անցավ Գրիգոր Հարությանի գլխով, յերբ դռների մեջ տեսավ Միքայելի կերպարանքը: Նա չփոթվեց, չմտացավ թուլլ տալ նրան ներս մտնելու, թե ծառային հրամայի վռնդել: Հետո մտածեց, վոր վիրավորվածը յեկել ե անձամբ հաշիվ պահանջելու: Վաղուց եր հարկավոր. չե՞ վոր Գրիշան ապտակը հենց դիտմամբ այնքան բազմության մեջ տվեց, վոր ավելի

վիրավորի Միքայելին և ստիպի նրան իրենից անպատճառ հաշիվ պահանջելու:

Նա նստած էր պարսկական փոքրիկ թախտի վրա և ծխում էր պարսկական ծարգիլե, խալաթը հագին, գլխին տաճկական փես: Ծխափողը փաթաթելով ջրամանի բերկայն պարանոցին, հանդարտ վերկացավ տեղից և մոտեցավ դրասեղանին:

Միքայելը լուռ միքանի քայլ առաջ եկավ: Գդակը դնելով աթոռի վրա, ձեռով տրորեց ճակատը: Նա գիտեր ուր է եկել և ինչու համար, բայց չգիտեր ինչպես սկսի այն, վոր ուզում էր ասել: Նա տակավին կռվում էր ինքն իր հետ, աշխատելով զսպել վիրավորված պատվի զգացումը և կատարել այն պարտքը, վոր թելադրում էր սիրտը և հալածում նրան գիշեր-ցերեկ բերել որ չարունակ:

— Ասելո՞ւ ես, թե՞ չե,—արտասանեց Գրիչան, առանց նայելու նրան:

Նա ծանր նստեց աթոռի վրա և մեջքը հենելով սեղանին, աչքերը հառեց հյուրի բերանին, ղվանքով լի աչքերը: Միքայելը ներքին հուզումից զանազան ներվային չարժումներ էր անում: Նա ղգում էր, վոր սառցանում է ինքն իրեն իր թշնամու առջև, բայց ներքին ձայնը չէնջում էր. «ուրիշ կերպ չեյի՛ր կարող վարվել»:

— Գրիչա,—սկսեց նա, ձեռը դնելով առջևում գտնվող աթոռի մեջքին,—ես եկել եմ բացատրություն տալու:

— Այսինքն՝ պահանջելու:

— Վո՛չ, տալու,—կրկնեց նա ավելի համարձակ,—համարիր ինձ վախկոտ կամ հիմար, բայց ես եկա... Ինձ ստիպեցին գալու: Դու բոլորը չգիտես. ինձ վիրավորեցիր, բայց բոլորը չգիտես: Մենք թշնամիներ ենք, թշնամիներ ել կմնանք, միայն լսիր ինձ...

Ցեվ նա պատմեց բոլորը, սկսած առաջին որից, երբ հափշտակվեց Անուշով, մինչև վերջին այցը: Այլևս նրա պատմությունը չուներ ռոմանտիկական բնավորություն: Խոստովանում էր ծանր հանցանքը, բայց բացատրում էր, վոր մեղավորը միայն ինքը չէ: Նա վոչինչ չէր կարող անել, յեթե Անուշը հրեր նրան իրենից: Ջհրեց, ընդհակառակը, խրախուսեց, իսկ նա, ինչպես յերիտասարդ, մոլորվեց, խելքը կորցրեց, մոռացավ և՛ ամոթ, և՛ պատկառանք, և՛ ընկերոջ, և՛ սեփական պատիվ: Նա իրեն արդարացնելու համար չի ասում այս, այլ միայն սիրտը թեթևացնելու, խղճի խայթը մեղմացնելու համար: Ա՛խ, չատ քանդ կվճարեր իր սխալն ուղղելու համար, բայց ի՞նչ անի այժմ: Նա պատրաստ է ամեն կերպ զոհացում տալ Գրիչային, միայն թե կարողանա արդարանալ ինքն իր խղճի առջև:

Այս էր նրա յերբեմն հորդահոս, յերբեմն անկապ խոսքերի բուն իմաստը:

Գրիչան լսում էր լուռ և զարմանում: Ի՞նչ է նշանակում այդ. ծաղրո՞ւմ է նրան Ալմյանը, թե՞ վախեցել է, թե՞ խելագարվել: Այսպես թե այնպես — դա մի այնպիսի քայլ էր, վորին յերբեք չէր կարող սպասել Ալմյանի կողմից, չէր անիլ և՛ ինքը:

— Դու զարմանո՞ւմ ես,—չարունակեց Միքայելը դողդոջուն ձայնով,—այդքան խեղճացած տեսնելով ինձ: Ցես կկատաղեյի, յեթե յերեկ ինձ ասեյին, թե պիտի դամ այստեղ և ներողություն խնդրեմ: Գրիչա, չես կարող յերևակայել, թե ինչ է կատարվում իմ մեջ: Այս յերեք որվա ընթացքում յես ապրել եմ ավելի, քան ամբողջ կյանքումս: Խիղճս տանջում է ինձ, վոր այնպես վիրավորել եմ քեզ: Խոստովանելով իմ մեղքը, կարծում եմ, գոնե մի փոքր կարող եմ թեթևացնել սիրտս...

— Ցեվ մարսել ապտակս,—ավելացրեց Գրիչան դառն արհամարհանքով:

Այրյունը խփեց Միքայելի գլխին: Մի ակնթարթում նա կորցրեց ինքն իրեն:

— Ապտա՛կը,—կրկնեց նա, մի քայլ հետ կանդնելով:

Վայրկյանը տագնապալի յեր: Արդեն Գրիչան կարծում էր, թե հակառակորդը պիտի հարձակվի իր վրա: Նա պատրաստվեց պաշտպանվելու: Բայց Միքայելը ցնցվեց, նորից ուշքի յեկավ. մի՞թե չեր յերդվել զսպել իրեն: Նորից պայծառ կերպարանքը նկարվեց նրա աչքերի առջև: Ցեվ այդ վայրկյանին նրա սրտում զարթնեց կյանքի մի այնպիսի սեր, վոր յերբեք չեր զգացել: Նրա ձեռները թուլացան: Գլուխը թեքելով կրծքին, արտասանեց.

— Դու ունեյիր իրավունք ինձ սպանել անգամ...

Գրիչան աչքերը չեր հեռացնում նրանից, դիտելով նրա յուրաքանչյուր չարժումը: Նա զգաց մի ինչ-վոր կարեկցություն դեպի նախկին ընկերը և մոտածեց. արդյոք, չափից դուրս խիստ չի՞ վարվում նրա հետ: Սակայն հանցա՞նքը, մի՞թե ավելի մեծ պատժի արժանի չե, մի՞թե նա դեռ պիտի խոսի այդ ապականված, անզուսպ մարդու հետ, այն ել իր տանը:

— Տասնուհինգ տարվա մեր կերած աղուհացը դու ամենաանամոթի կերպով վոտնատակ արիր, այժմ ի՞նչ ես ուզում ինձանից, անպատկառ, ասա՛...

— Վոչինչ, միայն յեկել եմ ներողություն խնդրելու, հետո, հետո կարող ես վարվել ինձ հետ, ինչպես կամենաս, հետո յես վոչնչից չեմ վախենում:

— Դո՛ւրս, դո՛ւրս իմ տնից, յես ձայնդ անգամ լսել չեմ ուզում,—գոչեց Գրիչան մոլեգին, բռունցքն ուժգին զարկելով սեղանին:

Միքայելն անշարժ էր. այլևս նրա համար բոլորը մի յեր, կվռնդեն

իրեն, թե կծեծեն: Նա արդեն այն, ինչ-որ բոնի պահանջում էր սիրտը:

Գրիչան արմունկները հենեց սեղանին, գլուխը դրեց ձեռների ափերի մեջ, յերեսն ամոթից ծածկելով: Նա ամաչում էր իր քրոջ վարքերն: Նա այնքան թեթևամիտ չէր, որ չկարողանար կշռադատել իրողությունը: Գիտեր ըմբռնել իրերի էությունը և վորքան մեղավոր էր համարում Միքայելին, կրկնակի դատապարտում էր քրոջը: Միքայելը կանգնած էր անշարժ: Նայում էր նախկին ընկերոջ հատ պարանոցին, վորի յերակները փքվել էին և դողդողում: Կար ժամանակ, վոր այդ առողջ, զվարճամոլ մարդը միշտ նրան ներշնչում էր ուրախություն: Սիրում էր նրան ավելի, քան մյուս բոլոր ընկերներին: Համարում էր նրան բարեսիրտ, նույնիսկ վեհանձն: Տասնուհինգ տարի, այո՛, ընկերներ էին յեղել, միասին անցկացրել հաղարավոր զվարճալի որեր ու գիշերներ և յերբեք մեկմյանց դառն խոսքով անգամ չէին վիրավորել: Յեվ հանկարծ, այսօր մեկը դողանում է մյուսի պատիվը: Ձիշտ վոր նա անպատկառ է, անխիղճ և չի կարող այս տունն ապականել իր ներկայությամբ: Թող ապտակն այրի նրա դեմքը կրակի պես, դա ամենափոքր պատիժն է նրա ամենամեծ հանցանքի համար:

— Յերթե դու մի փոքր աղնիվ լիներ,—խոսեց Գրիչան, գլուխը բարձրացնելով,—ուրիշ կերպ ինձ բավականություն կտայիր: Բայց յես քեզ ճանաչում եմ, դու յերբեք այդքան քաջություն չես ունենալ... Դու հասկանում ես, ինչ եմ ասում. իմ քույրն իր մարդու հետ այսուհետև ապրել չի կարող, պիտի բաժանվի նրանից...

Միքայելը ցնցվեց: Գրիչայի ասածը հասկացավ, նաև զգաց նրա խոսքերի ճշմարտությունը: Այն միտքը, թե նա իր կյանքը պիտի կապի ատելի դարձած մի կնոջ հետ, սարսափեցրեց նրան: Այնուամենայնիվ նա ասաց հաստատ յեղանակով.

— Յերթե կամենում ես, յես կունենամ այդքան քաջություն:

Նա վճռեց մի խոշոր զոհաբերություն անել: Այնինչ, Գրիչան միայն փորձելու համար արավ իր կողմնակի առաջարկությունը: Իր քրոջ և Միքայելի պատմածներից նա այն համոզմունքն եր կազմել, վոր նրանք միմյանց չեն սիրել և միայն կուրացել են անզուսպ կրքերից: Նա գիտեր, վոր յեթե իր առաջարկությունն իրագործվի անգամ, վազ թե ուշ Անուշի պատիվը կրկնակի պիտի ցեխոտվի. Միքայելը չի կարող յերկար ժամանակ կենակցել նրա հետ, կթողնի չուտով, յերես կդարձնի:

— Հեռացի՛ր, ի սեր Աստծու, դո՛ւրս յեկ, յես չեմ կարողանում քեզ սառնարյուն տեսնել իմ տանը,—ասաց նա դրեթե չնչասպառ,—գլուխս պտտում է, աչքերս մթնում են: Պատրաստ եմ այս ձեռներով խեղդել քեզ էլ, նրան էլ, բայց ի՞նչ ոգուտ... Կորիք և ինչ ուզում եք արեք... դուք միմյանց արժանի յեք...

Յեվ, ամոթից կատաղած, գլուխը դրեց մի ձեռի վրա, մյուսով

ամուր բռնելով մազերն ու վիճակով: Այդ պահին նա ավելի իր քրոջն եր ատում, քան ընկերոջը:

Միքայելը քայլերն ուղղեց դեպի դռները, ձեռը ճակատին տեղմած, հենվելով աթոռներին: Այլևս չդիտեր ինչ ասեր, իսկ մնալն ավելորդ եր:

Ամբողջ մի ժամ նա կատաղի թափառում եր ծովափում հետ ու առաջ: Նա տակավին չդիտեր ինքն իրեն պարզ հաշիվ տալ իր արածի մասին: Մերթ կարծում եր, թե շատ լավ բան արավ, մերթ մտածում եր, թե իրեն սուորացրեց և սուորացրեց ամենայերևելական կերպով: Տեսնե՞ս բան է, վոր ապտակ ստացողը դնա ապտակ տվողի տունը և բացատրություն տա, փոխանակ պահանջելու: Յեվ ի՞նչպես նա հանդգնեց, մոռացավ ամոթ ու ինքնասիրություն և ներկայացավ այն մարդուն, վորի պատիվը վոտնատակ եր արել: Զվերադառնա՞լ, արդյոք, Գրիչայի մոտ և այս անգամ արդեն իրրև վրիժառու ներշնչե՞լ: Վո՛չ, վո՛չ. նա արավ այն, ինչ-վոր պարտավոր եր անել ամեն մի ազնվության վերջին կաթիլից վոչ զուրկ մարդ, նա կատարեց իր սրտի թելադրածը:

Տանջվելով վիրավորված ինքնասիրության զգացումից, միևնույն ժամանակ, զգում եր մի տեսակ հոգեկան թեթևություն, վոր չկար մի քանի ժամ առաջ: Հայհոյելով ինքն իրեն, միևնույն ժամանակ հավատացնում եր, թե ուրիշ կերպ չեր կարող անել, թե ընկերը ճիշտ այնպես պիտի վարվեր մի ընկերոջ վերաբերմամբ, վորին անգթաբար անպատվել եր:

— Դեպի տո՛ւն,—հրամայեց նա կառապանին:

Այլևս ծանր վիշտը բավական փարատվել եր, մնում եր հանցանքի գիտակցությունը: Այլևս դառնության հետ զգում եր նաև մի անխոնջելի հոգեկան հաճույք: Նա ուրախ եր, վոր Գրիչան կրկնակի վիրավորեց իրեն, վռնդելով իր տնից: Արդյոք, նա ինքն ավելի կոշտ չե՞ր վարվել, յեթե Գրիչայի տեղը լիներ: Նա այժմ զգում եր մի բան, վոր յերբեք չեր զգացել, այն, վոր վիրավորվածի դրությունն ավելի հաճելի յե, քան վիրավորողինը: Քանի իրեն անպատճան մեղավոր եր համարում Գրիչայի առջև, տանջվում եր հոգով անպատճան, այժմ, յերբ Գրիչան վրեժ եր առել նրանից և ինքը, փոխադարձ վրեժ առնելու տեղ, ներում եր խնդրել — այժմ թվում եր նրան, վոր խիղճը համեմատաբար հանգիստ է: Լավ եր, վոր զսպեց իրեն, խոնարհվեց, չհետևելով ընկերների խորհրդին: Նա կատարեց վոչ այն, ինչ-վոր պահանջում եր կեղծ ինքնասիրությունը, այլ այն, ինչ-վոր պահանջում եյին անկեղծ զգացմունքները: Նա յենթարկվեց այն ներքին դատավորի վճռին, վորի մասին խոսում եր Սմբատը: Այժմ թող բոլորը ծաղրեն նրան, միևնույնն է:

— Արյո՞ւն է,—հարցրեց նա սպասավորին յեղբոր մասին:

— Հենց հիմա յեկավ տուն:

Նա անցավ Սմբատի սենյակը և անմիջապես պատմեց բոլորը: Ցեվ ավազ յեղբոր մշտապես մռայլ դեմքի վրա նկատվեց մի յերկարատև հաճելի ժպիտ: Ժպիտ, վոր յեղբայրական սիրո հետ արտահայտում եր նաև հույս, թե դեռ բոլորը կորած չե, թե դեռ Միքայելը կարող ե ուղիղ ճանապարհի դալ:

— Այդ կնշանակե, վոր քո սրտում դեռ կա չմեչացած անկյուն,— ասաց Սմբատը:—Այժմ ասա, դո՞ւմ ես, վոր խղճիդ խայթոցը գոնե մի փոքր մեղմացել ե:

— Այո՛, մի փոքը...

— Այդ առաջին քայլն ե, պատրաստվիր ավելի առաջ գնալու: Հայտնի բան ե, ներում խնդրելով, դու չեյիր կարող ընկերոջդ վերքը բուժել և արածդ ջնջել, բայց ավելի լավ ե աշխատել կատարած մեղքդ քավելու, քան նոր մեղքեր դործել:

— Ցես ավելի մեղքեր ունիմ, քան դու կարծում ես...

— Ավելի լավ, մխանդամից կքավես:

— Ցես ուզում եմ նրանցից մեկը հենց այժմ խոստովանել քեզ, վորովհետև քեզ ե վերաբերվում:

— Ի՞նձ:

— Այո՛:

Նա պատմեց իր ընդհարումը Մարութխանյանի հետ և խոստովանեց, վոր կոնտր-կտակը խարդախ ե: Կարծես, այժմ նրա համար վոչինչ բան եր՝ պարզել իր հոդուց բոլոր կեղտերը: Նա նմանվում եր դատապարտյալին, վոր մի անդամ բերանից թոցնելով մի խոստովանք, այլևս չի կարողանում թաղցնել մյուս բոլոր հանցանքները և դլխիվայր գլորվում և անդունդ: Զե՞ վոր միևնույնն ե, պիտի կրի իր պատիժը, թող գոնե սիրտը թեթևացնի:

— Ցես լավ դիտեյի, վոր այդ կտակը խարդախ ե,—ասաց Սմբատը, ներողամտաբար ժպտալով,—չատ ուրախ եմ, վոր այդպես պատահեց: Դու ինքդ քեզ ազատեցիր վտանգից:

Հետևյալ որը Միքայելը կանուխ առավոտյան մոտավ դարձյալ Սմբատի սենյակը և խնդրեց վորևե գործ հանձնել իրեն: Անգործությունն այժմ նրան թվում եր և՛ ձանձրալի, և՛ ամոթալի: Սմբատն ասաց, թե բոլոր գործերը հավասար պահանջում են յերեք յեղբայրներին և թե Միքայելը կարող ե ընտրել, վորը կամենում ե: Միքայելը ցանկություն հայտնեց նրա փոխարեն հետևել հանքային գործերին:

— Շատ լավ,—ասաց Սմբատը, խոր-խոր նայելով նրա աչքերին,— ինչպես կամենում ես... Ցես այսուհետև հանքերը չեմ գնալ, բայց դու ինձ հաշիվ կտաս...

Միքայելին թվաց, թե «հաշիվ կտաս» բառերը յեղբայրն արտասանեց խորհրդավոր և յերկդիմի յեղանակով:

Այդ որից նա յեր այցելում հանքերը:

Մինչ նա աշխատում եր աշխատանքի մեջ մոռանալ վշտերը, հասարակական կարծիքը գործում եր անդուլ նրա բարոյական հուչակի վերաբերմամբ:

Վիրավորական ընդունելություն Իսահակ Մարութխանյանի սրտում գրգռել եր բնական չարությունը: Նա կամենում եր Միքայելին ոգնել, ազատել նրան յեղբոր անտանելի հովանավորությունից, գարձնել ինքնագլուխ, և հանկարծ, այդ մարդը, չնորհակալ լինելու փոխարեն, վռնդո՞ւմ ե իր տնից նրան, այն էլ քրոջ հետ: Ուրեմն Մարութխանյանը հավիտյան պիտի հույսը կորի՞ մյուսներից: Վո՛չ. այդքան էլ հեշտ չե նրան գրկելը: Նա չի թողնիլ Ալիմյաններին մենակ վայելելու Մարկոս աղայի հարստությունը:

Հետևյալ որը նա կանչեց իր մոտ Բարսեղին և հայտնեց, թե նրա աշխատանքը զուր ե անցել: Ցույց տալով կոնտր-կտակը, աչքերի առջև պատռեց և գցեց վառարան: Բարսեղը դեմքը թթվեցրեց: Կարծես թե Մարութխանյանը գործը հաչա կերպով վերջացրել ե, իր քաժինն առացել և այժմ ուրիշի ոգնությանը կարոտ չե: Նա պահանջեց իր աշխատանքի վարձը:

— Ի՞նչ,— գոչեց Մարութխանյանը ծաղրարար,— աշխատանքի վա՞րձ: Ի՞նչ աշխատանքի. խարդախությո՞ւն: Զե՞ս կամենում, արդյոք, բանտի համը տեսնել, հը՞մ... Դու կարծում եյիր, իսակ Մարութխանովն այնքան հիմար ե, վոր իր կաչին կղնի գատավորների ճիպոտի տակ: Ներողություն, յես քեզ եյի փորձում, թե չե, այդ խարդախ կտակով յես վոչինչ չեյի կարող անել... Լսի՛ր. թե բերանդ այդ կտակի մասին ուրիշների մոտ բաց անես, պղերս ցույց կտամ, ճանաչո՞ւմ ես ինձ...

— Ճանաչում եմ,—արտասանեց Բարսեղը խորհրդավոր,—Բարսեղը ցավդ առնի, մի՛ չարանար: Մենք խոսքիդ հավատում ենք, մեր ազնիվ իշխանն ես... ամմա դե Մուխան անիծվածի բերանն էլ պիտի կապել...

— Այդ ճշմարիտ ե...

Մարութխանյանը ծոցի դրպանից հանեց մի քանի հարյուրանոցներ և տվեց Բարսեղին:

— Տե՛ս, կեսը դրպանդ չղնես, յես քեզ ուրիշ վարձ կտամ, ելի ինչքան չլինի մեր հարամզադա Բարսեղն ես...

Ակնավաճառի աչքերն ուրախություն պսպղացին: Նա լռեց:

Մարութխանյանը, յերկու բաժակ թեյ պահանջելով, սկսեց նրա հետ խոսել բարեկամաբար: Նախ՝ հարցրեց քաղաքի նորություններից

մասին, լսեց, ապա, դեմքին ցավակցական արտահայտություն տալով, ակնարկեց Գրիշայի Միքայելին տված ապտակի մասին: Այնուհետև անփույթ յեղանակով շոշափեց ապտակի չարժառիթը, իսկ հետո աքղեն պատմեց բոլորը:

— Բայց մեր մեջ մնա, դիտե՞ս,—ավելացրեց նա, թեյը դղալով խառնելով և նայելով բաժակի հատակին:

Նա շատ լավ էր ճանաչում Բարսեղին: Բարսեղն էլ շատ ճիշտ ըմբռնեց նրա միտքը:

Հենց նույն որն ակնավաճառը գաղտնիքը հաղորդեց Մելքոն Ալրումյանին: Նրա մոտացած խանութը դարձավ գրավիչ անկյուն, իսկ ինքը՝ հետաքրքրական անձ: Ցեկոզին պատմում էր բոլորը, ինչ վոր գիտեր, իսկ չիմացածը, հարկավ, հնարում էր: Նա դեռ էր արդեն այն բանում, վոր Պապաշայի պես մի պատկառելի անձնավորություն կատակներ էր անում իր հետ տիկին Ղուլամյանի բեղիների վերաբերմամբ: Նա ինքը չարացած էր Միքայելի դեմ այն ժամից, յերբ նույնպես վռնդվեց նրա տնից:

Լուրը չուտով ընկերական շրջանից անցավ ամբոխի բերանը: Ցեկ վորովհետև Միքայելը Մարզպետատունուն ևս վատ էր ընդունել, ուստի թղթակիցն էլ իր հոդվածի մեջ թույլ տվեց քանի մի խիստ թափանցիկ ակնարկներ նրա վերաբերմամբ:

Պետրոս Ղուլամյանը զարձավ պարզ արհամարհանքի և յերկդիմի ակնարկների նշանակ: Իսկապես նա այժմ սկսեց զգալ խարված ամուսնու ծանր դրությունը: Ամոթից նա չէր վստահանում Պապաշայի յերեսին նայել փողոցում: Իսկ Պապաշան, վոր այդ տեսակ ամուսինների հոգեբանությունն այնքան լավ գիտեր, վորքան ազգային դործերը, խղճում էր նրան և չէր խոսում հետը:

Ցերեկն ծաղրն այնքան պարզ էր, վոր Պետրոսը պատրաստ էր հարձակվել սրա ու նրա վրա, վիրավորված վարազի պես: Այսպես, որինակ՝ մի յերեկո խանութում, դրամարկղի փողերը դործակատարից ընդունելիս, դռների առջև տեսավ յերկու ծանոթ դեմքեր: Մեկը Մովսեսն էր, մյուսը՝ Քյազիմ-բեկը: Մովսեսը բութ մատները մտցրել էր ականջները, իսկ ցուցամատները յեղջյուրների ձևով վերև բարձրացրել: Քյազիմ-բեկը, բեղերը սրելով, հըռ-հըռ ծիծաղում էր: Նրանք մի քիչ հարբած էլին, նոր էլին ավարտել մի ճաշկերույթ, վոր Պապաշան տվել էր ի պատիվ մի նորեկ անդլիացի թղթակցի:

Պետրոսը դուշակեց նրանց վիրավորական ակնարկը, դուրս թռավ դրամարկղի հետևից և կանդնեց խանութի շեմքում:

— Մենք Միխայել Ալիմովին ենք փնտռում, այստեղ չէ՞,—հարցրեց Մովսեսը սառնասրտաբար:

— Ջեսթ խմեյո՛ւ կլաևիցա՛,—ավելացրեց Քյազիմ-բեկը, կոլորակ դդակը բարձրացնելով:

— Շառլատաննե՛ր,—դոչեց Պետրոսը կատաղած և ուզեց ձեռներով խեղդել Մովսեսին:

Մովսեսն չատպով առավ Քյազիմ-բեկի թևը, և խանութից հեռացան:

Հարկավ, այս բոլորից հետո, այլևս անհարմար եր դավաճան կնոջ հետ մի հարկի տակ ապրելը: Պետրոսն Անուշին վռնդեց իր տնից, կանխապես մի քանի բռունցքներ տալով նրա հատուկ ուսերին: Սակայն այդքանը բավական չեր: Նա պիտեր, վոր հատարակություն պահանջում է՝ պատժել նաև իր կնոջ մոլորեցնողին. յեթե չպատժի, բոլորն էլ իրեն համարելու յեն վախկոտ, աննամուս: Գրիշայի ապտակը նա շատ քիչ եր համարում: Ի՞նչ է մի ապտակը մի տղամարդի համար. պետք է պատժել զղալի կերպով: Բայց ի՞նչպես — ահա խնդիրը: Մանկությունից սովորել եր միշտ դլուխ թնդել, միշտ խոնարհվել, միշտ չողոքորթել և ջնդել իրենից հարուստներին ու զորավորներին. նրա մեջ արմատացել եր որդանական յերկյուղ զեպի Ալիմյանները: Ի՞նչպես ձեռ բարձրացներ Միքայել Ալիմյանի վրա, վորին նա բարձր եր համարում իրենից այնքան, վորքան ռուբլին կոպեկից:

Բայց Պետրոսը շատ էլ զուրկ չեր հնարագիտությունից: Մի անդամ, խանութից ուսն վերադառնալիս, փողոցի մթության մեջ հանդիպեց մի ծանոթ թուրքի: Ջուխայի աջ փեշը ձախ կռնատակին բռնած, թուրքը դողդողի մոտեցավ, բարևեց և հարցրեց «աղայի առողջության» մասին: Պետրոսը հասկացավ, վոր սրիկան ծախի փող չունի: Գրպանից հանեց յերեք ռուբլի՝ սովորական ուրքը տալու, և այդ պահին մի հրաշալի միտք լուսավորեց նրա ուղեղը:

— Ուզո՞ւմ ես փող աշխատել,—հարցրեց թուրքին չշնչյունով:

— Ծառաղ եմ,—արտասանեց թուրքը խորհրդավոր:

— Գնա՛նք···

— Հրամայի՛ր···

Պետրոսը քայլեց առաջ. թուրքը հետ մնաց: Մի քիչ կանդնելով, վոր «աղան» հեռանա, նա զողնովի քայլ առ քայլ հետևեց նրան, աչքերը հածելով···

Իսկ խայտառակված Անուշը, արտասուքն աչքերին, վազեց մոր գլխին: Ուրիշ ո՞ւր պիտի գնար: Հասարակական բանբասանքը, ոդի պես ամենուրեք թափանցելով, հասել եր պառավ մոր ականջին արդեն, առանց Գրիշայի գիտակցության: Մայրն անիծեց աղջկան, բայց փողոց վռնդելու չափ խստություն չունեցավ: Դա թեև նահապետական մի կին եր, բայց կյանքի ձմրանը շատ եր լսել ժամանակակից կանանց ոավաճանությունների մասին: Սեփական դստեր արարքը վիրավորեց

լոկ նրա մայրական զգացումը, առանց ազդելու կանացի ամոթխածութ-
յան վրա: Այժմ ո՞վ էի դավաճանում իր մարդուն, միայն ինչո՞ւ նրա
աղջիկն էլ մոլորվեց:

Դառն կշտամբանքի ժամանակ Գրիշան ասաց քրոջը մի քանի կոպիտ
խոսքեր: Անուշն այնքան խեղճացել էր, որ արտասուքն աչքերին ա-
ղերսեց յեղբորը խնայել իրեն և շատ էլ խիստ չվարվել հետը:

— Ի՞նչպես խնայեմ, յերբ միայն ինքնասպանութ յունը կարող է
քեզ ազատել իմ զզվանքից,—ասաց Գրիշան:

Ինքնասպանութ յո՞ւն,—վո՛չ, Անուշը չէր կարող կյանքից բաժան-
վել, «իրավունք չունի», յերեխաների տեր է: Ցեվ վերջապես, ինչո՞ւ
ինքնասպանութ յուն գործել: Նրա համար, որ մեկի հետ դավաճանել
և ամուսնուն: Տե՛ր Աստված, վո՞ր կինն այժմ կարող է իրեն արդար
համարել ամուսնական առագաստի առջև:

Նա թադուն Միքայելին ուղարկեց մի ընդարձակ նամակ: Նկարա-
գրելով իր անել վիճակը, մերթ նախատում էր, մերթ աղերսում ոգնել
իրեն այս կամ այն կերպ: Ապրելի կենակցութ յան մասին այլևս չէր
վճռահանում խոսել, հաստատ համոզված լինելով, որ Միքայելը չի
համաձայնվիլ այդ քայլն անել, հասարակական խայտառակութ յունից
հետո:

Նամակն ազդեց Միքայելի վրա, բայց առանց վորևէ հետևանքի
մնաց: Ցեվ ի՞նչ կարող էր անել նա, ինչո՞վ ոգնել, յե՞րբ, բացի խղճի
խայթոցից, վոչինչ չէր ղգում այդ կնոջ վերաբերմամբ:

Այժմ նա փախչում էր ընկերներից, վորոնում էր առանձնութ յուն:
Քաղաքային մթնոլորտը թվում էր նրան խեղդիչ, հուսահատական:
Անիծում էր իր չվայտ անցյալը և ղգում իրեն անբարոյականութ յան
տիղմի մեջ մինչև կոկորդը թաղված:

Ժամանակն սկսեց հետզհետե մեղմացնել հասարակական բամբա-
սանքի ուժը, և Ալիմյան ու Ղուլամյան ազդանուններն առաջվա պես
չէին անցնում բերանից-բերան: Գործնական քաղաքը ժամանակ չու-
ներ շատ էլ յերկար զբաղվելու ընտանեկան դրամաներով: Բացի դրա-
նից, առաջ յեկան ուրիշ ավելի հետաքրքրական դեպքեր: Այժմ քաղա-
քը խոսում էր մի հայտնի առևտրականի ինքնասպանութ յան չարժա-
ռիթի մասին: Հիվում էին ինքնասպանի կնոջ և յերիտասարդ գոր-
ծակատարի անունները...

IV

Հոգեկան սաստիկ խռովմունքի միջոցներին Սմբատն զգում էր
պահանջ վորևէ կերպ սիրտը թեթևացնելու: Ընկերութ յուն էր փընտ-
ռում, և այն չրջանը, ուր վիճակված էր պտտել իր դիրքի չնորհիվ,
չէր գոհացնում նրան:

Մինչև այժմ նա, ամփոփված ինքն իր մեջ, ապրել էր ներքին աշ-
խարհում: Վոչ վոք չէր անհանգստացնում նրան, չէր զիպչում նրա սրտի
դաղտնի վերքերին: Ռուսիայից վերադառնալով, նա ընկավ մի չրջան,
ուր նրան չէին խնայում, չէին ներում նրա անուղղելի սխալը: Մոր
ու քրոջ անվերջ բողոքները խոցոտում էին նրա սիրտը և զրգռում
այն կծու զգացումները, վոր նա արվեստական կերպով թմրեցրել էր
իր մեջ վեց-յոթ տարի շարունակ:

Ջուններ մտերիմ ընկեր, վորին վստահաբար հաղորդել իր ցավերը
և թեթևացներ իր հոգին: Նա պարզ տեսնում էր, վոր իր հրապուրը
մարդկանց աչքում պարունակվում է մեծ մասամբ հարստութ յան մեջ.
աղքեն չրջանն այսպես էր: Տեսնում էր, վոր նույնիսկ այն մարդիկ,
վորոնք բարձրաձայն գոռում են բարոյականի մասին, սակայնաբար խո-
նարհվում են անբարոյականի առջև, յերբ մեջտեղ նյութական շահ են
գոհունակ: Այս էր, վոր ստիպում էր նրան փախչել մարդկանցից, վո-
րոնելով մի մտերիմ ընկերութ յուն:

Փորձում էր գործերի մեջ գտնել դեթ ժամանակավոր մոռացում,
բայց միտքն զբաղվում էր, վիրավոր զգացումները հաղուրդ չէին
տանում: Միայն մի գործ կար, վոր նրան պատճառում էր հոգեկան
հաճույք և մի փոքրիկ չրջան, ուր նրա սիրտը դգում էր քիչ շատ թե-
թևութ յուն: Դա մշակների համար նոր բնակարանների կառուցումն
էր և Զարդարյանների ընտանիքը, ուր նա լինում էր ամեն անգամ
հանքերն այցելելիս: Ուրախ էր իր ձեռնարկութ յանը, և այժմ թվում
էր նրան, վոր յերեք չհոդար բանվորների մասին, իր սրտի վրա պիտի
նել էր Միքայելին, չարաթը յերկու-յերեք անգամ լինքն էլ նստում էր
առաջին պատահած կառքը և ուղևորվում այնտեղ:

Նա չէր ուզում լինքն իրեն խոստովանվել, թե վո՛րն է իսկապես
այն մադնիսական ուժը, վոր այսպես հաճախ տանում և իրեն դեպի
հանքերը: Նա խաբում էր իրեն, հավատացնելով, թե արդարև, մշակ-
ների ոնտահական վիճակն իրեն այդչափ հետաքրքրում է: Դիտելով
նոր կառուցվող կացարանները կես ժամ, մի ժամ, չտապում էր այ-
ցելել Զարդարյաններին և այնտեղ մնում էր ժամերով:

Աղքատիկ ընտանիքն ընդունում էր նրան վոչ իբրև իր տիրոջ կամ
մի հարուստ հանքատիրոջ, այլ իբրև բարեկամի: Վոչ վոք չէր նեղ-
վում նրա ներկայութ յամբ, վոչ վոքի չէին ճանձրացնում նրա հա-
ճախակի այցերը, նույնիսկ անդամալույծին: Իսկ նա... Նա սիրում
էր զրուցել Դավիթ Զարդարյանի հետ և վոչ միայն իր գործերի, այլև
հասարակական յերևույթների մասին: Այդ զրույցների ժամանակ նրա
հայացքն ակամա կանգ էր առնում Շուշանիկի վրա: Որիորդը, անբա-
ժան չալն ուսերին ձգած, գլուխը թեթևակի ուսերին թեքած, ուշադիր

Շիրվանզադե VII—13

լսում էր իր հորեղբոր և հյուրի տաք վիճաբանությունները: Ցերեկն նա վոգեւորվում էր, մոռանում ինքն իրեն և խոսակցությունը յերկարացնում ավելի, քան պահանջում էր քաղաքավարությունը: Պատահում էր, վոր նրա հետ վիճում էր Շուշանիկը, յերբ խոսակցությունը վերաբերում էր որիորդի մտքին մատչելի խնդիրներին: Այդ միջոցներին Սմբատի ճակատի կնճիռները բացվում էյին, դեմքը պայծառանում էր, աչքերն արտահայտում էյին խորին հոգեկան հաճույք:

Հետանալով աղքատիկ բնակարանից, շատ անգամ ճանապարհին ընկղմվում էր մտքերի հարածուփ ովկիանոսի մեջ: Մերթ տխրում էր, մերթ ուրախանում մտքում, մտաբերելով Շուշանիկին, վոր որ–որի վրա պառնում էր լռիկ, մեղամաղձոտ: Տխրում էր, հիշելով իր անուղղելի սխալը, հիշելով իր սիրեցյալ զավակներին: Ուրախանում էր, զգալով այն տպավորությունը, վոր գործում է ինքը Շուշանիկի վրա: Բայց զգում էր, միևնույն ժամանակ, վոր իրավունք չունի այդ տկար էյակի խուլ արտահայտած համակրանքի վրա: Ձիստեր, վոր իր հաճախակի այցերն որ–որի վրա զորացնում են այդ համակրանքը. նա կարդում էր որիորդի հոգու յելևէջները՝ նրա պարզ դեմքի վրա և հետզհետե մոռացվող աչքերի մեջ: Ահա ինչու իրեն պարտավոր համարեց դադարել այցելելու Զարդարյաններին: Սակայն իսուր. ամեն անգամ հանքերը զալիս, անհաղթելի ուժից մղվում էր դեպի աղքատիկ բնակարանը:

Մի անգամ նա քաղաքից ուղևորվեց Միքայելի հետ: Ճանապարհին խոսում էր գործերի մասին, դանդաղում էր կառավարիչ՝ ինժեներ Սուլյանի դեմ, վոր իր պաշտոնին վերաբերվում էր անտարբեր, միշտ զբաղված սեփական գործերով:

— Եհ, յերեխ չես հավանում, ինչո՞ւ չես արձակում,—հարցրեց Միքայելը:

— Ինձ համար ավելի հեշտ և մի ծառայողի տված վնասներին դիմանալ, քան զրկել նրան պաշտոնից:

Հետո խոսեցին Դավիթ Զարդարյանի մասին: Սմբատը գովեց նրա անձնվիրությունը, սերը դեպի գործը, անշահասիրությունը և մտավոր զարգացումը:

— Իսկ ինչ կասես նրա յեղբոր աղջկա մասին,—հարցրեց հանկարծ Միքայելը:

Սմբատը նեղն ընկավ. ինչ կապ ուներ Շուշանիկը խոսակցության նյութի հետ և ինչո՞ւ յե Միքայելն այդպես խորը նայում նրա յերեսին:

— Ձես հարցնում եմ քո կարծիքը նրա մասին, վորովհետև նա ինքը... համակրում է քեզ,—արտասանեց Միքայելը, և նրա ձայնի մեջ զգացվեց անդոպելի դառնություն:

Սմբատը, չփոթված, յերեսը դարձրեց յեղբորից և հայացքը հառեց դեպի հեռավոր դաշտերը:

— Դու չփոթվո՛ւմ ես, յերևի, ինքդ էլ զգում ես, վոր նա քեզ համակրում է, և ով գիտե, գուցե դու յել անտարբեր չես...

— Մեխա՛կ, դու գիտես, վոր յես հիմար կատակներ չեմ սիրում...

— Բայց ճշմարտախոսություն սիրում ես, չե՞: Դու կարծում ես, վոր յես դե՞մ կլինեմ, յերթե սիրես անգամ այդ աղջկան: Վո՛չ, յես միայն քո ճաշակը չեմ գովիլ, ուրիշ վոչինչ...

— Մի՞թե,—արտասանեց Սմբատն անորոշ:

— Նա ինքնահավան է և գոռոզ:

— Գուցե,—զարձյալ անորոշ արտասանեց Սմբատը:

— Նա գեղեցիկ չե և վոչ սիրուն կամ համակրելի:

— Կարծեմ յես չգովեցի նրա գեղեցկությունը:

Միքայելն սկսեց չվացնել ինչ–վոր ուրախ յեղանակ, վոր բոլոր չեր համապատասխանում նրա հուզված տրամադրությանը: Նույն պահին Սմբատի մեջ հզացավ մի վատ զգացում. նա նախանձեց յեղբորը, վոր ամուրի յեր և ազատ: Սակայն չտապեց զսպել անախորժ զգացումը, հիշելով իր զավակներին:

— Սմբա՛տ,—ընդհատեց լռությունը Միքայելը, յերկու ձեռով ամուր հենվելով ձեռափայտին,—յես զգում եմ, վոր դու ինձանից բոլոր դյուցազներից բարձր ես, վոր յես քո աչքում մի ընկած և փչացած մարդ եմ, բայց, ասա խնդրեմ, յերբ պիտի արժանանամ քո վստահությանը գոնե տնտեսական գործերում:

Հարցը Սմբատի համար անսպասելի յեր: Զգուշացավ, թե Միքայելի, ըստ յերևույթին, անկասկած խոսքերն ունեին նրա հոգու մեջ կապ և թե այդ տարորինակ հարցերը նրա մտախոհության փղձուկներն են:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Այն, վոր դու ինձ հավատ չես ընծայում: Դու հանքերի պրոծերն ինձ ես հանձնել, իսկ ինքդ չարաչքը յերկու–յերեք անգամ գալիս ես: Կարծես, յես ընդունակ չեմ հանքերը կառավարելու կամ գոնե Սուլյանի գործունեությունն ստուգելու: Ինչո՞ւ համար ես ինձ նրա աչքում ծաղրելի դարձնում:

— Ցերեկ չես ուզում, այսուհետև չեմ այցելի հանքերը...

— Ցերկուսից մեկը, կամ յես, կամ դու,—արտասանեց Միքայելը յելը յերկդիմի և խորհրդավոր նայեց յեղբոր յերեսին:

Մի ժամ անցած, հանքերը գլխեցուց հետո, Սմբատը դարձավ Զարդարյանին.

— Դավիթ, հյուրասիրի՛ր ինձ այսոր վերջին, անգամ թեյով...

Առանձին սենյակում, սպիտակ սփռոցով ծածկված սեղանի վրա յեռում էր վայրկյան սամովարը, յերբ Սվիմյան յեղբայրները նստ մտան:

Հրավիրելով Սմբատին, Դավիթը, հարկավ, չեր կարող չհրավիրել

և՛ Մխքայելին: Այնինչ, հոգով դեմ եր, վոր այդ մարդը վոտ դնի իր տունը: Ծայտառակ լուրը լսելու որից, նա ղգում եր դեպի Մխքայելն անհաղթելի նողկանք: Նա հրավիրեց և՛ Սուլյանին, նույնպես հակառակ ցանկության, վորովհետև կառավարչի հետ հարաբերությունը լարված եր: Բանն այն եր, վոր Սուլյանի համար վերին աստիճանի անհաճո յեր Զարզարյանի հանքերում լինելը: Մինչև այժմ նա դործում եր ինքնագլուխ, ծախսում եր ինչպես կամենում եր, կարգադրում և հաշիվներ կազմում ուզածին պես: Այժմ իր դլխի վրա զգում եր մի վերահսկող, վորի կողմից վիտակության նրան չվոթեցնում եր:

Շուշանիկը, մաքուր հագնված, սեղանի քով սրբում եր թեյի բաժակները: Տեսնելով Մխքայելին, ակամա ցնցվեց այնպես, վոր քիչ եր մնում բաժակը ձեռից դցե: Սեղմելով շրթունքները, ճիդ արավ թագցնել դժկամակության:

Այսոր առաջին անդամն եր Մխքայելը նրան տեսնում մխքիչ նորաձև կարված հագուստում: Թանձր մազերը խնամքով սանրված եյին ու ծոծրակի վրա փնջված, և հերկաները հազիվ կարողանում եյին պահել խոշոր հյուսքը: Նա թվաց այսոր Մխքայելին հասակով ավելի բարձր, ավելի նազելի: Նրա ամբողջ եյությունից բուրում եր թովիչ կանացիությունը՝ մայիսյան անուշ հովի պես: Նույնիսկ ձևերը փոխվել եյին, ավելի սահուն դարձել և ավելի նրբացել: Կարծես, այդ համեստ ու ամոթխած աղջկա մեջ զարթնել եր մի նոր վոգի, վորի չողերը տարածվել եյին շուրջը և նրա ամբողջ կերպարանքն ամփոփել իրենց մեջ:

Յերբեք Մխքայելը չեր կարող յերևակայել, թե մի հասարակ աղքատ աղջկա առջև յերբևե սիրտ չվոթվի այնպես, ինչպես այսոր: Յեվ պատճառները կային չվոթվելու: Նա մեղավոր եր այդ աղջկա մոտ — մեկ. Նա խայտառակված եր ամբողջ քաղաքում — յերկու. Նա վախենում եր Շուշանիկի արհամարհանքից — ահա գլխավորը: Զգաց մինչև անդամ մի տեսակ սարսափ, յերբ մի վայրկյան աչքերը՝ հանդիպեցին խելացի ու սիրուն աչքերին, վորոնց մեջ այլևս առաջվա չափ պայծառություն չեր յերևում:

Ծոսակցությունը զարձյալ դործերի մասին եր. սկսվել եր դրսում, այժմ շարունակվում եր նույն յեղանակով: Նոր կացարանների չինության մեջ Սմբատը նկատել եր թերություն, վոր Սուլյանի անտեղի խնայողության հետևանք եր: Նա հանդիմանում եր կառավարչին մեղմաբար, բայց հուզված եր, և յերբեմն ձայնի մեջ հնչում եր բարկություն: Պարզ եր, վոր Սուլյանը չեր նրա դժկամակության բուն պատճառը: Ինժեներն արդարացնում եր իրեն, ասելով, թե միշտ սովոր և խնայել Ալիմյանների միջոցները, անտեղի ծախսերից խուսափել և հենց այս պատճառով միշտ սիրելի յե յեղել հանգուցյալ Մարկոս աղայի աչքում:

Նրա կեղծիքը դյուր չեկավ Մխքայելին, վոր գիտեր, թե վորքան խիստ Սուլյանը խնայում է ֆիրմայի չահերը:

— Ի սեր Աստծու, մի՛ խնայեք մեր միջոցները, յեթե գործը չի պահանջում խնայել,—ասաց Մխքայելը,—յես գիտեմ, որինակ, վոր շատ անգամ, կոպեկների հետևից ընկնելով, ռուբլիներ եք կորցնում:

Այս թեթև նկատողությունը խոր աղդեցություն ունեցավ Սուլյանի վոչ այնքան դյուրագրգիռ սրտի վրա: Ներան թվաց, թե մեջտեղ խառն է Դավիթ Զարզարյանի մատը:

— Վոչ վոք չի կարող իմ ներկայությամբ ասել, թե յես յերբևե կորցրել եմ Ալիմյանների ռուբլիները,—արտասանեց նա սրամտությամբ, մի կողմնակի թունավոր հայացք ձգելով Դավթի վրա:

— Մի՞թե,—ասաց Մխքայելն անորոշ,—թողնենք այդ: Ասացեք խնդրեմ, պարոն Սուլյան, վերջին սպեկուլացիայից ի՞նչքան չահվեցաք:

Սուլյանն չտապեց իրեն զսպել և ժպտաց:

— Յես սպեկուլացիայով չեմ պարապում:

— Ձուր եք թագցնում,—չէչտեց Մխքայելը կծու յեղանակով,— ձեր ձեռքից խլող չի լինիլ, մի՛ վախենաք: Գնել եք վեց ու քառորդով, վաճառել յոթ ու քառորդով: Զարզարյա՛ն, հաշվեցեք, վորքա՞ն է ամեն մի հարյուր հազար փթի վրա:

— Ուղիղ հինդ հազար ռուբլի,—պատասխանեց Զարզարյանն անմիջապես, վոչ առանց չարախնդության:

— Ուրախ եմ, շատ ուրախ եմ,—դարձավ Մխքայելն ինժեներին,— դոնե այսուհետև իղեալիստների մոտ բուրժուաներին քիչ կհայհոյեք:

— Յես բուրժուաներին չեմ հայհոյում, իսկ իղեալիստ բարեկամներ չունիմ:

— Ուրեմն տարօրինակ է, շատ տարօրինակ,—նկատեց Մխքայելը դրգռված,—վոր մարդիկ իղեալիստ են, քանի վոր սոված են: Իսկ յերբ ճանաչում են փողի համը, մեղանից մի քայլ ել առաջ են գնում և ելի մեզ են ծաղրում:

— Ձեմ հասկանում, ինչո՞ւ համար եք դուք այդ ասում, Մխխայել Մարկիչ,—հարցրեց Սուլյանը, տակավին ժպտալով:

— Ինչո՞ւ համար... Հենց այնպես... Մի՞թե սուտ է, վոր դուք բարձրագույն ուսում ստացածները անում եք թագուն այն, ինչ-վոր մենք տգետներս անում ենք համարձակ, առանց քաշվելու:

Բոլորը զարմացած նայում եյին Մխքայելին: Վոչ վոք չգիտեր, ինչու նա այդպես անսպասելի և անտեղի հարձակվում է ինժեների վրա: Մինչդեռ պատճառը պարզ եր, թեև շատ նուրբ: Հարձակվելով բարձրագույն ուսում ստացածների վրա, նա կողմնակի կերպով ուղում եր որիորդի ներկայությամբ ցույց տալ իր արհամարհանքը պեպի

այդ մարդիկ: Կար նրա հարճակման մեջ և մի նուրբ ասեղ, ուղղված դեպի հարազատ յեղբայրը, վոր այդ պահին, նրա աչքում, կլանել եր Շուշանիկի բոլոր ուշադրությունը:

Նա զրկված եր վոչ միայն Սուլյանի, այլև բոլոր ներկա յեղողների դեմ: Նրան զրկում եյին նույնիսկ անգամալույծի մրմունջները, վոր մերթընդմերթ լսվում եյին մյուս սենյակից: Սակայն Սմբատի լռությունն սկսեց նրան չափազանց: Վճռեց զսպել իրեն: Զարգարյանն չտապեց խոսակցության նյութը փոխել: Պատմում եյին, վոր տեղացի մի հայտնի հանքատեր պատրաստվում է իր հանքերը հանձնել ինչ-վոր անգլիական ընկերության: Սուլյանը, մոռանալով Միքայելի կծու խոսքերը, սկսեց գործնական տեսակետից բացատրել, թե ներկա աջող պայմաններում մեծ սխալ է յերկրի հարստությունները ծախել ոտարներին, թեկուզ խոշոր գումարներով: Այստեղ նա յերևաց եր կռչման բարձրության վրա, ցույց տվեց իր բոլոր տնտեսական հոտառությունը, վոգևորված նկարագրեց նավթային արդյունաբերության փայլուն ապագան: Ցավ վոչ վոք չկարողացավ հերքել նրա մտքերը, վոչ նույնիսկ Սմբատը, վոր վիճում եր նրա հետ:

Ոգևորվել այդ վիճաբանությունից, Միքայելը, վոր արդեն բավական խաղաղվել եր, դարձավ որբորդին.

— Դուք իմ դեմ բարկացա՞ծ եք:

Որբորդը դլխով անորոշ շարժում ափաղ:

— Ցես պատրաստ եմ ներումն խնդրել,—չընկայ Միքայելը:

— Ելի թեյ ածե՞մ,—հարցրեց Շուշանիկը բարձր ձայնով, վոր ցույց եր տալիս, թե չի կամենում չընկյունով խոսել:

Այս բացարձակ արհամարհանքն արդեն բոլորովին կատաղեցրեց Միքայելին: Նա վոտքի կանգնեց, մոտեցավ լուսամուտին, աչքերը հառեց հեռավոր բուրդերին, մատների մեջ ցնցողաբար խաղացնելով ժամացույցի շղթան:

Մի քանի րոպե նա մտաղրաղ նայում եր: Ցերը յերեսը դարձրեց, արդեն Սուլյանը գնացել եր իր գործին, իսկ Զարդարյանը պատշգամբի վրա խոսում եր մի քանի մշակների հետ, ձեռին բռնած ինչ-վոր փոքրիկ նավթոտ առարկներ:

Վորքա՜ն փոփոխություն. այլևս Շուշանիկի դեմքի վրա չկար սառնություն: Նա ամբողջովին անձնատուր եր յեղել խոսակցության: Աչքերը փայլում եյին ներքին հաճույքից, ատեպ-ատեպ դլուխը հանդարտիկ ցած եր իջեցնում, թեթևակի կարմրելով, և մատներով խաղում սփռոցի ծոպերի հետ: Շրջապատող չոր ու ցամաք պրոզայի մեջ նրանք խոսում եյին այնպիսի նյութերի մասին, վոր միանգամայն չեյին ներդաշնակում սև հեղուկի անախորժ հոտով տոգորված մթնոլորտին:

Սմբատն արտահայտում եր իր սերը դեպի բնությունը, այնտեղ, ուր բնությունը վոչ մի հրապուրիչ բան չուներ:

Միքայելը փորձեց մասնակցել զրույցին, հակառակ տրամադրված դեպի յեղբայրը: Բայց խոսքն նկատեց Շուշանիկի դեմքի փոփոխությունը: Այդ այլևիկը չկարողացավ թաղցնել, վոր միայն Սմբատի հետ և իրեն հանգիստ զրուցել:

Ներս մտավ Զարդարյանը և Սմբատի առջև դրեց մի կաոր նավթախառն կավ: Դա նոր հորից հանված վերջին տիղմն եր, վոր Սուլյանն չտապել եր ուղարկել իր տիրոջը: Միքայելն անվստահ վերցրեց հումքը, հոտոտեց և ասաց.

— Ինձ թվում է, վոր շատրվան է բացվելու:

— Յերևի, քո բախտից,—ավելացրեց Սմբատը,—խոստացիր մի քան Դավթին, յեթե շատրվան լինի:

— Կարող ես նվիրել, ինչքան քեզիդ է, ինձ համար միևնույնն է,—ասաց Միքայելը վոչ առանց հեգնության:

Նա մոտեցավ որբորդին հրաժեշտ տալու:

— Սպասի՛ր, չե՞ վոր միասին պիտի գնանք,—ասաց Սմբատը:

— Ցես քաղաք չեմ գնում:

Ցավ, առանց բացատրություն տալու, չտապից դուրս:

Կար ժամանակ, յերբ մի վորևե կին նրան սառնություն կամ անտարբերություն եր ցույց տալիս, ինքն ել արհամարհանքով յերես եր դարձնում նրանից, վորպես մի ժամանակին նյութից, վորի մասին չարժե յերկար մտածել: Նայել եր կանանց, ինչպես հազուստներին. չեր դյուր յեկել հազուստը կամ չեր սազել, իսկույն ձգել եր մի կողմ և նորը ձեռք բերել: Այսոր կյանքում առաջին անգամ զգաց իրեն վիրավորված և ստորացած մի կնոջ արհամարհանքից: Նա կատաղում եր Շուշանիկի վրա և անիծում ինքն իրեն, վոր այնքան ուշադիր եր դեպի նրա սառնությունը:

Դուրս գալով Զարդարյանների տնից, նա վոտով անցավ սև բուրդերի միջով և մտավ մեծ ճանապարհը: Կես ժամ անցած կանգ առավ մի յերկարյա շինության առջև, վոր կառուցված եր լայն ճանապարհի յեզրին: Այդ շինությունը պատկանում եր նրա հեռավոր ազգականներից մեկին, մի անկյան հանքատերի, վոր ինքն անձամբ կառավարում եր հանքերը: Թանձր շոգու միջից հայտնվեց ալեխառն մորուքով ու մրուտ դեմքով մի նիհար մարդ՝ հագին կաշվե բանկոն և գլխին լայն յեզրերով գլխարկ:

— Ո՛ւռ, բարով Միքայել,—գլխամորից նա հյուրին,—այդ վո՞ր հանդուզն է, վոր մեզ հիշել ես:

— Ա՛յս յերեկո, Ոսկի ապեր, հյուրդ եմ:

— Աչքիս վրա տեղ ունես:

Նա հյուրին առաջնորդեց իր բնակարանը, վոր բաղկացած եր յերկու փոքրիկ, խոնավ սենյակներից՝ ցածր առաստաղով:

— Ներիր, վոր պալատս չքեղ չէ, բարեկամ,—ասաց Ոսեի ապերը կատակով,—ի՞նչ անեմ. անիծված հորերիս փորերը չորացել են, կաթիլ-կաթիլ են նավթ տալիս: Այս րոպեիս ելի խողովակը ծուվեց նոր հորի մեջ, խաթաբալի մեջ ընկավ: Տասը րոպե ինձ ներիր, խնդրեմ կգամ: Կանչիր ծառային, ինչ-վոր քեֆդ ե, հրամայիր, վոր պատրաստի քեզ համար: Ա՛խ, հոր փորողների վիզը կոտրվի...

Նա թողեց հյուրին մենակ և չքացավ:

Միքայելը հազստով պառկեց անկողնակալի վրա և, ձեռները դնելով գլխատակին, աչքերը հառեց սևացած առաստաղին: Միայն այժմ եր պարզվում նրա համար իր արարքի ամենամթին խավերը, միայն այժմ եր խիղճը գործադրում իր ամենասուր ասեղները: Մի կողմից իր կրքերի զոհ Անուշը, մյուս կողմից՝ անկոչ դատավորի արհամարհանքով լի կերպարանքը: Մի կողմից անսահման զղվանք, մյուս կողմից՝ բարոյական վեհերություն մի աղքատ աղջկա առջև: Այնտեղ մոտիկ անցյալն իր բոլոր քամահելի դույներով, այստեղ ներկան անորոշ, մթին, հուսահատական: Զզվելով Անուշից, մղվում եր դեպի Շուշանիկը: Առելով մեկին, չեր ընդունվում մյուսից, և զրում եր իրեն մի տեսակ կախարդական շրջանի մեջ: Վորպես կրակի մեջ ոդակված կարիճ, մնում եր նրան սեփական թունավոր ասեղը ցցել կրծքին և ինքնասպանությամբ վերջացնել կյանքը: Բայց աներևույթ ձեռը նրան կաշկանդում եր և մի ներքին հզոր ձայն անընդհատ չէնջում. «դու փչացած ես, մաքրի՛ր քեզ»: Մաքրի՛ր, վոր արժանանաս մաքուր եյակի հարշանքին: Ա՛խ, այդ եյակը. արդյոք, ի՞նչ ե նրա բարոյական ուժը, վոր այսպես ճնշում ե նրան և ստիպում միշտ մտածել իր մասին: Ահա նա. կանդնած լուսավոր սեղանի քով, թեյ ե պատրաստում հյուրերի համար, միշտ հայացքը հառած Սմբատի յերեսին, միշտ նրան ականջ դնելով և նրա հետ խոսելով: Մի՞թե, ճշմարիտ, սիրում ե: Ցնթե այո՛, մի՞թե չի նախազուշակում իր սիրո դժբախտ հետևանքը: Իսկ Սմբա՞տը. արդյոք, կա՞ նրա սրտում զգացում այդ աղջկա վերաբերմամբ: Ցնթե կա, ինչո՞ւ պարզ չի արտահայտում: Սակայն, ո՞վ գիտե, գուցե արդեն արտահայտել ե, և այժմ Միքայելն անդիտակցաբար կատարում ե մի ծիծաղելի դեր:

Նորից նրա վիրավորված ինքնասիրությունը բորբոքվեց: Նա կատաղում եր վոչ այնքան Սմբատի, վորքան Շուշանիկի դեմ: Ցնթե այդ աղջիկը լիներ հարուստ, փայլուն ընտանիքի մի զավակ կամ առաջնակարգ դեղեցկուհի, հասկանալի կլիներ: Բայց նա վոչ այս ե, վոչ այն. ուրեմն, ի՞նչ մի զաղտնի ուժ կա նրա մեջ, վոր միաժամանակ հափշտակում ե յերկու յեղբորը և ակամա ձգում նրանց մեջ խուլ դժ-

ություն: Վո՛չ. չարժե մտածել այդ «վոչնչության» մասին, պիտի դեն չպրտել նրան մտքից: Բաղաքը լի յե նրա նմաններով. առաջին պատահած աղջիկը կարող ե փոխարինել նրան: Միքայելն ինքն ե արհատական կերպով այդ ենթադրությունը յեկին իդեալացնում և դնում ինչ-վոր անմատչելի բարձրության վրա:

— Անիծվի ինձ նման հանքատիրոջ որը,—լսվեց Ոսեի ապոր ձայնը,—վորքան գլուխս պատերին եմ տալիս, բան չի դուրս գալիս:

Նա գլխարկը չպրտեց մի կողմ և մոտեցավ լվացարանին՝ լվացվելու:

— Հը՞մ, ի՞նչ պատվիրեցիր ընթրիքի համար,—հարցրեց նա, սապոնի փրփուրը քսելով յերեսին:

— Վոչինչ չեմ պատվիրել և վոչինչ ել հարկավոր չե: Ինդրեմ, նեղություն չքաշես, յեկել եմ միայն մի քիչ հանգստանալու այստեղ:

Շուտով սենյակի մթնոլորտը թվաց նրան սուղ, անտանելի: Նա մտածեց, վոր այս պահին, յերբ ինքը պատկած և ծերունու տխուր սենյակում, այնտեղ, այն լուսավոր սեղանի քով նրան մոքում ծաղրում և Շուշանիկը: Նա վոտքի կանգնեց, և այդ միջոցին մի մարդկային կերպարանք դրսից հայտնվեց լուսամտի առջև և խնդուն չքացավ: Ոսեիը մոտեցավ, նայեց և վոչ վոքի չտեսավ:

— Դու ինո՞մ ես,—հարցրեց նա հյուրին:

— Այո՛, ներիր, գլուխս ցավում ե:

— Ի՞նչ ե պատահել քեզ, դու դունատ ես և հուզված, կարծես, դողում ես: Ջլինի հիվա՞նդ ես. վո՛չ, այդպես քեզ բաց չեմ թողնիլ իմ մոտից:

— Ցես յեկա քեզ մոտ դիչերելու, բայց հանկարծ մխաս ընկավ, վոր քաղաքում չատ կարևոր գործ ունեմ այս յերեկո: Ցտեսություն:

Նա դուրս յեկավ չտապ քայլերով: Նա համոզված եր, վոր այժմ ել Սմբատը, մաքուր սեղանի քով նստած, գրուցում և Շուշանիկի հետ: Ցեվ այս միտքը նրան հանգստություն չեր տալիս: Նա ուղում եր անպատճառ վերադառնալ Զարդարյանների մոտ, յեթե ներս չմըտնել, գոնե լուսամտից մի հայացք ձգել դեպի ներս:

Ցերեկոն մութն եր այնչափ, վոր սև բուրդերը չեյին յերևում: Մեքենաների թանձր չոգին մթնոլորտը տոգորել եր խոնավությամբ և տարածել մի անդուրեկան հոտ: Նա դուրս յեկավ սև հեղուկով ապականված մի չավիղ: Ստեպ-ստեպ պայթաքում եր, հալել կարողանալով հավասարակշռությունը պահել: Ակամա համեմատեց իր անցյալն այդ չավղի հետ: Ամբողջ կյանքն ընթացել և այսպիսի սև, մթին, կեղտոտ ու լպրծուն ուղիով և ապականվել մինչև վոսկորների ծուծը: Մթության մեջ պատկերացած ընկերների չրջանը, գեղս գիչերները-

անբարոյական կանայք: Ցեվ նորից դդաց մի անասելի զզվանք դեպի իր անցյալը:

Նրա առջև բացվեց մի պատարկ տարածություն: Բնազդաբար նայեց չուրջը: Հանգիստը լուսավորվում էին էլեկտրական լամպարներով, բայց մեքենաների չոփին նմանացնում եր նրանց լույսը, ինչպես թանձր մշուշ: Ուշ գիշերներն այդ տեղերով անցնելը բավական վտանգավոր եր: Մութ անկյուններում միշտ թափառում էին անգործ սրիկաներ, որոնք հարմար ժամանակին հարձակվում էին մենակ անցորդների վրա, կողոպտում, վիրավորում, երբեմն էլ սպանում:

Հեռվում փայլեին Զարզարյանների բնակարանի լուսամուտները կարմիր-դեղնագույն լույսով: Դարձյալ նա վրդովվեց իր դեմ. տեր Այռաված, ինչո՞ւ այսչափ հիմարանալ և կաշկանդվել մի անբացատրելի ուժից: Նա փախչում է իր կեղտերից, կարծես, այդ լուսո ճառագայթներում լվացվելու ու մաքրվելու համար: Հետ չդառնա՞ արդյոք, մի վճռական քայլով վերջ տա յերեխայական տատանումներին ու մտանջությանը և նորից անձնատուր լինի նախկին կյանքին: Ճշմարիտ ծիծաղելի, նույնիսկ վիրավորական է այսչափ յենթարկվել մի աղքատ ու աննշան աղջկա հրապույրին և այն էլ մի մարդու համար, որի աչքում կանայք վաղուց են կորցրել իրենց սրտեռիկական հրապույրը: Վճռած է. վաղը ևեթ նա հանգիստը կվռնդի Զարզարյանին՝ իր ընտանիքի հետ: Թող դնա կորչի այդ աղջկին իր հպարտությամբ ու արհամարհանքով...

Այնինչ, նա չարունակ քայլում եր առաջ, միշտ աչքերը հառած համեստ բնակարանի լուսամուտներին: Այժմ նա մոտենում եր ինչ-որ փլատակների, որոնց կողքով պիտի անցներ, և այնուհետև մնում եր ընդամենը յերկու հարյուր քայլ մինչև Զարզարյանների բնակարանը: Նրան թվաց, թե յերկու մութ պատկերներ հանապարհի աջ յեղերից անցան ձախը և մոտեցան փլատակներին: Նրա սրտում ծագեց յերկյուղի պես մի բան: Ձեռը տարավ ծոցը և հավաստիացավ, որ ատրճանակը գրպանումն է: Քայլերը մի քիչ արագացրեց, բնազդաբար նայելով աջ ու ձախ:

Ատենապետի մտքերի մեջ հանկարծ մի հարց ծագեց նրա գլխում — ինչո՞ւ Պետրոս Ղուլամյանը զուրկ և սպասվի դպացումից: Ճշմարիտ, ահա մի մարդ, որի ընտանեկան պատիվը ցեխոտել են և նա մինչև այժմ վոչ մի կերպ վրեժ չի առնում իր թշնամուց: Նա ուսերն արհամարհանքով վեր քաշեց: Այդ վայրկյանին նա դարձյալ տեսավ յերկու մթին պատկերները, որոնք իսկույն չքացան փլատակների հետևում: Զգաստության համար հանեց գրպանից ատրճանակը և պահեց ձեռին պատրաստ: Մի քանի վայրկյան անցած, նա մտքում ծաղրեց իր յերկչոտությունը, ատրճանակը դրեց գրպանը: Նորից հիշեց Պետրոս Ղուլամյանին:

«Աննամուս»,—արտասանեց չընկյունով:

Ցեվ ճիշտ նույն վայրկյանին պարանոցի վրա զդաց ինչ-որ պաղություն: Սարսռեց, ինչպես զգրելի սողունի չփումից: Կամեցավ հետ նայել, ձեռը տանելով ծոցի գրպանը, բայց չկարողացավ շարժվել: Յերկու զույդ ձեռներ ամուր բռնել եյին նրա թևերն ու ձախ կողմերից:

Մեկն ինչ-որ բութ գենքի հարվածով թուլացրեց նրա ալ ձեռը: Նա մատը սեղմեց ատրճանակի վոտին, և մի ակնթարթ խավարը փարատվեց վառոդի լույսից: Գնդակը, սուլելով անցավ, թազնվեց վլատակների մեջ, վզզալով ինչպես թունավոր ճանճ: Նա փորձեց յերկրորդ անգամ արձակել: Մի նոր հարված այս անգամ բոլորովին ուժասպառ արավ նրա ձեռը: Զենքն ընկավ գետին: Մեկը թեքվեց ցած և արագությամբ վերցրեց ատրճանակը, ասելով.

— Հա՛յ, գենքը քեղ չի սազում:

— Մի՛ չարժիր, գյավուր, յերեն չես ուզում սպանվել,—լսվեց յերկրորդ ձայնը:

Ցեվ մի ձեռ վահեց նրա բերանը, թույլ չտալով գոռալ և ոգնություն կանչել:

Սրիկաների յերեսները ծածկված եյին դլխոցներով: Ինոսում եյին նրանք թուրքերեն, արհեստական ձայները խոպոտ դարձնելով:

Նա ճիդն արավ կոկորդն ազատել անհայտ չարագործի մատներից, վոր, կարծես, խրվել եյին նրա մսի մեջ: Ցեվ մի վայրկյան ազատելով, գոչեց.

— Կողոպտե՞լ եք ուզում, թե՞ սպանել:

— Վոչ մեկը,—պատասխանեց սրիկաներից մեկը:

— Ա՛յ քո հավատը...—լսվեց մի ուրիշ ձայն:

— Սյնպես խփեցե՛ք, վոր չմեռնի:

Սրիկաները յերեք հոգի եյին:

Հարվածներն սկսեցին տեղալ կարկտի պես գլխին, ուսերին, կրծքին ու մեջքին:

Տեղի ունեցավ անհավասար մարտ. մի կողմից հանկարծակի գտնված յեղած մեկը, մյուս կողմից՝ յերեք հաղթանդամ աղամարդիկ:

Միքայելը կռվում եր առանձնորով, վոտներով, գլխով:

Մեկը սրիկաներից սաստիկ ցավից գոռաց, մեջքից յերկու ծալ թեքվելով: Այն ժամանակ մյուսները կատաղեցին:

— Գյավո՛ւր,—գոչեց մեկը և ուժով թավալեց նրան գետնին:

Սկսեցին նրան կոխկռտել վոտների տակ:

Նա բռնեց մեկի վոտներից, թավալեց գետնին, հարձակվեց վրեն և սկսեց խեղդել: Հուսահատությունը նրան նվիրել եր գերբնական ուժ: Թուրքը հեծեծում եր նրա տակ, ինչպես ժորիվող յեզ, վոտներն ուժգին թափով գետնին զարկելով: Ցեվ նա անչուշտ կսպաներ սրի-

կային, յեթե չուտով բակի վրա չդար սուր պաղուքյուն, հետո թաց ջերմուքյուն: Նրա ձեռը թուլացավ, բայց թողեց հակառակորդի կոկորդը:

— Նչանը դրեցինք, հերի՛ք ե, բա՛ց թողեք,— ասաց սրիկաների դլխավորը:

Մ[illegible]քայելի ընչառուքյունն արդեն սպառվում եր: Սկսեց բակի վերջից մրմնջալ: Ամբողջ կյանքը մթուքյան մեջ պատկերացավ նրա առջև, իրրև ավելի խորին մթուքյուն, իրրև անբարոյականուքյան քաոս: Մի՞թե նրան վիճակված ե այսպիսի խայտառակ մահով մեռնել, ինչ-որ անհայտ չարագործների ձեռքից: Ցավ ինչո՞ւ, ո՞վ ե վրեժխնդիր լինում նրանից:

— Բեդրուս աղային ճանաչո՞մ ես... Նրա դուլերն ենք...—լսեց նա հանկարծ:

Ահա ինչ, ահա վորտեղից ե գալիս հարվածը: Պատվի վերջին դատաստանից զուրկ համարված մարդն էլ ե վրիժառուքյան միջոց ունեցել: Այդ սրիկաները վարձված են Ղուլամյանից: Դա թեև ամարդի, բայց սոսկալի վրիժառուքյուն ե...

— Բավական ե,—ասաց վարձկան սրիկաների պարագլուխը,—թե չե կմեռնի... Եժան գնով: Բեդրուսը ժլատ ե...

Ներանք չուտով անեղևուքյացան դիշերային խավարի մեջ, վորպես նույն խավարի ծնունդներ:

Այժմ Միքայելի անշունչ մարմինը տարածվել եր նավթախառն ավազի վրա:

Հեռվում տակավին վայլում էին Զարդարյանների լուսամուտները կարմիր-դեղնագույն լույսով...

V

Նույն պահին, յերբ կատարվում եր այս վայրենի գործողուքյունը, Ալիմյան ընտանիքի դլխին մի ուրիշ դժբախտուքյուն եր յեկել:

Քաղաք վերադառնալով, Սմբատը լսեց, վոր Արշակն առավոտից անհետացել ե, հայտնի չե ուր: Այն մարդը, վոր նշանակված եր նրա վրա հսկիչ կամ, ինչպես Սրաֆիոն Գասպարիչը նրան անվանում եր «լյալա», ամբողջ որը վինտռել եր, չեր դտել: Բանը պատահել եր այսպես. առավոտն Արշակը Սրաֆիոն Գասպարիչից փող ե խնդրում. ծերունին, փողը նրան տալու փոխարեն, տալիս ե հսկիչին: Արշակը կատաղում ե, կռվում բոլորի հետ և բոլորին հայհոյում փողոցային հիչոցներով: Հետո վազում ե և վակվում Սմբատի առանձնասենյակում: Հսկիչը չի համարձակվում նրա հետևից գնալ: Մի քիչ անցած, պատանին դուրս ե գալիս այնտեղից դողնովի. վոչ վոք չի տեսնում նրան, բացի Անտոնինա Իվանովնայի աղախնից: Արշակը դունատված և հուզված գոչում ե. «կասես բոլորին, վոր ել յերեսս չեն տեսնիլ»: Աղախինն անմիջապես վազում ե և այրի Վոսկեհատին հայտնում: Այրին իսկույն հսկիչին ուղարկում ե վորդու հետևից: Սմեն տեղ խեղճ մարդը վինտռում ե պատանուն և չի գտնում:

Լսելով անախորժ լուրը, Սմբատը ձեռը խփեց ճակատին և չտապով անցավ իր սենյակը: Մոտեցավ գրասեղանին, չարժեց դարանը, վոր իսկույն բացվեց առանց բանալիի: Նայեց և ապշած հետ կանդնեց մի քայլ: Միջին դարանը կոտրած եր, թղթերը տակն ու վրա արած:

Սմբատը նայեց դարանի անկյունները, խառնեց թղթերը, բայց ամբողջ մյուս դարանները, վորոնեց սեղանի տակ, սեղանի վրա, թղթապանակների մեջ և, վորոնածը չգտնելով, թուլացած ընկղմվեց բազկաթոռի վրա: Առավոտը բանկից բերել եր տվել բավական խոշոր մի գումար, վոր, հանքերից վերադառնալուց հետո, նույն յերեկո պիտի բաժաներ նոր շինուքյան վրա աշխատող կապալառուներին և արհեստավորներին:

Դրամի կապոցն անհետացել եր: Կասկած չկար, վոր գողացել եր Արշակը: Ահա, ուրեմն, նրա փախչելու պատճառը. պակասում եր գումարքյունը — այս էլ արավ:

Նա թղթերը ժողովեց, ըրեց դարանը, իջավ գրասենյակ և սպասող արհեստավորներին խնդրեց վաղը գալ վարձ ստանալու: Հետո կանչեց գործակատարներին, և պատվիրեց Արշակին վորոնել ամենուրեք, նույնիսկ անառականոցներում: Արդեն այնքան վատ գաղափար ուներ յեղբոր մասին, վոր կարծում եր, թե միայն անառակ կանանց համար պիտի չտայլի գողացած փողերը: Նա վոչ վոքի չհայտնեց գողության մասին, նույնիսկ Սրաֆիոն Գասպարիչին:

Նորից բարձրացավ վերև, յենթարկվեց մոր կծու կշտամբանքին: Այրին ասում եր, թե Արշակը մեղավոր չե, վոր ոնից փախչում ե: Վերջին ժամանակ նրան կատարելապես տանջում եյին. բանտարկել եյին, վոտով-ձեռով ինչ-վոր «լյալայի» հետ: Մախսի փող չեյին տալիս «խեղճ յերեխային»: Արշակը մազերը փետում եր, լաց լինում, սպառնում եր իրեն սպանել: Նա կատարել եր իր սպառնալիքը. կամ ծովն ե ընկել, կամ պարանով խեղդվել, կամ ռեվոլվերով իրեն սպանել: Տաքարյուն տղա յե, կանի, անպատճառ կանի...

— Իսկի յել չի անիլ,—դոչեց Սմբատը վշտացած մոր կշտամբանքից,—նա ինքնասպանուքյուն գործող տղա չե: Կարող եմ հավատացնել, վոր այժմ, անառակների հետ չնորհած, քեֆ ե անում:

— Վո՛չ խելոք և վորդիս, վո՛չ դիժ,—ասաց այրին, արտասուքը սրբելով,—մենք փշացավ, մյուսն ել նրա ճանապարհով ե գնում: Իսկ դու, դու նրանցից ավելի վատ դուրս յեկար, ավելի խորը խոցոտեցիր սիրտս...

Ազատվելով մոր ձեռքից, Սմբատն ընկավ քրոջ ձեռքը: Ներս մտավ Թե չէ, տիկին Մարթան սկսեց ուղղակի հարձակվել նրա վրա:

— Դու հորս վորդուն չես Թողնում որ տեսնի: Ընկել ես կնոջդ կոշիկների տակ, ինչ ուզում է, անում ես: Բանդեց իմ ծնողների տունն այդ կնիկը:

— Մարթա, Թո՛ղ այդ կնոջը հանգիստ, խոսք ունիս ասելով, ինձ ասա:

— Ինչ ասելու վոչինչ չունեմ, կռիվս նրա հետ է, նա չե քանդում մեր տունը: Մարկոս աղայի սիրած վորդին դրսանում ծախսի վող չունենա, դնա իրեն ծո՛վը գցե, բաս այս կվերցնի՛ Աստված...

— Այո՛, դրսանում վող չունի, բայց սիրուհիները պահում է,—ասաց Սմբատը դառն հեգնությամբ,—ինձանից Թագուն մորից ստացած վողերով:

— Առաջինը ստա է, Արշակը սիրուհիներ չունի, յերկրորդը, յես Թե ունի էլ, շատ լավ է անում պահում է, Թշնամիների աչքն էլ է հանում: Ո՞վ չունի մեր ժամանակում սիրուհիներ: Ցեքե իմ մարդը, ինձ պես կնիկ ունենալով, պահում է սիրուհիներ, ինչո՞ւ Արշակի պես ջահելը չպիտի պահի... Ժամանակիս սովորությունն է:

Սմբատը զայրացած և ապշած նայեց քրոջ յերեսին: Այդ հանդուգն պարզախոսությունը վիրավորեց նրան, մինչև հոգու խորքը, դիպչելով արյունակցական զգացմանը: Նա ամաչեց:

— Լռի՛ր, լռի՛ր, Մարթա...

Բայց Մարթան արդեն կորցրել էր չափավորության զգացումը:

— Ո՞ւմ,—արտասանեց նա,—սուրբը դու ես, դո՛ւ վոտից մինչև գլուխ: «Լռի՛ր»· իսկի յել չեմ լռիլ: Ի՞նչ կա, ումի՞ց պիտի քաշվեմ: Չլինի՞ Թե քեզանից: Ինչպե՞ս չե, քեզ եղ ենք լավ ճանաչում: Դու, վորքան կարող ես, չուտ-չուտ գնա Բալախանի...

— Անկարելի այնքան հանդուգն ՛ներ, վոր Սմբատը չկարողացավ լռին զսպել և բարձրաձայն գոռաց.

— Լռելո՞ւ յես, հիմար կին, Թե՞ չե...

— Ի՞նչ ե, սրտիդ դիպան հաա՞: Մի՛ վախենար, յես իսկի յել քեզ չեմ նախատում: Այդ տեսակ կնիկ ունեցողը, կարող է անել, ինչ վոր քեզնե ե...

Այդի Վասիլևտան ընկավ աղջկա ու վորդու մեջ և աղերսեց վերջ տալ կռվին վեճին:

Սմբատը դուրս գնաց, բայց նրան սպասում էր ուրիշ տեսարան: Անտոնինա Իվանովնան սաստիկ հուզված էր: Մի փոքր առաջ սկեսուրը նրան վիրավորել էր: Վշտացած մայրն իր սրտի Թունը Թափում էր առաջին պատահողի գլխին: Հանդիսելով հարսին բնակարանները բաժանող միջանցքում, նա անխոհեմաբար արտասանել էր միքանի վիրավորական խոսքեր ռուսերեն լեզվով: Խոսքեր, վորոնց իսկական իմաստը չգիտեր: Հարսը հասկացել էր միայն կոպիտ հիշացները, առանց հասկանալու նրանց չարժատիքը: Իսկ չարժատիքը սովորական էր՝ այն որից, յերբ նա վոտ է դրել Ալիմյանների տունը, ընտանիքի Թշվառությունների վերջ չկա:

Անտոնինա Իվանովնան ներվային կին չէր, բայց այս անգամ այնքան վիրավորվել էր, վոր, տեսնելով Սմբատին, հեկեկաց:

— Այս կյանք չե, այլ դժոխք,—կրկնում էր նա:

— Վո՛չ, դժոխք չե, այլ քաոս,—արտասանեց Սմբատը:

Նյարդերն այլևս անդոր եյին դիմանալ ընտանեկան փոթորկին: Գլուխը պատում էր, արյունը պղտորվել էր: Վախեցավ, մի գուցե ընդհարումն ավելի սուր կերպարանք ստանա և ակամա կրկնակի վշտացնի կնոջը, վորին այս դեպքում անմեղ վիրավորված էր համարում սիեսրի կողմից:

Նա չտապեց դուրս: Նա փախչում էր և՛ կնոջից, և՛ մորից, և՛ յեղբայրներից ու քրոջից: Ի՞նչ չնչին և ծաղրելի կյանք — գտնվել յերկու հակառակ տարրերի մեջ և կատարել ինչ-վոր անդոր նշանակի դեր՝ յերկու կողմից տեղացող կրակի համար: Ահա Թե կյանքի դրաման յերբեմն վորպիսի, ըստ յերևույթին, չնչին բաներից է հյուսվում: Ի՞նչ անել, արդյոք, բժշկվել մորի՞ց, Թե կնոջից: Վո՛չ այս կարող ե անել, վո՛չ այն: Մեկի հետ կապված է հայրական կտակով և վորե անել, վո՛չ այն: Մեկի հետ կապված է հայրական կտակով և վորդիական սիրով, մյուսի հետ՝ զավակներով: Թող փիլիսոփաները տակտներեն վճռեն դիլեմման, բայց Սմբատն անդոր է նրան վճռելու...

Նա կատաղ նստեց, դիմեց դեպի ծովեզրը, դնաց Բալելով Թեքափղին: Սառը և լուսնկա յերեկո էր: Ծովը հանդարտ էր, միայն յեզերքի Թեև ալիքները, չհվելով ավազուտ ափերին, տարածում եյին մեղմիկ չառաչյուն, վոր հիշեցնում էր մեռածքի խշխշյուն: Նոսր կաթնագույն մշուշ տոգորված մթնոլորտը խոնավ էր: Պայծառ լուսնի շողերը, մշուշով տոգորված մթնոլորտը խոնավ էր: Պայծառ լուսնի շողերը, անցնելով այդ մշուշի միջով, ծովի մակերևույթը եյին լուսավորում, այլ աջողում եյին մի նուրբ շղարշով, վորի ներքո նավերի անթիվ կայմերը ներկայացնում եյին խորհրդավոր անտառ: Մերթընդմերթ լսվում եյին չոգեշարժ նավակների չվիկների սուլոցները, վոր, սուր վում եյին չոգեշարժ նավակների չվիկների սուլոցները, վոր, սուր նետերի պես, ոդը ճեղքելով, տարածվում եյին հեռու ու հեռու:

Գործնական քաղաքը դեռ չեր նիրհել: Այնտեղ տիրում էր խուլ դղրդյուն: Այդ դղրդյունի մեջից լսվեց մի զիլ ձայն, վոր, հետզհետե աստիճանաբար, իջնալ ցած ու ցած և կորավ, չքացավ մթնոլորտի մեջ: Ո՞վ դիտե ուր, յերգում էր մի պարսիկ, իր սրտի ուրախությունը Թե վիշտը բարձրաձայն հաղորդելով ամենակուլ տարածությանը:

Սմբատի կառքը բարձրանում էր մի բարձրավանդակով, և քանի դնում, ծովն ավելի ու ավելի ընդարձակվում էր նրա առջև: Ցեքեու կառք լսացան նրա մոտով և առաջ եյին: Մի Թումբ գիմարձամոլներ, ով կառք լսացան նրա մոտով և առաջ եյին: Մի Թումբ գիմարձամոլներ, ով դիտե, ինչ քեֆից հետո, դուրս եյին յեկել մաքուր ոդ չնչելու: Մեկը

տեղական հասարակ չվու վրա նվագում եր «Cavaliera rusticana»-ից մի թախծալի կտոր: Նվագողը վոգևորված եր: Մեղմ և ախորժալուր հնչյունները թափանցում եյին մարդու սիրտը: կարծես, այդ հնչյունները լուսնից եյին գալիս և կազմում աննման մի ներդաշնակություն մելամաղձիկ յերկնի հետ:

Ցեվ այս բոլորն ազդում եր Սմբատի զրգռված հոգու վրա, բորբոքում նրա սրտի վերքերը: Թվում եր նրան, վոր այս պահին բոլորը բախտավոր են, բացի իրենից:

Հասնելով թերակղզու ծայրը, կառապանը կառքը հետ դարձրեց, առանց հարցնելու Սմբատի կամքը:

Նա վերադարձավ տուն: Ուղարկված գործակատարները դեռ վոչ մի լուր չեյին բերել Արշակի մասին: Վոսկեհատը լալիս եր և անիծում իր վիճակը: Մարթան, մի անգամ ևս մորը լարելով Անտոնինա Իվանովնայի դեմ, հեռացել եր: Իսկ Անտոնինա Իվանովնան քաշվել եր իր սենյակը և խորհրդակցում եր յեղբոր հետ՝ իր անելիքի մասին:

Տանը տիրում եր մի անհյուրընկալ սառնություն, վոր ճնշեց Սմբատի հոգին: Նա չոտալեց դուրս գալ նորից: Այս անգամ, վոտով մի քանի փողոցներ անցնելով, մտավ քաղաքի առաջին ճաշարաններից մեկը: Նատեց ընդարձակ սենյակի մի խուլ անկյունում և պահանջեց մի չիչ գարեջուր: Մյուս սենյակից լսվում եր բիլլիարդի գնդակների չխչխկոցը: Շուրջ նստած եյին փոքրիկ սեղանների քով թվով մոտ քսան յեվրոպացիներ, մեծ մասամբ չվեդացիներ ու գերմանացիներ: Ծխում եյին, ընթրում, զվարճախոսում, ծխելով իրենց կարճլիկ ծխաքարշերից:

Սմբատի ղղացումները չուտով սկսեցին բթանալ թմրեցուցիչ գարեջրի ազդեցությամբ: Մի պահ նրա աչքերից հեռացավ այն սև ուրվականը, վորին համարում եր իր անձնող սկսված ու դժբախտ շրջունակվող ամուսնական կյանքը: Մոռացավ նաև Արշակին: Արժե՞ մտքե մտածել նրա մասին: Կվատնի փողերն ու վազ թե ուշ կվերադառնա տուն: Ի՞նչ ասել և յեղբայրական սեր, յեթե վոչ մի հին նախապաշարում: Նույնն եև՛ վորդիական սերը: Բոլորը զատարիկ, անիմաստ զգացումներ են, վոր մարդիկ արվեստականորեն զարգացրել են իրենց մեջ դեռ վայրենության դարերում: Այո՛, կեղծ են բոլոր արյունակցական զգացումները, ինչպես կեղծ և առհասարակ մարդկային զգացումների ինտուն տոկոսը: Միայն մի զգացում է արմատական, անկեղծ, բնածին և անջնջելի — յեսասիրությունը: Հեռո՛ւ նախապաշարումները, պետք է յեսամոլ լինել: Սպասավո՛ր, գարեջուր: Այս լավը չե, ուրիշը բեր, բե՛ր և մի բաժակ կոնյակ, բե՛ր յերկրորդը, յերրորդը...

Նա խմում եր բաժակ-բաժակի հետևից: Մենակ եր, ազատ՝ կնոջ անախորժ ձայնից, մոր անվերջ բողոքներից, յերեխաների աղմուկից:

Մոր, յերանելի ամուրհներին: Ինչ հաճելի յե ռեստորանի մթնոլորտը այս անծանոթ հյուրերի զվարթ դեմքերը: Այստեղ ամեն ինչ պարզ է և հասկանալի, խմի տանը՝ բարդ, մթին:

Նա գլուխը դրեց կոնների վրա՝ սեղանի յեզրին: Մտքերը խառնաշփոթվել եյին, աչքեր ուամ մասին մոռացել: Բոլորը և ամեն ինչ խառնվել եյին նրա գլխում և դարձել անթափանցելի քաոս...

Մեկը ծխախոտի թանձր ծխի միջից մոտեցավ նրան, դղակը ձեռին, և կամացուկ արտասանեց նրա անունը: Նա գլուխը բարձրացրեց և տեսավ այն դրծակատարներից մեկին, վորոնց պատվիրել եր Արշակին գտնել:

— Գտա՞ք այն անպիտանին,—հարցրեց նա, չիչը բարձրացնելով, վոր քաժակը լցնի:

— Այսոր տասներկու ժամին նրան տեսել են յերկաթուղու կայարանում մի հնոջ հետ, գնացքի ժամանակ:

— Մի հնոջ հե՞տ,—կրկնեց Սմբատը,—ախ, անպիտա՜ն, գարշելի՜... Պետք է փնտրել ու գտնել, անպատճառ գտնել: Ե՛հ, ինչքա՜ն յեք յեկել, տո՛ղ տասց, վոր առանց գտնելու գաք...

— Ցեկել եմ հայտնելու, վոր հանքերից ձեղ խնդրում են...

— Հը՛դե՛հ,—գոչեց Սմբատը,—ե՛հ, ի՞նչ գլեմ, թող այրվի ամեն բան, թող այրվի, վոչնչանա...

— Հը՛դե՛հ չկա, ուրիշ բանի համար են կանչում:

— Շատ լավ, շատ լավ: Ասում եք, Արշակին տեսել են կայարանո՞ւմ: Ուրեմն, նա փախել է այդ հնոջ հետ: Պետք է վոստիկանությանը հայտնել, ամեն կողմ հեռագրներ տալ, մարդիկ ուղարկել: Ա՜խ, անբարոյակա՜ն, փչացա՜ծ մանուկ: Սպասավո՛ր, ասացիր խմածիս փողը... Ցես խնդրեմ վոստիկանատուն: Վոստիկանատո՞ւն,—ավելացրեց նա, հանկարծ յեղանակը փոխելով,—ի՞նչ հմարություն: Ինչո՞ւ պիտի գնամ, մի՞թե պարտավոր եմ դնալու: Ե՛հ, թող կորչի անիծվածը. նա իմ յեղբայրը չե, յես յեղբայր չունիմ: Դուք նլ հեռացեք այստեղից, լսո՞ւմ եք, հեռացե՛ք, թողե՛ք ինձ հանգիստ: Սպասավո՛ր, կոնյակ բեր...

Գործակատարն ապշած նայում եր. առաջին անգամ եր տիրոջը տեսնում այդպես հարբած:

— Ցեթե կամենաք, յես կգնամ վոստիկանատուն,— ասաց նա, դղակը ձեռների մեջ ճմռթելով,—իսկ ձեղ խնդրում են անպատճառ և խնդուն գնալ հանքերը...

— Ե՛հ, հանքերը, հանքերը, ձանձրացրին ինձ այդ հանքերը: Սպասավո՛ր, տելեֆոն ունե՞ք:

— Կա:

Գործակատարը տելեֆոնի թելը մղացնել տվեց Ալիմյանների հան-

քերի հետ, կանչեց Սուլյանին: Սմբատը խոսեց ինժեներների հետ և համոցավ Միքայելին պատահած դժբախտությունը:

— Ծեծե՞լ են. եե՛յ, վիրավորե՞լ են, բայց ո՞վ,—դոչեց նա, մոլոր քայլերով հեռանալով տելեֆոնից:

Լուրը բավական սթափեցրեց նրան: Տրորեց ճակատը, կարծես, քնից արթնանալու համար, հրամայեց գործակատարին գնալ, վոստիկանատանը հայտնել Արշակի կորստյան մասին, իսկ ինքը դուրս եկավ, կառք նստեց և հրամայեց քշել դեպի հանքերը:

Սառն ոդն արթնացրեց նրա թմրած ուղեղը: Ցեղորը ծեծվելու լուրը նոր միայն սկսեց ազդել նրա վրա: Ո՞վ գիտե, դուցե սպանված և, Սուլյանը թաղցրեց: Կարող եր և՛ ինքնասպանություն գործել. վերջին ժամանակ շատ եր խորասուզվել ինքն իր մեջ: Հարկավ, տանջվում եր վիրավորված պատվի ղգացումից: Տեր Աստված, այս ի՞նչ խայտառակ դրություն ե. մեկը ծեծված և անպատիվ յեղած ամբողջ քաղաքում, մյուսը՝ հիվանդոտ, դող և վախկոտական, փույրը՝ կռվարար, չարասիրտ, մայրը՝ թուլլ իր զավակների բարք ու վարքերի վերաբերմամբ: Իսկ ի՞նքը. ի՞նչ եր անում այն ճաշարանում: Հարբում եր իր վշտերը մոռանալու համար: Այդ ի՞նչ չար վոգի յե մտել Ալիմյան ընտանիքի մեջ և քայքայում ե նրան: Ո՞վ և անիծել այդ խեղճ ընտանիքին: Ինչո՞ւ հարստությունը յերջանկացնելու փոխարեն, դըժբախտացնում ե նրան: Վերջապես, այս ի՞նչ ընտանիք ե, ավանդությունները մոռացված, բարոյական կապերը խախտված, ի՞նչ պիտի լինի այս քաոտիկ դրության վերջը...

Այս ծանր մտքերի տակ Սմբատը հասավ հանքերը:

Ծեծն այնքան սաստիկ եր յեղել, վոր Միքայելի կյանքին վտանգ եր սպառնում: Բայց ոդի տակ նա մնացել եր ուշաթափ յերկար ժամանակ: Ուշքի գալով, իրեն տեսել եր մի քանի մշակների ձեռների վրա: Նորից ուշաթափվելով և նորից ուշքի գալով, աչքերը բաց եր արել և դիմի վրա նշմարել Սուլյանի ու Դավիթ Զարդարյանի հուղված դեմքերը, նաև մի զույդ անկեղծ յուվակցությամբ լի սիրուն աչքեր:

Անմիջապես լուր եյին ուղարկել տեղական վոստիկանությանը, բժիշկ եյին հրավիրել՝ վերքերը կապելու: Նա խնդրել եր, վոր վոստիկանապետն իրեն քննության չենթարկի. անհայտ չարագործներ եյին, կողոպտելու համար ծեծեցին և անհետացան: Վոչ մեկին չի ճանաչում:

Տեսնելով Սմբատին, նա արտասվեց յերեխայի պես:

— Ցերեքը մեկի վրա, յերեքը մեկի վրա,—կրկնեց նա, կարծես, վախենալով, վոր յեղբայրը կմեղադրի իրեն պարտության համար:

Նրա ամբողջ մարմինը ծածկված եր կապույտ բծերով, բազուկը դանակի հարվածով վիրավորված, դեմքն անճանաչելի եր:

Նից վտանգավորը գլխի վերքն եր: Բժիշկն ասում եր, թե այդ վերքից կարող ե առաջանալ արյան քորքոջում: Անհրաժեշտ ե համարում անպայման անդորրություն:

Զարդարյան ընտանիքը չըջապատել եր նրան. ամեն վոք աշխատում եր մի բանով ոգտակար լինել:

Հետևելով հոգու բնական բարի ձգտումներին, Շուշանիկը մոռացավ իր վիրավորանքը և սկսեց հարազատ քրոջ խնամքով ծառայել հիվանդին այնպես, ինչպես չատ հիվանդ բանվորների յեր ծառայել: Դեպքը բացառիկ եր. ներելի յեր մի որիորդի ցավակցել մի ոտար յերիտասարդի, վոր պառկած եր կից սենյակում, ջարդված, վիրավոր և հուսահատ: Ուստի անեցիները դեմ չեյին, վոր նա ծառայի հիվանդին:

Հետևյալ որը ճակատի վերքն սկսեց Միքայելին նեղել: Հարկավոր յեղավ քաղաքից հրավիրել վիրաբույժ: Բննեց և գլուխը տարակուսելով շարժեց. վերքը բավական խոշոր եր և խորը. վտանգն ուղեղին եր սպառնում: Հիվանդը ստեպ-ստեպ ուշաթափվում եր:

Սմբատն ուղևորվեց քաղաք՝ դժբախտ լուրը մորն զգուշությամբ հաղորդելու: Այրին տակավին հուսահատ դրության մեջ եր: Նա չեր հավատում, թե Արշակին տեսնող և յեղել կայարանում: Շարունակ կրկնում եր. «աչխարհը տակն ու վրա արեք, խեղճ յերեխայիս մարմինը գտեք»: Նույնը կրկնում եր և՛ նրա աղջիկը: Ցավ յերկուսն էլ մինը գտեք»: Նույնը կրկնում եր և՛ նրա աղջիկը: Ցավ յերկուսն էլ իրենց սրտի թուրն թափում եյին Անտոնինա Իվանովնայի գլխին, տեղ անտեղի բարձրաձայն հայհոյելով նրան, վոր իր հետ մի չարք դժբախտություններ բերեց ընտանիքի գլխին:

Նոր լուրը, հարկավ, սաստիկ ներգործեց այրիի վրա: Նա ուշաթափվեց: Նրան ուշքի բերեց Մարթան, և իսկույն մայր ու աղջիկ ճամփա ելան դեպի հանքերը՝ Իսահակի ուղեկցությամբ: Հասան նոպարտ ընկան դեպի հանքերը՝ Իսահակի ուղեկցությամբ: Հասան այն ժամանակ, յերբ բժիշկները սպասում եյին ուղեղի բորբոքման:

Իսահակ Մարութխանյանը, չափազանց հետաքրքրված, թաղուն հարցնում եր բժիշկներին, կմեռնի՞ արդյոք Միքայելը, թե՞ կապրի: Բժիշկներից մեկը հուսահատությամբ գլուխը շարժեց: Ցավ վոչ վոք Մարութխանյանի կանաչ-դեղնադուն աչքերի մեջ չնշմարեց ուրախության վայրը:

Իրիկնադեմին Միքայելը գիտակցությունը կորցրեց, սկսեց զառանցել սաստիկ տաքությունից: Ամբողջ մի ժամ ինքն իրեն խոսում եր, տրտմելով անկողնի մեջ: Մերթ նստում եր, մերթ պառկում, շարունակ վերմակը վրայից հեռացնելով: Նրա անկապ խոսքերն այրիի համար մատամբ պարզեցին դժուշարար թաղցրած գաղտնիքը: Արդեն Մարթան մի քանի անգամ ակնարկել եր նրա մոտ յեղբոր ու տիկին Ղուլամյանի մեջ յեղած հանցավոր կապի մասին: Այրին մի ակնթարթում ամեն ինչ հասկացավ:

ռանձին նշանակություն չէր տվել լուրին, ժամանակները փոխվել էն, այն շատ առաջ եր, յերբ կինը հավատարիմ եր ամուսնուն: Այժմ ամենքը զավաճանում էն: Ի՞նչ անենք, վոր Անուշ Ղուլամյանի թուլությունից ոգտվողը նրա վորդին է: Յերիտասարդ է, ամուրի, «տապարյան», թող ապրի, «քեֆ անի»: Նա մոքում դեռ մի փոքր էլ պալծեցավ վորդու քաշությամբ: Ղոչաղ աղա՛յի, վոր կարողանում է կնոջը մարդու ծոցից հանել, միայն պետք է ղուշյ լինի, «թապուն անի» ամեն բան, վոր վոչ վոք չիմանա:

Միքայելն իր զառանցանքի մեջ կրկնում եր· «կորի՛ր, խաչտառակ, անպատկառ, դու ինձ անպատվեցիր, դու ինձ կեղտոտեցիր, սպանեցիր բարոյապես, կորի՛ր, կորի՛ր»··· Հաջորդ խոսքերից Սմբատն արդեն հասկացավ, վոր Գևորա Ղուլամյանն է ծեծել տվել Միքայելին:

Զառանցանքն անցավ կես գիշերից հետո: Հիվանդը լռեց ու նիրհեց: Առավոտը, աչքերը բանալով, պղտոր հայացքը հառեց մոր յերեսին: Ջնայելով տակավին չարունակվող տաղնապին, զղում եր ինչ վոր թեթևություն: Գլխի վերքը յերևակա չափ ցավ չեր պատճառում: Ցերբեք մայրական զեմքն այնքան հաճելի չեր թվացել նրան, յերբեք այնքան զգվանքի կարոտ չեր զգացել, վորքան այդ որը: Նա զգացվեց, բռնեց մոր ձեռը և սեղմեց կրծքին:

Նեբս մտավ Շուշանիկը՝ թեյի սկուտեղը ձեռին, մոխրագույն չալ ուսերին գցած: Նրա այլևս մտախոհ զարձած աչքերը կարեկցաբար զարձան դժբախտ մոր կողմը, լուրջ հարցնելով, արդյոք, ի՞նչպես է պյոտր հիվանդը: Այրին զաղանի սրբում եր տամուկ աչքերը սև մետաքսյա թաշկինակով: Հիվանդի զեմքով սահեց խորին յերախտադիտության ժպիտ: Սպիտակ թաշկինակով կապված ճակատի տակից կարմրած աչքերը հառեց որիորդի վրա: Մտաբերեց այն որը, յերբ հանդիպել եր այդ անարատ և բարեսիրտ եյակի վերաբերմամբ արտահայտել կեղտոտ միտումներ: Բարկացավ մոքում ինքն իր դեմ, վոր դեռ յերեկ զարմանում եր, թե ինչու այդ աղջիկն աղքատության մեջ այնքան հպարտ է, ինքնատեր, անմատչելի: Ա՛խ, ի՞նչպես հասկացնի այժմ, թե պատրաստ է հենց այս ղրության մեջ չոքել նրա առջև, հազար անգամ ներում խնդրել, նույնիսկ համբուրել հպուստի փեշերը, ինչպես սրբության:

Ցերբ Շուշանիկը, սովորական «բարի լույս» ասելով, սկուտեղը ղրեց սեղանի վրա և հանդարտ քայլերով դուրս գնաց, հիվանդը զարձավ մորը·

— Հավանո՞ւմ ես այդ աղջկան:

— Շատ···

Հիվանդի պղտոր աչքերի մեջ փայլեց ուրախություն, վոր, սա-

կայն, նույն վայրկյանին փոխվեց տրտմության: Ուրիշ վոչինչ չասաց, յերեսը զարձրեց պատին և հառաչանքը խեղդեց վերմակի տակ: Մի փոքր անցած, մայրը լսեց նրա դողված հեկեկանքը:

Իրիկնադեմին նորից սկսեց զառանցել: Վիրաբույժը նոր եր փոխել վերքերի սպեղանին և քաղաք վերադարձել: Հիվանդը մի քիչ նիրհել եր: Այրին, վիշտը փարատելու համար, խնդրել եր Շուշանիկի մորն ու մորաքրոջն իր մոտ, և նրանց հետ կամացուկ զրուցում եր:

Հիվանդը նախ սկսեց անքանքալ, հետո վերմակը զեն չպրտեց և առողջ ձեռը զարկեց պատին: Այժմ զառանցանքի միտքն ա՛յլ եր: Տիկին Աննան — Շուշանիկի մայրը լսեց իր աղջկա անունը, զարմացավ, կրկին լսեց — ցնցվեց: «Ցե՞ս ներում խնդրում, յե՞ս, յե՞ս, Միքայել Ալիմյա՞նս, Շուշանիկ, Շուշանիկ, ֆի, ի՛նչ վատ անուն է»: Ցեվ, մի փոքր անցած, «սո՛ւս, դալիս է, չալն ուսերին զցած, ճակատը բաց, ազքատ ու հպարտ· չեմ տալ քեզ, չեմ տալ, Սմբատ»: Այնուհետև լռեց և հետո, ձայնն ավելի բարձրացնելով, զոչեց· «սուտ եք ասում, այո՛, սուտ եք ասում, վչինչ զանազանություն չկա մեր մեջ, Սմբատն ինձանից լավ չէ, յես վատ մարդ չեմ»···

Ճիշտ այդ վայրկյանին ներս մտավ Սմբատը, մոտեցավ անկողնակալին, լսելիքը լսեց: Հատուկտոր զարձվածները չաղկապելով, կպմեց ամբողջ զպալտար յեղբոր զաղանի զրացուհիների մասին, զուշակեց, վոր նա հավիշտակված է Շուշանիկով: Նա և՛ խղճաց յեղբորը, և՛ զղաց զարձյալ նախանձ: Ինչո՞ւ, միթե կա՞ վորևե նախանձի արժանի բան այդ բարոյապես ընկած, խայտառակված, ծեծված և կիսամահ յերխտասարդի մեջ:

Սմբատը զիշեր մոր հետ անքուն անցկացրեց հիվանդի անկողնակալի մոտ: Ցեղան վայրկյաններ, յերբ կարծում եր, թե յեղբայրը մեռնում է: Նրա սիրան եր մորմոքվում այն մոքից, թե Միքայելը կարող է յերխտասարդ կյանքը վերջացնել այդպես խայտառակ:

Հետևյալ որը բժիշկների նոր քննությունը հաստատեց, վոր տաղնապն անցել է, բայց պահանջվում եր անդորրություն: Սմբատն ուզևորվեց քաղաք՝ Արշակի մասին լուր իմանալու:

Սմբատը որը հիվանդի զրությունը լավ եր, զիշերը նա քնեց անվրդով, իսկ մյուս առավոտ զարթնեց բավական կազդուրված: Կեսորվա զեմ նրան պատահեց ինչ-վոր տենդային վոգևորություն: Շարունակ խոսում եր մոր հետ, ներում էր խնդրում, վոր այնքան ցավ ու տանջանք եր պատճառել նրան իր վատ կյանքով: Ասում եր, թե այսուհետև այլևս աչխատելու յե ուղղել իրեն, թե ամեն բանից ձանձրացել է, միայն թե առողջանա··· Ո՛ւ, նա չի ուզում մեռնել···

Ճաշից հետո յեկան բժիշկները և հայտնեցին, թե այլևս հիվանդն

առողջանում է: Այրին մի փոքր հանդստացավ: Շտապեց Սմբատի հետ ուղևորվել քաղաք: Նրան թվում էր, թե Արշակի մասին քաղաքում վատ լուր է տարածվել, իրենից թաղցնում են և թե ինքը կարող է անձամբ իմանալ այդ լուրը:

Հիվանդին հանձնեցին Դավիթ Զարդարյանի խնամքին, հակառակ Սուլյանի ցանկության, որը ձգտում էր ամեն կերպ ծառայել իր տիրոջը՝ նրա սիրտը շահելու համար: Հոգու խորքում ինժիներն ուրախացավ, երբ Միքայելն որ առաջ լսեց բժիշկների կարծիքը: Այժմ, երբ Միքայելն առողջանում էր, նա բարվոք էր համարում ցույց տալ նրան անսահման կարեկցություն:

Մի դիշեր ևս խաղաղ քնելուց հետո, հիվանդը զարթնեց այնքան կազդուրված, որ կամեցավ վոտքի վերկենալ: Սակայն բժիշկը պատվիրեց մի որ ել պառկած մնալ:

Իրիկնադեմին խմբովին այցելեցին նրան իր նախկին ընկերները, բոլորն էլ բավական հարբած, բացի Պապաչայից: Այդ որը Պապաչան իր հանքերում ճաչ էր տվել մի յեկվոր խմբապրի, որի լրագրում հաճախ նա անվանվում էր «Հայոնի բարեգործ»:

Բյաղիմ-բեկը ցույց տվեց, թե կատաղած է անհայտ սրիկաների դեմ: Ո՛ր, նա անպատճառ կիմանա ովքեր են այդ չարագործները և մի լավ պատժել կտա: Իշխան Նիստամիձեն, ձեռը դնելով դաշույնի կոթի վրա, յերդվում էր բոլորին կոտորել: Մելքոնն ու Մոսիկոն դեմքերով զանազան նշաններ էին անում միմյանց և հեղնաբար ժպտում: Բանն այն էր, որ նրանք գուշակում էին, թե ով պիտի լինի Միքայելին ծեծել տվողը:

Իրավարան Փեյքարյանը պնդում էր, թե՝ յեթե չարագործները դանվեն, անպատճառ կդատվին «за покушение на убийство»:

— Դանելը դժվար չե, հատատանն է դժվար,—յերիդմիկ ակնարկեց Մոսիկոն և, բութ մատները թաղուն դնելով ականջների ծակերը, ցուցամատները բարձրացրեց վերև:

— Ձես եղի կասեմ, վըեր ըբը խաղաղությունը լյավ պեն ա,—ասաց Պապաչան:

Զնայելով տխուր այցելության, պատկառելի ամուրին շատ ուրախ էր տրամադրված: Նա սկսեց նրա վերաբերմամբ սրախոսել, հետո նրա հետ կատակներ անել: Գրկում էին նրան, կողերին ջոկում, համբուրում, բարձրացնում վերև: Իսկ նա, ժպիտը յերեսին, կրկնում էր.

— Նուշ ա, նուշ ա···

Այդ ասել էր, թե ընկերների կատակները հաճելի չեն իրեն:

— Շտապիր չուտով վերկենալ, Մեխակ,—ասաց Մոսիկոն,—Պապաչան մեծ ճաշկերույթ պիտի տա այս որերս: Իրլանդիայից յերկու գիտնական ճանապարհորդներ են գալիս. նրանց համար ուզում է քանի-կետ սարքել և, յեթե կարելի յե, իր վիճելի նավթահողերը նրանց վրեն կապել: Ճառ պիտի ասի Բագվի համալսարանային նշանակության մասին··· Պապաչան այժմ կոսմոպոլիտ է դարձել··· Ազգասիրությունը խեր չբերեց···

Միքայելն սկզբում, քաղաքավարության համար, կեղծ ժպտում էր: Բայց չուտով ճանճրացավ խմբի չաղակրատանքից· զդում էր պարզ, որ չատերն իրեն ծաղրելու համար են յեկել, մանավանդ Մոսիկոն, որին յերբեք նա չէր սիրել: Նա չավիղեց դուրս վրդովվեց, յերբ քնահատը թղթամոլը, դիտակցաբար թե անզգուշությամբ, հիշեց Գրիշայի անունը և ակնարկեց հաշտության մասին:

— Ցերեկ, սրախոսությանդ նյութը սպառվել է,—ասաց նա խորին սրամտությամբ:

— Ինչո՞ւ, բավական կա, յեթե կամենաս:

— Ուրեմն, ինձ հանդիստ թող···

— Զեզդ պայծառախոյլություն, դնանք, մեր բարեկամը վատ է սրամադրված,—դարձավ Մոսիկոն իշխան Նիստամիձեին:

Միքայելին թվաց, որ Մոսիկոն ինչ-որ ծաղրական նշան արավ Նիստամիձեին իր վերաբերմամբ: Նրա նրբացած նյարդերն արդեն անդոր եյին հանդուրժելու ամենաթեթև ծաղրը, ուստի չկարողացավ իրեն զսպել և ասաց·

— Այո՛, շատ վատ եմ սրամադրված, միայն վոչ վեհանձն մարդկանց դեմ:

— Ի՞նչ ես ուզում ասել,—հարցրեց Մոսիկոն:

— Այն, որ հետևիցս հազար ու մի բան ես ասում, ծաղրում ինձ իրրև վախկոտի և զավես ես առիթս ցավակցություն հայտնելու: Դա մարդավարություն չե, բարեկամ···

Նկատողությունն արդարացի յեր: Մոսիկոն զգաց իր մեղքը· նա իր լեզուն չէր զսպել ընդհանրապես վերաբերմամբ նույնիսկ Սուլյանի մոտ, որ այժմ ներկա յեր և որը անզգուշություն եր ունեցել իր լսածը Միքայելին հաղորդելու: Այնուամենայնիվ, նա չուզեց խոսքի տակ մնալ և պատասխանեց·

— Ցեթե մարդավարության մասին սկսենք խոսել, կարող ենք շատ հետու դնալ, այն ժամանակ, ով դիտե, ինչ բաներ կբացվեն: Լավն են ե, որ յես լռեմ:

— Վո՛չ, կարող ես խոսել, ասա, ինչ ուզում ես,—չէշտեց Միքայելը զրդռված,—լավ կլինի, որ մի որ անկեղծ լինենք:

— Անկեղծ· վո՛չ, բարեկամ, անկեղծությունը հնացած բան է, յես վատած ապրանք առնող չեմ: Ձեմ ուզում ձեռներս կեղտոտել: Փորձիր

առողջանում է: Այրին մի փոքր հանգստացավ: Շտապեց Սմբատի հետ ուղևորվել քաղաք: Նրան թվում էր, թե Արշակի մասին քաղաքում վատ լուր է ստացվել, իրենից թաղցնում են և թե ինքը կարող է անճամբ իմանալ այդ լուրը:

Հիվանդին հանձնեցին Դավիթ Զարգարյանի խնամքին, հակառակ Սուլյանի ցանկության, վոր ձգտում էր ամեն կերպ ծառայել իր տիրոջը՝ նրա սիրտը չհեղելու համար: Հոգու խորքում ինժեներն ուրախացավ, յերբ մի քանի որ առաջ լսեց բժիշկների կարծիքը: Այժմ, յերբ Միքայելն առողջանում էր, նա բարվոք էր համարում ցույց տալ նրան անսահման կարեկցություն:

Մի գիշեր ևս խաղաղ քնելուց հետո, հիվանդը զարթնեց այնքան կազդուրված, վոր կամեցավ վոտքի վերկենալ: Սակայն բժիշկը պատվիրեց մի որ ել պառկած մնալ:

Իրիկնադեմին խմբովին այցելեցին նրան իր նախկին ընկերները, բոլորն ել բավական հարբած, բացի Պապաչայից: Այդ որը Պապաչան իր հանգերոցում ճաշ էր տվել մի յեկվոր խմբագրի, վորի լրագրում հաճախ նա անվանվում էր «Հայանի բարեգործ»:

Ֆյալիմ-բեկը ցույց տվեց, թե կատաղած է անհայտ սրիկաների դեմ: Ո՛ր, նա անպատճառ կիմանա ովքեր են այդ չարագործները և մի լավ պատժել կտա: Իշխան Նիաստամիձեն, ձեռը դնելով դաշույնի կոթի վրա, յերդվում էր բոլորին կոտորել: Մելքոնն ու Մոսիկոն դեմքերով գանագան նշաններ էին անում միմյանց և հեգնաբար ժպտում: Բանն այն էր, վոր նրանք դուշակում էին, թե ով պիտի լինի Միքայելին ծեծել տվողը:

Իրավաբան Փեչքաբյանը պնդում էր, թե՝ յեթե չարագործները գտնվեն, անպատճառ կաքսորվեն «за покушение на убийство»:

— Գտնելը դժվար չէ, հաստատուն է դժվար,—յերկդիմի ակնարկեց Մոսիկոն և, բութ մատները թաղուն դնելով ականջների ծակերը, ցուցամատները բարձրացրեց վերև:

— Ցես ելի կասեմ, վըեր ըրը խաղաղությունը լյավ պեն ա,—ասաց Պապաչան:

Զնայելով տխուր այցելության, պատկառելի ամուրին չատ ուրախ էր տրամադրված: Խումբն սկսեց նրա վերաբերմամբ սրախոսել, հետո նրա հետ կատակներ անել: Գրկում էին նրան, կոզերին բռնում, համբուրում, բարձրացնում վերև: Իսկ նա, ժպիտը յերեսին, կրկնում էր.

— Նուչ ա, նուչ ա...

Այդ ասել էր, թե ընկերների կատակները հաճելի յեն իրեն:

— Շտապիր չուտով վերկենալ, Մեխակ,—ասաց Մոսիկոն,—Պապաչան մեծ ճաշկերույթ պիտի տա այս որերս: Իրլանդիայից յերկու գիտնական ճանապարհորդներ են գալիս. նրանց համար ուզում է բանի-

կետ սարքել և, յեթե կարելի յե, իր վիճելի նավթահողերը նրանց վրեն կապել: Ճառ պիտի ասի Բաքվի համաշխարհային նշանակության մասին... Պապաչան այժմ կոսմոպոլիտ է դարձել... Աղգասիրությունը խեր չբերեց...

Միքայելն սկզբում, քաղաքավարության համար, կեղծ ժպտում էր: Բայց չուտով ճանճրացավ խմբի չաղակրատանքից. զգում էր պարզ, վոր չատերն իրեն ծաղրելու համար են յեկել, մանավանդ Մոսիկոն, վորին յերբեք նա չէր սիրել: Նա չափից դուրս վրդովվեց, յերբ քնահարը թղթամոլը, գիտակցաբար թե անզգուշությամբ, հիշեց Գրիշայի անունը և ակնարկեց հաշտության մասին:

— Ցերևի, սրախոսությանդ նյութը սպառվել է,—ասաց նա խորին սրտմտությամբ:

— Ինչո՞ւ, բավական կա, յեթե կամենաս:

— Ուրեմն, ինձ հանգիստ թող...

— Ձկրդ պայծառափայլություն, դնանք, մեր բարեկամը վատ է տրամադրված,—դարձավ Մոսիկոն իշխան Նիաստամիձեին:

Միքայելին թվաց, վոր Մոսիկոն ինչ-վոր ծաղրական նշան արավ Նիաստամիձեին իր վերաբերմամբ: Նրա նրբացած նյարդերն արդեն անզոր եյին հանդուրժելու ամենաթեթև ծաղրը, ուստի չկարողացավ իրեն զսպել և ասաց.

— Այո՛, չատ վատ եմ տրամադրված, միայն վոչ վեհանձն մարդկանց դեմ:

— Ի՞նչ ես ուզում ասել,—հարցրեց Մոսիկոն:

— Այն, վոր հեռևից հաղար ու մի բան ես ասում, ծաղրում ինձ իբրև վախկոտի և պատիս ես առերես ցավակցություն հայտնելու: Դա մարդավարություն չէ, բարեկամ...

Նկատողությունն արդարացի յեր: Մոսիկոն զգաց իր մեղքը. նա իր լեզուն չէր պահել ընկերոջ վերաբերմամբ նույնիսկ Սուլյանի մոտ, վոր այժմ ներկա յեր և վոր անզգուշություն եր ունեցել իր լսածը Միքայելին հաղորդելու: Այնուամենայնիվ, նա չուզեց խոսքի տակ մնալ և պատասխանեց.

— Ցեթե մարդավարության մասին սկսենք խոսել, կարող ենք չատ հեռու գնալ, այն ժամանակ, ով գիտե, ինչ բաներ կբացվեն: Լավն են ե, վոր յե՛ս լռեմ:

— Վո՛չ, կարող ես խոսել, ասա, ինչ ուզում ես,—չեշտեց Միքայելը դրդռված,—լավ կլինի, վոր մի որ անկեղծ լինենք:

— Անկեղծ. վո՛չ, բարեկամ, անկեղծությունը հնացած բան է, յես վատած ապրանք առնող չեմ: Ձեմ ուզում ձեռներս կեղտոտել: Փորձիր վատած ապրանք առնող չեմ: Ձեմ ուզում ձեռներս կեղտոտել: Փորձիր

մի րոպե անկեղծ լինել և կանանես տակից ինչ հասած ձկներ են դուրս գալիս:

Ակնարկը պարզ էր և հասկանալի: Միքայելն տվեալի վրդովվեց:

— Ձերդ պայծառափայլություն,—դարձավ նա կծու հեգնությամբ իշխան Նիստամիձեին,—այս խոսակցությանը վերջ տալու համար, չե՞ք կարող մի քան պատմել Թիֆլիսի անգլիական կլուբի կյանքից:

Մոսիկոն ցնցվեց: Պատմում էլին, վոր մի որ նա անգլիական կլուբում, Թղթախաղի ժամանակ ինչ-վոր թեթև զեղծումն է թույլ թվել էլեն: Նկատել են և քաղաքավարությամբ վռնդել կլուբից:

— Մեր Բաղմում աշնքան խոսելու նյութ կա,—նկատեց նա չափազանց վերամբարձ,—վոր կարծեմ, Թիֆլիս դնալն ավելորդ է:

— Որինա՞կ,—հարցրեց Միքայելը, ջրծունքները կծոտելով:

— Որինակ, մի՞թե խոսակցության առարկա չի՛ կարող լինել, թե ինչո՞ւ մեզանում կանայք յերբեմն բեղեր են ունենում, կամ ինչո՞ւ մի քանի խանութպան կարողանում է սրիկաների մի ջոգով ՕՖԻՑԵՐ դեր կատարել...

Բոլորը լուռ նայեցին միմյանց յերեսին, հետո Միքայելին: Նկատողությունը վերին աստիճանի հանդուգն էր և ծռնալի: ամենքը սպասում էլին Միքայելի ավելի վերամբարձ պատասխանին: Ֆյոդիմ-բեկը բեղերը հանուլքից սրում էր, վոր վեճի ամենախիտ պահին պիտի առիթ ունենար միջամտելու և, ընկերներին նախատելու: Իշխան Նիստամիձեն զեմքով նշաններ էր անում Մոսիկոյին, վոր լռի: Իսկ Պապաչան, չոլից հոգնած վոչխարի պես, գլուխը դես ու դեն էր ծռում: Նա ուրախ կլիներ ազատվել անախորժ վեճին վկա լինելուց. զարմանալի մարդիկ են այդ «ջահելները», ամեն-մի չնչին բան նրանց սրտին դիպչում է:

Միքայելը մի վայրկյան դողալով, գրգռված, նայեց հակառակորդի յերեսին, ապա նրա կատաղությունն ավելի ընդարձակվեց և տարածվեց դեպի բոլոր ընկերները:

— Ի՞նչ եք ուզում ինձանից,—գոչեց նա, ինքն էլեն մոռանալով,—ինչո՞ւ չեք լսելել, ո՞վ է ձեզ խնդրել գալու: Գնացե՛ք, ձեր բոլորի բարեկամությունն ինձ ձանձրացրել է, գնացե՛ք... Դուք իմ ընկերները չեք...

Այդ անսպասելի հարձակումը բոլորին ապշեցրեց. վիրավորողը մենկն էր, իսկ Միքայելը կատաղում էր ամենքի դեմ:

— Ծամաշ, յամաշ,—ասաց Ֆյոդիմ-բեկը հեգնարար,—մենք ի՞նչ մեղք ունենք:

— Դուք բոլորդ նման եք միմյանց, բոլորդ...

— Աֆերիմ, ուրեցի պարզախոսության, աֆերիմ, իմ արևը, գրգռանն ես ասում:

— Իհարկե, ըրը գրգռանն է ասում,—փորձեց Պապաչան վիճը կատակի դարձնելու,—մենք լա ըրը մարդ չենք մարդանման, վերը ըրը...

— Պարոննե՛ր,—մեջ մտավ Մելքոնը վիրավորված,—յես հասկանում եմ, ինչու յես մեր ընկերությունն Ալիմյանին ձանձրացրել: Յես այստեղ սև նավթի փոխարեն, այսպես ասած, մանիլյակի անուշ բուրմունք են գզում, քարմուհյուն, անմեղություն: Հըմ, Սուլյան, ինչո՞ւ յես գես ու դեն մտիկ անում: Կարծեմ, ամենից առաջ գու յես հասկացել բանի եությունը: Հիշո՞ւմ ես ասածներդ...

Ինժեները նեղն ընկավ: Բանն այն է, վոր նա հարուստ յերիտասարդների անչափ հետաքրքրությանը գոհացում տալու, նրանց գուր գալու և, վոր ամենագլխավորն է, Դավիթ Զարդարյանին մի քիչ վրեժխնդիր լինելու համար, ինչ-վոր վատ ակնարկներ եր արել Շուշանիկի վերաբերմամբ:

Մելքոնի անզգույշ խոսքերը նրան վախեցրին: Շեփորված նայեց Միքայելի ալլայլված դեմքին և խոսակցությունը կարելու համար, ասաց.—

— Պարոննե՛ր, ինչո՞վ կկամենաք ձեզ հյուրասիրեմ:

— Բավական է, ինչքան հյուրասիրվեցինք, գնա՞նք,—ասաց Ֆյոդիմ-բեկը:

— Ծալա գնա, ըրը, չահվներ եք, ըրը ցտեսություն, Միխայլչան, վազը յերկաց, ըրը մաս յեկ,—արտասանեց Պապաչան, ոտակավին չկամենալով լուրջ նշանակություն տալ ընկերների վեճին:

Բոլորը դուրս գնացին: Ֆյոդիմ-բեկը յերգում էր.

— Բլլ մզած սը ռազամի՛, բիլ ոն մալաթցա՛...

Միքայելը վշտի կանդնեց կատաղած: Բայց ուշ եր. Ֆյոդիմ-բեկի ձայնն արդեն դրսից եր լսվում:

— Անպիտանննե՛ր,—գոռաց Միքայելն այնպես, վոր բոլորը լսեցին նրա ձայնը...

VI

Վերջապես, վոտակնանության հայտնեց, թե Աբշակը գտնվել է Թիֆլիսում և չուտով կհանձնվի ընտանիքին: Փախստականին բռնել եյին հենց այն միջոցին, յերբ մի քանի վոտով կնոջ հետ Թև-Թևի տված Թատրոն եր մտնում: Անծանոթ կինն անհետացել եր, իսկ Աբշակին հետախույզն իսկ ուղարկել եյին բացու:

Պատանուն տուն բերելին կատղով յերկու վոտակիանները: Նրա աչքերի կոպերը յերկար անքնության ուռել եյին, դեմքն ավելի թխացել: Հիշեցնում եր անասուն, անտեր և հասարակական տորթին խավերում դեգերող մի չրջմոլիկի:

Վոտկհատը հեգնությամբ հարձակվեց նրա վրա, բեղմեց կրծքին:

կշտամբեց, բայց միայն այն պատճառով, որ մորը չէր հայտնել, թե ուր է գնացել: Անվերջ համբույրներով արտահայտեց Թուլասիրտ ծնողի անվերջ ներողամտությունը: Նրանից, Արշակը ղռաց, թե դեռ կարող է ընդդիմադրել ավազ յեղբորը: Ահա ինչու չատ էլ չվախեցավ, յերբ Սմբատը դրեթե ուժով քաշեց, տարավ նրան մի խուլ սենյակ:

Մեծ յեղբայրն ատիպում էր ամեն ինչ խոստովանել, փոքրը համառում էր: Արշակը վոչ վոքի պարտավոր չէ հաշիվ տալու. նա ազատ է, ինքնագլուխ:

— Ձեռ քաշիր ինձանից, յես ստրուկդ չեմ,—ղոչեց նա, փորձելով փախչել:

— Այստեղից դուրս չես գնալ, մինչև վոր չես խոստովանիլ մեղքդ:

Արշակի աչքերը պսպղացին, բռունցքները սեղմվեցին:

— Թո՛ղ ինձ, ասում եմ, թո՛ղ,—զոռաց նա, վոտները հատակին զարկելով:

— Ցերթե չես խոստովանիլ, պոլիցիային կհայտնեմ գողությունդ, քեզ կբռնատարկեն ու հետո կաքսորեն:

Սպառնալիքը ներգործեց. Արշակը վախեցավ և խոստովանեց, թե ինքն է կոտրել սեղանի դարանը և փողերը վերցրել: Դա գողություն չէ, այլ «վերցնել». հարկավոր եր, վերցրեց, իր հոր փողերն են, ուրիշինը չեն:

Մոտ յերեք հազար ռուբլուց նրա գրպանում մնում էլին յերկու հարյուրանոց և մի քանի հատ մանր թղթադրամներ: Կարևորը Սմբատի համար փողը չէր, այլ ախուր փաստը. այն, թե ո՞վ է յեղել գողության մասնավոր չարժառիթը և ո՞ւմ վրա յեն փողերը ծախսվել: Այս կետի վերաբերմամբ Արշակը ցույց տվեց զարմանալի համառություն:

— Քեզ հետ կին է յեղել,—պնդում եր Սմբատը:

— Չի՛ յեղել, չի՛ յեղել, չի՛ յեղել,—կրկնում եր Արշակը:

Սմբատը վճռեց դիմել ստի ողնության: Նա ասաց, թե «այդ կինը» բռնված է և այժմ բանտում նստած: Արշակը ցնցվեց. աչքերի ուռած կոպերը բարձրացան վերև, անչարժ մնացին, քթի պնչերը կապտեցին ու սկսեցին դողալ: Կուրծքն ուժգին բարձրանում եր ու ցած իջնում:

— Ի՞նչ ասացիր,—ղոչեց,—Զինաիդան բանտո՞ւմն է, իմ Զինա՞ն, այդ անկարելի յե...

— Այո՛, քո Զինան, այդ քնքուշ ու սիրուն կինը հիմա նստած է բանտում՝ գողերի ու մարդասպանների հետ:

— Անաստվածնե՛ր, նա մեղավոր չէ, յես եմ մեղավոր, յես եմ փողերը գողացել ու ծախսել: Նրա մոտ յեղած փողերն իրենն են, հոր-

րից է ստացել... Ցես նրան փող չեմ տվել, այո՛, չեմ տվել. նա ինքը հարուստ է...

Արդեն այս խոսքերով Արշակն իրեն մատնում եր:

— Բայց ո՞վ է այդ Զինաիդան, վո՞րտեղացի յե, ի՞նչ պատուղ է:

— Պատուղ չէ՛, պարոն, հարսնացուս է, հասկացի՛ր, հարսնացուս:

Այժմ ցնցվողը Սմբատը յեղավ: Ահա ինչ, ուրեմն այդ պատանին հարսնացու յել ունի:

— Ինչո՞ւ չպիտի ունենամ, ումի՞ց եմ պակաս, կամ ո՞վ կարող է ինձ արգելել: Ցես պիտի Զինայի հետ Թիֆլիսում պսակվեյի, հենց դրա համար եյի գնացել: Ինչո՞ւ չհողեցիք... Ցես նրան աղնիվ խոսք եմ տվել, պիտի կատարեմ, ինչպես Ջենտլմեն, թեկուզ բանտ գցեք, կախաղան բարձրացնեք, պիտի կատարեմ: Սիրում եմ Զինային, հասկանո՞ւմ ես, ինչ ասել է սեր... Ո՛ո, յես ինձ կսպանեմ, յերեք մեղ բանաժեք...

«Աղնիվ խոսք» է տվել և այդ աղնիվ խոսքը տանուվեց տարեկան պատանին կատարում է գողության միջոցով:

— Բայց գոնե ասա. ի՞նչ չըշմանի աղջիկ է այդ Զինան, ո՞վ է...

— Նրա ծնողները Մոսկվայումն են: Շատ աղնիվ աղջիկ է: Այո՛, տեղ առաջ մի լավ բնատնիքում գուվերնանտկա յեր: Ցես ստիպեցի, վոր պաշտոնը թողնի: Այստեղ Զինայի պես աղջիկ չկա, ֆրանսերեն խոսում է, ինչպես փարիզուհի: Ինձ էլ սովորեցնում է. ի՞նչպես կարելի յե այնպիսի աղջկան բանտ գցել: Ցես ուզում եմ նրա հետ պսակվել և պիտի պսակվեմ: Ծիծաղում ես հա՞, բաս ինչո՞ւ դու պսակվել և պիտի պսակվեմ: Ծիծաղում ես հա՞, բաս ինչո՞ւ դու պսակվեցիր առանց ծնողներիդ կամքի և հակառակ մեր կրոնի: Իմ Զինան էլ վեցիր առանց ծնողներիդ կամքի և հակառակ մեր կրոնի: Իմ Զինան էլ քո կնոջ պես կլթված է: Ի՞նչ էլը մտածում. պիտի գնայի ու մի քո կնոջ պես կլթված է: Ի՞նչ էլը մտածում. պիտի գնայի ու մի քոթի մազ հայ աղջկա հետ պսակվեյի, վոր բերանից սխտորի հոտ փչեր, քոթի մազ հայ աղջկա հետ պսակվեյի, վոր բերանից սխտորի հոտ փչեր, փի դոն, մովե...

Սմբատը չդիտեր ծիծաղեր, բարկանար, թե՞ գժատուն ուղարկեր յեղբորը: Այնինչ, Արշակը քանի գնում խրոխտանում եր: Սկսեց պատմել, վոր իսկույն, առանց մի րոպե հետաձգելու, հարսնացուին հանջ

յերբ մեծերը և ուժեղները պահկներին և թուլերին ստրկացնում էին: Մի՛ կարծիլ, թե մենք Ասիայումն ենք պատրում, ուրեմն ամեն բան կարելի չե անել: Այժմ անհատական ազատության ժամանակին է, ամեն նուաճողների դարի վերջը, հապա՞ւ ես. փեն դը սիեկլ...

— Փեն դը սիեկլ,—կրկնեց Սմբատը դառն ծիծաղելով,—ախ, մի՛ այն, վոր այդ «փեն դը սիեկլը» կլինի և՛ քո կյանքի վերջը, և՛ ամեն յերջանիկ չես հանդիպել քառասերոտ դարին: Նայի՛ր հայելուն. մի՞թե չես զգում, վոր վոտքի վրա կենդանի փտում ես, ամբողջ մարմինդ վոր նել է... Մի՞թե չդիտես, վողորմելի...

— Իսկի յել չեմ փտում: Դու կարծում ես նա չե մարդ, վոր վոր ու կարմիր թշեր ունի: Ներողություն, մեր դարը ներելային է, պրացում ունեցողներն ու մտածողները միշտ լինճ պես պիղծ լինում: Գալով հիվանդությանս, ե՛ս սովորական բան է: Դու լինճ սա, վո՛ր արիստոկրատն է մեր ժամանակում ազատ իմ ախորժ...

Նա խոսում եր այնքան մոգևորված և այնքան լուրջ, վոր ակա չարժեց յեղբոր ծպտուն: Բայց շուտով Սմբատի արյունը պարծյալ պա խփեց, և նա պոչեց.

— Լռի՛ր, աներես, լռի՛ր, քանի վոր խելքս գլխիս է:

Ներս վազեց այրի Վռամհատը և, ընկնելով վորբիների մեջ, սկսե պաշտպանել Աբջակին: Նա կարծում եր, թե Սմբատն ուզում է բարը ծեծել:

— Ձերնհաս պետ չի հանգստացել,—ասաց նա, մի ձեռով պրկելով Աբջակին,—ո՞վ գիտե, քաղցածել է, դու խրատելու ժամանակ պետ:

— Ա՛խ, մայրիկ,—պոչեց Սմբատը խորին հանդիմանությամբ,— այդ ազգին փչացնողը հենց դու յես: Այդքան յերես տալ չի լինի Ջեմ հասկանում, այդ ինչ մայրական սեր է...

— Բնդ եմ սիրել, վորդի,—հառաչեց այրին,—բայց տառապան տարիների չկամքը, հայրդ քեզ խլեց ինձանից, ուզարկեց տատ յե կիր: Ասաց. «Քոզ պետ, հետս լինի փչացած ընկերներից, մարդ վարի մարդկանց մեջ ապրի»... Տվեց քեզ Մատևոսյանի հարազատներին: Տարիներ յերկու ամսով յերեսդ ցույց եյիր տալիս ինձ ու հետանում, արտասուքն աչքերումս թողնելով: Սիրում եյի քեզ տեսնել պես, բայց վոր հետացար, սկսեցի մխիթարվել Մխիթարով հետս Աբջակով: Լա՛վ կըմեցին քեզ, ինչ ասեմ, լա՛վ մարդկանց ապրեցիր: Ելեցին քեզ ծնողներիցդ, ոտարացրին, զնացիր, պատվո համարը խայտառակեցիր: Դու լինճ համար կորած եյիր, ինչ անեի վոր մյուս վորդիներիս չսիրեյի: Աբջակ, Աբջակ, արա, ինչ-վոր դում ես, բայց մի բան չանես—յեղբորդ որինակին չհետևես: Վայ ու քո հոր գերեզմանին, յեթե դու յել նրա ճանապարհով գնաս:

կարող ես քեզ ուղղել, Սմբատը չի կարող. հիմա տեսնում եմ, որ չի կարող, այ իմ ցավն ու տանջանքը:

Նա սկսեց արտասվել, գլուխը դնելով փոքր վորդու ուսերին: Սմբատը լուռ դուրս գնաց: Նա լռեց, վորովհետև զգաց, վոր այդ իր տեսակետից միանգամայն իրավացի յե, լռեց, վորովհետև զգաց, վոր հիշյա՝ իր սխալն անուղղելի յե:

Հետևյալ որը, կանուխ զարթնելով, նա ուղևորվեց հանքերը: Մխիթարն արդեն վեր եր կացել անկողնից, միայն ճակատի վերքը ապած եր թաշկինակով:

— Գնա՞նք քաղաք,—առաջարկեց Սմբատը:

Մխիթարն աչքունքը թթվեցրեց. նա չեր ուզում քաղաք տեղափոխել: Բայց ի՞նչ ասուտ. Շուշանիկն այլևս չեր յերևում: Ցեվ առավոտ արևի զուլ եյին նրա աչքերը վորոնում որիորդին. այժմ կերակուր թեյ մատուցանում եր տիկին Աննան:

Սրդեն անհարմար եր մնալ տատ հարկի տակ. թեև բնակարանը ազատնին եր, բայց Մխիթարի ծոտայում եր Զարդարյան ընտանիքը:

Դուրս գալուց առաջ Մխիթարն անգամ անգամալույծ սենյակը, տեղեկացավ առողջության մասին: Շնորհակալությունն հայտնեց բոլորին, որ այնպես խնամել եյին նրան: Յերբ հերթը հասավ Շուշանիկին, Մխիթարի գունատ դեմքը մոայլվեց:

— Գիտե՞ք, ինձ դուք ապատեցիք մահից,—ասաց նա, անվստահ դնդմելով որիորդի ձեռը:

Դա նրա սրտի բոլոր թեպատրությունն եր, վորին չկարողացավ համանալ:

Քաղաքից նա Զարդարյանների համար ուղարկեց նվերներ, չմոռանալով յերեխաներին և անգամալույծին: Շուշանիկի համար ընտրել վոսկե ապարանջան՝ ադամանդներով զարդարված: Ցեվ վորպեսզի նվերը նվերը չմերժի, նա ուղարկեց վոչ իր, այլ մոր կողմից:

— Այժմ դու պիտի քաղաքումն ել ինձ ողնես,—զարձավ մի որ Մխիթարը Մխիթարին,—զործարանն ուզում եմ բանեցնել, մենակ եմ, չեմ կարող բոլոր զործերին հետևել:

Մխիթարը մտածեց մի փոքր և պատասխանեց.

— Ուրախությամբ կկատարեմ, ինչ զործ վոր կունենաս: Բայց նշանդրեյի, վոր Սուլյանին տեղափոխես քաղաք, իսկ ինձ նշանակես հանքերի կառավարիչ:

Այն մարդը, վոր առաջ յերկու ժամ չարունակ չեր կարողանում հանքերում հանդարտ մնալ, այժմ ուզում եր այնտեղ ապրել: Շահը չատ պարզ եր Սմբատի համար:

— Լավ,—ասաց նա,—արա՛, ինչպես ուզում ես:

Նույն որը Լեթ Միքայելն առ միշտ տեղափոխվեց հանքերը:

Տխուր դեպքերը հաջորդում եյին միմյանց: Սմբատը դրեթե ամեն որ վորևե առիթով ընդհարվում եր կնոջ հետ:

Թաթախման որն եր: Իրիկնադեմին Վռոկեհատը, լուսամուտ առջև նստած, նայում եր դեպի փողոց: Լսվում եր մերձակա յեկեղեցու տոնային ուրախ դանդահարությունը: Այսոր ծանոթ հնչյունները նրան պատճառում եյին անսահման տրամություն: Այսոր առաջին անգամ նա պիտի նստեր ուրախ սեղանի առանց ամուսնու: Բայց այս չեր նրա դառնության բուն հիմքը: Նայում եր յեկեղեցի չտապողներին և տխուր հառաչում. մերթ աչքերը վեր բարձրացնելով, մերթ գլուխը չարժելով: Մնողներն իրենց յերեխաների և տատերն ու պապերն իրենց թոռների ձեռներից բռնած, ուրախ-ուրախ գնում եյին յեկեղեցի: Միայն Վռոկեհատն և դուրկ ընդհանուր բախտից, և ինչո՞ւ, տեր աստված, ինչո՞ւ, չե՞ վոր նա ևս տատ է, թոռնիկներ ունի:

Հանկարծ նա աչքունքը սեղմեց, տեսողությունը լարեց, յերեսը մոտեցնելով լուսամուտ ապակուն: Տիկին Մարթան, գլխին մի խայտաբղետ մեծ գլխարկ, վորի մի գույզ բարձր վիճուրները դողդողում եյին, ինչպես զրազուների «սուլթան», ուրախ-ուրախ խոսելով, անցնում եր մի դեղեցկազգեստ յերիտասարդի հետ: Անծանոթին ինչ-վոր ասում եր, տիկինը ծիծաղում եր, աչքերը կոկետաբար ճաճակելով:

Տեսարանը չատ անախորժ թվաց այրուին: Նա ավելի ուշադիր նայեց. տիկինը կանգ առավ, յերիտասարդն ամուր սեղմեց նրա ձեռը, խորհրդավոր ժպտալով: Նրանք բաժանվեցին, և տիկինը, իր չրջազգեստի փեչերը կոկետուհու պես բարձրացնելով, վոր ցույց տա մեծաքայա ասեղնագործ նեղքնաղեստը, անցավ դեպի մյուս մայթը: Մի քանի րոպե անցած, դռները բացվեցին, և չեմքի վրա յերևաց Մարթան պճնված, ինչպես ծաղկած նռնենի:

— Տա՞ռն է,—հարցրեց նա, դեմքը ծռմռելով այնպես, վոր այրին հասկանա, թե խոսքն Անտոնինա Իվանովնայի մասին է:

— Աստված վոչ պիտե,—պատասխանեց մայրը դառնությամբ:

— Կոլիայիս ուղարկեցի բոննայի հետ յեկեղեցի. յեկել եմ Սմբատի յերեխաներին էլ տանելու: Այսորվա որը Թոռներդ պիտի այնտեղ լինեն, վոր թշնամիներդ չուրախանան: Հրամայիր, վոր բերեն նրանց այստեղ:

Այրին կանչեց Անտոնինա Իվանովնայի ազախնին, հրամայեց յերեխաներին տոնային հագուստ հագցնել և բերել իր մոտ: Ազախինը վոչինչ չասաց. վկա լինելով ընտանեկան անվերջ խռովություններին, գիտեր, վոր պատավի ցանկությունը կարող է դուր չգալ իր տիրուհուն: Այսպես էլ յեղավ. Անտոնինա Իվանովնան մերժեց յերեխաներին տեսնելի մոտ ուղարկելու, իմանալով, վոր Մարթան է պահանջողը և ինչո՞ւ համար:

— Տեսա՞ր, տեսա՞ր,—գոչեց Մարթան չարախնդությամբ,—պըրծանք, ել մնաք բարով ասա Թոռներիդ:

Այրին պահանջեց իր մոտ Սմբատին, յեղելությունը պատմեց:

— Խե՛ղճ մարդ, խե՛ղճ մարդ,—գրգռեց Մարթան յեղբորը,—սանձըդ ավել ես ձեռը, վորտեղ ուզում է,—քշում է, խե՛ղճ մարդ: Գոնե այսորվա որը նա խնայեր քեզ:

— Զարմանում եմ, ինչո՞ւ համար եք դատարկ բաների համար ահագին աղմուկ հանում: Մի՞թե մխիթարն չե, յերեխաներն այսո՛ր կղնան յեկեղեցի, թե վաղը կամ բոլորովին չեն գնալ:

— Պրծա՛նք, պրծա՛նք,—կրկնեց Մարթան, մշտաշարժ մեքենայի պես պտույտ-պտույտ անելով աթոռի վրա,—այսուհետև քրիստոնեությունը մոռանանք ելի, ի՞նչ կա:

— Մարթա՛, տատն անգամ խնդրել եմ, վոր կրակի մեջ յուղ չածես, վատ բան է:

— Մարթան մորդ և խղճում, հասկանո՞ւմ ես, մորդ...

— Խնդրում եմ, լռի՛ր, լռի՛ր, յեթե չես ուզում, վոր ինձ կատաղեցնես: Դու չար սիրտ ունիս...

Մարթան չարությունից կաստել եր, մի գույն ևս ավելացնելով իր բազմազույն հագուստին:

— Ա՛խ, անբախտ կնիկ,—գարձավ նա մորը,—ի՞նչ չար աստղի տակ ես ծնվել, վոր այսպես տանջվում ես:

— Լսի՛ր, ինչ եմ ասում, Մարթա. յեթե այս տան մեջ դու միշտ պիտի խռովարարի դեր կատարես, լավ կանես, վոր այլևս չգաս այստեղ: Մարդը քեզ բոլորովին հիմարացրել է. յես չատ լավ գիտեմ, թե նա ինչու յե ջուրը պղտորում, բայց նպատակին չի հասնիլ: Միքայելը նրան արդեն ճանաչել է, հույս ունիմ, վոր դու յել, վերջապես, մի որ կճանաչես:

Ասաց և անցավ կնոջ բնակարանը: Այստեղ ազատություն տվեց սրտի անսահման դրդիռին: Մինչև ի՛նչը պիտի չարունակվի այդ կնոջ կամակորությունը: Գալու որից բոլորին լարեց իր դեմ, իսկ յեկավ նախապաշարված: Զմտածեց, վոր կրակը կրակով չեն հանդցնում: Մոռացավ, վոր այստեղ բոլորը վաղորոք լարված և նախապաշարված եյին իր դեմ: Ինչո՞ւ չհարդել մի նահապետական կնոջ նույնիսկ անեկին իր դեմ: Ինչո՞ւ չհարդել մի նահապետական կնոջ նույնիսկ անմիտ ամանդությունները: Այդ ի՞նչ հիմար գժտություններ են. վերջապես, չե՞ վոր մեկն ու մեկը պիտի հարմարվի մյուսի կամքին, յեթե չեն կարող հաշտեցնել իրենց քմքերը:

— Ցավ դու ուզում ես, վոր յե՞ս լինեմ հարմարվողը,—գոչեց հեգնաբար Անտոնինա Իվանովնան,—այդ անկարելի յե: Ինչո՞ւ միշտ ինձ պիտի վիրավորեն, և յես լռեմ: Այդ պատավն ամեն որ անիծում և իր բախան այն գլուխով, վոր դուք ամուսնացել եք հակառակ իր

հայացքների: Նա կարող է պահպանել ձեր սրածը, բայց ինչո՞ւ պիտի պահպանի ինձ, թե երբ ես խաբել եմ ձեզ ու մոլորեցրել: Դո՞ւք սերեցիք ինձ, թե՞ ես. դո՞ւք եյիք իմ վտանգների առջև չոքած խնդրում, որ կյանքս կապեմ ձեր կյանքի հետ, թե՞ ես: Մի՞թե մոռացել եք ձեր սիրո յերդումները. ինչո՞ւ չեք ասում այդ կնոջը ճշմարտությունը: Փառք ասածս, այն ժամանակ յերևիա չեյիք, խելք ունեյիք ձեր գլխում, ինչո՞ւ խաբվեցիք... Սմբատ Մարկիչ, Սմբատ Մարկիչ, ինձ մեղադրում են, որ փոքի համար եմ ձեզ հետ ամուսնացել: Դա վիրավորական է: Ձես հարուստ ծնողների դավակ չեմ, բայց... հպարտ եմ, որ ձեզ հայանի չեմ: Հանգցրե՛ք ձեր մորն ու քրոջը, որ ես ձեր հարստության համար չեկա այստեղ, այլ միայն յերևիաներիս պատճառով: Նրանք կարոտում եյին իրենց հորը, նրանց հայրը ձեր հարկավոր, և ես իրավունք չունեյի չբերել այստեղ: Հանգցրե՛ք այդ կանթեղը, որ ես արհամարհում եմ ձեր մխիթարները...

Նրա ձեռները դողում եյին, աչքերի մեջ պսպղում եր խորը վիրավորված հպարտության կայծը: Նա խոսում եր անկեղծ և հոգու խորքից:

— Դիտե՞ք ինչու համար յերևիաներին չթողեցի յեկեղեցի գնալ,— շարունակեց նա,—վորովհետև պահանջողը և ձեր մորը դրդողը ձեր քույրն եր: Այդ կինն ուզում է իմ գլխին բռնակալ դառնալ: Ձես յերբեք թույլ չեմ տալ, վոր ազիտությունն իշխե ինձ վրա: Ձես վոչ ձեր կրոնի դեմ եմ և վոչ ձեր ավանդություններին, ինձ պեհապարոզը միայն և միմիայն իմ ինքնասիրությունն է, իմ հպարտությունը: Ինչպես ձերոնք չեն ուզում սարկանալ, յես ևս չեմ ուզում...

Դեմքի վորոշ կնճիռները, ձայնի ղորությունը և աչքերի մեջ փայլող հակակրությունը դեպի նոր չրջանը—ավելի չարացրին Սմբատին:

— Ա՛խ, սիրելին,—ասաց նա,—նախանձելի չե այն մարդու դրությունը, վորի կինը համառությունը կամքի ուժ է համարում, իսկ չարությունը՝ բարոյական պնդքար: Ձեր բոլոր գժբախտությունն առաջանում է ձեր հոգու թերի ուղղությունից և մտքի ծուռ կրթությունից: Դուք ավելի բախտավոր և ավելի լավ կին կլինեյիք, յեթե չլինեյիք այդքան ուսում առած: Ճշմարիտ, մարդ կամա-ակամա մոռանում է, ձեզ ճանաչելով, վոր կնոջ գլուխն առհասարակ չափավորից ավելի ուսում տեղավորելու ընդունակ չե:

— Մի՞թե,—հեգնեց Անտոնինա Իվանովնան,—դուցե սխալվում եք, դուցե մենք միայն ընդունակ չենք, իսկ ձեր կանայք... ո՛ո՛...

— Ահա, տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք: Ի՞նչ ասել և «մենք, դուք», «մերը, ձերը»: Մի՞թե չեք կարող դեթ մի րոպե մոռանալ այդ տարբերությունը:

— Ձեմ կարող, վորովհետև ամեն րոպե ինձ հիշեցնում են: Ձե՞ վոր ձեր մոր, քրոջ ու բոլոր ազգականների հակակրանքը դեպի ինձ հենց այդ կետի վրա յե հիմնված: Մի՞թե յես կույր եմ, խուլ եմ կամ հիմար և չեմ հասկանում քամին վո՞ր կողմից ե փչում:

— Ցեթե հասկանում եք, լռեցե՛ք. յեթե չեք կարող լռել, հաշտվեցեք ձեր ճակատագրի հետ:

— Այսինքն...

— Այսինքն այն, ինչ-վոր մի քանի անգամ առաջարկել եմ ձեզ. տվեք յերեխաներին ինձ և գնացեք այնտեղ, ուր ձեր կամակորության համար կարող եք ասպարեզ գտնել: Ինչպես դուք եք համառ, յես ել եմ ուզում համառ լինել նույնիսկ իմ չրջանի նախապաշարմունքների վերաբերմամբ:

Մի գառն, յերկարատև ու թունալի ծիծաղ յեղավ Սմբատի պատասխանը: Հետո Անտոնինա Իվանովնան թուլացած ընկղմվեց բազկաթոռի վրա: Կամ այդ մարդը չարամիտ է և կամ հարբած, ուրիշ կերպ չեր կարող այդ խոսքերն ասել: Սակայն նա դիտեր, վոր Սմբատը վոչ հարբած եր և վոչ այն: Գիտեր, վոր անսահման սիրելով իր զավակներին, չատ անգամ այնպիսի խոսքեր ե արտասանում, վորոնք հակառակ են իր իսկ առողջամտության:

Սմբատը հուզմունքից բռունցքները սեղմել եր դլխին, կարծես, այսպիսով աշխատելով մեղմացնել ուղեղի մեջ անգամ տարածված ցավը:

Դռներն ուժգին թափով բացվեցին, ներս վազեցին Վասիան և Անլյոշան, մխմայից հրելով ու բարձրաձայն ծիծաղելով: Տեսնելով ծնողներին իրարու կատաղած նայելիս, լռեցին և քաշվեցին իրենց տեղերում: Նայում եյին վախեցած մերթ մոր, մերթ հոր յերեսին: Ալյոշան մոտեցավ կամացուկ մորը, վորի արտասվալի աչքերը չարժեցին նրա սիրտը:

— Մամա, ելի այդ կոպիտ հայերը քեզ վիրավորե՞լ են,—ասաց Վասիան, բռնելով մոր ձեռը:

— Այո՛, ձեզ ուզում են ինձանից բաժանել,—պոչեց Անտոնինա Իվանովնան, ջերմ համբուրելով նրանց:—Նո՛ւ, տեսնո՞ւմ եք, ում են սիրում,—դարձավ նա Սմբատին:

— Այդ ուրիշ վոչինչ չի ցույց տալիս, յեթե վոչ ձեր եգոիզմը: Ուշադրություն դարձրեք այդ մանկան հարցի վրա. դուք այդ անմեղ յերեխաների մեջ զարգացնում եք առելություն դեպի ինձ և մերոնք Դուք... դուք դողանում եք նրանց անպաշտպան զգացումները:

Ցեվ համբերությունը կորցնելով, բռնեց յերեխաների թևերից, ուժով քաշեց իր կողմը:

Անտոնինա Իվանովնան արձակեց մի թույլ ճիչ և ամուր գրկեց յերեխաներին: Սմբատը մի քայլ հետ կանգնեց, դադց, վոր չափա-

զանցուքյան և հանում: Բայց ի՞նչ սոսկալի դրուքյուն. տեսնել սիրելի զավակներին անխղելի կապով կապված մի սաեղի դարձած կնոջ հետ, չկարողանալ հաղթել սաեղուքյունը, չկարողանալով նաև բաժանվել սաեղիից:

Նա ընկղմվեց աթոռի վրա, ձեռները ճակատին սեղմելով և գոչեց.

— Վորքա՜ն սխալվեցի, տեր—աստված, վորքա՜ն սխալվեցի...

Տեսարանը տեղի ուներ միջին ընդհանուր սենյակում, վոր ծառայում եր իրրև հյուրասենյակ: Այրի Վոսկեհատը միայն այդ սենյակն եր յերբեմն վոտք դնում:

Ցերեկի, մարդ ու կին չատ բարձր ձայնով եյին վիճում, վոր դրավեցին դրսում յեղողների ուշադրուքյունը: Ներս մտան, մեկը մյուսի հետևից՝ այրին, Մարթան, Սրաֆիոն Գասպարիչը, Միքայելն ու ադախինը:

— Վո՛չ վոքի, վո՛չ վոքի չեմ տալ իմ յերեխաներին, թող բոլորն իմանան, կոպանեմ, բայց չեմ տալ,—կրկնեց Անտոնինա Իվանովնան բարձրաձայն:—Փորձեցեք խլել ինձանից իմ զավակներին և կտեսնեք...

Մայրական հիմնադատ սերը մթագնել եր նրա ուղեղը, պղտորել աչքերը: Նրան թվում եր, վոր ընկել և վայրենիների ձեռք և պետք ե մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանի սիրեցյալներին:

— Ա՛յ տուն, ա՛յ ուրախուքյուն, այսորվա որը բոլոր քրիստոնյաների աներում ծիծաղ ու պար, իմ ծնողների տանը կռիվ ու արտասուք: Մտա, մտիկ արա հարսիդ աչքերին, տես ինչ գազան ե դարձել ուսում առած կինը, մտիկ արա և ուրախացիր...

Սմբատն այլևս հոգեկան ուժ չուներ քրոջ այրող խոսքերի հոսանքի առաջն առնելու:

Հեռվից լսվում եր տունային ուրախ դանդահարուքյան ձայնը: Ցեվ դա ավելի յեր գրգռում նրան:

Այրին ուժգին լալիս եր: Միքայելը լուռ նայում եր նրան: Պարզ եր, վոր մոր արցունքներն ազդում եյին նրա վրա:

— Ինչո՞ւ ճիպոտդ փոխդդ չկարեցիր,—ասաց Սրաֆիոն Գասպարիչը:

Սմբատը, զառնուքյամբ գլուխը շարժելով, նայեց նրան և դուրս գնաց: Այդ բոպեին թվաց նրան, վոր ամբողջ աշխարհն ըմբոստացել և իր դեմ:

Ամբողջ դիշեր նա աուն չվերադարձավ:

Այրի Վոսկեհատը թաթախման սեղան նստեց միայն իր յեղբոր և Միքայելի հետ: Իսկ Անտոնինա Իվանովնան գոնեը փակել եր, վոչ վոքի չեր թողնում իր մոտ, վոչ նույնիսկ յեղբորը:

VII

Նրա խաղաղ հոգին վրդովվեց: Նա չկարողացավ ժամանակին մտածել, վոր մի միլիոնատեր և ամուսնացած մարդու և մի աղքատ աղջկա մեջ չի կարող լինել վոչ մի առնչուքյուն: Ինչո՞ւ այնքան ատելուքյուն տվեց պզացումներին, հակառակ խելքի: Թող Սմբատ Ալիմյանը վարվեր նրա հետ այնքան սիրալիր, նայեր այնպիսի խոր հայացքներով, միշտ ձգտեր նրա հետ խոսել, մերթ հառաչեր խորհրդավոր, մերթ ժպտար ավելի խորհրդավոր—մի՞թե այդքանն իրավունք եր տալիս մի խեղճ աղջկա մոռանալ անդամալույծ հորը, գործակատար հորեղբորը և այս աղքատ կացուքյունը:

Նա մեղավոր և վոտից մինչև գլուխ: Ինչո՞ւ չտեսավ այն վիհը, վոր բաժանում և աղքատին հարստից, ազատ աղջկան ամուսնացած տղամարդից: Նա պիտի լիներ համեստ վոչ միայն վարմունքով, այլև բոլոր զգացումներով, յերևակայուքյամբ, ցնորքներով ու յերազներով: Ցերեկը այդ առնական հասակը չպիտի գրավեր նրան, յերբեք այդ խելացի ու արտահայտիչ աչքերը չպիտի հրապուրեյին նրան և վոչ այդ բարեհնչյուն ձայնը չոյեր նրա լսելիքը: Ձի՞ վոր կան բաներ, վորոնց մասին մտածելն անգամ մեղք ե մի աղջկա և մանավանդ աղքատ աղջկա համար:

Ցերեկ, այս մտքերից պաշարված, Շուշանիկը փորձում եր իրեն համոզել, թե դեռ կարող ե մոռանալ Ալիմյանին, առնական կերպարանքն ավելի ուժեղ եր պատկերանում նրա առջև: Ջուր եր աշխատում վերադարձնել վաղուց կորցրած հանդիստը և զուր ճգնում տնային գործերի կամ ընթերցանուքյան մեջ գտնել մոռացում: Նրա նյարդերը լարվել եյին, կարծես, բոպե առ բոպե սպասում եր ինչ-վոր փոթորկի: Ցերեկն հոգին հուզվում եր այնչափ, վոր չունչը սպառվում եր, խառնիխուռն զգացումներից սիրտը թրթռում, ինչպես վիրը կտրած թռչնիկ: Պատահում եր, վոր փորձում եր վերլուծել այդ զգացումները, պարզել, ինչպես նրանք հղացան ու զարգացան: Ցեվ խաղաղ մտածումներին միայն սովոր գլուխը չուտով հոգնում եր խառնակ մտքերից, ամեն ինչ ճուվլում եր ու գառնում մի անթափանցելի քաոս...

Աղքատ, աննշան, աշխարհի աղմուկից ու իրարանցումից հեռու, քաղաքի մի խուլ անկյունում վարում եր մի տեսակ մենավոր կյանք, որերը նվիրված անդամալույծ հորն ու ընտանեկան հոգսերին: Վոչինչ առանձին բան չեր սպասում կյանքից և վոչ մի լուսավոր կետ չեր տեսնում հարյուրավոր մանր—մունր կարիքներով թունավորված գոյության մեջ: Անգամ անցյալում չեր հիշում մի փայլուն դիծ: Այնինչ, մինչև տասնուվեց տարեկան հասակը չեր իմացել ինչ ասել և կարիք կամ տանջանք: Թվում եր նրան, թե միշտ յեղել ե աղքատ, թե միշտ

իր հոգը բևեռված է յեղել անկողնակալին, մինչև այնպես արտնվել է ձայնատարի դեմ և միշտ մորմոքել նրա սիրտը: Այդքան ուրեն ճնշել եր ու աղավաղել նրա յերևակայությունը վերջին տարինների վողորմելի կացությունը:

Ցեվ ահա մի որ հայտնվում է մեկը, թափանցում և նրա ներքին աշխարհը և կարճ միջոցում ձգում այնտեղ անսովոր փոթորիկ: Տակն ու վրա յե անում թմրած հոգին և բռնադատում նրան ավելի սաստիկ ափսոսալ իր հոր անցյալի մասին: Ա՛խ, յեթե նա լիներ հարուստ ծնողների զավակ, այն ժամանակ Ալիմյանի բարեկամական ցույցերից չեր նեղվիլ, կնայեր այդ մարդուն այնպես, ինչպես հավասարը հավասարին: Վոչ վոք իրավունք չեր ունենալ ասելու. ինչո՞ւ այդ յերիտասարդն այնքան ուշադիր և դեպի նա:

Որ–որի վրա նա ծուլանում եր ու դառնում անտարբեր դեպի իր շրջանը: Վոչ վոք չգիտեր նրա հոգեկան տվայտանքը, վորովհետև ո՞վ եր տեսնում նրա զաղտնի արցունքները և լսում խեղդված հառաչանքները: Միայն մայրական դգաստ աչքերն եյին, վոր նկատում եյին աղյկա հետհետե նիհարելը, դունատվելը: Ինչո՞ւ, տեր–աստված, չե՞ վոր այժմ Շուշանիկն ավելի լավ և ապրում, քան առաջ՝ քաղաքում, չե՞ վոր նրանք այժմ կուշտ ճաշ ել ունեն, տաք բնակարան ել, մինչև անգամ ծառա յել:

Շուշանիկը զառնորեն ժպտում եր. լավ և ապրում, այո՛, լինչ ասել կուզի: Վո՞րն և այդ ապրուստը. հիվանդ հոր ավելի կծու մրմունջնե՞րը, հորեղբոր ավելի կոպացած մե՞լքը, թե՞ այն չրջապատող ամայությունը, ուր թառամում և Շուշանիկի ծաղիկ կյանքը: Վո՛չ, նա այլևս անկարող և դիմանալ այս միատեսակ կյանքին, նրա հոգին վորոնում և ազատություն մանր–մունր հոգսերից, առորյա կարիքներից և ձգտում դեպի անծանոթ աշխարհ:

— Ա՛խ, մամա, ի՞նչ կլիներ, վոր ինձ Թողնեյիք գոնե մի ամսով հեռանալ այս անից:

Ցերբեք աղքատության լուծն այնքան ծանր չեր թվացել Շուշանիկին, վորքան այն որը, յերբ Միքայելը փորձեց առորացնել նրան: Նա համոզված եր, վոր հարուստը մխիթար աղքատի վերաբերմամբ իրեն թույլ կտա այդչափ հանդգնություն: Ցեվ առելով Միքայելին, ղգում եր առելություն նաև դեպի բոլոր հարուստները, ինչպես և դեպի իր աղքատությունը:

Ցերբ դիշերվա կեսին բերեցին Միքայելի կիսաշունչ մարմինը, ղղջաց, վոր այնպես սառն եր վերաբերվել դեպի նա մի քանի ժամ առաջ: Նրա առաջ պառկած եր անխոս չարդված մի յերիտասարդ, վորին դեռ յերկու չաբաթ չկար խայտառակ կերպով ապտակել եյին հասարակական տեղում: Կարեկցության ղգացումն ավելի զորեղացավ

նրա մեջ, յերբ մորից լսեց զառանցող հիվանդի արտասանած խոսքերը: Ինչպես՝ հիվանդը ղղջում է իր արածի մասին. նա զառանցում է այն, ինչ–վոր դուցե չատ անգամ մտածել է առողջ ժամանակ: Իսկ յերբ Միքայելի դունատ դեմքի վրա կարդաց նույն ղղջումը և լայն բացված աչքերի մեջ նշմարեց ակնածություն, ղգաց, վոր այժմ կարող է բոլորովին ներել նրան: Ցեվ ներեց:

Ամեն որ նա տեսնում եր լուսամուտից նոր կառավարչին պատըշգամբի վրա և ղգում, վոր նրա հայացքը վորոնում է իրեն: Ակնածալի բարևներին պատասխանում եր սառն քաղաքավարությամբ և խելոք լուսամուտից հեռանում: Մինչդեռ Միքայելը նայում եր ու նայում յերկար ժամանակ: Ցեվ այդ համառ հայացքներն արդեն սկսում եյին հալածել Շուշանիկին:

Ցեղանակը պարզ եր և բավական ջերմ, յերբ Շուշանիկը դուրս յեկավ պատշգամբ մի վոքր ոդ ընչելու: Նա մի յերկու ժամով ազատ եր տնային գործերից: Անցավ ընդարձակ բակը, դուրս յեկավ այն տափակ տարածությունը, ուր յերեք չաբաթ առաջ ծեծվել եր Միքայելը: Դարձյալ Սմբատի առնական կերպարանքը նկարվեց նրա աչքերի առջև, դարձյալ նրա հայացքն ակամա գարձավ դեպի քաղաք տանող ճանապարհը: Այնինչ, յերկու չաբաթ եր, Սմբատը չեր գալիս հանքերը:

Շուշանիկը հասավ վլատակներին, կանգ առավ: Ծանր, յերկարատև հառաչանքները հողնած ու ճնշված կրծքից այսոր դուրս եյին թռչում առանձին զառնությամբ: Շուտ–չուտ կանգ եր առնում, մոլոր հայացքներ ձգում հեռու ու հեռու:

— Որիո՛րդ,—լսեց նա հանկարծ մի ծանոթ ձայն:

Հետ նայեց և տեսավ Միքայելին: Մի վայրկյանում պատկերացավ նրա առջև այն անախորժ տեսարանը, վոր այնքան վիրավորել եր նրա համեստությունը:

Շուրջը վոչ վոք չկար: Միայն յերբեմն անցնում եյին հատ–հատ քանվորներ: Շուշանիկը՝ լուրկ պարզեց աջը և չտապով հետ քաշեց, հազիվ մի ակնթարթ թողնելով Միքայելի ձեռքում:

Միքայելի նիհար ու դունատ դեմքի վրա նկարված եր այնպիսի թախիծ, վորպիսին յերբեք Շուշանիկը չեր տեսել նույնիսկ Սմբատի դեմքի վրա: Մի ակնածալի հայացք ձգեց որիորդի աչքերի մեջ և անվստահ յեղանակով սկսեց ուսաբերեն:

— Որիորդ, մինչև այսոր յես առիթ չեմ ունեցել ձեզ չնորհակալություն հայտնելու:

— Ինչո՞ւ համար:

— Ցեվ դուք դեռ հարցնո՞ւմ եք. չե՞ վոր ձեր ընտանիքը մոտ յերկու չաբաթ ինձ խնամեց, ինչպես իր հարազատ վորդուն:

— Դուք իմ հոբելյարը տերն եք, այդ մեր պարտքն եր: Բացի դրանից, դուք արդեն չնորհակալություն հայտնել եք:

Նա քայլեց առաջ: Միքայելը դնում եր կից առ կից: Նա առիթ եր վորոնում խոսելու, և ահա հենց առաջին խոսքերից Շուշանիկը զարձյալ սառը ջուր և ածում նրա վրա: Կրկին նրա ինքնասիրությունը վիրավորվեց, մի՞թե յերբեք չպիտի կարողանա կոտրել այդ աղջկա հպարտությունը:

— Ասացեք, ի սեր աստծո,—արտասանեց նա, փորձելով համարձակ նայել նրա աչքերին,—ինչո՞ւ համար եք դուք ինձնից վախչում:

— Ցես ձեզանից վախչո՞ւմ եմ,—կրկնեց Շուշանիկը կիսահեգնաբար,—ո՞վ ասաց:

— Այդ չեյի ուզում ասել... Դուք, դուք ինձ վրա վատ աչքով եք նայում:

Որիորդի դեմքով անցավ դժկամակության ժպիտը: Նա մտածեց, վոր Միքայելը զարձյալ ուզում է փորձի յենթարկել իր ամոթխածություն: Նա հետ զարձավ և քայլերն ուղղեց դեպի տուն: Մի րոպե Միքայելն ընթանում եր նրա հետ լուռ: Նա կանգ առավ, ձեռը սեղմելով ճակատին. ասե՞ր, արդյոք, բոլորը, ինչ-վոր կուտակվել եր սրտում, թե՞ զգեր հպարտությամբ: Որիորդը հետ նայեց և նույնպես կանգ առավ, հարկավ, քաղաքավարության համար: Նրա դեմքի անտարբեր արտահայտությունը, աչքերի մեջ խաղացող թեթև արհամարհանքը կատազեցնում եյին Միքայելին, միևնույն ժամանակ, ճնշում, հաղթահարում:

— Որիորդ, յես ձեր առջև մեղավոր եմ, խնդրում եմ, մոռացեք իմ հանդգնությունը: Որիորդ, յես սխալված եմ յեղել, ներումն եմ խնդրում, յես ձեզ չեյի ճանաչում: Գիտեմ, դեռ ձեր սրտում վոխ եք պահում իմ դեմ: Դուք առաջ ինձ նայում եյիք զզվանքով, այժմ ցավակցությամբ: Այդ ինձ վիրավորում է և սաստրացնում իմ աչքում: Ատեցե՛ք ինձ, թշնամացե՛ք, բայց մի՛ արհամարհեք: Արհամարհանքն ինքնասերի մեծագույն պատիժն է:

— Ձեմ հասկանում, ինչո՞ւ համար եք այդ ասում: Ցես ձեզ չեմ կարող վո՛չ ատել, վո՛չ արհամարհել: Ի՞նչ կապ կա մեր մեջ, բացի այն, վոր դուք տեր եք, յես ձեր ծառայի յեղբոր աղջիկը: Մի՞թե ինձ նման մի աննշան եյակ կարող է ձեզ սաստրացնել...

— Մի՛ կեղծեք, ի սեր աստծո, կեղծությունը ձեզ չի սազում: Դուք շատ լավ եք հասկանում, թե յես ինչ եմ ուզում ասել:

Շուշանիկը նայեց լրջորեն նրա դունատ յերեսին և զգաց, վոր նրա հոգին սաստիկ խռովված է: Ճակատի վերքից մնացել եր բավական մեծ սպի, վոր նրա կանացի կերպարանքին այժմ տալիս եր առնականություն: Շուշանիկը չիոթվեց նրա աչքերի փայլից և, գլուխը կրծքին թեքելով, հանդարտիկ չարունակեց ճանապարհը:

— Միայն մի րոպե, որիորդ,—դոչեց Միքայելը,—դուք շատ եք չտապում, իսկ յես կկամենայի մի քանի խոսք ասել, միայն մի քանի խոսք: Զգիտեմ, ինչպես ասեմ, բայց պիտի ասեմ... Թուլ տվեք անկեղծ լինել, այս հարկավոր է թե՛ ինձ և թե՛ ձեզ համար...

— Հրամայեցե՛ք,—ասաց Շուշանիկը, կանգ առնելով և ձեռները անփուլթ դնելով կրծքին, գլուխը թեթևակի աջ ուսին թեքելով,—յես պատրաստ եմ լսել ձեզ:

Արդեն նա վճռել եր մտքում այս անգամ բացարձակ և աներկյուղ հայտնել, վոր իր և այդ մարդու մեջ չկա և չի կարող լինել վոչ մի առնչություն:

Կարճատև տատանումից հետո, Միքայելն սկսեց խոսել: Զգացումների բուռն հոսանքից չգիտեր ի՞նչից սկսի և ի՞նչպես: Կամենում եր միանգամից արտահայտել բոլորը, ինչ-վոր մտածել ու զգացել եր վեց-յոթ չարաթվա ընթացքում, բայց և վախենում եր, մի գուցե որիորդը խստորեն ընդհատի նրա խոսքը և հեռանա: Ցեվ սկսեց իրեն պարսաված վոչ միայն իր սխալի համար, այլև ընդհանրապես: Նա խոստովանում եր, վոր ինքը փչացած մարդ է, առանց ձգտելու բացատրել իր բարոյական անկման արդարացուցիչ պատճառները: Այն որից, յերբ Շուշանիկը հրից նրան, սկսեց զգալ, վոր, ճշմարիտ, սխալված է յեղել առհասարակ կանանց մասին, չափելով բոլորին միևնույն չափով: Նա սկսեց մտածել ավելի լուրջ, հարգել կնամարդին այնպես, ինչպես յերբեք չեր հարգել: Շուշանիկի սառնությունն ու արհամարհանքը զորացրին նրա մեջ անսովոր զգացումը: Վորքան որիորդը յերես դարձրեց, այնքան կին եյակը բարձրացավ նրա աչքում: Վորքան նա հպարտ պահեց իրեն, այնքան ինքն ընկավ իր աչքում: Շուշանիկը, և միայն նա՛ զգալ տվեց, թե վորքան փուչ է յեղել իր կյանքը: Նա՛, միայն նա անգիտակցաբար արավ նրա համար այն, ինչ վոր ահա մի քանի ամիս է, աչխատում է անել իր յեղբայրը: Նրան վիրավորեցին հասարակության մեջ: Ցեղբայր ամբողջ ժամերով աչխատում եր համոզել նրան մոռանալ այդ վիրավորանքը, բայց չհաջողացավ: Նա՛, միայն և միմիայն Շուշանիկի պատճառով կուլ տվեց ամոթալի ապտակը:

Մի՞թե այս բոլորը չէ ուրախացնում որիորդին, մի՞թե նա չի պարծենում իր բարոյական զորությամբ և ազդեցությամբ: Մինչև այսոր Միքայելի ականջներին հնչում են այս խոսքերը. «վորքան զանազանություն կա ձեր և ձեր յեղբոր մեջ»: Հասկանում է նա այդ զանազանությունը և տեսնում, վոր իր յեղբայրը բարձր է իրենից բարոյապես: Ուրեմն Շուշանիկն ունի իրավունք նրան ատելու, Սմբատին

հարգելու, նրան պահպանելու, Սմբատին դավելու: Ինչո՞ւ չէ նա չբերը դարձնում, ինչո՞ւ չէ թաղցնում իր զգացումները, մի՞թե կարծում է, վոր Միքայելը վոչինչ չի տեսնում, վոչինչ չի զգում:

— Ձե՞ վոր դուք նրան սիրում եք, այո՛, սիրում եք: Կարմրեցեք, չարացե՛ք, բայց չես ճշմարիտն եմ ասում: Եհ, լո՛ւռ արած, ուժով սիրելի դառնալ չի կարելի: Առեցե՛ք ինձ, վորքան ուզում եք, այսուհետև չես ձեզ հանդիստ կթողնեմ, միայն հասկացե՛ք, վոր չես այնքան էլ փչացած չեմ, վորքան կարծում եք, վոր իմ սրտում դեռ կա մաքուր անկյուն: Ցեվ մի որ, մի որ կտեսնեք, վոր այդ անկյունը պահված է ձեզ և միմիայն ձե՛զ համար:

Նա մի քանի քայլ առաջ անցավ, նորից կանգնեց, դունատ, չնչասպառ:

Շուշանիկը տակավին լուռ էր. մերթ կարմրում էր, մերթ դունատվում, մերթ ուզում էր քայլերն արագացնել և չուտով տուն հասնել, մերթ վախենում էր, մի գուցե այսպիսով դրդի Միքայելին ավելի համարձակ դառնալու: Միևնույն ժամանակ, ակամա հետաքրքրվել էր յերիտասարդի զգացումներով և ուզում էր լսել նրան: Վախենալով և դողալով, նա ցանկանում էր իմանալ, վերջապես, ի՞նչ է պահանջում իրենից այդ մարդը: Ցերբ Միքայելը լուեց, նա մոտածեց, ի՞նչ պատասխանի: Նա կարծում էր, թե պարտավոր է անպատճառ մի բան ասել: Նրա սրտում հղացավ կարեկցության պես մի բան, վոր, սակայն, չկամեցավ արտահայտել: Միևնույն ժամանակ զգաց, վոր Միքայելի ասածներն անկեղծ են: Այս անկեղծությունը բարձրացրեց նրա աչքում այն մարդուն, վորի մասին նա այնքան ստոր դաղափար ուներ:

— Մնաք բարով,—ասաց Միքայելը, չարժանանալով Շուշանիկի հոդմից և վոչ մի խոսքի:

— Դնաք բարով:

Միքայելը հեռացավ արագ քայլերով, սիրտը դառնությամբ լի: Ի՞նչ հպարտություն, ի՞նչ ինքնագոհություն մի աննշան աղջկա կողմից: Ո՞վ է նրան այդպես կրթել և պատրաստել: Ի՞նչ չրջան է նրա մեջ ամբացրել կամքի այդչափ հաստատություն: Նա այնքան զորնդ դրջնվից, վոր մի խոսք անգամ չասաց Սմբատի մասին, վո՛չ բարկացավ և միայն լուեց: Ա՛խ, այդ համառ լռությունը նրան հազթահարեց ավելի, քան յերեք խոսքը:

Դարձյալ ուշ դիշեր էր և դարձյալ Շուշանիկն անքուն չրջում էր իր սենյակում առանձնացած: Նրա ականջներին դեռ հնչում էին Միքայելի խոսքերը: Արդյոք, իսկապես անկե՞ղծ էին այդ խոսքերը, թե չէին: Բայց վորքան նա իրեն անխնա քննադատեց, վորքա՛ն պարսավեց: Վո՛չ, նա զղջում է իր արածների մասին և զղջում է, անշուշտ, առանց կեղծիքի: Եհ, տերը նրա հետ, թող այսուհետև ինչ ուզում է

մտածի: Նա ինքն ասաց. «մնաք բարով», ուրեմն վճռեց վերջապես, թողնել Շուշանիկին հանգիստ: Ավելի լավ. Շուշանիկն էլ նրանից հենց այդ պիտի պահանջեր, և առանց պահանջելու ստացավ ուզածը: Տերը նրա հետ:

Ցեվ հետզհետե Միքայելի զրգռված կերպարանքը նսեմացավ, ներկայացավ Սմբատն իր առնական կերպարանքով:

Ինչո՞ւ նա հանգերը չի դալիս. մի՞թե ուզում է Շուշանիկի հանդուդն յերևակայության վրա սառը ջուր ածել կամ գուցե վճռել է ազատություն տալ իր յեղբորը: Ի՞նչ. մի՞թե Սմբատն ընդունակ է այս տեսակ ստորության: Վո՛չ, յերբեք... Նա ապնիվ է, նա չի թույլ տալ իրեն այդչափ վատ գաղափար ունենալ Շուշանիկի մասին:

Բայց այդպես չարունակել այլևս անհնարին է: Դա հիմարություն է, նույնիսկ խելագարություն է, սիրել մի յեղբորը, հետամուտ լինելով մյուսից, ձգտել դեպի մեկը, փախչելով մյուսից: Պիտի մոռանալ ամեն ինչ և դարձյալ անձնատուր լինել նախկին կյանքին, բառանալ Սմբատ: Սակայն ի՞նչպես. տեր ստոված, վսկան է, վորքան հիմարացավ: Սակայն ի՞նչպես. տեր ստոված, վսկան է, վորքան հիմարացավ: Սակայն ի՞նչպես: Նա ակամբ էր դնում շրջու աղմուկին և լսում էր բարեհնչյուն ձայնը, նայում էր փողոցի մթության և տեսնում միայն առնական կերպարանքը: Ամենուրեք նա, և միմիայն նա: Կարծես, դա մի նական կերպարանքը: Ամենուրեք նա, և միմիայն նա: Կարծես, դա մի չար վոգի յե, վոր մի անգամ ընդմիշտ վճռել է քայքայել նրա հանդիսը և հասցնել նրան մինչև խելագարության: Տեր ստոված, մի՞թե այս է սեր ստված բանը, այն, ինչ-վոր կարդացել է հարյուրավոր վեպերում՝ հարյուրավոր վարիացիաներով: Ցեթե այո՛, ինչո՞ւ ստում են, թե սերը նույնիսկ դառնություն է:

Շուշանիկը նստեց սեղանի քով: Նրա դլխում ծագել էր մի հանդուդն միտք—դեն ձգել նախապաշարումները և համարձակորեն հարդրել նամակով բոլոր ավյտանքը Սմբատ Ալիմյանին: Թո՛ղ, վերջապես, իմանա, թե ինչ արավ նա մի խեղճ գործակատարի խեղճ յեղջայրս, իմանա, թե ինչ արավ նա մի խեղճ գործակատարի խեղճ յեղջայրս, իմանա, թե ինչ կա վախենալու. ինչո՞ւ չլիներ համարձակ... թորվորդուն: Ի՞նչ կա վախենալու. ինչո՞ւ չլիներ համարձակ...

Նա գրեց մի յերես, կարդաց, ամաչեց, պատռեց, դեն ձգեց, նորեն սկսեց և գարձյալ պատռեց: Գրիչն անզոր էր արտահայտելու խակական զգացումները:

Թիկն ավեց աթոռին, ձեռները թուլացած պնելով ծնկների վրա: Վո՛չ, ամոթ է, ի՞նչ գրի և ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով: Այդ մարդը կարող է ծաղրել նրան և արհամարհանքով դեն չպրտել նրա հիմար նամակը:

Դրսի մթությունն սկսեց փարատվել, արևելքը գունատվեց, ապա կարմրեց և հետո դեղնեց: Արեգակը հանդարտիկ բարձրացավ հեռավոր թումբերի յետևից: Փետրվարի անվստահ և թույլ արեգակը, վորի ճառագայթները պաղում են դեռ յերկրին չհասած:

Լսվեց յերեխաների ձայնը, հետո անդամալույծի սիրտ մաշող առավոտյան հազը և նրա բողոքը յերեխաների դեմ, վոր չեն թույլ տալիս «ամբողջ գիշերը քնելու»:

Շուշանիկը դեռ անքուն եր: Հազուստը հագին, գլուխն անդոր դրել եր սեղանի յեզրին, ձեռների վրա: Ինչ մտքերը սպռալել եյին ուսերին և ծածկել հոգնած բաղուկները, վորոնք փղոսկրի մաքրությունն ունեյին: Ա՛խ, յեթե տեսներ նրան այդ րոպեյին Միքայելը, մի՞թե կհամարձակվեր նրան դեղեցիկ չհամարել: Արեգակի շողերն ընկան նրա վրա, այնքան անվստահ, վոր, կարծես, վախենում եյին խանգարել տառապող աղջկա նիրհը... Գլուխը քիչ բարձրացրեց: Աչքերն անքնությունից կարմրել եյին, կոպերը փքվել սպունգի պես, այտերի վրա յերևում եր անբնական կարմրություն:

— Ելի գիշերն անքո՞ւն ես անցկացրել,—լսեց մոր ձայնը և ցնցվեց:

Նա կեղծելում վարպետ չեր, ուստի լռեց:

— Ի՞նչ ե պատահել քեզ, վորդի, ի՞նչ ցավ ե տանջում խեղճ յերեխայիս:

Պետք եր կամ ստել կամ հարձակողական խոսք ասել: Շուշանիկը վերկացավ և քայլերն ուղղեց դեպի դռները:

Մայրը կարեց նրա ճանապարհը: Այս անդամ արդեն նա անպատճառ պիտի իմանա աղջկա ցավը: Գիշերն անքուն, ցերեկն անդորձ, վոչ կարդըն ուտում ե, վոչ խոսում, վոչ ել առաջվա պես կարդում: Նույնիսկ մորաքրոջ յերեխաները դանդատվում են, թե «վարժուհին դաս չի տալիս» նրանց: Ման ե գալիս քնածի պես, որ–որի վրա լղարում ե, դեղնում, չորանում: Աստ, վորդի, ասա, վո՞ր չարն ե քեզ տանջում, ո՞ւմ անեծքն ե պատժում մորդ: Կարելի յե հորդ մրմունջներն են մաշում քեզ· չե՞ վոր սկսել ես դանդատվել նրանց դեմ... Հիվանդ ու ատածուց պատժված մարդուց կարելի՞ յե նեղանալ: Այսոր–վաղը կկարվի նրա անբախտ կյանքի թելը: Ա՛խ, կար ժամանակ, վոր նա յել հայր եր, քեզ համար վոչինչ չեր խնայում, պահում եր քեզ ինչպես աչքի լույս: Նա չե՞ր, վոր քեզ ուսում եր տալիս ու կրթում մեծամեծների աղջկերանց պես: Մի որ մուդիկի վարժուհին եր գալիս, մյուս որն յերդ սովորեցնողը: Ուրախանում եր յերեխայի պես, յերբ յերդում եյիր ու պիանո ածում: Ա՛խ, Շուշանիկ, Շուշանիկ, յերանի՛ այն որերին, անցան, դնացին, մորդ սրտում դասը վիշտ թողնելով: Այժմ ձայնդ խեղդվել և կոկորդումդ, չես յերդում, մատներդ փչացել են անասելի աշխատանքից, պիանո չունես, վոր նվագես: Վորդի, շատ մի՛ մտածիր, համբերի՛ր: Ա՛խ, սե լիներ այն որը, յերբ հայրդ կտոր ընկավ, յեկավ այս սե աշխարհը: Ահա, ի՞նչ ե պատահել, վորդի...

Շուշանիկը նստած եր լուսամուտի առջև, ձեռները ծնկներին դրած, դլուխը կրծքին թեքած: Մոր համառ հարցերին ու մրմունջներին պատասխանում եր դլխի բացասական չարժումներով և խնդրում հանգիստ թողնել իրեն: Յեվ ի՞նչ ասեր· մի՞թե բոլորը խոստովաներ: Ո՛ւ, վո՛չ, խեղճ կլինն ամոթից կկեչաղարվի, թե լսի, վոր նրա աղջիկը սիրահարված և ամուսնացած մարդու վրա: Թո՛ղ, մայրիկ, թող նրան հանդիստ: Նա վոչ մի ցավ ու հոգս չունի: Թող, վոր դնա յերեխաներին դաս տա, ազատներին ոգնե, հորը ծառայե:

Յեվ նա, այլևս չկարողանալով դսպել իրեն, հեկեկաց ու վազեց դուրս:

Մայրն ապշած նայեց հետևից, ծանր հառաչելով:

VIII

Յերբեմն Անտոնինա Իվանովնան իրեն հարցնում եր, արդյոք, կյանքի մանր պակասություններին խոչորացույցով չի՞ նայում և անչնչան բաներից սահեցնում իր համար մեծ դժբախտություն: Արդարև, յեթե չի կարող չքվանն իրեն հարմարեցնել, ինչո՞ւ չհամակերպվել: Յեթե չի կարող սիրել ամուսնուն, ինչո՞ւ չհարգել նրան իբրև որինավոր մարդու:

Սակայն այս մտքերը ծխի պես ոդն եյին ցնդում, յերբ մտածում եր, թե ինքը մի ծանր բեռն ե Ալիմյանների համար, յերբ մանավանդ Սմբատի աչքերի մեջ նկատում եր հագիվ զսպված տեղությունը: Հաճախ հարցնում եր իրեն· ի՞նչպես յեղավ, վոր կյանքը կապեց այդ մարդու հետ: Յեվ միշտ հանդում եր նույն պատասխանին, թե դա մի պատահական դեպք եր, վիճակախաղ: Մի չար վոգի բուռնաթար մշտապես նրա ուղեղը և դրդեց նրան ընկնել դեռ լավ չճանաչված մի յերիտասարդի դերկը: Այն ժամանակ նա կարծում եր, թե այդ մարդու սերը կարող ե լինել անչեզ, կարծում եր նաև, վոր ահա գտավ վաղուց վորոնած մեկին, վորին կարող ե իր ուզած ձևը տալ, ինչպես կակուղ մոմի: Բայց նևրը քարին դիպավ: Նա հանդիպեց իր չափ անչեզ մի բնավորության, վոր չեր ուզում զիջանել շատ անճնական նախապաշարմունքներ: Յերկուսն ել ուսում առած ու զարդացած, ունեյին տարբեր դրոշակներ—այս չե՞ր, արդյոք, վոխադարձ դժտությունների առաջին հիմքը: Իսկ յերբ ավելի ծանոթացան միմյանց, առաջ յեկան բյուրավոր հակառություններ: Մանր դեպքերը խոչորացան, պարզվեց այն անդունդը, վոր անջատում և յերկու միմյանցից հիմնավորապես տարբեր չքվանների մարդկանց:

Ով դիտե, դուցե նա սիրեր այդ մարդուն յերկար տարիներ, յեթե սիրվեր նրանից: Բայց այն պահից, յերբ զգաց նրա ոտնատրյանը, ինքնասիրության կայծը բորբոքվեց նրա մեջ: Իսկ հետո, յերբ Սմբատն սկսեց արդեն ուղղակի նրա յերեսովը տալ տարիքը, նախանձի

վիրավորված զգացումն ավելի զարգացրեց նրա մեջ թշնամանքյուն: Իբր թե թառամել է, իբր թե, մի յերկու տարի իր մարդուց մեծ լինելով, արդեն ծեր է նրա համար...

— Ծեր եմ, դնա յերիտասարդ կանանց հետևից ընկիր,—ասաց նա դեռ հինդ տարի առաջ:

Սմբատը զղջաց իր կոպիտ նկատողության համար: Նա չեր ուզում ընկնել ուրիշ կանանց հետևից: Նա ասաց. թե «խաբվել է» և պատրաստվոր է իր սխալի հետևանքները կրել:

«Խաբվել»—ահա մի բառ, վոր ասեղի պես ցցվում եր Անտոնինա Իվանովնայի սիրտը: Վո՛չ, նա ինքը խաբվեց և միայն ինքը:

Դեռ Մոսկվայում, իր մայրենի չրջանում, նրանք կենակցում եյին մի կերպ զավակների սիրո անունով: Այնտեղ Սմբատն ավելի ղիջող եր, ավելի մեղմ, նույնիսկ հարմարվող: Այնտեղ դոնե միայն նա չեր Անտոնինա Իվանովնայի դատավորը: Իսկ այժմ մի ուրիշ կին, չրջապատված իր հոգուն ու մարքին խորթ անձերով, ի՞նչպես կրե բոլորի հալածանքները:

— Ինձ թվում է, վոր ուսումը ձեզ վրա շատ քիչ ներգործություն է ունեցել: Ձեր հայացքները, կարծես, վոչնչով չեն տարբերվում ձեր չրջանի աչխարհայացքից: Դուք հնության ու նախապաշարումների դեմ կռվելու տեղ, նրանց պաշտպան եք հանդիսանում: Դուք ձեր չուրջը լույս սփռածելու փոխարեն, ինքներդ կլանվում եք խավարից: Մի մոլեռանդ պառավ հալածում է ինձ, դուք նրան կոմմնակի խրախուսում եք, մի՞թե այդ է ձեր ուսման ու զարգացման ուժը... Մի՞թե ներելի չե այդքան մոլեռանդ լինել...

Այս ասում եր Անտոնինա Իվանովնան մեծ սրտի առաջին չարաթ որը, յերբ նա յերեխաներին տարել եր յեկեղեցի և հաղորդություն ավել: Այդ օրն այլի Վոսկեհատի համար դառն որերից մեկն եր: Նա լալիս եր, վոր իր վորդու զավակները խորթ են իր մայրենի յեկեղեցուց: Նա ընդհարվեց վորդու հետ հարսի ներկայությամբ: Անտոնինա Իվանովնան դիմադրեց նրան, և հարս ու սկեսուր մրմնջոց ուղղեցին վիրավորական դարձվածներ: Սմբատը վոչ մեկին չպաշտպանեց: Միայն հետո առանձին, Անտոնինա Իվանովնային ասաց, թե պառավն իր տեսակետից բոլորովին իրավացի յե, թե նա ուրիշ կերպ չի յել կարող մտածել: Այս եր, վոր վիրավորեց տիկնոջը և դրդեց այս անգամ իր հանդիմանությունը հիմնել ամուսնու «մոլեռանդ հայացքների» վրա:

— Զարմանում եմ,—դոչեց Սմբատը կծու հեգնությամբ,— զարմանում եմ, վոր դուք ամեն բան ինձանից եք պահանջում: Դուք ուզում եք, վոր միայն յես լինեմ ղիջող, վեհանձն և մոռացկոտ: Յեթե ուսումն ու զարգացումը կարող են մարդու մեջ խոպան մեռցնել բոլոր զարթավոր ավանդությունների հետքը, ինչո՞ւ ձեր մեջ չեն մեռցնում:

Ինչո՞ւ դուք մի մոլեռանդ և ծեր կնոջ հետ մրցում եք զրկվել հավասար պենքով, իսկ ինձանից պահանջում եք անպատման հնազանդություն ձեր բոլոր ավանդություններին... Դրեք ձեր պենքը մի կողմ, յես էլ կդնեմ: Յես դոհել եմ եյականը, դուք դոհեցեք ձևականը: Համաուժություն մի արեք, յես էլ չեմ անել: Փոխադարձ զիջողություն — ահա իմ ուզածը: Դուք ձերն եք պնդում, ինչո՞ւ յես էլ իմը չպիտի պնդեմ: Ինչո՞ւ յեք ոգևորում ձեր զորեղ պենքից...

— Ուժը զորն է զրվում համաուժության դեմ: Յես մոլեռանդ կին չեմ, բայց, տեսնելով իմ չուրջը մոլեռանդություն, ուզում եմ ոգևորել իմ պենքից: Յես չեյի մրցել, մինչև անգամ հիմարություն կհամարեյի այս տեսակ մրցում, յեթե ձեր մայրը, քույրն ու բոլոր ազգականները ինձ հարազատ աչքով նայեյին: Բայց վոչ միայն նրանք, այլև ձեր ամբողջ հասարակությունն ինձ գաղտնի արհամարհում և ձեզի անարժան համարում: Յես քիչ եմ յեղել այդ հասարակության մեջ, բայց շատ եմ զգացել: Նրա արտաքին ձևական հարգանքի տակ յես նկատել եմ խորինատելություն:

— Վորովհետև կասկածամիտ եք, վորովհետև ձեր յերևակայությունը թունավորված է...

— Վո՛չ, իմ սիրտն ինձ չի խաբում այս հանգամանքում: Մարդ պիտի հիմար լինի, վոր չզգա այն, ինչ–վոր յես եմ զգում... Եարո՞ղ եք յերդվել ձեր զավակներով, վոր յես սխալվում եմ...

Սմբատը լուեց: Կնոջ խոսքերի մեջ զգաց վորոշ չափի ճշմարտություն:

Կես ժամ անցած Անտոնինա Իվանովնան իր սրտի դառնությունն արտահայտում եր յեղբոր մոտ: Իսկապես նա Ալեքսեյ Իվանովիչին համարում եր անզոր վորևե խելացի խորհրդով իրեն ոգնելու, բայց և այնպես շատ անգամ եր խորհրդակցում նրա հետ իր անելիքի մասին: Ուրիշ վոչ մի բարեկամ չուներ, վորին հասկացներ իր վիշտը:

— Գիտե՞ս ինչ,—ասաց Ալեքսեյ Իվանովիչը, դեմքին փիլիսոփայական արտահայտություն տալով,—կուզես չարացիր, կուզես հայհոյիր ինձ, յես գարձյալ կասեմ, վոր մարդկանց չես ճանաչում, այսպես ասած, հոգեբան չես: Այդ ասելացիները չավատացնց համառ են, իսկ համառ մարդկանց հետ համաուժությամբ մրցել չի կարելի: Նրանց վրա կարելի յե ազդել միայն, այսպես ասած, սիրով ու վաղաքչանքով: Վո՛չ Սմբատ Մարկիչը կգաժանվի յերեխաներից, վո՛չ դու կարող ես բաժանվել: Արի դու լսիր իմ ծրագիրը և կատարիր...

— Ի՞նչ ծրագիրը,—կրկնեց Անտոնինա Իվանովնան հետաքրքրված:

— Այո՛, իմ ծրագիրը, սիրելի քույրիկս, վորովհետև ծրագիրը եմ կազմել քո մասին:

Նա պենսնեն ուղղեց, նստեց քրոջ դեմ և, վոտը վոտի ձգելով, չարունակեց.

— Մենք յերկաթի դարում, այսպես ասած, գոյության կռիվը հասել է իր զենիտին: Այժմ մեզանից նա յի կարող ապրել, ով ունի յերեք ժամանակակից պենքերից մեկը—վոզ, տաղանդ և հնարագիտություն: Դու վոզ չունես, այսինքն՝ սեփական վոզ, այս մեկ: Դու տաղանդից զուրկ ես—այս յերկու: Մնում է հնարագիտությունը: Հնարագետները, սիրելիս, շատ սեռակների յեն լինում, և նրանց մեջ, իմ խորին համոզմունքով, պատվավոր տեղ է բռնում, այսպես ասած, կենսական հնարագետը: Դու այս յերեքից էլ զուրկ ես ու զուրկ: Ահա ինչու, յես ուզում եմ գալ ոգնության իմ ծրագրով: Լսի՛ր, սիրելիս, յեթե համաձնես—ընդունելի, յեթե վոչ—դու քեզ, յես ինձ համար:

Նա կարեց սեպարի ծայրը ժամացույցի շղթայից քաշ արած փոքրիկ մկրատով, վառեց, բաց թողեց ծխի մի քանի քուլաներ:

— Դու պիտի հաշտվես Ալիմովի հետ,—չարունակեց, բեղերը շփելով,—այո՛, պիտի հաշտվես: Մի՛ ցնցվիր, լսի՛ր, հետո: Նախ և առաջ դու ցույց կտաս սկնորիզ, այդ, այսպես ասած, անդրպատմական վհուկին, հարգանք, այսինքն՝ կեղծ հարգանք: Նո՛ւ, նո՛ւ, հասկանում եմ. ուզում ես ասել, թե կեղծել չես կարող, դիտեմ, բայց լսի՛ր: Այո՛, ցույց կտաս կեղծ հարգանք և կամաց-կամաց, այսպես ասած, կկոտրես նրա սրտի ապակը: Հետո պատռվին կղարձնես, այսպես ասած, մի տեսակ կամուրջ դեպի կոպակցիդ սիրտը: Բարձրանալով այդ կամրջի վրա, կամացուկ կպարզես սեփական դրոշակդ և, այսպես ասած. կպատճառես Սմբատ Մարկիչի հավատարմությունը: Հետո քիչ-քիչ կհամոզես նրան, թե յերեխաները չեն դիմանում այստեղի կլիմային: Յեվ, իրավ, այս ի՞նչ դժոխային կլիմա յե. քամի, փոշի, նավթ... Հա՛, կասես հիվանդանում են, պետք է նրանց տեղափոխել: Կասես. ժամանակ է նրանց ուսում տալու, այստեղ որինավոր դպրոց չկա, եոցեոտերա, եոցեոտերա, եոցեոտերա... Յեվ ամեն որ, ամեն ժամ, ամեն րոպե նույնը կրկնելով, վերջը կհամոզես, թե դու նրանց պիտի տանես Պետերբուրգ: Հասկանո՞ւմ ես, Պետերբուրգ և վոչ Մոսկվա, վորովհետև Մոսկվան հայրենիքդ է, յեթե անունը տաս, բարեմիտ կողակիցդ կխրտնի...

— Հետո՛, հետո՛,—կրկնեց Անտոնինա Իվանովնան անհանգիստ.

— Եհե, տեսնում եմ, վոր վոգևորվում ես,—չարունակեց Ալեքսեյ Իվանովիչը, սիգարն ուղղահայաց մոտեցնելով բերանին, վորպեսզի մոխիրը չթափվի,—այդ լավ նշան է: Հետո, իհարկե, կհամոզես, վոր յերեխաներիդ անունով մի խոշոր գումար, յենթադրենք յերկու կամ յերեք հարյուր հազար մանեի Պետերբուրգի բանկերից մեկը, ե՛հ, մի գումար էլ, այսպես ասած, իր թանկագին կիսի, այսինքն՝ քո անունով: Սպասի՛ր, ի՞նչ ես պատռտակի պես պտույտ-պտույտ անում բազկաթոռի վրա: Այո՛, հետո, այսպես ասած, տաֆտիկպադ քիչ-քիչ առաջ կտանես ու... անդորրագրերը նրանից, այսպես ասած, ազնիվ յեղանակով կվերցնես... դե, թող վերջացնեմ ե՛ւ... Այն ժամանակ, յես, քո խոնարհ ծառան, այստեղ եմ, հո, այստեղ: Բեզ կտանեմ յերեխաներիդ հետ Պիտեր, այսպես ասած, հողմի թևերով: Դու կսկսես ծախսել քեզ հատկացրած գումարը: Ալիմովը փոքր առ փոքր կմոռանա յերեխաներին: Ժամանակն ու տարածությունը սիրո, յեթե կարելի յե այսպես ասել, սղոցներն են: Իսկ դու, եե՛, կմոռանաս ու կմոռանաս Ալիմովին: Այն ժամանակ, քույրիկս, կհիշես, վոր մարդու կյանքում կա, այսպես ասած, և յերկրորդ յերիտասարդություն, իսկ Պետերբուրգը դիտես, վոր Ախտ չե...

— Բավակա՞ն է,—պոչեց քույրը խորին զղվանքով,—բավակա՞ն է: Գիտեի, վոր փչացած մարդ ես, բայց չգիտեի, վոր այդքան վատ ես ճանաչում ինձ: Դիմել կեղծիքի, խարեբայության, ստորանալ, կորցել նրանից վոտքեր և այդ վոտքերով... Լռի՛ր, դու ավելի վատ կարծիք ունես իմ մասին, քան թշնամիները...

— Համաստացնում եմ քեզ, վոր ավելի հանճարեղ ծրագիր հարիվ թե ինքը թալեյրանը կարողանար հնարել:

— Ահա ինչ, Ալեքսեյ, ժամանակ չե՞, արդյոք, վոր դու վերադառնաս Մոսկվա,—հարցրեց քույրը, խոսքը հանկարծ փոխելով, վոր միանգամից վերջ տա նրա չարակրաությանը:

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

— Այն կա, սիրելիս, վոր դու, այստեղ ապրելով ուրիշների հաշվին, ավելի առելի յես դարձնում իմ դրությունը:

— Ուրիշների հաշվի՞ն,—ծիծաղեց Ալեքսեյ Իվանովիչը,—բարեկամ, այստեղ գալուց դես այս տանը յես ճաշել եմ ընդամենը յերկու անգամ, այն էլ սկեսրիդ հետ վիզավի նստած... Սքանչելի դեսերտ...

— Բայց քանի՞ անգամ ես Ալիմովներից փող վերցրել:

— Քո թանկագին կողակիցից և վոչ մի անգամ:

— Իսկ Միխայել Մարկիչից:

— Միխայել Մարկիչն իմ, այսպես ասած, անձնական մտերիմ բարեկամն է: Սիրում է ինձ յեղբոր պես, յես էլ նրան, նա իսկական ջենտլմեն է, այսինքն՝ եր. վերջին ժամանակ մի քիչ փոխվել է: Այդ ոըր

Մի որ Անտոնինա Իվանովնան ամուսնու մասին լսեց յեղբորից մի նորություն, վոր թե՛ նրան զարմացրեց և թե՛ ցավ պատճառեց:

— Դու ասա ես ասում,—դոչեց նա, զայրացած անգամ:

— Վո՛չ, զուտ ճշմարտությունն եմ ասում: Ցերեկ յերեկոյան յերբորդ անգամ տեսա «Անգլիա» հյուրանոցում, այսպես ասած, յոթերորդ աստիճանում: Աչքերը կարմրել էին վոչխարի պոլոճիկի պես, վոտները զանազան աշխարհագրական գծեր էին քաշում հատակի վրա, դլուխն ուսերի վրա չեր կանդնում, ապատամբվել եր մարմնի դեմ...

— Ցերեկ ճիշտ ես ասում, խղճում եմ նրան:

— Ցերեկ խղճում ես, կարող ես և սիրել: Կանայք չատ անգամ ոտով խղճում են, հետո սիրում: Հաշտվի՛ր, ամո՛...

— Լսիր, Ալեքսեյ,—դոչեց քույրը, չրթունքները կծծոտելով,—յեթե այդ չարաթ դու չես հեռանալ այս քաղաքից, դոնե բնակարանդ պիտի փոխես:

— Այլ խոսքով, սիրելի քույրիկս, ուզում ես, այսպես ասած, դոնեդդ վաճել իմ առջև, չէ՞...

— Ցերեկ ուզում ես ճիշտ իմանալ—այո՛, միայն վոչ իմ, այլ ուրիշի դոնեդը:

— Դու կատարյալ ղրագուն ես դարձել, սիրելիս. այդ քեղ չի սազում:

— Մի խախտիր Մարկիչը քեղանից յերես և դարձրել, այժմ դու նրա փոքր յեղբորն ես հարատահարում: Ամոթ և, վերջապես...

— Իսկի յել ամոթ չէ: Այժմ յես Արշաս Մարկիչի, այսպես ասած, վերահսկողն ու դաստիարակն եմ: Կարծեմ, այս կրկնակի պաշտոնի համար ունեմ իրավունք նրանից վարձ ստանալու:

Այդ ճիշտ եր. Ալեքսեյ Իվանովիչն այժմ Արշակի համար հոգիչի և դաստիարակի դեր եր կատարում, միայն կամավոր և վերին աստիճանի ապատամիտ հոգիչի: Պատանին վորոնում եր իր Զինային, իսկ Ալեքսեյ Իվանովիչն ոգնում եր դտնելու... Թատրոնում, ցիրկում, կուլիսների հետևում, հյուրանոցներում: Իրրև դաստիարակ, նա իր աշակերտին սովորեցնում եր «մայրաքաղաքյան» ձևեր և նիստ ու կաց:

Մի յերեկո վարժապետ ու աշակերտ, թատրոնից դուրս գալով, մտան մեծաքակա հյուրանոցը՝ ընթրիք անելու: Այնտեղ նրանք հանդիպեցին Սմբատին, վոր, մի քանի հասակակիցների հետ նստած, գվարճանում եր: Արշակը կամեցավ հեռանալ, Ալեքսեյ Իվանովիչը չթողեց: Ի՞նչ կա վախենալու, Սմբատ Մարկիչը վոչինչ չի ասել, տեսնելով նրան «պատավոր» ազգականի հետ: Ցավ նա դրեթե ուժով պատանուն նստեցրեց ճաշարանի մի անկյունում:

— Նո՛ւ, այսոր ազիատիկ ննջ ընթրո՞ւմ, թե՞ յեվրոպիեն,—հարցրեց նա բուն գաստրոնոմի յեղանակով:

— Ինչպես կամենաս:

— Գարսո՛ն,—դոչեց Ալեքսեյ Իվանովիչը, նայելով իր քթի ծայրին,—մենյու... ընտրիր,—դարձավ Արշակին, կերակուրների ցուցակը սպասավորից առնելով և նրան տալով:

— Դո՛ւ ընտրիր լինճ համար էլ, քեզ համար էլ:

Պատանին այժմ ուտում ու խմում եր «դաստիարակի» ճաշակով:

Ալեքսեյ Իվանովիչը նախ հանդիմանեց սպասավորին, վոր խոհուն չի փոխում սիրողը, մի քանի անգամ արտասանեց «Ֆիդոն», ապա սկսեց կերակուրները ընտրել: Մի քառորդ ժամ նա բացատրում եր սպասավորին, թե այսինչ կերակուրն ինչպես պիտի պատրաստել տալ, մի քառորդ ժամ էլ խոսեց լամելիքի մասին:

— Այդ ո՞ւմ ես նայում,—հարցրեց նա, տեսնելով, վոր Արշակին աչքերը չի հեռացնում Սմբատի սեղանից:

— Նայում եմ յեղբորս և զարմանում, թե ինչ տեսակ մարդկանց հետ և այժմ նստում, վերկենում: Վա՛յ Ալիմովների անունին:

— Ա՜ա՛, սերեմն այդ մարդիկ արհամարհանքի՞ յեն արժանի: Բայց, սիրելիս, այդպես մի՛ նայիր: Գլուխդ բարձրացրու, ծուիր մի քիչ դեպի մի կողմ և անշեղ հայացքով մտիկ արա, այսպես ասած, ուղիղ նրանց վոտներին: Այդ կնշանակե, վոր արհամարհում ես նրանց: Ա՜ա՛, այ այդպես, հիանալի յե, վկա յե ասվածդ, դու արժանի եյիր Պետերում ծնվելու: Գարսոն, խավյարը չոտով բեր...

Ցավ նա, պատանին մի կողմ դնելով, սկսեց առայժմ վոչնչացնել թարմ խավյարը կանանչ սոխի հետ:

— Արշաս,—չարունակեց նա դաստիարակել իր աշակերտին,—ուտելիս չի կարելի ամբողջ իրանով սեղանին թեքվել, այդ որիենտալ է: Գլուխդ միշտ բարձր և կուրծքդ միշտ սեղանից հեռու պահիր: Կեր, այսպես ասած, անհուշի յեղանակով, ժպտա, ծիծաղիր, զվարճախոսիր, այնպես, վոր իբր բոլորովին քաղցած չես: Այո՛, այդպես, սիրելիս, հիանալի՛ յե... Մի փոքր առաջ յես թատրոնում ուշեցա նկատողություն անել քո բարեվարվելու յեղանակի առթիվ, բայց անհարմար եր: Լսի՛ր, յերբ կանանց ես բարևում, միշտ պիտի աշխատես, այսպես ասած, նրանց յերեսին նայել ուղիղ և ժպտալ: Հետո ղդակդ վերև մի՛ բարձրացնիլ, այլ դեպի մի կողմ, և հանկարծակի, այսպես ասած, ներվային չարժումով: Վերցրու, մի կիսաշրջան արա ու հետո դիր դլխիդ: Պետք և ասած, վոր այս քաղաքում վոչ վոք չգիտե կանանց բարևելու նորաձևն ձևը, և դու առաջին որինակը կտաս: Ահա ամառը կգնանք Ֆրանսիա, և փարիզում ամեն բան կսովորես: Գնալո՞ւ յենք, թե՞ չե, ասա՞:

— Իհարկե, իհարկե, յես արդեն քեզ հրավիրել եմ, և պիտի գնանք:

— Նու, բարեկամ, կարծեմ, քեզ այնքան փող չեն տալ, վոր ինձ եվ կարողանաս հետդ մանածել, ասո՞:

— Ո՞վ կհամարձակվի չտալ:

— Ո՞վ, իհարկե, Թանկապին վեհասա... Նու, յեղբայր, այդ մարդը բոլորիդ, այսպես ասած, դերի յե դարձրել: Իսկ ինքը, տես, ինչպես ե քեֆ անում, այն եվ, այսպես ասած, ընտանիքի տեր լինելով:

— Նա անում ե, յես եվ կանեմ: Նա չի կարող ինձ արդելել: Յես իմ փողերն են ծախսում:

— Իմ կարծիքով եվ այդպես ե, բայց դու բավականաչափ, այսպես ասած, եներժիկ չես: Պահանջի՛ր, յեղբայր, պահանջի՛ր, և նա կտա: Դու նրա հետ հավասար ժառանգ ես: Գարսո՛ն, այս դինին շատ եվ ընտիրներից չե, հինը, հինը չունե՞ք: Նո՛ւ, այդ եվ բեր, վորձենք...

Սմբատը վիճում եր իր սեղանակիցների հետ և, կարծես, չեր նկատում յեղբորն ու աներձագին: Նրա սեղանին մոտեցավ մի հարբած յերիտասարդ, բարձրահասակ, հաղթանդամ, կարմրագեմ: Ձեռները վարտիկի գրպանները դնելով, հայացքը հառեց Սմբատի յերեսին, աչ ու ձախ յերերվելով:

— Տե՛ս, Ալեքսեյ Իվանովիչ, սկանդալ ե լինելու,—չչնջաց Աբշակը սեղանակցին:

— Ո՞վ ե այդ վայրենին, իմ կարծիքով շատ բութ յերես պիտի ունենա,—ասաց Ալեքսեյ Իվանովիչը, նայելով անծանոթի վոտներին:

— Պետրոս Ղուլամյանի քրոջ վորդին ե, քաղաքի առաջին սկանդալիստը:

— Աա՞,—արտասանեց Ալեքսեյ Իվանովիչը, չտպկով հայացքն անծանոթից հեռացնել:

Հանկարծ հարբածը գոչեց.

— Դուք ի՞նչ փիլիսոփայություն եք անում աղնվության մասին: Ալիմովներն իրավունք չունին այդ ազգանքի մասին խոսելու:

Խոսքն ուղղված եր Սմբատի հասցեին, վոր իսկապես աղնվության բառ անգամ չեր արտասանել, խոսելով ու վիճելով սեղանակիցների հետ: Նա նայեց անծանոթի յերեսին ցածից վեր, զարմացած:

— Համեցե՛ք, պատրաստ ե,— գոչեց Ղուլամյանի քեռորդին, բռունցքը դնելով սեղանի յեզրին:

— Պարոն, յես ձեզ չեմ ճանաչում, ո՞վ իրավունք տվեց ձեզ մոտենալ մեր սեղանին...

— Ո՛վ, ո՛վ, հա՛–հա՛–հա՛, թքել եմ ձեր միլիոնների վրա: Աասա, խնդրեմ, ո՞վ ե յեղել քո հայրը, վոր այդքան պարծենում ես:

— Պարո՛ն, հեռացե՛ք այստեղից:

— Հարցնում եմ, ո՞վ ե յեղել քո հայրը. մի դռնապան, ջրկիր, հա՛–հա՛–հա՛...

— Հեռացե՛ք, յերթե վոչ...— գոչեց Սմբատը, անդիտակցաբար բռնելով դաստակ չչի կրկորդը:

Սկսվեց իրարանցում: Բոլոր սեղանակիցները վեր կացան, բացի Սմբատից, վոր տակավին չդիտեր, ինչ ե ուզում այդ մարդն իրենից: Բռնեցին հարբած յերիտասարդին, կամեցան քաշել մի կողմ, բայց նա, իր ուժեղ ձեռներով բռնողներին հրեց աչ ու ձախ և նորից մոտեցավ Սմբատին:

— Յերեքիդ եվ միասին կչարդեմ, քուֆթա կչինեմ,—մռնչաց նա, ձեռով մի չրջան անելով դեպի Աբշակի ու Ալեքսեյ Իվանովիչի կողմը:— Եյ, յեկե՛ք, թե ուզում եք, ոդնեցե՛ք այս անպիտանին:

— Լսեցի՞ր, Սրդաս, վայրենին մեր կողմն եվ ե, այսպես ասած, քարեր չպրտում: Զգո՛ւյշ. պետք ե պոլիցիա կանչել, վոր սկանդալիստին դուրս տանի: Գարսո՛ն...

Սմբատը դունատված վոտքի կանգնեց պաշտպանվելու: Հարբած հաղթանդամը բռունցքը բարձրացրեց, վոր նրան խփի, բայց նույն վայրկյանին դինու մի չիչ, ոդի մեջ պտույտներ գործելով, դիպավ նրա կրծքին: Նա մի քայլ հետ դրեց, ապա, գլուխը բարձրացնելով, նայեց այն կողմ, ուսկից ստացավ հանկարծակի հարվածը: Ցավ իր առջև տեսավ տարեկան մի պատանի սիրթնած, խելագարի աչքերով:

— Արղաս, Արղաս,—գոչում եր Ալեքսեյ Իվանովիչը, հազիվ կարողանալով պահել կատաղած Աբշակին, վոր ուզում եր չչի հետևից ահեղն ուղղել հակառակորդի ճակատին:—Արղաս, դու դինով ապակինեցիր չապիկդ, հանդարտվի՛ր, այդ վայրենին ուժեղ ե, այսպես ասած...

Իրարանցումը սաստկացավ: Հաղթանդամի վրա հարձակվեցին բոլոր սպասավորները, բռնեցին և ուժով քաշեցին դեպի դուրս: Դռների մեջ ուժգին թափով աղատվեց նրանց ձեռներից և հարձակվեց պատանու վրա: Աասված գիտե, թե հարվածն ինչ դրության կհասցներ Աբշակին, յերթե նրա հասակը վերթխարու բարձրացրած ձեռից ցած չլիներ: Վերթխարին սեփական հարվածի ուժգնությունից մի պտույտ գործեց և յերեսնիվայր փռվեց հատակի վրա: Մոտ տասը հոգի հազիվ կարողացան նրան ուժով դուրս տանել և հանձնել վոստիկաններին:

Հյուրանոցի տերը ցավակցություն հայտնեց Ալիմյաններին:

Սմբատն անցավ կից սենյակը և, ընկղմվելով գահավորակի վրա, արտասանեց.

— Այս ի՞նչ ե նշանակում:

— Այդ նշանակում ե, վոր հիմա իմ փոխարեն քեզ պիտի խրատել,—պատասխանեց Աբշակը, վոր անմիջապես նրա հետ մտավ նույն սենյակը, դռները հետևից ծածկելով:

— Աա, այդ դո՞ւ ես, չաուշտան: Կորի՛ր այստեղից. քեզ ո՞վ խնդրեց ինձ պաշտպանել, դլխիդ մեծ բաներ ես բռնում, կորի՛ր...

— Իսկի չեղ դլխից մեծ բաներ չեմ բռնում: Ցես պաշտպանեցի Ալիմոլնեի պատիվը: Ցես վոչ քեզ պես փիլիսոփա չեմ, վոչ Միքայելի պես վախկոտ, իմ չերակների մեջ իսկական արյուն է հոսում. հարցրո՛ւ Ալեքսեյ Իվանովիչից...

Սմբատը նայեց նրա չերեսին, լռեց: Պատանու անկեղծ հուզմունքը նրան մեղմացրեց. չե՞ վոր, իրավ, եր չեղբոր պաշտպանելու համար չէին արձակել այդ կոպիտ չերիտասարդի վրա:

— Ցես ուզում եյի նրան սպանել,—չարունակեց Աբշակը խրոխտաբար,—նա պատրաստվել եր քեզ և ինձ ծեծելու: Նա Ղուլամյանի քրոջ վորդին է, Միքայելից վրեժ առնելու տեղ, ուզում եր քեզանից և ինձանից առնել:

— Ի՜նչ խաբեություն, ի՜նչ անպատվություն,—արտասանեց Սմբատը, ձեռը գարկելով սեղանին: Ցես ի՞նչ գործ ունիմ այստեղ, ո՞վ ինձ բերեց... ինչո՞ւ:

— Ինչո՞ւ, այդ ինձ էլ է զարմացնում... Դու ինձ խրատում ես, և հանկարծ...

— Բավակա՞ն է,—ընդհատեց Սմբատը,—լսի՛ր, ասում եմ: Այդ քո գործը չէ, հասկանո՞ւմ ես, դու չերեխա չես, չես կարող ըմբռնել իմ վիչտը:

Ցեվ, մի վոքը լռելուց հետո, չարունակեց.

— Գիտե՞ս ինչ, Աբշակ. Թուլ եմ տալիս քեզ ամեն բան անել, հասկանո՞ւմ ես, ամեն բան, միայն Զինախդայի հետ չամուսնանաս: Պատճառը մի՛ հարցնիր, չես ինքս չեմ կարող բացատրել: Բայց չամուսնանաս, լսի՛ր, չերբեք չամուսնանաս: Քեֆ արա, հարբիր, չոպայլիր, չես քեզ փող կտամ, վորքան ուզում ես, մաչի՛ր կյանքդ, այրի՛ր սիրտդ, փոեցրո՛ւ մարմինդ, բայց մի ամուսնանար... Գնա՛, կորի՛ր... Այնտեղ քեզ սպասում է Ֆանֆարոնը, ձրիակերը... Փուչրն ինձ է դժբախտացրել, չեղբայրը քեզ է հարստահարում: Բայց վոչ, նա չարժե իր քրոջ կոչիկներին: Նա վոչնչություն է, իսկ փուչրն ամբողջություն, միայն իմ կյանքը թունավորող ամբողջություն. դո՛ւրս, թո՛ղ ինձ մենակ իմ ցավերի հետ...

Նա դրեթե ուժով վռնդեց չեղբորը դուրս, փակեց դռները և նորից ընկղմվեց դահավորակի վրա: Ցեթե մեկը դռների արանքից նայեր, կտեսներ, վոր չերեսներկու տարեկան տղամարդը հանդարտ լալիս է, ինչպես կին...

Մյուս սենյակում Ալեքսեյ Իվանովիչը հյուրանոցի տիրոջը վրդովված դանդատվում եր ասիական վարք ու բարքերի դեմ: Այս ի՞նչ չեր-

կիր է, ուր պատվավոր մարդկանց մասին չպի՛տեն: Այստեղ բարձր ուսում ստացածներն էլ վայրենանում են:

— Սատան-ն տանի քեզ,—գոչեց նա Աբշակին,—պենսնես դցեցիր, կոտրեցիր, այժմ կատարյալ կույր եմ: Ձե, չեղբայր, Սմբատ Մարկիչն իրեն բոլորովին կորցրել է, այսպես ասած, դեկը ձեռից բաց է թողել: Նստենք. չես հիացած եմ քո քաջությունով, այո՛, ճիշտ խոպանացի չես, պուր չեմ ասել...

Նրանք նստեցին նույն սեղանի քով:

— Այս ի՞նչ է,—ասաց Ալեքսեյ Իվանովիչը, դինու չիչն ելեկտրական լույսի դեմ պահելով,—չարտրեող է, թե՞, ֆու, կարծեցի չամպանիա՜... Ամեն ինչ խավարվեց...

— Սպասավոր, չամպանիա, Ռեդերեր,—գոչեց Աբշակը:

— Դու կարծում ես չամպանիան խավարը կփարատի՞,— ժպտաց Ալեքսեյ Իվանովիչը,—а что ж, փորձենք: Նո՛ւ, ունայնություն ունայնության, մոռացի՛ր ինցիդենտը: Իսկական չենտլմենը, այսպես ասած, վայրենիների կոպիտ արարքները չուտ է մոռանում:

Սմբատը գիտեր, վոր կյանքի կանոնավոր չավդից չեղվում է: Գիտեր և դարձյալ հետ չեր կանչնում: Մոլի կենցաղը հետզհետե բթացնում եր նրա նյարդերը և նրա հոգեկան աչխարհը ձգում ինչ-վոր անփարատելի մթության: Հյուրանոցների արբեցուցիչ մթնոլորտում, նոր ձեռք բերված զվարճասեր ընկերների չրջանում դառնում եր դեթ ժամանակավոր մոռացում: Ցեվ այսքանը բավական եր: Ի՞նչ փույթ, վոր արթուն ժամերն ավելի սաստիկ եր զգում վիչտը և անխնա դատապարտում իր նոր կենցաղը:

Ցերբեմն հիչում եր մի աղքատիկ չրջան, ուր անց եր կացրել բավական խաղաղ ժամեր, ուր նրա մտքերն ու զգացումները հանդիպել եյին հարդանքի և համակրության: Ցեվ նրա առջև պատկերանում եր եյին հարդանքի և համակրության մի սեղան և յեռացող սամովարի մոտ մի սիպացած լուսավորված մի սեղան և յեռացող սամովարի մոտ մի սիրուն դեմք, համեստ, բայց հպարտ... Այդ րոպեներին նրա ականջներին հնչում եյին քեռու խոսքերը.

— Ինչո՞ւ ճիպոտդ փոլիցդ չկարեցիր:

Կրծքից արձակելով դառն հառաչանք, ձեռով բացասական նշուր չարժում եր անում, կարծես, հեռացնելով իրենից սիրուն կերպարանքը, վոր ուրվականի նման ծառանում եր նրա առջև, և չմտածել այդ աղջկա մասին. չե՞ վոր ուշ է, քը: Պետք է մոռանալ և չմտածել այդ աղջկա մասին. չե՞ վոր ուշ է, չե՞ վոր այսուհետև վոչ մի դիջում չի կարող ոդնել:

Նայում եր իր կնոջ մչատպես դժդոհ դեմքին, լսում եր մոր անվերջ բողոքները, քրոջ չարամիտ դրդումները, հիչում եր հոր վերջին խոսքերը, վերարտադրում եր իր յոթնամյա լուռ տանջանքները և նորից քայլերն ուղղում դեպի հյուրանոց: Թող այսպես լինի, թող նա վերջացնի նրանով, ինչով սկսել են իր չեղբայրները: Մարդկանց կեղծիքի

և չողոքրքիության տակ զգում եր քողարկված արհամարհանք դեպի իր ամուսնական վիճակը. աչխատում եր համոզել իրեն, թե այդ արհամարհանքը մի կիսակիրթ շրջանի նախապաշարումների ծնունդ է, բայց, այնուամենայնիվ, ճնշվում եր ամբողջ հոգով: Յերբեմն մտածում եր. այլևս ի՞նչ որվա համար է հարստությունը, յեթե ինքը դժբախտ է: Սվելի լավ չե՞ր լինիլ, յեթե զրկվեր հոր ժառանգությունից, մնար հեռու այս ճնշող շրջանից և լուռ կրեր իր տառապանքները, ինչպես կրել եր յոթ տարի չարունակ, բոլորից, նույնիսկ ամենամտերիմ բարեկամներից, թաղցնելով իր վշտերը: Բայց զգում եր, վոր արդեն ընտելացել է դրամի հրապույրին, զգում եր նաև յերկյուղ աղքատությունից, հիշելով իր քաշած չքավոր որերը: Յեթե հարստությունը չի կարող բուժել նրա վերքը, գոնե ժամանակ-ժամանակ մոռացնել կտա վշտերը: Պետք է, ուրեմն, զվարճանալ և ինչո՞ւ, ինչո՞ւ չզվարճանալ...

Յեվ նա սկսեց չոայլել հայրական փողերն այնպես, ինչպես մի ժամանակ չոայլում եր Միքայելը: Նա սկսեց և թուղթ խաղալ, ծանոթացավ թատրոնական կուլիսների հետևի կյանքին: Չե՞ վոր դժբախտ է և մի կերպ պետի աչխատի խեղդել սրտի կսկիծները...

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Հանքային նոր կացարանների կառուցումն ավարտվեց բալեկեն-դանին։ Տեղափոխվելու նախընթաց յերեկո Զարզարյանը գնաց քաղաք։ Սմբատը տվեց նրան մի բուռն թղթադրամ և պատվիրեց մյուս որը մշակներին հյուրասիրել։

Գումարը բավական մեծ եր. կարելի յեր հանդիսավոր խնճույք սարքել։ Զարզարյանն այսպես էլ վորոշեց անել։

— Ինչպես կամենաք,—ասաց Միքայելը,—բայց, իմ կարծիքով, չարժե հատարակ դեպքից լինչ-վոր տոնախմբություն չինել։

— Հատարակ դե՛պք,—զարմացավ Զարզարյանը,—կարծեմ մշակների համար այդպիսի պատահներ տեղափոխվելը փոքր բան չե։ Տեսեք ուրիշ հանքատերերի մշակներն լինչ խոզարներում են բնակվում։

Նոր կացարանների թիվը յերեք եր — ամեն մի հանքախմբի մշակների համար առանձին։ Դավիթը վորոշեց հանդեսը սարքել այն տանը, վոր ամենից մեծն եր և ավելի մոտիկ գրասենյակին։ Դա մի յերկայնաձև չինուվթյուն եր, մի հարկանի, բայց դետնից բաժանված նկուղներով, վորոնք չափազանց յերկրի խոնավություն և զգալի թուլյ տային վերև թափանցելու։ Առաստաղները բարձր եյին, լուսամուտները լայն, պատերը ծածկված յուղաներկով։ Յուրաքանչյուր մշակի համար դըրված եյին առանձին անկողնակալ ու նստարան։ Տունը չրջապատված եր լայն պատշգամբով, վոր հարմարեցրած եր ամարային կացության համար։ Զորս կողմը տարածվում եր մաքուր, ընդարձակ ու հարթ բակը, չուրջ պատած քարե պարսպով։ Բակի մի ծայրում կառուցված եր մի մեծ դահլիճ, վոր կարող եր ծառայել թե՛ իբրև ուսումնարան և թե՛ իբրև թատրոն։ Մյուս ծայրում մի վոքրիկ բաղնիք. մի բան, վոր նույնպես նորություն եր հանքային մշակների համար։

— Միայն այս մեկ տունը մեզ նստել և հինսուն հազար ռուբլի,— ասում եր Զարզարյանը։

Վաղ առավոտից պատշգամբի վրա դարսվեցին մրոտ տոպրակները, ղամբյուղները և թաշկինակները՝ լի դանազան պաշարեղենով: Բակում արհեստավորներն իսկույն չինեցին ժամանակավոր սեղանները՝ յերկայն տախտակներից: Ճեղանակը բավական տաք եր, մշակները կամեցան դրսում ճաշել:

Չարդարյանի կոր մեջքն այսոր, կարծես, ուղղվել եր, դեմքի վրա խաղում եր դոհունակության ժպիտը, նրհար մոտներն ուրախությունից ծռվում եյին ման գալիս: Նա մշակների հետ կատակներ եր անում և պատվիրում, վոր այսոր կրակի հետ զգույշ վարվեն:

Տասնումեկ ժամին բոլոր չվիկները սուլեցին, թե ժամանակ ե դոցծերը դադարեցնել: Կես ժամ անցած, բակը լեցվեց սև ուրվականներով: Մրոտ դեմքերի վրա նշմարելի յեր անսովոր զվարճություն, դեղնած շրջանակների մեջ աչքերի բիբերը փայլում եյին տենդային ուրախությամբ: Շատերն որվա հանդեսը նմանեցնում եյին դյուղական ուխտագնացության, հառաչում եյին, ախ քաշում, հիշելով իրենց ծննդավայրը, բայց և՛ միմյանց հրում եյին, ծիծաղում և՛ Ալիմյաններին ողջունում:

Դա մարդկային ամբոխ չեր, այլ ինքը դառն աշխատանքը, հազար ու մի կենսական հոգսերի ու վշտերի մարմնացումը: Ցնկել եր դեթ մի քանի ժամով թոթափելու իր հոգուց մոռայլության փոշին, և կեզտի, մրի ու ցնցոտիների տակից ծիծաղելու: Սակայն ուր վոտք եր դնում, այնտեղ մոցնում եր սևություն ու մռայլ: Նույնիսկ արեգակի պայծառ շողերը մթնում եյին, ընկնելով մարդկային մթին ծովի վրա: Բայց փույթ չե. մթին ծովն այսոր զոհ և չատ քչից, զոհ՝ յեղանակի ջերմությունից, յերկնի պայծառությունից և մանավանդ այն փչրանքից, վոր պարգևում ե նրան հարուստ տերերի քեմքը:

Մի քայլելը լուռ, դունատ, անցնում եր, լուսնոտի պես, սենյակից սենյակ, դավթի, փողոց, ամենուրեք ակամա վորոնելով մի կերպարանք, վոր անհաղթելի ուրել եր նրա հոգուն: Իսկ այդ կերպարանքն արդեն տասն որ եր չեր յերևում վո՛չ պատշգամբի վրա, վո՛չ լուսամուտների առջև: Նա ամաչում եր ինքն իրեն խոստովանել, թե այսորվա հանդեսին չհակառակեց՝ հենց Շուշանիկին տեսնելու գաղտնի հույսից դրդված:

Քաղաքից յեկան — Սրաֆիոն Գասպարիչը՝ գլխավոր հաշվապահի հետ, հետո Արշակը՝ Սուլյանի և, փոքր անցած, Անտոնինա Իվանովնան՝ իր յեղբոր հետ:

Դավթը նրանց համար տանը պատվիրել եր առանձին նախաճաշ: Նա չտապեց Շուշանիկին կանչելու, վոր դա Անտոնինա Իվանովնային զբաղեցնի: Մի քանի րոպե անցած, ամբոխը հարգանքով ճանապարհ եր տալիս այն աղջկան, վոր չատերի համար եր նամակներ գրել ու կարդացել, չատերի համար կարել ու կարկատել և չատերի վերքերի ապեդանին փոխել, այդ կարճ միջոցում: Ոդը բարձրացան փուրաժկանչերն ու վախախները, դեմքերը ժպտացին այնպես, վորպես միայն կարող և ժպտալ նավթային ծովը լուսնի շողերից:

— Добрая, славная барышня,—լսեց Անտոնինա Իվանովնան յերախտագետ մուժիկների ձայները:

Ցավ նրան թվաց, վոր նույնիսկ արեգակը կարող և նախանձել այն ապաովությանը, վոր ջրծեց մի համեստ աղջկա յերեսին այդ կոպիտ ամբոխի վրա:

Շուշանիկը մոտեցավ նրան, հարգանքով բարևեց: Նա չեր ուզում այսոր տենից դուրս գալ, բայց դուրս յեկավ, չեր ուզում Սմբատին հանդիպել, բայց յեկավ հենց նրան տեսնելու հույսով: Սակայն ցնցվեց, յերբ Անտոնինա Իվանովնան անկեղծ բարեկամությամբ սեղմեց նրա ձեռը: Ամոթի զգացումը նրա մեջ տեղի տվեց խղճի խայթոցին. չե՞ վոր այդ կնոջ առջև մեղավոր եր իր ապօրինի զգացմունքներով: Նա ավելի ցնցվեց, յերբ տիկինը բռնեց նրա թևն ընկերաբար և խնդրեց միասին չրջել ամբոխի մեջ:

Հենց առաջին հայացքից տիկինը հետաքրքրվել եր տարորինակ հատարակությամբ: Նրա աչքերի առջև տարածվել եր սև կերպարանք ների մի բանակ, ուր տերում եր ազգերի, կրոնների, լեզուների ու տարրությունների խառնուրդ: Խառնուրդ, վոր առաջին անգամն եր նա տեսնում: Նա փափագեց մերձենալ մթին ծովին, նայել խորը, տեսնել, ինչ և կատարվում հատակում:

— Ֆո՛ւ, սատանան տանի, այստեղ ամեն ինչ ապականվում ե,— ասաց Ալեքսեյ Իվանովիչը:

Նա շինելի փեշերը հավաքել եր ու բռնել փորի վրա, վորպեսզի չչվիվեն նավթոտ ցնցոտիների հետ:

— Այո՛, բայց միայն դրսից,—նկատեց Շուշանիկը լուրջ:

— Կերա՞ր,—չչնջաց Անտոնինա Իվանովնան յեղբոր ականջին,— պետք և զգույշ խոսել այդ աղջկա մոտ:

— Բայց բավական պիկանտ ե,—ասաց Ալեքսեյ Իվանովիչը:

Անտոնինա Իվանովնան մի սաստող հայացք ձգեց նրա յերեսին և դունքերը կիտեց: Շուշանիկը նրան ներչնչում եր համակրանք և հարգանք: Այդ աղջիկը նրան թվում եր սև աշխարհում մենակի բուսած մի դանք: Այդ աղջիկը նրան թվում եր սև աշխարհում մենակի բուսած մի հազվագյուտ ծաղիկ: Այսոր, ավելի ուշադիր դիտելով նրան, դատապարտում եր մտքում իրեն, վոր առաջին հանդիպման ժամանակ հետը վարվել եր անհուլթ, հեղնաբար: Վո՛չ, այդ աղջիկը նման չե իր չրջանի կանանց: Ռուսիայից դալուց հետո առաջին անգամն ե տեսնում այդպիսի խոհուն կանացի դեմք, վոր կրում ե մտավոր զարգացման դրոշմ:

Նա սկսեց խոսել Շուշանիկի հետ ամբոխի մասին, աշխատելով

Ծանոթանալ որիորդի մտավոր ու բարոյական աշխարհի հետ: Հարցուփորձ եր ունում Իշակների նկատ ու կացի, տնտեսական ու բարոյական վիճակի մասին: Շուշանիկը պատմում եր ինչ-որ դիտեր պարզ խոսքերով, առանց սև դույներով նկարագրելու դառն աշխատանքի տակ հեծող ամբոխի դրությունը: Տիկինն իր անկեղծ վարմունքով կամաց-կամաց գրավում եր նրա համակրանքը և ակամա, անդիտակցաբար յենթարկում նրան իր մտավոր գերապանցության հրապույրին: Նա նույնպես որիորդին թվում եր դրամի դործնական աշխարհը ճակատագրի քմքով ընկած մի բացառիկ եյակ, վորից միայն և միայն Սմբատը կարող և բարձր լինել: Յեվ Շուշանիկը չեր սխալվում. ուսումով, կրթությամբ, ընտանեկան վիճակով Անտոնինա Իվանովնան ամբողջ քաղաքում ներկայացնում եր բացառություն: Գլխավորապես հենց այս եր պատճառը, վոր նա բոլորի խոսակցության առարկան եր դարձել:

Սմբատը, Դավթի նշանով, բաղմեց սեղանների քով և կազմեց մի քանի յերկայնաձև մթին քառակուսիներ: Անտոնինա Իվանովնան չարունակ, թևը Շուշանիկի թևին գցած, չրջում եր. անցնում եր սեղանից սեղան, դիտում, ուսումնասիրում, խնդրելով որիորդին թարգմանել տեղացի մշակների ասածները: Իսկ մշակները հրում եյին միմյանց, բարձրաձայն ծիծաղում ուրախ-ուրախ, ավելի ու ավելի հարմարեցնելով իրենց տեղերը: «Մեծամեծների» ներկայությունը նրանց չեր նեղում. բոլորն եյ կամենում եյին ազատություն տալ իրենց տարիներով կաշկանդված կամքին: Իսկ սրա համար հարկավոր եր դիմել ըմպելիների ոգնության:

Դավիթը մոտենում եր սեղաններին ու կրկնում.

— Տղերք, խմեցեք, ինչքան քեֆիները կ, դինի-արաղ չատ եմ բերել ավել, բայց չհարբեք հա՛հա՛, ես է ասում եմ...

Այնինչ, մշակները չտապում եյին չչերը միմյանց հեռվից դատարկել: Սրախոսում եյին խմելու մասին մի ժառդոնով, վոր միայն նավթահանքերի բնակչության եր հատկանալի:

— Աղա,—ասում եր մեկը, ցույց տալով իր կոկորդը,—տրուբաս գըսարիցա[1]) իլավ, ռըզշիրիդելը[2]) դես տուր, լենացնեմ...

— Աղա, կռանդ[3]) բեց ըրա, վըրեր չանս լեցնեմ,—ասում եր մյուսը:

— Տղերք, ղղոաններդ լյավ աքացրեք, եվ ըտենց տոպկա[4]) չեք տեսնիլ...

— Ցավաչ, պառը[5]) գլխներիդ նի չի կյա...

— Աղա, չոռ տուր քըրաբաները[6])...

1) Ծորովակ կնդաստվեց, այսինքն «կոկորդս կապվեց»: 2) Լաստիչ, վոր մի տեսակ դաբճիք և նավթահորերի խողովակներն ուղղելու համար: 3) Մորակ: 4) Վառելիք 5) Շոգի. 6) Փորիչ մեքենայի գլանը, վորի վրա փաթաթվում և ու բացվում հորի մեջ գնացող պարանը:

Հայ մշակների մեջ կար մի սլատկառելի ծերուն՝ Գասպար անունով: Նա մի ժամանակ յեղել եր դյուղական տանուտեր ու հարուստ և «դխտեր մեծամեծների հետ նստել-վերկենալը»: Նա մեկ-մեկ առաջարկում եր «աղաների» կենացները և դոռում՝ «Հուռռա՛»: Ամբոխը ձայնակցում եր նրան, բաժակները վերև բարձրացնելով: Ցերը հերթը հասավ ինժեներ Սուլյանի կենացին, սիրեց անհարմար լռություն: Ամբոխը չկարողացավ կեղծել: Վոմանք, մի քիչ դինի կում անելով, բաժակները հետ դրեցին, իսկ չատերը բոլորովին չխմեցին:

— Գյադա մարդ և,—չչնջում եյին միմյանց ականջին,—մեջն աղա-յություն չկա:

Այնինչ Սուլյանը, ժպիտը յերեսին, մի ձեռը կողքին հենած, մյուսով բեղերը վոլորելով, նայում եր քծնությամբ Միքայելի դեմքին, սով բեղերը վոլորելով նրան: Այսոր ինժեները մտադիր եր նրա միջոցով չարունակ հետևելով նրան: Այսոր ինժեները մտադիր եր նրա միջոցով Սմբատին խնդրել, վոր Ալիմյան ֆերմն իր համար դնե մի բաժին ինչ վոր նոր կազմվող նավթային ընկերության մեջ:

Դարբասի առջև կանդնեց Սմբատի կառքը: Սև ծովը խլրտվեց, վոտքի կանդնեց: Գալիս եր այն մարդը, վորը, հանքերը վոտ դնելու որից, աշխատել եր բանվոր դասի կյանքը բարվոքել: Ա՛խ, վորքան նա փոխվել և վերջին ժամանակ. դեմքը կարմրել և և մի վոգր ուռել, աչքերը լայնացել են ու արյունով լեցվել: Մի՞թե այդպես չուտ են աղաները լայնացել ու սրյունով լեցվել: Մի՞թե այդպես չուտ են աղաները դնել նրա վրա անքուն դիշերներն ու սուր ըմպելիքները:

— Հուռռա՛,—գոչեց ամբոխը Գասպարի նշանով:

Սմբատը ձեռով նշան արավ, վոր վոչ վոք տեղից չչարժվի: Բայց հոդով ուրախ եր, վոր ամբոխն այսպես հարգում ու սիրում եր իրեն: Մոտեցավ Միքայելին, հարցրեց, արդյոք, ո՞հ և իր կարդադրությունից:

— Վո՛չ,—պատասխանեց Միքայելը հակիրճ:

— Ինչո՞ւ:

— Ցես կեղծ բաներ չեմ սիրում:

— Կե՞ղծ,—զարմացավ Սմբատը:

— Այո՛, յես այդ բոլորը կեղծ եմ համարում: Իրենց փողերով խեղճերի համար տոնախմբություն եք սարքում ու կարծում եք մեծ բարություն եք անում:

— Ցես բնավ այդպես չեմ կարծում:

— Վո՛չ, կարծում ես: Դուք, բոլոր դեմոկրատներդ, այդպես եք... Ցես բուրժուա յեմ, յես այդպիսի բաներ չեմ սիրում...

Նա հեռացավ: Սմբատը զարմացած նայեց հետևից, ուսերը վեր քաշելով:

Անտոնինա Իվանովնան չարունակ դիտում եր ամբոխը: Վաղաժամ թառամած դեմքերը, կոր մեջքերը, նեղս ընկած կրծքերը նրան ներ-

չնչում էին կաբեկցուԹյուն: Առհասարակ մի ժամ եր նրան պաշարել էին անսովոր մաքեր ու զգացումներ: Ամբոխի մԹին արտաքինի տակ տեսնում եր ավելի մԹին հոգեկան աշխարհ, կարող լուսո ամենաԹույլ շողերին: Նա մտածում եր. ինչո՞ւ ոգնուԹյան չդալ այդ խեղճերին: Այլևս մարդիկ վո՞ր որվա համար են ուսում առանում, յեԹե չեն կարող կամ չեն ուզում առացած լուսո պեՀ ԹուլՀ շողերը տարածել այս մութ աշխարհը:

Յեվ այստեղ, այդ պահին, նա առաջին անգամ սկսեց նախատել իրեն, վոր մինչև հիմա նչանակուԹյուն եր ավել ազգերի ու կրոնների տարբերուԹյանը: Ամաչեց այն բոլորից, ինչ-վոր զրգռված բոպեներին ասել եր Ամբաումն: Իսկ նա շատ բան եր ասել, շատ վիրավորական խոսքեր: Ի՞նչ, մի՞Թե միայն ինքն եր ասել, առանց վորևե չարժառիԹի: Վո՛չ, ինչո՞ւ յե այսքան իրեն մեղադրում, մի՞Թե ինքը պակաս և վիրավորվել Ամբաումից:

Նրա մոտալ ճակատը հետզհետե պարզվում եր, կապույտ աչքերը վառվում էին անսովոր հրով: Նրա մտքում սկսեցին պատկերանալ այն բոլոր վիպական հերոսուհիները, վորոնց սիրել եր մայրենի վեպերում և վորոնցով մի ժամանակ հափշտակվել եր: Ահա այն աշխարհը, վորին ոգնելու դաղափարը դրվատել են իր ազգի ամենաընտիր հեղինակները, ամենամաքուր մտածողները:

Նրա սիրտն սկսեց բաբախել բարձր մարդասիրական զգացումներից: Յեվ այդ պահին նա պատրաստ եր ներել սկեսրին, տալոշն ու բոլոր ազգականուհիներին, վորոնցից նա իրեն արհամարհած եր զգում: Նա տեսնում եր ազգերի ու լեզուների մի խառնուրդ, տոգորված մի-նույն ցավերով ու վշտերով: Մրի ու նավԹի սև քողը սիրվել եր հավասար ամենքի վրա ու կազմել տխուր միորինակուԹյուն: Մի՞Թե մանրակրկիտ չե այն մարդը, վոր այդ մռայլ հարԹուԹյան տակ տեսնում ե ինչ-վոր խորդ ու բորդեր, մեկին սիրում, մյուսին արհամարհում, մեկին ոգնում, մյուսին բարձիԹող անում, համարելով իր արյանն «ոտար»:

— Որիորդ,—դարձավ Շուշանիկին,—հանքերում դժբախտուԹյուններ պատահո՞ւմ են մարդկանց:

— Շատ:

— Մեծ մասամբ, իհարկե, հրդեհներից:

Շուշանիկը պատասխանեց, Թե հրդեհներն ինքնըստինքյան, բայց առհասարակ այստեղ մարդկային կյանքն ապահով չե: Կան ուրիշ անԹիվ պատահարներ: Յերեկ մեկի մատը մնաց պարանի տակ և արմատից ԹռավՀ, մեկել որը մի անփորձ մշակի մեքենայի վոկը վոլորեց, ջարդեց ու սպանեց: Իսկ սովորական հիվանդուԹյունները տանում են մեծ ԹիվԹ զոհեր:

— Լսել եմ, դուք միշտ ոգնում եք մշակներին, և նրանք ձեզ պաշտում են, ինչպես մի բարի հրեշտակի,—ասաց տիկինը կես հեգնուԹյամբ և կես լուրջ:

Շուշանիկը չիմացավ, ուրտա, յերեսը մի կողմ դարձրեց: Յերբեք նա իր չնչին ծառայուԹյունների մասին չեր մտածել:

— Գիտեք ինչ,—չարունակեց Անտոնինա Իվանովնան, նայելով որիորդի աչքերին,—ինձ Թվում է, վոր դուք, յեԹե կամենաք, շատ բաներ կարող եք անել մշակների համար: Որինակ, կարող եք Միքայել Մարկիչին համոզել, վոր նա մի հինվանդանոց էլ բաց անի:

— Ձես իրավունք չունիմ նրա գործերին խառնվելու:

— Այդ այդպես է, բայց մի՞Թե բարի գործեր կատարելու համար իրավունք է հարկավոր: Ձես էլ իրավունք չունիմ, բայց պիտի խառնվեմ... ձեր կողմից էլ: Վո՛չ, խնդրեմ, խնդրեմ... ինձ Թվում է, վոր նա ձեր խնդիրն ավելի շուտ կկատարի, քան իմը... Այո՛, այո՛, պիտի խնդրեմ ինքս էլ, ձեր կողմից էլ, ԹեկուզՀ ԹուլՀ էլ չտաք... Աա՛, դուք կարմրեցի՞ք, կնշանակե—յես ճշմարիտ եմ ասում:

ԴավիԹը Շուշանիկին կանչեց՝ քաղաքից յեկած հյուրերի համար սեղանը պատրաստելու:

Քառորդ ժամ անցած, հյուրերը հրավիրվեցին առանձին սենյակ: Սրաֆիոն Գասպարիչը բաժակ առաջարկեց Ալիմյան Փիլոմայի գործերի աջողուԹյան մասին: Տա ասելած, վոր Փիլոման որ-որի վրա ծաղկի, մնծանա և «հազարավոր մարդկանց կերակրի»:

— Մեր Փիլոման վոչ վոքի էլ կերակրում և էլ եր կերակրել,—ասաց Միքայելը տարորինակ սառմատուԹյամբ:

Սրաֆիոն Գասպարիչը խորհրդավոր:

— Այդ միայն յես գիտեմ,—նկատեց

— Վո՛չ, դու չգիտես, քեռի... յես այսօրվա ճաշն էլ ոյինբազուԹյուն եմ համարում...

Բոլորը զարմացած, նայեցին նրան: Սմբատը չգիտեր ինչպես բացատրի յեղբոր այսօրվա անսովոր տրամադրուԹյունը:

— Այո՛, ոյինբազուԹյուն եմ համարում,—կրկնել Միքայելն ավելի տաքացած,—այստեղ յես անկեղծուԹյուն չեմ տեսնում:

— Միքայե՛լ,—ասաց Սրաֆիոն Գասպարիչը,—ջահել ես, ականջ դիր, մի բան պատմեմ: Ձերը յես ուշեզդնի ճաչալնիկ եյի, Նորին ԳերազնուԹյուն վիսարիոն Պրակոֆիևիչ Սֆանասևը, ասված հոգին լուսավորի... մի որ...

Մշակների միաճայն աղաղակներն ընդհատեցին նրա խոսքը: ԴավիԹը Սրաֆիոն Գասպարիչի խոսքերը հաղորդել եր նրանց, և այժմ աղաղակում էին «հուռռա՛...»:

— Դե՛հ, ուրախացեք,—գոչեց Մխքայելը և, դուրս վազելով, գոռաց,—լո՛ւր, հիմար ամբոխ...

Նախահաշը տևեց շատ կարճ մի ջուց. ուտում էին վոտքի վրա կանգնած: Մխքայելի տարօրինակ տրամադրությունը խլեց բոլորի ախորժակը: Անտոնինա Իվանովնան դուրս չեկավ պատշգամբ, առավ Մխքայելի թևը և սկսեց նրա հետ խոսել:

— Տղերք, դո՛ւրս,—գոչեց Դավիթը,—այժմ պիտի տեսնեմ, ով կարող է գործի գնալ...

Ամբոխը միահամուռ հետևեց նրան, դուրս չեկավ փողոց:

— Գառապար ապեր, դարձավ Դավիթը, նախկին տանուտերին,— դու հին չորան ես, այծերին վոչխարներից չոկիր...

— Աչքիս վրա: Տղերք, են մեծ տախտակներից չերկուսը բերեք այստեղ:

Փողոցում կար մի փոքրիկ և շատ նոսր նավթային լճակ, չրջապատված հողային թմբով: Գառապարը հրամայեց հատատ ու չերկայն տախտակները ձգել մի ափից մինչև մյուսը և ծայրերն ամրացնել հողով ու քարով: Դոյացավ մի կամուրջ: Գառապարն ասաց, թե մշակները, բացի թուրքերից, մեկ-մեկ պիտի անցնեն այդ կամրջով: Ով ընկավ—հարբած է:

Կատակը շատ դուր չեկավ մշակներին, վոր իսկույն բարձրացրին անասելի աղաղակ:

— Դե՛հ, մեկ, չերկու, չերեք,—գոչեց Գառապարը զորավարի չեղանակով, և առաջինն ինքն անցավ աջով:

Սկսվեցին ծիծաղ, քրքիջ, հրումներ, վոտաոտումներ, բոթոցներ, դոռում-գոչյուններ: Մեկ-մեկու հետևից մշակները ղռուչչ անցնում էին կամրջով: Աչխատում էին չոտյթաքել, որովհետև աջ ու ձախ: Նրանց սև պատկերներն անդրադառնում էին լճակի անշարժ մակերեվույթի վրա, վորպես միզային սավերագծեր: Ժամանակ առ ժամանակ հարբածները կորցնում էին հավասարակշռությունը, չերերվում լարաշնագի պես և ընկնում: Սև հեղուկի թանձր չերեթը բարձրանում էին նրանց անկումից և սիրվում ափերում կանգնածների վրա: Բոլորը ծիծաղում էին, և ամենից ավելի ընկնողները: Ցերբեմն այս կամ այն կատակասեր սկսում էր պարել լճակի մեջ, ինքն իրեն ծափահարելով:

— Գաշնեք մի կոդմ, բանը պրծած է,—հրամայում էր Գառապարը:

Ամբոխը գոռաց.

— Զուպրո՛վը, Զուպրո՛վը:

Կամրջի ծայրում հայտնվեց մի ռուս բանվոր, բարձրահասակ, լայն թիկունքներով: Նա աջ ուսի վրա նստեցրել էր մի հայ բանվորի, ձախի վրա՝ մի լեզգի բանվորի:—Ցերկուսն էլ հարբած էին և ղրկել էին մյմյանց: Զուպրովը խլեց մեկից «հարմոնիան» և սկսեց, նվագելով, անցնել կամրջով, իր կապտագույն փոքրիկ ուրախ աչքերը հառած մյուս ափին: Նրա թևերը հոգնած էին, կուրծքը բաց, կարմիր չիլա չալիկն ուռել էր թեթև քամուց. նա ինքն էլ բավական հարբած էր, բայց հավասարակշռությունը պահում էր: Այնինչ, կամուրջը չէր դիմանում ծանրությանը: Զուպրովը ցած չեկավ և, մի քանի հսկայական քայլեր անելով լճակի մեջ, անցավ իր բեռան հետ մյուս ափը:

Ամբոխը դարձյալ բարձրացրեց աղաղակ.

— Ռասո՛ւլը, Ռասո՛ւլը...

Դա մի բարեկազմ լեզգի չեր: Հասնելով կամրջի մեջտեղը, հանեց պատյանից դաշույնը և սկսեց պարել վոգևորված Զուպրովի հարմոնիայից: Սուրը փայլփլում էր նրա չուրջը, ծնկների տակ, գլխի մոնիայից: Սուրը փայլփլում էր նրա չուրջը, ծնկների տակ, գլխի վրա, այտերի մոտ: Մի վայրկյան նա կանգ առավ հոգնած, չերերվից, քիչ էր մնում—ընկնի: Այդ պահին մի մեծ ձեռ բռնեց նրա վոտներից, մի ուրիշը կռնատակից և, բարձրացնելով նրան, անցկացրեց մյուս ափը:

— Մալադե՛ց կարապետ,—գոչեց Զուպրովը...

Տարբեր կրոնների, տարբեր լեզուների, տարբեր ցեղերի պատկանող այս չերեք բանվորների մեջ կար մի ամենին հայտնի մտերմություն: Նրանք հռչակված էին իրենց անվախությամբ, վայելում էին բոլոր մշակների հարգանքն ու նախանձը: Գործի էին գնում միասին, վերադառնում էին միաժամանակ, բնակվում էին միևնույն սենյակում, պիչերում միևնույն թախտի վրա: Հրդեհների ժամանակ միչտ նրանց կարելի չեր տեսնել ամենից առաջ, ամենավտանգավոր տեղերում: Ցերբ նրանք չերևում էին հրդեհի վայրում, ամբոխին տիրում էր վոգևորություն, բոլորը սիրտ էին առնում: Ցերբ մեկը վտանգի չեր ենթարկվում, մյուսներն իրենց կյանքի գնով ձգտում էին աղատել նրան կորստից: Ցերբ ուրախ էր մեկը, ուրախ էին և մյուսները, և ընդհակառակը: Նրանք իրարու հետ կատակներ էին անում, միմյանց ծաղրում, բայց վա՛յ այն մշակին, վոր կհանդգներ նրանցից մեկին վերաբերել: Իսկույն վայելում էր Ռասուլի դաշույնը, տապարել էին գալիս Զուպրովի հոժիկու բաղուկները և կարապետի լայն թիկունքները: Մի անգամ նրանք ընդհարվեցին հարևան հանքատիրոջ մշակների հետ և չերեք հոգի քսան մարդու դիմադրեցին:

Այդ բոլորը պատմեց Դավիթ Զարգարյանն Անտոնինա Իվանովնային և պատմեց, կարծես, վոչ առանց նպատակի: Տիկինը լսում էր հետաքրքրված և... մտածում:

Ամբոխը ցրվեց: Մյուս որն առավոտ նա կտեղափոխվի նոր կացարանները:

Դավիթը հյուրերին առաջարկեց՝ մյուս չինություններն էլ նայել:

չնչում էին կաբեկցուԹյուն: Առհասարակ մի ժամ էր նրան պահանջվում էին անսովոր մտքեր ու զգացումներ: Ամբոխի մԹին արտաքինի տակ տեսնում էր ավելի մԹին հոգևոր աշխարհ, կարող լուսո ամենաԹույլ շողերին: Նա մտածում էր. ինչո՞ւ ոգնուԹյան չգալ այդ խեղճերին: Այլևս մարդիկ վո՞ր օրվա համար են ուսում առնում, յԹե չեն կարող կամ չեն ուզում առացած լուսո գեԹ ԹուլՀ շողերը տարածել այս մութ աշխարհը:

Յեվ այստեղ, այդ պահին, նա առաջին անգամ սկսեց նախատել իրեն, վոր մինչև հիմա նշանակուԹյուն էր տվել ազդերի ու կրոնների տարբերուԹյանը: Ամաչեց այն բոլորից, ինչ-վոր զրգռված բոպեներին ասել էր Սմբատին: Իսկ նա շատ բան էր ասել, շատ վիրավորական խոսքեր: Ի՞նչ, մի՞ԹԵ միայն ինքն էր ասել, առանց վորևէ չարժառիԹի: Վո՛չ, ինչո՞ւ յես այսքան իրեն մեղադրում, մի՞ԹԵ ինքը պակաս է վիրավորվել Սմբատից:

Նրա մոտալ ճակատը հետզհետե պարզվում էր, կապույտ աչքերը վառվում էին անսովոր հրով: Նրա մտքում սկսեցին պատկերանալ այն բոլոր վիպական հերոսուհիները, վորոնց սիրել էր մայրենի վեպերում և վորոնցով մի ժամանակ հափշտակվել էր: Ահա այն աշխարհը, վորին ոգնելու դաղափարը դրվատել են իր ազդի ամենաբնաիր հեղինակները, ամենամտաքուր մտածողները:

Նրա սիրան սկսեց բաբախել բարձր մարդասիրական զգացումներից: Յեվ այդ պահին նա պատրաստ էր ներել սկեսրին, տալոջն ու բոլոր ազդականուհիներին, վորոնցից նա իրեն արհամարհած էր զգում: Նա տեսնում էր ազդերի ու լեզուների մի խառնուրդ, տգոբված մԹևնույն ցավերով ու վշտերով: Մրի ու նավԹի սև քողը սիվել էր հարատար ամենքի վրա ու կազմել տխուր միորինակուԹյուն: Մի՞ԹԵ մանրակրկիտ չե այն մարդը, վոր այդ մոտալ հարԹուԹյան տակ տեսնում է ինչ-վոր խորշ ու բորբեր, մեկին սիրում, մյուսին արհամարհում, մեկին ոգնում, մյուսին բարձիԹող անում, համարելով իր արյանն «ոտար»:

— Որիորդ,—դարձավ Շուշանիկին,—հանքերում դժբախտուԹյուններ պատահո՞ւմ են մարդկանց:

— Շատ:

— Մեծ մասամբ, իհարկե, հրդեհներից:

Շուշանիկը պատասխանեց, ԹԵ հրդեհներն ինքնըստինքյան, բայց առհասարակ այստեղ մարդկային կյանքն ապահով չե: Կան ուրիչ անԹիվ պատահարներ: Յերեկ մեկի մատը մնաց պարանի տակ և արմատից ԹռավՀ, մեկել որը մի անփորձ մշակի մեքենայի փոկը վոլորեց, ջարդեց ու սպանեց: Իսկ սովորական հիվանդուԹյունները տանում են մեծ ԹիվՀ զոհեր:

— Լսել եմ, դուք միշտ ոգնում եք մշակներին, և նրանք ձեզ պաշտում են, ինչպես մի բարի հրեշտակի,—ասաց տիկինը կես հեգնուԹյամբ և կես լուրջ:

Շուշանիկը չխոԹված, ակամա, յերեսը մի կողմ դարձրեց: Յերբեք նա իր չնչին ծառայուԹյունների մասին չէր մտածել:

— Գիտեք ինչ,—չարունակեց Անտոնինա Իվանովնան, նայելով որիորդի աչքերին,—ինձ Թվում է, վոր դուք, յերեք կամենաք, շատ բաներ կարող եք անել մշակների համար: Որինակ, կարող եք Միքայել Մարկիչին համոզել, վոր նա մի հիվանդանոց էլ բաց անի:

— Յես իրավունք չունեմ նրա գործերին խառնվելու:

— Այդ այդպես է, բայց մի՞ԹԵ բարի գործեր կատարելու համար իրավունք է հարկավոր: Յես էլ իրավունք չունեմ, բայց պիտի խառնվեմ... ձեր կողմից էլ: Վո՛չ, խնդրեմ, խնդրեմ... ինձ Թվում է, վոր նա ձեր խնդիրն ավելի շուտ կկատարի, քան իմը... Այո՛, այո՛, պիտի խնդրեմ ինքս էլ, ձեր կողմից էլ, ԹեկուզՀ ԹուլՀ էլ չտաք... Ա՛, դուք կարմրեցի՞ք, կնշանակե—յես ճշմարիտ եմ ասում:

ԴավիԹը Շուշանիկին կանչեց՝ քաղաքից յեկած հյուրերի համար սեղանը պատրաստելու:

Քառորդ ժամ անցած, հյուրերը հրավիրվեցին առանձին սենյակ: Սրաֆիոն Գասպարիչը բաժակ առաջարկեց Ալիմյան ֆիրմայի գործերի աջողուԹյան մասին: Նա ասաված, վոր ֆիրման որ-որի վրա ծաղկի, մեծանա և «հազարավոր մարդկանց կերակրի»:

— Մեր ֆիրման վոչ վոքի չի կերակրում և չի էլ կերակրել,—ասաց Միքայելը տարորինակ սարմանուԹյամբ:

— Այդ միայն յես գիտեմ,—նկատեց Սրաֆիոն Գասպարիչը խորհըրդավոր:

— Վո՛չ, դուք չգիտես, քեռի... յես այսորվա ճաշն էլ ոյինբաղուԹյուն եմ համարում...

Բոլորը զարմացած, նայեցին նրան: Սմբատը չգիտեր ինչպես բացատրի յեղբոր այսորվա անսովոր տրամադրուԹյունը:

— Այո՛, ոյինբաղուԹյուն եմ համարում,—կրկնել Միքայելն ավելի տաքացած,—այստեղ յես անկեղծուԹյուն չեմ տեսնում:

— Միքայի՛լ,—ասաց Սրաֆիոն Գասպարիչը,—ջահել ես, ականջ դիր, մի բան պատմեմ: Յերբ յես ուչեզդնի նաչալնիկ եյի, Նորին ԳերազանցուԹյուն վիսարիոն Պրակոֆիևիչ Ա.ֆանասևը, ասված հոգին լուսավորի... մի որ...

Մշակների միաձայն աղաղակներն ընդհատեցին նրա խոսքը: ԴավիԹը Սրաֆիոն Գասպարիչի խոսքերը հաղորդել էր նրանց, և այժմ վերջը Սրաֆիոն Գասպարիչի խոսքերը հաղորդել էր նրանց, և այժմ աղաղակում էին «հուռռա՛...»:

— Դե՛հ, ուրախացեք,—գոչեց Մխքայելը և, դուրս վազելով, գոռաց,—լո՛ւր, հիմար ամբոխ...

Նախաճաշը տևեց շատ կարճ միջոց. ուտում էին վոտքի վրա կանգնած: Մխքայելի տարօրինակ տրամադրությունը խլեց բոլորի ախորժակը: Անտոնինա Իվանովնան դուրս չեկավ պատշգամբ, առավ Մխքայելի թևը և սկսեց նրա հետ խոսել:

— Տղերք, դո՛ւրս,—գոչեց Դավիթը,—այժմ պիտի տեսնեմ, ով կարող է զործի զնալ...

Ամբոխը միահամուռ հետևեց նրան, դուրս չեկավ վողջ:

— Գասպար ապեր, դարձավ Դավիթը, նախկին տանուտերին,— դու հին չոբան ես, այծերին վոչխարներից չոկիր...

— Աչքիս վրա: Տղերք, են մեծ տախտակներից չերկուսը բերեք այստեղ:

Փողոցում կար մի վոքրիկ և շատ նոսր նավթային լճակ, չրջապատված հողային թմբով: Գասպարը հրամայեց հաստ ու չերկարյա տախտակները ձգել մի ափից մինչև մյուսը և ծայրերն ամրացնել հողով ու քարով: Գոյացավ մի կամուրջ: Գասպարն ասաց, թե մշակները, բացի Թուրքերից, մեկ-մեկ պիտի անցնեն այդ կամրջով: Ով ընկավ—հարբած է:

Կատակը շատ դուր չեկավ մշակներին, վոր իսկույն բարձրացրին անասելի աղաղակ:

— Դե՛հ, մեկ, չերկու, չերեք,—գոչեց Գասպարը զորավարի չեզանակով, և առաջինն ինքն անցավ աջող:

Սկսվեցին ծիծաղ, քրքիջ, հրումներ, վոտաստումներ, բոթոցներ, գոռում-գոչյուններ: Մեկ-մեկու հետևից մշակները զգուշ անցնում էին կամրջով: Աչխատում էին չսայթաքել, որովհետև աջ ու ձախ: Նրանց սև պատկերներն անդրադառնում էին լճակի անշարժ մակերեվույթի վրա, վորպես մեզային սավերագծեր: Ժամանակ առ ժամանակ հարբածները կորցնում էին հավասարակչռությունը, չերերվում լրազնացի պես և ընկնում: Սև հեղուկի թանձր չերթերը բարձրանում էին նրանց անկումից և սիրում ափերում կանգնածների վրա: Բոլորը ծիծաղում էին, և ամենից ավելի ընկնողները: Ցերբեմն այս կամ այն կատակասեր սկսում էր պարել լճակի մեջ, ինքն իրեն ծափահարելով:

— Տաչեք մի կտոր, բանը պրծած է,—հրամայում էր Գասպարը:

Ամբոխը դոռաց.

— Զուպրո՛վը, Զուպրո՛վը:

Կամրջի ծայրում հայտնվեց մի ռուս բանվոր, բարձրահասակ, լայն թիկունքներով: Նա աջ ուսի վրա նստեցրել էր մի հայ բանվորի, ձախի վրա՝ մի լեզգի բանվորի:—Ցերկուսն էլ հարբած էին և ղրկել էին

մեկին: Զուպրովը խլեց մեկից «հարմոնիան» և սկսեց, նվագելով, անցնել կամրջով, իր կապտագույն վոքրիկ ուրախ աչքերը հառած մյուս ափին: Նրա թևերը հոլանի էին, կուրծքը բաց, կարմիր չիլա չալիկն ուռել էր թեթև քամուց. նա ինքն էլ բավական հարբած էր, բայց հավասարակչռությունը պահում էր: Այնինչ, կամուրջը չէր զիմանում ծանրությանը: Զուպրովը ցած չկկավ և, մի քանի հսկայական քայլեր անելով լճակի մեջ, անցավ իր բեռան հետ մյուս ափը:

Ամբոխը դարձյալ բարձրացրեց աղաղակ.

— Ռասո՛ւլը, Ռասո՛ւլը...

Դա մի բարեկազմ լեզգի չէր: Հասնելով կամրջի մեջտեղը, հանեց պատյանից դաշույնը և սկսեց պարել վոգևորված Զուպրովի հարմոնիայից: Սուրը փայլփլում էր նրա չուրջը, ծնկների տակ, գլխի վրա, այտերի մոտ: Մի վայրկյան նա կանգ առավ հոդնած, չերեվից. քիչ էր մնում—ընկնի: Այդ պահին մի մեծ ձեռ բռնեց նրա վոտներից, մի ուրիշը կռնատակից և, բարձրացնելով նրան, անցկացրեց մյուս ափը:

— Մալադե՛ց կարապետ,—գոչեց Զուպրովը...

Տարբեր կրոնների, տարբեր լեզուների, տարբեր ցեղերի պատկանող այս չերեք բանվորների մեջ կար մի ամենին հայտնի մտերմություն: Նրանք հռչակված էին իրենց անվախությամբ, վայելում էին բոլոր մշակների հարգանքն ու նախանձը: Գործի էին զնում միասին, վերադառնում էին միաժամանակ, բնակվում էին միևնույն սենյակում, դիչերում միևնույն թախտի վրա: Հրդեհների ժամանակ միշտ նրանց կարելի չէր տեսնել ամենից առաջ, ամենավտանգավոր տեղերում: Ցերը նրանք չերևում էին հրդեհի վայրում, ամբոխին սիրում էր վոգևորություն, բոլորը սիրտ էին առնում: Ցերը մեկը վտանգի չեն թարկվում, մյուսներն իրենց կյանքի զնով ձգտում էին ազատել նրան կորստից: Ցերը ուրախ էր մեկը, ուրախ էին և մյուսները, և ընդհակառակը: Նրանք իրարու հետ կատակներ էին անում, միմյանց ծաղրում, բայց վա՛յ այն մշակին, վոր կհանդգներ նրանցից մեկին վիրավորել: Իսկույն վայլում էր Ռասուլի դաշույնը, ասպարեզ էին դալիս Զուպրովի հուժկու բազուկները և կարապետի լայն թիկունքները: Մի անգամ նրանք ընդհարվեցին հարևան հանքատիրոջ մշակների հետ և չերեք հոգի քսան մարդու դիմադրեցին:

Այդ բոլորը պատմեց Դավիթ Զարգարյանն Անտոնինա Իվանովնային և պատմեց, կարծես, վոչ առանց նպատակի: Տիկինը լսում էր և պատմեց, հետաքրքրված և... մտածում:

Ամբոխը ցրվեց: Մյուս որն առավոտ նա կտեղափոխվի նոր կացարանները:

Դավիթը հյուրերին առաջարկեց՝ մյուս չինությունները ևս նայել:

Դրսում սպասում էին մի քանի կառքեր: Բոլորն ընդունեցին նոա հրավերը: Բակն ու պատշգամբը դատարկվեցին:

Արդեն մի ամբողջ ժամ էր Միքայելն առիթ էր վորոնում Շուշանիկի հետ առանձին տեսնվելու: Ոգևորվով հյուրերի բացակայությունից, նա անցավ այն սենյակը, ուր որիորդը մի մշակի ողնությամբ, հավաքում էր սեղանը:

Նա ներս մտավ տենդային հուզման մեջ, նչան արավ մշակին հեռանալ և դռները փակեց:

Շուշանիկը ցնցվեց: Տեր աստված, ելի այդ մարդն ի՞նչ է ուզում նրանից: Նա ամոթից և յերկյուղից սկսեց դողալ այնպես, վոր ձեռքից բաց թողեց բաժակները և կոտրեց: Փախչե՞լ, թե՞ մնալ: Բայց դռները փակ են: Եհ, թող ինչ լինելու յե լինի: Նա չպիտի վախենա, նա կարող է իրեն պաշտպանել:

Միքայելը մոտեցավ, կանգնեց դեմ ու դեմ, սեղանի մյուս կողմում:

— Ասացեք խնդրեմ,—սկսեց նա յերերուն ձայնով,—դուք ո՞վ եք, վոր մեր գործերին խառնվում եք, հը՞ը, ո՞վ եք: Դուք ի՞նչ իրավունքով եք Անտոնինա Իվանովնայի միջոցով ինձ խնդրում այս անել, այն անել մշակների համար ըը՞ը: Չլինի կարծում եք, թե յես էլ ձեր սիրած մարդասերներից կամ դեմոկրատներից եմ: Վո՛չ, յես ատելով ատում եմ բոլոր բարեգործներին, յես վոչինչ, վոչինչ չեմ ուզում անել բանվորների համար և չեմ անիլ: Յես իմ քեֆի մարդ եմ, ուզածս եմ անում: Կամենաք հենց վաղը կհրամայեմ քանդել Սմբատի չինել տված տները և մշակներին կթողնեմ բաց ոդի տակ: Այո՛, կանեմ... կամենաք ձեր տունն էլ քանդել կտամ, այդ բոլոր հանքերն էլ կրակ կդցեմ: Ինձ համար գրո՞շի գին չունի մարդկանց կարծիքը... Ի՞նչ իրավունքով եք ինձ խորհուրդներ տալիս...

— Սպասեցե՛ք, պարոն Ալիմյան, յես յերբեք...

— Մի՛ կեղծեք, ասեված սիրեք: Դուք Անտոնինա Իվանովնայի հետ խոսել եք: Կարելի յե, դուք այն էլ ասեք, թե ինձանից չե՞ք փախչում կամ Սմբատին չե՞ք սիրում: Եհ՛, ամաչո՞ւմ եք... Իսկ յես վոչընչից չեմ ամաչում, բոլորը կասեմ... Լսեցե՛ք... Դուք կամեցաք: վոր յես ստորանամ—ստորացա, կամեցաք՝ արժանանամ ընկերներիդ արհամարհանքին—արժանացա, փախչեմ հասարակությունից՝ փախա: Այժմ ուզում եք, վոր ձեր գործակատա՞րը դառնամ: Ներեցե՛ք, չեմ կարող...

Շուշանիկը չդիտեր ինչպես պատասխանի այդ անկապ խոսքերին: Նա՛ ուզում էր խոսել, բայց դրդված Միքայելը չեր թողլ տալիս նրան՝ բերանն անգամ բանալու:

— Ո՞վ եք դուք, ո՞վ և ձեր հորեղբայրը, ձեր բոլոր ընտանիքը չամ հենց ամբողջ հասարակությունն ինձ համար:—Վոչնչություն, քամի, այ, իմ նավթահորերի դաշը... Յես արհամարհում եմ մարդկանց կարծիքները: Յես Միքայել Ալիմյանն եմ, հարուստ, ինքնաղլուխ իշխան: Քեֆս կտա, կոշնեմ մարդկանց, չի տա—կջարդեմ, վոնտատակ կանեմ: Յես ատելով ատում եմ բոլոր կանանց... Հա՛–հա՛–հա՛: «Ոչ որքան՞ դանաղանություն կա ձեր և ձեր յեղբոր մեջ»: Իմ և Սմբատի՞ մեջ: Այո՛, կա: Նա խելոք է, յես հիմար, նա կրթված է, յես անկիրթ, նա բարոյական մարդ է, յես անբարոյական: Հետո՞, ինչ եք ուզում դրանով ասել: Բայց... բայց յես ելի ձեզ արհամարհում եմ... Հա՛ հա՛–հա՛, կոտր ընկած մի վաճառականի աղջիկ, ժամանակակից որիորդ, դեղեցկուհի, համեստ, հրեշտակի պես հեզ, ինտելիգենտ, լղհալներ յերազող, հա՛–հա՛–հա՛...

Նրա ծիծաղն անբնական եր, նույնիսկ յերկյուղալի Շուշանիկի համար: Նա, կարծես, դառանցում եր, չդիտեր իր ասածների միտքը: Շունչը հետզհետե սպառվում եր, մերթ նստում եր, մերթ վեր կենում, անդամ ձեռն ուժգին ղարկելով սեղանին:

Նա չարունակեց նույն ուղղությամբ, նույն անկապ խոսքերով, Ո՛ո, նա դիտե, այժմ Շուշանիկն ինչ է մտածում: Թող այնքան հիմար չհամարի Միքայել Ալիմյանին: Ո՞ւմ չի հայտնի, վոր անվորձ կանայք այն տղամարդկանց են սիրում, վորոնք «խորհրդավոր» են կամ դժբախտ, կամ քիչ են խոսում, կամ խելոք են ձևանում: Բայց բոլոր տղամարդիկ միմյանց նման են, յեթե լավ ճանաչես: Ինքը՝ Միքայել Ալիմյանը կարող է վատ էլ լինել, լավ էլ, չար էլ, բարի յել, վախկոտ էլ, քաջ էլ: Բոլորը կախված է հանդամանքներից: Նա բոպեյի մարդ է, չատ անդամ մի բան մտածում է, անում է հակառակը:

— Հենց այն որն էլ այդպես էլի, հը՞ը՞մ եք այն որը: Իհարկե, չեք մոռանալ: Բայց յես... յես խոսքն մոռանում եմ վիրավորանքը: Դիտեք, յես վիշտած եմ, ընկած, ղղվելի, ինչ կամենաք, բայց այստեղ, ա՛յ, այս կրծքի տակ ղղացմունք կա, հասկանո՞ւմ եք: Յես ընդունակ եմ մի ժամում ձեղ և՛ ստորացնել, և՛ բարձրացնել, և՛ ապալել, և՛ ձեր վոտների տակ տապալվել: Հասկացե՛ք այս բանը, հասնչեցե՛ք ինձ, վերջապես: Հայրս ինձ զիժ եր համարում, բայց տե՛ս, յես քանի՛–քանի՛ վիրավորանքներ ստացա և ինձ զսպեցի: Յես որինավոր մարդ չեմ, եհ՛, չատ հարկավո՞ր ե: Բայց, համբերեցե՛ք, մի որ ինձ համար... Ուղո՞ւմ եյի դրազ դալ, վոր դուք ինձ հավթել չեք կարող... դուք բարոյական, յես անբարոյական...

— Յես ձեղ հետ մրցելու վո՛չ ուժ ունիմ, վո՛չ ցանկություն:

— Դուք ինձ զղվանք եք ցույց տալիս:

— Իմ գովանքը ձեզ համար չի կարող նշանակություն ունենալ: Դուք հարուստ եք, յես աղքատ...

— Ցես ձեզ խնդրում եմ հարստության և աղքատության մասին չխոսել...

— Ի՞նչպես չխոսել, քանի վոր ինքներդ մի քիչ առաջ պարծեցաք, թե հարուստ եք, ամեն բան կարող եք անել: Բա՛ց արեք դռները...

— Ցես ձեզ այդ ասացի՞... Ի՞նչ է նշանակում... Ցես վոչինչ չոսասցի, բայց կաբելի յե, ո՞վ գիտե... Ցես այնքան զրդռված եմ, վոր չգիտեմ ինչ եմ խոսում:

— Այդ յերևում է: Բա՛ց արեք դռները: Տանն ինձ սպասում է կոտր ընկած վաճառականը, անդամալույծ հայրս:

Այս խոսքերը բոլորովին զինաթափ արին Միքայելին:

— Որիորդ,—արտասանեց նա, այժմ ինքն իր դեմ բարկանալով,— յես չգիտեի, վոր ձեզ կարող է վիրավորել ամեն մի խոսք... Ներեցեք, յես ամեն մի բառ չեմ կարող մի ժամ մտածելուց հետո ասել... բերանիցս թռավ: Իսկ յեթե կամենում եք ճշմարտությունն իմանալ, լսեցե՛ք. հարստությունը շատ մարդկանց փչացնում է... Ցերևի, այժմ կհավատաք...

— Մի՞թե,—արտասանեց Շուշանիկն անեղկյուղ հեգնությամբ,— ինչո՞ւ բոլորին չի փչացնում:

— Գիտեմ, իմ յեղբոր մասին եք ասում... բայց դեռ վաղ է, սպասեցե՛ք, ո՞վ գիտե, ինչ կպատահի... Նա դեռ նոր է փողի համն առնում... Իսկ յես արդեն զզվել եմ...

Քանի գնում այդ մարդն անհասկանալի յեր դառնում: Մերթ հանկարծ կատաղում եր ու ձայնը բարձրացնում, մերթ չվոխվում ու բառերը չվոխում: Ցեվ Շուշանիկը չգիտեր նրա վո՛ր խոսքին կամ տոնին հավատա, վորին՝ վո՛չ: Միևնույն ժամանակ, այժմ նա ակամա հետաքրքրվում եր հենց նրա անհասկանալիությամբ: Մի՞թե բոլորը, ինչ վոր ասում է, կեղծ է: Կոմեդիա: Վերջապես, ի՞նչն է ստիպում այդ մարդուն խոսել այդպես: Մի փչացած մարդ, առանց խորին պատճառի այդպես չի բորբոքվիլ: Ի՞նչ է նշանակում այդ: Վիրավորված ինքնասիրությո՞ւն, սե՞ր, հի՞ք, ատելությո՞ւն, թե՞ զղջում: Կարծես, բոլորն էլ խառնվել են միմյանց: Նրա դեմքն անդամ անհասկանալի յե դարձել. մերթ թվում է ոգեղ ու հզոր, մերթ դեղեցիկ: Իսկ այդ սպին նրա ճակատի վրա, խայտառակության այդ անջնջելի դրոշմը, կարծես, այլևս դարչ տպավորություն չի անում...

Բայց այդ ի՞նչ է: Այն մարդը, վոր կատաղի արտահայտում եր սրտի թուլությունը, այժմ բոլորովին անհասկանալի դարձավ: Թուլացած, ընկճված, նստեց աթոռի վրա, նայեց մոլոր հայացքով Շուշանիկի յերեսին, դրեց գլուխը սեղանի ծայրին, և հեկեկում է: Այո՛, հեկեկում

է, ինչպես յերեխա: Այդ արդեն կոմեդիա չե, մարդ չի կարող արհեստական կերպով այդպես արտասվել: Բայց արտասուք և Միքայել Ալիխյան — ի՛նչ հակադրություններ:

Ձեռները հենած աթոռի մեջքին, աչքերը լայն բայց արած Շուշանիկին ապշած նայում եր: Ցեվ այն, ինչ-վոր տեսնում եր, թվում եր նրան յերազ, այնքան անբնական եր նրա աչքում:

Միքայելն արագությամբ վոտքի կանգնեց, աչքերը սրբեց: Նա բաց արավ դռները և ասաց.

— Գնացե՛ք, այսուհետև ձեզ հանգիստ կթողնեմ, գնացե՛ք... բայց մոռացեք բոլոր ասածներս... Հենց այնպես, հիմար եյի, անքնության յեր, հիվանդ եմ...

Ցեվ դարձյալ մոտենալով սեղանին, ընկղմվեց աթոռի վրա:

— Տեր աստված,—դիմավորեց Շուշանիկին Անտոնինա Իվանովնան, կառքից ցած գալով,—այսոր դուք կատարելապես հիվանդ եք: Գնանք ձեր տուն, յես ուզում եմ ձերոնց հետ ծանոթանալ: Տվե՛ք ինձ ձեր թևը...

— Իմ թևը մի՛ առնեք, արժանի չե,—ասաց Շուշանիկը, ձեռը ցնցողաբար խլելով տիկնոջից:

Անտոնինա Իվանովնան նայեց նրա յերեսին զարմացած և հետո ներքևի շուրթը սեղմեց ատամներով, գլուխը խորհրդավոր չարժելով: Նա բոլորովին սխալ հասկացավ որիորդի հոգեկան դրությունը, սխալ և վիրավորական...

II

Անցավ յերկու-յերեք շաբաթ: Քաղաքում կյանքը չարունակվում եր նույն ուղղությամբ: Տիկին Մարթան գրեթե ամեն որ գալիս եր և մորը լարում հարսի դեմ: Վոսկեհատը ստեպ-ստեպ ընդհարվում եր Անտոնինա Իվանովնայի հետ: Ընդհարման առիթները շատ եյին, բայց մշտականը յերեխաներն եյին: Մայրն աշխատում եր նրանց հեռու պահել ընտանիքի վատ ազդեցությունից, տատը ձգտում եր տիրանալ նրանց: Այստեղից առաջանում եյին ընտանեկան անընդհատ փոթորիկներ, վորոնց դեմ Սմբատը միանգամայն իրեն անզոր եր զգում: Մերթ մորն եր հանդիմանում, մերթ կնոջը: Ցերկու կողմն էլ պաշտպանում եյին իրենց իրավունքները յեռանդով:

— Նա մեզ բոլորիս ատում է, ուռած ու փքված է,—ասում եր մայրին,—վիղիտներ չի անում, յերեխաներին տանը փակած է պահում, վոչ վոքի մոտ չի թողնում գնան: Մոտս մի բարեկամ կնիկ գալիս, առաջը չի դուրս գալիս, մի բաժակ թեյ չի առաջարկում: Ինձ ծաղ-

րում են աղջկաններս... Ցես ապրուստ չունիմ, վորդի, դու էլ չունես, ձեռ քաշիր այդ կնոջից:

Անտոնինա Իվանովնան բացատրում էր իրողությունն այլ կերպ: Նա վոչ վոքի չի ատում, չի արհամարհում, պատրաստ է բոլորի հետ հաշտվել, բայց Թող նրանից անկարելին չպահանջեն: Նա ունի իր հայացքները, ճաշակը, ինքնասիրությունը: Չի կարող ժամերով նստել այս ու այն անկիրթ աղջականուհու հետ, լսել նրա բամբասանքները, ինքն էլ բամբասել: Նա չգիտե նրանց հետ վարվելու, մինչև անգամ խոսելու ձևը: Նա չի ուզում իր սիրտը բացատրել այդ կանանց, վորոնք ուժով ներմուծում են նրա հոգևկան աշխարհը, կամենում են իմանալ, վո՛ր ժամին է քնում, վո՛ր ժամին զարթնում, ի՛նչ մտածում, ո՛ւմ սիրում, ի՛նչ ատում: Պահանջում են, վոր նա այցելի աննպատակ, չտայլ ընտանեկան յերեկույթներն ու ճաշերը, հագնվի այնպես, ինչպես ուրիշները, սիրե այն կերակուրները, վոր սիրում են աղջականուհիները, չարախոսի նրանց թշնամիներին, կեղծավորի բարեկամներին, նույնիսկ Թուղթ խաղա...

— Ցես ինձ վերաստեղծել չեմ կարող, թեկուզ կամենամ էլ: Իմ և այդ կանանց մեջ ահագին անդունդ կա, չեմ ուզում և չեմ կարող կեղծիքով լցնել այդ անդունդը: Ցեվ վոչ էլ ձեր մայրն է կարող: Ուրեմն, ինչո՞ւ միմյանց խարենք...

Սմբատը վախչում էր տնից՝ այս զանգատներից ազատվելու համար: Առավոտն իջնում էր գրասենյակ, կարգադրում էր անհրաժեշտ գործերը և անհայտանում: Վոչ վոքի չէր հաղորդում սրտի դառնությունները և անվայել էր համարում հաղորդելը: Ո՞վ կհասկանա նրա կյանքի ամբողջ դրաման՝ իր բոլոր նրբություններով: Միայն նա, ով համանման վիճակի մեջ է: Իսկ այսպիսի մի յերկրորդը դեռ չկա ամբողջ քաղաքում: Ուրիշ տեղերում չատ կան, բայց այստեղ միակն է, Թող միայն ինքն իմանա իր ցավերը:

Արշակը Զինոփսային գնալու հույսը Թողել էր և, Ալեքսեյ Իվանովիչի չնորհիվ, գտել Ելմիրային: Դա մի նորեկ կոկետուհի էր — մայրաքաղաքի հաճույքների զգրոցն անցած մի դեղեցկուհի: Մի արկածախնդիր, վոր յկել էր «վոսկե քաղաքում» բախտ վորոնելու: Տեսնելով նոր սիրուհու հետ գիշերները, ցերեկներն Արշակը Թափառում էր հյուրանոցից հյուրանոց և ամենուրեք վորոնում նորանոր զվարճություններ: Ալեքսեյ Իվանովիչի պաշարն անսպառ էր. ամեն որ իր աշակերտի համար պարզում էր աշխարհային մի վորևե նոր գաղտնիք, ծանոթացնելով նրան «կյանքը սիրողների» ամենանուրբ և ամենահոտուղիչ հաճույքների հետ: Այժմ պատանին փողի պակասություն չուներ: Սմբատը տալիս էր առատ, մասամբ մոր անվերջ Թախանձանքներից ու արցունքներից հարկադրված, մասամբ իր գլուխն ազատելու համար:

Իսահակ Մարութխանյանը դադարել էր Ալիմյաններին այցելել. չէ՞ վոր Միքայելը նրան «անամոթաբար» վռնդեց իր տնից: Նա այլևս այդ ընտանիքի հետ վոչինչ կապ չունի, բայց սպասիր «անպատկառ մանուկ», մի որ Մարութխանյանը ցույց կտա քեզ իր ասեղները:

Ամեն յերեկո նա իր կաբինետում համարակալի վրա զանազան հաշիվներ էր անում: Հանում էր յերկաթե սնդուկից ինչ-վոր Թղթեր, նայում ստորագրությանը, կարդում, հրճվում և հետո ծալում խնամքով ու դնում նորից իրենց տեղը, կրկնելով.

«Հիմա՛ր տղա...»:

Ցերեկն կնոջից տեղեկություններ էր հարցնում Ալիմյանների ընտանեկան գործերի մասին (առևտրականը նրանցից լավ գիտեր): Հետաքրքրվում էր յեղբայրների հարաբերություններով, մանավորապես հարցնում էր Միքայելի մասին. ինչո՞ւ քաղաք չի գալիս, մի՞թե հանքային գործերն են նրան այդչափ զբաղեցնում:

— Մեջտեղ անպատճառ մի յեվ կլինի,—ասում էր խորհրդավոր:

Նա մի առանձին հաճույքով վերագրում էր Միքայելին ամենագարշ հատկանիշներ, ամենասուտ միտումներ: Մի որ Մարթան հազորդեց, Թե Անտոնինա Իվանովնան տեղափոխվում է հանքերը: Իսահակը, կանաչ-դեղնադուն աչքերն ակնոցների տակից սևեռելով կնոջ յերեսին, ասաց.

— Ցես տեսնում, վոր մեջտեղ մի յեվ կա:

Նա կարծում էր, վոր իր կինը, չափից դուրս տեղով Անտոնինա Իվանովնային, չի խղճահարվիլ մի ամենահեզաոտ ակնարկ ընդունել յեղբոր կնոջ վերաբերմամբ: Բայց Մարթան վրդովվեց մինչև հոգու խորքն՝ ամուսնու ակնարկից և բորբոքված գոչեց.

— Չհամարձակվի՛ս, իմ յեղբայրը քեզ պես մարդ չէ...

— Ցես վոչինչ չասացի... Ցես միայն ուզում եմ, վոր յեղբայրդ ամուսնանա:

Ցեվ այդ որից նա նույնը կրկնում էր ամեն որ, ստիպելով Մարթային, վոր համոզի Միքայելին ամուսնանալու: Մի անգամ, վերջապես, կինը զարմացած, հարցրեց.

— Չեմ հասկանում, ինչո՞ւ յես դու այդքան հոգս անում նրա ամուսնանալու մասին...

— Հաշիվներ ունիմ...

— Ի՞նչ հաշիվներ:

— Ե՛հ, մի որ կիմանաս ելի, դեռ վաղ է...

Այնինչ, Միքայելը վոչ միայն ամուսնանալու տրամադրություն չուներ, այլև կյանքի սերը, կարծես, որ-որի վրա Թուլանում էր նրա

մեջ: Նա գործերը դրեթե ամբողջովին հանձնել էր Դավիթ Զարդարյանին, վորից հաշիվ անգամ չէր ուզում ընդունել: Նա վոչ միայն քաղաք չէր գնում, չատ անգամ անից էլ դուրս չէր գալիս:

«Ինչո՞ւ, ի՞նչ պատահեց այդ մարդուն», հարցնում էր մտքում Դավիթը և պատասխանը փորձում էր կարդալ Մինքայելի դեմքի վրա: Ա՛խ, նա կույր չէր և վոչ հիմար. վաղուց արդեն ղգում էր, վոր Մինքայելը հետամուտ է Շուշանիկին, վոր որիորդը վոչ միայն չի քաշվերում նրան, այլև փախչում է նրանից: Նա մտքում դովում էր իր յեղբոր աղջկա հպարտությունը, բայց, միևնույն ժամանակ, վախենում էր: Մինքայելը կանանց վերաբերմամբ անզուսպ է, կարող է խիստ միջոցների դիմել մի աղքատ աղջկա անտարբերությունը պատժելու համար: Ի՞նչ ստորության ընդունակ չէ մի բարոյապես ընկած մարդ, մանավանդ, յերբ ձեռքում ունի փողի պես ամենազոր միջոց: Ո՛ւ, վո՛չ, վո՛չ, Թող միայն համարձակվի այդ մարդը, Դավիթը կյանքը չի խնայիլ՝ Շուշանիկի պատիվը պաշտպանելու համար:

Բայց գլխավորն այս չէ, կա ավելի լուրջ բան: Բոլոր նշաններից յերևում է, վոր Շուշանիկը դեպի մյուս Ալիմյանը տածում է խուլ համակրություն: Ահա վտանգավորը, ահա ինչի առաջը պիտի առնել: Ճշմարիտ է, Սմբատն ազնիվ մարդ է, Շուշանիկը խելոք աղջիկ, բայց ո՞վ կարող է յերաշխավորել նրանց ղգաստության մասին, յեթե հանկարծ համակրությունը փոխվի փոխադարձ սիրո: Չե՞ վոր այդ հնարավոր է. ինչ անենք, վոր Սմբատը հարուստ է, Շուշանիկն աղքատ, այդ տեսակ դեպքեր քի՞չ են պատահել: Պետք է ղգույշ լինել, հեռևել նրանց...

Դավիթն ուրախացավ, յերբ Սմբատը դադարեց այցելել հանքերը: Սակայն չուտով ղգաց, վոր այդ ավելի չի ազդում Շուշանիկի վրա: Նկատում էր, վոր որիորդն որից-որ թառամում է, մաշվում ու մոայլանում, դառնալով, միևնույն ժամանակ ներվային, դյուրագրգիռ, վորպես թոքախտավոր:

Աննան ամեն որ ասում էր.

— Յերեխաս մոմի պես հալվում է, ասուլած սիրես, Դավիթ, ճամբեր նրա ցավը:

Մի գիշեր Աննան, անդամալույծին լուր մատուցանելիս, լսեց մյուս սենյակից Շուշանիկի ղողոջը: Անցավ այնտեղ լամպարը ձեռին, նայեց: Աղջիկը քնած էր և յերազում խոսում էր: Աննան ցնցվեց, լսելով յերազողի բերանից մի քանի անգամ Սմբատի անունը: Հետևյալ որը նա տեսածը պատմեց Դավթին և կրկին թախանձեց նրան «իմանալ յերեխայի ցավը»:

— Շուշան,—ասաց Դավիթը նույն որը յերեկոյան՝ ընթրիքից հետո.—գնանք սենյակը, ուզում եմ քեզ հետ մի բանի մասին խոսել:

Շուշանիկը կամեցավ ծալել ձեռի գործը և վեր կենալ: Սարդիսն ընդդիմացավ:

— Չհամարձակվես, կարդա՛ մինչև քնելս...

Ցեվ մի ժամու չափ անդամալույծ յեսամոլը տանջեց անձնվեր աղջկան, մինչև վոր ներհեց նրա քաղցրահնչյուն ձայնի որորով:

Մանելով որիորդի սենյակը, Դավիթը մի հարատև, սուր ու թափանցող հայացք ձգեց նրա վրա: Ցեվ սկսելով հեռվից, չատ հեռվից, ղգուշաբար մոտեցավ եյականին: Սիրող հովանավորի իրավունքով հորդորում էր Շուշանիկին խելքի դալ, դառնալ առաջվանը: Նա չատ և փոխվել... եե՛, մարդ ապահով չէ զանազան «ներելի և աննելի» ղգացումներից յերիտասարդ հասակում: Միայն Շուշանիկը չպիտի թույլ տա, վոր ծնողներն անիծեն այն որը, յերբ դրվեց իրենց նյութական ապահովության հիմքը, այսինքն՝ յերբ հանքերը տեղափոխվեցին: Սմբատ Ալիմյանը չատ արժանավոր մարդ է, ո՛վ է հակառակում, նրան կարելի յե սիրել, բայց...

— Սպասի՛ր,—ընդհատեց Շուշանիկը, ցնցվելով,—ինչո՞ւ համար ես այդ ասում...

Դավիթը չարունակեց ավելի պարզ: Այո՛, Սմբատ Ալիմյանին կարելի յե սիրել, բայց ամեն սեր պիտի վորևե արդարացուցիչ հիմք ունենա: Ո՛ւ, Շուշան, մի՛ ամաչիր. մի՛ կարմրիր, մի՛ ընդհատիր հուզեղբոր խոսքը: Նա դիտե, ինչ է խոսում: Ներիր, վոր չի թաղցնում իր կասկածները: Ցերբ մեկին սիրում ես հարազատ հոր պես, պարտավոր ես նրա հետ, հարկը պահանջելիս, նույնիսկ խիստ վարվել: Լսի՛ր, Շուշան, լավ մտածիր, դու հասարակական կարծիքի հետ մաքառելու ուժ չունես, իսկ հասարակական կարծիքը քեղ կհալածի: Վոչ վոք չի ասիլ, թե դու մի խեղճ, աղքատ մարդու աղջիկ, սիրում ես Սմբատ Ալիմյանին և վոչ նրա հարստությունը: Ո՛ւ, վո՛չ. մարդիկ այդպիսի դեպքերում միշտ տրամադիր են մտածելու ամենավատը, ամենագարշելին. այս արդեն նրանց հատկանիշն է...

Շուշանիկը կատարելապես տանջվում էր: Ո՛ւ, նա չի ուզում այդքան հոգացողություն հորեղբոր կողմից: Թողնք նրան իր գաղտնի վշտերի հետ, մի խառնվենք նրա հոգեկան գործերին: Տեր աստված, այս ինչ փորձանք է, ինչո՞ւ յե այդ մարդն այդչափ հավաստիացած խոսում նրա սիրո մասին: Նա յերբեք վոչնչով չի արտահայտել Սմբատին վորևե ղգացում, նա մինչև անգամ մտերմական խոսակցություն չի ունեցել նրա հետ: Ինչի՞ց յե յեղրակացնում, թե սիրում է նրան:

— Կա լուրթյուն, վոր խոսքերից պերճախոս է: Շուշան, մի՛ խաբիր ինձ և քեղ: Դու այդ մարդով հափշտակված ես, վաղուց գիտեմ, դու դիշեր-ցերեկ նրա մասին ես մտածում, ինձ համար պարզ է, ինչպես այդ լամպի լույսը: Ինչո՞ւ հեռու գնանք: Այսօր պատահաբար

բայց եմ անում քո կարգացած գրքերից մեկը... Ահա, սպասիր, կարծեմ, հենց այստեղ է...

Նա բարձրացավ տեղից և սեղանի վրայից վերցրեց մի հաստ գիրք, որ Ինկինեի վեպերից մեկն էր, Թերթեց...

— Նայի՛ր,—շարունակեց, գիրքը դնելով որիորդի առջև,—դու ընդգծել ես այդ տողերը: Նայիր մյուս յերեսը, այդ ո՞ւմ անունն է գրված լուսանցքների վրա մատիտով: Այս արդեն բավական պարզում է քո տրամադրությունն առանց քո կամքի: Բայց մտածի՛ր, Շուշան, ի՞նչ հետևանք կարող է ունենալ մի սեր՝ աղտոտ աղջկա և ամուսնացած աղամարդի մեջ: Դու կդժբախտանաս, իսկ յես այդ չեմ ուզում: Դու խելոք ես, զարգացած, լավ սիրտ ունես... Պարծենալով կարող եմ ասել, որ դու իմ աշակերտուհին ես...

Յոթ տարի աշխատել է նրանից պատրաստել մի որինակելի աղջիկ: Առաջին հոգսն է յեղել սովորեցնել համբերությամբ տանելու կյանքի տառապանքները: Զգուել է ներշնչել նրան սեր դեպի մերձավորները, հեղություն, սովորեցրել է սիրել կյանքն իր ամենամռայլ դույներով անգամ: Ցավ համոզված եր, որ նա, վերջապես, հասել է նպատակին: Այժմ մի՞թե Շուշանիկը թույլ կտա նրան կարծելու, թե այդ համեստ կերպարանքի տակ թաղնված են հանդուգն ձգտումներ:

Նա կանգ առավ: Նրա նիհար ու յերկայն մատները ցնցողաբար թերթում եյին գիրքը: Վաղաժամ թառամած դեմքի վրա հայտվեց մի նոր, տակավին Շուշանիկին անծանոթ մռայլ պիծ: Ներվային արագ չարժումով դեն չպրտեց գիրքը, որ մեջքն ուղղեց և յերերվող ձայնով չարունակեց: Թող չկարծի Շուշանիկը, թե նրա հորեղբայրը դեմ է առհասարակ սիրո զգացմանը: Վո՛չ, նա յել քիչ թե շատ հպատակում է ու զգում: Նրա սիրտը մարմնի պես չոր չե: Ցերբեմն այդ սիրտը բաբախել է: Ցավ յեթե այսոր այսպես նա ընկճված է, պատճառը հենց սերն է... դժբախտ սերը: Նա մի խեղճ վարժապետ եր Թիֆլիսում, դաս եր տալիս մի հարուստ վաճառականի յերեխաներին: Դա մի կոպիտ բռնակալ եր ընտանեկան կյանքում: Առաջին կնոջը թաղելուց մի տարի անցած ամուսնացել եր մի թարմ որիորդի հետ, որի ծնողները շատ աղքատ եյին: Դավիթը, հենց առաջին տեսնելուց, թույլ ավել իրեն աննկարելի տկարություն: Տիկինն անտարբեր եր կամ դուցե այդպես եր ձևանում: Դավիթը հաճախակվեց, յերեսակայեց աննկարելի բաներ, հետո անգիտակցաբար նրա մեջ զարգացավ մի անհավատար սեր, դուցե ճիշտ այնպիսին, ինչպես ներկա դեպքում... Ցավ դժբախտացավ:

— Շուշան, սիրելը լավ է, բայց յերբ չես սիրվում, այդ է վատը: Սմբատ Ալիմյանը քեզ սիրել չի կարող, որովհետև նրա սիրտը պատկանում է իր զավակներին: Նա աղնիվ մարդ է, քեզ չի մոլորեցնիլ...

Այլևս Շուշանիկը չկարողացավ իրեն զսպել: Հորեղբոր խոսքերն արտահայտում եյին այն, ինչ-որ ինքը ևս զգում եր: Բողոքելով ճնշումների բացասական չարժումներով, թույլ ճիչերով և ջղաձգական ցնցումներով, նա, միևնույն ժամանակ, չեր կարողանում հերքել իր սեր դեպի Սմբատ Ալիմյանը, որովհետև չդիտեր ատել ու կեղծել: Նրա կոկորդի յերակները փքվեցին, կուրծքն ուռավ, բարձրացավ: Զղիմացավ բուռն զղացումներին, որ արձագանգ եյին տալիս հորեղբոր անգող խոսքերին, թուլացավ, ընկղմվեց գահավորակի վրա: Գլուխը դրեց ասեղնագործ բարձիկին և հեկեկաց այնպես, որպես յերբեք չեր հեկեկել:

Դավիթը խղճաց նրան, մոտեցավ, բռնեց ձեռներից: Ինչո՞ւ այդպես չուտ և այդպես անզգուշ դիպավ ամոթխած աղջկա սրտի նվիրական զղացմանը: Շուշանիկի հեկեկանքը փոխվեց հևոթերիկայի: Այժմ նրա աչքերից արցունքներ չեյին գալիս, չոր հեծկլտանքը խեղդում եր կոկորդը: Շրթունքները կապտել եյին, այտերը կարմրել, աչքերն արյունով լեցվել...

— Բավական է, բավական է, յերեխա չես,—հանդստացնում եր Դավիթը:

Ներս մտավ տիկին Աննան: Մյուս սենյակում անքուն սպասել եր՝ յուր յեղբոր բացատրության հետևանքն իմանալու: Գրկեց Շուշիկի գլուխն ու արտասվեց: Մի խմիթ կին. նա կարծում եր, թե դասեր վչտի պատճառը Միքայել Ալիմյանն է...

Այդ որից հետո Շուշանիկը լուսնոտի պես չեր չրջում սենյակից սենյակ, չեր հառաչում այնքան տխուր ու ցածր: Աչխատում եր միայն չհանդիպել հորյեղբորը, ամոթից: Նա սկսեց զարժյալ պարապել տնային գործերով նախկին յեռանդով: Զգուում եր նորից զրավել հոր սիրտը, որ վերջին ժամանակ բավական սառել եր դեպի անճնվեր աղջիկը: Սակայն այդ արդեն այնքան եյ դյուրին չեր:

Որ չեր անցնում, որ Սարգիսը չանիծեր աղջկան: Նա կրկնում եր, թե Շուշանիկը խոսք է կապել մոր, հորյեղբոր ու հորաքրոջ հետ, կամաց-կամաց սպանելու հարազատ հորը: Ինչպես բոլորի, նույնպես և Շուշանիկի յուրաքանչյուր քայլին վերաբերվում եր կասկածով: Ցերբեմն հրաժարվում եր կերակուր ճաշակելուց, ասելով, թե դեղած է: Հայհոյում եր բոլորին ամենաանվայել հիշողներով, հիշողներ, որ խեղճ աղջկա ամոթխածությունը վիրավորում եյին և ստիպում նրան, յերեսը ծածկելով, վախչել դուրս:

Մի առավոտ Սարգիսը քնից զարթնեց կանուխ, բարձրաձայն զառալով: Նա սոսկալի յերազ եր տեսել: Իբր թե բակում, ահա այն յերկու յերկաթե ամբարների մեջ տեղում, վառել եյին մի մեծ խա-

առյուծ։ Դավիթը կատկատել էր նրան և, ոտնելների ողնուքյամբ տա-
նում էր, վոր ձգի նրան խարույկի վրա, այրի։

— Հեռացրե՛ք աչքիցս, հեռացրե՛ք,—գոչեց նա, ցույց տալով յեր-
կաքի ամբարները, վոր կանգնում էին հուժկու ժայռերի պես։

Այդ որից միշտ կրկնում էր նույնը, միշտ սոսկալով ցույց տալով
զմբեթաձև նավթամբարները, վորոնք հալածում էին նրան, վորպես
չար յերազի մարմնացում։ Վերջապես, նրա թախտը տեղափոխեցին։
Այժմ այլևս չէր տեսնում սարսափելի առարկան։ Սակայն պարզ որերին,
լրիվնաղեմին նրա դիմացի պատի վրա նկատվում էր մի լայն սավեր
սուր ծայրով, հետո յերկրորդը, և հանդարտ, դանդաղ սահում էին
առաջ։

— Ելի յեկան, անիծվածները,—գոռում էր Սարդիսը, գլուխը
ծածկելով վերմակով։

Նա սարսափում էր նավթամբարների սավերներից անդամ։ Նա
վախենում էր չոգու աղմուկից, մեքենաների դղրդյունից, չվիկների
սուլոցներից, նավթի խշշյուններից։

— Դժոխք է, դժոխք,—գոչում էր նա,— այստեղ դևեր են ապ-
րում...

Նայելով անդամալույծի պլշած աչքերին, Շուշանիկը նրանց մեջ
պարզ տեսնում էր խելքի պղտորում։ Նա վախեցած, փախչում էր յուր
սենյակը և այնտեղ աշխատում ընթերցանության մեջ խեղդել սոսկալի
մտորումները։ Բայց քայքայված հոգեկան հանգիստը չէր վերականգ-
նվում, և նրա պայծառ ճակատի վրա վիշտը փորում էր վաղաժամ
ակոսներ։

Մի յերեկո Դավիթը նրան կանչեց դրասենյակ և ասաց, թե քա-
ղաքից Անտոնինա Իվանովնան ուղում է խոսել նրա հետ։ Նա առավ
տելեֆոնի փողը, դրեց ականջին։

— Այդ դո՞ւք եք, որիորդ,—ճանաչեց նա տիկնոջ ձայնը։

— Ցես եմ։

— Ինդրեմ վալը դաք քաղաք ինձ մոտ, կարևոր գործ ունիմ։

— Չեմ կարող, տիկին, վախենում եմ հորս մենակ թողնել։ Նա
մեկայն ինձ տեսնելիս և հանգստանում։

— Աղաչում եմ, գոնե մի ժամով յեկեք, յերե մի փոքր հարցում
եք ինձ։

Ճար չկար, Շուշանիկն այլևս չկարողացավ մերժել։

Հետևյալ որը նա առավոտը գնաց յերկաթուղով քաղաք մի մեքե-
նավարի ուղեկցությամբ։ Առաջին անդամ վոտ դնելով Ալիմյանների
տունը, որիորդը չփոթվեց, այլայլվեց։ Նա վախենում էր հանդիպել
Սմբատին և բարեբաղդաբար, չհանդիպեց։

— Սիրելիս,—դիմավորեց նրան Անտոնինա Իվանովնան յուր բնա-

կարանում,—չատ չնորհակալ եմ, վոր յեկաք։ Ցես կամենում եմ ձեզ
հետ խոսել մի ձեռնարկության մասին։

Նա ասաց, թե Միքայելից իրավունք և ստացել մշակների համար
բանալ մի դրադարան–ընթերցարան, նաև հիմնել իրիկնային կուրսեր
անդրազետ չափահասների համար։ Կուրսերի համար թույլտվություն
պիտի ձեռք բերել, իսկ դրադարանի մասին պիտի հոգալ հենց այժմ։
Գործը բավական մեծ է, իսկ ինքը մենակ, խնդրում է Շուշանիկին
ողնել նրան։

— Ուրախությամբ կողնեմ ինչով կարող եմ,—հանձն առավ Շու-
շանիկը։

— Ցես արդեն կազմել եմ ուսերեն դրքերի ու լրագրների ցուցա-
կը։ Իսկ դուք կազմեցեք հայերեն դրքերինն ու լրագրներինը։ Դուք,
իհարկե, գիտեք, թե ինչ դրքեր են հարմար հասարակ ամբոխի ընթեր-
ցանության համար։ Կարող եք։

— Կփորձեմ հորյեղբորս ողնությամբ։

— Այո՛, չատ լավ, ձեր հորյեղբայրը հասկացող մարդու յե նման։
Նա կարծեմ, ժողովրդական ուսուցիչ է յեղել, չե՞։

— Այո՛։

— Այդ չատ լավ է, չատ լավ։ Նա կհասկանա ժողովրդի մտավոր
և բարոյական պահանջները։

Նա առաջարկեց Շուշանիկին կակաո, չարունակ վոգևորված խո-
սելով յուր ձեռնարկության մասին։ Թախանձեց որիորդին մնալ ճա-
շին։ Բայց Շուշանիկի հոգին ձգտում էր հանքերը, մերժեց և, տիկնոջ
աղաչանքի ուղեկցությամբ, չտապեց յերկաթուղու կայարանը։

Անտոնինա Իվանովնան չատ ուրախ եր, վոր Շուշանիկը հանձն
առավ յուր ողնականը լինելու։ Նա հուսով եր, թե աղջիկը կդառնա
յուր անկեղծ բարեկամուհին։ Ախ, ի՜նչ համակրելի և խելոք դեմք
ունի, յերևում է, վոր մտածող ու զարդացած աղջիկ է։ Ի՜նչ անսպա-
սելի գյուտ ասիական յերկրում։

Նա այնքան վոգևորված եր, այնքան տրամադիր ներողամիտ և
անհիշաչար լինելու, վոր յերեկոյան առաջին անդամ Սմբատին խոսք
տվեց մյուս որը գնալու նրա մի ազգականի տունը հյուր։ Այդ ազգա-
կանն այրի վաստկհատ հորյեղբոր վորդին եր։ Մի խոշոր վաճառա-
կան, վոր Պարսկաստանի հետ բամբակի և գորգերի առևտուր ուներ։
Ամեն տարի նա տալիս եր չքեղ տոնախմբություն յուր միակ աղջկա
ծննդյան տարեդարձի պատվին։

Հետևյալ որը, յերկու ժամին տիկինը Սմբատի հետ մտավ մի ըն-
դարձակ հյուրասենյակ, վոր կահավորված եր ամենայն շռայլու-
թյամբ։ Այստեղ ամեն ինչ կար, բացի ճաշակից ու նրբությունից։
Արդեն հավաքվել էին բավական թվով հյուրեր, և չարունակ գալիս

եյին նորերը: Նրա աղջականներն ու աղջականուհիները եյին: Շուտով Անտոնինա Իվանովնան չրջապատվեց հետաքրքիր տիկինների ու օրիորդների մի խմբով: Սկսեցին կշտամբել իրանց «հարսին», վոր ճղնավորի կյանք է վարում, վոչ մի տեղ չի յերևում, «մարդու տեղ չի գնում» աղջականներին: Անտոնինա Իվանովնան պաշտպանվում եր, վորքան կարող եր: Այս անծանոթ չրջանում, ուր խորին ասիական տարաղների հետ խառնվել եյին յեվրոպական վերջին տարազի ղեմտները, նա ղգում եր իրան մի տեսակ քաոսի մեջ: Ձդիտեր ինչ խոսեր, ինչպես պահեր իրան, ինչով հետաքրքրեր իրան ղբաղեցնողներին:

Փոքր առ փոքր չրջապատողները հեռացան: Նա մնաց մենակ: Նա աչքան նրբաղգաց եր գարձել, վոր խկուչն դուշակեց, թե կանայք խոսքը-խոսքը հավաքված, յուր մասին են խոսում: Տանտիրուհին, վոր յերեսուն տարեկան հասակումն եր միայն ասիական տարազը յեվրոպականի վոխել, քննադատում եր նրա հագուստն իսկ և գտնում «չափ հասարակ»: Մյուսները սրախոսում եյին նրա տարիքի, հասակի, աչքերի ու մաղերի գույնի մասին: Կային և պաշտպանողներ, բայց նրանց ձայները խլանում եյին մեծամասնության կարծիքների մեջ:

— Ի՞նչ աղջիկ կար մեր քաղաքում, մեր մեջ,—ասում եր մեկը:

— Սմբատն եր ե՛լի, իրան անբաղդացրեց,—ասում եր մյուսը:

— Ծնողներն են մեղավոր, ինչո՞ւ յերեխա հասակում տարան, ղցեցին ոտար յերկիր:

— Ամեն բան մոռացավ, անուն, պատիվ, ազգ, հավատ...խայտառակեց իրան ել, մեղ ել...

Անտոնինա Իվանովնան տխրում եր: Ահագին բազմության մեջ ղգում եր իրան մենակ և ոտար:

— Նայեցեք,— գանգատվեց նա Սմբատին, չչնջալով,— կարծես, յես վայրենի եմ ղրանց մեջ: Տեսեք, ինչ խորթ աչքով են նայում: Բոլորի, բոլորի դեմքերն արտահայտում են կամ արհամարանք կամ նեղողամտություն: Հավատացեք, յես վոչ վոքի չեմ մեղադրում, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ ինձանից պահանջում եք, վոր այդ խորթությունը յես մարսեմ: Դրանք ինձ հետ յերբեք չեն հաշտվիլ, ի՞նչպես հաշտվեմ յես...

— Տգետ են, ներողամիտ յեղեք:

— Գիտեմ, բայց չեմ կարողանում, վոչ չեմ կարողանում... Թույլ տվեք ինձ հեռանալ...չնորհավորեցի տոնը, բավական է ճաշի մնալ չեմ կարող:

— Ձես ձեզ ստիպելու իրավունք չունեմ...

Անտոնինա Իվանովնան վոչ մի թախանձի չդիմեց, հրաժեշտ ավեց: Դուրս գալով փողոց, նա կրծքի խորքից արձակեց յերկարատև մի հառաչանք: կարծես, սուգ ու ծանր մթնոլորտից ազատվեց:

Ցավ, իրավ, սուգ ու ծանր եր նրա համար խորթ չրջանի մթնոլորտը: Սուգ, ինչպես դրսում, նույնպես և տանը:

Հետևյալ որը նա տելեֆոնով Մելքայելին խնդրեց յուր համար հանքերում պատրաստել բնակարան յերկու կամ յերեք սենյակից: Նա վճռեց տեղափոխվել յերեխաների հետ հանքերը: Սմբատը չհակառակեց:

Մելքայելը յուր բնակարանը դատարկեց, մաքրել և նորից կահավորել տվեց, իսկ ինքը տեղափոխվեց նոր կառուցված կացարաններից մեկը:

Մի չաբաթ անցած, Անտոնինա Իվանովնան յերեխաների ու աղախնի հետ գնաց հանքերը:

Շուշանիկն ուրախացավ: Ցավ այդ որից նրա ու տիկնոջ մեջ առաջացավ բարեկամություն: Նրանք ամբողջ ժամերով խոսում եյին ու խորհրդակցում տիկնոջ ձեռնարկությունների մասին: Քանդում եյին, չինում, ոգնում եյին, աչխատում, մտածում, ղգում և ապրում: Ցերեկն խոսում եյին իրանց անձնականի մասին: Տիկինը սիրում եր պատմել յուր ուսանողական կյանքից (նա յերեք տարի յեղել եր Բեստուժյան կուրսերի հաճախորդ): Ախ, յերանելի՛ ժամանակներ, վոր անցաք, գնացիք, ձեզ հետ տանելով ամենալառ հույսեր: Բայց փույթ չէ. Անտոնինան կաշխատի կորուստը վերադարձնել այժմ, այսուհետև:

Շուշանիկը լսում եր լուռ և ուշադիր: Հաճելի յեր Անտոնինա Իվանովնային նրա հետաքրքրությունը: Թվում եր նրան, վոր յուր ղրույցներով ներգործում է մի դեռևս չկազմակերպված հոգու վրա և տալիս նրան յուր ցանկացած տղղություն:

Շուշանիկը հարգում եր նրա խելքը, կամքի ուժը, կրթությունը, զարգացումը, բայց մտերմանալ...վոչ... դեռ չեր կարողանում: Ցնդ ի՞նչպես, ի՞նչ իրավունքով մտերմանալ: Ցերբեմն նա խղճում եր տիկնոջը, վոր չի սիրվում ամուսնուց: Ինչո՞ւ, արդյոք, կրթված մայրը, առաքինի կին, վոչ տգեղ, վոչ հակակրելի, վոչ ծեր—մի՞թե կարող եր կյանքի ավելի լավ ընկերուհի ունենալ Սմբատ Ալիմյանը: Ախ, չլինի թե այդ մարդու արտաքին չնտակության տակ թաղնված է վատ հոգի:

Մի որ անսպասելի ներս մտավ Սմբատը: Ցնկել եր յերեխաներին քաղաք տանելու: Մյուս որը ծաղկազարդ եր, Վոսկեհատը պահանջել եր, վոր առավոտ թռոները յնկեղեցի գնան:

Անտոնինա Իվանովնան չհակառակեց. թող տանեն վոր յնկեղեցի ուզում են, մի՛ևնույնն է:

Տեսնելով կնոջ սեղանի վրա մի հայերեն ձեռնարկ, Սմբատը վերցրեց, թերթեց, նայելով Շուշանիկին, և հասկացավ, վոր օրիորդը

դառեր և տալիս Անահիտ Իվանովնային: Վոչինչ չասաց. միայն դառն հեղնության ժպիտն աղավաղեց նրա դեմքը:

Հետևյալ որը յերեխաներին յետ բերեց այն միջոցին, յերբ դարձյալ Շուշանիկը տիկնոջ մոտ եր: Որիորդը կամեցավ հեռանալ: Տիկինը չթողեց: Որիորդն սկսեց խաղալ յերեխաների հետ: Սմբատը գաղտնի դիտում եր նրան: Ախ, վորքա՜ն նրա հեզ կերպարանքը ներդաշնակում և այդ անմեղ ղուդղին: Ինչո՞ւ նա չե նրանց մայրը, նա, վոր արյունով ու հոգով մի յե Սմբատի հետ:

Ցավ այս մտածելով, Սմբատը չեր կարողանում հայացքը հեռացնել Շուշանիկից: Նա ակամա հառաչեց, հիշելով քեռու խոսքը. «Ճիպոտ քոլիդ պետք և կորեյիր»...

Վերջին ժամանակ նրա մեջ սկսվել եր մի նոր հոգեկան փոփոխություն: Արդեն զղում եր, վոր չարունակել ապրել այնպես, ինչպես ապրում և, անկարելի յե, ամոթալի: Մի՞թե նա պիտի թույլ տա իրեն աստիճանաբար ընկնել ու ընկնել մինչև անդունդ: Կյանքի ուղին վոտների տակ դառնում և լայնծուն: Մտանա՞լ հայրական կտակը—վոչ, մոր վշտերը—վոչ, յեղբայրական պարտականությունները—վոչ, զավակների՞ն—մանավանդ վոչ: Պետք և ուրեմն կանգ առնել և լուրջ խորհել: Մի՞թե դատավորևե սիսկանք այս հյուրանոցային արբեցուցիչ մթնոլորտում: Այդ շռայլ սեղանները, անքուն գիշերները, ըմպելիքների սուր հոտը, բացի բոպեկան թմրությունից, պարզեվեցի՞ն նրա հոգուն վորոնած անդորրությունը: Ի հարկե, վոչ: Նրա վիշտն անսպառ լավա յե. արհեստական պատնեշնե՞րը պիտի կասեն նրա հոսանքը: Հեռու տկարամտություն. նա չի ուզում վերջապես կործանվել մի սխալի պատճառով: Թող այս քաղաքում լինի նրա դրությունը բացառիկ, իսկ ուրիշ տեղերում քանի քանի մարդիկ կան նրա նման: Ինչո՞ւ նրանք հաշտվել են իրանց սխալի հետ, յեթե միայն զղում են այդպիսի մի սխալի հոգեբանական ծանրությունը: Նա, վոր աշխատում եր յուր յեղբայրներին բարոյական կորստից ազատել, ի՞նքը պիտի կորչի: Նա՞, վոր վոչ Արշակի պես պատանի յե, վոչ Միքայելի պես անզուսպ: Ոո, վոչ, պետք և սթափվել...

Նա տեսնում եր, վոր Միքայելը, վորին անզառնալի կորած եր համարել հոգու խորքում, որից որ զառնում և լրջամիտ. յերես դարձնելով քաղաքային կյանքից, կարծես, խորասուզվել և ինքն յուր մեջ և այնտեղ մաքրվում յուր անցյալ կեղտերից: Ո՞վ և պատճառն այդ արմատական փոփոխության: Ի հարկե, վոչ յուր խրատներն ու քարոզները, այլ ուրիշ, ավելի զորավոր բան: Ցավ մի ներքին ձայն նրան ներշընչում եր «Շուշանիկը»:

Իհարկե Սմբատը մի լուրջ վճռած չուներ, թե կա Միքայելի սրբատում սիրո զղացում դեպի այդ աղջիկը, բայց դարձյալ համոզված եր,

վոր կա: Ե՛ւ, թող լինի. կնշանակե այն, ինչ—վոր նրա մեջ ապականել են ուրիշ կանայք, զարմանում և առողջացնում և մի համեստ աղջկա հրապույրը: Հարկավ պիտի ուրախանալ, վոր ախտավոր յեղբայրը բարոյապես բուժվում է: Բայց ինչո՞ւ զարձյալ մի անմիտ նախանձի զգացում հանդիստ չի թողնում նրան: Մի՞թե ներելի՞ յե նախանձել հարազատ յեղբորը, մի՞թե առհասարակ վայե՞լ է նախանձը կրթված մարդուն: Թող սիրեն միմյանց, յեթե միայն սիրում են. նա պիտի ուրախանա, պարտավոր է ուրախանալ: Ջե՞ վոր նրա համար ամեն ինչ վերջացած է, և մնում է միայն մի լա կրկնել յուր քեռու խորհրդավոր խոսքը.

— Ինչո՞ւ ճիպոտդ քոլիդդ չկարեցիր...

III.

Սմբատ Ալիմանը վորքան և նախապաշարումներից ու անհավատությունից զերծ լիներ, ուներ նախազգացումներ, վորոնց կամաց-կամա հավատում եր: Ցերբ նրան հանկարծ տիրում եր տխրություն, գիտեր, վոր իրեն սպասում է վորևե ուրախալի լուր: Ընդհակառակը, յերբ զղում եր հոգեկան թեթևություն, գուշակում եր, վոր իրեն սպառնում է վորևե անախորժ բան:

Այն որը հանկարծ նրան պաշարեց ուրախություն: Նա յերգում եր, չվացնում, մոռացած մշտական վիշտը: Նա խմեց մի բաժակ եր, չվացնում, մոռացած մշտական վիշտը: Նա խմեց մի բաժակ սուրճ, հանդիմանեց մորը, վոր միշտ, ձեռները կրծքին դարսած, տխուր ու մռայլ ուրիշներին էլ տխրեցնում է: Նույն տրամադրությամբ իջավ դրասենյակ: Այնտեղ արդեն բոլոր ծառայողները հավաքվել եյին, իսկ յուր սենյակում սպասում եյին մի քանի այցելուներ: Նա կարգադրեց սովորական գործերը. ճանապարհ դրեց այցելուներին, ուրախացավ, յերբ լսեց, վոր նավթի գինը կես կոպեկ վերին ավելացել է: Նա հաշվեց, վոր յեթե գործերն այսպես ընթանան, կարող և հոգերի թիվը կրկնապատկել, յերեք միլիոնը դարձնել տասը-տասնուհինգ միլիոն: Զգաց վողի արժեքն ավելի, քան յերբևե զղացել եր, ամաչեց յուր նախկին «յերեխայական զաղափարներից»: Նա նույն տրամադրությամբ կամեցավ դուրս գալ, մի քիչ զբոսնել: Հանկարծ ներս մտավ Հսահակ Մարությանյանը, այն մարդը, վոր յերեք չորս ամիս եր յեթե եր զարձրել Ալիմյաններից:

— Ներեցեք, Սմբատ Մարկիչ,—լուրջ ու հանդիսավոր յեղանակով ասաց անսպասելի հյուրը,—յես ձեզ հետ մի չատ կարևոր գործ ունիմ:

«Մի չատ կարևոր գործ». ուրիշ կերպ ել չեր կարող կարծել Սմբատը: Անկասկած չարժատիրը չատ մեծ է, վոր այդ մարդուն

դրդել և գալու: Իսահակը նայեց շուրջը, հավաստիանալու համար, արդյոք, յերրորդ անձ ներկա չե՞: Մոտեցավ մյչին դռներին, հարցնելով.

— Կարելի՞ յե փակել բանալիով:

— Բայց ինչո՞ւ:

— Անհրաժեշտ ե:

Սմբատը ձեռով նշան արավ նրան նստելու: Ինքն էլ նստեց:

— Գիտեք ինչ, Սմբատ Մարկիչ,— սկսեց հյուրը, ձեռնոցները հանելով,—դուք պիտի սառնասիրտ լինեք, համբերությամբ լսեք ինձ:

Վորքան նա ինքը սառն լիներ, այնուամենայնիվ բարակ ու պաղ ձայնի մեջ զգացվում եր ինչ վոր անսովոր հուզում:

— Ի՞նչ եք կամենում, կարճ ասացեք,— դողեց Սմբատը անհամբեր:

— Դուք գիտեք, վոր Իսահակ Մարուքխանյանը յերկար խոսել չի սիրում: Ցնկել եմ իմանալու, ձեր յեղբայր Միքայել Մարկիչը յե՞րբ պիտի վճարի իմ փողերը:

— Ձեր փողե՞րը...

— Իմ հալալ փողերը: Հերիք ե, վորքան սպասեցի: Ասենք, մի բան չեմ կորցնում, տոկոսներն ավելանում են, բայց վերջապես, յե՞րբ պետք ե տա պարտքը...

— Ի՞նչ պարտք, չեմ հասկանում:

— Ձե՞ք հասկանում,—պարմացավ Իսահակն այնքան ճարպիկ, վոր դժվար եր կեղծիքը դդալ,—մեզ չե՞ յեկ ասել: Զարմանալի յե, շատ զարմանալի: Մարդ մոտ կես միլիոն պարտք ունենա ու հարազատ յեղբորից թագցնի՞, այն էլ մեծ յեղբորի՞ց: Իմ սրտով, Միքայել Մարկիչը շատ բարդավոր մարդ ե...Իսկ յես, խեղճս, յերբ մի քանի րուբլի պարտք եմ ունենում, գիշերները քունս չի տանում:

Կես միլիո՞ն...Սմբատը նայեց հյուրի կանաչ-դեղնագույն աչքերին, վոր ակնոցների տակից ժպտում եյին անպակելի չարախնդությամբ. արդյոք այդ մարդը չե՞ խելագարվել: Բայց խելագարության վոչ մի նշույլ. ընդհակառակը, յերբեք Մարուքխանյանի գեմքն այնքան խորամանկ չեր թվացել Սմբատին, վորքան այժմ:

— Կես միլիո՞ն,—կրկնեց Սմբատը,—պիտեք, մենք միմյանց հետ հանաք չենք կարող անել այն որից հետո, յերբ դուք...

— Ասելած հետս տանի,—ընդհատեց հյուրը,—յես իսկի հանաք չեմ անում: Միքայել Մարկիչ Ալիմովը մանավոր պարտաթղթերով ինձ,Իսահակ Սիմյոնովիչ Մարուքխանովիս, պարտական և յերեք հարյուր քսան հազար ռուբլի: Տոկոսներն էլ վրեն գանք, կանի մոտ կես միլիոն կամ մի բան էլ ավելի:—Յես հենց մաքուրս ասում եյի,

Սմբատ Մարկիչը չի հավատալ խոսքիս, կըզարմանա: Անունս վատ ե դուրս յեկել ձեզ մոտ, գիտեմ: Բայց խնդրեմ այս յերեկո չնորհ բերեք չային մեր տուն, ցույց կտամ պարտաթղթերը...

— Յերևի, եկի այնպիսի մի թուղթ, ինչպես ձեր խարդախած կոնյակ-կտակը...

— Սմբատ Մարկիչ, այդ ձեր յեղբոր գործն եր: Բայց այս յերեկո, հենց այս յերեկո, կտեսնեք ձեր աչքով: Միխայել Մարկիչին էլ բերեք—յերե ինքն յուր բերանով չխոստովանի, այն ժամանակ թեկուզ յերեսիս թքեցեք: Սպասե՞մ այս յերեկո:

— Բավական ե, յես ժամանակ չունիմ կոմեդիա խաղալու...

Այս ասելով, Սմբատը վոտքի կանգնեց: Մարուքխանյանը ձեռնոցը հանդարտ ձգեց դլխարկի մեջ, վոր դրած եր սեղանի վրա, հանեց ծոցի դրպանից մի ծրար, դուրս բերեց այնտեղից մի քառածալ հաստաբակ թուղթ: Բաց արավ թուղթը, պահեց Սմբատի առջև, ասելով.

— Կարդացե՛ք...

Սմբատը կարդաց, գնեց յեղբոր ստորագրությունը: Այս մեկ թղթով պարտքի գումարը յերեսուն հազար եր առանց տոկոսների: Նա վորոնեց դրասեղանի դարանները, գտավ Միքայելի հին մուրհակներից մեկը, համեմատեց ստորագրությունը և ակամա արտասանեց.

— Այո՛, կարծես Միքայելի ձեռն ե:

— Կարծելու բան չկա, հաստատ ե,— ասաց Մարուքխանյանը, թուղթը յետ առնելով հանդարտ և դնելով ծոցի դրպանը:

— Բայց կեղծած ե,—ավելացրեց Սմբատը,—Միքայելը ձեզ վոչինչ պարտ չե:

— Ե՛հ, վոր այդպես ե, ուրեմն դատարանը ցույց կտա: Ուղո՞մ եք իմանալ, թե ինչպես են գրյացել այս պարտքերը:

— Պատմեցեք,—ասաց Սմբատը, նստելով և թիկն տալով բազկաթոռին: Սուտ պատմվածքն էլ ունի իր վրոշ դեղեցկությունը:

Սրանից վեց տարի առաջ Միքայելը հավաստակվում ե մի ծովային ապահի դեղեցկուհի կնոջով: Այդ կինը դցում ե նրան յուր ցանցերի մեջ: Միքայելն սկսում ե պարտքեր անել դեղեցկուհուն հաղեցնելու համար: Դիմում ե Մարուքխանյանին: Ուրիշ «վո՞ր հիմարը» նրան պիտի հավատար այդքան փող: Դեղեցկուհին խոստանում ե Միքայելին վախճել նրա հետ արտասահման: Մարուքխանյանը նրանց տալիս ե ճանապարհածախս և յերկու տարվա տոկոսատի փող: Այս բոլոր պարտքերը տալիս ե, Մարկոս ապահի մահից հետո առանալու պայմանով: Ինչ անպիտանություն վորդու կողմից, այնպես չե՞: Դեղեցկուհին խաբում ե Միքայելին, փոխերն առնում ձեռքից ու...մի ուրիշի հետ փախչում Ֆինլանդիա: Այս մեկ...Հետո, մի տարի անցած, առաջարեց ե գալիս ուրիշ դեղեցկուհի—մի ինչ-վոր կոմիսիոների կին: Դա նույն-

պես բավական «քամում է խելոքի դրպանը»: Իսկ խելոքը միշտ դիմում է փեսային: Տեր աստված, այժմ էլ Իսահակը հիշում է, թե ինչպես եր աղաչում Միքայելը, ինչպես եր լալիս: Այնուհետև մեռնում է Մարկոս աղան, Միքայելը ձեռ չի քաշում փեսայից և հին պարտքերը տալու տեղ, նոր պարտքեր է անում...

Ահա ամբողջ պատմությունը յերեք հարյուր քսան հազար ռուբլու...

— Բավական է,—դոչեց Սմբատը, հուզված վոտքի կանգնելով,— դուք յերևելի դարվիշ եք, ձեր ֆանտազիան խիստ հարուստ է: Այդ բոլորը, ինչ վոր պատմեցիք, ինքներդ եք հնարել:

— Կարճ ասացեք. ուզո՞ւմ եք փողերս տալ, թե՞ չե:

— Վո՛չ:

Մարութխանյանը վեր կացավ տեղից, հեղնական ժպիտը կարմրախայտ յերեսին ու հաստլիկ չրթունքների վրա: Նա չկարողացավ Սմբատին համոզել խոսքով, կհամոզի դատարանի միջոցով: Եքսպերտները չեն կարող չվավերացնել պարտաթղթերի իսկությունը. ինքը Միքայելը նույնպես չի հրաժարվի յուր ստորագրությունից. այս մասին նա ապահով եր: Բայց, այնուամենայնիվ, չեր կամենալ գործը գատարանը գցել: Ով գիտե, ինչ կարող է պատահել:

— Նեղություն քաշեք, տելեֆոնով հայտնեք Միխայել Մարկիչին, վոր այս յերեկո գա քաղաք: Կգաք մոտս—լավ, չեք գալ, դուք եք լմանում: Ց'տեսություն:

Նա դուրս յեկավ այնքան հանդիստ, վորքան հանդիստ ներս եր մտել:

Ցերեկոյան նա նստած եր յուր առանձնասենյակում յերկայն կանաչագույն մետաքսյա խալաթը հագին: Գրում եր, ջնջում, հաշիվներ անում. գումարում եր յուր հարստությունը, վոր իմանա վորքան մեծ է ույժը տնտեսական աշխարհում: Վո՛րքան յետ է մնացել՝նա. յեթե Ալիմյաններից լիովին ստանա բոլոր «պարտքերը», դարձյալ ամբողջ կարողությունը հազիվ կազմի մի միլիոն: Ընչի՞ն բան այնտեղ, ուր ուրիշները միլիոնը վաստակում են մի չատրվանից...

Դռները բացվեցին, ներս մտավ Մարթան փոքր յերեխային գրկած, մեծի ձեռից բռնած: Ցերկուսն էլ դեղնած էյին, արյունաքամ, հիվանդոտ: Մեծը, վորի վեց տարին չուռավ սլիտի լրանար, դեռ չեր կարողանում կանոնավոր ման գալ և հազիվ հազ հետևում եր մորը:

— Ելի ինչո՞ւ բերեցիր դրանց,—դոչեց Իսահակը սրամտությամբ:

— Բերեցի, վոր տեսնես ու ուրախանաս, այս բոպիկս մեծի քթից ելի արյուն գնաց:

— Եհ, յե՞ս ինչ անեմ, բժիշկ կանչիր:

— Բժիշկ, բժիշկ, տեսնո՞ւմ ես, վոր վոչ մի բժիշկ չի ոգնում:

— Վոր չի ոգնում, յես ի՞նչ կարող եմ անել:

— Խորհուրդ են տալիս արտասահման տանել: Ցեկ այս տարի տանենք:

— Ի՞նչ, գործերի այս տաք ժամանակը, վերկենամ, արտասահմա՞ն գնամ:

— Գործեր, գործեր: Ձեմ իմանում ո՞ւմ համար ես հավաքում այդ փողերը...

— Հա՛ հա՛ հա՛,—լսվեց Իսահակի չոր ծիծաղը,—ինչ խելոքացել ես, հա հա հա: Ո՞ւմ համար...վառքի համար, սիրելիս, վառքի... կապրեն յերեխաները—կուտեն, չեն ապրիլ, աստծու կամքն է, բայց փո՞ղը, փողը միշտ հարկավոր է...

Լսվեց դրան զանգի ձայնը: Ցեկողը Սուլյանն եր, վոր ներս մտավ ժպիտը յերեսին, փոքրիկ աչքերն արագ-արագ ճպճպելով:

Մարութխանյանը նրա միջոցով բանակցություն եր սկսել մի թուրք հանքատիրոջ հետ, վորի հանքերն ուզում եր գնել:

— Եհ, նոր խաբա՞ր,—հարցրեց նա, ձեռով նշան անելով հյուրին, վոր նստի:

— Պետք է չտապել: Ուրիշ գնողներ են հայտնվել: Թուրքը քիթը քարճրացնում է:

— Կչտապենք: Այսոր կվճռվի: Ինչ լավ յեղավ, վոր յեկաք. դուք վկա կլինեք մի գործում...Մարթա, այ իմ քեֆի մարդ, այ իսկական ուսում առած յերիտասարդ: Հասկանում է մեր ժամանակի վոգին: Հարցրու, նա քեղ կասի մարդիկ ինչու համար են ուզում հարստանալ:

— Մի՞թե տիկինը հերքո՞ւմ է հարստության նշանակությունը:

Փոքր յերեխան սկսեց լաց լինել:

— Տար, աստված սիրես, դուռնա լսելու ժամանակ չե,—ասաց Իսահակը,—բայց սպասիր, Թող համբուրեմ...Այսոր առավոտ չեմ համբուրել:

Այնն առավոտ, անից դուրս գալիս, նա համբուրում եր յերկուսին էլ, և սրանով սահմանափակվում եր նրա ծնողական զգացումը: Մինչ նա, փոքրիկին գրկած ուզում եր հանգստացնել, վոր դադարի լաց լինել, տիկինը ժպտում եր, նայելով Սուլյանին: Ցեվ նրա աչքերը պարզ արտահայտում էյին ծաղր Իսահակի հայրական վարագույնքին դեպի զավակները:

Նա լսեց յերեխային ամուսնուց, բռնեց մեծի ձեռից և տարավ նրանց դուրս:

Մի վոքր անցած, ներս մտան Սմբատ ու Միքայել Ալիմյանները: Սուլյանը, վոր դեռ վոչինչ չգիտեր և չեր սպասում յուր պարոններին այստեղ, չփոթվեց: Մարութխանյանը, թեթև գլուխ տալով, ձեռով նշան արավ հյուրերին նստել, ճիշտ այնպես, ինչպես առավոտը վար-

վեց նրա հետ Սմբատը: Թող հասկանան, որ Մարութխանյանն էլ պիտի արհամարհել, չերը կամենում է:

Սմբատն ամեն բան պատմել էր չեղբորը: Ինչ որ Մարութխանյանն ասել էր ծովային սպայի և կոմիսիոների կանանց մասին, ճիշտ էր, Միքայելը հաստատեց: Բայց նա այդ մարդուց վող, մանավանդ այդքան մեծ դումար, չի վերցրել, այստեղ կա մի դավադրություն...

— Մարտիրո՞ս,—դոչեց Մարութխանյանը:

Ներս մտավ բեղերը ներկած ու չերեսը սափրած մի մարդ կես ասիական և կես չեվրոպական հագուստով: Դա Մարութխանյանի հաշվատարիմ ծառան էր, որ շատ բան դիտեր յուր տիրոջ անցյալից:

— Ջայ բեր աղաների համար:

— Սա սահաթթիս,—ասաց Մարտիրոսը, Շամախու բարբառով:

— Պարտաթղթեկս,—դոչեց Միքայելն անհամբեր:

— Մի վռազիր, մի բաժակ չայ խմենք, հետո...Նստեցեք...

Սմբատը նստեց. Միքայելը վոչ:

— Պարտաթղթե՛րս,—կրկնեց նա:

— Հեր որհնած, պարտք ունեցողներն արքունական բանկումն էլ են նստում, իսկ չես ազդականդ եմ, փեսադ:

Նա ավելացրեց լամպայի լույսը: Ձեռը տարավ խալաթի դրպանը, հանեց մի մեծ բանալի: Սուլյանը մեկ ուզում էր հրաժեշտ տալ, մեկ էլ այնքան հետաքրքրվել էր, որ տեղից չէր շարժվում:

— Այս մարդը,— ասաց Մարութխանյանը,— նոր չեկավ, թողնենք, որ վկա լինի, հը՞մ...

— Կարող է մնալ,—պատասխանեց Սմբատը:

Միքայելը հաղիվ զսպում էր իրան: Մարութխանյանի դանդաղության մեջ տեսնում էր չեղվիատական միտում՝ տանջել իրան, որքան կարելի չե չերկար:

Վերջապես տանտերը հանդարտ մոտեցավ չերկաթե անդուկին, բաց արավ, հանեց մի մեծ ծրար և նորից նստեց յուր տեղը:

— Չամեցեք, չեղբայր, կարդացեք ու մեկ-մեկ միտներդ բերեք ձեր պարտքերը:

Նա հանեց չորս պարտաթուղթ, տվեց մեկ-մեկ Սմբատին: Միքայելը կարդաց բոլորը ծայրեծայր, գնահեց յուր ստորագրությունները: Քանի խորն էր նայում, այնքան չնչառությունն արագանում էր, քթի պնչերի դողոցը ատամկանում: Նա չէր նկատում յուր չեռևում կանգնած Մարտիրոսին, որ աչքերը սևեռել էր յուր տիրոջ չերեսին, կարծես, պատրաստ՝ նրա դեմքի մի նշանով խեղդել Միքայելին, չթե հարկը պահանջի:

— Այս ստորագրությունները կեղծ չեն,—դոչեց Միքայելն ակամա:

— Տեսա՛ք,— դարձավ Մարութխանյանը Սմբատին, առնելով երանից վերջին պարտաթուղթը:

Մարտիրոսը տիրոջ նշանով դուրս գնաց: Միքայելը ձեռը սեղմեց ճակատին, սկսեց անցուդարձ անել: Հերքել անկարելի չեր. այդ չորս թղթի տակ էլ ինքն էր ստորագրել: Բայց չե՞րբ, ի՞նչպես և ինչո՞ւ, ահա հարց: Նա կանգ առավ դրասեղանի առջև, բութ մատն անխնա սեղմելով ատամների մեջ: Սմբատն ու Սուլյանը լուռ հետևում էին նրա դեմքի արտահայտությանը: Թիկին տված բազկաթոռին, Մարութխանյանը ձեռների մեջ խաղացնում էր խալաթի դեղնագույն ծոպերը:

— Աա՛, —դոչեց Միքայելը հանկարծ,—հիմա քիչ-քիչ մտաբերում եմ...

— Ցես կարծում եմ,—ասաց պարտատերը հեգնորեն,—չերեք հարյուր հազարը հանաք բան չե...

Նա կամացուկ վերկացավ տեղից, պարտաթղթերը դրեց անդուկը: Մոտեցավ դռներին, նայեց դեպի դուրս, ինչ-որ չընչայց Մարտիրոսին, որ դրսում սպասում էր, դարձյալ հետ չեկավ, նստեց:

— Անաղնի՛վ,—արտասանեց Միքայելը:

— Կամաց, քույրդ կլսի, ի՞նչ հարկավոր է դռռալ:

— Անաղնի՛վ,—կրկնեց Միքայելը:

— Լսո՞ւմ եք, պարոն Սուլյան, այս է աչխարհս ա՛յ: Փող ավողը չես, նեղությունից ազատողը չե՛ս, անաղնիվը չե՛ս, էլ ասածու արդարությունը վո՞րտեղ մնաց:

Սուլյանը, որ արդեն հասկացել էր բանի էությունը, աչքերն արագ-արագ ճպճպելով, նայում էր մերթ Մարութխանյանին, մերթ Ալիմյաններին, չիմանալով, ինչպես պահպանել իր հավասարակչռությունը չերկու կողմի մեջ:

— Հիմա լսիր, Սմբատ, ինչպես է պատահել բանը,—խոսեց Միքայելը,—միտքս պարզվում է, քիչ-քիչ հիշում եմ բոլորը:

Ցեվ նա պատմեց չեղելությունը: Հայտնի չե, թե ինչ ներգործություն ունեցավ նրա վրա հանդուգչալ հոր կատակը: Նրա բոլոր հույսերըն ողը ցնդվեցին այդ կատակով: Նա կորցրեց բանականությունը, չենթարկվեց ինչ-որ չար ուժի զորության: Սկսեց այնպիսի բաներ անել, որ ուրիչ ժամանակ չէր անիլ: Թչնամացավ մեծ չեղբոր հետ, դեմեց Մարութխանյանի խորհուրդներին: Մեխսին հնարեցին այն կեղծ կոնտր-կատակը: Նա այդ կատակով սպառնաց Սմբատին: Սպառնալիքը չաղդեց: Նա ավելի կատաղեց: Ուղեղը մթնեց, չգիտեր ինչ էր անում: Իսկ Մարութխանյանը չարունակ նրան լարում էր հարստատ չեղբոր դեմ: Հենց այդ ժամանակները պատահեց մի բան, որ ավելի մթագնեց նրա խելքը: Նա կրքերից հարբեց, գիներ ու ցերեկ միացան նրա համար: Իսկ Մարութխանյանը չարունակ նրան լարում էր: Նա միշտ

համոզում էր Միքայելին՝ դատ բանալ յեղբոր դեմ: Մի որ, վերջապես, զլուխն աղատելու համար, Միքայելն ասաց նրան. «արա, ինչ վոր ուզում ես, յես քեզ իրավունք եմ տալիս»: Ահա հենց այդ իրավունքը դնալի չարը գործ դրեց Մարութխանյանը: Այդ որից նա ամեն որ բերում էր Միքայելի մոտ տեսակ-տեսակ թղթեր և ստորագրել տալիս: Շատ անգամ Միքայելը հարբած էր լինում, իսկ այդ մարդը հենց այդ միջոցներին էր գալիս նրա մոտ: Նա հմար էր, էր կարդում շատ թղթեր և միայն ստորագրում էր: Կարող էր մտածել, վոր նրա թեթևամտությունից այդ մարդը պիտի ոգտվի, բայց այդպես, այդ անմտությամբ, այդ լրբությամբ—յերբեք չէր կարող յերևակայել:

— Ահա յերբ եմ ստորագրել պարտաթղթերը...

Նա բորբոքված դեմքը դարձրեց փեսային և ատամները սատիկ կրճտելով, արտասանեց.

— Անաղնի՛վ, և դու ուզում ես այս տեսա՞կ փողերով կերակրել իմ քրոջը...

— Ցեմ իմ չհնչել նրա հիվանդ յերեխաներին,—ավելացրեց Մարութխանյանը, տակավին ատոնարյուն,—ինչո՞ւ արյուն քրտինքով աշխատած փողերովս չպիտի պահեմ ընտանիքս: Սիրելիս, փառք ատծու, այստեղ յերեխաներ չեն նստած, վոր ատծներիդ հավատան: Մարդ հատարակ նամակն էլ դրելիս, կարդում է ու հետո ստորագրում: Դու չորս պարտաթուղթ ստորագրեցիր և վոչ մեկն էլ չկարդացի՞ր, հա-հա-հա, յերեխա մի համարիր այս ուսումնական մարդկանց: Ինքդ աչքերովդ կարդացիր, վոր թղթերից յերեքը ստորագրված են Մարկոս աղայի մահից շատ առաջ և միայն մեկն և հետո ստորագրված:

— Այո՛, բայց դու ժամանակն էլ ես խարդախել:

— Հա-հա-հա, ժամանակն էլ եմ խարդախել... կարելի յե ասես, վոր յես յե՛ս չեմ, դու դո՛ւ չես, վոր այդ մարդու ազգանունը Սուլյան չե, վոր Սմբատ Մարկիչը յեղբայրդ չե... Միքայել Մարկիչ, ինչո՞ւ չես ուզում խոստովանել, վոր վողի դինը չես խմացել, չպրտել ես աչքդ ու ձախ:

— Շպրտել եմ, բայց վոչ քո վողերը: Դատարանը թանաքը քիմիական անալիզի կենթարկի և կտեսնի, վոր բոլոր թղթերը ստորագրված են մոտ ժամանակում:

Սուլյանը ներքուստ ծիծաղեց Միքայելի միամիտ սպառնալիքի վրա:

— Եհ,—ասաց Մարութխանյանը,—ուրեմն կդիմենք դատարանին, ինչու յենք գլուխ ցավացնում:

Միքայելին ավելի ու ավելի զրգռում էր նրա սառնությունը: Բայց վճռեց մեղմ խոսել, զգում էր, վոր բարկանալը վնասում է գործին:

Ցեվ, հակառակ հպարտության զգացմանը, սկսեց համոզել անողոք պարտատիրոջը՝ թնդացել իրեն, խոստովանել ճշմարտությունը:

Խոստովանել ճշմարտությունը — ահա մի բան, վոր յերբեք չէր կարող անել Մարութխանյանը: Գործի սկիզբը զրված էր, մի՞թե հնարավոր էր հետ կանգնել:

Միքայելը խոստացավ վճարել տասը, տասնուհինգ, քսան տոկոս, միայն թե Մարութխանյանն ասի, վոր կատակ էր անում, վոր վոչինչ ստանալիք չունի: Պարտատերը շարունակ ժպտում էր հեգնորեն, ուսերը վեր քաշելով:

Միքայելը հուսահատ նայեց յեղբոր յերեսին, կարծես, հարցնելով, արդյոք դեռ ելի՞ պարտավոր է իրեն զսպել: Սմբատի դեմքը մոայլվել էր, ինչպես աշնանային դիշեր: Նա վոչինչ չասաց, հայացքը հառեց հատակի մի կետին:

Միքայելը չարունակեց խնդրել պարտատիրոջը, վոր իրեն չհուսահատեցնի: Ամենը դիտեն, վոր նա յեղել է չոպայ, բայց յերբեք հարյուր քսան հազա՛ր... վո՛չ, այդքան փող նա յերբեք չի ունեցել:

— Լավ, յես քեզ չեմ խնդրում,—ասաց պարտատերը,—ժամանակ կտամ, վոր քիչ-քիչ վճարես պարտքդ,—մի, յերկու, եհ, յերեք տարի, հերի՞ք է:

— Իսահակ,—կրկնեց Միքայելը, և ձայնը դավաճանեց կամքին:

— Բավական է. ազգականությունն իր տեղն ունի, հաշիվն իր տեղը: Պարոններ, խոսեցե՛ք, ինչո՞ւ յեք լռում:

Սուլյանը տակավին չդիտեր ումի կողմը բռնի: Հոգով Միքայելին էր հավատում, բայց ինչո՞ւ չլռել, քանի վոր խոսելը կարող է զրգռել կամ մեկին, կամ մյուսին: Ամեն խելացի յե միամիտ ձևանալ, նայել ապշած մերթ մեկին, մերթ մյուսին, ցույց տալ, թե դեռ վոչինչ չի հասկանում վեճից:

Սմբատն աշխատեց համոզել փեսային՝ լավ մտածել արածի մասին: Ջե՞ վոր նա քրեական հանցանք է գործում, կարող է աքսորվել:

— Եթե թող աքսորվեմ,—ասաց պարտատերը,—յեթե աշխարհի յերեսին արդարադատություն չկա: Հավատացեք, յես վոչինչ չեմյի պահանջել, մի բան էլ զրպանիցս կրաշխեյի, յեթե Ալիխանները մլիոններ չունենային: Ունեն, ուրեմն կատանամ հալալ փողերս, ինչպես արդունական բանկից:

— Վոր այդպես է,—կատաղեց Միքայելը, չկամենալով այլևս ստորանալ հակառակորդի առջև,—մի հատ ասեղ չես ստանալ, վոր ատգահ աչքդ կոխես: Դու մոռանում ես, վոր յես հավատար ժառանգ չեմ և միայն այն ժամանակ կդառնամ, յերբ կամուսնանամ: Իսկ յես յերբեք չեմ ամուսնանալ: Գնա, տեսնեմ ումից կառնես փողերդ:

Մարութխանյանը հեգնորեն ժպտաց, վոտը վոտի վրա գցելով՝

հասուկիկ բեղերի ծայրերը վոլորելով: Նա ապահով է. Սմբատը չերբնք չի թուլ տա, վոր յեղբայրն «անկարող պարտապան» հրապարակվի: Նա կաս յեղբոր պարտքերը: Այս եր արտահայտում նրա դիվային ժպիտը, վոր ոճի պես խայթեց Միքայելին:

— Լի՛րբ, քանիսի՞ն ես կողոպտել, քանի՞ խեղճերի յես հացից զրկել...

— Ո՛ր, չատ չատերին, մինչև անգամ հանդուցյալ հորդ...

— Ինդրեմ, մեր հոր մասին վոչ մի խոսք,—դոչեց Սմբատը խորին արհամարհությամբ:

— Գող, ավազակ, վախկոտ,—մռնչաց Միքայելը, վոտն ուժգին զարկելով հատակին,—դուռն տաքացիր, բարկացիր, վախկոտ...

Այս արդեն չափազանցություն եր: Մարութխանյանը վիրավորվեց, վորովհետև կոմնակի անձ եր ներկա: Նա ասաց.

— Ձես սկանդալիստ չեմ, վախկոտ եմ: Կովել ես ուզում, գնա Գրիգոր Հարությանի մոտ... Նա քեզ պատասխան կտա...

Ակնարկը պարզ եր: Նա սպառեց Միքայելի համբերության վերջին կաթիլը: Առանց այդ էլ, արդեն չատ եր դպել իրեն: Աչքունը խփեց գլխին: Վերջին ամիսներում կրած վիրավորանքներն ու դառն վշտերը մի վայրկյանում կուտակվեցին նրա սրտում: Ահեղ ուժգնությամբ մեղմացած հոգին բորբոքվեց նախկին կրակով, վոր դեռ վառ եր: Դա այլևս այն Միքայելը չեր, վոր սենեկան հանցանքից ընկճված, այնպես կաչկանդվեց Գրիգոր Հարությանի առջև: Այնտեղ նրան զսպողը խղճի սուր խայթոցն եր և այն հեզ կերպարանքը, այստեղ արդար եր, վոչ մի տարը չկար, վոր զսպեր նրան:

Նա մի ակնթարթում վերցրեց մոմկալը սեղանի վրայից և չպրտեց այն մարդու վրա, վոր այդ պահին պատկերացավ նրա աչքում կենդանի մարմնացում բոլոր թշնամիների թշնամության: Գործողությունը կատարվեց այնքան արագ, վոր Մարութխանյանը ժամանակ չունեցավ դռների հետևում դրված Մարտիրոսին կանչելու: Մոմկալը մի պտույտ գործեց Սուլյանի գլխի վրա և տակի կողմով դիպավ տանտիրոջ ճակատին: Արյունը դուրս ցայտեց, թափվեց յերեսի վրա, հասավ ներքև, չոպախեց թանկագին խալաթը: Վիրավորվածը, ձեռները սեղանին հենելով, կամեցավ վերկենալ, չկարողացավ, նորից ընկղմվեց բազկաթոռի վրա, արձակելով մի խուլ ճիչ:

Ներս վազեց Մարտիրոսը և հետևից բռնեց Միքայելի ձեռները: Սուլյանը մոտեցավ վիրավորվածին ոգնելու. ի՜նչ վայրենություն, տեր-աստված, ահա ինչ ասել է տգիտություն, անկրթություն:

Վերքը բավական մեծ եր, արյունը չեր դադարում:

Դռների մեջ յերևաց տիկին Մարթան: Մի վայրկյան ապշած նայեց տեսարանին և տեսնելով ամուսնուն արյունաթաթախ, ճչաց ու հարձակվեց նրա վրա:

Միքայելը նայում եր տեսարանին, անշարժ կանգնած: Մարտիրոսը նրան բաց եր թողել, ուշքի յեր բերում տիրոջը: Լսելով քրոջ հուսահատ ճիչը, ցնցվեց, արձակեց խուլ հառաչանք և ընկղմվեց աթոռի վրա ուժասպառ:

Սմբատը բռնեց նրա թևից, դուրս տարավ:

IV

Փողոցի սառն ոդը սթափեցրեց Միքայելին: Անսահման զղջումից կրծոտում եր չբծոնքները մինչև արյուն: Հարձակվեց մի մարդու վրա, վոր վորքան վատ, վորքան սառը և անխիղճ լիներ, իր քրոջ ամուսինն եր: Ցավ մի՞թե ասպետություն եր վախկոտի վրա ձեռ բարձրացնելը:

Նրա ականջներին հնչում եր սարսափած քրոջ ճիչը, հետո—անեծքները: Ինչո՞ւ, ի՞նչ մի մեծ բանի համար: Փողի՞: Ի՞նչ սարսուռ, ի՞նչ հիմարություն անպատմ: Ձե՞ վոր նա վոչինչ չունի, վոչ մի կոպեկ, ի՞նչին եր պահանջում:

Բայց, զղջալով հանդերձ, արտաքուստ ցույց եր տալիս, թե դեռ կատաղած և հակառակորդի դեմ: Սմբատի լռությունը կրկնապատկում եր նրա տանջանքը: Նա չգիտեր ինչպես արդարացներ իր վայրենի վարմունքը, բայց և չեր էլ ուզում խոստովանել զղջումը: Ուրախ կլիներ, յեթե Սմբատը հանդիմաներ, պարսավեր, հայհոյեր, նույնիսկ ձեձեր իրեն ինչպես մի վատ, անպիտան յերեխայի, միայն չլռեր:

Նա խլեց թևը յեղբորից, կանգ առավ, գլուխը հենեց փողոցային լապտերի սյունին, մի ձեռով գրկելով սյունը: Լսվեց նրա խուլ հեկեկանքը: Ցերեկը իրեն այդչափ դժբախտ չեր զգացել: Նա ուրախ կլիներ մնալ քաղցած ու մերկ, միայն թե այդպես վայրենի վարված չլիներ նույնիսկ այն մարդու հետ, վոր բացարձակ կողոպտում եր նրան, ինչպես յերզվյալ ավազակ:

— Գնա իմացիր, ինչպես և վերջը,—դոչեց նա Սմբատին:

— Առաջ հաշիվդ և քեզ տուն տանել: Անցնողները ուշադրություն են դարձնում: Նստենք կառք:

— Թող ինձ այստեղ, գնա, ուր ուզում ես:

Նա քայլերն ուղղեց փողոցի մյուս մայթը, վոր ծովափին եր: Սմբատը հետևեց նրան, գրեթե ուժով կառք նստացրեց և բերեց տուն: Մինչև կես գիշեր չեր հեռանում նրանից: Միշտ լուռ եր, և չգիտեր վորքան իր լռությամբ տանջում և յեղբորը:

— Ասելո՞ւ կես, թե չե,—դոչեց, վերջապես, Միքայելը....

— Ի՞նչ խոսեմ: Այս կարճ միջոցում դու յերկու անգամ ծեծվում ես, մի անգամ ծեծում: Մի՞թե միայն բռունցքն և ապտակ մեզ վրա, մի՞թե դեռ այդքան վայրենի յենք:

Սուլյանը լուռ բերեց, թե հրավիրված բժիշկը Մարութխանյանի վերքը թեև մեծ, բայց անվտանգ և համարում: Ցերեկ մոմկալը հատակի տախտակ կոշտով դիպած չլիներ, վիրավորը չէր ապրիլ:

Սմբոդջ դիշեր Միքայելը չկարողացավ քնել: Մարութխանյանի արյունը հալածում էր նրան, բորբոքում յերևակայությունը, ինչպես մի ժամանակ Հաբեթյանի ապտակը: Ա՛խ, ճշմարիտ, վորքա՜ն դեռ վայրենի յե: Ցավ դեռ զարմանում ել և, վոր մի հեզ, հրեշտականման եյակ աստում, արհամարհում և իրեն:

Հաղիվ լուսյը բացված, ուղևորվեց հանքերը: Մի քանի ժամ անցած, յեկավ Սմբատը: Առավոտը կանուխ Մարթան արտասուքն աչքերին յեկել և, բոլոր պատմել մորը: Այժմ այրին մաղերը փետուռում և, կուրծքը ծեծում, վողբալով Ալիմյան գերդաստանի բարոյական անկումը:

— Ի՞նչ ես մտածում անել,—հարցրեց Սմբատը, այս բոլորը հաղորդելուց հետո:

— Վճարել նրա պարտքերը: Գիտեմ, յես ժառանգ չեմ, բայց պետք և վճարել:

Սմբատը զարմացավ. ի՞նչ, մի՞թե ուզում և որը ցերեկով կողոպտվել:

— Այո՛:

Սմբատն ընկավ մտատանջության մեջ: Միքայելն ունի իրավունք այս կամ այն կերպ վարվել «պարտաթղթերի» հետ, վճարել, մերժել կամ դատարանին թողնել գործը, բայց առանց չեղվելու հոր կտակից:

— Ցերեկ ուզում ես վճարել, պիտի ամուսնանաս:

— Այդ չեմ կարող անել:

— Ինչո՞ւ:

— Չենց այնպես, չեմ կարող ամուսնանալ:

— Հասկացա,—արտասանեց Սմբատը,—դու սիրում ես մեկին, վոր քեզ չի սիրում:

— Իհարկե, հասկանաս, վորովհետև դիտես, վոր այդ մեկը քեզ և սիրում:

— Միքայե՛լ...

— Եե, խորամանկությունը թող մի կողմ: Մի՛ փորձիր ինձ: Այո՛, դու ինձանից բարձր ես բարոյապես:

— Այդ աղջկան յես առիթ չեմ տվել վոչ ինձ սիրելու, վոչ ամենավամեղ քեզ առևելու:

— Հավատում եմ:

Միքայելը նստեց սեղանի քով, գլուխը դրեց ձեռների վրա:

— Կկամենա՞ս, վոր յես խոսեմ այդ աղջկա հետ,—հարցրեց Սմբատը:

— Ցերեկ, բարոյական կշիռս նրա աչքում բարձրացնելու համար, չեե՛: Շնորհակալ եմ: Գիտեմ, վոր վեհանձն ես, բայց յես վողորմություն չեմ ուզում: Բավական և, չեմ ուզում այդ մասին յերկար խոսել: Սիրում եմ, թե չեմ սիրում, իմ գործն և, իսկ ամուսնանալ չեմ կարող: Գրավ դիր ինձ, քանդիր հոր կտակը, ընդունիր ինձ քեզ մոտ ծառա, բայց վճարիր այդ փողերը:

— Ցես հանդուցյալի կտակից մազու չափ չեմ չեղվիլ...

— Ինչո՞ւ միայն իմ վերաբերմամբ: Իսկ դու իրավունք ունի՞ս մեր հոր կամքն անկատար թողնելու:

— Միքայե՛լ...

— Մի՛ վիրավորվիր: Չե՞ վոր դեռ չես բաժանվել կնոջիցդ...

— Ցես յերեխաներ ունիմ, վորոնց սիրում եմ:

— Ցավ վորոնք քո ժառանգներն են, եյի հակառակ հանդուցյալի կտակին:

— Ցերբե՛ք:

— Որենքով, այո՛, բայց կողմնակի կերպով դու նրանց կդարձնես ժառանգ:

— Միքայել, դու դեռ իրավուն չունիս այդպես խոսելու:

— Դեռ չունիմ, բայց, յերևի մի որ կունենամ, չե՞: Ներիր, յես այսպես չեյի խոսել, յեթե դու առաջվա Սմբատը լինեյիր: Վերջին ժամանակ սկսել ես փողը հարգել... Ցես կույր չեմ չատ ել: Բավական և, վճարի՛ր իմ պարտքերը, յեթե չես ուզում թշնամանալ ինձ հետ:

Ցավ նա, դռակը վերցնելով, չտապեց դուրս: Սմբատն ընկավ խորին մտատանջության մեջ: Նա չէր կարողանում բացատրել Միքայելի համառությունը՝ վճարել անարդար, հնարովի պարտքերը: Չլինի՞ թե վախենում և, վոր դատարանում բացվի մի կեղտոտ գաղտնիք... Ցավ ի՞նչ կարող և լինել այդ գաղտնիքը:

Դրությունը տագնապալի յեր: Նա իրավունք չուներ կես միլիոնի չափ մի դումար բաժանել հայրական ժառանգությունից: Ցավ յեթե ունենար ել, դյուրի՞ն և այսպես չուտով դրկվել ահագին դումարից: Այո՛, ճիշտ ասաց Միքայելը. նա այժմ զգում և փողի նշանակությունը, ավելի՛, նա սկսել և սիրել մետաղը: Գոնե այնչափ և սիրում, վոր զգում և վեց-յոթ միլիոնից կես միլիոն դեն չպրտելու անկարելիությունը... Ցավ ինչո՞ւ չպրտել, ի՞նչ հիմարություն:

Նա փորձեց համոզել Մարութխանյանին, վոր հետ կանդնի անարդար պահանջից: Սակայն պարտատերն անողոք եր: Ի՞նչ, մի՞թե նա

հիմար է, որ աչքերը բաց Թողնի «որը ցերեկով լրեն կողոպտեն»: Նա դուռ փող է ավել Մխքայել Ալիմյանին և պետք է ստանա: Առաջ նա դեռ կհամաձայնվեր «մի բան էլ դրամադլխից բաշխել», իսկ այժմ, Մխքայելի վարմունքից հետո, տոկոսի տոկոսն էլ կառնի...

Սմբատն սպառնաց, թե ամեն չանք դործ կդնի ապացուցանելու, որ պարտաթղթերը խարդախ են. կհրավիրի Պետերբուրգից ամենաառաջին փաստաբանին, կծախսի կես մլիոն, բայց կապացուցանի: Սակայն Մարուխյանյանին այսպիսի սպառնալիքներով վախեցնելը դյուրին չեր: Նա ինքը հենց վճռել է Պետերբուրգից փաստաբան հրավիրել: Եհ, բոլորը դիտեն, որ Մխքայելը յեղել է չռայլ, փողը ծախսել է ջրի պես: Գիտեն նույնպես, որ Մարկոս աղան ժլատ եր: Որտեղից կարող եր Մխքայելն այնքան փող ծախսել, յեթե «բարեսիրտ աղգականը պարտք չտար»:

Վերջապես, Սմբատի համբերությունն սպառվեց: Նա ասաց, թե կվճարի յեղբոր պարտքերը, բայց կհամոզի հասարակության, որ պարտատերը խարդախ եր: Այն ժամանակ տեսնենք ինչ յերեսով Մարուխյանյանը կերևա հասարակության մեջ: Բայց ավելի յերեխայական սպառնալիք չեր կարող լինել պարտատիրոջ համար: Նա բարձրաձայն ծիծաղեց: Թող Մարուխյանյանը դառնա կլորիկ մլիոնի տեր, մարդիկ կարող են նրա մասին խոսել, ինչ ուզում են և վորքան ուզում: Հասարակությո՛ւն, հա-հա-հա, հետաքրքրական է իմանալ, վո՞ր Սուլյանը, վո՞ր Սրաֆիոնը, վո՞ր Ղուլամյանը, վո՞ր Առաքելյանն այնուհետև մեջք չէ ծռել նրա առջև: Նա մարդկանց շատ լավ է ճանաչում. մի ձեռով նրանց դրպանը վոսկի դիր, մյուսով խիիր ղլխներին, ելի կժպտան: Ահա թե նա ինչ կարծիք ունի հասարակության մասին: Ցավ մի՞թե քիչ կան քաղաքում խարդախները, մաքսանենգները, կեղծ անանկության համար հարստացածները, նախկին գող գործակատարները, վորոնք այսոր պատիվ ու հարգանք են վայելում: Իսկ Մարուխյանյանը դողության չէ անում, ևե, նա իր «հալալ փողերն է» պահանջում:

— Սխալվում եք,—ասաց Սմբատը,—հասարակության մեջ աղնիվ մարդիկ ել կան...

— Թող լինեն: Հետո նրանք ել կբարեկամանան: Ահա, որինակ, դուք, աղնիվ մարդ եք, չե: Ցեթե փող չեք սիրում, ինչո՞ւ այդպես պինդ կպել եք ձեր հոր մլիոններին: Չե՞ վոր առաջ ասում եյիք, թե Մարկոս աղան, չդիտեմ, անտեսական այս ինչ-այն ինչ որենքներով ուրիշների աշխատանքի վարձն է վայելում: Հիմա այդ մլիոնները հալալ են: Կարծում եք, յես ձեզ մեղադրում եմ: Ասոված վոչ անի, յես հիմար չեմ: Բարեկամ, աշխարհում դողերը յերկու տեսակ են. աղնիվ և անաղնիվ: Աղնիվն ինքն է դողանում, անաղնիվն ուրիշի դողացածն ել է ուտում: Յես այս ասում եմ հենց այնպես, չնեղանաք... Ուզում եմ ասել, վոր բառի իսկական նշանակությամբ աղնիվ վաճառական այնքան հազվադյուտ է, վորքան չդողացող խոհարարը:

Սմբատը տեսնում եր, վոր այդ մարդը վոչ միայն չի մեղմանում, այլև հետզհետե ավելի ու ավելի հանդուգն ու աներես է դառնում: Մնում է մի յելք. թույլ տալ նրան, վոր դիմե դատարանին: Այնտեղ Թող գործը վճռվի նրա ոգուն: Մխքայելը կհրատարակվի «անանկ» կամ «անկարող պարտապան», իբրև վոչ-ժառանգ Ալիմյան հարստության, այն ժամանակ Մարուխյանյանն ո՞ւմից կստանա կես մլիոնը: Սմբատից: Չի տալ և սրանով կպատժի նրան: Բայց այս միջոցը պիտի առ միշտ վայր դներ Մխքայելի առանց այն ել արատավորված վարկը: Մի՞թե կարելի յե այդչափ խիստ վարվել հարազատ յեղբոր հետ:

Սմբատը հրամայեց դրասենյակում հաշիվ կազմել Ալիմյանների ընդհանուր կարողության մասին: Հայտնվեց, վոր բոլոր պարտքերը վճարել կարելի յե միայն անշարժ կալվածներին ձեռնամուխ լինելով: Իսկ ծախել կամ դրավ դնել անշարժ կալվածները Մարկոսի կտակով արդելված եր: Բայց պարտքերը կարելի յեր վճարել մաս-մաս մի քանի տարվա ընթացքում: Վճարե՞լ, արդյոք: Ցերբե՞ք: Սմբատը չի կարող և չի կամենում յենթարկվել պարզ խաբեբայության: Նա ծաղրի առարկա կդառնա, յեթե խարվելը հայտնվի հասարակության...

Նա սկսեց համոզել Մխքայելին, թե միակ յելքը դարձյալ դատարանն է:

Մխքայելը մի անդամ ևս դրականորեն հայտնեց, թե վճռել և պարտքերը վճարել: Թող նրա բաժինն անցնի քրոջ դավակներին, Թող ինքն աղքատանա, բավական է վորքան ոգավել և հնդրական հարստությունից, այժմ ուզում է յուր աշխատանքով ապրել:

— Տեսնելով համառությունդ,—ասաց Սմբատը,—մարդ կամաակամա մտածում է, չլինի թե դու իսկապես պարտական ես Մարուխյանյանին:

— Մտածիր, ինչ-վոր ուզում ես, Թող բոլորն այդպես մտածեն, բայց լսիր, Սմբատ. ինձ վոչ միայն հարստությունը, այլ կյանքն ել ես ձանձրացրել... Վե՛րջ տուր այդ անտանելի գործին:

Նա չեր կեղծում. կյանքն այժմ, արդարև, դարձել եր նրա համար մի ծանր բեռ, վոր կրում եր ավտոմատի պես: Բայց անցյալը տակավին հալածում եր նրան, և վոչ միայն յուր տխուր հիշողություններով, այլև կենդանի կապերով: Նա հանդստություն չուներ ընկերներից, վորոնք դեռ հույս ունեյին նրան վերադարձնել իրանց չրջանը: Այս կողմից առանձին չանք եյին ցույց տալիս իրավաբան Փեյքարյանը, իշխան Նիաուամիձեն, մանավանդ «Պապաչան»:

— Կաց, մի՛ փախչիր,—բռնեց նրան մի որ պատահաբար համբերի միջին ճանապարհում:

Նա ցած իջավ կառքից մի տափակ դեմքով, դժգույն այտերով, սև մերուքով, մեծ բերանով յերիտասարդի հետ:

— Ա՛յ տղա, ըրը դժվե՞լ ես, հդ հի՞նչ ճգնավորութիւն ա, վըեր ըրը...

Նա հայտնեց, թե վաղն արդեն ուղևորվում է արտասահման յերկար ժամանակով:

— Ցեկ ըրը սատանին նահլաթ ասի, ըրը միասին քինանք Պարիժ ըրը...

— Վո՛չ, Պապաչա, չեմ կարող, բարի ճանապարհ քեզ...

— Ըմբո... Ցավաչ, ա տղա, մղդսի Սամսոնի չա՛փ ել ըրը չկաս նա կյամ ա, ըրը Պարիժ...

Մղդսի Սամսոնը տափակ դեմքով յերիտասարդն եր, քաղաքի ա-ռաջին հարուստներից մեկը, հայտնի հանքատեր, նավատեր, կալվա-ծատեր: «Մղդսի» ածականն ստացել եր մի քանի պատավական հատ-կութիւնների չնորհիվ. ժլատ եր, չեր խմում, չեր ծխում, ծաղրում եր բոլոր զվարճասերներին...

— Չա բաս, քինում ըմ, քինում ըմ, Իտալիա, Անգլիա, Գերմա-նիա, լոխ ել պիտի ման կյամ,—ավելացրեց Սամսոնը, բառերը մի-մյանց հետևից արագ-արագ դուրս տալով իր ձեռի «տերողորմյայի» հատիկների պես կլորիկ ոռ ամուր:

Միքայելը վաղուց եր ճանաչում այդ յերիտասարդին, ատում եր նրան: Դա մի տեսակ Մարութխանյան եր իր յեղբայրների ու քույրերի վերաբերմամբ. զրկում ու կողոպտում եր նրանց հոր մահից հետո:

— Չա, հինչ ըմ ասըմ,—չարունակեց մղդսի Սամսոնը, համրիչը բռնելով Միքայելի կրծքի վրա,—յերեկ վենադ ասում եր կլուբում, վըեր հինչոր գենդատ ունի քեզ վրա... Եդ հի՞նչ նադլ ա...

— Զդիտեմ,—ասաց Միքայելը դժկամությամբ և, առանց ձեռ տա-լու, հեռացավ ձանձրալի խոսակիցներից:

— Պենըդ պյուրթ ա մեր տղա,—արտասանեց նրա հետևից մղդսի Սամսոնը և, կառք նստելով, պատմեց Պապաչային Մարութխանյանի պահանջի մասին:

Այժմ Միքայելը Շուշանիկին հանդիպում եր հաճախ, բայց միշտ Անտոնինա Իվանովնայի ներկայությամբ և նրա բնակարանում: Որը մի անգամ գալիս եր տիկնոջ մոտ այն ժամանակ, յերբ սովորաբար որի-որդն այնտեղ եր լինում: Նրանք բարեհամ եկին միմյանց սառն քաղա-քավարության համար, և ուրիշ վոչինչ: Միքայելն անցնում եր յերեխաների սենյակը և նրանց հետ խաղում, Շուշանիկը չարունակում եր պարա-պել տիկնոջ հետ:

Մի որ Անտոնինա Իվանովնան Միքայելին հաղորդեց, թե Շուշա-նիկի հայրը գրկեթե խելագարվել է: Նա այժմ տանջվում է սարսափի

մանիայից, և սարսափի առարկան կրակն է: Ամեն որ քնից զարթնում է թե չէ, սկսում է գոռալ և լաց լինել յերեխայի պես: Նա միշտ կըրկ-նում է, թե Դավիթն ուզում է իրեն դուրս տանել, ձգել կրակի մեջ, այրել: Անտոնինա Իվանովնան խորհուրդ է տալիս տանջիների՝ հի-վանդին տեղափոխել քաղաք, բայց հիվանդը չի ուզում սենյակից տա-գամ դուրս գալ, կարծելով, թե իրեն պիտի ձգեն խարույկի մեջ:

Շուշանիկը դադարեց այցելել տիկնոջը: Այժմ Անտոնինա Իվանով-նան ինքն եր որը մի կամ յերկու անգամ գնում նրա մոտ, սիրտ տա-լիս, մխիթարում: Դեռ մի չարաթ առաջ նրա սրտում կար մի թեթև կասկած Շուշանիկի և Սմբատի վերաբերմամբ: Այժմ կասկածը ջնջվել եր: Ա՛խ, այդ աղջիկն այնքան համեստ է և ամոթխած, վոր յերբեք չի կարող տածել հանդուգն զգացմունքներ դեպի մի ամուսնացած մարդ: Ինչո՞ւ չչարունակել կարծել, վոր նրա տխրության պատճառը Միքա-յելն է: Ինչե՞ր չի կարող անել մի յերիտասարդ այնպիսի անցյալով, և վո՞ր համեստ աղջիկն է մեր ժամանակում պատրանքներից ազատված: Վերջապես, այդ առանձնությունն այս ամայի տեղում...

Ցերեկն նա վախենում եր թախանձել Շուշանիկի հոգեկան աչ-խարհի խորքերը, բայց գուր. այդ աղջիկն իր անհատական մտորում-ների վերաբերմամբ այնքան դաղտնապահ եր, վոր ժամանակ-ժամա-նակ չարժում եր տիկնոջ գայրույթը: Ցեվ այս պատճառով տիկինը չեր կարողանում իմանալ նրա մոտալության հիմքը:

Գրադարան-ընթերցարանն արդեն բացվել եր: Տիկինն սպասում եր իրիկնային կուրսերի թուլատվության: Նա տեսնում եր, վոր իր դոր-ծերը, առանց Շուշանիկի, չատ ել հաջող չեն ընթանում: Միայն որի-որդը դիտեր մշակների հետ վարվելու յեղանակը, և այժմ, յերբ նա տնից չեր դուրս գալիս, չատ քչերն եյին գրադարան մտնում՝ դիրք վերցնելու: Տիկինն զգում եր, վոր նրանց գրավելու ձևը դեռ չի սովո-րել, և սրա պատճառը բացատրում եր յուրովի: Նա գործում է խելքով, իսկ Շուշանիկը՝ զգացմունքով: Այդ աղջիկը, վորպես գիտության քույր, խնամում է հիվանդներին ու վիրավորներին, կարում ու կար-կատում անտուն-անտերների համար, գրում ու կարդում անդրադետ-ների համար վոչ իրրև ոգնող, այլ իրրև մերձավոր, արյունակից: Նա յերբեք չի մտածում, թե մի վորևե կարևոր գործ է կատարում: Անում է այն, ինչ-վոր թելադրում է սիրտը, և անում է այնքան հասարակ, այնքան անիմաստ, վորքան իր ծնողների, հորեղբոր ու հորաքրոջ հա-մար: Այնինչ, իր՝ Անտոնինա Իվանովնայի գործունեության մեջ կա սիստեմ, հաջորդականություն, հասուն և զարդացած մտքի ձգտում: Վո՛չ, այսքանը բավական չէ, պետք է գործի մեջ մտցնել ավելի զգա-ցում, քան խելք, ավելի ցանկություն, քան կամքի ուժ: Բացի դրա-նից, չպիտի միշտ մտածել, արդյոք, արածդ կարևո՞ր է, թե՞ չուր ծախելով ես զբաղված:

Անտոնինա Իվանովնայի գործունեության մեջ չկար կեղծիքի նշույլ անգամ, բայց հենց այս անկեղծությունն էլ, անձնվեր զառնալու փափաքն էլ խելքի և վճռ ղեկավարների ծնունդ էին: Նա չէր խորշում ամբոխի կեղտից ու մրից, վոչ էլ նրա անախորժ գռեհկությունից, բայց և չէր էլ կարողանում առանց քննության մերձենալ նրան: Նա մտածում էր. մի՞թե այժմ արդեն այն հասակումն է, վոր չի կարող այնպես շուտ ընտելանալ մի նոր չրջանի կամ գործի, վորպես Շուչանիկը: Նա տեսնում էր, յերբ որիորդն է յերևում, մշակների դեմքերը փայլում են ուրախ ժպտով, յերբ ինքն է յերևում, միայն խորին հարգանքի ու պատկառանքի յե արժանանում: Ցեվ յերբ այս տարբերությունը, հակառակ յուր կամքի, վերագրում էր Շուչանիկի և յուր հատակների մեջ յեղած տարբերությանը, ղժում էր նախանձ: Մի ղեղացում, վորին դեմ էր ամբողջ հոգով և վորի համար դատապարտում էր իրան, վորպես խելոք ու աղնիվ կին:

Բայց ինչ էս լիներ, Անտոնինա Իվանովնան հոգով անհամեմատ հանգիստ էր, քան քաղաքում: Նրան այլևս չէին հալածում սկեսրի անվերջ տրտունջները, տալոչ կոպիտ ակնարկները, ազգականուհիների արհամարհական ժպիտները: Սակայն միթե այս էր միայն նրա դժբաղդության հիմքը: Չե՞ վոր նա մի քանի ամիս առաջ ավելի հեռու չէր նոր չրջանից: Բաղդավո՞ր էր այն ժամանակ...Ցերբե՛ք: Նա դժբաղդ է իրև կին—այս է դլխավորը: Ցեվ ահա զարնան մերձավորությունը նրա մեջ զարթեցնում է ինչ-վոր վոճորիկ: Արյունը յերակներում յեռում է յերբեմն այնպես, վորպես քսան տարեկան հատակում: Տեր աստված, չո՞ վոր նա կին է և տակավին յերիտասարդ կին: Պատահում է, վոր նրան տիրում է հոգեկան թուլություն, աչխարհը թվում է նրան այնքան ամայի, այնքան անհյուրընկալ, վոր մտածում է. «արժե՞ արդյոք, ելի ապրել»: Մայրական ղեղացումները չեն լեցնում այդ ամայությունը, նրա հոգին ղժում է ուրիշի ղեղացումների պահանջ ևս: Նա փափագում է սիրել և սիրվել: Սակայն նրա աչխարհայացքը, նրա բարոյական եյությունը չեն թույլ տալիս մտածել, թե կարող է սիրել ապորինի սիրով: Ահա ինչու, ղդալով հանդերձ սիրո փափագ, չի ղժում ամուսնական առագաստի դեմ մեղանչելու պահանջ: Ցեվ այստեղ մեծ դեր է խաղում անձնասիրությունը, սեփական պատվի ղեղացումը: Թող նրան մեղադրեն, վորքան ուզում են, և ինչ բանում ուզում են, նա պիտի արդար մնա յուր խղճի առջև: Բարոյական անարատություն—ահա այն գենքը, վոր խելացի կինը չպիտի ղոհի վորևե մոլորեցուցիչ ղեղացման: Այս գենքով և միայն այս գենքով նա պիտի մաքառի յուր հակառակորդների դեմ...

Մի յերեկո նա քաղաքից սպասում էր յերեխաներին: Այժմ նրանց աղախինն էր տանում Վոսկհատի մոտ և յետ բերում. Սմբատը չէր

դալիս հանքերը: Աղախինը վերադարձավ մենակ: Անտոնինա Իվանովնան վախեցավ: Արդեն նա այնքան կասկածամիտ էր դարձել սկեսրի վերաբերմամբ, վոր միշտ յերկյուղով էր յերեխաներին քաղաք ուղարկում:

— Ինչո՞ւ մենակ յեկար,—հարցրեց նա, վաղելով պատչգամբ:

— Պարոնը հրամայեց թողնել յերեխաներին քաղաքում: Վաղն ինքը կբերի: Ախ, տիրուհի, յեթե տեսնեյիք, պարոնը ինչքան տխուր էր...Յես իսկի նրան այդպես չեյի տեսել...

Հատարակ կնոջ պարզ խոսքերը գործեցին անսովոր տպավորություն տիրուհու վրա: Նրա դեմքը մռայլվեց. կապտագույն աչքերի մեջ յերևաց տարորինակ թախիծ:

Յերեկոն նա անցկացրեց Շուչանիկի մոտ: Նա տխրում էր առանց յերեխաների—այսպես էր ասում ինքը: Բայց տխրության պատճառը միայն մայրական կարոտը չէր: Նա հուղված էր և չարունակ խոսում էր յուր ձևնարկությունների մասին, կարծես, աչխատելով մոռանալ մի միտք, խեղդել սրտում մի ղեղացում: Վերջն սկսեց արտահայտել յուր համակրանքը Շուչանիկին: Խոստովանեց պարզ, թե իսկապես նոր է ճանաչում նրան, թե յերբեմն սխալմամբ նրա վերբերմամբ ունեցել է անտեղի կասկածներ: Ցասաց, թե ինչ կասկածներ է ունեցել, բայց Շուչանիկը դուշակեց և այլայլվեց:

— Ցես համոզված եմ, վոր վոչ վոք և վոչինչ չի կարող խափանել մեր բարեկամությունը...

Նրա ձայնի մեջ ղղացվեց խորին հուղում:

V

Դարձյա՛լ մի անքուն գիչեր Շուչանիկի համար: Նրա ականջներին չարունակ հնչում էին Անտոնինա Իվանովնայի խոսքերը. «Ցես համոզված եմ, վոր վոչ վոք և վոչինչ չի կարող խափանել մեր բարեկամությունը»: Անշուշտ դա մի կծու ակնարկ էր, անշուշտ, տիկինը ղիտեր, ինչ է կատարվում նրա սրտում: Ո՛ո, ամոթալի՛ դրություն: Ցեվ նա, համեստ համարված մի աղջիկ, դեռ կարողանո՞ւմ է նայել այդ անթաղդ կնոջ յերեսին: Նա՛, վոր կրում է սրտում մեղսալի ղեղացումներ, թեկուզ ակամա, թեկուզ հակառակ յուր ամբողջ եյության. տեր աստված, մի՞թե յերբեք չի ունենալ ուժ սպանելու յուր սրտում այդ վորդը: Ահա լսեց, վոր վաղը նա հանքերումն է լինելու, և այժմյանից արդեն սիրտը թրթռում է: Ցերեկ, նա կղա հիվանդին տեսնելու. նա միշտ դալիս է, այնքան բարի յե դեպի Զարդարյանները: Պետք է վախչել տնից, չլսել նրա բարեհնչյուն ձայնը, չտեսնել նրա թախծալի աչքերը...

Բայց վոչ. ինչո՞ւ վախչել և դեթ մի անգամ չխոսել նրա հետ

պարզ: Մի՞թե միչտ պիտի լուռ ու մունջ կրի վիշտը և, չկարողանալով հաղթել, ընկճվի ու վոչնչանա նրա ծանրության տակ: Հարկավ, նա չէ հայտնել այդ մարդուն յուր զգացումները: Ո՛ր, վոչ, այդ կլներ հիմարություն. մի՞թե նա կորցրել է ամոթի վերջին կաթիլը: Բայց ինչո՞ւ չփորձել յերես առ յերես կանգնել իրականության հետ: Ով գիտե, դուցե այդ մարդը նրան ասի մի դառն ճշմարտություն, վորից նա սթափվի, ուղիղ ճանապարհի դա: Պետք է լինել մի փոքր համարձակ, հենց փորձի համար, հենց ինքն իրան համոզելու համար, թե կարող է Սմբատ Ալիմյանի հետ խոսել աներկյուղ, նույնիսկ անտարբեր: Նա վոչինչ ակնկալություն չունի յուր սիրուց. հավիչտակվել է անշահ, այնպես, ինքն էլ չգիտե ինչո՞ւ: Ցավ յերբեք, յերբեք չի ունեցել հանդուգն վաղամեռ՝ տիրանալ մի անձի, վոր որևէքով ուրիշին է պատկանում, այն էլ մի խելոք, բարի, առաքինի կնոջ: Մի կնոջ, վոր ուղում է նրա՞ անկեղծ բարեկամուհին դառնալ: Վոչ, նրա համեստությունը, աչխարհայացքը, նրա ամբողջ բարոյական կազմը դեմ են այս հանցավոր մտքին:

Հոր առավոտյան աղաղակը սթափեցրեց նրան: Մի՞թե արդեն լուսացել է, և նա դեռ անքուն է: Այս արդեն խելագարություն է: Ախ, հիվանդի այդ սոսկալի մրմունջները անդամ չեն խլացնում նրա սրտի վիշտը գեթ մի քանի րոպե: Ախ, այս տանը յերկու հիվանդ կա. մեկին հալածում է կրակի սարսափը, մյուսին՝ հանցավոր սիրո ահը: Տարբերությունն այն է, վոր մեկն յուր սրտի կսկիծն արտահայտում է աղաղակներով, մյուսն այրվում է ներքուստ և ստիպված է լռել, միչտ լռել: Այլևս բավական է. թող նա կործանվի, բայց կործանվի գեթ մի անդամ տանջված կրծքից սուր ճիչ արձակելով:

— Մամա, հանդիստ թող լինճ, մամա, յես հիվանդ չեմ:

— Ցերանի միայն հիվանդ լինեիր, վորդի, դու ուրիչ ցավ ունես...

Շուշանիկը բաց արավ լուսամուտները. նայեց դեպի դուրս:

Մի չարաթ եր անձրևները դադարել էին, գետինը չորացել եր: Տեղ-տեղ յերևում էին ոաղիսների պես կանաչ տարածություններ, ուր չհային սև նավթի հետքեր, յերկիրը ծածկվել եր նոսր խոտով: Փուլթ չէ, վոր բնությունն այստեղ խղճուկ է—մթնոլորտը տոգորվել եր գարնան արբեցուցիչ վոգով:

Շուշանիկն ուղղեց ճակատի վրա սիրված մազերը, անցավ հոր սենյակը: Հիվանդը դեռ մրմնջում եր, յերկյուղած աչքերը դռներին հառած: Ամեն րոպե սպասում եր, թե ահա, ահա պիտի դան «անաստվածները» և իրան տանեն դուրս, ձգեն կրակի մեջ:

Նա փուղղ ձեռը վախվխեց աղջկա պարանոցին, սկսեց հեկեկալ

առանց արտասուքի, մի տեսակ մեքենայի պես: Աղատիր նրան, Շուշան, ելի միայն դու սիրտ ունես, աղատիր:

Հիմա նա առողջ է, բայց մայրդ, հորաքույրդ և այն «չար ատանա Դավիթն» ուղում են նրան կենդանի-կենդանի խորովել, ասում են, ավելորդ բերան է: Այ, դրսում կրակ են պատրաստել: Ե՛ն, բայց դուր են սպասում: Սարգսի խելքը դեռ գլխին է, յերբեք վոտը տնից դուրս չի դնիլ, թեկուզ ամբողջ աչխարհը դա:

Բառերը դուրս էին գալիս հիվանդի կոկորդից ուժով: Նա հազից կապտում եր, խեղդվում: Նա կատաղեց ինքն յուր դեմ և սկսեց յերեսը ճանկռտել, մազերը փետտել: Շուշանիկը չոգեց նրա առջև, բռնեց ձեռը, սեղմեց յուր ձեռների մեջ և սկսեց աղերսել, վոր հանգստանա: Փոքր առ փոքր նրա մեղմիկ հորդորների աղդեցությամբ հիվանդը լռեց, հանդարտվեց, թեյ պահանջեց:

Այդ միջոցին կից բնակարանում կատարվում եր ուրիչ տեսարան: Սմբատը յերեխաների հետ քաղաքից յեկավ բավական կանուխ: Անտոնինա Իվանովնան վազեց առաջ, դրկեց Վասյային ու Ալյոշային այնպես վոր, կարծես, մի ամիս չեր տեսել նրանց:

Սմբատը դիտում եր սրտաչարժ տեսարանը և զսպում հառաչանքը. չե՞ վոր կարող եր բաղդավոր ընտանեաեր լինել, յեթե սիրեր այդ կնոջը և սիրվեր նրանից, մեկ էլ՝ չլինեին այն «նախապաշարումները»: Անտոնինա Իվանովնայի լուրջ ու մտախոհ ճակատի վրա այսոր նչմարում եր մի նոր մռայլ: Նրան թվում եր, վոր վերջին որերը կինը տանջվել է թոլորովին մի նոր վշտից, վոր, վերջապես, այժմ նա այն չէ, ինչ-վոր մի ամիս առաջ: Նա ղգաց կարեկցության պես մի բան: Ախ, այդ կինը մենակ է այստեղ, յուր ծննդավայրից հեռու, մի՞թե վայրենություն չէ, նրա հետ այնքան խիստ վարվելը: Թող նա լինի համառ, բայց ինչո՞ւ չխնայել նրան թեկուզ սոսկ մարդասիրական զգացումներից չարժված:

Մի վայրկյան նա քիչ եր մնում յենթարկվեր սրտի տկարության և հաչտության մի խոսք ասեր: Բայց զսպեց իրան. ինչո՞ւ ինքը պիտի ասի և վոչ նա. չե՞ վոր նրանք հավասար միմյանց վշտացրել են և միմյանց կյանքը թունավորել: Թող նա մի թույլ ակնարկ անի, թե զղջում է, ինքն առաջինը ներում կխնդրի:

Ցերբ Անտոնինա Իվանովնան, աղախնի խոսքերից դրդված, մի ակնթարթ նայեց Սմբատին, նկատեց նրա դեմքի վրա խիստ փոփոխություն: Նրան թվաց, վոր վերջին ժամանակ ամուսինը բավական-դեղացել է, առողջացել: Թվաց նույնպես, վոր նրա աչքերն այժմ արտահայտում են մի տեսակ կենսասիրություն, վոր նրա ճակատի վրա չկա այլևս առաջվա մռայլը:

Աղախինը նոր բերեց մի քանի կապոցներ, վոր Սմբատը թողել եր կառքում:

— Սպասիր,—վազեց առաջ Վասյան և, խլելով կապոցները, սկսեց արագ-արագ բաց անել,—չխառնե՛ք. պապան մեզ համար ջոկ-ջոկ ե նվերները դնել: Ալյոշա, այս քոնն ե. այս լմն ե, այս էլ քոնն ե, վերցրու, չե չէ, այդ մեկն լմն ե:

Սմբատը մրմնջաց, իրերը բաժանեց, վոր մանուկները չկռվեն: Մեջ տեղ մնաց ամենից մեծ կապոցը:

— Այդ քոնն ե, մամա,— ասաց Ալյոշան, կապոցը տալով մորը:

Տիկինը զարմացավ:

— Ձեզ համար ուսնոց ե,—բացատրեց Սմբատը, յերեսը մի կողմը դարձնելով:

— Ցես զարնանային ուսնոց ունիմ:

— Հավանեցի դնեցի. կամենաք վերցրեք, չկամենաք,—թողեք... Նվե՛ր, ի՞նչ ե նշանակում այդ:

— Մամա, վերցրո՛ւ, լավն ե,—ասաց Վասյան:

— Մամա, վերցրո՛ւ, լավն ե,—կրկնեց Ալյոշան:

Անտոնինա Իվանովնան, լուռ, ձեռով նշան արավ աղախնին, վոր կապոցը տանի մյուս սենյակ:

Ցերկուսն էլ զգում էին անհարմարություն, յերկուսն էլ ուզում էին այսոր ուղիղ նայել միմյանց յերեսին և չէին նայում: Իսկ յերեխաները զբաղված էին իրանց խաղալիքներով, նայում էին մեկ մեկ, հրճվում, բացականչում: Նրանց մեսաղահնչյուն ձայների մեջ ծնողները զգում էին սուր կչտամբանք: Անտոնինա Իվանովնան մտածում եր. արդյոք, անիրավ չի՞ վարվում այդ մարդու հետ, արդյոք մշտական դժտությունների գլխավոր պատճառն ի՞նքը չե: Մի՞թե չեր կարող լինել ավելի դիջող, քան հակառակորդ: Ինչո՞վ են մեղավոր այդ մանուկները, վորոնց քաշքշում են հանքերից քաղաք և քաղաքից հանքերը, ստիպում վարել ինչ-վոր անապատային կյանք: Ինչո՞վ պիտի, վերջապես, պսակվի այս անորոշ կացությունը: Նրանք սխալվել են, եհ, ի՞նչ արած, մի՞թե համառությամբ պիտի բարդացնեն այդ սխալի հետևանքները:

— Ասում են անդամալուծը խելագարվել է, ճի՞շտ ե,—հարցրեց Սմբատը:

— Համարյա թե:

— Հարմա՞ր կլինի իմ այցելությունը:

— Զգիտեմ, միայն վաղ ե, դեռ նոր ե զարթնել:

Սմբատը դուրս յեկավ, դնաց Միքայելի բնակարանը: Բակով անցնելիս, մի անդամ հետ նայեց և լուսամուտ առջև տեսավ Շուշանիկի գլուխը:

Որիորդը նրան չնկատեց: Նա զբաղված եր զրասեղանի քով: Մի քանի քայլ հեռու կանգնած եր հաղթանդամ Զուլբրովը, և փուրաշկան ձեռների մեջ պտտացնելով, թելադրում եր նամակ «տան» վրա: Մննդավայրի հիշողությունները վառվել եյին նրա մեջ, առանց հուշման չեր կարողանում թելադրել նամակը: Ցերբ հերթը հասավ «բարևներին», նա հիշեց բոլոր տնեցիների, բոլոր աղջականների, նույնիսկ հարևանների անունները:

Նամակն ավարտեց, Շուշանիկը դրեց հասցեն Սարատովի նահանգի այսինչ գավառի, այսինչ շրջանի, այսինչ գյուղը: Զուլբրովն առավ ծրարը, փաթաթեց թաշկինակի մեջ և դուրս գնաց, խոր գլուխ տալով: Շուշանիկը վերցրեց սեղանի վրայից գիրքը, շարունակեց կարդալ: Կես ժամ անցած, հողնեց, սկսեց անցուդարձ անել: Հետո դարձյալ նստեց սեղանի քով և անորոշ հայացքը դարձրեց դեպի կանաչ դաշտերը:

Նա աշխատում եր համոզել իրեն, թե չպիտի իր համար լինի ավելի մեծ վիշտ, քան հարազատ հոր հուսահատական վիճակը: Նա վեր կացավ, վոր անցնի հիվանդի սենյակը, բայց դռների մոտ լսեց Սմբատի ձայնը: Ձեռները թուլացան, գլուխն անզոր թեքվեց կրծքին, այն-քա՞ն այդ ձայնն ազդեց նրա վրա: Վո՛չ, նա իր սենյակից չի դուրս գալ, թեկուզ հայրն էլ կանչի: Նա կփակի ականջները, վոր չլսի վտանգավոր ձայնը, կդոցի աչքերը, վոր չտեսնի առնական կերպարանքը:

Պատերազմն անտանելի յեր: Նա չեր ուզում լսել այդ ձայնը, բայց ականջ եր դնում, վոր լսի: Այս վատ ե, շատ վատ, պետք ե անից փախչել: Նա դուրս յեկավ պատշգամբ: Զգնա՞լ, արդյոք, Անտոնինա Իվանովնայի մոտ: Այնտեղ խղճի խայթը կսթափեցնի նրան: Ցույց տալով նավնայի մոտ: Այնտեղ խղճի խայթը կսթափեցնի նրան: Ցույց տալով սառնասրտությունը, տիկնոջ սրտից կչնչի կասկածը: Թող յենթարկի իրեն դառն փորձի, բայց փորձը կմաքրի, կղարի նրա սիրտը:

Սակայն տիկինը տանը չեր, գնացել եր զբաղարան: Իսկ յերեխաներն աղախնի հետ դրսում, մի կանաչ տափարակի վրա սերսո եյին խաղում:

— Բարև ձեզ, որիորդ,—լսեց Շուշանիկն այն մարդու ձայնը, վորից վախչում եր:—Ներեցեք, կարծես, վախեցրի ձեզ: Բայց լավ բռնեցի, ձեզ հետ խոսելիք ունիմ...

Նա չտասնց ներս, բերեց յերկու աթոռ, դրեց պատշգամբի մի խուլ անկյունում, վոր ավելի ապահով եր ոտար աչերից: Շուշանիկը չկարողացավ հակառակել. միչտ Սմբատի ձայնը կաչկանդում եր նրա կամքը:

— Որիորդ,—սկսեց Սմբատը ուսերեն լեզվով,—դուք խելոք և զարգացած եք, հուսով եմ, թույլ կտաք ինձ յեղբայրաբար մի հարց առաջարկել ձեզ: Ասացեք, խնդրեմ, ի՞նչ կարծիք ունիք իմ յեղբոր, Միքայելի մասին:

Հարցը միանգամայն անսպասելի յեր, Շուշանիկը նեղն ընկավ:

Բայց չե՞ վոր Սմբատ Ալիմյանը նրան համարում է «խելոք ու զարդացած», պետք է ուրեմն չչփոթվել:

— Ինչո՞ւ համար եք հարցնում,—ասաց նա:

— Ձեր պատանեկանից շատ բան է կախված: Ուզում եմ իմանալ, արդյոք իմ յեղբոր մեջ վորևե արժանավորություն գտնո՞ւմ եք:

— Արժանավորությո՞ւն,— կրկնեց Շուշանիկը,—իմ կարծիքով, չկա մարդ առանց վորևե արժանավորության:

— Բոլորովին ճիշտ է, բայց յես կկամենայի, վոր դուք Միքայելին, ինչպե՞ս ասեմ, ըըը... ավելի արժանավոր մարդ համարեյիք, քան ում եք...

Արդեն այս խոսքերը բավական էին, վորպեսզի Շուշանիկն իմանար, թե ինչ է Սմբատի նպատակը: Նա վճռեց լինել պարզ, աններկյուղ: Նա հարցրեց, արդյոք, ի՞նչ նշանակություն կարող է ունենալ իր կարծիքը մի «ոտար» մարդու մասին:

Սմբատն աննկատելի համարեց խոսել մութ ակնարկներով: Նա խընդիրը դրեց պարզ հողի վրա: Կես ժամ առաջ նա Միքայելին թողեց հուսահատ դրության մեջ. պետք է այսպես թե այնպես խնդիրը լուծել: Նա ասաց, թե դիտե, վոր որիորդը Միքայելին համարում է առնարժան, նույնիսկ անբարոյական մարդ: Այո՛, թող չչփոթվի. նա ասում է այն, ինչ-վոր վաղուց դիտե: Յեվ այդ բոլորովին չի վիրավորում նրա յեղբայրական զգացումը: Մի «վերին աստիճանի համեստ ու մաքուր եյակ» ուրիշ կարծիք չէր կարող ունենալ այն մարդու մասին, վոր կյանքն անց է կացրել աննպատակ, չոայլ ու ղեղլա:

— Ձերբ յես Ռուսաստանից յեկա, Միքայելը քաղաքի ամենատարածված յերիտասարդներից մեկն եր: Հայրս ինձ կտակեց ուղիղ ճանապարհի բերել մոլորված յեղբորս: Ցես սրտատրոր եյի կատարել հանդուցյալի կամքը, թեև ինքս շատ էլ հնազանդ վորդի չեյի յեղել... Աստծուն ե հայտնի, թե վորքան աշխատեցի համոզել Միքայելին, վոր իր կյանքը փոխի: Բայց իմ բոլոր ջանքերն անցան դուր: Միքայելն ուղղվելու փոխարեն, ավելի ու ավելի վչացավ: Ձեզ էլ հայտնի յե, վոր թե ինչ վիրավորանքներ ստացավ նա, վորչափ անպատվեց և խայտառակվեց: Ցես չկարողացա պատռել նրան բարոյական անկումից, վորովհետև այդ իմ ուժերից բարձր եր: Բայց այն, ինչ վոր ինձ համար դժվար եր, մի ուրիշի համար դարձավ շատ դյուրին բան... Մայրահեղ ապականված մարդը, մի մարդ, վորին բոլորը կորած եյին համարում, հանկարծ, կարծես, մի գերբնական ուժով սկսեց փոխվել: Նա թողեց անբարոյական չրջանները, հեռացավ բոլորից և ամփոփվեց ինքն իր մեջ: Առաջվա Միքայելին տեսնողը չի ճանաչիլ այժմյան Միքայելին: Այժմ նա բոլորովին ուրիշ մարդ է: Սկզբում, որիորդ, այդ ինձ համար մի առեղծված եր... Այդպիսի արմատական փոփոխու-

թյուն կյանքումս չեյի տեսել վոչ մի մարդու մեջ, շատ-շատ կարդացել եյի միայն վեպերում: Այժմ գործն ինձ համար պարզված է: Խոսելով Միքայելի հետ, դիտելով հեռվից հեռու, յես այժմ գտնում եմ նրա անսպասելի, կարող եմ ասել, գերբնական փոփոխության հեղինակին... Այդ դո՛ւք եք...

Նա կանգ առավ, վորովհետև նկատեց, վոր իր խոսքերը խորը ներգործություն են անում որիորդի վրա:

— Բավակա՞ն է,—արտասանեց Շուշանիկը յերերուն ձայնով:

— Ինչո՞ւ ճշմարտությունը թաղցնել, քանի վոր ինքներդ եք դրում եք: Որիորդ, դուք ազատեցիք իմ յեղբորը, և յես պարտավոր եմ հայտնել չնորհակալություն: Բայց մի բան. մի՛ թողնեք նրան կես ճանապարհի վրա, չարունակեցեք ձեր բարերար աղդեցությունը... Սիրեցեք նրան...

Շուշանիկը ցնցվեց և, կիսով չափ տեղից վեր կենալով, խորին սրտմտությամբ արտասանեց.

— Պարոն, ի՞նչ իրավունքով եք ինձ վիրավորում...

— Ա՛խ, որիորդ, ի սեր աստծու, իմ խոսքերը մի՛ ընդունեք վատ մտքով: Այդ ձեղ չի սպասում: Սիրեցեք Միքայելին, վորովհետև նա ձեզ սիրում է խելագարի պես...

Ա՛խ, նրան առաջարկում են սիրել մի մարդու, վորի վերաբերմամբ դեռ չի հաղթել սրտում բոլոր զղվանքը: Ցեվ ո՞վ է առաջարկում... Միթե այս եր նրա սրտի խղճը: Ի՞նչ պատասխանել, յերբ քո անհուն տենչանքների միակ առարկան, քո յերաղների կենտրոնը, քո գաղտնի պաշտելյալը, այժմ, դեմ ու դեմ նստած, ուրիշի զղացումների թարգման և պաշտպան է հանդիսանում: Միթե այդ մարդը վոչինչ չդիտե...

Զդիտե՞: Վո՛չ, Սմբատը կույր չե: Ցեթե չհավատար Միքայելի նախանձին, յեթե չհավատար իր նկատածներին և զղացածներին իսկ, այժմ բավական եյին Շուշանիկի ակամա ցնցումները, վորպեսզի զղար, թե ում համար է բաբախում որիորդի սիրտը: Ա՛խ, նա կարող եր արձագանք տալ այդ աղչկա զղացումներին, նա ինքը շատ անգամ է մտածել նրա մասին: Բայց ի՞նչ իրավունքով և ի՞նչ նպատակով: Նա կաշկանդված է հավիտյան և հենց այս պատճառով ժամանակին խեղդեց իր մեջ հղացած համակրության առաջին զղացումները, վորպեսզի հետո խեղդելը դժվար չլինի: Այժմ, իբրև աղնիվ մարդ, պարտավոր է սթափեցնել մոլորված աղչկան:

Ցեվ նա սկսեց նրբորեն մերձենալ խնդրի այս ամենաէական կողմին: Նա վճռեց զոհել անձնականը, պաշտպանել Միքայելին: Միակ միջոցն եր համեմատությունը: Գովելով յեղբորը, նա պիտի նսեմացներ իրեն: Այսպես էլ արավ: Հարկավ, թաղցրեց իրեն նսեմացնելու

պատճառը, բայց դիտեր, վոր իր խոսքերը կունենան ցանկալի հետևանք: Միքայելն ընդունակ է սիրել կրակոտ սիրով, չնայելով վատ անցյալին, սիրել ու տանջվել, նույնիսկ ղ՞հվել սիրո անունով: Դա մի հազվագյուտ հատկություն է, վորով այժմ շատ քիչ յերիտասարդներ կարող են պարծենալ: Նրա հոգու մեջ կա մի չապականված անկյուն: Այնտեղ թագնված են ավելի խոր ղգացումներ, քան մի ուրիշի ամբողջ հոգում: Հաճախ Սմբատը համեմատում է իրեն Միքայելի հետ և միշտ նրան է գերազանցություն տալիս: Վո՛չ, թող չկարծի Շուշանիկը, թե նա կեղծ համեստությունից է ասում այս բոլորը: Մի մարդ, վոր ընդունակ է ծայրահեղ ղգացումների, միշտ գերազասելի յե մի ուրիշից, վորի ղգացումները «սառել են վաղուց»: Նա, վոր ղգում է — ապրում է և տանջվում. նա, վոր մտածում է — նիրհում է: Բարվոք է վատ անցյալ ունենալ և մաքրել այդ անցյալը ներկայի տանջանքներով, քան ապրել հարթ ու հավասար կյանքով: Հաճախ պատահում է, վոր «լավ սկսողը վատ է վերջացնում, վատ սկսողը—լավ»:

Շուշանիկը լսում էր լուռ, աչքերը հառած դեպի անորոշ տարածություն: Նա զուշակում էր Սմբատի մտքերը: Նա չէր հավատում այդ մարդու կողմնակի ինքնաստորացման անկեղծությանը, բայց ղգում էր նրա խոսքերի նպատակը: Նա ուզում է ասել, թե չի կարող սիրել, ուզում է սառը ջուր ածել դիմացինի կրած տանջանքների վրա: Ահա թե վորքան դժբախտ է Շուշանիկը: Բայց ինչո՞ւ, մի՞թե Շուշանիկը յերբևե հանդգնել է կարծել, թե Սմբատ Ալիմյանը կարող է սիրել իրեն, «տանջվել, նույնիսկ ղ՞հվել սիրո անունով»: Նա ինքը և միայն ինքն է սիրել և սիրել է դաղտնի, յերկյուղով: Ա՞յժմ... նրան հատկացնում են, թե խաբված է:

— Ասացեք, ի՞նչ եք պահանջում ինձանից,—արտասանեց նա, վոտքի կանգնելով:

— Աղատեցեք յեղբորս... Նա առանց ձեր սիրո չի կարող յերկար ապրել:

— Ահ, պարոն Սմբատ, առասպելներ մի՛ հնարեք,—գոչեց հանկարծ Շուշանիկն այնպիսի տոնով, վոր դժվար էր իմանալ, վո՛րն է ավելի ղորեղ նրա մեջ՝ ամոթի, թե բարկության ձայնը:—Ձեր յեղբոր համար աշխարհն ամայի չէ, վոր իմ մասին մտածի... Նա յերիտասարդ է, հարուստ, գեղեցիկ... Իսկ յես ո՞վ եմ...

— Դուք նա յեք, վորի նման յերկրորդը չկա մեր քաղաքում: Դուք, յերևի, ինքներդ չգիտեք ով եք...

Շուշանիկը ղողում էր տերևի պես:

— Ներեցե՛ք, յես լսում եմ հորս աղաղակը... Ներեցե՛ք, չեմ կարող այստեղ մնալ... Կաեանեն... բավական է, վորքան ծաղրեցիք ինձ...

Նա հեռացավ հատատ քայլերով, գլուխը հպարտ բարձր պահած:

Սմբատը նայեց նրա հետևից: Վորքա՞ն հպարտ է այդ աղջիկը, վորքա՞ն դաղտնապահ և վորքա՞ն համեստ իր արժանավորություններն վերաբերմամբ: «Ինչո՞ւ մի տասը տարի առաջ չպատահեցի մի այդպիսի աղջկա», անցավ Սմբատի մտքով:

VI

— Սիրելիս, այդ բոլորը դատարկ բաներ են: Մեր ժամանակի վոգին քեզ վարակել է, այսպես ասած, մինչև վոսկորներիդ ծուծը: Բայց մի՛ վախեցար, բոլորը կանցնի: Ո՞վ չի քեզ նման հիվանդ յեղել և ո՞վ չէ առողջացել: Այսոր անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ արտասահման դնալու մասին:

Սակայն վոչ մի բժիշկ և վոչ մի դեղ այլևս չէ կարող Արշակ Ալիմյանին ազատել այն թարոյական ախտից, վորից առաջացել և այժմ բարդանում էր նրա մարմնավոր ախտը: Դեղեր ընդունելով հանդերձ, նա չարունակում էր նույն վատ կենցաղը և արագ-արագ քայքայում ու փտում: Նույնիսկ Ալեքսեյ Իվանովիչն այժմ հորդորում էր նրան լուրջ դարմանվել, կատարել բժիշկների բոլոր պատվերները: Բայց զուր:

Այժմ Արշակն ուզում էր առանձին բնակարան վարձել և Ելմիրայի հետ հրապարակորեն կենցակցել: Ալեքսեյ Իվանովիչը, վոր ինքն այժմ տեղափոխվել էր հյուրանոց, թախանձում էր նրան այդ չանել: Նա ասում էր, թե ներկայումս ընդունված չէ սիրուհու հետ մի տան մեջ ապրել, մովե տոն է համարվում:

Արշակը մտավ Ֆլորիմ-բևկի, Մոսկվոյի, Նիատամբեձեյի չրջանը, գարձավ նրանց հետ հավասար ընկեր, չնայելով հասակին: Առայժմ խուլա էր տալիս միայն Գրիգոր Հարեթյանից, վախենալով նրանից: Բարեբախտաբար, հաստամարմին զվարճամոլը չէր յերևում ընկերական չրջաններում:

Այն որից, յերբ քույրը տեղափոխվեց ծնողների տունը, նա վախենում էր հասարակությունից: Անուշի արատավորված վարկը նրան պատճառում էր ամոթ և ցավ:

Պետրոս Ղուլամյանն ապահարդանի խնդիրը էր բարձրացրել, աշխատում էր առաջնորդի միջոցով թուլյտվություն ձեռք բերել՝ մի ինչ-վոր յերիտասարդ ու դեղեցիկ այրիի հետ ամուսնանալու: Հարկավ, նախ պիտի հրապարակորեն ապացուցաներ կնոջ դավաճանությունը: Բայց ինչպե՞ս. Անուշը չէր ուզում մեղքն իր վրա առնել: Նա տանջվում է ամոթից, թող այդ մարդն էլ տանջվի «իր այրիի» համար:

Իսկ Անուշը, արդարև, տանջվում էր, և վոչ միայն ամոթից: Նրա գլխավոր ցավը Միքայելի անտարբերությունն էր: Անխի՛ղճ մարդ,

դու չգնահատեցիր նրա աերը, Թող այդպես լինի: Նա յել կաչխատի քեզ մոռանալ: Դու կարծում ես, նա կամավոր իրեն կենթարկի անվերջ տանջանքների՞: Ո՛չ, վո՛չ. նա այնքան էլ հիմար չե: Յերեխանե՞րը: Այո՛, նրանց կարոտն անհաղթելի յե: Բայց... Բայց ք՞իչ կան մայրեր, վորոնք Թողնում են իրենց զավակներին ու խաիչում սիբականների հետ: Անուշն էլ կանի, և ինչո՞ւ չանի, ինչո՞ւ խավարեցնի իր յերիտասարդ կյանքը: Բավական է, պետք է վերջ տալ այս անողուտ հառաչանքներին, պառական «ախ ու վախին», Թուլամտության արցունքներին: Պետք է ապրել, Թեկուզ Թշնամիների ջզրուս...

Յեվ Անուշը վճռեց վոքը առ վոքը յերևալ հասարակության մեջ: Թող չկարծեն, Թե իրեն բոլորովին մեղավոր է զգում և ամոթից Թաղնվում: Սկզբում նրան Թվում էր, վոր բոլորն իրենով են զբաղված: Յեվ այսպես էլ եր: Նախկին բարեկամուհիները և ծանոթներն արհամարհանքով յերես դարձրին նրանից: Սակայն չուտով այս սկսեց նրան ավելի դրդռել և ավելի համարձակ դարձնել: Ա՛ռ, վոր այդպես է, նա բոլորովին ուշ չի դարձնիլ ուրիշների վրա:

Անուշը ծանոթացավ մի չարք յերիտասարդների հետ, վորոնցից առաջ խորշում եր, ինչպես և բոլոր առաքինի կանայք: Այդպիսով ուզում եր ցույց տալ արհամարհանք դեպի հասարակական կարծիքը: Նոր ծանոթները նրան վերաբերվում էին վոչ միայն հարգանքով, այլ և մի տեսակ ակնածությամբ: Ցույց էին տալիս, Թե դիտեն նրա նախուր պատմությունը, համարում են նրան բռնակալության զոհ, նույնիսկ հերոսուհի, վորի առջև պարտավոր է խոնարհվել «կանանց ազատության» պաշտպան ամեն մի յերիտասարդ:

Անուշը հավատում եր նրանց չղոքդորթություններին և ավելի ու ավելի սիրտ առնում: Նա սկսեց պարսավել առաքինի կանանց: Հավատացեք, աշխարհի յերեսին չկան բարոյական և անբարոյական կանայք, այլ կան խորամանկ և պարզասիրտ կանայք: Ցեվ միշտ, միշտ տուժողն անկեղծն է... Իսկ խորամանկը գիտե «իր դործը խելոք տանել»:

Նա բարեկամացավ իր նախկին դիմացի հարևանուհու հետ, վորի համարձակությունն այնքան դրդռել եր նրա նախանձը: Տիկին Վիչնեվսկայան—այսպես եր ոտարուհու ազդանունը—ուրիշների պես դոռոզ ու մանրակրկիտ չեր կանանց բարոյականության վերաբերմամբ: Ընդունում եր Անուշին իր տանը բարեկամաբար, ծանոթացնում եր իր ընկերուհիների հետ: Ահա ինչ ասել է չլինել ասիացի, անկիրթ ու կոպիտ, մտածում եր Անուշը: Հայուհիները յերես են դարձնում, իսկ ոտարուհին բարեկամանում է, նույնիսկ պաշտպանում նրան:

— Գիտես ինչ, սիրելիս,—ասում եր մի որ տիկին Վիչնեվսկայան,—տղամարդին պետք է հենց իր զենքով պատժել: Ինչո՞ւ յերես

տալ մեկին այնքան, վոր նա, ասելած գիտե, ինչեր յերևակայի իր մասին: Հավատարիմ է ինձ, յես էլ հավատարիմ կմնամ, չե—«ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»: Եվ, սիրելիս, մենք յերկրորդ անգամ աչխարհ չենք գալու: Ապրենք, քանի վոր կարելի յե ապրել: Իսկ յերբ կծերանանք, սև չալը կձգենք գլխներիս, աչքներս կծռենք դեպի վեր ու կերդենք. «Ալելույա, ալելույա, տեր, դու Թողություն տուր մեր մեղքերին»: Կարծում ես ատելած չի՞ ներել: Հավատա, կների: Նա բարի յե, մարդկանց պես նեղսիրտ չե...

Անուշը մտածեց Միքայելից վրեժ առնել: Ո՞ւր է նա, Թող գա, տեսնի քանի-քանի դեղեցիկ, յերիտասարդ յերկրպագուներ ունի այժմ Անուշը: Մի որ, ծովափում զբոսնելիս, հենց այս մասին եր մտածում, յերբ հեռվից տեսավ Միքայելին: Նրան ուղեկցում եր մի ջերմ յերկրպագու, հաղնված վերջին տարազով: Նա ձեռը մացրեց յերիտասարդ ուղեկցի Թևի տակ, սկսեց ժպտալ և ինչ-վոր չչնչալ: Նա ուզում եր պարզ ցույց տալ, Թե այդ մարդու հետ չատ մտերիմ է:

Միքայելը գալիս եր մի զորձարանատիրոջ զրասենյակից, վորի հետ նավթային հաշիվներ ուներ: Նախ չիմացավ բարևի Անուշին, Թե՞ չե: Ապա վճռեց բարևել: Բայց, դեռ չմոտեցած, նկատեց տիկնոջ աչք ծակող ձևերը, լսեց նրա համարձակ քրքիջը, ձեռը հեռացրեց ղդակից և յերեսը զղվանքով հետ դարձրեց:

Անուշը դրեթե վոչնչացավ: Վրեժ լուծելու փոխարեն, արժանացավ բացարձակ արհամարհանքի: Գունատվեց, կորցրեց ինքն իրեն և, յերբ բոլորովին հավատարվեց Միքայելին, արտասանեց.

— Լի՛ր:

Տղամարդային ձայնով արտասանած կոպիտ հիշոցը Միքայելի զղվանքը փոխեց ցավակցության դեպի մի կին, վորի բարոյական այժմյան անկման սկզբնապատճառն եր յեղել:

Հասնելով հանքերը, նա Սմբատին հանդիպեց զրասենյակում: Այստեղ իմացավ, վոր Մարուքխանյանն արդեն դիմել և դատարանին, և չուտով կստացվի կոչնագիրը: Ի՛նչ, մի՞թե նա չաղաչեց Սմբատին, վոր գործը վերջացնի առանց դատարանի: Սմբատը պնդեց, Թե չեր կարող այդ անել, Թե հանաք բան չե վերցնել կես միլիոնը և դեն չպրտել:

— Վոր այդպես է, յես դատարան չեմ գնալ,—ասաց Միքայելը դրդռված:

— Եվ, յե՛ս կգնամ քո փոխարեն:

— Լիազորություն չեմ տալ:

— Միքայել, դու բոլորովին գժվել ես:

— Իսկ դու խելոքացել ես ավելի: Թո՛ղ ինձ հանդիստ...

— Ուրեմն այդ քո վերջի՞ն խոսքն է:

— Վերջին և դրական:

Սմբատը մտածեց մի քանի վայրկյան և վճռապես հայտնեց, թե Մարութխանյանին մի կոպեկ անգամ չի տալ:

— Այն ժամանակ, թող ինձ բանտ ղցեն, դրան էլ հոժար եմ,—ասաց Մխքայելը և անցավ իր սենյակը:

Այսոր, իր հանցանքի առարկային հանդիպելուց հետո, ղղում էր անասելի տանջանք: Եթե նա այնքան լրեն վայր և ղցել, վոր մի կին փողոցում չպրտում և «վի՛րը» բառը, և նա լռում և—մի՞թե մխիթարությունը չէ այսուհետև: կարծես, բարոյապես սնանկի համար, նյութական սնանկությունն ղղալի պիտի լինի: Այո՛, թող նրան ղցեն բանտ, միևնույնն է:

— Կանչի՛ր այստեղ Դավթին,—հրամայեց նա ծառային:

Ներս մտավ հաշվապահը դրիչը ձեռին:

— Ցեղբայրս գնա՞ց:

— Գնաց:

— Ի՞նչ դործի յեք:

— Ամսահաշիվ եմ պատրաստում:

— Շտապո՞ւմ եք:

— Ուշացել է. յերեկոյան անպատճառ պիտի ուղարկել քաղաք:

— Վաղը կարող եք ուղարկել: Նստեցեք մի վոքր խոսենք:

Նա ստիպեց հաշվապահին ճաշել իր հետ: Նա չարունակ խոսում եր: Այդ մարդը, վոր յերբեք անձնականից դուրս մի բանով չեր հետաքրքրվել, գտնվում եր ինչ-վոր փիլիսոփայական տրամադրության մեջ: Դավիթը զարմացած եր և ավելի զարմացավ, յերբ նա սկսեց քննադատել հասարակական կյանքի կարդ ու կանոնը: Առանձնապես հարձակվում եր տնտեսական «անարդար» կազմակերպության վրա: Ինչո՞ւ հարյուրավոր մարդիկ աշխատում են մեկին կամ յերկուսին կշտացնելու համար, ինչո՞ւ բնության բերքերը հավասար բոլորին չեն պատկանում: Ինչո՞ւ, որինակ, ինքը պիտի այստեղ հանդիստ ճաշի, իսկ այնտեղ, նավթի ու կրակի միջավայրում հարյուրավոր մարդիկ պիտի նրա համար իրենց կյանքը վտանգի տակ պահեն դիշեր-ցերեկ:

— Բայց վոչ՛, ինձ համար չեն աշխատում: Այժմ յես ել ձեզ պես մի հասարակ աշխատավոր եմ: Վոչինչ չունիմ, գիտեք, վոչինչ:

Ցեղ պատմեց, վոր ինքն այժմ սնանկ է, դուրկ վերջին կոպեկից:

— Ահա ինչու, ուրեմն, դուք այժմ հետաքրքրվում եք դրամից դուրկ մարդկանց կյանքով,—չկարողացավ զսպել լեղուն Զարդարյանը:

— Դուք իրավունք ունիք: Բայց այդ չե պատճառը: Ցեթե կամենամ, դեռ կարող եմ հարուստ մնալ: Բայց չեմ ուղում: Ինձ ամեն ինչ ձանձրացրել է, գիտեք, ամեն ինչ...

Վերջացնելով ճաշը, նա դուրս յեկավ մի վոքր զբոսնելու: Ամեն

բան այժմ նրան թվում եր դատարկ, անոտի, անմխիթար: Զարմանում եր, վոր Սմբատն ամուր և կպել հայրական հարստությանը: Հիշում եր նրա նամակները, նրա անցյալ գաղափարները և մտքում ժպտում: Ահա թե վորքան զորեղ է դրամի հրապույրը. այն մարդը, վոր հոր հարստությունը մի ժամանակ քիչ եր մնում կողոպտած համարեր, այժմ դարձել է այդ հարստության ջերմ պաշտպանը: Եհ, յերևի նա ուղում է կատարել հոր կամքը:

Վերադառնալով իր սենյակը, նա գարձյալ կանչեց Դավթին: Այս անգամ նա բաց չթողեց հաշվապահին մինչև ընթրիք, նաև ընթրեց նրա հետ միասին:

Գիշեր եր: Նա անկողնի մեջ պառում եր մի կողմից մյուսի վրա և չեր կարողանում քնել: Շոգու աղմուկը նրան հիշեցնում եր մշակների դժոխային աշխատանքը: Նրա աչքերի առջև պատկերանում էին մրոտ ու նավթոտ բանվորների վախտ դեմքերը. մթին ու մռայլ, ինչպես նավթահորերի խորքը: Նույնիսկ Զուլքովի, Ռասուլի ու Կարապետի պես առողջ աշխատավորները նրան թվում էին հիվանդոտ: Մի՞թե այդ մարդիկ սիրտ չունի՞ն, հոգի չունի՞ն, չե՞ն մտածում, չե՞ն զդում, չե՞ն սիրում, չե՞ն ատում, չե՞ն նախանձում: Մի՞թե մի կտոր հացի հոդսը սպանել է նրանց մեջ բոլոր մարդկայինը և դարձրել նրանց անչունչ մեքենա: Ինչո՞ւ չհետաքրքրվել այս բոլորով: Նրա չուրջն ապրում են հարյուրավոր մարդիկ, չարչարվում, տանջվում, իսկ ինքը զբաղված է միայն իր վոքրիկ աշխարհով: Այդ ի՞նչ է լսվում: Ա՛, Զարդարյանի համարակալի չխչխկոցը: Ա՜խ, հաչվապահ. նա մոռացել է քունը և կես դիշերին, կոր մեջքը ծռած, դրում է, ջնջում, հաշվում, թե ինչ է Ալիմյանները պիտի ապրեն ապահով ու անհոդ: Ցեվ դեռ Ալիմյանները կարծում են մեծ բարություն են անում այդ մարդուն, տալով նրան ամսական մի քանի տասնյակ ռուբլի: Իսկ այդ աղջի՛կը, վոր սովոր եր անհոդ ու ապահով կյանքին: Այժմ կրում է կամավոր աղախնի կյանք, դիշեր-ցերեկ բևեռված անդամալույծ հոր մահճակալին: Ինչո՞ւ, ինչո՞վ է մեղավոր. նա՛, այդ հեզ ու հպարտ եյակը, վորի համեստությանը հանդդնեց ձեռնամուխ լինել կյանքի հաճույքներից լիացած մի մարդ:

Ա՛խ, ամոթալի որ. յերբեք Մխքայելը չի ներել իրեն իր այդ անվայել վարմունքը, ամեն բան կներե, բացի այդ մեկից: Այո՛, այդ աղջկին իրավունք ուներ ասելու, թե միայն հարստությունը ներչնչեց Մխքայելին հանդդնություն վիրավորելու նրա ամոթխածությունը: Բայց թող այդպես լինի: Այժմ Մխքայելն ինքն աղքատ է, դրեթե այնչափ, վորչափ Դավիթը: Աղքա՞տ: Այո՛, իհարկե, աղքատ է: Վճռված է, վոչ մի կոպեկ հայրական հարստությունից, վոչ մի կոպեկ: Ցեվ այդ բոլորի վոխարեն նա միայն մի բան է ցանկանում. ազատվել այդ

աղքատ աղջկա արհամարհանքից, համոզել նրան, թե այժմ ինքն էլ դղվում է իր անցյալից:

Փոքր առ փոքր ղևոնը հոգնեց ծանր մտքերից, նյարդերը թուլացան և աչքերը փակվեցին: Ցերեկը ճուրվեց իրականության հետ, Շուշանիկի կերպարանքը պատկերացավ նաև յերազի մեջ: Այժմ նա դանվում է մի մթին վայրում: Զորս կողմ մինչև յերկինք բարձրանում են ինչ-որ սև ծառեր, սուր զագաթներով, հաստ բներով: Իսկ այնտեղ, հեռու, չատ հեռու խավարի մեջ պպզում է մի պայծառ լույս: Նա ձգտում է դուրս դալ խավարից, դիմում է դեպի լույս: Բայց վոտները կաշկանդվել են: Նա ամեն քայլափոխում խրվում է ինչ-որ կեղտոտ ուիմի մեջ, հաղիվ կարողանալով վոտքի վրա մնալ: Իսկ հեռավոր լույսի մեջ պարզվում է հեղ ու հպարտ կերպարանքը, այո՛, հեղ ու հպարտ, հեղ իրենից ավելի աղքատների վերաբերմամբ, հպարտ—հարուստների հետ: Հպա՛րտ. իսկ այդ ո՞վ է: Սմբատը, մի՞թե նա հարուստ չէ, ինչո՞ւ Շուշանիկը խոնարհվում է նրա առջև: Ցեր աստված՝ այդ ի՞նչ է, նրանք դրկվում են, համբուրվում: Վո՛չ, այդ անկարելի չէ: Լույսը մեծացավ, ընդարձակվեց, դուրը վոխվեց, չուրջ տարածվեց բոսորագույն չողեր՝ արյունի հեղեղի պես: Այդ ի՞նչ տարորինակ ձայն է: Ա՛խ, Շուշանիկի հոր աղաղակը: Վո՛չ, դա մարդկային ձայն չէ, այլ ինչ-որ դազանային մռնչյուն, վորին արձագանգ է տալիս անտառի խորքերից մի ուրիշը, հետո յերրորդը, չորրորդը և ամբողջ անտառը թնդում է այդ մռնչյուններից:

Նա զարթնեց, նստեց անկողնի մեջ, աչքերը տրորեց: Այդ ի՞նչ է. մի՞թե այդպես չուտ լուսացավ, այդ ի՞նչ բոսորագույն լույս է, վոր հեղեղել է նրա սենյակը: Մռնչյունները չարունակվում են: Բա՛, այդ հանքային մեքենաների չվիկներն են: Նրանք արձակում են անսովոր, անհանգիստ սուլոցներ: Այդպես սուլում են միայն հրդեհի ժամանակ:

Կայծակի արագությամբ նա ցած թռավ անկողնից, մոտեցավ լուսամուտին: Սկզբում թվաց նրան, վոր այրվում է այն տունը, ուր դրան վում է ինքը: Նա այնքան չվոթվեց, վոր չհմացավ հագնվի, թե մերկությամբ դուրս վազե: Մի՞թե, ճշմարիտ, հրդեհ է, թե յերազ: Նա բաց արավ լուսամուտի փեղկերը, նայեց կրակի կողմ, ցնցվեց, արձագանգած մի վայրկյան: Կրակը հեռու չէ այն բնակարանից, ուր կենում են՝ Անտոնինա Իվանովնան՝ յերեխաների հետ և Զարդարյանները:

Սարսափն անցավ ուղեղին, խելքը մթագնեց: Սակայն զդում եր, վոր այդպիսի դեպքերում սառնասրտություն և առաջին անհրաժեշտ պայմանը: Նա մի կերպ չտապով հագնվեց և վազեց դուրս: Իսկ սուլոցները չարունակվում եյին ավելի ու ավելի զորանալով, վորպես մարդկային աղերսանքներ, հուսահատական, ահարկու: Դա մի տեսակ դիվային համերդ եր, վորքան զորավոր, նույնքան աններդաշնակ և իր աններդաշնակության մեջ զարհուրելի դիշերվա խավարում:

Գրասենյակում լամպարը դեռ վառ եր, բայց Դավիթ Զարդարյանն այնտեղ չեր: Անտարակույս կրակն Ալիմյաններին հանգերի վրա յեր: Մշակներն արդեն զարթնել եյին և չիոթված վազում եյին դեպի կրակը ցերուցան, վորպես մրջյուններ, վորոնց բնի վրա մի չար ձեռ ջուր և թափել:

— Մեղ մո՞տ է,—հարցրեց Միքայելը բարձրաձայն:

— Նոմեր հինդերորդն է այրվում,—պատասխանեցին խավարի մեջից մի քանի քնահարբ ձայներ:

Հինդերորդ համար բուրդը, այն, վոր դանվում է Անտոնինա Իվանովնայի բնակարանից ընդամենը քսան քայլ հեռու:

Ընդարձակ բակը լեցվել եր սև ուրվականներով: Նրանք նկուղներից դուրս եյին բերում բահեր, թիեր, դույլեր, յերկաթե ձողեր, ջրմուղներ և այլ հրդեհաչեջ պարագաներ:

Մի պահ Միքայելն իրարու հակասող կարդադրություններ եր առնում՝ տակավին անտեղյակ կրակի ուղղությանը: Ցերը հասավ հրդեհի վայրը, արդեն ահարկու վանտաուն եյին տալիս բոլոր հանքերը՝ քսան քառակուսի վերստ տարածության վրա: Թվում եր, վոր այդ տոսկալի «ույվույները» դալիս եյին մթին յերկնքից. թվում եր, վոր դա քաղցած դիշակերների մի արշավանք եր: Այդպես եր ընդունված, յերբ մի հանքից դալիս և հրդեհի ազդ, մյուս բոլոր հանքերը պիտի հետևեն նրան՝ հանքային բնակչության ղեղչացնելու համար:

Հրդեհն արդեն բավական ընդարձակվել եր: Այրվում եր ամենաարդյունաբեր հորերից մեկի բուրդը: Կրակը վիթխարի աչտարակի վրայի մասից սրընթաց բարձրանալով, չտապում եր ընդգրկել ամբողջությունը: Ցերկնքի հորիզոնի վրա ձգվել եր մթին ծխի մի լայն ժապավեն, վոր քամու ուղղությամբ տարածվում եր հեռու ու հեռու:

Մշակները չէյապատել եյին հսկա խարույկը և կազմել կենդանի շղակ զարհուրած դեմքերի, ապշած աչքերի: Աչխատում եր միայն մի խումբ, վոր ճիշն եր անում այրվող բուրդի տակից դուրս քաշել մեքենան, մեկ բանը, վոր հնարավոր եր աղատել կրակի լափից:

Միքայելի առաջին միտքն եր դանել յեղբոր զավակներին ու կնոջը: Կար մի ուրիշ, ավելի զորավոր միտք, բայց նա վայրկենաբար վճռեց, վոր պարտավոր է ամենից առաջ արյան մերձավորների ողնությանը հասնել, իսկ հետո... Առանց տատանվելու նա վազեց այն պատշգամբը, ուր այնքան հառաչանքներ եր արձակել կրծքից, նայելով դիմացի լուսամուտներին: Կրակը դեռ չեր մերձեցել բնակարանին, բայց նրա հրեղեն լեղուներն արդեն ձգտում եյին դեպի այն կողմ: Մշակներն աչխատում են բուրդի և բնակարանի մեջև դանվող նավ-

թային լճակին ապահովել կրակից։ Յեթե նա վտանգը, բոլոր չինուհյուն-ները կորած էին։

— Տղերք, հետևեցեք ինձ,—բոլոց Միքայելը, ճեղքելով մշակ-ների շարքը և վազելով առաջ։

Շրջանից բաժանվեցին յերեք հոգի—Զուպրովը, Ռասուլը և կա-պետը, վոր տակավին չգիտեին, թե վտանգը վոր կողմումն է վտանգավոր մարդկային կյանքի համար, վոր նրանց համար առաջին տեղն էր բռնում։ Ամենից առաջ յերեսց Զուպրովը, հրելով ընկերնե-րին աջ ու ձախ իր հուժկու բազուկներով։ Ամբոխը, տեսնելով հսկային սանդխաի վրա, վոգևորվեց։ Միտքս աշխատավորի կերպարանքի, քայլվածքի ու կեցվածքի մեջ կար մի տեսակ ասպետական գեղեցկու-թյուն, արժանի Ֆիղիասի ստեղծագործությանը։ Ֆանի մի վայրկյան կարմիր շապիկը, վոր, կարծես, բոցերից էր հյուսված, փայլփլեց բո-սորագույն լուսո ներքո և չքացավ, վորպես ոդային յերևույթ։

Ծուխն արդեն չրջապատել էր ամբողջ տունը։ Ֆանի մի րոպե ևս, և ամեն մի ոդնուհյուն կլիներ ապարդյուն։ Յեթե անդամ հուրը չներ-խուժեր չինուհյան մեջ, այնտեղ գտնվող թշվառները պիտի խեղդվե-յին ծխից։ Սոսկալի չե նավթային հրդեհը, բնավ վոչ նման սովորա-կան հրդեհներին։ Հանքերում ու գործարաններում կրակը տարածվում է հոդմի արագությամբ, իր ճամբին լափելով ամեն ինչ, վտան ղի այդ-տեղ չկա իր, վոր չայրվի՝ ամենուրեք տարածված և ամենուրեք թա-վանցող նավթի ու գազի չնորհիվ։ Յերբեմն մարդիկ հազիվ լսում են ահարկու ազդը սուլոցների, յերբ արդեն նրանց կյանքը վտանգի մեջ է։ Դեռ լավ է, յերբ կրակն սկսում է բուրդից կամ վորևե չինուհյու-նից, իսկ յեթե սկսվել է նավթամբարից, կորուստն անխուսափելի չե։ Ամբարների ազատ տարածության մեջ կուտակված գազը, ընդհարվե-լով մի չնչին կայծի, պայթում է հարյուրավոր թնդանոթների դորու-թյամբ և բոցերի հեղեղը վայրկենաբար տարածում է ամենուրեք, վորպես արգելաններից ազատված ծով։

Զուպրովը պատշգամբի վրա հետ մղեց Միքայելին, ասելով.

— Այս ձեր տեղը չե։

Նա չտապեց ներս։ Այլևս նա գիտեր, վոր այնտեղ կան մարդկա-յին արարածներ, վորոնց պետք է փրկել։ Ովքեր են այդ մարդիկ, մեզ-նուն և նրա համար, պետք է ազատել։ Արհամարհել ամեն վտանգ և ազատել—այս էր հեռավոր հյուսիսից յեկած մուժիկի պարզ սկզբունքը։

Լճակը բռնկվեց բուրդից տարածվող կայծերից։ Կրակն անմիջա-պես կլանեց նրան, չորս կողմ տարածելով ծխի սև ու թանձր ամ-պերը։

Զուպրովը լսեց ամբոխի ազաղակը և բնազդմամբ զգաց, վոր վտանգը գալիս է բնակարանի ներսը։ Նա առաջին անձնական էր, ուր վոչ վոք չկար։ Յերեսը խաչակնքելով, վազեց հաջորդ սենյակը...

Անտոնինա Իվանովնան առաջին անգամ էր տեսնում նավթային հրդեհ։ Կես դիշերին, զարթնելով չվիկների ձայներից, մխանգամից չհասկացավ նրանց նշանակությունը։ Ցե՞ վոր ամեն դիշեր տասներկու ժամին սուլում են, յերբ բանվորների հերթափոխն է։ Նա այն ժամա-նակ սթափվեց, յերբ լուսամուտներից ներս հոսացին կրակի ծիրանա-գույն շողերը։ Շտապով հագնվեց մի կերպ, վազեց խոհանոց, զարթե-ցրեց ծառային, հետո աղախնին և յերբ վերադարձավ, արդեն վտանգը մեջ էր։ Նա չկամեցավ յերեխաներին դուրս տանել մերկ, չզմբռնելով, վոր նավթային հրդեհի ժամանակ ամեն ուշացած չարժում վտանգ է առաջանում։ Սկսեց հագցնել նրանց, չնայելով ծառայի և աղախնի թա-խանձներին՝ շտապել դուրս։ Ծառան փախավ՝ իր անձն ազատելու...

Զուպրովն առաջին և յերկրորդ սենյակների դռների մեջ ընդհար-վեց Դավլեթ Զարըպարյանի հետ։ Նա մի ձեռով բռնել էր վասյային, մյուսով զրկել Ալյոշային։ Ծուխն արդեն կուրացնում էր նրան, վոչինչ չէր տեսնում, քայլում էր առաջ մթության մեջ։ Մի վայրկյան ևս, և պիտի չփոթվեր ու ուղին կորցներ։ Զուպրովը մի ձեռով խլեց նրանից Ալյոշային, մյուսով վնասուրի պես բարձրացրեց Վասյային։ Մանուկ-ներն ապշել էին, չգիտեին ինչ է կատարվում։ Չէին լալիս սարսա-փի զորությունից կաչկանդված։

— Մամա՛,—գոռաց Վասյան, ամուր գրկելով Զուպրովի պարա-նոցը։

Դավլեթը, չունչն ուղղելով, հետ դնաց։ Մեկը բռնեց նրա թևերից և հետ մղեց։ Ո՛վ էր, չգիտցավ։ Ֆանի մի վայրկյան անցած դռների մեջ յերևաց Կարապետը, վոր ուսերի վրա դուրս էր բերում Անտոնի-նա Իվանովնային։ Կարապետի հետևից յերևաց Ռասուլը, տիկնոջ ա-ղաչանքն չլսելած։

Միքայելը պատշգամբից լքված էր այն ժամանակ, յերբ համոզ-վեց, վոր ներսում վոչ վոք չմնաց։

Այժմ դուրսը տիրում էր ղժոհային խառնաչփոթություն։ Մշակ-ներն ավելի դուռում ու աղաղակում էին, քան գործ կատարում։ Մի-մյանց հրմտալով, վազում էին հետ ու առաջ, վայր ընկնում, վեր կենում ճահճի ու տիղմի մեջ թրջված ու ցեխոտված։ Յեվ նրանց նավ-թաթաթախ ու մրոտ դեմքերը բոցերի լուսո ներքո վայրում էին հղված բրոնզի գույնով։

Ուրախության մի աղաղակ բարձրացավ, յերբ դրսում յերևացին՝ Զուպրովը յերկու յերեխաներին իր կրծքին սեղմած, Ռասուլն աղախ-նին չալակած և կարապետն իր գլխից վեր Անտոնինա Իվանովնային

բարձրացրած: Ցերեք հսկաներ, որվա անձնազոհ հերոսները, վոր վերկել էին «մեծ ազայի» ընտանիքը: Այնինչ չէին եղել, վոր կա մի ուրիշ ընտանիք՝ ավելի մեծ վտանգի մեջ...

VII

Կիզանուա հեղուկով ոտղորված վայտաչեն բուրդն այժմ մի հսկայական ջահ էր, ծայրե ի ծայր վառված, կուչը տարերքի զորությանը նվիրված վիթխարի մի կերոն: Կրակն արագ-արագ լափում էր բուրդի տախտակները, վորոնք ճարճատելով արձակում էին դեպի յերկինք բյուրավոր կայծեր: Փամփուշտների պես վեր բարձրանալով, կայծերը ծխերի մեջ զործում էին կատաղի պոռայաններ և թափվում աչ ու ձախ: Գոյացել էր մի զմայլելի հրեղեն տարափ: Ցերկրի վրա հողմը կայծերը ժողովում էր և, ավելով, տանում կիստամ չինուրյունների պատերի տակ, անկյուններում ու խոռոչներում այնպես, վորպես կիտում է ձյունը փոթորկի ժամանակ:

Կային միամիտ մշակները, վոր ճղնում էին բուրդը հանդցնել ջրով, մի բան, վոր անհնարին էր. կրակը ծիծաղում էր ջրի մի բաշկաչափ հոսանքի վրա, վոր կարկաչելով դուրս էր վազում ռեսինե խողովակներից, ձեռնաշարժ ջրմուղի միջոցով: Բոցերի ահռելի լեզուները, ընդհարվելով բնության հակառակ ուրրի հետ, արձակում էին դիվային քրքիջներ, կարծես, ծաղրելով թշնամու անզորությունը: Ջուրը մի վայրկյանում չորի զառնալով, ավելի բորբոքում էր կրակը, քան կովում նրա հետ:

Փորձառու բանվորներն աշխատում էին նավթամբարներն ազատել հրեղեն անձրևից, առանձնապես բուրդից վոչ հեռու գտնվող գետնափոր չամամբանը: Մոռանալով ամեն վտանգ, նրանք ժողովվել էին հողային տանիքի վրա և մրջված թաղիքներով ծածկում էին բաց տեղերը, ուսկից դուրս էր գալիս նավթային գազը: Մի թուլլ շիում բոցի, և նավթամբարը պիտի պայթեր, ողը ցնդելով քառասուն մարդկային դիակներ: Մի ուրիշ խումբ զրաղված էր այն յերկաթե ամբարների չուրջը, վոր այնքան սարսափներ էին պատճառել Շուշանիկի հիվանդ հորը:

Ազատելով Սմբատի ընտանիքը, Դավիթն անցավ տան մյուս բաժինը: Այդ մասը բավական հեռու յեր հրդեհից. այս էր պատճառը, վոր Դավիթը կարևոր համարեց նախ ուրիշներին ոգնություն հասցնել, ապա իր մերձավորներին:

Պատշգամբի ծայրում Դավիթը հանդիպեց փրոլը: Այրին փոքրիկներին դուրս էր բերել այդտեղ և այժմ զրաղված էր իր յաթերով: Նա զոռաց չվոթված այրվի վրա, բռնեց ձեռքից, ձգեց սանդխակից ցած, պրկեց փոքրիկներից մեկին, մյուսի ձեռից բռնեց, չսպասեց դեպի բակը: Հետո նորին բարձրացավ պատշգամբ: Ոտհանոցի առջև տեսավ պառավ ազախնին, վոր ճղնում էր զոնների միջից դուրս բերել իր սընդուկը:

— Կորի՛ր, հիմար, Թող այդ, ինքդ ազատվիր,—զոչեց Դավիթը,—ո՞վ կա ներսում:

— Կան, կան,—պատասխանեց պառավը չնչասպառ և ավելի ամուր կպավ սնդուկին, վոր պարունակում էր նրա լաթերը:

Հրդեհն սկավելիս ընտանիքը քնած էր, Շուշանիկը՝ նույնպես: Առաջինը զարթնեց որիորդը և զարթեցրեց մորն ու հորաքրոջը: Նա կարող էր խնդրյուն դուրս բերել փոքրիկներին, բայց մայրը չթողեց, չվստահանալով նրան: Տիկին Աննային մեծ չանք էր հարկավոր զարթեցնել անզամալույծին, ապա մի կերպ հագցնել վերարկուն Շուշանիկին ոգնությամբ: Մինչ նրանք զբաղված էին Սարգսով, կրակն արագ-արագ մոտենում էր:

Դավիթը վազեց ներս: Այստեղ Ծուխն այնքան թանձր չէր, վորքան Անտոնինա Իվանովնայի բնակարանում: Դավիթն անցավ յեղբոր սենյակը, հավաստացած լինելով, վոր Շուշանիկն ու իր քույրն էլ այնտեղ են: Այդտեղ, սեղանի վրա լամպարի մթագնած լուսո ներքո նրա աչքերի առջև բացվեց հետևյալ տեսարանը.—Աննան զրկել էր Շուշանիկին և ճղնում էր անջատել նրան Սարգսից: Այնինչ՝ անզամալույծն առաղջ ձեռը փաթաթել էր թախտի մի վոտին և զոռում էր.

— Թո՛ղ լնճ, թո՛ղ լնճ...

Արդեն քառորդ ժամ էր, վոր նրանք կռվում էին, և վոչինչ չէր ոգնում: Կնախախելագարն այժմ հավատացած էր, վոր հասել է որհասական վայրկյանը և ահա նրա ուժով տանում են զուրս՝ խարույկի մեջ ձգելու:

Դավիթը հետ մղեց Աննային, բռնեց Շուշանիկի թևից և մի ուժգին թափով անջատեց նրան Սարգսից: Պետք էր նախ առողջներին փրկել, ապա հիվանդին, վորի կյանքն այլևս արժեք չուներ: Առանց ուշ զարձնելու Շուշանիկի հուսահատական ճչերի վրա, նա քաշեց որիորդին դեպի դուրս: Բայց դռների մոտ Շուշանիկն ապատվեց, հետ վազեց և նորին զրկեց հորը: Այժմ Սարգիսը թավալվել էր հատակի վրա: Նրա դեմքը կորցրել էր բոլորը, ինչ վոր բնական և ու մարդկային: Նա մի մարմնացած անասնական սարսափ էր, զոհի մատնված կենդանի, վոր անխոսա աչքերը հառած զահճի յերեսին, սպասում է դանակի որհասական հարվածին:

— Դուք փախնք, յես կրկրնամ սրան,—զոչեց Դավիթը:

Ցետ ուժով դուրս մղեց Աննային ու Շուշանիկին:

Այդ վայրկյանին դեպի փողոց նայող լուսամուտի ապակիները կրա-

կի ուժից դղրդյունով փշրվեցին: Ծուխը հեղեղի պես ներս հոսաց: Աննան դուրս վախավ սարսափի բնաղդից դրդված: Շուշանիկը մնաց անշարժ:

Սկսվեց նորեն մի անորինակ պայքար յերեքի մեջ: Շուշանիկը ճգնում էր հորը բարձրացնել հատակից, հայրն ամուր կպել էր թախտի վոտներին, Դավիթն աշխատում էր նրանց անջատել միմյանցից: Այնինչ բոցերի առաջին ալիքներն արդեն լիզում էին լուսամուտի առաստաղը, իսկ ծուխը հետզհետե թանձրանում էր ու դառնում հեղձուցիչ: Դավթի ուժերն սպառվում էին: Այժմ անդամալույծն ինքն էր գրկել աղջկան իր առողջ ձեռով և այնպես ամուր, վորպես յերկաթե գոտի: Այդ միակ ձեռի մեջ էր կենտրոնացել նրա քայքայված կյանքի ամբողջ ուժը, վոր այնքան զորեղ է մահամերձի մեջ: Մնում էր յերկուսին միասին քաշել դուրս: Սարգիսը կրծոտում էր Դավթի ձեռները, ղռնչան ուժգին զարնում էր հատակին, գոռալով.

— Աննաստված, ավազակ, մարդասպան, դահիճ և այլն, և այլն...

Վերջապես, Դավթին հաջողվեց մի կերպ դուրս քաշել յերկուսին միասին մյուս սենյակ, յերբ անդամալույծի ննջարանի առաստաղն արդեն վառվել էր: Առաջին վտանգն անցավ, բայց նրանք դեռ ազատված չէյին: Ծուխը մթագնեց նրանց աչքերը: Ազատվելով հոր յերկաթե բազկից, Շուշանիկը գոչեց.

— Դու բանիր գլխից, յես վոտներից: Այդպե՛ս...չո՛ւտ...չո՛ւտ... վոչինչ չեմ տեսնում...

Հազիվ նրանք յերկու քայլ եյին արել, Սարգիսը վերջին թափով ազատվեց նրանց ձեռներից և փռվեց հատակի վրա: Ոգովելով վայրկյանից, Դավիթը գրկեց Շուշանիկին և բարձրացրեց ուսերի վրա, բայց ծխի թանձրության մեջ չդիտեր վոր կողմն են դռները:

Ճիշտ այդ վայրկյանին յերկու ձեռներ խլեցին նրանից Շուշանիկին...

Միքայելը չդիմացավ տիկին Աննայի հուսահատական աղաղակներին ու փոքրիկների լացին՝ վազեց վառնգի վայրը, հետ թողնելով Զուլոյովին ու նրա ընկերներին: Նա, այդ յեսամոլ, մինչև վոսկորների ծուծն ապականված համարված յերիտասարդը դիմեց դեպի մահ՝ կրակի ճանկերից խլելու համար մի աննման, աղքատ աղջիկ...

Սմբոնը սանդխի վրա տեսնելով իր տիրոջը, աղաղակեց ուրախությունից ու հիացումից: Տասնյակ ձեռներ տարածվեցին առաջ՝ նրա կենդանի բեռը խլելու: Շուշանիկն ուշաթափվել էր Միքայելի ուսերի վրա և չէր զգում ոմ ձեռների մեջ է զտնվում իր կյանքը: Նրա խիտ մազերը հերկայներից ազատվել եյին ու թափվել Միքայելի ուսերի վրա, նրա տնային թևեր ու ճնշմամբ չրջազգեստը մրոտվել էր ու պատռտվել: Հոլանի բազուկներն անզոր ընկած եյին Միքայելի մեջքի վրա:

Միքայելը վոչ վոքի չտվեց անշունչ մարմինը: Իջնելով սանդխից, մոտեցավ Աննային և Շուշանիկին դրեց նրա վոտների առջև:

Բուբդն արդեն մերկացել եր: Ընկավ նրա դագաթին տեղավորված յերկաթե անիվը, ընկան կողերի այրվող տախտակները, և ոդի մեջ ցցվեցին չորս հակայական հրեղեն սյուներ: Այժմ ամբոխը դիտում էր, արդյոք, վո՞ր կողմը պիտի ընկնեն այդ սյուները: Մեկը թեքվել եր դեպի սուորերկրյա նավթամարքի կողմը: Նման դեպքերում հրեղեն սյուները վարի կողմից սղոցում են նրանց անկմանն անվտանգ ուղղություն տալու համար: Մի խումբ մշակներ, սղոցներով զինված վորձեցին մոտենալ բոցերի ահարկու աշտարակին և հետ ցատկեցին կիզիչ տաքության:

Միքայելն ուշադրություն չեր դարձնում հրդեհի վրա, իսկ ամեհի դազանը քանի գնում ուռչում եր ու մեծանում: Ա՛հ, թող այրվի բոլորը, բոլորն ինչ-վոր այրվող և, նախ պետք է մարդկային կյանքերն ազատել:

Բոսորագույն լուսո հեղեղի մեջ նա ճանաչեց Անտոնինա Իվանովնային, վազեց դեպի նա և հարցրեց.

— Վո՞րտեղ են յերեխաները:

— Ուղարկեցի մի ապահով վայր:

— Բայց ինքներդ վտանգավոր տեղումն եք, վախե՛ք:

— Բոլո՞րն էլ ազատված են:

— Դավիթը ներսն է անդամալույծի հետ:

Բրտինքը հոսում եր Միքայելի յերեսից: Հագուստը թրջվել, նավթոտվել եր ու ցեխոտվել վոտքից մինչև գլուխ: Վոչնչով չեր տարբերվում մշակներից: Հոգնած-ություն չեր զգում: Վազում եր մերթ աջ, մերթ ձախ՝ տեսնելու համար, վոր կողմից պիտի դուրս գա Դավիթն անդամալույծի հետ: Շուշանիկին ազատելով, զգում եր անճնավորության մի նոր, ավելի զորավոր պահանջ. փրկելով մեկի կյանքը, փափագում եր փրկել և՛ մյուսներին:

Մեկը, ամբոխը ճեղքելով, մոտեցավ նրան գունատ, ընչասպառ և դողալով:

Սմբատն եր:

— Մի վախենար,—ասաց Միքայելը,— թե՛ տիկինը և թե՛ յերեխաները ազատված են: Ահա տիկինն ամբոխի մեջ է:

Սմբատը մոտեցավ ամուսնուն: Դավիթը ժամանակին տելեֆոնով հրդեհի մասին իմաց եր տվել քաղաք: Սմբատը կլուբից չտապել եր հանքերը:

Անտոնինա Իվանովնայի աստմներն ահից զարկվում եյին իրարու.

դողում եր ամբողջ մարմնով: Բայց չեր ուզում հեռանալ հրդեհի վայրից: Չե՞ վոր նրա զավակներին ազատողն այժմ ինքն է վտանգի մեջ, չե՞ վոր ամարդություն կլինի թողնել նրան անոգնական: Կրակի ճարճատյունը, խորտակվող ու փլչող շինությունների դղրդյունը, կայծերի տարափը, ամբոխի ազաղակները, ծուխը, մուրը, արնագույն լույսերը, յերկինի խավարը, յերկրի ժխորը նրա աչքերի համար զարհուրելի քաոս եյին դոյացրել, վորի նմանը յերազել անգամ չեր: Քաոս, ուր միայն մի բան պարզ եր նրա համար — մարդու ապիկարությունը կույր տարերքների դորության դեմ: Այժմ նավթային ճահիճը ներկայացնում եր մի հսկայական թոնիր, ուսկից բոցերը վազում եյին վեր, արձակելով մի տեսակ տարերկրյա խուլ թնդյուններ, և կորչում, անհետանում յերկնի սևության մեջ:

Վորքան հրդեհն ընդարձակվում եր, այնքան ամբոխի չարժուն ազակը մեծանում եր ու լայնանում, վորպես ծովի ալիքները մրրկի մեջ պատող նավի չուրջը: Հրդեհի ու մարդկանց մեջ բացված տարածությունը ծածկվել եր ալիմի, մրի ու նավթի լարծուն զանգվածով: Մարդիկ սլիվում եյին, սայթաքում, ընկնում, յերբեմն յերկնչազով վորպես դիվահարներ, յերբեմն բարձրաձայն գոռալով, մի գուցե ջարդվեն հազարավոր վոտների տակ:

Աննան չարունակ աղաղակում եր. «ողնեցեք, ողնեցեք»—նրա այրի տալը կուրծքն եր ծեծում, այս ու այն կողմ վազելով: Ա՛հ, ազատեցեք նրա յեղբորը, վորբերի միակ աննեղարարին ու հովանավորին: Չե՞ վոր նա, բացի այդ մարդուց, ուրիշ պաշտպան չունի:

Ուշքի գալով, Շուշանիկի առաջին ձգտումը յեղավ, վերադառնալ նորին այնտեղ, ուր մաքառում եր կրակի դեմ հորեղբայրն իր հորն ազատելու համար: Բայց մայրը, բռնելով նրա թևերից, հետ քաշեց: Նրա խիտ մազերը թափվել եյին ուսերի վրա, յերեսը մրոտվել եր, աչքերը, կարծես, սպառնում եյին դուրս գալ շրջանակներից: Նա վոտները պարկում եր գետնին, կատաղած կրծոտում եր արդելողների ձեռները, վոր ազատվե և վազե առաջ ու ընկնե կրակի կոկորդը: Այլևս դա այն ամոթխած, լրիկ աղջիկը չեր: Մերձավորների վտանգալի վիճակը նրան ներշնչել եր առնական անվեհերություն: Մերթ կատաղում եր, մերթ անիծում մարդկանց, մերթ աղերսում: Ցնդ թվում եր նրան, վոր վոչ վոք սիրտ ու խիղճ չունի, վոչ վոք չի կարեկցում նրան: Ամբոխը, վոր այնքան սիրել եր նրան և վորին սիրել եր ինքը, նայում եր հուսահատ աղջկան և տեղից չեր չարժվում: Իսկ կրակն արագ-արագ կլանում եր կացարանը: Տաքությունն այնքան աստիճ եր, վոր պատրզամբին մերձենալու հնար չկար, ուր մնաց ներս մտնելը: Նուլնիսկ Զուպրովը, Ռասուլը և կարապետը տատանվում եյին, թևև բարի և

համակրելի աղջկա աղեկտուր աղաղակները մորմոքում եյին նրանց անվեհեր սրտերը:

Անտոնինա Իվանովնան դրկեց Շուշանիկին, բայց ինչպես հանդստացներ մի ղդայուն եյակի, վորի մերձավորներն աչքերի առջև այրվում են և դուցե սրղեն այրվել են:

Նայում եր Սմբատի յերեսին. մի՞թե չի կարելի վորևե խելացի կարդադրություն անել: Սմբատը չեր համարձակվում հրամայել մշակներին՝ վտանգն արհամարհել ու նետվել կրակի մեջ: Գիտեր, վոր վոչ վոք չի լսել նրա հրամանը և յուրաքանչյուրի համար նախ և առաջ սեփական կյանքն է թանդ: Մի պահ Շուշանիկի աղերսալի ձայնն այնքան ներդործեց նրա վրա, վոր մտածեց. «արժե՞ այդքան ամուր կառել կյանքին»: Նա մի վճռական չարժումն արավ դեպի առաջ և նույն վայրկյանին նրա աչքերի առջև պատկերացան վորբացած վաստան ու Ալյոշան, պառավ մայրն արցունքն աչքերին, քույրը, յեղբայրները, ամբողջ եզովիմը մարդկային: Ա՛հ, վո՛չ, նա ինքնիշխան չե, նա իրավունք չունի սեփական կյանքի վրա:

— Տղերք,—դոռաց նա բարձրաձայն,—ազատողին հազար ռուբլի...

Դարձվածն անցավ բերանե բերան: Կիսամերկ և կիսանորի ամբոխի համար դա մի մեծ հրապույր եր, բայց վոչ վոք չենթարկվեց նրան:

— Տղերք, յերկու հազար, յերեք հազար...

Դարձյալ աղմուկ, իրարանցում և վոչ մի ոգնություն:

Այժմ կարող եր աճուրդը բարձրացնել վորքան կամենար: Ամբոխը մի բոպեյում ընտելացավ հրապույրին, մարսեց, բայց չենթարկվեց: Նա հենց այդ առատ խոստման մեջ զդում եր վտանգի մեծությունը: Նուլնիսկ Զուպրովը հեղնորեն ժպտում եր, ցույց տալով կրակի ահարկու ալիքները:

Հանկարծ ամբոխի ողակից անջատվեց մեկը: Նա վտից մինչև գլուխ ներկայացնում եր նավթից ու մրից կպմված մի գանգված: Վաղեց քանի մի քայլ առաջ և, հանդիպելով բոցերի հարվածին, հետ ցատկեց: Ալեց մի մշակից մի թրջված թաղիք, փաթաթվեց նրա մեջ և, տան չուրջը մի կիսաշրջան անելով, անհայտացավ ծխերի թանձրության մեջ:

Սմենից առաջ Անտոնինա Իվանովնան ճանաչեց նրան, ճչաց և Շուշանիկին ամուր սեղմեց կրծքին: Քանի մի ակնթարթ անցած տասըրիղում փայլեց Զուպրովի կարմիր չապիկը և նույն վայրկյանին յերկու վաշին Ռասուլն ու կարապետը:

Բայց ի՞նչ եր կատարվում ներսում:

Հանձնելով Շուշանիկին Միքայելի պաշտպանությանը, Դավիթը հետ դարձավ, դրկեց անդամալույծին և ճիգն արավ նրան բարձրացնելու: Այժմ Սարգիսը փաթաթվել եր Շուշանիկի գրասեղանի վոտներին: Այստեղ արդեն մութը փարատվել եր բոցերի լույսից: Սեղանն ընկավ, բայց Սարգիսը չբաժանվեց նրանից: Դավիթը քաշեց յեղբորը սեղանի հետ միասին մինչև գռները, բայց այդ կողմից այլևս հնար չկար դուրս գալու, իսկ հակառակ կողմն արդեն կրակի մեջ եր: Մնում եր մի յելք—քաշել Սարգսին ծայրի սենյակը, վոր Դավթի ննջարանն եր: Այնտեղից դեպի հրդեհի հակառակ կողմը կար մի լուսամուտ, վրկության միակ ճանապարհը: Հարկավոր եր միայն չհուսահատվել և չվհատվել: Դավիթը սառնարյուն եր, բայց ուժերն արդեն դավաճանում եյին նրան:

Նա Սարգսին մի կերպ պոկեց գրասեղանից և հիշողների տարափի տակ քաշեց նրան ու տարավ իր սենյակը: Այդտեղ ծուխը համեմատաբար նոսր եր. Դավիթը մի փոքր չունչ առավ, հետո դրկեց յեղբորը, բարձրացրեց և դիմեց դեպի լուսամուտ, վորի փեղկերը բարեբախտաբար բաց եյին: Նույն պահին, յերբ ուզում եր Սարգսին դնել լուսամտի հատակի վրա և ինքն ել բարձրանալ, անդամալույծը թարթփելով, աշխատեց ազատվել նրա ձեռներից ու նրան ել թեքնց մինչև հատակ: Դոնե ուշաթափվեր այդ մարդը: Բայց խելագարի անասնական տրտասիը նրան տվել եր գերբնական ուժ: Կարծես, այժմ զործում եր նրա յերկու ձեռն անդամ: Ցերեկը Դավիթն այդ կենդանի կմախքի մեջ չեր յերևակայել այդչափ ուժ. նրա ձեռները թուլացան, բայց թողնելին անդամալույծին: Թողնել յեղբորը և ազատել սեփական կյանքը, ո՞վ, վոչ, նա չի կարող, ինչ պիտի պատասխանե Շուշանիկին: Իսկ դուրս տանել այդ կենդանի դիակը—այլևս անհնարին եր: Այնինչ, բոցերը կից սենյակից մերթ ժուժ եյին տալիս իրենց բռռորագույն լեզուները, մերթ հետ սուզվում ոճերի պես:

Լսվեց մի զորեղ ճայթյուն: Դավիթը նայեց վեր: Առաստաղը դեռ չեր բռնկվել. բայց միջին դռներն արդեն այրվում եյին: Վայրկյանը ճակատագրային եր: Վերջին ուժերը ժողովելով, Դավիթը բռնեց յեղբորը, բարձրացրեց, դրեց լուսամտի հատակի վրա: Այս արդեն մի մեծ քայլ եր դեպի փրկություն: Դավիթը խրախուսվեց, այնինչ բոցերը, մաքառելով ողի ներհակ հոսանքի հետ, կամաց-կամաց կլանում եյին սենյակի հատակն ու առաստաղը:

Բրտինքը վողողել եր Դավթի ամբողջ մարմինը: Նա բարձրացավ վերև, ձեռներից բաց չթողնելով յեղբորը: Այդ վայրկյանին լսվեց մի թնդյուն, վորին հետևեցին ամբոխի աղաղակները: Մի պահ սիրեց խավար, ապա յերկիրն ավելի պայծառ լուսավորվեց: Պարզ եր, վոր կրակը բռնկել եր նավթային ամբարներից վորևե մեկն ու պայթեցրել:

Հարկավոր եր Սարգսին իջեցնել, բայց ինչպե՞ս: Ձգել նրան վար վտանգավոր եր, լուսամուտը դեռևի մակերեսից այնքան բարձր եր, վոր կարող եր Սարգսի գլուխը դիպչել քարերին ու ջարդվել: Կամ իջնել և հետո նրան իջեցնել—ավելի վտանգավոր եր. Սարգիսը, վայրկյանից ոգտվելով, պիտի թավալվեր հետ և այնուհետև այլևս փրկության և՛ վոչ մի հույս:

— Ո՞վ կա, ոգնեցեք,—գոռաց Դավիթը:

Բայց ո՛վ պիտի լսեր նրա ձայնը խլացուցիչ զանգյունների մեջ, թանձր ծխի ու կրակի վոտքրկված ովկիանոսում: Այնուամենայնիվ, Դավիթը հույսը չկորցրեց, գոռաց յերկրորդ, յերրորդ, չորրորդ անգամ, գոռաց այնքան, վոր, վերջապես, ձայնը խեղդվեց կոկորդում: Այլևս նրա ձեռները թուլացան, հուսահատ գլուխը թեքվեց կրծքին: Փրկության յեղրում նա տեսավ իր և իր յեղբոր գերեզմանը մոխիրների մեջ ու մոխիրներից:

Բայց մի վերջին ճիգ ու վերջին աղաղակ ևս և ահա հրաշք. ժխորի մեջից, կարծես, մեկն արձագանգ և տալիս նրա ձայնին: Այո, այդ իրականություն է: Ահա լուսամտի առջև նկատվեց մի մարդկային կերպարանք:

Միքայելն եր. թաղիքի մեջ փաթաթված, ցեխոտ ու մրոտ վոտքից մինչև գլուխ: Նա բռնեց անդամալույծի վոտներից, և աղատվողն իր մարմնի ամբողջ ծանրությամբ ընկավ աղատողի վրա: Դավիթն անկյան նայեց Միքայելի դեմքին, ապշեց: Նրա սիրտը լեցվեց յերախտագիտության զգացումով. ի՞նչ, այդքան բազմության մեջ միայն նա՞ յեղավ անվնհեր, միայն նա՞ վճռեց նետվել ժխորի մեջ ինչ-վոր յերկու կիսամահ մարդկային արարածներ փրկելու:

Դավիթը կամեցավ բարձրացնել յեղբորը: Անդամալույծն արդեն ուշաթափվել եր: Միքայելը բարձրացրեց նրա վոտները, Դավիթը՝ գլուխը և, չտապեցին դուրս բերել նրան ծխի սահմաններից: Ցերկուսն ել հոգնած եյին չարաչար: Ցերկիրը լպրծուն եր. մեծ ջանք եր հարկավոր չսայթաքելու համար: Ազատում եյին մի մարդ, վորի կյանքը վոչ մի բանի պետք չեր և ընդհակառակը թույն եր մերձավորների համար:

Բայց վոչ. այնտեղ, կրակից հեռու վողջում եր այդ մարդուն մի եյակ, վոր հավասարորեն թանգ եր Դավթի և Միքայելի համար:

Նրանք հասան մի տեղ, ուր ծուխը հանկարծ թանձրացավ: Բա՛, մի՞թե փրկության համար նրանք պիտի խեղդամահ լինեն: Դեպի վոր կողմ դնալ.—ա՞յ, թե՞ ձախ, առա՞յ, թե՞ յետ: Մթություն ամենուրեք:

Մ՛իքայելը ադաղակեց և իսկույն նրա աչքերի առջև նկատվեցին յերկաք հսկա պատկեր: Դարձյալ Զուլղրովը, Ռատուշն ու կարապետը:

Այլևս դժվարություն չկար: Սարդսի անշունչ մարմինը վերցրեց կարապետը, Ռատուշն ողնեց Դավթին: Զուլղրովը կամեցավ Մ՛իքայելին բարձրացնել իր ուսերի վրա, բայց յետ նայեց ու տեսավ, որ յերիտասարդն ընկել և գետին յերեսն ի վար և չի կարողանում վեր կենալ:

— Թևից ձեռ մի տուր,—ասաց Մ՛իքայելը և ինքը հենվեց հսկայի թևին:

Մի քանի անցած ամենքն արդեն կրակի սահմաններից դուրս էին...

VIII

Հինգերորդ բուրգի այուներն ընկան մեկը մյուսի յետևից, ճարճատելով և չորս կողմ տարածելով կայծերի հեղեղ: Ամբոխը ցրվեց մրրիկից հալածված փոշու պես: Նավթի մուգ-մեխակադույն ծխին հաջորդեց վայրի կապտադույն ծուխը: Լուր տարածվեց թե հինգ մշակներ, ըստ որում և յերիտասարդ, մնացին հրեղեն այուների տակ ու սպանվեցին: Սարսափ տիրեց ամենքին, բայց վոչ յերկար ժամանակ: Դժոխային աշխատանքը ծխերի և մրերի գետնում վաղուց էր բթացրել ամբոխի ներվերը: Ի՞նչ և նշանակում հինգ մարդկանց մահը կենդանի դիակների աշխարհում: Այդ արդեն աշխատավորի ճակատագիրն է՝ հալածված վոչ միայն մարդկային պատահությանց մազիլներից, այլև կույր տարերքների ճիրաններից:

— Եժան պրծանք,— ասաց մի ծերունի մշակ, որի աչքերը վաղուց էին կուրացել անթիվ վոճիրների ու մահերի տեսքից:

Այնինչ այնտեղ, քսան—յերեսուն քայլ հեռու արդեն մերկանում է մի ուրիշ բուրգ, հետո յերրորդը, չորրորդը, հինգերորդը և, ահա պոյացել և վիթխարի ջահերի մի ամբողջ անտառ: Ճերմակթև նավթամբարներն մեկը մյուսի յետևից պայթելով աչ ու ձախ տարածել են բոցերի ծով և իրանք ընկել են կողերի վրա: Պոյացել և հրեղեն մի դետ, որի առաջն առնելու համար չկա մարդկային վոչ մի հնարավորություն: Բացի մեկից— թողնել նրան իր քմահաճույքին և անչարժ դիրքը, նրա ամենակործան ընթացքը: Նա դիմում է մի մեծ ճահիճ, որ պոյացել է հորդառատ անձրևվներից և հորերից դուրս բերված ջրերից: Այստեղ կատաղի կռիվ են մղում յերկու թշնամի տարրերը: Ճահիճը կլանում է բոցերի ալիքները և ինքն էլ արագ-արագ չորանում, յեռալով և արձակելով ճարճատյուններ, նման մարդկային հուսահատական ճչերին:

Գիշերն անցավ, աշնանային արեգակն սկսեց յերկրի վրա իր առջին շողերը, հետզհետե ազատացնելով հրդեհի լույսը: Ամբոխը՝ ցնխոտված, մրոտված ու նավթոտված բանակը տաժանակիր աշխատանքի՝ տակավին չարունակում էր դոզդոտալ, վազվզել, քանդել, խորտակել, այս ու այնտեղ տանել ջարդոտված մեքենաները, ջրմուղները ու հաղար ու մի տեսակ գործիքներ: Ոչի մեջ պատգում են հազարավոր թիեր, բահեր, լինդեր, ձողեր, և ինչ. հուրն արհամարհում է ամեն ինչ և իր ամենաերիչ ղերոչը չարունակում ավելի ու ավելի կատաղությամբ: Ջրմուղները գործում են ծուլորեն, կարծես զգալով իրենց անզորությունը: Այլևս մշակները չեն հոգում, թե վոր կողմն են մղում ջուրը, այնքան հոգնել էին: Արեգակը ջրեղեն կամարներին տալիս է ծիածանի յերանգներ և դա ավելի մի տեսակ դեկոր է հրդեհի համար, քան նրան վոչնչացնող զորություն: Թուրքերն աղաղակում են. «Ալլահ, Ալլահ», և վոչինչ չեն անում: Լեզգիներն արձակում են ինչ-վոր կոկորդային հնչյուններ նման ճայերի կանչերին: Ռուսների դեմքերն արտահայտում են մոտյալ լրջություն մեջտեղ դրված հինդ խանձված դիակների տպավորության ներքո: Հայերը միմյանց վրա գոռում են, միմյանց հրամայում և վոչ մեկը մյուսին չի լսում: Քաղաքից յեկել են մի խումբ անդլիացիներ և չվեդացիներ,— սիգարները ու ծխամորճերը բերաններին ու ձեռները վարտիկների գրպանները գրած, անտարբեր դիտում են իրանց յերկրներում չտեսնված տեսարանը: Հինդ տարի յեր այդպիսի մեծ հրդեհ չեր յեղել: Քաղաքից չարունակ գալիս էին հանքատերերը, գործարանատերերը, գործակատարները: Վորին քնից էին զարթնեցրել, վորոնք գալիս էին թղթախաղի սեղանից, քեֆից, արբեցողությունից, սիրուհիների գրկից կամ անառականոցներից:

Սմբատն այլայլված վազում էր դես ու դեն և կարգադրություններ անում, անդուլատ հրամաններ արձակում: Նա հոգնել էր դուռլուց, սպառնալուց, աղերսելուց: Հրամայեց, վոր սպանված աշխատավորների դիակներն ասպարեզից հեռացվեն: Վողբալի դեպք, բայց այդ մասին նա հետո կմտածե, իսկ առայժմ պետք է հոգալ կրակից, չափից ազատելու այն, ինչ-վոր հնարավոր է ազատել: Բայց այլևս ուշ էր, այլևս վոչ մի բուրգ և վոչ մի չինություն չի ազատվել այրվելուց, բացի նորակառույց չինություններից:

Անտոնինա Իվանովնան մի քանի մշակների ողնությամբ դուրս էր բերում գրադարանի գրքերը:

— Ձերեխաներին ուղարկեցի՞ք քաղաք,—հարցրեց նա Սմբատին:

— Այո:

— Ձեր յեղբոր մի կուռը կտրվել և Զարդարյաններին ազատելիս:

— Գիտեմ,—արտասանեց Սմբատը և չքացավ ամբոխի մեջ:

Մ՛իքայելը պառկած էր մի փոքրիկ կեղտոտ անկյունում, մերկ անկողնակալի վրա:

Ներան չէին ազատել հին Զարդարյանները: Մի ձեռը դրած գլխատակին, մյուսն անդոր ձգած կրծքի վրա, չրթունքները կրծոտելով, աչխատում էր զսպել անտանելի ցավերը: Շուշանիկը, լուսամուտի առջև ոգնում էր բժշկին ինչ-որ փաթաթան պատրաստելու: Նա հոգնած էր, ուժասպառ, հազիվ կարողանում էր կանգնել ոտքի վրա: Ա՛հ, վորքա՜ն նա դգացել էր ու ապրել այս մի քանի ժամվա ընթացքում և վո՛րպիսի հեղաչրջում էր տեղի ունեցել նրա հոգու մեջ:

Ա՛հա ի՜նչ· ուրեմն, նա, վորից վոչինչ լավ բան չէր ազատում, վորին գրեթե արհամարհել էր, վորից փախել էր վորպես ժանտախտից—ցույց տվեց այդքան հերոսություն: Ուրեմն, նրան, այդ փչացած ու ապականված մարդո՞ւն և պարտական իր հոր, հորեղբոր, նույնիսկ իր կյանքը· ի՞նչ է նշանակում այդ անճնազոհությունը: Ո՞վ կամ ի՞նչը ներչնչեց այդ մարդուն այդչափ անվեհերություն և արհամարհանք դեպի սեփական կյանքը: Դա յերազ չէր, այլ իրականություն ու անտանելի, աներևակայելի, և՛ յերկյուղալի, և՛ ուրախալի: Գեղեցիկ էր նա այն պահին, յերբ բանձր ծխի միջից դուրս յեկավ Զուպրովի թևին հենված, գեղեցիկ ասպետական գեղեցկությամբ: Ո՜ւ, վոչ· յերբեք, յերբեք Շուշանիկը չի մոռանալ այն վայրկյանը, վոր մոգական լապտերով խորին մթության մեջ պայծառացրեց զմայլելի մի պատկեր: Արժե՞ր նրա զգացած վիրավորանքն այդ ասպետական վարձատրության: Վոչ, վոչ և վոչ: Կարծես, անցնելով կրակների ու ծխերի միջով, այդ մարդն անհետք այրեց իր բոլոր անցյալը և դուրս յեկավ հնոցից՝ ապականությունից մաքրված ու զտված: Իսկ այն մյո՞ւսը, վոր այնքան հոգեկան տվայտանքներ էր պատճառել նրան և վորին իր մոլոր յերևակայության մեջ այնպես իդեալացրել էր: Այո, նա նույնպես կամեցավ հերոսանալ, բայց ուրիշների ձեռքով, բայց վոսկու միջոցով: «Ձղերք, յերեք հազար, չորս հազար, հինգ հազար ազատողին», ի՜նչ կծու հեգնությամբ են հնչում այժմ այդ բառերը նրա ականջներին: Ի՜նչ ահռելի վիհ յերկուսի մեջ և վորն է բարձրյեթե վոչ նա, վոր ահա այնտեղ, մերկ անկողնակալի վրա ընկած տառապում է ցավերից: Մեկը վոսկով, մյուսը կյանքով և, վո՞ր վոսկին կարող է փոխարինել կյանքը: Ովքե՞ր են Զարդարյանները նրա համար, այդ անդամալույծը, այդ աննչան դործակատարը: Իսկ ի՞նքը՝ Շուշանիկը: Մեկը՝ վոչնչություն, մյուսը՝ կյանքի հեգնանքներից ծըլված միայն և միայն աչխատելու ու տառապելու համար: Մինչդեռ նա, վոակեհյուս խանձարուրի մեջ անվածը և չուքի ու չոայլության մեջ որորվածը վոչնչով, վոչնչով պարտական չէր մի աննչան, մի աղքատիկ աղջկա ազատելու կրակի ճանկերից:

Մյուսը դիմից դրամի ոգնության ազատելու համար այն մարդուն, վոր ազատել էր իր վաճակներին: Դառը հեգնանք՝ չպրտված չքավո-

րության յերեսին վորպես թունավոր թուք: Հե՛, կարծես, այդ մարդիկ, վորոնց նա հրամայում էր կրակի մեջ նետվել, կյանք չունին, զուրկ են ապրելու ցանկությունից: Փոքրոգություն: Սարսափել մահից այն ժամանակ, յերբ ուրիշները չէին սարսափել, նետվելով կրակի մեջ վորպեսզի ազատեն նրա զավակներին:

Իդեալացրածի կերպարանքից ընկնում էր խորհրդավորության քողը, անզուգականը դառնում էր առօրյա հասարակ արարած—վաճառական: Նողկանք—ահա այդպիսի մեկի արժանավոր վարձը: Դառն է բաժանվել յերևակայականից, բայց և ցանկալի: Ձե՞ վոր այն, ինչ-վոր ստեղծել էին յերազները, յերբեք, յերբեք չպիտի պատկաներ իրան: Են, թող, ուրեմն, սթափվե, տեսնելով բացված աչքերով մերկ իրականությունը: Այժմ Շուշանիկը վոչ միայն պարտավոր և մոռանալ այդ մարդուն, այլև կարող և մոռանալ: Ահա նա, վազվզում և ամբոխի մեջ, մերթ հրամայելով և մերթ աղերսելով փրկել կրակի լափից մնացորդն իր կայքերի: Այժմ նրա դեմքն այլևս չունի նախկին առնականության ու հուրը, և ձայնը դրկվել է իր թովչությունից արդեն այն վայրկյանից, յերբ աղաղակեց· «տղերք, ազատողին հինգ հազար ռուբլի»···

Միքայելը, հեզ ու խոնարհ յերեխայի պես, թույլ տվեց բանալ իր կուռը և փաթաթանը փոխել: Մի վայրկյան վարեն վեր նայելով, կարդաց Շուշանիկի աչքերի մեջ խորին կարեկցության հետք և մի ուրիշ բան: Կոան ցավերն անտանելի եյին, բայց դրեթե վոչինչ չզգաց: Ո՜ւ, նա իր թևն անվերջ կթողներ բժշկի ձեռների մեջ, յեթե Շուշանիկը մնար ներկա և նույն հայացքով նայեր նրան: Բայց վոչ, վերջացնելով իր դործը, որիորդը հեռացավ և մեղմիկ քայլերով դուրս գնաց:

Այնուհետ, կից սենյակում պառկած եր կրակից ազատված անդամալույծը: Նա քնած եր անխռով քնով: Շուշանիկը նստեց նրա գլխի մոտ, փոքրիկ նստարանի վրա: Նրա սիրտը պաչարել եյին անորոշ դգացումներ, մտքերը չփոթվում եյին, հոգնած գլուխը չեր կարողանում տակավին պարզ հաչիվ տալ մերձավոր անցյալի մասին: Նա հեռու չեր ամբոխից, բայց աղաղակները հնչում եյին նրա ականջներին, հրդեհը չեր տեսնում, բայց տարերքների անթափանցելի քաոսը կանգնած եր նրա աչքերի առջև: Այնտեղ թանձր ծխերի մեջ անոգնական մերձավորները, այստեղ մոր ու հորաքրոջ հուսահատ պատկերները: Այնտեղ բոսորագույն կրակն իր բյուրավոր ճյուղերով ու ահարկու լեզուներով, այստեղ սև ուրվականներ, ինչ-վոր վայրենի ճիչեր, ինչ վոր դոռումդոչյուններ, հինգ կիսով չափ այրված դիակներ, մուր, ցեխ, նավթ, կեղտ ու խավարի, կյանքի ու մահվան մի դանդված: Ցեվ այդ քաոսի մեջ յերկու տարբեր պատկերներ—մեկը բարձրահասակ, առնական կերպարանքով, քաղաքային մաքուր հագուստով, մյուսը՝ մի մի-

ջահաստակ, վոտից մինչև գլուխ նավթի, մրի, տիղմի մեջ. մեկն ինչպես արտաքինով նուվնպես և բարոյականով մաքուր, մյուսն անցյալը կեղտոտ, ներկան անորոշ: Ցեվ հանկարծ նա, վոր բարոյական և, վոր մաքուր և, կամաց-կամաց աղոտանում և և չքանում ինչպես միրաժ, իսկ մյուսն արագ-արագ բարձրանում և, մաքրվում իր անցյալի ապականություններից, և ահա յերևան և գալի մի լուսապայծառ մեծության մեջ:

Հոգնած գլուխը թեքվեց կրծքին, ձեռները թուլացան, ընկան վար: Բայց դեռ հնչում էին նրա ականջներին ամբոխի աղաղակները... Իրականությունը դանդաղորեն աղոտացավ և հետո վոխվեց մղձավանջի: Վերջապես նա կրակների սահմանումն է, ամեն կողմից վառնդով չրջապատված: Յերկնքից թափվում են կայծեր, վայրենի մարդիկ յուններ արձակելով և վոտների առջև բացված են մթին դերեզմաններ լի մպրդկային կմախքներով, վորոնք իրանց ատամնաղուրկ բերաններով քրքջում են նրա յերեսին և ձգտում են իրանց վոսկրային ձեռներով քաշել վար, վար: Նա ձեռները տարածած ողնություն և աղերսում և վոչ վոք, վոչ վոք չի գալիս աղատելու, նուվնիսկ հորյեղբայրը, նուվնիսկ մայրը: Նա ղիմում է մեկին, վոր կանգնած է հեռու, հեռու և ժպտան յերեսին դրկում ու համբուրում է քուվը կանգնած մի կնոջ, այժմ այս սոսկալի պահին.— բայց ահա կեղտերի, մրի ու խավարի քաոսից բարձրանում է մի սև կերպարանք և առաջ չարժվում, մոտենում է նրան: Ցեվ վորքան մոտենում է, այնքան կերպարանքը լուսավորվում է ու պայծառանում, կարծես, բոցերի մեջ կեղտերից ազատվելով: Ցեվ յերևան և գալիս մի խոշոր սպի ճակատի վրա: Նա աներկյուղ մի վոտաումով անցնում է կմախքների լեցուն դերեզմանները, մերձենում է Շուշանիկին, բռնում է նրա թևից այն վայրկյանին, յերբ արդեն ղղում էր իրան կործանված...

Նա զարթնեց սարսափից, վոտքի յելավ, աչքերը տրորելով: Նախ չուրջը, վորտեղ է դանվում, մի՞թե իրականություն է այս, մի՞թե աղատված է: Ներս մտավ մայրը, վոր դեռ դողում էր նարօսափից:

— Զարթնեցի՞ր, ինչո՞ւ այդպես չուտ:

— Մի թեե յես քնած եյի...

— Այո, չատ խորը... Ինձ, քնիր դավակս...

— Մամա, մամա, մի՞թե հայրիկս կենդանի յե, մի՞թե հորյեղբայրս փրկված է,—դոչեց հանկարծ Շուշանիկը և, հեկեկալով, փաթաթվեց մոր պարանոցին:

— Հանդստացիր, սիրելիս, փրկված ենք ամենքս...

— Վոչ, վոչ, այն հինդ խանձված ու սևացած դիակները...

— Այն ասածու կամքն եր...

Քաղաքից յեկան՝ Աբշակը, Ալեքսեյ Իվանովիչը, Բյաղիմբեգը, Մոսիկոն, Նիսատամիձեն և մի քանի ուրիշ գվարթամորներ: Նրանք քե-ֆից եյին գալիս: Փոքրիկ, կեղտոտ սենյակը լեցվեց այցելուներով: Բոլորը լսել եյին Միքայելի հերոսության լուրը, վորն այժմ քաղաքում բերանե բերան եր անցնում: Բյաղիմ-բեգը գրկեց ու համբուրեց նրան անկեղծարար. աղամարդու քաջությունը միշտ վոգեվորում եր այդ մարդուն: Նրա որինակին հետևեց Նիսատամիձեն, վոր նույնպես հորոսության յերկրպագու յեր: Մոսիկոն ասաց.

— Ցես հարազատ յեղբորս համար կրակի մեջ չեյի ընկնել...

— Եգոիստ,—դոչեց Բյաղիմ-բեգը և նորեն համբուրեց Միքայելին:

Ներս մտավ Սմբատը բժշկի հետ: Հայտնվեց, վոր Միքայելի կուռը չի կոտրվել, այլ վոսկորն է դուրս ընկել տեղից և արդեն բժիշկն ուղղել է: Դժբախտությունը պատահել եր այն րոպեին, յերբ, անդամալույծին Զուլղուվին հանձնելուց հետո, սայլաքից և ընկավ գետնին:

— Շա՞տ է ցավում,—հարցրեց Աբշակը:

— Վո՛չ, դատարկ բան է,—պատասխանեց Միքայելը, վոր իրապես տառապում եր ցավերից:

— Կեցցես,—ասաց Բյաղիմ-բեկը հիացած,—մի անդամ իմ մի վոտի վոսկորը դուրս եր ընկել, յերեք որ բառաչում եյի տավարի պես:

Ցեկան՝ Սրաֆիոն Գասպարիչն ու Սուլյանը: Ինժեները հոդու խորքում ուրախ եր հրդեհին: Նրա կառավարության ժամանակ Ալիխորքում պատահել եյին հրդեհներ, բայց վոչ այդչափ մյանների հանքերում պատահել եյին հրդեհներ, բայց վոչ այդչափ խոշոր: Այժմ Թող Սմբատը ղդա, թե ումից խլեց կառավարչի պաշտոնը և ում հանձնեց:

Դոնների մեջ յերևեցան ակնավառաւ Բարսեղն ու Թղթակից Մարզպետունին: Ցերկուսն էլ իրենց մի քիչ մեղավոր եյին ղդում Միքայելի առջև և ամաչեցին ուղղակի մոտենալ նրան: Թղթակիցը դուրս բերեց գրպանից հուշատետրը և սկսեց մատիտով ինչ-վոր գրել: Պարզ եր, վոր հրդեհի նկարագրությունն եր անում: Ցեթե Միքայելն ուշադրություն դարձներ նրա վրա, յերկու որից հետո սլիտի կարդար իր հերոսության նկարագիրը և հետո ընդուներ հեղինակի այցելությունը...

Սակայն Միքայելը վոչ նայում եր ներկա յեղողներին և վոչ լսում նրանց խոսածները: Թեև ցավերը մեղմացել եյին, և նա այժմ քնելու պահանջ եր ղդում: Բոլոր անցքը նրան թվում եր յերազ, պարզ հիշում եր միայն Շուշանիկի աղեկտուր ճիչերը, մարմնացած հուսահատության պատկերը, դեղնցիկ աչքերի աղերսալի նայվածքը: Ահ, ինչպես եր աղաղակում, ինչպես եր ճիղն անում աղատել իրեն բռնողների ձեռներից՝ կրակի մեջ նետվելու համար: Ցեվ վորքան աներկյուղ եր,

վորքան հուսահատ, նույնքան զեղեցիկ: Նրա հրաշալի աչքերը, դուրս ցցված կուրծքը, կոկորդի լարված յերակները, ուսերի վրա անկանոն սփռված մազերը—դա ինքը հրդեհն եր: Սոսկալի չեր նրա համար հսկայական խարույկը, վասն զի կար նրա մեջ ավելի զորավոր խարույկ: Ցավ նա պիտի այրվե՞ր. նա, այդ զմայլելի եյակը մի անդամալույծի, մի մահամերձի՞ համար: Ո՛չ, վո՛չ, յերբեք, Միքայելը չեր կարող թույլ տալ վորքան ևս ատված ու արհամարհված լիներ նրանից: Ա՛հ, ինչ լավ արավ, վոր աչքերը փակեց և նետվեց կրակի մեջ և վորքան հաճելի յե հակառակորդին պատժել վեհանձնությամբ:

Նրա աչքերը փակվեցին: Նա նիրհեց խաղաղ, անվրդով նիրհով:

Նախկին բարեկամները դուրս դնացին, և դա յեղավ նրանց վերջին այցելությունը և վերջը բարեկամության:

Մի րոպե անցած հուշիկ քայլերով ներս մտավ մի դունատ պատկեր: Կամակուց մոտեցավ, նայեց Միքայելի փակ աչքերին և նստեց նրա դլխի կողմում:

Հրդեհը մոտենում եր վախճանին: Մի քանի բուրգեր ևս վոչնչացնելով և ամբարներ պայթեցնելով, նա, կարծես, հաղուրդ ստացավ և այլևս ճանկերը հեռու չեր տարածում:

Իրիկնադեմին Սմբատը հրամայեց Միքայելին տեղափոխել իր բնակարանը: Նորաչեն տունը հրդեհից ազատվել եր, և այժմ նրան վտանգ չեր սպառնում: Միքայելը յեկավ ինքն իր վոտքով, վնասված կուռը պարանոցին կապած մի թաշկինակով, վոր արդեն կեղտոտվել եր նավթից: Սմբատն ոգնեց նրան լվացվել և հագուստը փոխել: Թևը դրեթե չեր ցավում. բժիշկը լավ եր ուղղել տեղահան վոսկորը: Նա դուրս յեկավ պատշգամբ հանդստացած ու թարմացած: Նա իր բնակարանն առաջարկեց Անտոնինա Իվանովնային, իսկ Դավթին հրամայեց խնկույն անդամալույծին տեղափոխել դրասենյակ առժամանակ, մինչև վոր բոլորը կարգի կբերվի:

Ամբողջ որը վոչ վոք վոչինչ չեր կերել, բոլորը քաղցած եյին: Միքայելը խնդրեց ամենքին մխասին ճաշել պատշգամբի վրա:

Արևն արդեն թեքվել եր դեպի մուտքը, իր վերջին ճառագայթներով չողչողացնելով ընդարձակ պատշգամբի ապակիները: Հեռվում մխում եյին այրված շինությունների բեկորները:

Սմբատը հրամայեց Դավթի Զարդարյանին՝ ապանված, նաև վիրավորված մշակների ընտանեկան կացության մասին մանրամասն տեղեկություններ ժողովել ու հաղորդել իրեն:

— Պետք է աշխատեմ ապանվածների վորբերին վարձատրել,—ավելացրեց նա:

— Պիտի աշխատես,—կրկնեց Միքայելը մեղմիկ հեղնանքով,—վո՛չ, հարկավոր է բոլորին ապահովել կենսաթոշակով:

— Դուրին է ասել: Հրդեհի աված վնասը հասնում է յերեք հարյուր հազար ռուբլու:

— Ի՞նչ չուտ հաշվեցիր,—զոչեց Միքայելը նույն մեղմիկ հեգնանքով:—Այո՛, վնասը մեծ է, բայց ավելի մեծ է մարդկային կյանքը:

— Իհարկե, ինչ ասել կուզե:

Շուչանիկը զաղտուկ նայեց Սմբատին: Ցավ ինչ փոփոխություն. թվաց նրան, վոր այդ մարդուն զրաղեցնում են վոչ այնքան մարդկային թշվառությունն ու վշտերը, վորքան իր նյութական կորուստը:

Խոսք բացվեց Զուպրովի, Ռասուլի և Կարապետի մասին. Սմբատն ասաց, թե վորոշել է յուրաքանչյուրին նվիրել յերկու-յերկու հարյուր ռուբլի:

— Միայն այդքա՞նը,—զարմացավ Միքայելը,—եե, յեղբայր, շատ քիչ ես դնահատում ընտանիքիդ կյանքը:

— Իմ յերեխաների գլխավոր ազատիչը նրանք չեն... կա ուրիշը:

— Գիտեմ, բայց նրա մասին պետք է լինի առանձին կարգադրություն:

— Ձեր ընտանիքն ազատել են այդ յերեք մշակները,—ասաց Դավիթը, հասկանալով Միքայելի ակնարկը,—ուրիշ մեկը չկա:

— Դուք համեստություն չե՞ք ցույց տալիս, արդյոք,—հարցրեց Սմբատը բարեկամական հեղնանքով:

— Համարձակվում եմ ասել, վոր յես միշտ դեմ եմ յեղել կեղծ համեստությանը: Նա նույնն է, ինչ-վոր իսկական անհամեստությունը: Ճիշտ է, ամենից առաջ յես եմ ոգնության վազել, բայց ձեր ընտանիքի իսկական ազատարարներն այն յերեք անձնվեր մշակներն են... Գալով ինձ, յես արդեն վարձատրված եմ ավելի քան առատորեն...

— Թողնենք առայժմ այդ խոսակցությունը.—ընդհատեց Միքայելը:

— Վո՛չ, ներեցեք, յես պարզ մարդ եմ, շատ ել ուղղամիտ չեմ կարող թագցնել: Պարոն Միքայել, դուք ցույց տվեցիք այսօր անձնական հերոսություն, վրկելով յերեք հոգի: Ա՛հ, ներեցեք, ղազված եմ, չգիտեմ ինչպես ամփոփել իմ մտքերը... Շուչանիկը, նա՛ միայն կդտնե խոսքեր իր և իմ յերախտագիտությունը ձեզ արտահայտելու...

Ցավ խորին հուզումից նրա ձայնը խեղդվեց, նիհար ձեռներն սկսեցին դողդողալ:

Շուչանիկը վոչինչ չասաց: Նա միայն մի խորը հայացք ձգեց Միքայելի յերեսին և, չատազանելով, գլուխը թեքեց կրծքին:

Սմբատը լուռ մտախոհության մեջ եր: Նրան բոլորովին ուրիշ միտք եր զրաղեցնում: Ցերեկն նրա զեմքով սահում եր տարօրինակ ժպիտ: Հանկարծ նա զարձավ Անտոնինա Իվանովնային.

— Ովքե՞ր են Զուպրովը, Ռասուլը, Կարապետը և ահա այդ մարդը, ի՞նչ կապ կա նրանց մեջ:

Տիկինը հասկացավ հարցի բուն իմաստը: Նա նույնն էր մտածում, ինչ-որ ամուսինը:

— Այո՛,—ասաց նա, հառաչելով ու ղլուխը խորհրդավոր շարժելով,—ունիք իրավունք, չես համաձայն եմ:

Ցեվ մի մեզմ ժպիտ լուսավորեց Անտոնինա Իվանովնայի դեմքը: Ժպիտ, որի նմանը Սմբատը յոթ տարի չէր տեսել այդ մշտապես խոհուն դեմքի վրա:

Արեգակը մայր մտավ՝ ժողովելով իր վերջին շողերը բուրդերի բարձր զազաթներից: Իսկ այնտեղ լայնածավալ բակում խոնվել էր բազմաբնակ, բազմակրոն ամբոխը և հավասար վշտով համակված լուռ վողբում էր սյուների տակ ջարդված ու այրված ընկերներին: Ցերեքը սպանվածներից հայեր էյին, մեկը՝ ռուս, հինգերորդը՝ թուրք: Ցեվ ամենքի մահվան մեջ ամբոխն անխտիր տեսնում էր իր ճակատագրի դաժանությունը...

Ճաշից հետո Սմբատը հարցրեց Անտոնինա Իվանովնային.

— Այսոր կղնա՞ք ինձ հետ քաղաք:

Տիկինն ընկավ մտատանջության մեջ: Այժմ նա ինքը ցանկանում էր գնալ, բայց հիշեց սկեսրի ու տալոջ առելությունը դեպի ինքը և տատանվեց:

— Դեռ վո՛չ,—պատասխանեց նա:

— Բայց դիտեք, որ այլևս յերեխաներին այստեղ չեմ վերադարձնելու: Այսուհետև մայրս նրանցից չի բաժանվելու:

— Լավ,—արտասանեց ալիկինը, դառնորեն ժպտալով,—թող չբաժանվի...

Նա յերեսը դարձրեց ամուսնուց՝ արցունքը թաղցնելու համար: Բայց Սմբատը նկատեց և հասկացավ նրա վիշտը:

— Դիտեք ինչ,—ասաց նա, ճակատը չիևելով,—մենք սիրում ենք մեր յերեխաներին հավասար սիրով... մոռանանք մեր ինքնասիրությունն հանուն այդ սիրո... Ուրիշ յելք չունենք, բացի հետևյալից այդ ռամիկ աշխատավորների զմայլելի որինակին...

— Այո՛, այդ ճիշտ է, բայց վոչ այդքան շուտ, վոչ այդքան շուտ... Տվեք ինձ ժամանակ խորհելու և դալու...

— Շատ բարի, խորհեցեք... Մենք հաշվել չենք կարող, բայց հարցել իրարու, մոռանալ մեր յեսը պարտավոր ենք հանուն մեր զավակների:

Ասաց Սմբատը և շտապով հեռացավ:

«Հարցե՛լ, մտածեց Անտոնինա Իվանովնան, այո՛, կարող ենք, բայց այդքանը բավական չէ ընտանեկան կյանքի ամրության համար»:

IX

Սարդիս Զարդարյանը, կրակից ազատվելով, մահից չէրկիվեց: Նրա նեխված մարմինը և քայքայված հոդին ավարտում էյին վերջին հաշիվները աշխարհի հետ: Ժամ առ ժամ սպառում էյին նրա մնունդը: Նա արդեն ղրկվել էր բոլորովին խոսելու ընդունակությունից, և ապուշ աչքերը լուռ հառում էր սրա ու նրա յերեսին:

Այժմ Շուշանիկը չէր հեռանում նրա մահճակալից: Թանդ գնով ձեռք բերված կյանքի ապարդյուն մնացորդը նրա աչքում ստացել էր ավելի արժեք: Այդ մնացորդը նա համարում էր ինչ-որ յերկնային տուրք, վորի մեջ դրում էր իր ճակատագրի խորհրդանշանը: Նայելով մահամերձի արդեն հոդի դույն ստացած դեմքին, խորասուղվում էր անսովոր մտքերի մեջ: Մի միստիկ յերանգ ուներ նրա համար մահի մերձավորությունը: Նա լինքը գտնվելով կյանքի և վոչնչության միջև, ղգացել էր սոսկալի չունչը չքացման և տեսել նրա պաղ աչքերի ձգողական նայվածքը: Այն րոպեներին մահն այնքան ահարկու չէր, վորքան այժմ: Այժմ, մերձավորի մահճակալի քով: Ցեվ մերթ ընդ մերթ սարսռում էր ու դողդողում: Թռչուն էր մրրիկի բերանն ընկած: Նրան ազատելին ուժով, հակառակ իր կամքի, ինչպես և այդ անդամալույծին, վան դի չէր ուղում փրկվել առանց փրկելու: Ցերեք չաներ այդ, պիտի հավիտյան տանջվեր խղճի սուր խայթերից և, ով դիտե, դուցե և՛ մահանար անփառունակ մահով վորպես մի զաղրելի վորդ: Այժմ նա մի եյակ է լինքն իր աչքում, մարդկային արարած, դուստր արժանի այդ կոչման: Այժմ նա ավելի ճիշտ է ըմբռնում կյանքի խորհուրդը, ավելի յե հասկանում և ավելի մտածում ու զղում: Տեսարաններ են բացվում նրա հոդեկան աչքերի առջև, վոր առաջ չկային կամ կային խորին խավարի մեջ: Այժմ անցյալ խոհերն ու զղացումները նրան թվում են մերթ ծաղրելի, մերթ յերկյուղալի, մերթ ամոթալի, բայց և միշտ խառն, անորոշ: Սիրե՞լ է, արդյոք, Սմբատ Ալիմյանին, թե՞ սիրել է իր ամպամած յերևակայության ստեղծագործությունը, յերազողի իդեալը: Ցերե սիրել է այդ մարդուն, իրրև մարդու, հապա ո՞ւր է այժմ նախկին պատկերը: Չկա, միրաժն անցավ, իլլյուզիան չքացավ, մնաց մի առորյա, մի սովորական մահկանացու, վոր վոչնչով չի տարբերվում իր նմաններից: Չկա վոչ առնականությունը նրա դեմքի վրա և վոչ թովիչ յերաժշտությունը նրա ձայնի մեջ: «Ցերեք հազար, չորս հազար, հինգ հազար ազատողին», մարդկային կյանքի ամոթալի աճուրդ: Ո՛հ, մանկական խաբկություն, չքացած յերազ ընտիր գրքերով սնված ուղեղի: Այժմ մի այլ կերպարանք է պատկերանում նիրհերից սթափված եյակի առջև: Ահա այդ է իսկականը և այդ կերպարանքն է կրում իր դեմքի վրա բուն առնականությունը:

Այդ դունատ ճակատի վրա յե դրոշմված հերոսուԹյունը և այդ Թախծալի աչքերի մեջ և բաժված արծիվը: Իսկ այն մյուսը խարուսիկ տեսիլ եր, հայտնվեց վայրկենաբար և չոգիացավ, չԹողնելով նրա սրտի վրա և վոչ մի ծանրուԹյուն, խղճի վրա և վոչ մի սպի...

Շուշանիկը գլուխը Թեքեց, ականջ դրեց հոր չնչառուԹյանը, չուշադրեց նրա ճակատը· դեռ կյանք կար հյուծված մարմնի մեջ: Ցեվ նորից նա խորասուզվեց իր մտքերի մեջ: Արդյոք, չի՞ սխալվում, արդյոք, սե՞րը ներշնչեց Միքայել Ալիմյանին այնքան անվհերուԹյուն, այնքան անձնազոհուԹյուն: Անհույս սե՞րը դեպի մի աննշան աղջիկ: ՑեԹե այդպես է, ուրեմն նա յերջանիկ է, այդ աննշան եյակը, ուրեմն ճիշտ եյին այդ մարդու խոսքերը· «կարող եմ լինել և՛ շատ բարի, և՛ շատ չար, և՛ շատ լավ, և՛ շատ վատ, և՛ շատ յերկչոտ, և՛ շատ քաջ»: Ճիշտ, մի՞Թե այսուհետև եվ պիտի կասկածել, մի՞Թե նա այդ չսպասուցեց իր ասպետական քայլով: Ցեվ ահա լինչ· այդ տեսակ մի ապացույցից հետո, Շուշանիկը չվի՞ժ ըղձա, վոր այնպես խիստ վարվեց այդ մարդու հետ, չԹագցնելով նրանից իր ատելուԹյունն ու արհամարհանքը: Ի՞նչ եր արել իսկապես նա, դրԹե վոչինչ: Մերձեցավ նրան վատ դգացումներով ու սխալվեց: Եհ, չե՞ վոր մոլորուԹյունը վոչ վոքի համար խուսափելի չե, մանավանդ մի յերիտասարդ մարդու համար, վորին հոռի կանայք իրավունք եյին տվել մերձենալ իրենց անմաքուր միտումներով: Նա հանդիպեց (դուցե կյանքում առաջին անգամ) ընդդիմուԹյան և սԹափվեց մոլի կրքերից: Նա ըղձաց, նա խոնարհվեց, ներումն խնդրեց: Նա վարվեց անկեղծ, համարձակ, իսկ ինքը՝ Շուշանիկը, արտաքուստ ներողամիտ ձևանալով, չկարողացավ լինել վեհանձն ու մոռանալ նրա սխալը, առեց հոգու խորքում, հետո արհամարհեց: Ինչո՞ւ: Մի՞Թե չպիտի պարծենար, տեսնելով իր առջև խոնարհված մի դոռոզ հոգի: Կույր եր, չկարողացավ տեսնել, վոր ինքն անգիտակցաբար ուղիղ ճանապարհի յե բերում մի մոլորված մարդու և մաքրում ու զտում է կեղտերից մի ապականված հոգի: Այո՛, նա ինքը վոչ միայն սխալվեց, այլև դոռոզացավ իր մաքրուԹյան մեջ...

Կես գիշեր եր, և նա դեռ անքուն նստած եր հոր մահճակալի քով: Սենյակի մի անկյունում, մերկ հատակի վրա հագստով քնած եյին նրա մայրն ու մորաքույրը: ԴավիԹը քնած եր կից սենյակում յերեխաների մոտ: Մահամերձը բաց արավ աչքերը, նայեց շուրջը, Շուշանիկին եր վնտրում:

— Ի՞նչ ես կամենում, հայր,—հարցրեց որիորդը հանդարտիկ:

Անգամալույծը նայեց: Նրա աչքերն այս անգամ զարմանալիորեն իմաստալի եյին: Կարծես, մահամերձի ամբողջ հոգին անցել եր այն-

տեղ, իր վերջին կացարանը: Նա գլուխը Թեքեց Շուշանիկի կողմ, աբյունաքամ չրԹունքները յերկարացնելով:

Շուշանիկը հասկացավ, վոր նա ուզում է համբուրվել և ինքը Թեքվեց և համբուրեց նրան: Նա չոշափեց հոր չորացած ձեռները և սարսափած վոտքի յելավ· այլևս անդամալույծի կյանքի վերջին վայրկյաններն եյին· նա չտապեց զարԹեցնել անեցիներին: Մի պահ մահամերձի աչքերը նորեն բացվեցին: Նայեց քրոջը, կնոջը, յեղբորը և, վերջապես, խմատալի հայացքը սևեռեց Շուշանիկի դեմքին: Թվաբանը չկարողացավ վերջին կամքն արտահայտել, ներումն խնդրել մերձավորներից՝ նրանց պատճառած տվայտանքների համար: Արդեն նա չատ եր մոտեցել մահի դեմ, բայց մեռավ այնչափ հանդիստ, վորչափ անհանդիստ ապրել եր յոԹ ու կես տարի: Հոգին անջատվեց քայքայված մարմնից միայն քանի մի ԹեԹև ցնցումներ պատճառելով նրան: Ցեվ յերբ այրի քույրը Թաչիլինակը սեղմեց նրա քարացող կոպերին, սենյակն աղմկվեց Շուշանիկի հեկեկանքով: Կարծես, յոԹ ու կես տարվա արցունքները բավական չեյին:

Մյուս որը Սարգսի դիակը տեղափոխեցին քաղաք: Տիկին Աննան չկամեցավ, վոր նա Թաղվի առանց պատարագի: Միքայելը պատվիրեց ԴավիԹին վոչինչ չխնայել՝ Թաղման հանդեսը չքով կատարելու համար: Բայց այրին մերժեց, ի՞նչ կարիք կա, Սարգիսը վաղուց է մեռել:

Հանքերից Շուշանիկը քաղաք յեկավ Անտոնինա Իվանովնայի հետ:

— Բավական է, Սուսաննա, մի՞Թե չեք կարող զսպել ձեր հեկեկանքը,—հորդորում եր տիկինը,—մի՞Թե քիչ եր տառապել յոԹ տարի... Նա պիտի մեռներ, ուրախ յեղիր, վոր մեռավ բնական մահով:

— Այո՛, բնական մահով, դա իմ միակ սփոփանքն է:

Թաղման հանդեսն ավարտվելուց հետո, ԴավիԹը Սմբատի ու Միքայելի հետ յեկավ Ալիմյանների տունը, ուր այրի Վոսկեհատը սպվորների համար ճաշ եր պատրաստել տվել:

Շուշանիկի լուռ ու մեղմիկ արցունքները չարժում եյին այրի Վոսկեհատի դուԹը: Նա սիրեց այդ սիրուն աղջկան դեռ այն ժամանակ, յերբ Շուշանիկը ծառայում եր հիվանդ Միքայելին այն խայտառակ ծեծից հետո: Այժմ նայում եր մայրական զգվանքով, մխիԹարում և յերբեմն չքեղ մազերը շոյելով, համբուրում եր նրան: Կվողրա՞ն, արդյոք, իր մահն այդպիսի կսկիծով նրա հարազատները: Ա՜հ, լինչ սիրող դուստր, ի՞նչ զգայուն սիրտ: Ինչո՞ւ նա չե վոսկեհատի հարսը, Սմբատի կինը, այո՛, հենց այդ աղքատ աղջիկը, վոր իր ավելի քան համեստ սպագնատի մեջ վորքան հեզ է, նուիրական զեղեցիկ: Ինչո՞ւ այդ ոտարուհին է նրա Թոռների մայրը· նա, վորին ատել է և յերբեք,

յերբեք չի կարող սիրել: Նրանք միմյանց չեն հասկանում և չպիտի հասկանան հավիտյան:

Ճաշից հետո յեկավ Արշակը՝ Ալեքսեյ Իվանովիչի հետ և հայտնեց, թե այս յերեկո ուղևորվում է արտասահման: Վոսկհատան արդեն դիտեր կրասեր վորդու սոսկալի ախտի մասին, և այժմ ինքն եր չատպեդնում նրան գնալ, բժշկվել:

Ալեքսեյ Իվանովիչը կանչեց քրոջն առանձին սենյակ և ասաց.

— Դե՛հ, այժմ կարող ես հանդիստ լինել, յես գնում եմ...

— Ո՞ւր:

— Արտասահման:

— Ինչո՞ւ:

— Արշակի հետ եմ գնում...

— Վորպես ի՞նչ:

— Վորպես ուղեկից և հովանավոր:

— Ալեքսեյ, ունեցիր ինքնասիրություն, աղաչում եմ,—դոչեց Անտոնինա Իվանովնան:

— Զարմանալի եյակ ես դու, քույր: Կարծես, յես վորևե մեկի վրին ծանրություն եմ: Ինքը՝ քո պատվարժան ամուսինն է ինձ խընդրում՝ Արշակին ուղեկցել: Տղան լեղուները չգիտե, յերբեք չի ճամբորդել, հիվանդ է ու անփորձ, մի՞թե նրան հարկավոր չե մի, այսպես ասած, պատվավոր գիդ: Յերևակայիր, այժմ Սմբատ Մարկիչը վոչ միայն հաչա աչքով է նայում ինձ, այլև սկսել է սիրել: Իսկ յես խըղճում եմ Արշակին: Նրա հիվանդությունը թեև բուժելի յե, բայց չատ ծանր: Յես պիտի ամեն կերպ աշխատեմ նրան վրկել, յեթե միայն ուշ չե...

— Իսկ պաշտո՞նդ Մոսկվայում:

— Յես արդեն ուղարկել եմ իմ հրաժարականը:

— Հետո՞,—դոչեց Անտոնինա Իվանովնան, դայրանալով:

— Հետո, ինչ հետո. մնում եմ Սմբատ Մարկիչի տրամադրության տակ...

Անտոնինա Իվանովնան վերադարձավ մյուս սենյակ, կանչեց Սմբատին մի կողմ և հարցրեց.

— Յեղբայրս ձեր ցանկությամբ է ուղեկցում Արշակին արտասահման:

— Այո՛:

— Յեվ դուք կարծում եք, վոր նա հարմար է այդ պաշտոնի համար:

— Լիովին: Ուրիշ ավելի հարմար մարդ յես չեմ ճանաչում:

— Հայտնում եմ, վոր յես պատասխանատու չեմ յեղբորս մասին...

— Անտոնինա Իվանովնա, հասկանում եմ ձեր միտքը և գովում ձեր հայարտությունը: Բայց մարդիկ ապրում են վոչ այնպես, ինչպես ցանկանում են, այլ այնպես, ինչպես կարող են:

Այս խոսքերի մեջ կլինը դղաց մարդու հետին միտքը: Դա մի տեսակ ակնարկ եր հաշտության մասին: Հաշտություն, վոր ստիպողական եր և անհրաժեշտ: Գարդ է, վոր նրանք պիտի «ապրեն ինչպես կարող են»: Նրանք պարտավոր են կրել իրենց խաչը և չեն կարող չհրել, քանի վոր յերկուսն էլ սիրում են իրենց զավակներին հավասար սիրով:

Մի ժամ անցած Անտոնինա Իվանովնան Զարզարյաններից հետ ուղևորվեց հանքերը, յերեխաներին թողնելով սկեսրի մոտ: Ճանապարհին նա խոսում եր Շուշանիկի հետ մշակների մասին: Նա լուր եր ստացել, թե իրիկնային կուրսերը թույլատրված են և մտադիր եր անմիջապես դիմել դործի:

—Մենք այսուհետև էլ միասին կաշխատենք,—ասաց նա:

— Ինչպես կամենաք,—պատասխանեց Շուշանիկը:

— Վոչ միայն կամենում եմ, այլև խնդրում, Սուսաննա: Ահ, լավ բան և աղնիվ և անկեղծ բարեկամ ունենալը, այնպես չե՞, Սուսաննա:

Յեվ նա միանգամ ևս գրկեց ու համբուրեց Շուշանիկին մայրական զգվանքով: Յեվ Շուշանիկը զգացվեց նրա անկեղծությունից, այլևս նրա խիղճը հանգիստ եր:

Սմբատն ու Միքայելը գնացին յերկաթուղու կայարան՝ Արշակին ճանապարհ դնելու: Ինդրեցին Ալեքսեյ Իվանովիչին՝ ամեն կերպ ազդել Արշակի վրա մի անգամ առ միշտ թողնելու կործանիչ կենցաղը:

— Աղնիվ խոսք եմ տալիս, վոր պիտի աշխատեմ,—ասաց Ալեքսեյ Իվանովիչը և ասաց ամենայն անկեղծությամբ:

Սակայն Սմբատն ու Միքայելն իրենց հոդու խորքում չունեյին հույս՝ Արշակի բժշկվելու վրա և դդում եյին, վոր ախտն արդեն չատ է առաջացել:

Ապագայի մթության մեջ Միքայելը տեսնում եր կիսով չափ մեռած մի մարմին վերքերով պատած, դուրկ կենսական ուժերից: Որինակները չատ եր տեսել նույնիսկ իր ընկերների շրջանում, ու գարմանում և ուրախանում եր, վոր ինքն ազատվել է այդ ախտից մինչև այդ որը, չնայելով, վոր նույնպես տասը տարով վաղ եր սկսել ճաշակել չվայրության կործանիչ հաճույքները, բայց նա ախտավին ապահով չե վտանգից, յեթե նորեն սկսե ապրել այնպես, ինչպես ապրում եր ընդամենը մի քանի ամիս առաջ: Նա հիշում եր այն մռայլ և ցնցվում: Վորպիսի՛ ատելություն և նողկանք դեպի այդ աննպատակ, անիմաստ և սպանիչ կենցաղը:

— Ավելի քան հարյուր հազար ռուբլի պիտի ծախսել նոր բուրգերի ու ամբարների շինության վրա:

Միքայելը սթափվեց իր մտքերից: Նա Սմբատի հետ կառքով վերադառնում էր տուն:

Նայեց յեղբոր յերեսին անորոշ հայացքով և վոչինչ չասաց:

— Դեռ չեմ հավատում քարե շինությունները, մեքենաներն ու կաթսաները,—չարունակեց Սմբատը,—վոչ, վոչ, ավելի, ավելի քան կես միլիոն վնաս տվեց մեզ այդ անիծյալ հրդեհը:

— Բեզ չա՞տ է վչտացնում այդ վնասը,—հարցրեց Միքայելը:

— Իսկ քեզ, վո՞չ:

— Դու Դավիթ Զարդարյանին վարձատրե՞լ ես,—արտասանեց Միքայելը, կարծես, չլսելով յեղբոր հարցը:

— Նա ասաց քո ներկայությամբ, վոր իր վարձն ստացել է ամբողջով:

— Նա շատ բան կարող է ասել, նա չահասեր չէ: Իսկ դու, միթե չես զգում, վոր պարտավոր ես մի բան պարգևել նրան:

— Վորքա՞ն պիտի տալ քո կարծիքով:

— Գոնե այնքան, վոր լիովին ապահովվին նրա յեղբոր ու քրոջ ընտանիքները:

— Ահա թե ի՛նչ,—զոչեց Սմբատը զարմացած,—շատ առատաձեռն ես:

Միքայելը լռեց և վոչինչ չասաց: Հասնելով տուն, նա մտավ Սմբատի սենյակը, նստեց դրասեղանի քով, դրեց մի քանի տող մի թերթ թղթի վրա:

— Վերցրո՛ւ,—ասաց նա, թուղթն անփույթ ձևով ձգելով Սմբատի առաջ և վոտքի յելնելով:

— Այդ ի՞նչ է:

Սմբատը կարդաց թուղթը:

— Այս թղթով դու հրաժարվում ես քո բաժին ժառանգությունից:

— Ինչպես տեսնում ես—այո:

— Ցերեխա յես, կատարյալ յերեխա,—ասաց Սմբատը և թուղթը հեռացրեց իրենից:

— Ցերեխա յեմ, թե չե, վերցրու այդ թուղթը, պահիր մոտդ, իսկ փոխարենը վճարիր պարտքերս Մարութխանյանին—ահա բոլորը, ինչ—վոր պահանջում եմ քեզնից:

— Հիմարություն մի՛ արա: Ցեթե վիրավորվելուդ պատճառը Դավիթ Զարդարյանի վարձատրությունն է, կարող ես վճարել վորքան կամենաս, տալիս եմ քեզ կատարյալ իրավունք: Ահա, այս էլ քեզ չեկերի տեսարակը:

Յեվ այս ասելով, Սմբատը դրեց Միքայելի առջև չեկերի տետրակը:

— Լավ,—ասաց Միքայելը,—այդ մասին վաղը, իսկ այդ թուղթը համենայն դեպս թող քեզ մոտ մնա:

Յեվ անցավ իր սենյակները, ուր չորս-հինգ ամիս եր վոտք չեր դրել: Այստեղ ամեն ինչ իր տեղումն եր: Նա նայեց չքեղ կահ-կարասիին, արդ ու զարդին և դառը հեգնությամբ ժպտաց: Այժմ նրան ծաղր եր թվում ամեն ինչ, վոր կապված եր իր անցյալի հետ: Նա փակեց սենյակների դուռը և վերադարձավ յեղբոր սենյակը:

— Թող այս բանալին էլ քեզ մոտ մնա,—ասաց նա:

— Դու ինձ ծաղրո՞ւմ ես:

— Յես անում եմ իմ սրտի կամեցածը: Ասել եմ, վոր դործակատարդ եմ,—ահա բոլորը: Այժմ յես վոչինչ պահանջ չունեմ այս տնից, բոլորը քոնն է...

Ասաց և անմիջապես դուրս գնաց, բանալին թողնելով սեղանի վրա:

Սմբատը նայեց նրա հետևից զարմած, ապա խորհեց մի քանի վայրկյան և, մի վճռական շարժումն անելով, բանալին և թուղթը դրեց իր գրասեղանի մեջ: Հետևյալ որը նա Սրաֆիոն Դասպարիչին ուղարկեց Մարութխանյանի մոտ, վոր դատը հաշտությամբ վերջացնեն: Նա խոստանում եր վճարել Միքայելի պարտքերի կեսը նրա ստորագրած պարտատրերը վոչնչացնելու պայմանով:

— Համաձայն եմ,—ասաց Մարութխանյանը.—յեթե այդ հրդեհը չլիներ, մի կոպեկ չեյի զեղչիլ:

Նույն որը նա կանչեց Սուլյանին իր մոտ և ասաց.

— Բարեկամս, այժմ մենք կարող ենք գնել այն թուրքի հողերը: Դու ընկերը ես արդյունքի մի հինգերորդականով: Դեհ, տեսնեք, դու քո ուսումով,—յես իմ վողով ու խելքով...

Մի շաբաթ անցած Սուլյանը թողեց իր պաշտոնն Ալիմյանների մոտ և ընկերացավ Մարութխանյանին:

Անցան սպի առաջին որերը: Շուշանիկի վիշտն սկսեց մեղմանալ: Այժմ նա ամբողջ որն անց եր կացնում Անտոնինա Իվանովնայի բնակարանում: Միասին ծրագրում եյին, վիճաբանում, վորոշում և միմյանց վոգևորում: Ամառվա ամենատաք որերը մոտենում եյին, ուստի իրիկնային կուրսերի բացումը հետաձգեցին աշնան, մանավանդ, վոր Անտոնինա Իվանովնան յերեխաներին պիտի տաներ ամառանոց:

Շուշանիկի աչքերը վորոնում են Միքայելին ամենուրեք: Շատ ան-

գամ նա իր բարեկամուհու բնակարանը գնում էր նրան հանդիպելու դադանի հույսով: Այնինչ Միքայելը դադարել էր այցելել իր հեղբոր ամուսնուն, չէր երևում վոչ մի տեղ: Հայտնվեց, վոր նա տեղափոխվել էր հեռավոր հանքերը: Ի՞նչ և նշանակում այդ. մի՞թե այժմ նա չի փախչում, մի՞թե արհամարհելու հերթը նրան է անցել: Գուցե նա վիրավորվել է, վոր Շուշանիկը մինչև այժմ չնորհակալության մի խոսք չի ասել: Բայց մի՞թե անսահման յերախտագիտությունը խոսքերով է միայն արտահայտում, մի՞թե Միքայելը չի զգում, թե ինչ է կատարվում Շուշանիկի սրտի մեջ, մի՞թե չի նկատում արմատական հեղաշրջումը նրա հոգեկան աշխարհում:

Մի որ իրիկնադեմին Շուշանիկը մենակ նստած էր ընդարձակ պատշգամբի ծայրում, իր սենյակի առջև: Մոտեցան նրա հորաքրոջ զավակները և, մի պատկերազարդ դրքույկ դնելով նրա ծնկների վրա, խնդրեցին, վոր նա բացատրե նկարների բովանդակությունը: Այդ դրքույկը յերեկ Անտոնինա Իվանովնան էր նվիրել նրանց: Շուշանիկն սկսեց թերթել ու բացատրել, մի ձեռով գրկած յերկու մանուկների գլուխները: Մի վայրկյան նա գլուխը բարձրացրեց, հայացքը ձգեց առջև տարածված ապատ նավթահողերի վրա և ցնցվեց այնպես, վոր դրքույկն ընկավ ծնկներից: Այնտեղ, հեռվում՝ մի խումբ. արհեստավորներով շրջապատված Միքայելն ինչ-վոր պատվերներ էր տալիս: Նրա ձախ թևը դեռ կապած էր պարանոցին:

Շուշանիկը մանուկներին հեռացրեց սենյակ և բոլոր ուշադրությունը լարեց դեպի խումբը: Մի քանի րոպե անցած խումբը ցրվեց, Միքայելը մնաց մենակ: Նա հանդարտ քայլելով մոտեցավ մի հոդակույտի և նստեց մի մեծ քարի վրա: Վերջմայիսյան արեգակի վերջին ծիրանագույն ճառագայթները զվարճել էին նրան և այդ կացութ յան մեջ նա Շուշանիկին թվաց այնչափ առնական, այնչափ դեղեցիկ, վորչափ այն վայրկյանին, յերբ Զուպրովի թևին հենված դուրս էր գալիս ծխերի միջից, լուսավորված հուրերի բոսորագույն լուսով: Նա նայում էր դեպի արևմուտք յերկա՛ր, յերկա՛ր, մինչև վոր հրեղեն գունդը թաղնվեց հեռավոր բլուրների հետևում: Հետո նա վերկացավ քարի վրայից և քայլերն ուղղեց դեպի Անտոնինա Իվանովնայի բնակարանը: Վորքան նա մերձենում էր, այնքան ներքին անհաղթելի ուժը Շուշանիկին մղում էր դեպի նա:

Վերջապես, նա նկատեց Շուշանիկին և մոտեցավ: Մի ախորժելի ջերմություն զգաց որիորդը, սեղմելով նրա ձեռը, վոր ազատել էր իրեն կրակի ճիրաններից: Այժմ Միքայելի դեմքի վրա չէր նկատվում նախկին վշտի մութ ստվերը: Այժմ նրա աչքերի մեջ յերևաց նախկին մտայնությունը, վոր Շուշանիկին թվում էր չարություն:

— Ներեցեք, վոր յես մինչև այսոր չեմ արտահայտել ձեզ իմ

չնորհակալությունը,—արտասանեց որիորդը և դադաց, վոր իր ձայնը դողում է:

— Ինչո՞ւ համար:

— Ձեվ դուք դեռ հարցնո՞ւմ եք...

Դա բառ առ բառ նույն խոսքերն էին, վոր մի քանի ամիս առաջ փոխանակեցին, յերբ Միքայելը չնորհակալություն էր հայտնում Շուշանիկին, վոր այդպիսի հոդատարությամբ խնամել էր նրան հիվանդության ժամանակ: Այն որը Միքայելն էր առիթ փնտրում խոսելու— այսոր Շուշանիկը:

— Դուք ազատեցիք հորս և միջոց ավեցիք նրան մեռնելու բնական մահով: Դուք փրկեցիք հորեղբորս... դուք... —չկարողացավ վերջացնել իր խոսքը Շուշանիկը:

Մի մեղմ կիսահեգնական ժպիտ անցավ Միքայելի դունատ դեմքով:

— Որիորդ,—ասաց նա մտազբաղ,—յես վոչ վոքի չեմ ազատել, բացի դուցե—մեկից:

— Ո՞վ է այդ մեկը:

— Ձես ինքս:

Շուշանիկը նայեց նրա յերեսին զարմացած:

— Զդիտեմ ի՛նչ եք ուզում ասել, բայց յես... յես իմ կյանքը ձեզ եմ պարտական:

— Վո՛չ, որիորդ, այդպես չէ,—դոչեց Միքայելը,—ձեր կյանքի փրկությունը ձեզ և միայն ձեզ եք պարտական, իսկ յես յեղել եմ ճակատագրի մի կույր գործիք: Թույլ կտա՞ք,—ավելացրեց նա անվստահ չարժումով իր առողջ ձեռը սահեցնելով որիորդի թևի տակ:

Շուշանիկն ինքն էր փափագում բռնել նրա թևը, բայց չէր համարձակվում, ուստի հաճույքով ընդունեց նրա ձեռը: Նրանք հեռացան բնակարաններից և քանի մի րոպե ընթանում էին լուռ յուրաքանչյուրն իր մտքերով զբաղված:

— Լսեցե՛ք, որիորդ,—խոսեց, վերջապես, Միքայելը,—յես ուզում եմ ձեզ պատմել մի բան, վոր պատահեց մի քանի րոպե սրանից առաջ: Նստած եյի այն մեծ քարի վրա և դիտում եյի արեգակի մուտքը: Մտածում եյի շատ բաների մասին, վորոնք յերբեք-յերբեք չեն դրազեցրել իմ գլուխը: Տեսնո՞ւմ եք այդ մթին բուրգերն իրենց սուր ու յեռանկյունի դագաթներով, չոգիկ, ծխի ու մրի այդ խառնուրդը, բոլոր առարկաների, բոլոր մարդկանց և բոլոր կենդանիների ու թռչունների սեվությունը, այդ ցեխը, ափիմը և ամեն տեսակի ապականությունները: Դա մի տարօրինակ քաոս է: Ձես համեմատում եյի այդ քաոսը մեր կյանքի, մեր միջավայրի և առանձնապես իմ միջավայրի հետ և նույնը տեսնում եյի այնտեղ: Միայն մի տարբերություն կա

այդ յերկու քառոնների մեջ, այն, վոր մեր հանքերը, մեր գործարան-ները նախ տալիս են ծուխ ու մուր, ապա լույս, մինչդեռ մեր միջա-վայրն առաջին տալիս է միայն և միմիայն ապականություն, վորի կա-տարյալ մարմնացումը յես եմ ու ինձ նմանները, վորոնց թիվը շատ շատ է: Հիշում եմ իմ վաղթար, աննպատակ ու նողկալի կյանքը: Զգում եյի ինձ մինչև կոկորդս թաղված կեղտերի մեջ: Հիշո՞ւմ եք իմ կրած վիրավորանքները և ստորացումներն ու այն բոլոր բարոյական վերքերը, վոր յես եմ ավել ուրիշներին... Հետո հիշեցի վերջին ամիս-ներում իմ բոլոր զգացումներն ու մտածածները: Ցավ այս խառնիխուռն մտքերի մեջ իմ հայացքը չեր բաժանվում արևմուտքից: Արդյոք, այն-տեղի՞ց պիտի գա մեր բարոյական փրկությունը, թե՞ մեր լույսը պիտի ծագե մեր մթությունից ու խավարից...

Նա կանգ առավ, մի քանի վայրկյան լռեց և ապա մի ծանր հա-ռաչանք արձակելով, շարունակեց.

— Մայր մանող արեգակն ինձ հիշեցրեց այն սոսկալի հրդեհը: Ցավ կենդանի վերականգնեց իմ աչքերի առջև մի տեսարան, վոր յեր-բեք-յերբեք չպիտի ջնջվի իմ հիշողության մեջ: Ցես լսեցի հուսա-հատական աղաղակներ, վորոնք մորմոքում եյին սիրտս: Տեսա մի ծնո-ղասեր զավակ, վոր ձգտում եր դիմիկոր վազել ու նետվել կրակի մեջ իր այրվող ծնողին փրկելու համար: Մտաբերո՞ւմ եք այն վայրկյանը, յերբ իմ հայացքը հանդիպեց մի զույգ աղերսալի աչքերի: Ա՛հ, այդ աչքերը, այդ աղիողորմ նայվածքն եյին, վոր մի ակնթարթում փո-թորկեցին իմ հոգևկան ու բարոյական աշխարհը: Ցես մոռացա ամեն ինչ և միևնույն ժամանակ զգացի, վոր սթափվում եմ մի ծանր, յեր-կարատև քնից, մի մղձավանջից: Ցերբ վազում եյի դեպի կրակը, թվաց ինձ, վոր վազում յեմ խավարից դեպի լույս: Ցերբ ինձ տեսա ամեն կողմերից վտանգի մեջ, զգացի, վոր վտանգն ինձ փրկում է մի այլ, ավելի անխուսափելի, ավելի զորավոր վտանգից: Դուրս գալով կրա-կի միջից, զգացի հոգևկան այնպիսի մի թեթևություն, վոր յերբեք-յերբեք չեյի զգացել իմ քառնևութ տարվա կյանքի ընթացքում: Թվաց ինձ, վոր սրտիս վրայից գնն ձգեցի մի կապարային ծանրություն և այն, ինչ վոր ձգեցի, խլուզն այրվեց իմ հետևում, կրակի մեջ ու վոչնչացավ... Որիորդ, կրկնում եմ. ձե՛զ չե, վոր յես ազատեցի, այլ ինձ: Որիորդ, այլևս անզոր եմ թաղցնելու ձեզնից այն, ինչ վոր զգում եմ ու մտածում: Դուցե մոլորվում եմ, բայց թվում է ինձ, վոր այդ հրդեհը վերջ տվեց իմ կյանքի խավարին, վոր նա մաքրեց ինձ իմ աչ-քում, վոր նա փրկեց ինձ անխուսափելի կործանումից: Որիորդ, վոչ վոք և վոչինչ չեր կարող անել այն, ինչ վոր դուք արիք ինձ համար, դուք՝ ձեր մեջ թաղնված այն խորհրդավոր զորությամբ, վորը յես չեմ կարող բացատրել: Դուք վերջ տվեցիք իմ կյանքի խավարին,

կրակների միջով ինձ տանելով մինչև այնտեղ, ուրկից պիտի սկսվի ինձ համար մի նոր կյանք: Ցես ղեռ մաքրված չեմ իմ կեղտերից, բայց համոզված եմ և զգում եմ, վոր պիտի մաքրվեմ, պիտի զավեմ, յեթե դրա համար հարկավոր լինե անցնել նոր կրակների ու վտանգների միջով:

Նա լռեց, առողջ ձեռով չփեց ճակատը: Արդեն նրանք հասել եյին մի վայր, ուր ապահով եյին անհամեստ աչքերից: Շուշանիկին յերբոր եր թվում և՛ այն, ինչ վոր լսում եր, և՛ այն, ինչ վոր զգում եր: Նա չեր վստահանում ուզիղ նայել Միքայելի աչքերին, բայց զգում եր, վոր այժմ այլ է այդ աչքերի արտահայտությունը, ինչպես այլ են այդ ձայնի հնչյունները: Վո՛չ, դա նախկին Միքայել Ալիմյանը չե. նա, վորից փախչում եր: Վո՛չ, այն չկա այլևս, անհետացավ և այժմ նրա առջև կանգնած է մի բոլորովին ջոկ մարդ: Իսկ նա, այն մյուսը, վոր դեռ մի ամիս առաջ լեցրել եր նրա յերևակայությունը և այնպես դերիացրել նրա հոգին: Այն եր յերազ, այն եր խաբկություն, իսկ այս իրականություն է, պարզ, անհերքելի իրականություն: Նա լսում է, շոշափում է բուն տղամարդի մերձավորությունը:

Ցեվ նա լուին հեզությամբ թեքեց իր գլուխը, թույլ տալով Միքա-յելին իրեն համբուրել...:

Ցերկինքը դունատվեց, հորիզոնի վրա պարզվեց կիսալուսինը: Ջմայլելի յերկո մի յերջանիկ զույգի համար:

Մի քանի րոպե անցած Միքայելը մոտենում եր իր ոթեվանին ու-րախ, բախտավոր, սիրտը լեցուն բուռն զգացումներով: Զգացումներ, վորոնք այլևս արձագանգ եյին գտել այն եյակի սրտում, վորի պատ-ճառով նա այնքան տանջվում եր և վորի չնորհիվ իրեն մաքրված եր զգում:

Իսկ այնտեղ, պատշգամբի ծայրում Շուշանիկը, փաթաթվելով մոր պարանոցին, հեկեկում եր, արտասանելով.

— Մայրիկ, յես յերջանիկ եմ... մայրիկ, յես առաջ անբախտ եյի, այժմ յերջանիկ եմ...

Հետևյալ առավոտ Միքայելը տելեֆոնով Սմբատին ասաց.

— Ցես կատարում եմ մեր հոր վերջին կամքը: Վճարիր Մարութ-խանյանի պարտքերն իմ ժառանգությունից...

Դարձվածը հասկանալի յեր՝ «մեր հոր վերջին կամքը»: Միքայելն ամուսնանում է և պարզ է ում հետ:

«Նա բախտավորվեց,—ասաց Սմբատը մտքում, իսկ յես միշտ կմնամ անբախտ»...

ՀԱՅԿ-ССРА

Ф 5 л.



ШИРВАНЗАДЕ

Полное собрание сочинений

том VII

Гиз ССР Армении, Эривань

ՀՀ Ազգային գրադարան
NL0351681

48025